ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ.

№. II.

ՏՓԽԻՍ

1876.

ЛИТ. ТОМСОНА

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

երես
I ԴՕՆ ԿԱՐԼՈՍ, գործ Շիլլէրի, Թարգմ. Գ. Բարխուդարեանց . . 1
II ՄԻ ՀԱՅԵԱՑՔ ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ, Ս. Պալասանեան 118
III ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, պատմական տեսութիւն. Ա. Երիցեանց . . . 119
IV ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ, գործ Է. Լաբուլէի 183
V ԵՐԵՔ ՈՏԱՆԱՒՈՐ, Պէտէօֆի հունգարացի բանաստեղծից. Թարգմ. Գ. Բարխուդարեանց 197
VI ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆ, Ս. Պալասանեան. 201
VII ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ, Գ. Չմշկեանց . . . 273
VIII ԼՈՒՂՈՐԴ, բանաստեղծութիւն Շիլլէրի, Թարգ. Գ. Բարխուդարեանց. 300
IX ՔՈՒՐԴԻ ԼԵԱՌՆ, գործ Ալբէր Ամօի 305

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

X ՄԱՆԱՆԱՅ, ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց. Գրիչ. 338
XI ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ, ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ. Գրիչ 358
XII ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ, երկասիրեաց Խրիմեան Հայրիկ. Գրիչ . 368
XIII ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց. Գրիչ. 384
XIV ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՕԼԻԷՐԻ. Գրիչ. 387
XV ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ (Նամակ Ս. Պետերբուրգից). Ա. Երիցեան 394

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XVI Թէ ինչ միջոցների է կարօտ մեր ժողովրդի բարեկեցութիւնը. 403
XVII Թիֆլիսի շրջակայ գիւղերի մասին 411
XVIII Գուգարաց Աշխարհ, (ճանապարհորդական տպաւորութիւնք) . 424

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIX Սլավօնա-Տաճկական պատերազմը 431

ՅԱՒԵԼՈՒԱԾ

XX Նախագիծ Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի.
XXI Յայտարարութիւններ։

МАРТИРОСЪ АХНАЗАРОВЪ
Մ. Յ. ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ
Г. ТИФЛИСЪ.

ԴՕՆ ԿԱՐԼՈՍ

ՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԸ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՇԻԼԼԵՐԻ

(Շարունակութիւն և վերջ) *

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Թագուհու դահլիճը

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԴՔՍՈՒՀԻ ՕԼԻՎԱՐԷՑ, ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, ԿՈՄՍՈՒՀԻ ՖՈՒԷՆՏԷՍ *և ուրիշ կանայք.*

ԹԱԳՈՒՀԻ
(տեղից վեր կենալով մեծ սենեկապետուհուն)

Ուրեմն չը կա՞յ բանալին — Պէտք է
Իսկոյն կոտրել տալ արկղի կողպէքը —
(տեսնելով Էբօլի իշխանուհուն, որ մօտենում է և համբուրում է նորա ձեռը)
Բարով, Էբօլի: Ես շատ ուրախ եմ,
Տեսնելով կրկին ձեզ առողջացած —
Թէև դեռ ևս փոքր ինչ գունաթափ —

ՖՈՒԷՆՏԷՍ *(նենգութեամբ)*

Տենդն է մեղաւոր, որ ջղերի վրայ
Խիստ ներգործում է: Արդեօք այդպէս չէ՞,
Ի՛մ իշխանուհի:

---

* Տես նախընթաց համարը:

ԹԱԳՈՒՀԻ

Շատ ուզում էի
Այցելութիւն գալ ձեզ, իմ սիրելի —
Բայց գիտէք, որ ես իրաւունք չունիմ:

ՕԼԻՎԱՐԷՑ

Իսկ ես կարծում եմ, որ իշխանուհին
Մենակ չէր մնում —

ԹԱԳՈՒՀԻ

Ես հաւատում եմ:
Բայց ի՞նչ եղաւ ձեզ: Ինչի՞ էք դողում:

ԷՐՕԼԻ

Ոչինչ — այդ ոչինչ — ձերդ մեծութիւն:
Իրաւունք տուէք, որ ես հեռանամ:

ԹԱԳՈՒՀԻ

Դուք ծածկում էք ձեր հիւանդութիւնը.
Դուք աշխատում էք առողջ երեւիլ,
Եւ սակայն կանգնել չէք կարողանում:
Օգնեցէք նորան, կոմսուհի, նստել
Այս աթոռի վրայ:

ԷՐՕԼԻ

Ազատ օդի մէջ
Ես կառողջանամ:

ԹԱԳՈՒՀԻ

Կոմսուհի, գնացէք
Դուք էլ նորա հետ — ի՞նչ պատահեցաւ:

(Մտնում է մի մանկլաւիկ և խօսում է դքսուհու հետ, որ իսկոյն դառնում է դէպի Թագուհին)

ՕԼԻՎԱՐԷՑ

Ձերդ մեծութիւն, մարկիզ Պօզան է.
Նա ուղարկուած է ձեզ մօտ արքայից:

ԹԱԳՈՒՀԻ

Թող գայ, սպասում եմ:

(Մանկլաւիկը գնում է և բաց է անում դուռը մարկիզ Պօզայի առաջ)

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ.

(Մարկիզը ծունկ է չոքում թագուհու առաջ, որ վեր կենալու նշան է տալիս նորան)

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ է իմ տիրոջ
Հրամանը, մարկի՛զ: կարո՞ղ եմ լսել
Ամենի առաջ:

ՄԱՐԿԻԶ

Ինձ պատուիրած է
Առանձին խօսել ձեր մեծութեան հետ:
(Թագուհին նշան է տալիս և կանայք դուրս են գնում)

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ.

ԹԱԳՈՒՀԻ

Հաւատա՞մ արդեօք աչքերիս, մարկի՛զ։
Դուք ուղարկուած էք ինձ մօտ արքայի՞ց։

ՄԱՐԿԻԶ

Դուք զարմանո՞ւմ էք, տիրուհի՛. բայց ես՝
Ամենևին ոչ:

ԹԱԳՈՒՀԻ

Ապա ուրեմն
Աշխարհը ծռուել է ճանապարհից.
Թէ չէ՝ դուք և նա — խոստովանում եմ —

ՄԱՐԿԻԶ

Անսովոր բան է փոքր ինչ, ի հարկէ —
Բայց ներկայումս հրաշալիքներով
Լի է աշխարհը:

ԹԱԳՈՒՀԻ

Սորա նմանը
Հազիւ թէ լինի:

ՄԱՐԿԻԶ

Դիցուք, վերջապէս
Ես դարձ եմ եկել — թէ ձանձրացել եմ
Այս պալատի մէջ իմ անբնական
Դերը խաղալուց: Անբնական դե՞ր:
Այդ ի՞նչ ասել է: Ով որ կամք ունի
Օգտակար անել իւր անձը մարդկանց,
Պէտք է նախ նոցա նմանիլ աշխատէ:
Ի՞նչ հարկաւոր է աղանդաւորի
Սնապարծ հագուստը: Դիցուք, թագուհի՛ —
Ո՞վ փառասէր չէ, իւր կրօնի համար
Մարդիկ գրաւելու — դիցուք միտք ունիմ
Իմ կրօնը գահի վերայ բարձրացնել:

ԹԱԳՈՒՀԻ

Ո՛չ, մարկիզ — ո՛չ, ոչ. և իբրև կատակ
Ես չէի սպասի ձեզանից այդ խակ
Մտադրութիւնը: Դուք այն մարդը չէք,
Որ սկսէք մի բան, ի՛նչ որ վերջացնել
Անկարելի է:

ՄԱՐԿԻԶ

Այդ դեռ յայտնի չէ:

ԹԱԳՈՒՀԻ

Միմիայն մի բան կարող եմ կարծել —
Որ ինձ ձեր կողմից շատ կը զարմացնէր,
Որ դուք — դուք, մարկիզ —

ՄԱՐԿԻԶ

Կեղծաւոր մէկն եմ:
Շատ կարելի է:

ԹԱԳՈՒՀԻ

Այս հանգամանքում
Գոնէ ազնիւ չէք: Չեմ կարծում, արքան

Հրամայած լինի այն, ինչ որ դուք ինձ
Պիտի ասէք։

ՄԱՐԿԻԶ

Ոչ։

ԹԱԳՈՒՀԻ

Միթէ կարո՞ղ է
Բարի գործը վատ միջոցներ սրբել։
Մի՞թէ — ներեցէք իմ այս կասկածը —
Միթէ կընդունե՞ք այս պաշտօնը ձեր
Ազնուութիւնը։ Դժուար կարող եմ
Ես այդ հաւատալ։

ՄԱՐԿԻԶ

Ես էլ նմանապէս,
Եթէ արքային խաբել ուզէի։
Բայց այդպէս չէ իմ մտադրութիւնը։
Այս անգամ նորան ես մտադիր եմ
Շատ հաւատարիմ ծառայել, քան թէ
Պատուիրել է ինձ։

ԹԱԳՈՒՀԻ

Այդպէս ես կրկին
Ճանաչեցի ձեզ. բայց բաւական է։
Ի՞նչ է անում նա։

ՄԱՐԿԻԶ

Ո՞վ, թագաւո՞րը —
Ինչպէս տեսնում եմ, շուտ պիտի առնեմ
Վրէժս անաչառ իմ դատաւորից։
Ինչ որ չեմ շտապում ես ձեզ պատմելու,
Աւելի ևս չէք շտապում դուք այն
Ինձնից լսելու — բայց պէտք է լսէք։
Արքան խնդրում է ձեր մեծութեանը,
Որ Ֆրանսիայի դեսպանին այսօր
Ձեզ մօտ չընդունէք։ Այս էր ինձ յանձնուած։
Ես կատարեցի։

ԹԱԳՈՒՀԻ

Ա՞յդ է բոլորը,

Մարկի՛զ, ինչ որ դուք ինձ նորա կողմից
Ասելու ունիք։

ՄԱՐԿԻԶ

Համարեա այդ է,
Որ ինձ տալիս է իրաւունք այժմ
Այստեղ լինելու։

ԹԱԳՈՒՀԻ

Ես հետաքրքիր
Չեմ լինի, մարկի՛զ, իմանալ, ինչ որ
Դուցէ ինձ համար գաղտնիք պիտի մնայ —

ՄԱՐԿԻԶ

Այո՛, Թագուհի՛, այդ մի գաղտնիք է —
Թէև, եթէ այդ դուք չըլինէիք,
Ես կշտապէի ձեզ մի քանի բան
Իսկոյն հաղորդել և ըզգուշացնել
Մի քանի մարդկանց որոգայթներից —
Բայց ձեզ այդ բանը պէտք չէ գիտենալ։
Թող ձեր չորս կողմը պատէ վտանգը.
Բայց դուք այդ երբէք պիտի չիմանաք։
Որովհետև այդ բոլորը չարժէ,
Որ մի հրեշտակից քաղցր քունը խլէ.
Այլև իմ գալը դորա համար չէր։
Կարլոս իշխանը—

ԹԱԳՈՒՀԻ

Արդեօք ի՞նչպէս է։

ՄԱՐԿԻԶ

Նա նման է այն իմաստասէրին,
Որ ճշմարտութիւնը քարոզելով,
Դատապարտուած է իբրև յանցաւոր —
Եւ նոյնպէս պատրաստ զոհուել իւր սիրուն,
Ինչպէս իմաստունը՝ ճշմարտութեան։
Բայց ես շատ բառեր չունիմ նորանից —
Այստեղ է նորա սիրտը և հոգին։

(տալիս է Թագուհուն մի նամակ)

ԹԱԳՈՒՀԻ

(Նամակը կարդալուց յետոյ)

Գրում է, թէ պէտք է նա ինձ հետ խօսի։

ՄԱՐԿԻԶ

Ես էլ ասում եմ մի և նոյն բանը։

ԹԱԳՈՒՀԻ

Միթէ նա կըզգա՞յ իրան բախտաւոր,
Երբ որ տեսնէ, որ ես տարաբախտ եմ։

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ — Նա աւելի աշխոյժ կստանայ
Եւ վստահութիւն ձեզ հետ տեսնուելով։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչպէս։

ՄԱՐԿԻԶ

Դուքս Ալբան գնում է Ֆլանդրիա։

ԹԱԳՈՒՀԻ

Այդպէս եմ լսում։

ՄԱՐԿԻԶ

Արքան իր խօսքը
Երբէք չի փոխի։ Այդ մեզ յայտնի է։
Բայց այս էլ կայ, որ Կարլոսը այստեղ
Չը պէտք է մնայ, մանաւանդ հիմա։
Անկարելի է Ֆլանդրիան զոհել։

ԹԱԳՈՒՀԻ

Գիտէ՞ք մի հնար։

ՄԱՐԿԻԶ

Այո՛ — բայց սաստիկ
Վտանգաւոր է, յանդուգն է ինչպէս
Յուսահատութիւնն — Այլ հնար չկայ։

ԹԱԳՈՒՀԻ

Ասացէ՛ք տեսնեմ։

ՄԱՐԿԻԶ

Ձեզ, միայն ձեզ

Համարձակում եմ յայտնել, Թագուհի՛։
Միայն ձեզանից պէտք է այդ բանը
Լսէ Կարլոսը առանց զգուելու։
Թէ և անունը, որ դա պիտի կրէ,
Խորթ է ականջին —

ԹԱԳՈՒՀԻ

Ապստամբութի՞ւն։ —

ՄԱՐԿԻԶ

Պէտք է արքայի դէմ ապստամբի
Կարլոս իշխանը. պէտք է նա ծածուկ
Հեռանայ Բրիւսսէլ, ուր Ֆլամանդացիք
Արդէն զիրկը բաց՝ սպասում են նորան։
Նորա մի խօսքով զէնք կառնէ ամբողջ
Նիդէրլանդիան։ Եւ արդար գործին
Զօրութիւն կըտայ արքայի որդին։
Նա փիլիպպոսի գահը իւր զէնքով
Կըսասանեցնէ։ Եւ ինչ բանին որ
Ձեր համաձայնում հայրը Մադրիդում,
Անշուշտ Բրիւսսէլում կը համաձայնի։

ԹԱԳՈՒՀԻ

Այսօր տեսել էք նորան և այդպէս
Վստահ խօսո՞ւմ էք։

ՄԱՐԿԻԶ

Այո՛, որ այսօր

Տեսել եմ նորան։

ԹԱԳՈՒՀԻ

Ձեր նախագիծը

Երկիւղալի է — բայց և հրապուրիչ։
Ես կարծում եմ, որ իրաւունք ունիք —
Յանդուգն միտք է, և այդ պատճառով
Գուցէ աւելի հաւանում եմ ես։
Ես դորա վերայ լաւ կըմտածեմ։
Գիտէ՞ իշխանը։

ՄԱՐԿԻԶ

Ցանկալի է, որ

Նա ձեր բերանից լսէ այդ բանը։

ԹԱԳՈՒՀԻ

Իրաւ մեծ միտք է — եթէ իշխանի
Մանուկ հասակը —

ՄԱՐԿԻԶ

Դա վնաս չունի։
Այնտեղ են Էգմօնդ և Օրանիէն,
Կայսր Կարլոսի քաջ զէնուորները,
Որոնք խորհրդում նոյնքան խոհեմ են,
Որքան ահարկու պատերազմի մէջ։

ԹԱԳՈՒՀԻ

Ձեր միտքը վսեմ ու գեղեցիկ է —
Իշխանը պէտք է անշուշտ ներգործէ։
Այն դերը, որ նա ունի Մադրիդում,
Նորա փոխանակ իմ սիրտն է տանջում —
Ես խոստանում եմ նորան Ֆրանսիան,
Այլ և Սաւոյան։ Ես համաձայն եմ
Ձեզ հետ, որ պէտք է իշխանը գործէ —
Բայց սորա համար փող է հարկաւոր։

ՄԱՐԿԻԶ

Այժէ էլ պատրաստ է։ —

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ես կը հոգամ։

ՄԱՐԿԻԶ

Ուրեմն յոյս տամ, Թագուհի, նորան
Ձեզ հետ տեսութեան։

ԹԱԳՈՒՀԻ

Ես կըմտածեմ։

ՄԱՐԿԻԶ

Նա պատասխան է խնդրում ձեզանից —
Եւ ես խոստացայ, որ դատարկ ձեռով
Ձեզ վերադառնայ։

(իւր յիշատակարանը տալով նորան)

Այժմ երկու տող

Շատ բաւական է. —

ԹԱԳՈՒՀԻ (գրելուց յետոյ)

Ելի կըտեսնեմ
Ձեզ ուրիշ անգամ։

ՄԱՐԿԻԶ

Միշտ, երբ կըհրամայէք,
Ձերդ մեծութիւն։

ԹԱԳՈՒՀԻ

Մի՛շտ, երբ հրամայե՛մ,
Մի՛շտ — Մարկի՛զ, ի՞նչպէս մեկնեմ ես ինձ այդ
Ազատութիւնը։

ՄԱՐԿԻԶ

Մեկնեցէ՛ք անմեղ,
Որքան կարող էք։ Դա մեզ տուած է։
Այդ բաւական է — թագուհու համար
Այդ բաւական է։

ԹԱԳՈՒՀԻ (վերջացնելով խօսակցութիւնը)

Ի՞նչ կուրախանամ,
Մարկի՛զ, եթէ որ Եւրոպայի մէջ
Այդ տեղն էլ ստանար ազատութիւնը,
Ստանար Կարլոսից — խոստանում եմ ձեզ
Մասնակցութիւնս։

ՄԱՐԿԻԶ

Գիտէի, որ դուք
Ինձ կըհասկանաք։

ԴՔՍՈՒՀԻ ՕԼԻՎԱՐԷՑ (երեւումէ դռան մէջ)

ԹԱԳՈՒՀԻ (սառնութեամբ մարկիզին)

Իմ տիրոջ կամքը
Յարգելի է ինձ ինչպէս սուրբ օրէնք։
Գնացէք յայտնեցէք թագաւորին իմ
Ամենախոնարհ հնազանդութիւնը։
(Նա մի նշան է տալիս մարկիզին, որ դուրս է գնում)

Ճեմելիք թագաւորական պալատում

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴՕՆ ԿԱՐԼՈՍ, ԿՈՄՍ ԼԵՐՄԱ.

ԿԱՐԼՈՍ

Այստեղ մեզ ոչ ոք չէ խանգարելու.
Ի՞նչ ունէիք դուք ինձ հաղորդելու։

ԼԵՐՄԱ

Վսեմափայլ իշխան, դուք մի բարեկամ
Ունէիք այստեղ։

ԿԱՐԼՈՍ

Որ ինձ յայտնի չէ —
Ի՞նչ էք կամենում դորանով ասել։

ԼԵՐՄԱ

Ուրեմն պէտք է ես ներողութիւն
Խնդրեմ ձեզանից, որ իմացել եմ
Աւելի, քանթէ իրաւունք կար ինձ։
Բայց, իշխա՛ն, որ ձեզ միամտացնեմ,
Պէտք է՛ ասեմ, որ այդ բանը գիտեմ
Ուղիղ աղբիւրից. կարճ ասեմ — ինձնից։

ԿԱՐԼՈՍ

Խօսքն ո՞ւմ վերայ է։

ԼԵՐՄԱ

Մարկիզ Պօզայի։

ԿԱՐԼՈՍ

Յետո՞յ։

ԼԵՐՄԱ

Եթէ դուք յայտնել էք նորան,
Ինչ որ ուրիշին պէտք չէ իմանալ,
Ինչպէս որ ես երկիւղ եմ կրում —

ԿԱՐԼՈՍ

Երկի՞ւղ էք կրում:

ԼԷՐՄԱ

— Այո՛, նա այսօր
Արքայի մօտ էր:

ԿԱՐԼՈՍ

Իրա՞ւ:

ԼԷՐՄԱ

Երկու ժամ.
Ես շատ մտերիմ խօսակցութեան մէջ:

ԿԱՐԼՈՍ

Մի՞թէ, ճշմարի՞տ:

ԼԷՐՄԱ

Եւ չնչին բան չէր
Նոցա առարկան:

ԿԱՐԼՈՍ

Դորան խօսք չըկայ:

ԼԷՐՄԱ

Մի քանի անգամ, իշխան, լսեցի
Ես ձեր անունը:

ԿԱՐԼՈՍ

Յուսով եմ, որ դա
Մի վատ նշան չէ:

ԼԷՐՄԱ

Այլև Թագուհու
Ննջարանի մէջ այսօր առաւօտ
Շատ խորհրդաւոր կերպով վիճուել է:

ԿԱՐԼՈՍ

(զարմացած յետ է քաշվում)
կոմս Լէրմա:

ԼԷՐՄԱ

Երբ որ մարկիզը գնաց,
Ես հրաման ստացայ նորան այսուհետև
Առանց յայտնելու թոյլ տալ արքային

ներկայանալու։

ԿԱՐԼՈՍ

Այդ շատ մեծ բան է։

ԼԵՐՄԱ

Անօրինակ է, ինչ որ արքային
Ծառայում եմ ես։

ԿԱՐԼՈՍ

Իրաւ շատ շատ է —
Խնդրում եմ ասէք, Թագուհու մասին
Ի՞նչ էին խօսում։

ԼԵՐՄԱ

Ո՛չ, ո՛չ, իմ իշխան։
Այդ ընդդէմ է իմ պարտաւորութեան։

ԿԱՐԼՈՍ

Զարմանալի է։ Մէկը ասում էք,
Միւսը պահում էք։

ԼԵՐՄԱ

Առաջինը ձեզ,
Երկրորդն արքային եմ ես պարտական։

ԿԱՐԼՈՍ

— Իրաւունք ունիք։

ԼԵՐՄԱ

Թէև մարկիզին
Իբրև պատուաւոր մարդ եմ ճանաչել։

ԿԱՐԼՈՍ

Ուրեմն լաւ էք ճանաչել նորան։

ԼԵՐՄԱ

Ամենատեսակ առաքինութիւն
Անբիծ է, մինչև փորձի տակ կընկնի։

ԿԱՐԼՈՍ

Այո, այդպէս է։

ԼԵՐՄԱ

Եւ իմ կարծիքով

Մի՜ նչէն բան չէ արքայի շնորհը։
Շատ առաջինի մարդիկ բռնուել են
Այդ ոսկէ կարթով։

ԿԱՐԼՈՍ

Այո։

ԼԷՐՄԱ

Երբեմն
Խոհեմութիւն է յայտնել այն բանը,
Ինչ որ էլ ծածկել անկարելի է։

ԿԱՐԼՈՍ

Այո այդպէս է։ Սակայն ասացէք,
Որ դուք մարկիզին իբրև պատուաւոր
Մարդ էք ճանաչել։

ԼԷՐՄԱ

Թէ դարձեալ նոյնն է,
Կասկածս նորան վատացնելու չէ,
Եւ դուք, իմ իշխան, կրկին կըշահուիք։
(ուզում է գնալ)

ԿԱՐԼՈՍ

(շարժած հետեւում է նորան և սխմում է նորա ձեռը)
Ես եռապատիկ կըշահուիմ, ազնիւ
Եւ պատուական մարդ — Ես հարստացայ
Նոր բարեկամով, բայց չըզգնեցի
Նորան առաջին բարեկամիս գնով։
(Լերման դուրս է գնում)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ գալիս է ճիմնլիքով, ԿԱՐԼՈՍ.

ՄԱՐԿԻԶ

Կարլո՛ս, Կարլո՛ս, կա՛ց։

ԿԱՐԼՈՍ

Այս ո՞վ է կանչում։

Վա՜հ, դու ես։ Ինչ լաւ։ Ես վանքն եմ գնում,
Դու էլ չուշանաս։

(ուզում է գնալ)

ՄԱՐԿԻԶ

Միայն երկու րոպէ համբերիր, Կարլոս։

ԿԱՐԼՈՍ

Եթէ մեզ տեսնե՞ն։ —

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ, մի վախենար։
Րոպէի բան է։ Լսիր, Թագուհին —

ԿԱՐԼՈՍ

Հօրս մօտ էի՞ր։

ՄԱՐԿԻԶ

Այո՛, կանչել էր։

ԿԱՐԼՈՍ (ակնկալութեամբ)

Յետո՞յ։

ՄԱՐԿԻԶ

Վճռուած է, մօրդ կը տեսնես։

ԿԱՐԼՈՍ

Բայց որքա՞ն։ Ասա, նա ի՞նչ էր ուզում։

ՄԱՐԿԻԶ

Ոչինչ — միմիայն հետաքրքրութիւն։
Ուզում էր տեսնել, թէ ինչ մարդ եմ ես —
Գուցէ աւելորդ ջերմեռանդութիւն
Մի բարեկամի։ Ինքս էլ չը գիտեմ։
Միայն թէ պաշտօն առաջարկեց ինձ։

ԿԱՐԼՈՍ

Որից ի հարկէ հրաժարուեցար դու։

ՄԱՐԿԻԶ

Հասկանալի է։

ԿԱՐԼՈՍ

Միմեանցից ի՞նչպէս

Բաժանուեցաք դուք։

ՄԱՐԿԻԶ

Բաւականին լաւ։

ԿԱՐԼՈՍ

Այնտեղ իմ մասին ոչինչ խօսք չեղա՞ւ։

ՄԱՐԿԻԶ

Քո մասի՞ն։ Այո․ բայց հարեւանցի։
(հանում է մի ցիչատակարան և տալիս է իշխանին)
Առ այժմ ահա մի երկու տող բան
Թագուհուց գրած։ Վաղը կիմանամ
Ինչ տեղ և ինչպէս։

ԿԱՐԼՈՍ

(կարդում է առանց ուշադրութեան, յետոյ պահում է ցիչատակարանը և ուզում է գնալ)

Ուրեմն վանքում

Մենք կը տեսնուենք։

ՄԱՐԿԻԶ

Կա՛ց, ի՞նչ ես շտապում։
Այստեղ մարդ չըկայ։

ԿԱՐԼՈՍ (ակամայ ժպտելով)

Մի՞թէ փոխե՞լ ենք
Մենք մեր դերերը։ Շատ ապահով ես
Այսօր, Րօդրի՛գօ։

ՄԱՐԿԻԶ

Բայց ինչի՞ այսօր։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ է գրում ինձ Թագուհին։

ՄԱՐԿԻԶ

Մի՞թէ

Նոր չըկարդացի՞ր։

ԿԱՐԼՈՍ

Ե՞ս։ Այո՛, իրաւ։

ՄԱՐԿԻԶ

Ի՞նչ պատահեցաւ։ Ի՞նչ եղաւ, Կարլո՛ս։

ԿԱՐԼՈՍ

(Նորից կարդում է գրուածը, ոգևորուած և ուրախ)

Երկնային հրեշտակ, այո՛, կլինիմ —
Այո՛, կդառնամ ես քեզ արժանի —
Վեհանձն հոգիք սիրով աւելի
Վեհանձնանում են: Ինչ կուզէ լինի.
Դու հրամայում ես. ես կհնազանդուեմ —
Նա ինձ գրում է, որ ես պատրաստուեմ
Մի շատ կարևոր որոշման համար:
Ի՞նչ է կամենում: Արդեօք չգիտե՞ս:

ՄԱՐԿԻԶ

Դիցուք թէ գիտեմ: Միթէ կարո՞ղ ես
Այժմ դու լսել:

ԿԱՐԼՈՍ

Ցաւեցա՞ր ինձնից:
Միտքս ցրուած էր: Ների՛ր, Ռոդրի՛գօ:

ՄԱՐԿԻԶ

Ցրուա՞ծ էր: Պատճա՞ռ:

ԿԱՐԼՈՍ

Ինքս էլ չգիտեմ:
Ուրեմն ի՞նչ է այս մատանիկը:

ՄԱՐԿԻԶ

Ընդհակառակը եկել եմ խնդրել,
Որ քո՛նն էլ ինձ տաս:

ԿԱՐԼՈՍ

Ի՞մը: Բայց ինչի՞:

ՄԱՐԿԻԶ

Եւ բոլոր մանր մունր թղթերը,
Որոնք չպէտք է երրորդ ձեռն անցնին.
Նամակներ, կամ թէ ուրիշ գրուածներ —
Կարճ ասեմ — Կարլո՛ս — քո պահարանը:

ԿԱՐԼՈՍ

Բայց ինչի՞ համար:

ՄԱՐԿԻԶ

Զգուշութեան համար:

Ով գիտէ, յանկարծ ինչ կըպատահի:
Իսկ ինձ մօտ ոչ ոք չի որոնի: Տո՛ւր:

КАРЛОС

Զարմանալի է: Արդեօք ի՞նչ է այս:

ՄԱՐԿԻԶ

Միամի՛տ եղիր: Ոչինչ բան չըկայ,
Լոկ զգուշութիւն է վտանգի առաջ:
Ես միտք չունէի, հաւատա՛, Կարլո՛ս,
Ես միտք չունէի քեզ վախեցնելու:

ԿԱՐԼՈՍ

(տալիս է նորան յիշատակարանը)

Լա՛ւ պահիր:

ՄԱՐԿԻԶ

Այո՛:

ԿԱՐԼՈՍ

(նշանաւոր կերպով նայում է նորան)

Ո՛հ, Ռոդրիգօ, ես
Շատ բան տուի քեզ:

ՄԱՐԿԻԶ

Ոչ այնքան, որքան
Արդէն ունիմ ես ստացած քեզանից —
Ուրեմն այնտեղ, Կարլո՛ս, մնացածը.
Այժմ մնաս բարով:

(ուզում է գնալ)

ԿԱՐԼՈՍ

(երկմտութեան մէջ է — վերջապէս յետ է կանչում նորան)

Խնդրում եմ մին էլ
Տուր նամակները. նոցանից մէկը
Նա ինձ գրել է Ալկալա, երբ որ
Այնտեղ մերձ ի մահ հիւանդ էի ես:
Ես այդ նամակը միշտ պահում էի
Այստեղ սրտիս վրայ: Դորանից զրկուիլ
Ծանր է ինձ համար: Այդ մէկ հատը տուր —
Մնացածը տար:
(հանում է նամակը և վերադարձնում է թղթակալը)

ՄԱՐԿԻԶ

Կարլո՛ս, ակամայ
Համաձայնում եմ: Այդ նամակն էի
Աւելի ուզում:

ԿԱՐԼՈՍ

Մնա՛ս բարով:

(Նա կամաց հեռանումէ և մի վայրկենի չափ կանգնում է դռան մօտ. յետ է դառնում և տալիս է նորան նամակը)

Ահա՛:

(Նորա ձեռը դողում է, արտասուքներ են թափվում նորա աչքերից. նա փաթաթվում է մարկիզի վզին և երեսը ծածկում է նորա կուրծքի մէջ)

Այդ չէ՛ կամենայ հայրս, Ռօդրի՛գօ,
Այնպէս չէ՞, հայրս այդ չէ՛ կամենայ:

(Նա շուտ հեռանում է)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԿԻԶ

(զարմացած նայումէ նորա ետևից)

Կարելի՞ բան է: Ուրեմն նորան
Ես չե՞մ ճանաչել. լա՞ւ չեմ ճանաչել:
Նորա սրտի մէջ այդ ծալը ինձնից
Ծածո՞ւկ էր մնացել: Նա կասկածո՞ւմ է
Իւր բարեկամից: Ո՛չ, ո՛չ, իմ կողմից
Զրպարտութի՞ւն է:—Ի՞նչ արեց նա ինձ,
Որ ես ամենից տկարս նորան
Ամբաստանում եմ: Ինքս կանէի
Ինչ որ յանցանք եմ համարում նորան —
Որ նա զարմացաւ — իրաւունք ունէր:
Ե՞րբ է նա ծածկել իւր բարեկամից
Իւր խորհուրդները:— Նա ցաւ է զգում.
Կարլո՛ս, չեմ կարող ես ազատ պահել
Սիրտդ ցաւերից. դեռ ևս աւելի
Պէտք է տանջեմ ես քո բարի հոգին:
Արքան հաւատաց անօթին, որին
Յանձնեց սրբազան խորհուրդն իւր սրտի:

Հաւատարմութիւնը պահանջում է
Շնորհակալութիւն։ Ի՞նչ օգուտ էր քեզ
Իմ շատ խօսելուց, երբ լռութիւնս
Ցաւ չէ պատճառում. գուցէ նորանից
Ազատ է պահում։ Ի՞նչ հարկաւոր է
Ցոյց տալ քնածին շանթաբեր ամպը,
Որ նորա գլխին ծանր կախուած է —
Բաւական է, որ կամաց հեռացնեմ,
Որ երբ դու զարթես, պարզ երկինք տեսնես։

(դուրս է գնում)

Թագաւորի առանձնարանը

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ, *նստած է բազկաթոռի վերայ. նորա մօտ կանգնած է* ԻՆՖԱՆՏԻՆԱ ԿԼԱՐԱ ԵՒԳԷՆԻԱ

ԹԱԳԱՒՈՐ (*երկար լռութիւնից յետոյ*)

Ո՛չ։ Սա իմ դուստրն է — ի՞նչպէս կարող է
Բնութիւնը այսպէս ճշտութեամբ խաբել։
Այս երկնակապոյտ աչքերը իմն են։
Բոլոր գծերը ճիշտ իմ գծերն են։
Իմ սիրոյ զաւակ։ Այո՛, դու իմն ես։
Ահա իմ կուրծքին սխմում եմ ես քեզ —
Դու իմ արիւնն ես։

(*յանկարծ լռում է*)

Իմ արի՞ւն։ Չէ՞ որ
Այդ բանից եմ ես աւելի դողում։
Չէ՞ որ որդիս էլ իմ պատկերն ունի։

(*վեր է առնում պատկերը և փոփոխակի նայում է նորա վերայ ու դիմացի հայելու մէջ—վերջապէս ձգում է պատկերը գետնի վերայ, շուտով վեր է կենում և հեռացնում է իրանից երեխային*)

Հեռու ինձանից, հեռու, ա՛հ, հեռու։
Այս անդունդի մէջ իսպառ կորչում եմ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿՈՄՍ ԼԷՐՄԱ, ԹԱԳԱՒՈՐ.

ԼԷՐՄԱ

Տէր արքայ, իսկոյն եկաւ Թագուհին
Նախասենեակը։

ԹԱԳԱՒՈՐ

Հիմա՞։

ԼԷՐՄԱ

Խնդրում է,
Որ ունկնդրութիւն շընորհէք նորան —

ԹԱԳԱՒՈՐ

Հիմա՞, հիմա՞, այս անսովոր ժամի՞ն —
Ոչ, ես չեմ կարող այժմ ընդունել —
Հիմա չեմ կարող —

ԼԷՐՄԱ

Ահա Թագուհին —
(Նա դուրս է գնում)

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԹԱԳՈՒՀԻ, *մտնում է,* ԻՆՖԱՆՏԻՆԱ.

(Ինֆանտինան վազում է Թագուհու մօտ և կպչում է նորան. Թագուհին ընկնում է Թագաւորի առաջ, որ լուռ և շփոթուած կանգնած է)

ԹԱԳՈՒՀԻ

Իմ տէր ամուսին — ես արդարութիւն
Խնդրում եմ ձեզնից.

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ։ Արդարութի՞ւն —

ԹԱԳՈՒՀԻ

Ես անպատուած եմ։ Արկղս կոտրել են —

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչպէս։

ԹԱԳՈՒՀԻ

Եւ միջից անյայտացել են
Մի քանի բաներ, որոնք ինձ համար
Շատ թանգագին են։ —

ԹԱԳԱՒՈՐ

Որոնք ձեզ համար
Շատ թանգագի՞ն են։ —

ԹԱԳՈՒՀԻ

Թանգագին իրանց
Նշանակութեամբ, որոնց կարող է
Հանգամանքներին անտեղեակ մարդու
Յանդգնութիւնը —

ԹԱԳԱՒՈՐ

Յանդգնութի՞ւնը —
Նշանակութի՞ւն — սակայն վե՛ր կացէք։

ԹԱԳՈՒՀԻ

Ոչ, իմ ամուսին, մինչև որ հաստատ
Խոստում չըտաք ինձ ձեր արքայական
Իշխանութեամբը բաւականութիւն
Տալ ինձ, բերելով առաջս գողին,
Եթէ ոչ՝ փոխել իմ ծառաներին,
Որոնք անկասկած թաքցնում են գողին —

ԹԱԳԱՒՈՐ

Սակայն վե՛ր կացէք — Այդ դրութեան մէջ —
Վե՛ր կացէք։

ԹԱԳՈՒՀԻ (վեր է կենում)

Որ նա բարձրաստիճան է,
Այդ աշկարայ է — Արկղիս մէջը կար

Ակն ու մարգարիտ, որ մէկ միլիօնից
Աւելի արժէր. իսկ նա տարել է
Միայն նամակներ: —

ԹԱԳԱՒՈՐ

Որոնց մասին ես —

ԹԱԳՈՒՀԻ

Պատրաստ եմ, տէր իմ: Այդ նամակները,
Այլև մի պատկեր իշխանիցն էին:

ԹԱԳԱՒՈՐ

Ումի՞ց —

ԹԱԳՈՒՀԻ

Ձեր որդուց:

ԹԱԳԱՒՈՐ

Ձեր անուա՞մբ:

ԹԱԳՈՒՀԻ

Այո՛:

ԹԱԳԱՒՈՐ

Կարլոս իշխանի՞ց: Եւ դուք այդ բանը
Ի՞նձ էք ասում, ի՞նձ:

ԹԱԳՈՒՀԻ

Ինչի՞ չասեմ ձեզ,
Տէր և ամուսին:

ԹԱԳԱՒՈՐ

Եւ այդ ճակատո՞վ:

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ի՞նչ էք ասում: Միթէ չէ՞ք յիշում
Այն նամակները, որ թոյլտուութեամբ
Երկու արքունեաց Դօն Կարլոսը ինձ
Գրում էր Սէն Ժէրմէն: Արդեօք թո՞յլ էր տուած
Նոյնպէս պատկերը, որ նա նոցա հետ
Ինձ ուղարկել էր, թէ միայն նորա
Անհամբեր յո՞յսն էր կառավարել այդ
Համարձակ քայլը — Ես յանձնառու չեմ

վճռել այդ հարցը։ Գուցէ դա էր մի
Անզգուշութիւն, որ ներելի է —
Ես նորա համար երաշխաւոր եմ։
Ի՞նչ կը մտածէր նա այն ժամանակ,
Թէ այդ պատկերը իւր մօր համար էր։
(տեսնելով Թագաւորի վրդովուելը)
Ի՞նչ էր։ Ի՞նչ եղաւ —

ԻՆՖԱՆՏԻՆԱ

(որ այդ միջոցին գտնելով պատկերը գետնի վերայ և նորա հետ խաղալով, տալիս է Թագուհուն)

Տե՛ս, ինչ գեղեցիկ
Պատկեր է, մայրի՛կ —

ԹԱԳՈՒՀԻ

Այդ ի՞նչ է։ Իմն է —

(Նա ճանաչում է պատկերը, և անխօս մնում է կանգնած քարացածի պէս։ Նա և Թագաւորը նայում են միմեանց անթարթ աչքով։ Երկար լռութիւնից յետոյ)

Խոստովանում եմ, տէ՛ր, այդ միջոցը
Ամուսնու սիրտը փորձելու համար,
Շատ ազնիւ է և արքայավայել —
Բայց էլի մի բան ուզում եմ հարցնել։

ԹԱԳԱՒՈՐ

Հարցնելը, տիկի՛ն, ինձ կը վայելի։

ԹԱԳՈՒՀԻ

Թող իմ կասկածով գոնէ չը տանջուի
Անմեղութիւնը։ — Ուրեմն
Ձեր հրամանով էր այդ գողութիւնը —

ԹԱԳԱՒՈՐ

Այո՛։

ԹԱԳՈՒՀԻ

Ուրեմն ինձ էլ ոչ ոքին
Պէտք չէ մեղադրել, ոչ ոքին խղճալ,
Բացի ձեզանից։ Ափսոս, չէ ձեզ կին
Ա յ ն պ ի ս ի ն, որին այդ միջոցները
Յարմար լինէին։

ԹԱԳԱՒՈՐ

Ես արդէն գիտեմ,
Տիկի՛ն, այդ ոճը — էլ երկրորդ անգամ
Ինձ չէք խաբելու, ինչպէս խաբեցիք
Արանջուէցում: Այժմ աւելի
Լաւ եմ ճանաչում այն հրեշտակի պէս
Անմեղ Թագուհուն, որ այն ժամանակ
Այնպիսի պատուով պաշտպանեց իրան:

ԹԱԳՈՒՀԻ

Այս ի՞նչ է:

ԹԱԳԱՒՈՐ

Տիկի՛ն, մի՛ երկարացնէք,
Անենց խօսեցէք — Արդեօք իրա՞ւ է,
Այժմ էլ իրա՞ւ է, որ ոչ ոքի հետ
Չէք խօսել այնտեղ: Ճշմարի՞տ է այդ:

ԹԱԳՈՒՀԻ

Ես իշխանի հետ խօսել եմ: Այո:

ԹԱԳԱՒՈՐ

Այո՞, ասում էք — Ուրեմն պարզ է,
Աշկարայ բան է: Այդպէս լըբաբար,
Այդպէս անխնա՞յ վարուել պատուիս հետ:

ԹԱԳՈՒՀԻ

Տէ՛ր, թէ երկիւղ կար մի պատուի համար,
Ապա աւելի մեծին վտանգ կար,
Քան թէ Կաստիլեան ինձ պարգևել է:

ԹԱԳԱՒՈՐ

Ինչի՞ ուրացաք:

ԹԱԳՈՒՀԻ

Որովհետև, տէր,
Սովոր չեմ, որ ինձ յանցաւորի պէս
Քննեն պալատի սպասաւորների
Ներկայութեամբը: Ես չեմ ուրանայ
Ճշմարտութիւնը, եթէ բարութեամբ

Եւ պատուով հարցնեն: Բայց արդեօք այդպէ՞ս
խօսեցաք ինձ հետ Արանջուէցում
Ձեր մեծութիւնը: Մի՞թէ պալատին
Պէտք է հաշիւ տան թագուհիները
Իրանց ընթացքում: Ես ընդունեցի
Այնտեղ իշխանին, որովհետև նա
Սաստիկ խնդրում էր: Այդպէս վարուեցայ,
Որովհետև ես այդպէս կամեցայ —
Որովհետև ես սովորութեանը
Հաշիւ տալու չեմ երբէք այն բանում,
Ինչ որ անպատշաճ չէ իմ կարծիքով. —
Եւ թէ ծածկեցի ես այն ձեզանից,
Պատճառը այն էր, որ չէի ուզում
Իմ ծառաների առաջ պաշտպանել
Ձեր մեծութեան դէմ իմ իրաւունքը:

ԹԱԳԱՒՈՐ

Շատ համարձակ էք խօսում դուք, տիկի՛ն: —

ԹԱԳՈՒՀԻ

Եւ որովհետև, աւելացնում եմ,
Իշխանը դժուար թէ իւր հօր սրտում
Գտնում լինի այն արդարութիւնը,
Որին իրաւամբ արժանի է նա: —

ԹԱԳԱՒՈՐ

Արժանի է նա:

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ հարկաւոր է
Ծածկել ձեզանից — Ես շատ յարգում եմ
Եւ սիրում նորան ինչպէս թանգագին
Իմ ազգականին, որ համարուած էր
Երբեմն արժանի կրել աւելի
Սիրելի անուն: — Ես չեմ հասկանում,
Ինչո՞ ինձ համար պէտք է նա լինի
Աւելի օտար, քան թէ միւսները,
Որովհետև նա երբեմն ինձ համար
Աւելի թանգ էր, քան թէ ամէնքը:

Եւ եթէ որ ձեր քաղաքականութիւնն
Կապեր է կապում իւր ուղածի պէս,
Ապա նոյնքան հեշտ չի լինի նորան
Լուծել կապածը։ Չեմ ուզում առել
Ուրիշի կամքով — և որովհետև
Ստիպուած եմ խօսիլ — Ուրեմն իմացէք —
Որ այսուհետև ես էլ կամք չունիմ
Սիրտս կաշկանդել։ —

ԹԱԳԱՒՈՐ

Ո՛հ, Էլիսաբէթ,
Դուք ինձ տեսել էք թոյլ ժամանակս։
Այդ յիշատակը ձեզ սիրտ է տալիս։
Դուք հաւատում էք ձեր զօրութեանը,
Որ այնքան անգամ փորձել էք ինձ վրայ —
Բայց ըզգո՛յշ եղէք, ըզգո՛յշ, վախեցէք։
Այն բանը, որ ինձ հասցրեց թուլութեան,
Կարող է հասցնել և կատաղութեան։

ԹԱԳՈՒՀԻ

Ես ի՞նչ եմ արել։

ԹԱԳԱՒՈՐ (բռնում է նորա ձեռը)

Թէ ճշմարիտ է։
Միթէ արդէն չէ՞, թէ աւելանայ
Ձեր մեղադրանքը մազաչափ գոնեա —
Թէ որ խաբուած եմ —

(Թողնում է նորա ձեռը)

Այս թուլութեանն էլ
Կարող եմ յաղթել։ Այո՛, կարող եմ
Եւ կամենում եմ — Եւ այն ժամանակ
Վա՜յ ձեզ և վա՜յ ինձ։

ԹԱԳՈՒՀԻ

Բայց ի՞նչ եմ արել։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ այն ժամանակ արիւն կըթափուի —

ԹԱԳՈՒՀԻ

Տէր Աստուած, — բանը այդ տեղն է հասել:

ԹԱԳԱՒՈՐ

Այժմ ինքս ինձ էլ չեմ ճանաչում —
Ես էլ չեմ յարգում, ոչ սովորութիւն,
Ոչ բնութեան ձայնը, ոչ դաշնադրութիւն: —

ԹԱԳՈՒՀԻ

Ես շատ ցաւումեմ, արքայ, ձեզ համար: —

ԹԱԳԱՒՈՐ

(չըկարողանալով ինքն իրան զսպել)

Անատակ կնոջ ցաւակցութիւնը,
կարեկցութիւնը —

ԻՆՖԱՆՏԻՆԱ

(վախեցած կպչումէ մօրը)

Արքան բարկացաւ
Եւ իմ գեղեցիկ մայրը լալիս է:

ԹԱԳԱՒՈՐ

(կոշտութեամբ հեռացնումէ Թագուհուց երեխային)

ԹԱԳՈՒՀԻ

(քնքշութեամբ և վսեմութեամբ, բայց դողդոջուն ձայնով)

Ձեր հալածանքից գոնեա ազատեմ
Այս երեխային: Ե՛կ, որդեա՛կ, գնանք:
(առնելով նորան իւր գիրկը)
Եթէ քեզ արքան էլ չէ ճանաչում,
Ես Պիրինէեան լեռնաշղթայի
Միւս կողմից պէտք է վկաներ կանչեմ,
Որոնք մեր արդար գործը պաշտպանեն:

(ուզումէ գնալ)

ԹԱԳԱՒՈՐ *(զարմացած)*

Թագուհի՛:

ԹԱԳՈՒՀԻ

Ո՛չ ո՛չ: Ես էլ չեմ կարող: —

Արդէն չափն անցաւ —

(Նա ուզում է համնել դռանը, և չեմքի մօտ վեր է ընկնում երեխայի հետ միասին)

ԹԱԳԱՒՈՐ

(շփոթուած վազում է նորա մօտ)

Աստուած, այս ի՞նչ է։

ԻՆՖԱՆՏԻՆԱ

(աղաղակում է սաստիկ վախեցած)

Ա՜խ, վա՜յ իմ մայրը արիւն է թափում։

(դուրս է վազում)

ԹԱԳԱՒՈՐ (սաստիկ անհանգիստ)

Սոսկալի՜ դիպուած։ Արի՜ւն։ Ինչե՞ր ինձ
Այդպէս պատժում էք։ Վե՛ր կացէք գետնից,
Շո՛ւտ հանգստացէք։ Վե՛ր կացէք — ահա
Եկան, կը տեսնեն — ուզում էք ամբողջ
Պալատս զմայլե՞ այս տեսարանով,
Պէտք է խնդրե՞մ ձեզ, որ դուք վեր կենաք։

(Թագուհին վեր է կենում Թագաւորի օգնութեամբ)

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ԱԼԲԱ, ԴՕՄԻՆԳՕ վախեցած ներս են մտնում, նոցա հետեւում են նաժիշտներ.

ԹԱԳԱՒՈՐ

Տարէ՛ք Թագուհուն շուտ իւր սենեակը,
Նա տկարացաւ։

(Թագուհին դուրս է գնում իւր նաժիշտների հետ. Ալբան և Դօմինգօն առաջ են գալիս)

ԱԼԲԱ

Տէ՛ր իմ, Թագուհին
Լացած աչքերով, երեսն արիւնոտ։ —

ԹԱԳԱՒՈՐ

Այդ զարմացնո՞ւմ է սատանաներին,

Որո՞նք այդ բանը ինձ անել տուին:

ԱԼԲԱ և ԴՈՄԻՆԳՈ

Մե՞նք:

ԹԱԳԱՒՈՐ

Որո՞նք ինձ շատ բան ասացին,
Որ կատաղեցնեն, բայց ոչինչ բանով
Չըհամոզեցին:

ԱԼԲԱ

Մենք տուինք այնքան,
Որքան ունէինք:

ԹԱԳԱՒՈՐ

Դժոխքը լինի
Շնորհակալ ձեզնից: Ես զղջում եմ իմ
Արածի վերայ: Միթէ կարո՞ղ է
Ցանցաւոր խիղճը այն տեսակ խօսել:

ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ (բեմի ետև)

Կարո՞ղ եմ հիմա տեսնել արքային:

ՏԱՍՆԵՒՄԻԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ԹԱԳԱՒՈՐ

(լսելով Մարկիզի ձայնը ուրախանում է և մի քանի քայլ դէմ է գնում նորան)

Ահա՛ նա եկաւ: Բարով ձեզ, մարկի՛զ —
Դուք հարկաւոր չէք, Ալբա՛, հեռացէ՛ք:

(Ալբան և Դոմինգոն զարմացած նայում են միմեանց և դուրս են գնում)

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ

ՄԱՐԿԻԶ

Տէր իմ, Ֆերուանուն, որ քսան անգամ
Պատերազմներում դէմ է գնացել

Ձեզ համար մահուան, ծանր կըթուայ,
Տեսնելով իրան այդպէս հեռացրած:

ԹԱԳԱՒՈՐ

Ձեզ կըվայելէ այդպէս մտածել,
Ինձ այսպէս վարուիլ: Ինչ որ դուք էիք,
Մարկիզ, ինձ համար քանի մի ժամում,
Նա այդ չէ եղել իւր ամբողջ կեանքում:
Ես չեմ կամենում ծածկել իմ սէրը,
Իմ արքայական շնորհը պիտի
Լուսափայլ դրոշմեմ ես ձեր ճակատին:
Ես կամենում եմ, որ նախանձելի
Լինի ամենին իմ բարեկամը:

ՄԱՐԿԻԶ

Եւ ա՞յն ժամանակ, երբ որ խաւարի
Թաղանթը միայն արժանացնում է
Նորան այդ անուան:

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ էք բերում ինձ:

ՄԱՐԿԻԶ

Ես անց եմ կենում նախասենեակում
Եւ մի սոսկալի լուր եմ իմանում,
Որ ինձ թւում է անհաւատալի —
Սաստիկ վէճ — արիւն — իբր թագուհին —

ԹԱԳԱՒՈՐ

Այնտեղի՞ց եկաք:

ՄԱՐԿԻԶ

Սարսափ կըպատէր
Ինձ, եթէ որ այդ լուրը չըստուէր,
Եթէ որ մի բան պատահած լինէր
Այդ միջոցին ձեր մեծութեան կողմից —
Շատ նշանաւոր գիւտեր եմ արել,
Որոնք փոխում են գործի դրութիւնը:

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ կայ, ասացէք:

ՄԱՐԿԻԶ

Ես յարմար միջոց
Գտայ ձեռք բերել Կարլոս իշխանի
Պահարանը իւր միջի թղթերով,
Որոնք, յոյս ունիմ, փոքր ինչ կըպարզեն —

(Նա տալիս է Թագաւորին Կարլոսի պահարանը)

ԹԱԳԱՒՈՐ

(շտապով աչքի տակն է անցկացնում թղթերը)

Նամակ իմ հօրից — որի մասին ես
Բան չեմ իմացել:

(Նա կարդում է այդ նամակը և դնում է մի կողմը և սկսում է կարդալ միւս նամակները)

Մի յատակագիծ
Բերդի շինութեան — քանի մի մտքեր
Տացիտի գրքից — բայց ա՞յս, այս ի՞նչ է —
Գիրն ինձ ծանօթ է: Կնոջ գրած է:

(Նա ուշադրութեամբ կարդում է երբեմն ձայնով երբեմն կամաց)

«Այս բանալիքով — — սենեակները
«Թագուհու բաժնում» — Ա՛հ, այս ինչ բան է —
«Այնտեղ կարող է սէրը համարձակ —
«Եւ գեղեցիկ վարձ» — Ո՛հ, դժոխային
Դաւաճանութիւն: Իմացայ, նա է,
Այս նորա գիրն է:

ՄԱՐԿԻԶ

Թագուհո՞ւ գիրը:
Անկարելի է —

ԹԱԳԱՒՈՐ

Ո՛չ, ո՛չ, Էբօլի
Իշխանուհունն է: —

ՄԱՐԿԻԶ

Ուրեմն սուտ չէր,
Ինչ որ հէնարէց մանկլաւիկը ինձ
Փոքր առաջ պատմեց: Նա ինքն էր տարել
Գիրն ու բանալին:

ԹԱԳԱՒՈՐ

(սաստիկ վրդ·ված բռնում է մարկիզի ձեռը)

Մարկի՛զ, ո՜հ, Մարկի՛զ,
Ի՜նչ զարհուրելի մարդկանց ձեռին եմ:
Այդ կինը — պէտք է խոստովանիմ ձեզ —
Այդ կինը կոտրեց Թագուհու արկղը,
Եւ առաջինը նա ինձ զգուշացրեց —
Ո՛վ գիտէ, ո՞րքան միախորհուրդ է
Հետը աբեղան — ես մի անօրէն
Նենգութեան զոհ եմ:

ՄԱՐԿԻԶ

Ապա ուրեմն
Լաւ էր, որ —

ԹԱԳԱՒՈՐ

Մարկի՛զ, ես վախենում եմ,
Որ ամուսնուս հետ շատ խիստ վարուեցայ:

ՄԱՐԿԻԶ

Եթէ իշխանի և Թագուհու մէջ
Կայ մի կերպ ծածուկ համաձայնութիւն,
Ես համոզուած եմ, որ նպատակը
Այն չէր, որի մէջ ամբաստանուած են:
Ես հաստատ գիտեմ, որ Դօն Կարլոսի
Բրիւսէլ գնալու միտքը յղացաւ
Ամենից առաջ Թագուհու գլխում:

ԹԱԳԱՒՈՐ

Ես ինքս էլ այդպէս էի միշտ կարծում:

ՄԱՐԿԻԶ

Տէ՛ր իմ, Թագուհին շատ փառասէր է —
Կարո՞ղ եմ արդեօք աւելի ասել —
Նա սրտի ցաւով տեսնում է իւր մեծ
Յոյսերից խաբուած և իշխանութեան
Մասնակցութիւնից իրան հեռացրած:
Իշխանի անփորձ, մանուկ հասակը
Յարմար էր նորա նպատակներին —

Իսկ նորա սիրտը — դժուար թէ սիրտ
ընդունակ լինի։

ԹԱԳԱՒՈՐ

Ես չեմ վախենում
Նրա քաղաքական նպատակներից։

ՄԱՐԿԻԶ

Արդեօք սիրո՞ւմ է նորան իշխանը —
Արդեօք այլ երկիւղ չկա՞յ նորանից,
Այդ հարցը ահա՛ պէտք է լաւ քննել։
Մեծ զգուշութիւն է հարկաւոր այստեղ։

ԹԱԳԱՒՈՐ

Դուք նորա համար երաշխաւոր էք —

ՄԱՐԿԻԶ (կարճ մտածելուց յետոյ)

Եթէ ընդունակ համարում էք ինձ,
Տէ՛ր, այդ պաշտօնին, ապա խնդրում եմ,
Որ ինձ անսահման իրաւունք շնորհէք
Վարել այդ գործը ինչպէս կամենամ։

ԹԱԳԱՒՈՐ

Ես համաձայն եմ։

ՄԱՐԿԻԶ

Գոնեա մի՛ տաք
Ինձ օգնականներ, որոնք գործիս մէջ
Ինձ արգելք լինին։ —

ԹԱԳԱՒՈՐ

Լաւ։ Խոստանում եմ.
Դուք բարի հրեշտակ էիք ինձ համար։
Որքան շնորհակալ եմ ես ձեզանից
Այդ բանի համար։
(կոմս Լերմային, որ վերջին խօսքերի ժամանակ ներս է մտնում)
Ի՞նչ դրութեան մէջ
Թողէք թագուհուն։

ԼԵՐՄԱ

Դեռ. ևս շատ թոյլ
Ուշաթափուելուց։

(Նա մի կասկածոտ հայեացք է ձգում մարկիզի վերայ և դուրս է գնում)

ՄԱՐԿԻԶ

(կարճ լռութենից յետոյ Թագաւորին)

Մի զգուշութիւն էլ
Պէտք է գործ դնել: Գուցէ իշխանին
Զգուշացնեն նորա բարեկամները —
Գուցէ ունենայ յարաբերութիւն
Ապստամբների հետ Գենտ քաղաքում:
Երկիւղն յուսահատ քայլեր կարող է
Անել տալ նորան — Եւ այդ պատճառով
Վատ չէր լինելու առաջուց տեսնել
Պատրաստութիւններ այդ դէպքի առաջն
Իսկոյն առնելու:

ԹԱԳԱՒՈՐ

Շատ ճշմարիտ է,
Բայց ի՞նչպէս անենք: —

ՄԱՐԿԻԶ

Ձեր մեծութիւնը
Կըտաք ինձ ծածուկ արգելման հրաման,
Որ կարողանամ իսկոյն գործ դնել,
Երբ վտանգ լինի — և —

(տեսնելով որ Թագաւորը դժուարանում է)

Թող առ այժմ
Տէրութեան գաղտնիք լինի, մինչև որ —

ԹԱԳԱՒՈՐ

(գնում է գրասեղանի մօտ և ստորագրում է արգելման հրամանը)

Երբ տէրութիւնը վտանգի մէջ է,
Պէտք է գործ դնել զօրեղ միջոցներ:
Առէք այս, մարկի՛զ: Ձեզ աւելորդ է
Խնայել պատուիրել —

ՄԱՐԿԻԶ

(արգելման հրամանը ընդունելով)

Ձե՛րդ մեծութիւն,
Կարիք միջոցի համար է միայն:

ԹԱԳԱՒՈՐ

(դնելով ձեռը նորա ուսին)

Գնացէ՛ք, սիրելի՛ Մարկիզ, գնացէ՛ք —
Որ խաղաղութիւն բերէք իմ սրտին,
Բերէք հանգիստ քուն իմ գիշերներին։

(Նոքա դուրս են գնում զանազան կողմերից)

Ճեմելիք

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ *գալիս է սաստիկ շփոթուած,* ԿՈՄՍ ԼԵՐՄԱՆ *հանդիպում է նորան*

ԿԱՐԼՈՍ

Ձեզ եմ որոնում։

ԼԵՐՄԱ

Ես էլ ձեզ, իշխան։

ԿԱՐԼՈՍ

Ճշմարի՞տ է, կոմս, ի սէր Աստուծոյ, ճշմարի՞տ է։

ԼԵՐՄԱ

Ի՞նչ։

ԿԱՐԼՈՍ

Որ նա նորա վրայ դաշոյն է հանել,
Որ արիւնլուայ տարել են նորան
Նորա սենեակից։ Երդուեցնում եմ ձեզ
Բոլոր սուրբերով, պատասխանեցէ՛ք,
Ինչի՞ն հաւատամ, ի՞նչն է ճշմարիտ։

ԼԵՐՄԱ

Նա ուշաթափուեց և վեր ընկնելով
Ցետեց երեսը։ Ուրիշ բան չը կար։

ԿԱՐԼՈՍ

Այլ՝ վտանգ չը կա՞յ։ Իրաւ չը կա՞յ, կոմս,

Խօսեցէք իբրև մի պատուաւոր մարդ։

ԼԵՐՄԱ

Թագուհուն չըկայ վտանգ, բայց ձեզ կայ։

ԿԱՐԼՈՍ

Իմ մօրը չըկա՞յ։ Օրհնեա՛լ է Աստուած։
Սարսափելի լուր հասաւ ականջիս,
Թէ Թագաւորը զայրացել է մօր
Եւ աղջկայ վրայ, թէ իմացուել է
Մի գաղտնիք։

ԼԵՐՄԱ

Գուցէ վերջինն ուղիղ է —

ԿԱՐԼՈՍ

Ուղի՞ղ է, ի՞նչպէս։

ԼԵՐՄԱ

Իշխա՛ն, ես այսօր
Ձեզ մէկ զգուշացրի — արհամարհեցիք։
Օգուտ քաղեցէք երկրորդ անգամից։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչպէս։

ԼԵՐՄԱ

Եթէ որ չեմ սխալվում, իշխա՛ն,
Ես այս օրերում տեսայ ձեր ձեռին
կապոյտ թաւիշով ծածկած և ոսկով
Բանուած պահարան։

ԿԱՐԼՈՍ (*մի փոքր զարմացած*)

Այո՛, ես ունիմ
Այդպիսի մէկը —

ԼԵՐՄԱ

Մի մարգարտապատ
Պատկեր կայ վերան —

ԿԱՐԼՈՍ

Այո՛, այդպէս է։

ԼԵՐՄԱ

Երբ փոքր ինչ առաջ ես անակնկալ
Մտայ արքայի առանձնարանը,
Նորա ձեռին էր նոյն պահարանը,
Եւ Մարկիզ Պօզան մօտը կանգնած էր: —

ԿԱՐԼՈՍ

(կարճ լռութենից յետոյ տաքացած)

Սո՛ւտ է:

ԼԵՐՄԱ (վիրաւորուած)

Ուրեմն ես խաբեբայ եմ:

ԿԱՐԼՈՍ

(երկար միջոց նայում է նորան)

Հա՛, խաբեբայ էք:

ԼԵՐՄԱ

Ա՛խ, ես ներում եմ:

ԿԱՐԼՈՍ

(սաստիկ շփոթուած ման է գալիս, յետոյ կանգնում է նորա առաջ)

Ի՞նչ է արել քեզ: Ի՞նչ են արել քեզ
Մեր մտերմութեան անմեղ կապերը,
Որոնց ուզում ես քանդել դիւական
Հնարքներովդ:

ԼԵՐՄԱ

Ինձ յարգելի է,
Իշխա՛ն, այդ վիշտը, որ ձեզ անում է
Իմ դէմ անարդար:

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ, —
Աստուա՛ծ, դու պահի՛ր սիրտս կասկածից:

ԼԵՐՄԱ

Այլև յիշում եմ արքայի խօսքը,
Որ ասաց նորան, երբ ես ներս մտայ,
Շատ շնորհակալ եմ ձեզանից ես այս
Համբաւի համար:

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, կա՛ց, լռեցէ՛ք:

ԼԷՐՄԱ

Դուքս Ալբան արդէն շնորհից զրկուել է,
Տէրութեան կնիքը Րուի Գոմեցից
Առան և տուին մարկիզ Պօզային: —

ԿԱՐԼՈՍ

(խոր մտածմունքի մէջ ընկղմած)

Եւ նա ինձ չասաց: Ինչո՞ւ չասաց ինձ:

ԼԷՐՄԱ

Բոլոր պալատը համարում է նրան
Հզօր նախարար և թագաւորի
Միակ սիրելին: —

ԿԱՐԼՈՍ

Նա ինձ սիրում էր:
Ես նորա համար այնքան թանգ էի,
Որքան իւր հոգին: Ո՛հ, ես այդ գիտեմ —
Հազար փորձերով ապացուցուած է —
Բայց մարդկութիւնը, բայց հայրենիքը
Ի՞նչպէս նա մէկից թանկ չըհամարէր:
Մէկ բարեկամի համար շատ մեծ էր
Նորա վեհ սիրտը, և նորա սիրոյ
Համար շատ փոքր Կարլոսի բաղդը:
Նա ինձ զոհեց իւր առաքինութեան —
Այժմ հաստատ է, այո՛, հաստատ է,
Ես նորան կորցրի:
(գնում է մի քանի քայլ առաջ և երեսը ծածկում է)

ԼԷՐՄԱ *(կարճ լռութենից յետոյ)*

Թանգագի՛ն իշխան,
Ի՞նչ կարող եմ ես ձեզ համար անել:

ԿԱՐԼՈՍ *(առանց նորան նայելու)*

Գնալ արքայի մօտ և նոյնպէս մատնել:
Ոչինչ կարող չեմ ես ձեզ պարգևել:

ԼԷՐՄԱ

Միթէ կը սպասէ՞ք հետևանքներին:

ԿԱՐԼՈՍ

(Թեք է ընկնում սիւներից մինի վերայ և անթարթ աչքով նայում է իւր առաջ)

Ես նորան կորցրի։ Այժմ մենակ եմ։

ԼԷՐՄԱ

(կարեկցութեամբ մօտ գնալով)

Ձեր ազատութեան վերայ պէտք է ձեզ
Մտածել, իշխան։

ԿԱՐԼՈՍ

Իմ ազատութեա՞ն —
Ո՛վ բարի հոգի։

ԼԷՐՄԱ

Միթէ էլ ուրիշ
Ոչ ոքի համար երկիւղ չէ՞ք կրում։

ԿԱՐԼՈՍ (յանկարծ)

Տէ՛ր Աստուած, ի՞նչ բան յիշեցիք դուք ինձ—
Մայրս—նամակը, որ տուի նորան,
Որ չէի ուզում թողնել նորա մօտ,
Եւ վերջը թողի։

(յուսահատութեան մէջ քայլում է յետ ու առաջ)

Ինչո՞վ այդ բանին
Արժանի էր նա։ Նա ի՞նչ մեղք ունի։
Նորան գոնեա պէտք է խնայէր.
Այնպէս չէ՞, Լէրմա, պէտք է խնայէր։

(շուտ վճռելով)

Ես պէտք է գնամ նորա մօտ — պէտք է
Զգուշացնեմ նորան — պէտք է պատրաստեմ —
Սիրելի՜ Լէրմա, — ես ո՞ւմ ուղարկեմ։
Էլ ոչ ոք չունիմ։ Օրհնեալ է Աստուած։
Դեռ մի բարեկամ — Այսպէս աւելի
Վատանալու չէ գործը։

(շուտ դուրս է գնում)

ԼԷՐՄԱ

(գնում է նորա ետեւից և կանչում է)

Իշխան, ո՞ւր։

(դուրս է գնում)

Թագուհու սենեակը

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԱԼԲԱ, ԴՕՄԻՆԳՕ.

ԱԼԲԱ

Եթէ կըներէք մեզ, մե՛ծ Թագուհի —

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ էք կամենում:

ԴՕՄԻՆԳՕ

Անկեղծ, ճշմարիտ
Հոգացողութիւն ձեր արքայական
Վեհ անձի համար թոյլ չէ տալիս մեզ
Մի հանգամանքի մասին լուռ մնալ,
Որից անկասկած մեծ վտանգ կայ ձեր
Ապահովութեան:

ԱԼԲԱ

Ահա՛ վաղօրօք
Զգուշացնում ենք ձեզ դաւադրութիւնից,
Որ կազմուել է ձեր մեծութեան դէմ:

ԴՕՄԻՆԳՕ

Մենք մեր ջերմեռանդ ծառայութիւնը
Եկել ենք դնել ձեր ոտի տակը:

ԹԱԳՈՒՀԻ (*զարմացած նայում է նոցա*)

Գերապատի՛ւ տէր, և դուք, ազնիւ դո՛ւքս,
Դուք բոլորովին զարմացնում էք ինձ:
Իրաւ, այդպիսի հաւատարմութեան
Ես չէի սպասում ոչ Դոմինգոից,
Ոչ դուքս Ալբայից: Ես գիտեմ, ինչպէս
Կըգնահատեմ — Դուք ինձ ասում էք,
Թէ դաւադրութիւն կազմուել է իմ դէմ:
Արդեօք կարո՞ղ եմ իմանալ, թէ ո՞վ — —

ԱԼԲԱ

Մենք Ձեզ խնդրում ենք, որ կզուշանաք
Մարկիզ Պօզայից, որ ունի գաղտնի
Յանձնարարութիւն արքայի կողմից։

ԹԱԳՈՒՀԻ

Ես շատ ուրախ եմ արքայի յաջող
Ընտրութեան վերայ։ Վաղուց լսել եմ
Մարկիզի մասին, որ նա շատ բարի
Եւ խելօք մարդ է։ Բարձրագոյն շնորհը
Այդպէս իրաւամբ տուած չէր մէկին։

ԴՕՄԻՆԳՕ

Մենք աւելի լաւ գիտենք այդ բանը։

ԱԼԲԱ

Այժմ ամենքը գիտեն այդ մարդու
Արած գործերը։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ է արել նա։
Հետաքրքիր եմ ես էլ իմանալ։

ԴՕՄԻՆԳՕ

Շա՞տ ժամանակ է արդեօք, տիրուհի՛,
Որ բաց էք արել ձեր արկղը։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ։

ԴՕՄԻՆԳՕ

Միթէ ոչինչ բան պակաս չէ միջից։

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչ կայ. ի՞նչ բան է։ Իմ կորցրածը
Արդէն յայտնի է ամբողջ պալատին —
Բայց մարկիզ Պօ՞զան. նա ի՞նչ գործ ունի
Իմ կորուստի հետ։

ԱԼԲԱ

Ունի, Թագուհի՛ —
Իշխանի մօտ էլ անյայտացել են

Հարկաւոր թղթեր, որոնց տեսել են
Այսօր առաւօտ արքայի ձեռքին —
Երբ որ Նորա մօտ էր մարկիզ Պօզան:

ԹԱԳՈՒՀԻ (կարճ մտածմունքից յետոյ)

Զարմանալի է, Աստուած վկայ, շատ
Զարմանալի է — այստեղ գտնում եմ
Ես մի թշնամի, որի մասին ես
Չեմ էլ երազել և նմանապէս
Երկու բարեկամ, որոնց յիշում չեմ
Թէ ունեցել եմ — խոստովանում եմ,
(մի թափանցող հայեացք ձգելով երկուսի վերայ)
Որ փոքր մնաց ձեզ մեղադրէի
Այդ վատ գործի մէջ:—

ԱԼԲԱ

Մե՞զ:

ԹԱԳՈՒՀԻ

Ձե՛զ:

ԴՕՄԻՆԳՕ

Ալբա՛, մեզ:

ԹԱԳՈՒՀԻ

(դեռ ևս աչքերով քննելով Նոցա)
Որքան ուրախ եմ սխալս այսպէս
Շուտ նկատելուն — արդէն ես ինքս
Որոշել էի այսօր իսկ խնդրել
Արքային, որ իմ ամբաստանողին
Բերէ իմ առաջ: Լաւ եղաւ: Հիմա,
Ես դուքս Ալբային վկայ կը կանչեմ:

ԱԼԲԱ

Ի՞նձ, մի՞թէ, իրա՞ւ:

ԹԱԳՈՒՀԻ

Այո՛, ինչո՞ւ չէ:

ԴՕՄԻՆԳՕ

Որ բոլորովին ոչնչացնէք մեր
Ծառայութիւնը, որ մենք ձեզ ծածուկ —

ԹԱԳՈՒՀԻ

Ի՞նչպէս թէ ծածուկ։
(հպարտութեամբ և ծանրութեամբ)
Ցանկալի է ինձ
իմանալ, արդեօք ձեր թագաւորի
կինը ի՞նչ ունի ծածուկ խօսելու
Ձեզ հետ, դո՛ւքս Ալբա, կամ ձեզ հետ, տէր հայր,
Որ իւր ամուսնուն պէտք չէ իմանալ — —
Արդեօք անմե՞ղ եմ, թէ մեղաւոր եմ։

ԴՈՄԻՆԳՈ

Այդ ի՞նչ հարցմունք է։

ԱԼԲԱ

Բայց եթէ արքան
Արդար չըլինի՞, այժմ գոնեա
Արդար չըլինի՞։

ԹԱԳՈՒՀԻ

Ապա կսպասեմ,
Մինչև որ լինի — Երանի նորան,
Ով որ այդ բանից շահուելու ունի։

(Նա գլուխ է տալիս նոցա և դուրս է գնում. նոքա դուրս են գնում ուրիշ կողմից)

Էբօլի իշխանուհու սենեակը

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, փոքր ինչ յետոյ ԿԱՐԼՈՍ.

ԻՇԽԱՆՈՒՀԻ

Ուրեմն ուղի՞ղ է այն զարմանալի
Լուրը, որ արդէն ամենքը գիտեն
Ամբողջ պալատում։

ԿԱՐԼՈՍ (մտնում է)

Ո՛հ, չըվախենաք

Իշխանուհի՛, ես հանդարտ կըլենիմ
Երեխայի պէս։

ԷԲՕԼԻ

Իշխա՛ն —

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, մի՞թէ
Դեռ նեղացած էք։

ԷԲՕԼԻ

Իշխա՛ն։

ԿԱՐԼՈՍ (*ջերմութեամբ*)

Ասացէ՛ք,
Աղաչում եմ ձեզ․ դեռ բարկացա՞ծ էք։

ԷԲՕԼԻ

Իշխա՛ն, այս ի՞նչ է։ Դուք մոռանում էք —
Ի՞նչ էք կամենում։

ԿԱՐԼՈՍ

(*ջերմեռանդութեամբ բռնելով նորա ձեռը*)

Մի՞թէ յաւիտեան
Պիտի ատես դու։ Մի՞թէ վշտացած
Սէրը չէ ներում։

ԷԲՕԼԻ

Իշխա՛ն, այդ ի՞նչ էք
Իմ միտը բերում։

ԿԱՐԼՈՍ

Քո բարութիւնը,
Ո՛վ հրեշտակ և իմ ապերախտութիւնն —
Ո՛հ, ես լաւ գիտեմ, որ քեզ շատ ծանր
Վիրաւորել եմ․ ես պատառել եմ
Քո փափուկ սիրտը և հրեշտակային
Այդ աչքերիցը արտասուք քամել —
Ա՛խ, ես հիմա էլ չեմ եկել, որ իմ
Արածը քաւեմ։

ԷԲՕԼԻ

Իշխա՛ն, թողէ՛ք ինձ —

ԿԱՐԼՈՍ

Եկել եմ քեզ մօտ, որովհետև դու
Հեզ և բարի ես, որովհետև ես
Յոյս դրել եմ ազնիւ սրտիդ վրայ։
Ամբողջ աշխարհում այժմ ես չունիմ
Մի հատ բարեկամ բացի քեզանից։
Երբեմն ինձ հետ շատ բարի էիր —
Միթէ կարո՞ղ ես յաւիտեան ատել,
Միթէ կըմնա՞ս յաւիտեան անհաշտ։

ԷԲՈԼԻ

(երեսը մի կողմ դարձնելով)

Լռեցէք, իշխա՛ն, ի սէր Աստուծոյ —

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, թող յիշեցնեմ ես քեզ ոսկեղէն
Այն ժամանակը — թող քեզ յիշեցնեմ
Սէրդ, որի դէմ այնպէս անարժան
Գտնուեցայ ես։ Թող այժմ լինիմ,
Ինչ որ երբեմն էի քեզ համար,
Ինչ որ քո սիրտը երազել էր ինձ —
Էլի մէկ անգամ, միայն մէկ անգամ,
Քո սրտիդ համար թող լինիմ ես այն,
Ինչ առաջ էի, և այդ ստուերին
Զոհէ՛ր, ինչ որ ինձ էլ զոհելու չես —

ԷԲՈԼԻ

Տէ՛ր Աստուած, իշխա՛ն, ինչպէս անողորմ
Խաղում էք ինձ հետ։

ԿԱՐԼՈՍ

Վեհանձն եղիր
Քան թէ քո սեռը։ Հրեշտա՛կ, մոռացի՛ր
Անպատուութիւնը։ Արա՛ այն, ինչ որ
Քեզանից առաջ մի կին չէ արել —
Քեզանից յետոյ մի կին չի անի։
Ես պահանջում եմ չլսուած մի բան։
Ես ծունկ խոնարհած աղաչում եմ քեզ —
Թո՛ղ ինձ երկու բառ խօսեմ մօրս հետ։

(ընկնում է նորա առաջ)

ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ *շտապով ներս է ընկնում, նորան հետեւում են Թագաւորի Թիկնապահ օֆիցերներ*

ՄԱՐԿԻԶ

(շունչը կտրած և սաստիկ շփոթուած կանգնումէ երկուսի մէջ)

Ի՞նչ խոստովանեց ձեզ. չըհաւատաք։

ԿԱՐԼՈՍ

(դեռ ևս ծնկան վրայ, աւելի բարձր ձայնով)

Ի սէր Աստուծոյ: —

ՄԱՐԿԻԶ *(շուտ կտրումէ նորա խօսքը)*

Սա խելագար է։

Մի՛ լսէք սորան։

ԿԱՐԼՈՍ *(աւելի բարձր և Թախանձագին)*

Կեանքս և մահս

Ձեզնից է կախուած։ Տարէ՛ք նորա մօտ։

ՄԱՐԿԻԶ

(սաստկութեամբ քաշում է իշխանուհուն մի կողմը)

Ես Ձեզ կսպանեմ, եԹէ կը լսէք։

(օֆիցերներից մէկին)

Արքայի անուամբ

(ցոյց է տալիս արգելման հրամանը)

Կո՛մս, իշխանը ձեր

կալանաւորն է։

(Կարլոսը կանգնած է քարացած, ինչպէս կայծակից զարկուած. իշխանուհին սարսափած ազազակումէ և ուզումէ փախչել։ Օֆիցերները զարմանումեն։ Երկար և խոր լռութիւն։ Մարկիզը սաստիկ դողումէ և հազիւ կարողանում է իշխել ինքն իրան վրայ)

Իշխա՛ն, խնդրումեմ

Տաք ինձ ձեր սուրը — Դուք, իշխանուհի՛,

Կըմնաք այստեղ։

(օֆիցերներին)

Դուք, կո՛մս Կօրդուա,

Երաշխաւոր էք, որ իշխանի հետ
Ոչ ոք չըխօսի — ո՛չ ոք — ո՛չ էլ դուք:
Դուք ձեր գլխովը երաշխաւոր էք:

(Նա էլի մի քանի խօսք ծածուկ խօսում է օֆիցերի հետ և յետոյ դառնում է միւսին)

Ես իսկոյն կերթամ և հաշիւ կըտամ
Նորին մեծութեան:

(Կարլոսին)

Ձեզ նոյնպէս, իշխա՛ն —
Մի ժամից յետոյ ձեզ մօտ կըլինիմ:

(Կարլոսը բոլորովին անզգայ թոյլ է տալիս որ իրան տանեն։ Նա մարկիզի մօտով անցկենալիս ձգում է նորա վրայ մի չատ տխուր հայեացք. մարկիզը ծածկում է իւր երեսը։ Իշխանուհին կրկին փորձում է փախչել, բայց մարկիզը բռնում է նորա ձեռից և յետ է բերում)

ՅԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ.

ԷԲՕԼԻ

Ի սէր Աստուծոյ, թողէ՛ք հեռանամ: —

ՄԱՐԿԻԶ

(բերում է նորան բոլորովին առաջ. սարսափելի ծանրութեամբ)

Ասա՛, տարաբա՛խտ, ի՞նչ ասաց նա քեզ:

ԷԲՕԼԻ

Ոչի՛նչ — Թողէ՛ք ինձ —

ՄԱՐԿԻԶ

(բռնութեամբ պահում է նորան. աւելի խստութեամբ)

Ո՞րքան իմացար
Դու էլ իմ ձեռից ազատուելու չես,
Դու այն ոչ ոքին էլ պատմելու չես:

ԷԲՕԼԻ

(վախեցած նայում է նորա երեսին)

Տէ՛ր Աստուած, ի՞նչ էք կամենում անել:
Մի՞թէ ուզում էք դուք ինձ սպանել:

ՄԱՐԿԻԶ (հանում է մի դաշոյն)

Այո՛, իրաւ որ այդ միտքը ունիմ:
Կարճ կտրիր:

ԷԲՕԼԻ

Ի՞նձ, ի՞նձ: Ո՛վ տէր Արարիչ,
Ես ի՞նչ եմ արել:

ՄԱՐԿԻԶ

(վեր նայելով և դաշոյնը նորա կուրծքին դէմ անելով)

Դեռ ժամանակ կայ:
Դեռ ևս թոյնը չէ ապականել
Այս շրթունքները: Ահա կըփշրեմ
Այս անօթը և ամէն բան կըմնայ
Ինչպէս առաջ էր — Իսպանիայի
Ճակատագիրը և մի կնոջ կեանք —

(նա մնում է այդ դրութեան մէջ տարակուսած)

ԷԲՕԼԻ

(ընկել է նորա առաջ և աներկիւղ նայում է նորա երեսին)

Ի՞նչ էք ուշացնում: Ես չեմ խնդրում ձեզ,
Որ ինձ խնայէք — Ո՛չ: Արժանի եմ
Մահուան — ես ինքս ուզում եմ մեռնել:

ՄԱՐԿԻԶ

(կամաց վեր է թողնում ձեռը. երկար մտածելուց յետոյ)

Ո՛չ: Այս կըլինէր և երկչոտութիւն
Եւ անգթութիւն — Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում:
Օրհնեա՜լ է Աստուած. ուրիշ միջոց կայ:

(դաշոյնը վեր է ընկնում նորա ձեռից և նա շուտ հեռանում է: Իշխանուհին դուրս է վազում ուրիշ դռնից)

Թագուհու սենեակներից մէկը

ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԿՈՄՍՈՒՀԻ ՖՈՒԷՆՏԷՍԻՆ

Այս ի՞նչ շփոթ է ամբողջ պալատում:
Այսօր ամէն ձայն ինձ վախեցնում է:
Գնացէք, իմացէք, արդեօք ի՞նչ բան է:

(կոմսուհի Ֆուէնտէսը դուրս է գնում և ներս է վազում իշխանուհի Էբօլին)

ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ

ԷԲՕԼԻ

(Շնչասպառ, գունաթափ և սարսափած ընկնում է թագուհու առաջ)

Թագուհի՛, շուտով օգնութի՛ւն հասէք,
Նա արգելուած է։

ԹԱԳՈՒՀԻ

Ո՞վ։

ԷԲՕԼԻ

Մարկիզ Պօզան
կալանաւորեց նորան արքայի
Հրամանագրով։

ԹԱԳՈՒՀԻ

Բայց ո՞ւմ։

ԷԲՕԼԻ

Իշխանին։

ԹԱԳՈՒՀԻ

Խելագարուե՞լ ես։

ԷԲՕԼԻ

Այս իսկ րոպէին
Տանում են նորան։

ԹԱԳՈՒՀԻ

Բայց ո՞վ, ասացէք,
կալանաւորեց։

ԷԲՕԼԻ

Մարկիզ դը Պօզան։

ԹԱԳՈՒՀԻ

Լաւ է, որ նա է կալանաւորել։

ԷԲՕԼԻ

Այդ դո՞ւք էք ասում և այդպէս հանգիստ —

Տէ՛ր Աստուած, միթէ չէ՞ք գուշակում դուք —
Ոչի՞նչ չը գիտէ՞ք —

ԹԱԳՈՒՀԻ

Թէ ինչի համար
Բանտարկուա՞ծ է նա. անշուշտ անզգոյշ
Մի քայլի համար, որ նորա կրակոտ
Բնաւորութեան շատ բնական է։

ԷԲՈԼԻ

Ո՛չ, ես լաւ գիտեմ — Ո՛չ, ո՛չ, Թագուհի՛.
Մի սարսափելի դժոխային գործ —
Նորան փրկութիւն չըկայ։ Կըմեռնի։

ԹԱԳՈՒՀԻ

Կըմեռնի՞։

ԷԲՈԼԻ

Եւ ես նորա սպանողն եմ։

ԹԱԳՈՒՀԻ

Կըմեռնի՞, անմի՛տ, խօսքդ մտածիր։

ԷԲՈԼԻ

Եւ ինչի՞ պիտի նա մեռնի — ինչի՞ —
Ո՛հ, գիտենայի, թէ բանը մինչև
Այդտեղ կը հասնի։

ԹԱԳՈՒՀԻ

(բարեսրտութեամբ բռնում է նորա ձեռը)

Իշխանուհի՛, դուք
Դեռ վրդովուած էք։ Դեռ հանգստացէ՛ք,
Յետոյ պատմեցէ՛ք հանդարտ, անվրդով,
Ոչ թէ սոսկալի այդ եղանակով,
Որ իմ սրտի մէջ սարսափ է ձգում։
Ի՞նչ էք իմացել, ի՞նչ է պատահել։

ԷԲՈԼԻ

Ո՛հ, մի՛ երկնային այդ խոնարհութեամբ,
Մի՛ այդ բարութեամբ վարուէք, Թագուհի՛։
Դա դժոխային բոցերի նման

Այրում, կիզում է իմ խղճմտանքը։
Ես անարժան եմ իմ ապականուած
Աչքը բարձրացնել դէպի ձեր փառքը։
Կոխեցէք ոտով թշուառականին,
Որ խղճից տանջուած, ամօթով ծածկուած,
Ինքը իրանից զզուած, սողում է
Ձեր ոտի տակը։

ԹԱԳՈՒՀԻ

Տարաբախտ, ի՞նչ կայ,
Ի՞նչ պիտի ասէք։

ԷԲՕԼԻ

Ո՛վ լուսոյ հրեշտակ,
Ո՛վ վեհ սրբուհի, դուք դեռ չգիտէք,
Դեռ չէք ճանաչում այն սատանային,
Որի երեսին սիրով ժպտում էք—
Այսօր դուք նորան պիտի ճանաչէք—
Ես եմ ձեր գողը։

ԹԱԳՈՒՀԻ

Դո՞ւք։

ԷԲՕԼԻ

Ես յանձնեցի
Ձեր նամակները Թագաւորին։

ԹԱԳՈՒՀԻ

Դո՞ւք։

ԷԲՕԼԻ

Ես յանդգնեցայ ձեզ ամբաստանել—

ԹԱԳՈՒՀԻ

Դո՞ւք էիք —

ԷԲՕԼԻ

Վրէժ,— սէր — կատաղութիւն։
Ձեզ ատում էի, իշխանին սիրում։

ԹԱԳՈՒՀԻ

Եւ որովհետև դուք սիրում էիք —

ԷԲՕԼԻ

Որովհետև ես խոստովանեցայ
Նորան իմ սէրը և սէր չը գտայ։

ԹԱԳՈՒՀԻ (*կարճ լռութենից յետոյ*)

Ո՛հ, հիմա պարզուեց բանը — վե՛ր կացէք։
Դուք սիրում էիք — Արդէն ներեցի,
Արդէն մոռացայ — վե՛ր կացէք։
(*մեկնում է նորան իւր ձեռը*)

ԷԲՕԼԻ

Ո՛չ, ո՛չ,
Դեռ էլի ունիմ մի զարհուրելի
Խոստովանութիւն, մինչև որ չասեմ —

ԹԱԳՈՒՀԻ (*ուշադրութեամբ*)

Ի՞նչ պիտի լսեմ։ Ասացէք տեսնեմ։

ԷԲՕԼԻ

Արքան — պատիւս — Դուք հեռացնում էք
Ձեր աչքը ինձնից — Եւ արհամարհանք
Ձեր դէմքի վերայ — Այն մեղքը, որ ձեր
Վշտին կապեցի, — ինքս գործեցի։

(*Նա սխմում է իւր բորբոքուող երեսը գետնին. Թագուհին դուրս է գնում։ Երկար լռութիւն։ Մի քանի րոպէից յետոյ սենեակից, որի մէջ մտաւ Թագուհին, դուրս է գալիս դքսուհի Օլիվարէսը, և գտնում է իշխանուհուն նոյն դրութեան մէջ ընկած։ Նա կամաց մօտ է գնում նորան. Նորա քայլերի ձայնի վերայ բարձրացնում է իշխանուհին իւր գլուխը և տեսնելով որ Թագուհին չկայ՝ կատաղածի պէս վեր է թռչում։*)

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, ԴՔՍՈՒՀԻ ՕԼԻՎԱՐԷՑ.

ԷԲՕԼԻ

Տէ՛ր Աստուած, նա ինձ թողեց ու գնաց։
Բանը վերջացաւ։

ՕԼԻՎԱՐԷՑ (*մօտ գնալով*)

Իշխանուհի՛։

ԷԲՕԼԻ

Ո՛հ,

Ես արդէն գիտեմ, ինչ է ձեր գալը.
Ձեզ ուղարկում է Թագուհին յայտնել
Դատավճիռս — էլ մի՛ ուշացնէք:

ՕԼԻՎԱՐԷՑ

Ես հրաման ունիմ Թագուհուց ստանալ
Ձեզնից ձեր խաչն ու բանալիները:

ԷԲՕԼԻ

(առնում է կուրծքից մի ոսկէ խաչ և տալիս է դքսուհուն)

Էլի մի անգամ՝ ինձ թոյլ կըտրուի՞
Արդեօք համբուրել ամենաբարի
Թագուհուս ձեռը:

ՕԼԻՎԱՐԷՑ

Սուրբ Աստուածածնի
Վանքում կըլսէք դուք ձեր վճիռը:

ԷԲՕԼԻ

(աչքերից արտասուք թափելով)

Մի՞թէ Թագուհուն ես էլ չեմ տեսնի:

ՕԼԻՎԱՐԷՑ

(գրկում է նորան երեսը մի կողմ դարձնելով)

Ո՛չ, իշխանուհի՛: Մնացէք բարով:

(Նա շուտով հեռանում է: Իշխանուհին հետևում է նորան մինչև Թագուհու առանձնարանի դուռը, որ դքսուհու ետևից կողպվում է: Մի քանի րոպէ լուռ և անշարժ ծնկան վերայ չոքած մնում է դռան առաջ, յետոյ շուտ վեր է թռչում և շտապով դուրս է գնում երեսը ձեռներով ծածկած)

ՔՍԱՆԵՒՄԻԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ.

ԹԱԳՈՒՀԻ

Վերջապէս, մարկի՛զ, ինչ լաւ, որ եկաք:

ՄԱՐԿԻԶ

(գունաթափ, այլայլած դէմքով, դողդոջուն ձայնով և այս բոլոր տեսարանի միջոցին հանդիսաւոր ձևերով)

Արդեօք մենա՞կ էք, ձե՛րդ մեծութիւն,
Ոչ ոք կարող չէ՞ կից սենեակներից
Ականջ դնել մեզ:

ԹԱԳՈՒՀԻ

Ոչ, ոք. ի՞նչ ունիք:
(աւելի մօտիկ զննելով նորան և վախեցած յետ քաշուելով)
Ի՛նչպէս փոխուել էք. ի՞նչ է պատահել:
Մարկի՛զ, դուք ինձ վրայ սարսափ էք բերում:
Ձեր դէմքը ուղիղ մեռնողի դէմք է:

ՄԱՐԿԻԶ

Անշուշտ ձեզ արդէն յայտնի կը լինի:

ԹԱԳՈՒՀԻ

Որ բանտարկուած է Կարլոս իշխանը,
Եւ որ ձեր ձեռով, ինչպէս ասում են:
Ուրեմն ուղի՞ղ է: Չէի կամենում
Մարդու հաւատալ, մինչև ձեզանից
Ես չըստուգէի:

ՄԱՐԿԻԶ

Այո՛, ուղիղ է:

ԹԱԳՈՒՀԻ

Դո՞ւք բանտարկեցիք:

ՄԱՐԿԻԶ

Այո՛, ես ինքս:

ԹԱԳՈՒՀԻ

(մի քանի վայրկեան կասկածելով նայում է նորան)
Ես յարգում եմ ձեր բոլոր գործերը,
Թէև շատ անգամ չեմ էլ հասկանում.
Սակայն այս անգամ — ներեցէք, մարկի՛զ —
Ես վախենում եմ, որ շատ համարձակ
Խաղ էք ըսկսել:

ՄԱՐԿԻԶ

Եւ ես տարուեցայ:

ԹԱԳՈՒՀԻ

Արարի՛չ Աստուած —

ՄԱՐԿԻԶ

Ո՛վ իմ թագուհի,
Դուք հանգիստ եղէք: Ես նորա հոգսը
Արդէն քաշել եմ: Ես ինքս եմ տարուել:

ԹԱԳՈՒՀԻ

Աստուած իմ, արդեօք ի՞նչ պիտի լսեմ:

ՄԱՐԿԻԶ

Ինձ ո՞վ էր ասում, որ մի անգամից
Բոլորը յանձնեմ անհաստատ խաղին,
Եւ երկնքի հետ այսպէս յանդուգն
Եւ վստահ խաղամ: Ո՞վ է այն մարդը,
Որ յանդգնում է դիպուածի ծանր
Ղեկը ձեռն առնել, երբ որ նա ինքը
Չէ ամենագէտ: Ո՛հ, այս երկնային
Արդարութիւն է — Բայց ինչի՞ այժմ
Իմ մասին խօսիլ: վայրկեանը թանգ է,
Ինչպէս մարդու կեանք: Եւ ո՞ւմ յայտնի է,
Թէ դատաւորի ժլատ ձեռն արդէն
Չէ քամում կեանքիս վերջին կաթիլներ:

ԹԱԳՈՒՀԻ

Դատաւորի ձե՞ռ — Այդ ի՞նչ խօսքեր են:
Դոցա իմաստը մութն է ինձ համար,
Բայց սիրտս արդէն սկսում է դողալ:

ՄԱՐԿԻԶ

Նա ազատուած է. բայց թէ ինչ գնով,
Այդ մի և նոյն է: Բայց միայն այսօր:
Նա ունի միայն մի քանի վայրկեան:
Թող զուր չըկորցնէ: Արդէն այս գիշեր
Պէտք է անպատճառ Մադրիդը թողնէ:

ԹԱԳՈՒՀԻ

Արդէն այս գիշե՞ր:

ՄԱՐԿԻԶ

Արդէն ամէն ինչ
Ես պատրաստել եմ: Նոյն վանքում, որ մեր

Բարեկամութեան միշտ ծառայում էր
Իբրև ապահով ապաստանարան,
Այն տեղ սպասում են նորան ձիաներ։
Առէք ինձանից այս մուրհակները։
Այդ է բոլորը, ինչ որ այս կեանքում
Բաղդն ինձ տուել է։ Ինչ որ պակաս է,
Դուք կլրացնէք։ Թէև սրտումս
Շատ բան կայ, ինչ որ պէտք է յայտնէի
Ես իմ Կարլոսին. բայց կարելի է
Ես էլ ժամանակ չըգտնեմ անձամբ
Հետը խօսելու — Դուք այս երեկոյ
Կըտեսնէք նորան և այդ պատճառով
Ես ձեզ եմ դիմում —

ԹԱԳՈՒՀԻ

Մարկի՛զ, խնդրում եմ
Պարզ խօսէք ինձ հետ, ոչ թէ այդպէս
Անհասկանալի հանելուկներով։
Ի՞նչ է պատահել։

ՄԱՐԿԻԶ

Դեռ ևս ունիմ
Ես մի խոստովանք, և այն ձեր ձեռին
Պիտի աւանդեմ։ Ես բաղդ ունեցայ,
Որին շատ քիչ մարդ արժանանում է,
Ես սիրում էի արքայի որդուն —
Սիրտս նուիրած միմիայն մէկին,
Ամբողջ աշխարհն էր իւր մէջ ամփոփում։
Ես իմ Կարլոսի հոգում ստեղծեցի
Բիւրաւորների համար մի դրախտ։
Ո՛հ, ինչ գեղեցիկ երազներ էին —
Նախախնամութեան կամքն էր վաղօրօք
Ինձ իմ գեղեցիկ պարտէզից կանչել։
Շուտով Կարլոսը էլ չի ունենայ
Իւր Րօդրիգօին, և բարեկամին
Կըփոխանակէ նորա սիրուհին։
Ես այստեղ — այս սուրբ սեղանի վերայ

Եւ իւր Թագուհու գեղեցիկ սրտում
Ահա իմ վերջին կտակն աւանդում եմ,
Ուր նա կգտնէ, երբ էլ չեմ լինի: —
(Նա դարձնում է երեսը մի կողմը, արտասուքները խեղդում են նորա ձայնը)

ԹԱԳՈՒՀԻ

Ուղիղ մեռնողի լեզուով էք խօսում:
Ես դեռ յուսով եմ, որ դա արիւնի
Վրդովմունքից է — կամ գուցէ մի՞տք կայ
Այդ խօսքերի մէջ:

ՄԱՐԿԻԶ

(փոքր ինչ հանդարտուելով չարունակում է հաստատ ձայնով)

Խնդրում եմ ասէք
Կարլոս իշխանին, որ չմոռանայ
Այն ուխտը, որ մենք ոգևորութեան
Օրերում արինք սուրբ նշխարի վրայ:
Ահա իմ ուխտը ես կատարեցի,
Եւ հաւատարիմ մնացի մինչև մա՞հ —
Հիմա նա պէտք է իւրը —

ԹԱԳՈՒՀԻ

Մինչև մահ:

ՄԱՐԿԻԶ

Ո՛հ, ասացէք, որ թող իրագործէ,
Նա այն ցնորքը, մի նոր տէրութեան
Գեղեցիկ ցնորքը, որ մեր երկուսի
Բարեկամութեան երկնային ծնունդն էր:
Թող նա միայն սկսէ: Արդեօք կը յաջողէ,
Թէ կը յաղթուի. այդ միևնոյն է.
Թող միայն սկսէ: Երբ որ կթռչին
Մի քանի դարեր, նորա պէս մէկին
Նախախնամութիւնը կըբարձրացնէ
Մի գահի վերայ և իւր ընտրածին
Կըոգևորէ նոյն գաղափարով:
Ասացէք նորան, որ իւր մանկութեան
Երազներն յարգէ, երբ որ այր դառնայ,
Որ փառաւորուած իմաստութեանը,

Այդ կրծող որդնին, չըթողնէ մտնել
Այդ աստուածային ծաղկի սրտի մէջ —
Թող չըմոլորուի, երբ փոշիապատ
Իմաստութիւնը սկսէ հայհոյել
Նորա երկնածին ոգեւորութիւնն —
Նորան առաջուց գուշակել եմ այդ: —

ԹԱԳՈՒՀԻ

Մարկի՛զ, մեկնեցէ՛ք —

ՄԱՐԿԻԶ

Ասացէ՛ք Նորան,
Որ Նորա սրտին ես պարտք եմ դնում
Մարդկային բաղդը: Ես պահանջում եմ —
Այո՛, պահանջում եմ ես Նորանից,
Եւ պահանջում եմ մեծ իրաւունքով:
Ինձնից էր կախուած մի նոր առաւօտ
Շնորհել այս երկրին: Թագաւորը ինձ
Իւր սիրտն ընծայեց. Նա ինձ իւր որդի
Անուանեց: Նորա կնիքն իմ ձեռին է,
Եւ Ալբաները այժմ էլ չըկան.
(լռում է և մի քանի վայրկեան նայում է Թագուհու վերայ)
Դուք լաց էք լինում — ես ճանաչում եմ
Այդ արտասուքը, ո՛վ ազնիւ հոգի:
Այդ ուրախութեան արտասուքներ են —
Բայց անցաւ, անցաւ — Կարլոսը, կամ ես —
Ընտրութիւնը շուտ և սոսկալի էր.
Մէկը մեզանից անշուշտ կորած էր:
Եւ ես կամեցայ այդ մէկը լինել —
Լաւ էր ես ինքս — Այսքան հերիք է.
Աւելի ասել էլ մի՛ պահանջէք:

ԹԱԳՈՒՀԻ

Հիմա, հիմա միայն ես ձեզ հասկացայ:
Տարաբա՛ղդ, ինչե՞ արիք այդ բանը:

ՄԱՐԿԻԶ

Երկու կարճատեւ իրիկնաժամեր
Ես զոհ բերի, որ փրկեմ մի պայծառ

Ամառնային օր։ Ես հրաժարուեցայ
Արքայից. և ի՞նչ կարող եմ լինիլ
Արքայի համար.— Այդտեղ, այդ մեռած
Հողում կարող չեն վարդերս աճել։
Ողջ Եւրոպայի ճակատագիրը
Հասունում է իմ մեծ բարեկամի մէջ։
Նորան եմ յանձնում ես իմ Սպանիան։
Մինչ այն ժամանակ թող արիւն թափէ
Փիլիպպի ձեռին — Բայց վա՜յ, վա՜յ է ինձ
Եւ վա՜յ է նորան, եթէ որ զղջամ
Իմ ընտրութեան վրայ — Ոչ, իմ Կարլոսին
Ես ճանաչում եմ։ Այդ լինելու չէ —
Եւ դուք, թագուհի՛, դուք պիտի լինիք
Ինձ երաշխաւոր։
(կարճ լռութենից յետոյ)
Ես տեսայ ինչպէս
Ծլեց այդ սէրը։ Ես տեսայ ինչպէս
Նորա սրտի մէջ արմատ բռնեց այդ
Տարաբաղդ կիրքը։ Այն ժամանակը
Ես կարող էի դորա դէմ կռուել.
Բայց չկամեցայ։ Ես գգվում էի
Այդ սէրը, որից մի վտանգ չըկար—
Աշխարհը այլ կերպ կարող է դատել.
Բայց ես չեմ զղջայ։ Սիրտս այդ բանում
Ինձ չէ մեղադրում։ Կեանք էր երևում
Ինձ, ուր այլ մարդիկ մահ էին տեսնում —
Անյոյս այդ բոցում նկատում էի
Ապագայ յուսոյ ոսկեփայլ լոյսը։
Ես ուզում էի կատարելութեան
Ամենաբարձր գեղեցկութեանը
Հասցնել նորան։ Բայց իմ մարդկային
Տկարութիւնը չէր գտնում պատկեր,
Ոչ լեզուս բառեր — Այն ժամանակ ձեզ
Ցոյց տուի նորան — Այդ օրից ահա՛
Իմ բոլոր ջանքն էր բացատրել նորան
Այդ ազնիւ սիրոյ նշանակութիւնն։

ԹԱԳՈՒՀԻ

Մարկի՛զ, դուք այնչափ գրաւուած էիք
Ձեր բարեկամով, որ ինձ մոռացաք։
Մի՞թէ դուք իրաւ հաւատում էիք,
Թէ չըկայ իմ մէջ կանացի բնութիւն,
Եւ ինձ շինելով նորա հրեշտակը
Կարծում էիք, թէ առաքինութեան
Ձէնք տուիք նորան։ Մի բանի վերայ
Ուշ չէք դարձրել, որքան վտանգ կայ
Կնոջ սրտի համար, երբ որ այդ տեսակ
Ազնիւ անուններ տալիս ենք կրքին։

ՄԱՐԿԻԶ

Ամենի համար, մէկի համար ոչ,
Որով երդվում եմ — Բայց մի՞թէ իրաւ
Ամաչում էք դուք այն ազնիւ ըղձից,
Արարիչ լինել վեհ, դիւցազնական
Առաքինութեան։ Փիլիպպոսին ի՞նչ,
Եթէ որ նորա Այլակերպութեան
Անմահ պատկերը Էսկուրիալի մէջ
Նկարչի հոգին անմահանալու
Ըղձով վառում է։ Ներդաշնակութիւնն,
Որ ամփոփուած է քնարի լարերում,
Մի՞թէ գնողին է նա պատկանում,
Որ խուլ է նորա ձայների համար։
Ո՛չ, նա գնել է նորան փշրելու
Լոկ իրաւունքը, ոչ թէ արհեստը
Անուշիկ ձայներ հանել լարերից
Եւ յափշտակուիլ քաղցր երգերից։
Ճշմարտութիւնը իմաստունինն է,
Գեղեցկութիւնը զգացող սրտինն է.
Նոքա երկուսը միմեանց համար են։
Այս է հաւատս, որ չէ խլելու
Երբէք ինձանից ոչ ոքի կարծիք։
Խոստացէք, որ միշտ կըսիրէք նորան,
Որ ոչ երկիւղով աշխարհի առաջ,

Ո՛չ ունայն և սուտ դիւցազնութեամբը
Չէք խաբուի երբէք ուրանալ նորան.
Այլ որ կըսիրէք միշտ և յաւիտեան—
Թագուհի՛, տուէ՛ք ինձ այս խոստումը։

ԹԱԳՈՒՀԻ

Խոստանում եմ ձեզ, որ այսուհետև
Սիրտս կը լինի սիրոյս դատաւոր.

ՄԱՐԿԻԶ

Այժմ կարող եմ ես հանգիստ մեռնել—
Գործս վերջացրի։
(գլուխ է տալիս Թագուհուն և ուզում է գնալ)

ԹԱԳՈՒՀԻ

(լուռ նայում է նորա ետևից)
Մարկի՛զ, գնում էք
Առանց ասելու, թէ ե՞րբ մենք դարձեալ
Միմեանց կըտեսնենք։

ՄԱՐԿԻԶ

(յետ է գալիս երեսը մի կողմը դարձնելով)
Անշուշտ մենք էլի
կըտեսնենք միմեանց։

ԹԱԳՈՒՀԻ

Հասկացայ, Պո՛զա։
Ես լաւ հասկացայ։ Ա՛խ, ինչո՞ւ արիք
Դուք ինձ այդ բանը։

ՄԱՐԿԻԶ

Կամ նա, կամ թէ ես։

ԹԱԳՈՒՀԻ

Ո՛չ, դուք էք ձգում ձեզ այդ բանի մէջ,
Որ համարում էք շատ բարձր և վսեմ։
Մի՛ ուրանաք։ Ես ճանաչում եմ ձեզ։
Վաղուց այդ բանին փափագում էիք —
Թող հազարաւոր սրտեր կոտրուին.
Այդ ձեր հոգսը չէ, միայն՝ թէ դուք ձեր
Հպարտութիւնը բաւականացնէք։

Ո՛հ, հիմա — հիմա ճանաչեցի ձեզ։
Դուք ուզում էիք միայն զարմացնել։

ՄԱՐԿԻԶ (*զարմացած ինքն իրան*)

Ո՛չ, ես այդ բանին պատրաստուած չէի —

ԹԱԳՈՒՀԻ (*կարճ լռութիւնից յետոյ*)

Մի՞թէ փրկութիւն չըկայ ձեզ, մարկի՛զ։

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ։

ԹԱԳՈՒՀԻ

Ամենևի՞ն — լաւ մտածեցէք։
Միթէ հնար չըկա՞յ։ Ոչ էլ ի՞մ ձեռով։

ՄԱՐԿԻԶ

Ոչ էլ ձեր ձեռով։

ԹԱԳՈՒՀԻ

Միայն կիսով չափ
ճանաչում էք ինձ։ Ես աներկիւղ եմ։

ՄԱՐԿԻԶ

Գիտեմ։

ԹԱԳՈՒՀԻ

Գիտէ՞ք, և չըկա՞յ փրկութիւն։

ՄԱՐԿԻԶ

Չըկայ։

ԹԱԳՈՒՀԻ

(*Թողնում է նորան, երեսը ծածկելով*)
Գընացէ՛ք։ Ես այսուհետև
Էլ յարգելու չեմ ոչ մի այր մարդու։

ՄԱՐԿԻԶ

(*սաստիկ շարժած ընկնում է նորա առաջ*)
Թագուհի՛ — աւա՜ղ, կեանքը շատ քաղցր է։
(*Նա վեր է թռչում և շտապով դուրս է գնում. Թագուհին գնում է իւր առանձնարանը*)

թագաւորի նախանձնակը

ՔՍԱՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴՈՒՔՍ ԱԼԲԱ և ԴՕՄԻՆԳՕ լուռ մտն են գալիս մի կողմը, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ, դուրս է գալիս Թագաւորի առանձնարանից, փոքր ինչ յետոյ մտնում է ԴՕՆ ՐԱՅՄՕՆԴ ՏԱՔՍԻՍ, սուրհանդակապետ։

ԼԷՐՄԱ

Արդեօք մարկիզը դեռ ևս եկել չէ՞։

ԱԼԲԱ

Դեռ ո՛չ.

(Լէրման ուզում է կրկին ներս գնալ)

ՏԱՔՍԻՍ

Կոմս Լէրմա, յայտնեցէ՛ք գալս։

ԼԷՐՄԱ

Արքան ոչ ոքին ընդունելու չէ։

ՏԱՔՍԻՍ

Ասացէ՛ք, որ ես խօսելիք ունիմ —
Շատ հարկաւոր է արքայի համար,
Շուտով յայտնեցէ՛ք, շատ շտապով գործ է։

(Լէրման գնում է)

ԱԼԲԱ (մօտենում է սուրհանդակապետին)

Սիրելի՛ Տաքսիս, համբերող եղէք։
Դուք արքայի հետ չէք կարող խօսել։

ՏԱՔՍԻՍ

Ո՞չ, պատճառն ի՞նչ է։

ԱԼԲԱ

Ձեզ հարկաւոր էր
Իրաւունք խնդրել մարկիզ Պօզայից,
Որ հօրն ու որդուն գերի է արել։

ՏԱՔՍԻՍ

Պօ՞զա։ Հա, ուղիղ։ Դա նոյն իսկ մարդն է,
Որից ըստացայ ես այս նամակը։

ԱԼԲԱ

Նամա՞կ. ի՞նչ նամակ:

ՏԱՔՍԻՍ

Որ նա ինձ յանձնեց
Բրիւսսէլ ուղարկել:

ԱԼԲԱ

Բրի՞ւսսէլ

ՏԱՔՍԻՍ

Եւ որ ես
Այժմ բերել եմ, որ արքային տամ —

ԱԼԲԱ

Բրիւսսէլ, լսեցի՞ք, Դօմի՛նգօ, Բրի՛ւսսէլ:

ԴՕՄԻՆԳՕ (*մօտ գալով*)

Այդ նամակը շատ կասկածաւոր է:

ՏԱՔՍԻՍ

Եւ ինչ. երկիւղով, ինչպէս շփոթուած
Յանձնեց նա այն ինձ:

ԴՕՄԻՆԳՕ

Երկիւղով, իրա՞ւ

ԱԼԲԱ

Բայց ո՞ւմն է գրուած:

ՏԱՔՍԻՍ

Նասսաու Օրանիեան
Վիլհէլմ իշխանին:

ԱԼԲԱ

Վիլհէլմ իշխանին —
Դաւաճանութիւն.

ԴՕՄԻՆԳՕ

Անշուշտ այնպէս է:
Ի հարկէ իսկոյն պէտք է նամակը
Յանձնել արքային: Ինչ մեծ վաստակ է
Ձեր կողմից, Տաքսիս, որ այդպէս ճիշդ էք

Ձեր Թագաւորի ծառայութեան մէջ։

ՏԱՔՍԻՍ

Գերապատիւ տէր, ես կատարում եմ,
Ինչ որ իմ պարտքն է։

ԱԼԲԱ

Շատ լաւ էք անում։

ԼԵՐՄԱ

(դուրս գալով Թագաւորի սենեակից Սուրհանդակապետին)
Արքան կանչում է։

(Տաքսիս գնում է)

Ձեկա՛ւ մարկիզը։

ԴՈՄԻՆԳՕ

Չըկայ ոչ մի տեղ։

ԱԼԲԱ

Զարմանալի է։
Իշխանը բանտում, բայց դեռ չըգիտէ
Արքան պատճառը։

ԴՈՄԻՆԳՕ

Ձեկաւ, որ գոնեա
Հաշիւ տայ նորան։

ԱԼԲԱ

Արդեօք ի՞նչ ասաց
Արքան այդ մասին,

ԼԵՐՄԱ

Ոչինչ չէ ասել։
(աղմուկ առանձնարանում)

ԱԼԲԱ

Լսեցէ՞ք, ի՞նչ էր։

ՏԱՔՍԻՍ (առանձնարանից)

Կոմս Լէրմա։
(Երկուսն էլ ներս են գնում)

ԱԼԲԱ

Ի՞նչ կայ։

ԴՈՄԻՆԳՕ

Ինչպէս փախեցած ներս կանչեց նորան։

Եթէ նամակը՝ որ բռնուել է — —
Լաւ բան չէ, Ալբա։

ԱԼԲԱ

Լերմայն կանչեց։
Մի՞թէ չգիտէ, որ մենք այստեղ ենք։—

ԴՕՄԻՆԳՕ

Մեր ժամանակը արդէն անց կացաւ։

ԱԼԲԱ

Մի՞թէ էլ նա չեմ, որի առաջը
Շուտ բացվում էին բոլոր դռները։
Ի՜նչպէս ամեն բան փոխուել է իմ շուրջ—
Ի՜նչպէս օտար է —

ԴՕՄԻՆԳՕ

(կամաց մօտենում է դռանը և ականջ է դնում)

Ս՛ս —

ԱԼԲԱ

Ի՜նչպէս լուռ է։
Շունչը լսվում է։

ԴՕՄԻՆԳՕ

Հաստ վարագոյրը
Ձայնն արգելում է։

ԱԼԲԱ

Հեռու։ Գալիս են։

ԴՕՄԻՆԳՕ (հեռանում է դռնից)

Սիրտս դողում է։ Ալբա, այս րոպէն
Խորհրդաւոր է և օրհասական։

ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՊԱՐՄԱՅԻ ԻՇԽԱՆԸ, ՖԵՐԻԱ և ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ ԴՈՒՔՍԵՐԸ մի քանի իշխանների հետ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ.

ՊԱՐՄԱ

Կարո՞ղ եմ հիմա տեսնել արքային։

ԱԼԲԱ

Ո՛չ։

ՊԱՐՄԱ

Ո՞վ կայ մօտը:

ՖԷՐԻԱ

Պօզան անկասկած:

ԱԼԲԱ

Ոչ, նորան ամէն բոպէ սպասում են:

ՊԱՐՄԱ

Իսկոյն եկանք մենք Սարագօսսայից:
Բոլոր Մադրիդը սարսափի մէջ է:—
Մի՞թէ ուղիղ է:

ԱԼԲԱ

Ափսոս, ուղիղ է:

ՖԷՐԻԱ

Ուղի՞ղ է, որ նա Մալտացու ձեռով
Բանտն է դրուած:

ԱԼԲԱ

Այո:

ՊԱՐՄԱ

Բայց ինչի՞:
Ի՞նչ է պատահել:

ԱԼԲԱ

Ինչի՞: Պատճառը
Մարդու յայտնի չէ: Գիտեն միայն արքան
Եւ մարկիզ Պօզան:

ՊԱՐՄԱ

Առանց խորհրդի
Կորտէսների հետ:

ՖԷՐԻԱ

Վա՜յ նորան, ով որ
Մատը խառն ունի այդ յանցանքի մէջ:

ԱԼԲԱ

Վա՜յ նորան, ես էլ կրկնում եմ նոյնը:

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

Եւ ես։

ՄԻՒՍ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Ամենքս։

ԱԼԲԱ

Ո՞վ կըգայ ինձ հետ —
Ես կերթամ կընկնեմ արքայի ոտը։

ԼԷՐՄԱ *(դուրս է վազում առանձնարանից)*

Դուքս Ա՛լբա։

ԴՕՄԻՆԳՕ

Ահա՛։ փա՛ռք քեզ, Տէր Աստուած։

(Ալբան շտապով ներս է մտնում)

ԼԷՐՄԱ

(շնչասպառ և սաստիկ վրդովուած)

Երբ Մալտացին գայ, ասացէք, արքան
Այժմ մենակ չէ, յետոյ կըկանչէ —

ԴՕՄԻՆԳՕ

(Լէրմային, որի շուրջը ժողովվումեն բոլոր իշխանները սաստիկ հետաքր-քրուած)

Ասացէք մեզ, կոմս, ի՞նչ է պատահել։
Մեռելի գոյն է ծածկել ձեր դէմքը։

ԼԷՐՄԱ *(ուզումէ գնալ)*

Սարսափելի է։

ՊԱՐՄԱ ԵՒ ՖԷՐԻԱ

Ի՞նչ է, ի՞նչ, Լէրմա։

ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ

Արքան ի՜նչպէս է։

ԴՕՄԻՆԳՕ *(միասին)*

Սարսափելի՞ է.

Ի՞նչը, կոմս Լէրմա։

ԼԷՐՄԱ

Արքան լաց եղաւ։

ԴՕՄԻՆԳՕ

Լաց եղաւ արքա՞ն։

ԲՈԼՈՐԸ (միասին զարմացած)

Լաց եղաւ արքա՞ն։

(առանձնարանից լսւում է զանգակի ձայն. Լէրման շտապով ներս է գնում)

ԴՕՄԻՆԳՕ

(Լէրմայի ետեւից, աշխատելով յետ պահել նորան)

Կոմս Լէրմա, մի խօսք — նէրեցէք — գնաց,
Եւ մենք սարսափած մնացել ենք կանգնած։

ՔՍԱՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԷԲՕԼԻ, ՖԷՐԻԱ, ՄԷԴԻՆԱ ՍԻԴՕՆԻԱ, ՊԱՐՄԱ և միւսները

ԷԲՕԼԻ (շտապով ներս է վազում)

Ի՞նչտեղ է արքան, ի՞նչտեղ է. հետը
խօսելիք ունիմ։

(Ֆէրիային)

Դո՛ւքս, դուք կըտանէք
ինձ արքայի մօտ։

ՖԷՐԻԱ

Արքան զբաղուած է։
Նա չէ ընդունում իւր մօտ ոչ ոքին։

ԷԲՕԼԻ

Ստորագրո՞ւմ է նա արդէն սոսկալի
Դատավճիռը։ Նորան խաբել են.
Ես կըհաստատեմ, որ նա խաբուած է։

ԴՕՄԻՆԳՕ

(հեռուից խորհրդաւոր նշաններ է տալիս նորան)
Իշխանուհի՛։

ԷԲՕԼԻ (գնում է նորա մօտ)

Դուք այստե՞ղ էք, տէ՛ր հայր։
Ուրախ եմ, դուք ինձ շատ հարկաւոր էք.

Դուք իմ վկան էք։
(բռնում է նորա՝ ձեռը և ուզում է տանել Թագաւորի սենեակը)

ԴՕՄԻՆԳՕ

Ն՞ա. ի՞նչ էք ասում։

ՖԵՐԻԱ

Ո՛չ, յետ գնացէք։ Արքան ձեզ հիմա
կարող չէ լսել։

ԷԲՕԼԻ

Պէտք է որ լսէ
ճշմարտութիւնը, պէտք է նա լսէ —
ճշմարտութիւնը, թէ և տասն անգամ
նա Աստուած լինի։

ԴՕՄԻՆԳՕ

Հեռացէք, հեռու։
Շատ անզգոյշ էք։ Մնացէք, մի՛ գնաք։

ԷԲՕԼԻ

Դու ղողա կուռքիդ բարկութեան առաջ,
Ես էլ ոչ ինչ բան կարող չեմ կորցնել։
(այն ինչ ուզում է մտնել Թագաւորի սենեակը, դուրս է վազում

ԴՈՒՔՍ ԱԼԲԱՆ

նորա աչքերը փայլում են, գնացքը յաղթական։ Նա վազում Դօմինգօի մօտ և գրկում է նորան)

Թող տաճարներում մաղթանքներ երգեն.
Մերն է յաղթութիւնն։

ԴՕՄԻՆԳՕ

Մե՞րն է

ԱԼԲԱ (Դօմինգօին և միւս իշխաններին)

Հիմա ներս
Թագաւորի մօտ։ Մնացածը յետոյ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Մի սենեակ թագաւորական պալատում, վանդակաշէն դռնով բաժանուած մի մեծ գաւթից, որի մէջ ման են գալիս պահապաններ:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, *նստած է մի սեղանի առաջ, գլուխը ձեռների վերայ հանգըստացած կարծես թէ քնած է։ Սենեակի ետևի կողմը մի քանի օֆիցերներ, որոնք նորա հետ միասին փակուած են։* ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ, *ներս է մտնում Կարլոսից չըտեսնուած, և կամաց խօսում է օֆիցիրների հետ, որոնք իսկոյն հեռանում են. Նա բոլորովին մօտենում է Կարլոսին, և մի քանի վայրկեան լուռ և տրտում նայում է նորան։ Վերջը մի շարժողութիւն է անում, որից Կարլոսը սթափւում է իւր թմրութենից*

ԿԱՐԼՈՍ

(վեր է կենում, տեսնում է Մարկիզին և վախենում է։ Յետոյ մի քանի ժամանակ սառած նայում է նորան և ձեռով շփում է ճակատը, կարծես թէ ուզում է մի բան միտը բերել)

ՄԱՐԿԻԶ

Այս ես եմ, Կարլօս:

ԿԱՐԼՈՍ *(տալիս է նորան ձեռը)*

Դու եկար ինձ մօ՞տ:

Որքան բարի ես:

ՄԱՐԿԻԶ

Մտածեցի, որ

Բարեկամդ այստեղ հարկաւոր է քեզ:

ԿԱՐԼՈՍ

Ճշմարի՞տ, այդպե՞ս մտածեցիր դու։
Ես շատ ուրախ եմ — անչափ ուրախ եմ։
Ախ, ես գիտեի, որ ինձ սիրում ես։

ՄԱՐԿԻԶ

Ես արժանի եմ այդ համոզմունքին։

ԿԱՐԼՈՍ

Այնպես չե՞. միմեանց դեռ հասկանում ենք։
Այդ գութն ու խնամքը վայել է մեզ պես
Վեհանձն մարդկանց։ Դիցուք թե մեկը
Իմ պահանջներից շատ անիրաւ էր,
Մի՞թէ և արդար պահանջմունքներս
Պէտք է մերժէիր։ Առաքինութիւնն
Կարող է լինել խիստ և անաչառ,
Բայց երբէք անգութ, երբէք անողորմ —
Գիտեմ, այդ բանը քեզ շատ թանգ արժէր.
Գիտեմ, որ սիրտդ արիւն կըպատէր,
Երբ դու քո զոհը զարդարում էիր
Մորթելու համար։

ՄԱՐԿԻԶ

Կարլո՛ս, ի՞նչ է քո
Խօսքերի միտքը։

ԿԱՐԼՈՍ

Այժմ դու ինքդ
Կիրագործես այն, ինչ որ պարտքս էր, բայց
Չըկարողացայ։ — Եւ Սպանիացոց
Դու կըպարգևես այն ոսկեդարը,
Որ նոքա ինձնից զուր ակն ունէին։
Իմ բանը արդէն վերջացաւ գնաց։
Դու այդ ի հարկէ լաւ ես նկատել —
Ո՛հ, այս սոսկալի սէրը վաղօրօք
Չորացրեց հոգուս բոլոր ծաղիկներն։
Ես քո մեծամեծ յոյսերի համար
Մեռած եմ արդէն։ Նախախնամութիւն,

կամ թէ մի դիպուած առաջնորդում է
քեզ արքայի մօտ — և իմ գաղտնիքի
գնով նա քոնն է — դու նորա համար
Հրեշտակ ես դառնում: Բայց ինձ էլ չըկայ
Ոչինչ փրկութիւն — գուցէ Սպանիային...
Այստեղ բան չըկայ դատապարտելի,
Չըկայ, ո՛չ, չըկայ, բացի խելացնոր
իմ կուրութենից, որ մինչև այսօր
Չէի նկատել, թէ դու հաւասար
Մեծ ես և քնքուշ:

ՄԱՐԿԻԶ

Ո՛չ, ես այդ բանին
Նախատես չէի — նախատես չէի,
Թէ բարեկամի վեհանձնութիւնը
կարող է լինիլ շատ հնարագէտ
Քան քաղաքական իմաստութիւնս:
Իմ շինութիւնը յանկարծ քանդվում է—
Ես իմ Կարլոսի սիրտը մոռացայ:

ԿԱՐԼՈՍ

Եթէ դու նորան խնայել էիր—
Անչափ շնորհակալ կլինէի քեզնից:
Մի՞թէ ես մենակ չէի կարող տանել:
Ինչո՞ւ նա պէտք է երկրորդ զոհ լինէր —
Բայց ո՛չ, հերիք է — Ես չեմ կամենում
Յանդիմանութեամբ սիրտդ ծանրացնել:
Ի՞նչ է քեզ համար թագուհին: Մի՞թէ
Սիրում ես նորան: Ի՞նչ փոյթ են քո խիստ
Առաքինութեան իմ սիրոյ փոքրիկ
Հոգսերը: Ներիր — անիրաւ էի:

ՄԱՐԿԻԶ

Այո՛ — բայց ոչ այդ յանդիմանութեամբ:
Եթէ որ մէկին ես արժանի եմ,
Ապա բոլորին էլ արժանի եմ —
Եւ այն ժամանակ ես չէի կանգնի

Այսպէս քո առաջ:

(հանում է նորա պահարանը)

Ահա՛ այստեղ են

Դեռ մի քանիսը այն նամակներից,

Որոնց յանձնեցիր իմ պահպանութեան:

Ա՛ռ, պահի՛ր:

ԿԱՐԼՈՍ

(զարմացած նայում է մէկ նամակներին, մէկ մարկիզին)

Ի՞նչպէս:

ՄԱՐԿԻԶ

Վերադարձնում եմ,

Որովհետեւ այժմ նոքա կը լինին

Քեզ մօտ աւելի ապահով, Կարլո՛ս:

ԿԱՐԼՈՍ

Այս ի՞նչ է: Մի՞թէ չըկարդաց արքան,

Մի՞թէ չըտեսաւ:

ՄԱՐԿԻԶ

Այդ նամակնե՞րը:

ԿԱՐԼՈՍ

Մի՞թէ բոլորն էլ չըտարա՞ր նորան:

ՄԱՐԿԻԶ

Այդ ո՞վ ասաց քեզ, թէ ես տարել եմ:

ԿԱՐԼՈՍ (սաստիկ զարմացած)

Մի՞թէ — կոմս Լէրման:

ՄԱՐԿԻԶ

Նա է ասել քեզ —

Ո՛հ, հիմա պարզ է: Այդ ո՞վ կարող էր

Նախագուշակել — Ուրեմն Լէ՞րման —

Նա ստախօս չէ: Այո՛, ուղիղ է:

Միւս նամակները արքայի մօտ են:

ԿԱՐԼՈՍ

(երկար միջոց նայում է նորան զարմացած)

Բայց ես ի՞նչ բանի համար այստեղ եմ:

ՄԱՐԿԻԶ

Զգուշութեան համար, որ երկրորդ անգամ

Քեզ խորհրդակից չընտրես Էբոլին:

ԿԱՐԼՈՍ

(կարծես երազից զարթնելով)

Ո՛հ, ես վերջապէս հիմա հասկացայ —
Հիմա պարզուեցաւ:

ՄԱՐԿԻԶ (գնում է դէպի դուռը)

Այս ո՞վ է գալիս:

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴՈՒՔՍ ԱԼԲԱ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ.

ԱԼԲԱ

(յարգանքով մօտենում է իշխանին: Նա այս բոլոր տեսարանի միջոցին մէջքը դարձրած ունի մարկիզին)

Իշխա՛ն, ազատ էք: Արքան ուղարկեց
ինձ, որ յայտնեմ ձեզ:

(Կարլոսը զարմացած նայում է մարկիզին: Ընդհանուր լռութիւն)

Եւ նոյն ժամանակ

Ես շատ երջանիկ համարում եմ ինձ,
Որ առաջինը շնորհ ունեցայ —

ԿԱՐԼՈՍ

(զարմացած նայում է երկուսին. կարճ լռութիւնից յետոյ)

Ինձ բանտարկում են և բանտից հանում.
Բայց ես չգիտեմ ոչ մէկի և ոչ
Միւսի պատճառը:

ԱԼԲԱ

Մի սխալմունք, իշխա՛ն,
Որքան ես գիտեմ, որի մէջ անշուշտ
Ձգեց արքային խաբեբայ մէկը:

ԿԱՐԼՈՍ

Չէ՞ որ արքայի հրամանովն է, որ
Այժմ այստեղ եմ:

ԱԼԲԱ

Այո՛, մի սխալմամբ
Նորին մեծութեան:

ԿԱՐԼՈՍ

Շատ ափսոսում եմ —
Բայց եթէ արքան սխալուել է, անձամբ
Վայել է նորան իւր սխալը ուղղել
(որոնում է մարկիզի հայեացքը և արհամարանք է ցոյց տալիս դքսին)
Ես Փիլիպպոսի որդի եմ կոչվում,
Հետաքրքրութեան և զրպարտութեան
Աչքերը այստեղ միշտ ինձ են նայում:
Ինչ որ իբրև պարտք արել է արքան,
Ես չեմ կամենում, որ շնորհ համարուի.
Թէ չէ պատրաստ եմ ես կորտէսների
Վճռին դիմելու — Սուրս ձեր ձեռից
Ես չեմ ընդունի:

ԱԼԲԱ

Անշուշտ կը յարգէ
Արքան ձեր արդար պահանջը, իշխան,
Եթէ թոյլ կըտաք, որ առաջնորդեմ
Ես ձեզ նորա մօտ:

ԿԱՐԼՈՍ

Այստեղ կը մնամ,
Մինչև որ արքան, կամ թէ Մադրիդը
Հանեն ինձ բանտից: Գնացէ՛ք, Ալբա՛,
Տարէ՛ք արքային իմ պատասխանը:
(Ալբան հեռանում է. նա մի քանի ժամանակ մնում է նախադաւթում, ուր հրամաններ է տալիս)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ՄԱՐԿԻԶ ՊՕԶԱ.

ԿԱՐԼՈՍ

(Դքսի հեռանալուց յետոյ մարկիզին լի ակնկալութեամբ և զարմանքով)
Այս ի՞նչ է: Մի՞թէ դու նախարար չես:

ՄԱՐԿԻԶ

Ինչպէս տեսնում ես, էի, բայց էլ չեմ:
(մօտ է գնում նորան սաստիկ վրդոված)

Ո՛վ իմ սիրելի Կարլոս, յաջողեց,
Բանը լաւ գնաց: Օրհնեա՛լ է Աստուած:

КԱՐԼՈՍ

Յաջողե՞ց, բայց ի՞նչ: Չեմ հասկանում քեզ:

ՄԱՐԿԻԶ (բռնում է նորա ձեռը)

Կարլո՛ս, փրկուած ես — Ազատ ես — բայց ես —

ԿԱՐԼՈՍ

Բայց դո՞ւ

ՄԱՐԿԻԶ

Բայց ես — ես — Ահա իմ կուրծքին
Սխմում եմ ես քեզ առաջին անգամ
Մեծ իրաւունքով: Ո՛հ, ես գնել եմ
Այդ իրաւունքը այն միակ բանով,
Ինչ որ ինձ համար ամենից թանգ է: —
Ո՛հ, ինչպէս քաղցր է, ինչպէս վսեմ է
Այս րոպէն, Կարլոս: Ես գոհ եմ ինձնից:

ԿԱՐԼՈՍ

Այդ ինչպէս յանկարծ փոխուեց քո դէմքը
Ես քեզ իմ օրում այդպէս չեմ տեսել.
Ինչպէս քո կուրծքը հպարտ բարձրանում.
Ինչպէս աչքերդ անսովոր փայլում:

ՄԱՐԿԻԶ

Պէտք է միմեանցից բաժանուինք, Կարլո՛ս:
Ո՛հ, մի՛ վախենար: Տղամա՛րդ եղի՛ր:
Խոստացի՛ր, Կարլո՛ս, քո անսասան վշտով,
Որ անվայել է վեհանձն մարդկանց,
Չըդժուարացնել այս բաժանումը —
Դու ինձ կորցնում ես — շատ տարիներով —
Բայց յիմարների լեզուով — յաւիտեան:

(Կարլոսը յետ է քաշում իւր ձեռը, անշարժ նայում է նորան և ոչինչ չէ պատասխանում)

Ա՛յր եղի՛ր: Քեզ վրայ շատ վստահ էի:
Եկայ անցկացնել քեզ հետ այս ժամը —
Այս ժամը, որին սոսկալի կերպով

Ասում են վերջին — խոստովանում եմ,
Սիրելի Կարլոս — ես շատ ուրախ եմ
Այդ բանի վերայ — Եվ նստենք — սաստիկ
Յոգնած եմ և թոյլ:

(Նա մօտենում է Կարլոսին, որ դեռ ևս կանգնած է քարացածի պէս և մեքենայաբար նստում է նորա կողքին)

Ջե՞ս պատասխանում — Ես կարճ կըկտրեմ:
Մէկ օրից յետոյ, երբ վերջին անգամ
Խօսեցանք վանքում, կանչեց ինձ արքան:
Հետևանքը քեզ արդէն յայտնի է.
Յայտնի է նոյնպէս ամբողջ Մադրիդին:
Բայց դու չգիտես, որ քո գաղտնիքը
Յայտնի էր նորան, որ գտել էին
Թագուհու արկղում թղթեր, որոնք քեզ
Մեղադրում էին, որ այդ բանը ինձ
Արքան ինքն ասաց և որ ես նորան
Մտերիմ էի:

(Նա լռում է, որ լսէ Կարլոսի պատասխանը, բայց սա մնում է առաջուայ դրութեան մէջ)

Այո՛, իմ Կարլոս,
Ես քեզ իմ բերնով դաւաճանեցի:
Ես էի գլուխ այն դաւադրութեան,
Որ պատրաստում էր քեզ համար կորուստ:
Բայց արդէն բանը բանից անցել էր:
Քեզ արդարացնել արդէն շատ ուշ էր:
Ուրիշ ճար չըկար, բայց եթէ նորա
Վրէժխնդրութեան սանձը ձեռք բերել,
Եւ այսպէս դառայ ես քո թշնամին,
Որ քեզ աւելի ազդու ծառայեմ:
—Դու չես լսում ինձ:

ԿԱՐԼՈՍ

Լսում եմ: Պատմի՛ր:

ՄԱՐԿԻԶ

Մինչև այս րոպէն ես անմեղ էի.
Բայց շուտ մատնում է ինձ արքայական
Շնորհի շուքը: Ձայնը հասնում է

Եւ քո ականջին։ Սակայն կաշառուած
Մնոտի սիրով, մեծամտութեամբ
Կուրացած մենակ վերջացնել գործը,
Ծածուկ եմ պահում ես իմ գաղտնիքը
Իմ բարեկամից։ Ահա այդ բանում
Սաստիկ սխալուեցայ և մեղանչեցի։
Ես հիմա գիտեմ. վստահութիւնս
Անմտութիւն էր։ Ներիր ինձ, Կարլոս,
Դա հիմնուած էր քո բարեկամութեան
Հաստատութեան վրայ։
(Նա լռում է։ Կարլոսի Թմրութիւնը փոխվում է սաստիկ վրդովմունք)
Եղաւ, ինչպէս որ
Երկիւղ ունէի։ Քեզ վախեցնում են
Սուտ վտանգներով. իբր Թագուհին
Վիրաւորուած է — Բոլոր պալատի
Ահ ու սարսափը — Լէրմայի անբաղդ
Ծառայութիւնը — անհասկանալի
Իմ պապանձումը, բոլորը մէկտեղ
Յարձակվում են քո ապշած սրտի վրայ —
Տարակուսում ես — և ինձ քեզ համար
Կորած համարում — Սակայն լինելով
Ինքդ շատ ազնիւ, դու չես կասկածում
Քո բարեկամի ազնուութեան վրայ,
Եւ զարդարում ես մեծութեան անուամբ
Նորա անկումը։ Դու հիմա միայն
Համարձակվում ես անհաւատարիմ
Համարել նորան, որովհետև դու
Նորան և այդպէս կարող ես յարգել։
Զրկուելով միակ քո բարեկամից,
գնում ես ընկնում Էբօլու գիրկը —
Տարաբաղդ, նոյն է թէ սատանայի,
Որովհետև նա է քո մատնիչը։
(Կարլոսը տեղից վեր է կենում)
Տեսնում եմ, որ դու վազում ես նրա մօտ։
Ես անհանգիստ եմ։ Հետևում եմ քեզ,
Բայց արդէն ուշ է։ Դու նորա առաջ

ընկած ես գետնին: Արդէն դուրս թռաւ
Խոստովանութիւնը քո բերանից.
Եւ էլ փրկութիւն չըկայ քեզ համար:

ԿԱՐԼՈՍ

Ո՛չ, ո՛չ: Ես նորա սիրտը շարժեցի:
Դու սխալվում ես: Հաւատա, որ նա
Սաստիկ շարժուած էր:

ՄԱՐԿԻԶ

Այստեղ աչքերս
Ցանկարծ մթնեցան: Ոչինչ ճար չըկայ:
Չըկայ փրկութիւն: Չըկայ ոչ մի տեղ:
Ցուսահատութիւնն ինձ դեռ է չինում,
Գազանացնում է — ես կնոջ կուրծքին
Դաշոյն եմ ուղղում — Բայց յանկարծ միտքս
Լուսաւորվում է մի ճառագայթով:
«Եթէ արքային ես մոլորեցնեմ:
Եթէ յաջողի յանցաւոր հանել
Ինձ նորա առաջ: Ճշմարիտ, թէ սուտ —
Այդ բաւական է Փիլիպպոսի պէս
Մի մարդու համար: Թող այդպէս լինի:
Ես այդ կըփորձեմ: Գուցէ կայծակը,
Որ բռնակալին յանկարծ կըզարկէ,
Նորան ափշեցնէ: Ուզածս էլ այդ է.
Նա կըմտածէ, և այդ միջոցին
Կարող է փախչել Կարլոսը Բրաբանտ»:

ԿԱՐԼՈՍ

Եւ դու, Ռոդրի՛գօ, արի՞ր այդ բանը:

ՄԱՐԿԻԶ

Վիլհելմ իշխանին գրում եմ, որ ես
Սիրահարուած եմ թագուհու վերայ,
Որ ինձ յաջողեց խաբել արքային,
Օգուտ քաղելով նորա կասկածից
Իւր որդու վերայ, որ ես արքայից
Իրաւունք ստացայ տեսնել թագուհուն
Երբ և կամենամ: Աւելացնելով,

Որ վախենում եմ բանը իմացուի,
Որ դու այդ մասին տեղեկանալով,
գնացիր Էբօլի իշխանուհու մօտ,
Որ նորա ձեռով գուցէ Թագուհուն
Մի կերպ գգուշացնես — որ այդտեղ իսկոյն
Քեզ բանտարկեցի. բայց որովհետեւ
Բանը վատ գնաց, ես մտադիր եմ
Չեռանալ Բրիւսսէլ — եւ այդ նամակը —

ԿԱՐԼՈՍ

(վախեցած կտրում է նորա խօսքը)

Միթէ յանձնեցի՞ր դու այն փոստային։
Գիտես, որ Ֆլանդրիա և Բրաբանտ գնացող
Բոլոր նամակներն —

ՄԱՐԿԻԶ

Իսկոյն տանում են
Ցանձնում արքային — Հանգամանքներից
Երեւում է, որ Տաքսիսը արդէն
կատարել է իւր պարտաւորութիւնն։

ԿԱՐԼՈՍ

Աստուա՛ծ իմ, ուրեմն ես կորած եմ։

ՄԱՐԿԻԶ

Դո՞ւ։ Բայց ինչի՞ դու։

ԿԱՐԼՈՍ

Տարաբա՛խդ, դու էլ
Կորած ես ինձ հետ։ Հայրս չի ների
Այդ անօրինակ խաբէութիւնը,
Երբէք չի ների։

ՄԱՐԿԻԶ

Խաբէութի՞ւնը։
Ուշքդ ո՞նչտեղ է։ Մտածի՛ր։ Նորան
Ո՞վ կասէ, թէ այդ խաբէութիւն է։

ԿԱՐԼՈՍ

(անթարթ աչքով նայում է նորան)

Ո՞վ, հարցնում ես դու։ Ես ինքս կասեմ։

(ուզում է գնալ)

ՄԱՐԿԻԶ

Խելագա՞ր ես։ Կա՛ց։

ԿԱՐԼՈՍ

Թո՛ղ ինձ, թո՛ղ գնամ։
Ի Սէր Աստուծոյ, մի՛ արգելիր, թո՛ղ։
Այն ինչ մենք այստեղ այսպէս խօսում ենք,
Արդէն վարձում է նա սպանողներին։

ՄԱՐԿԻԶ

Ուրեմն րոպէն մեզ համար թանգ է։
Դեռ շատ բան ունինք միմեանց ասելու։

ԿԱՐԼՈՍ

Ի՞նչ։ Մինչև որ նա —

(Նա կրկին ուզում է գնալ։ Մարկիզը բռնում է նորա ձեռը և խորհրդաւոր կերպով նայում է նորան)

ՄԱՐԿԻԶ

Լսի՛ր ինձ, Կարլո՛ս —
Մի՞թէ ես քեզ պէս շտապեցայ, քեզ պէս
Խղճահարուեցայ, երբ դու ինձ համար
Արիւն թափեցիր դեռ փոքր տղայ։

ԿԱՐԼՈՍ

(սաստիկ շարժուած և զարմացած կանգնած է նորա առաջ)

Բարերա՛ր Աստուած։

ՄԱՐԿԻԶ

Փրկի՛ր քո անձը
Ֆլանդրիայի համար։ Թագաւորելը
Է քո կոչումը և իմ կոչումն է
Քեզ համար մեռնել։

ԿԱՐԼՈՍ

(մօտ է գնում նորան և լի ջերմեռանդութեամբ բռնում է նորա ձեռը)

Ո՛չ, ո՛չ, կարող չէ
Նա ընդդիմանալ — այդ վեհանձնութեան
Նա չի դիմանայ — Ես քեզ կըտանեմ
Իսկոյն նորա մօտ։ Թև թևի տուած
Կերթանք միասին։ Ես կասեմ նորան.

«Հայր, մի բարեկամ արեց այդ բանը
Իւր բարեկամի փրկութեան համար:
Կըշարժենք նորա սիրտը: Հաւատա,
Հայրս անողորմ չէ բոլորովին:
Անպատճառ նորա սիրտը գութ կըզգայ,
Նորա աչքերից առատ կըվազեն
Ջերմ արտասուքներ, և նա կըներէ
Թէ քեզ և թէ ինձ —

(վանդակաչէն դռնից հրացան են արձակում)

Այս ո՞ւմ համար էր:

ՄԱՐԿԻԶ

Կարծեմ ինձ համար:

(վէր է ընկնում)

ԿԱՐԼՈՍ

(սաստիկ աղաղակելով վեր է ընկնում նորա մօտ)

Ողորմած Աստուած:

ՄԱՐԿԻԶ

Շատ շուտ է — արքան — ես յոյս ունէի —
Փրկի՛ր քո անձը — լսո՞ւմ ես — փրկի՛ր —
Մայրդ ամեն բան գիտէ — չեմ կարող —

(Կարլոսը մեռելի պէս մնում է ընկած դիակի մօտ։ Մի քանի ժամանակից յետոյ մտնում է Թագաւորը շատ իշխանների հետ միասին և զարմացած յետ է քաշվում տեսնելով այդ բանը։ Իշխանները կազմում են մի կիսաշրջան այդ երկուսի բոլորքը և փոփոխակի նայում են Թագաւորի և նորա որդու վերայ։ Սա դեռ ևս ընկած է մեռածի պէս — Թագաւորը նայում է նորան խոր մտածմունքի մէջ ընկղմած։)

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԿԱՐԼՈՍ, ԱԼԲԱ, ՖԵՐԻԱ և ՄԷԴԻՆԱ ՍԻԴՈՆԻԱ ԴՔՍԵՐԸ, ՊԱՐՄԱՅԻ ԻՇԽԱՆԸ, ԿՈՄՍ ԼԵՐՄԱ, ԴՈՄԻՆԳՕ և *շատ իշխաններ։*

ԹԱԳԱՒՈՐ *(ողորմած կերպով)*

Իշխան, խնդիրքդ ես ընդունեցի։
Ահա ես ինքս անձամբ եկել եմ

Իմ իշխաններով, որ ազատութիւն
Շնորհեմ քեզ:

(Կարլոսը գլուխը բարձրացնում է և նայում է իւր շուրջ կարծես երազից զարթելով: Նորա աչքերը ուղղվում են երբեմն Թագաւորի, երբեմն մարկիզի դիակի վերայ: Նա չէ պատասխանում:)

Ահա՛, յետ առ քո սուրը:
Սխալմունք պատահեց:

(Նա մօտ է գնում նորան, տալիս ձեռը և օգնում է վեր կենալ)

Որդուս տեղը չէ:
Վե՛ր կաց, եկ, որդեա՛կ, ծնողիդ գիրկը:

ԿԱՐԼՈՍ

(առանց իմանալու թէ ինչ է անում ընդունում է Թագաւորի ձեռը — բայց յետոյ յանկարծ մտածում է, և աւելի մօտիկ նայում է նորան)

Սպանութեան հոտ է գալիս քեզանից:
Ո՛չ, ես կարող չեմ երբէք քեզ գրկել:

(Նա յետ է մղում նորան: Բոլոր իշխանները վրդովվում են:)

Ինչի՞ ափշեցաք: Ի՞նչ զարհուրելի
Բան արի արդեօք: Օծեալի՞ն դիպայ:
Ո՛չ, մի՛ վախենաք: Ձեռս նորա վրայ
Ես չեմ բարձրացնի: Միթէ չէ՞ք տեսնում,
Ինչ է դրոշմած սորա ճակատին:
Աստուած է դրոշմել:

ԹԱԳԱՒՈՐ (ուզում է գնալ)

Եկէ՛ք, իշխաններ:

ԿԱՐԼՈՍ

Ո՞ւր, արքա՛յ: Ո՛չ, ո՛չ, տեղից չըշարժուի՛ք —

(Նա երկու ձեռով պինդ բռնում է նորան, մէկով քաշում է սրը, որ Թագաւորը բերել է իւր հետ, և հանում է պատեանից)

ԹԱԳԱՒՈՐ

Դու քո հօր վերայ սո՞ւր ես մերկացնում:

ԲՈԼՈՐ ԻՇԽԱՆՆԵՐԸ

(մերկացնում են սրերը)

Հայրասպանութի՜ւն:

ԿԱՐԼՈՍ

(հատ ձեռով պինդ բռնած ունի Թագաւորին միւսով մերկ սուրը)

Սրերը տեղը:

Դուք ի՞նչ էք ուզում: Միթէ կարծում էք,
Թէ խելագա՞ր եմ: Ո՛չ, խելագար չեմ:
Եթէ լինէի, լաւ չէր յիշեցնել,
Որ սորա կեանքը կախուած է այժմ
Իմ սրի ծայրին: Ես ձեզ խնդրում եմ,
Հեռո՛ւ կանգնեցէք: Այժմ իմ կամքին
Մի՛ հակառակէք — Հեռո՛ւ կանգնեցէք:
Ինչ որ ես հիմա խօսելիք ունիմ
Այս արքայի հետ, այդ ձեր երդմանը
Չէ վերաբերում: Տեսէ՛ք մատներից
Արիւն է կաթում: Լաւ, լաւ նայեցէք:
Տեսնո՞ւմ էք: Հիմա այստեղ նայեցէք:
Այս սա է արել, այս մեծ վարպետը:

ԹԱԳԱՒՈՐ

(իշխաններին, որոնք վախեցած շրջապատում են նորան)

Դուք յետ քաշուեցէք: Ի՞նչ էք վախենում —
Հայր ու որդի չե՞նք: Ուզում եմ տեսնել,
Թէ բնութիւնը ի՞նչ չարագործութեան —

ԿԱՐԼՈՍ

Ո՞ւր է բնութիւն: Ես չեմ ճանաչում:
Այժմ սպանութիւնն է տիրապետում:
Մարդկութեան կապը արդէն քանդուած է:
Դու ինքդ, արքայ, քանդել ես բոլոր
Տէրութեանդ մէջ: Ի՞նչպէս յարգեմ ես
Այն, որ քեզ համար ծիծաղելի է —
Նայեցէ՛ք այստեղ: Երբէք այսպիսի
Մարդասպանութիւն դեռ չէ պատահել —
Ի՞նչ: Միթէ չըկա՞յ Աստուած երկնքում:
Ի՞նչպէս կարող են այսպէս կատաղել
Արքաներ նորա արարչութեան մէջ:
Հարցնում եմ, միթէ էլ Աստուած չըկա՞յ:
Այն օրից, ինչ որ մայրեր ծնում են,
Սորա պէս անմեղ ոչ ոք չէ մեռել —
Բայց գիտե՞ս արդեօք, թէ ինչ ես արել —
Ո՛չ, նա չըգիտէ, նա այդ չըգիտէ,

Որ նա աշխարհից գողացաւ մի կեանք,
Որ շատ աւելի նշանաւոր էր,
Ազնիւ և թանգ էր, քան թէ նա ինքը.
Իւր բոլոր դարը հետը առնելով:

ԹԱԳԱՒՈՐ (կակղութեամբ)

Եթէ շտապեցայ, մի՞թէ վայել է
Քեզ, որի համար այդպէս վարուեցայ,
Դատապարտել ինձ:

ԿԱՐԼՈՍ

Այդ ի՞նչ էք ասում:
Միթէ չըգիտէ՞ք, ո՞վ էր ինձ համար
Այս հանգուցեալը: — Ո՛հ, դո՛ւք ասացէք:
Օգնեցէ՛ք նորա իմաստութեանը
Այս անմեկնելի խնդիրը լուծել:
Այս հանգուցեալը իմ բարեկամն էր —
Ուզո՞ւմ էք ասեմ, թէ ինչի մեռաւ:
Ինձ համար մեռաւ:

ԹԱԳԱՒՈՐ

Սիրտս ասում էր:

ԿԱՐԼՈՍ

Արիւնաշաղախ, ներէ՛ր, որ գործդ
Ապականում եմ այսպիսի մարդու
Առաջ պատմելով: Բայց թող ամաչի
Մեծ մարդագէտը, որ իւր ալևոր
Իմաստութեանը յաղթեց պատանու
Սրամտութիւնը: Իմացէ՛ր, արքա՛յ,
Մենք եղբայր էինք, եղբայր աւելի
Սուրբ, ազնիւ կապով, քան թէ այն,
Որով կապում է բնութիւնն: Նորա գեղեցիկ,
Ողջ կեանքը սէր էր: Սէր էր դէպի ինձ
Նորա գեղեցիկ փառաւոր մահը:
Նա իմն էր, երբ դուք նորա յարգանքով
Պարծենում էիք: Երբ որ պերճախօս
Նա իւր լեզուովը կատակում էր ձեր
Իմաստութիւնը: Դուք կարծում էիք

Իշխել նորա վրայ, և հլու գործիք
Դառաք նորա բարձր նպատակներին։
Բանտարկութիւնս առաջուց կշռած
Մի գործ էր նորա բարեկամութեան։
Նա իմ փրկութեան համար գրեց այն
Նամակը վիլհէլմ իշխանի վերայ —
Այդ նորա կեանքի առաջին սուտն էր։
Նա ինձ փրկելու համար դէմ գնաց
Մահուան, որ կրեց։ Դուք պարգևեցիք
Նորան ձեր շնորհը — իսկ նա միմիայն
Ինձ համար մեռաւ։ Դուք նորան բռնի
Առաջարկեցիք ձեր սիրտն ու սէրը,
Ձեր գաւազանը մի խաղալիք էր
Նորա ձեռի մէջ. նա դէն ձգեց և —
Ինձ համար մեռաւ։

(Թագաւոր կանգնած է անշարժ աչքերը գետնին ուղղած, բոլոր իշխանները սաստիկ զարմացած և երկիւղով նայում են նորան)

Ի՞նչպէս այդ կոպիտ
Խաբէութեանը հաւատացիք դուք։
Որքան ստոր կարծիք ունէր ձեր մասին,
Որ վստահացաւ այդ խաղը խաղալ։
Դուք ուզում էիք գըրաւել նորա
Բարեկամութիւնն և չըդիմացաք
Այդ թեթև փորձին։ Նա ձեզ համար չէր,
Նա ձեր մարդը չէր։ Այդ ինքն էլ գիտէր,
Երբ նա մերժեց ձեզ բոլոր թագերով։
Ձեր կոշտ ձեռի մէջ փշրուեցաւ այս
Փափուկ քնարը։ Դուք կարող էիք
Միայն սպանել։

ԱԼԲԱ

(որ մինչև հիմա չարունակ նայում էր թագաւորին և անհանգստութեամբ նկատում էր նորա դէմքի բոլոր փոփոխութիւնները, երկիւղով մօտենում է նորան)

Տէ՛ր արքայ — ինչ՞
Այդպէս լռել էք։ Նայեցէք ձեր շուրջ,
Խօսեցէք մեզ հետ։

ԿԱՐԼՈՍ

Նա անտարբեր չէր
Նոյնպէս դէպի ձեզ։ Վաղուց զգում էր
Նա կարեկցութիւն։ Գուցէ դեռ ևս
Բաղձաւորէր ձեզ։ Այնքան հարուստ էր
Նորա վեհ սիրտը, այնքան ազնիւ էր
Նորա մեծ հոգին, որ կարող էր ձեզ
Նա Աստուած շինել։ Արքա՛յ, ձեր ձեռով
Ձեզ կողոպտեցիք — ի՞նչ կըտաք հիմա,
Որ յարութիւն տաք սորա պէս մէկին։

(խորին լռութիւն։ Իշխաններից շատերը դարձնում են երեսները մի կողմը, կամ ծածկում են երեսները վերարկուների մէջ)

Դուք, որոնք այժմ կանգնած էք այստեղ,
Որոնց սարսափը պապանձեցրել է,
Մի՛ դատապարտէք երիտասարդին։
Որ իւր ծնողի և արքայի հետ
Այսպէս խօսում է — Տեսէ՛ք, այս մարդը
Ինձ համար մեռաւ։ Ո՛հ, թէ արտասուք
Կայ ձեր աչքերում, եթէ որ մարդու
Արիւն է հոսում ձեր երակներում,
Ոչ հալած երկաթ, տեսէ՛ք այս և ինձ
Մի՛ դատապարտէք։

(Նա դառնում է Թագաւորին հանդարտութեամբ)

Գուցէ սպասում էք
Թէ ինչպէս արդեօք պիտի վերջանայ
Այս պատմութիւնը — Ահա՛ իմ սուրը։
Այժմ դուք կրկին իմ Թագաւորն էք։
Չըկարծէք, թէ ես վախենում եմ ձեր
Վրէժխնդրութենից։ Սպանեցէ՛ք ինձ էլ,
Ինչպէս սպանեցիք այս ազնիւ մարդուն։
Կեանքս իմը չէ, գիտեմ։ Բայց ի՞նչ է
Ինձ համար կեանքը։ Ես հրաժարվում եմ
Այն ամեն բանից, ինչ որ սպասում է
Ինձ այս աշխարհում։ Օտարների մէջ
Որոնեցէ՛ք դուք ձեզ համար որդի —

Այստեղ ընկած է ահա իմ թագը:

(Նա ընկնում է դիակի վրայ և էլ ամենևին չէ մասնակցում հետևեալ անցքերին։ Այդ միջոցին լսվում է բազմաթիւ մարդկանց խառնաշփոթ աղմուկ և ձայներ։ Թագաւորի չուրջ տիրում է խորին լռութիւն. Նա մառն է ածում իւր հայեացքը ամենի վերայ, բայց ոչ ոք չէ նայում նորան)

ԹԱԳԱՒՈՐ

Ոչ ոք չէ՞ խօսում — Ամենի աչքը
Գետնին է ուղղած — Ամեն մէկը իւր
Դէմք ծածկել է — Ցեանում եմ, արդէն
Դատապարտուած եմ, դատապարտուած իմ
Հպատակներից:

(առաջին լռութիւնը։ — Աղմուկը աւելի մօտ է լսվում։ Իշխանները իրար հետ շշնջում են և զարմացած զանազան նշաններ են տալիս միմեանց, վերջապէս կոմս Լէրման դուրս Ալբային)

ԼԷՐՄԱ

Ճշմարիտ, կարծես

Ապստամբութիւն —

ԱԼԲԱ

Ես էլ կարծում եմ:

ԼԷՐՄԱ

Այստեղ են գալիս: Ահա մտնում են:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԻԿՆԱՊԱՀ ՕՖԻՑԻՐ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ։

ՕՖԻՑԻՐ (շտապով)

Ապստամբութիւն: ի՞նչ տեղ է արքան:

(Նա բազմութեան միջով գնում է թագաւորի մօտ)

Բոլոր Մադրիդը զէնք է բարձրացրել:
Զօրքը, ամբոխը կատղած վազում են
Պալատի վերայ, գոռում են, իբր
Կարլոս իշխանը դրուած է բանտը,
Եւ նորա կեանքը վտանգի մէջ է:
Տէր, ժողովուրդը ուզում է նորան

կենդանի տեսնել, եթէ ոչ, վառել
Ամբողջ Մադրիդը:

ԲՈԼՈՐ ԻՇԽԱՆՆԵՐԸ *(շփոթվում են)*

Շուտ, շուտ, փրկեցէ՛ք
Արքային:

ԱԼԲԱ

(Թագաւորին, որ հանդարտ և անշարժ կանգնած է)

Տէ՛ր իմ, փախէք այստեղից —
Վտանգալի է — Մենք դեռ չգիտենք
Թէ ժողովուրդը ո՞վ է վրդովում —

ԹԱԳԱՒՈՐ

(սթափում է իւր թմրութենից, ուղղվում է և մեծանձնութեամբ մտնում է նոցա մէջ)

Միթէ կանգնա՞ծ է դեռ իմ աթոռը,
Դեռ արքայ եմ ես — Ո՛չ, էլ արքայ չեմ:
Այս երկչոտները լալիս են, շարժուած
Տղայի խօսքերից: Սպասում են միայն
Նորա նշանին, որ թողնեն ինձ: Ես
Դաւաճանուած եմ ապստամբներից:

ԱԼԲԱ

Տէ՛ր, ի՞նչ մտքեր են:

ԹԱԳԱՒՈՐ

Այնտե՛ղ չոքեցէք,
Այն երիտասարդ և ծաղկափթիթ
Արքայի առաջ — Ես թոյլ և անզօր
Ծերունի մի եմ:

ԱԼԲԱ

Ո՛վ Սպանիացիք,
Բանն այստե՞ղ հասաւ:

(բոլորը շրջապատում եմ Թագաւորին և սրերը մերկացնելով չոքում են նորա առաջ: Կարլոսը մնում է մենակ դիակի մօտ)

ԹԱԳԱՒՈՐ

(քաշում է իրանից վերարկուն և դէն է ձգում)

Թագաւորական

Ջարդերը հագցրէք — Անցկացրէք նորան
Ոտնակոխ արած դիակիս վերայ —
(ուշաթափուած ընկնում է Ալբայի և Լէրմայի թևերի մէջ)

ԼԷՐՄԱ

Օգնութի՜ւն հասէք։

ՖԷՐԻԱ

Արարի՜չ Աստուած,
Այս ի՞նչ դիպուած է։

ԼԷՐՄԱ

Իրանից գնաց։

ԱԼԲԱ

(յանձնում է թագուհուն Լէրմային և Ֆէրիային)
Տարէք արքային իւր անկողինը։
Մինչև Մադրիդին խաղաղութիւն տամ։
(Նա դուրս է գնում։ Թագուհուն տանում են, իշխանները հետեւում են նորան)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍԸ մնում է դիակի մօտ։ Քանի մի վայրկեանից յետոյ մտնում է ԼՈՒԴՈՎԻԿ ՄԷՐԿԱԴՕ, երկիւղով նայում է իւր շուրջ և մի քանի ժամանակ լուռ կանգնում է իշխանի մօտ, որ նորան չէ նկատում.

ՄԷՐԿԱԴՕ

Ես ուղարկուած եմ Թագուհուց, իշխա՛ն —
(Կարլոսը երեսը դարձնում է և չէ պատասխանում)
Ես եմ Մէրկադօ, նորա բժիշկը.
Ահա այստեղ է վկայութիւնս։
(Նա ցոյց է տալիս մի մատանի — Կարլոսը առաջուայ պէս լուռ է)
Նորին մեծութիւնը ցանկանում է
Այսօր անպատճառ ձեզ հետ տեսնուիլ.
Կարևոր գործ է —

ԿԱՐԼՈՍ

Էլ այս աշխարհում
Չըկայ ինձ համար կարևոր մի բան։

ՄԷՐԿԱԴՕ

Ինչպէս ասաց նա, յանձնարարութիւն
Մարկիզ Պօզայից —

ԿԱՐԼՈՍ (շուտ վեր է կենում)

Ի՞նչ։ Ահա՛ եկայ։

ՄԷՐԿԱԴՕ

Հիմա չէ՛, իշխա՛ն։ Դուք պէտք է սպասէք,
Մինչև որ մթնի։ Ճանապարհները
Բոլորը փակ են. պահապանները
Կրկնապատկուած են։ Անկարելի է։
Իսկոյն կըտեսնեն։ Վտանգաւոր է —

ԿԱՐԼՈՍ

Ապա՞։

ՄԷՐԿԱԴՕ

Միայն մի հնար կայ, իշխա՛ն,
Որ մտածել է ինքը Թագուհին,
Եւ որ այժմ ձեզ առաջարկում է —
Բայց շատ յանդուգն է և վտանգաւոր։

ԿԱՐԼՈՍ

Ասացէ՛ք։

ՄԷՐԿԱԴՕ

Վաղուց աւանդութիւն կայ,
Ձեզ էլ յայտնի է, որ մէջ գիշերին
Այս ապարանքի կամարների տակ
Հանգուցեալ կայսրի հոգին շրջում է
Մի վանականի կերպարանք առած։
Ամբոխն այդ բանին հաւատում է, և
Պահապանները ահ ու սարսափով
Կանգնում են այնտեղ։ Եթէ դուք, իշխա՛ն,
Կըվստահանաք այնպէս հագնուած
Այնտեղ երևիլ, ապա կարող էք
Պահապանների առաջ անցկենալ
Ազատ, անվնաս մինչև Թագուհու
Առանձնարանը։ Դուք այդ սրբազան

Կերպարանքի տակ ազատ էք ամեն
Յարձակմունքներից: Շո՛ւտ որոշեցէք:
Զգեստն ու դիմակը ձեր սենեակումն են:
Ես պիտի շտապեմ ձեր պատասխանը
Տանել Թագուհուն:

ԿԱՐԼՈՍ

Իսկ ժամանա՞կը:

ՄԷՐԿԱԴՕ

Ուղիղ գիշերուայ տասներկու ժամին:

ԿԱՐԼՈՍ

Գնացէ՛ք, ասացէ՛ք, որ նա սպասէ ինձ:
(Մէրկադօն գնում է)

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ԿՈՄՍ ԼԷՐՄԱ։

ԼԷՐՄԱ

Իշխա՛ն, փրկեցէք շուտով ձեր անձը,
Արքան զայրացած է սաստիկ ձեր դէմ:
Վտանգ է սպառնում ձեր ազատութեան —
Գուցէ և կեանքին: Ոչ ինչ մի հարցնէք:
Ծածուկ հեռացայ, որ գամ զգուշացնեմ:
Փախէ՛ք անյապաղ:

ԿԱՐԼՈՍ

Ես ինձ յանձնում եմ
Աստուծոյ ձեռը:

ԼԷՐՄԱ

Ինչպէս Թագուհին
Իսկոյն ինձ ասաց, այս գիշեր արդէն
Պէտք է հեռանաք մայրաքաղաքից
Եւ փախչէք Բրիւսէլ: Մի՛ յետաձգէք:
Ապստամբութիւնը նպաստում է
Ձեր հեռանալուն, և այդ իսկ մտքով

Թագուհին ինքը պատրաստել է այն:
Ձեն համարձակուի այժմ բռնութիւն
Գործ դնել ձեր դէմ: Ձեզ կարթէզեան
վանքում սպասում են փոստի ձիաներ:
Եւ ահա ձեզ զէնք, եթէ որ ստիպեն —
(տալիս է նորան դաշոյն և ատրճանակներ)

КАРЛОС

Շատ շնորհակալ եմ ձեզնից, կոմս Լէրմա:

ԼԷՐՄԱ

Իշխան, այսօրուայ ձեր պատմութիւնը
Շատ շարժեց սիրտս: Այդպէս էլ ոչ ոք
Հիմա չէ սիրում: Բոլոր ճշմարիտ
Հայրենասէրներ ցաւակից են ձեզ:
Էլ աւելի բան չեմ կարող ասել:

ԿԱՐԼՈՍ

Այս հանգուցեալը ազնուամիտ մարդ
Անուանեց ձեզ, կոմս:

ԼԷՐՄԱ

Դարձեալ կրկնում եմ.
Գնացէ՛ք, իշխան և Աստուած լինի
Ձեր առաջնորդը: Կգան աւելի
Լաւ ժամանակներ, բայց այն ժամանակ
Ես էլ չեմ լինի: Ահա՛ առաջուց
Ընդունեցէ՛ք իմ երդումը:
(նա խոնարհվում է նորա առաջ ծնկան վրայ)

ԿԱՐԼՈՍ

(կամենում է արգելել այդ բանը սաստիկ շարժուած)
Ո՛չ, ո՛չ.
Մի՛ այդպէս, Լէ՛րմա — Դուք ինձ շարժում էք:
Ես չեմ կամենում, որ սիրտս կակղի:

ԼԷՐՄԱ

(ջերմեռանդութեամբ համբուրում է նորա ձեռը)
Իմ որդոց արքա՛յ: Ո՜հ, իմ որդիքը
Կըկարողանան ձեզ համար մեռնել:
Ես այդ չեմ կարող: Յիշեցէ՛ք, իշխան,

Ինձ իմ որդոց մէջ։ Ցանկանում եմ ձեզ,
Որ խաղաղութեամբ վերադառնաք դուք
Ձեր հայրենիքը։ Բարի մարդ եղէք
Դօն Փիլիպպոսի աթոռի վերայ։
Դուք էլ տանջուել էք։ Իշխա՛ն, ձեր հօր դէմ
Ձէնք չըբարձրացնէք, ո՛չ, չըբարձրացնէք։
Փիլիպպ երկրորդը ստիպեց ձեր պապին
Աթոռից իջնել — և այսօր ինքը
Սեփական որդու առաջ դողում է։
Չըմոռանաք այս — և Աստուած ձեզ հետ։

(Նա շուտ հեռանում է։ Կարլոսը կամենում է ուրիշ ճանապարհով հեռանալ, բայց յանկարծ յետ է դառնում և ընկնում է Մարկիզի դիակի մօտ, որ մէկ անգամ էլ գրկում է։ Յետոյ շուտ դուրս է գնում սենեակից)

Թագաւորի առանձնասենեակը

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴՈՒՔՍ ԱԼԲԱ, ԴՈՒՔՍ ՖԵՐԻԱ *գալիս են խօսելով*

ԱԼԲԱ

Քաղաքն հանդարտ է։ Ի՞նչպէս է արքան։

ՖԵՐԻԱ

Սաստիկ զայրացած։ Մենակ փակուել է
Իւր սենեակի մէջ և չէ ընդունում
Ոչ ոքին, ինչ որ կուզ է պատահի։
Մարկիզ Պօզայի դաւաճանութիւնն
Իսպառ փոխել է նորա բնութիւնը։
Էլ այն մարդը չէ։

ԱԼԲԱ

Ես պէտք է տեսնեմ
Նորան։ Այս անգամ չեմ կարող խնայել։
Մի երևելի, նշանաւոր գիւտ,
Որ իսկոյն արի։

ՖԷՐԻԱ

Դարձե՞ալ մի նոր գիւտ։

ԱԼԲԱ

Մի աբեղա, որ ուզում էր ծածուկ
Տեսնել իշխանին, և ուշադրութեամբ
Ականջ էր դրել մարկիզ Պօզայի
Մահուան պատմութեան, բռնվում է իմ
Պահապաններից։ Մահուան երկիւղից
Խոստովանում է, թէ ունի իւր հետ
Հարկաւոր թղթեր, որոնց մարկիզը
Տուել էր նորան յանձնել իշխանին,
Եթէ նա ինքը չտեսնէր նորան
Մինչև երեկոյ։

ՖԷՐԻԱ

Յե՞տոյ, պատմեցէ՛ք։

ԱԼԲԱ

Այդ նամակներից ես իմացայ, որ
Կարլոսն այս գիշեր մինչև առաւօտ
Պէտք է Մադրիդը թողնէ։

ՖԷՐԻԱ

Ի՞նչ։

ԱԼԲԱ

Արդէն
Պատրաստ կանգնած է Կադիկսում մի նաւ,
Որ պիտի տանէ նորան Ֆլիսինգէն —
Նիդէրլանդիայի նահանգները միայն
Նորան են սպասում, որ սպանիական
Լուծը դէն ձգեն։

ՖԷՐԻԱ

Ա՛հ, այդ ի՞նչ բան է։

ԱԼԲԱ

Միւս նամակներից տեղեկանում ենք,
Որ Սօլիմանի նաւատորմիղը

Արդէն հեռացաւ Հռոդոսից, որ մեր
Նաւատորմիղը վերայ յարձակուի
Միջերկրականում:

ՖԷՐԻԱ

Ի՞նչ էք ասում, դո՛ւքս:

ԱԼԲԱ

Հիմա հասկացայ այդ նամակներից,
Թէ ինչի համար ճանապարհորդեց
Մարկիզ դէ Պօզան ողջ Եւրոպայում:
Նորա նպատակն էր զինաւորել
Հիւսիսի բոլոր պետութիւնները,
Որ սպանիական լծից ազատէ
Նիդէրլանդացոց:

ՖԷՐԻԱ

Ա՞յդ էր ուրեմն:

ԱԼԲԱ

Այդ նամակներին կցած է նոյնպէս
Մի մանրամասն և ճիշտ նախագիծ
Այն պատերազմի, որ Նիդէրլանդիան
Պիտի յաւիտեան բաժանէ մեզնից:
Ամեն բան մէջը ճիշտ ցոյց է տուած.
Զօրութիւնը և դիմադրութիւնը,
Տէրութեան բոլոր միջոցները և
Նաւատորմիղը: Թէ ո՞ւմ հետ պէտք է
Դաշինք հաստատել — Այդ նախագիծը,
Թէև նենգաւոր, բայց ճշմարիտ որ
Հոյակապ գործ է:

ՖԷՐԻԱ

Ի՞նչ սարսափելի
Դաւաճան մարդ էր:

ԱԼԲԱ

Այդ նամակներում
Ցիշուած է նոյնպէս, որ իւր Մադրիդից
Փախչելու գիշեր Կարլոս իշխանը
Պէտք է իւր մօր հետ ծածուկ տեսնուի:

ՖԵՐԻԱ

Ուրեմն այսօ՞ր։

ԱԼԲԱ

Այո՛, այս գիշեր։
Այս մասին արդէն ես կարգադրել եմ։
Տեսնում էք, գործը ստիպողական է
Վայրկեանը թանգ է — բա՛ց արէք դուռը։

ՖԵՐԻԱ

Ո՛չ։ Արգելուած է։

ԱԼԲԱ

Ինքս բաց կանեմ —
Սաստիկ վտանգը արդարացնում է
Յանդգնութիւնս —

(այն ինչ նա գնում է դէպի դուռը, սա բացվում է և դուրս է գալիս Թագաւորը)

ՖԵՐԻԱ

Ահա նա ինքը։

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԹԱԳԱՒՈՐ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ։

(Նորան տեսնելով ամենքը զարհուրում են, յետ են քաշվում և պատկառանքով ճանապարհ են տալիս նորան։ Նա կարծես թէ արթուն երազի մէջ է, ինչպէս մի լուսնոտ — նորա հագուստը և կերպարանքը դեռ ևս կրում են փոքր ինչ առաջ պատահած ուշաթափութեան հետևանքները։ Կամաց քայլերով անց է կենում նա ներկայ եղող իշխանների առաջ, խոր նայում է ամեն մէկին, բայց ոչ ոքին չէ ճանաչում. վերջապէս կանգնում է խոր մտածմունքների մէջ ընկղմած, աչքերը գետնին ուղղած, մինչև որ փոքր առ փոքր յայտնվում է նորա հոգու դրութիւնը)

ԹԱԳԱՒՈՐ

Յե՛տ տուր ինձ, յե՛տ տուր այս հանգուցեալը,
Հարկաւոր է ինձ։

ԴՕՄԻՆԳՕ (կամաց դուքս Ալբային)

Խօսեցէ՛ք, Ալբա՛։

ԹԱԳԱՒՈՐ (առաջուայ պէս)

Արհամարհեց ինձ և այնպէս մեռաւ:
Յե՛տ տուր ինձ կրկին, որ իւր կուրծքը
փոխէ իմ մասին:

ԱԼԲԱ

(երկիւղով մօտենում է նորան)

Տէ՜ր—

ԹԱԳԱՒՈՐ

Ո՞վ է խօսում:

(Նա մի երկար հայեացք ձգում է իւր շուրջ)

Մոռացե՞լ էք դուք իմ ով լինելը:
Ինչի՞ չեմ տեսնում ձեզ ծունկ խոնարհած,
Թշուառականնե՛ր: Ես դեռ արքայ եմ:
Հպատակութիւն պահանջում եմ ես:
Մի՞թէ էլ ոչ ինչ չէք համարում ինձ,
Որ մէկ անհատը արհամարհեց ինձ:

ԱԼԲԱ

Արքա՛յ, խնդրում ենք, մոռացէք նորան:
Մի նոր, նորանից շատ վտանգաւոր
Թշնամի յայտնուեց ձեր տէրութեան մէջ:—

ՖԵՐԻԱ

Կարլոս իշխանը—

ԹԱԳԱՒՈՐ

Նա մի բարեկամ
Ունէր, որ նորան զոհեց իւր կեանքը—
Որ ինձ գահակից կարող էր լինել—
Ի՛նչ հպարտ, հպարտ նայում էր նա ինձ:
Այդպէս չեն նայում բարձր գահերից:
Պարզ երևում էր, որքան հպարտ էր
Իւր յաղթութեան վրայ: Թէ ինչ էր կորցրել,
Այդ խոստովանեց նորա կսկիծը:
Չնչին բանի վրայ, այնպէս չեն ողբայ —
Եթէ նա հիմա կենդանի լինէր,
Պատրաստ էի տալ ես մի Հնդկաստան:
Ի՛նչ օգուտ է ինձ իշխանութիւնս,

Երբ անկարող եմ ուղղել իմ սխալը,
Երբ անկարող եմ ես հանել նորան
Գերեզմանիցը և կենդանացնել:
Ո՛չ, մեռելները էլ չեն վեր կենում.
Գերեզմանումն է այն մարդը, որ ինձ
Արհամարհել է: Ես ի՞նչ գործ ունիմ
Ապրողների հետ: Մի բարձր հանճար,
Մի հատ ազատ մարդ յայտնուեց կեանքիս մէջ —
Բայց արհամարհեց նա ինձ և մեռաւ:

ԱԼԲԱ

Ապա ի զո՛ւր ենք մե՛նք ապրել — Եկէ՛ք,
Ո՛վ Սպանիացիք, գերեզման մտնենք.
Եւ մինչև անգամ մեռած խլում է
Այն մարդը մեզնից արքայի սիրտը:

ԹԱԳԱՒՈՐ

(Նստում է և գլուխը դնում է կռան վրայ)
Եթէ ինձ համար նա այդպէս մեռնէր:
Նորան չափազանց սիրում էի ես:
Որդու պէս թանգ էր նա սրտիս համար:
Այն պատանու մէջ ինձ համար մի նոր
Եւ գեղեցկագոյն լուսանում էր օր:
Ո՞վ գիտէ, թէ ինչ էի պատրաստում
Ես նորա համար: Նա իմ առաջին
Անդրանիկ սէրն էր: Թող ինձ անիծէ
Ամբողջ Եւրոպան: Փոյթ չէ: Նորանից
Ես արժանի եմ շնորհակալութեան:

ԴՕՄԻՆԳՕ

Ի՞նչ կախարդութեամբ —

ԹԱԳԱՒՈՐ

Եւ ո՞ւմ բերեց նա
Այդպիսի մի զոհ: Տղայի՛ն, իմ որդուն:
Անկարելի՛ է: Ես չեմ հաւատայ:
Պօզան չի մեռնի մի տղայի համար:
Բարեկամութեան աղքատիկ բոցը
Կարող չէ լցնել Պօզայի սիրտը:

Ո՛չ, ո՛չ, այդ սիրտը զարկում էր ամբողջ
Մարդկութեան համար: Պօզան սիրում էր
Բոլոր աշխարհը գալոց սերունդով,
Իւր սիրոյ համար նա գտաւ մի գահ —
Եւ մօտով անցաւ: Միթէ կըներէ՞
Պօզան ինքն իրան, որ դաւաճանեց
Իւր մարդկութիւնը: Ո՛չ, ո՛չ: Ես նորան
Լաւ եմ ճանաչում: Նա ոչ թէ զոհեց
Դօն փիլիպպոսին կարլոսի համար,
Այլ մի ծերունուն երիտասարդին,
Իւր աշակերտին: Արդէն մայր մտնող
Հօր արեգակը էլ չէ տաքացնում
Նորաբաց օրը: Դա նորա որդու
Ծագման է սպասում: — Ո՛հ, պարզ է, որ իմ
Մահուան են սպասում:

ԱԼԲԱ

Այս նամակներում
կարող էք կարդալ հաստատութիւնը:

ԹԱԳԱՒՈՐ (վեր է կենում)

Բայց նա սխալուել է: Ես դեռ ևս կամ:
Շնորհակալ եմ ես քեզնից, բնութիւն:
Իմ ջղերի մէջ երիտասարդի
Ոյժ եմ շօշափում: Ես ծիծաղելի
Կըշինեմ նորան: Ցնորք է նորա
Առաքինութիւնն: Նա մահ ընդունեց
Իբրև մի յիմար: Նորա անկումը
Թող ճնշէ նորա և բարեկամին
Եւ բոլոր դարը: Տեսնենք, առանց ինձ
Ի՞նչ են անելու: Դեռ մի երեկոյ
Իմն է աշխարհը: այնպէս գործ դնեմ
Ես այդ երեկոյն, որ հազար տարի
Ինձանից յետոյ ոչ մի հողագործ
Զըկարողանայ հրկիզուած հողում
Մի սերմ աճեցնել: Նա ինձ մարդկութեան,
Իւր կուռքին զոհեց, թող մարդկութիւնը

Քաւէ մ՛ առաջ նորա յանցանքը—
Ուրեմն սկսեմ նորա թրթուրից —
(դուրս Ալբային)
Ի՞նչ էիք ասում իշխանի մասին.
Մէկ էլ կրկնեցէ՛ք: Ի՞նչ ենք իմանում
Այս նամակներից:

ԱԼԲԱ

Մարկիզ Պօզայի
Կտակը, գրած Կարլոս իշխանին:

ԹԱԳԱՒՈՐ

(շտապով կարդում է թղթերը, որի միջոցին բոլոր ներկայ անձինք ուշադրութեամբ նայում են նորան։ Թղթերը կարդալուց յետոյ դնում է մի կողմը և լուռ ման է գալիս սենեակի մէջ)

Կանչեցէ՛ք ինձ մօտ մեծ ինկուիզիտոր
Հայր կարդինալին: Ասացէ՛ք նորան,
Որ ես խնդրում եմ մի ժամ գալ ինձ մօտ:

(իշխաններից մէկը գնում է։ Թագաւորը կրկին առնում է թղթերը, կարդում է և էլի դնում է մի կողմը)

Ուրեմն այս գիշեր:

ՏԱՔՍԻՍ

Ճիշտ երկու ժամին
Փոստը կը սպասէ վանքում իշխանին:

ԱԼԲԱ

Եւ իմ ուղարկուած մարդիկ տեսել են
Որ տանում էին վանքը զանազան
Կապոցներ, դրոշմած արքունի դրոշմով

ՖԷՐԻԱ

Եւ մեծ գումարներ ժողովվում էին
Թագուհու անուամբ մաւրիտանացի
Գործակալներից փոխանակագրով.
Բրիւսսէլ ստանալու:

ԹԱԳԱՒՈՐ

Դուք ի՞նչտեղ թողէք
Կարլոս իշխանին:

ԱԼԲԱ

Մարկիզ Պօզայի

Դիակի մօտ, տէր:

ԹԱԳԱՒՈՐ

Դեռ եւս լոյս կա՞յ
Արդեօք Թագուհու սենեակների մէջ:

ԱԼԲԱ

Այնտեղ տիրում է խորին լռութիւն:
Այսօր Թագուհին սովորականից
Շուտ էր արձակել իւր նաժիշտներին:
Դքսուհին Արնօս երբ որ դուրս եկաւ,
Արդէն Թագուհին խոր քնի մէջ էր:

(մտնում է մի թիկնապահ ՕՖԻՑԻՐ: Նա տանում է դուրս Ֆէրիային մի կողմը և կամաց խօսում է նորա հետ: Սա զարմացած դառնում է դէպ Ալբային, միւս իշխանները մօտենում են նոցա և իրար մէջ սկսում են կամաց խօսել)

ՖԷՐԻԱ, ՏԱՔՍԻՍ, ԴՕՄԻՆԳՕ

Զարմանալի է:

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ է պատահել:

ՖԷՐԻԱ

Մի լուր, տէր արքայ, որին դժուար է
Հաւատ ընծայել —

ԴՕՄԻՆԳՕ

Երկու պահապան
Որոնք փոխուել են նոր իրանց տեղից
Պատմում են — սակայն ծիծաղելի է:

ԹԱԳԱՒՈՐ

Բայց ի՞նչ են պատմում:

ԱԼԲԱ

Իբր պալատի
Ձախ թեւում կայսր Կարլոսի հոգին
Երևացել է և հաստատ, հանդարտ
Քայլերով նոցա առաջ անցել է:
Մի և նոյն լուրը հաստատում են միւս
Պահապանները, որոնք այնտեղ են

Աւելացնելով, թէ ուրուականը
Գնացել Թագուհու սենեակն է մտել։

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ կերպարանքով երեւացել է։

ՕՖԻՑԻՐ

Նոյն իսկ հանդերձով, որ վերջին անգամ
Նա հագած ունէր Սէնտ Իւստ վանքի մէջ
Իբրեւ աբեղայ·

ԹԱԳԱՒՈՐ

Իբրեւ աբեղայ
Ուրեմն նորան պահապանները
Տեսե՞լ են, երբ որ դեռ կենդանի էր։
Թէ չէ ի՞նչ գիտեն, թէ նա կայսրն է։

ՕՖԻՑԻՐ

Պէտք է նա լինէր, որ բռնած ունէր
Ձեռին գայլխօն։

ԴՕՄԻՆԳՕ

Ասում են յաճախ
Տեսել են նորան նոյն կերպարանքով։

ԹԱԳԱՒՈՐ

Հետը խօսել չե՞ն։

ՕՖԻՑԻՐ

Ոչ ոք չէ խօսել։
Պահապանները աղօթք կարդալով
Թողել են նորան անցնել իրանց մէջ։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ ուրուականը մտաւ Թագուհու
Աւանձնարա՞նը։

ՕՖԻՑԻՐ

Նախասենեակը։
(ընդհանուր լռութիւն)

ԹԱԳԱՒՈՐ

(շուտ դառնում է իշխաններին)
Դուք ի՞նչ էք կարծում։

ԱԼԲԱ

Մենք համր ենք, արքա՛յ։

ԹԱԳԱՒՈՐ

(կարճ լռութենից յետոյ օֆիցէրին)

Թիկնապահներս թող գնան աւորուին
Եւ բռնեն բոլոր ճանապարհները:
Շատ ցանկանում եմ ես այդ հոգու հետ
Երկու բառ խօսել:

(Օֆիցէրը դուրս է գնում. իսկոյն մտնում է մի մանկլաւիկ)

ՄԱՆԿԼԱՒԻԿ

Տէ՛ր, ինկուիզիտոր
կարդինալ հայրը:

ԹԱԳԱՒՈՐ *(ներկայ գտնուողներին)*

Այժմ հեռացէ՛ք:

(մտնում է կարդինալ մեծ ինկուիզիտորը, իննսուն տարեկան ծերունի և կոյր, ձեռին գաւազան, երկու դոմինիկեան աբեղաներից առաջնորդած։ Երբ որ նա անց է կենում իշխանների առաջ, բոլորը ծունկ են խոնարհում և համբուրում են նորա հանդերձը. նա օրհնում է նոցա։ Բոլորն էլ հեռանում են)

ՑԱՍՆԵՐՈՐԴ ՏԵՍԻԼ

ԹԱԳԱՒՈՐ, ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

(երկար լռութիւն)

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Արդեօք արքայի՞ առաջն եմ:

ԹԱԳԱՒՈՐ

Այո՛:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Երբէք այդ բանին էլ չէի սպասում:

ԹԱԳԱՒՈՐ

Ես մի տեսարան նորոգում եմ այժմ
Անցած օրերից: Փիլիպպ Ինֆանտը
Խորհուրդ է խնդրում իւր վարժապետից:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Երբէք կարօտ չէր իմ խորհուրդներին

Կարլոս սանս, ձեր մեծանուն հայրը։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ նա ինձանից շատ բաղդաւոր էր —
Ես մարդ եմ սպանել, կարդինա՛լ, խիղճս
Հանգիստ չէ տալիս։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Ինչի՞ սպանեցիք։

ԹԱԳԱՒՈՐ

Ո՛հ, խաբէութիւն մի անօրինակ —

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Ես արդէն գիտեմ։

ԹԱԳԱՒՈՐ

Ի՞նչ գիտէք։ Ումի՞ց։
Այդ ե՞րբ իմացաք։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Ես վաղուց գիտեմ.
Ինչ որ դուք այսօր միայն իմացաք։

ԹԱԳԱՒՈՐ (զարմանալով)

Ուրեմն այն մարդուն ճանաչո՞ւմ էիք։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Նորա կեանքը ճիշտ ստորագրուած է
Սկզբից մինչև վերջ Սանտա կազայի
Ցուցակների մէջ։

ԹԱԳԱՒՈՐ

Եւ նա ազատ էր։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Երկար էր թելը, որով կապուած էր,
Բայց անխզելի։

ԹԱԳԱՒՈՐ

Արդէն տէրութեան
Սահմանից դուրս էր։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՈՐ

Ես ամենուրեք

Նորա հետ էր։

ԹԱԳԱՒՈՐ

(անբաւական քայլում է յետ ու առաջ)

Գիտէիք, թէ ում
Ձեռն էր ընկել — ինչի՞ ուրեմն
Զըզգուշացրիք ինձ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Նոյն հարցը ես ձեզ
Վերադարձնում եմ — ինչի՞ չըհարցրիք
Մեզանից ոչինչ, երբ որ այն մարդու
Գիրկն էիք ընկնում։ Դուք ճանաչեցիք
Նորան։ Տեսաք, որ հերետիկոս է։
Ի՞նչը ստիպեց ձեզ ծածկել այդ զոհը
Մեր սուրբ ատեանից — Երբ որ դուք, արքա՛յ,
Ծածկում էք մեզնից յանցաւորներին,
Մեզանից ծածուկ միաբանում էք
Մեր թշնամու հետ, մենք էլ ի՞նչ անենք։
Եթէ որ մէկին պէտք է խնայել,
Ի՞նչ իրաւունքով ապա զոհուեցան
Հարիւր հազարներ։

ԹԱԳԱՒՈՐ

Նա էլ զոհուեցաւ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ոչ, նա սպանուեցաւ — խայտառակ կերպով,
Անիրաւաբար — եւ այն արիւնը,
Որ պիտի վազէր մեր փառքի համար,
Մարդասպանների ձեռները ներկեց։
Այն մարդը մերն էր։ Ի՞նչ իրաւունքով,
Ասացէք, դիպաք Ինկուիզիցիայի
Սեփականութեան։ Այն մարդը պէտք է
Մեր ձեռով մեռնէր։ Աստուած ինքը մեզ
Պարգեւեց նորան այս աղքատ դարում,
Որ ինքնահաւան իմաստութիւնը
Իւր մոլորութեամբ դատապարտելի
Բոլոր աշխարհի առաջ ամաչէր։

Այդ իմ առաջուց մտածած գործն էր։
Այժմ փչացաւ իմ այնքան տարուայ
Աշխատութիւնը։ Մենք կողոպտած ենք։
Եւ ձեզ ի՞նչ մնաց — արիւնոտ ձեռներ։

ԹԱԳԱՒՈՐ

Ներէ՛ր ինձ. կրքով յափշտակուեցայ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Կրքո՞վ — ի՞նչ։ Մի՞թէ Փիլիպպ ինֆանտն է
Ինձ պատասխանում։ Մի՞թէ մենակ ես
Ծերացայ — Կրքո՞վ։
(անբաւականութեամբ գլուխը շարժելով)
Ազատէ՛ր խիղճը
Քո տէրութեան մէջ, երբ դեռ կրում ես
Ինքդ շղթաներ։

ԹԱԳԱՒՈՐ

Ես դեռ անփորձ եմ
Այդ բաների մէջ։ Համբերո՛ղ եղէք։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ո՛չ, ես ձեզանից անբաւական եմ —
Բոլոր նախընթաց ձեր վարչութիւնը
Արատաւորել։ Ո՞ւր էր Փիլիպպը,
Որի անսասան, հաստատուն հոգին,
Նման այն անշարժ աստղին երկնքում,
Անփոփոխ և միշտ ինքն իւր վրայ դառնում։
Մի՞թէ ձեզ համար ոչնչացել էր
Բոլոր անցեալը։ Մի՞թէ աշխարհը
Այն րոպէի մէջ դարձեալ նոյնը չէր,
Երբ դուք մեկնեցիք նորան ձեր ձեռը։
Թոյնը էլ թոյն չէ՞ր։ Մի՞թէ քանդուել էր
Չարը և բարին, ճշմարտութիւնը
Եւ ստութիւնը բաժնող միջնորմը։
Ի՞նչ է նպատակ, անսասանութիւն,
Ի՞նչ է այրական հաւատարմութիւն,
Երբ թոյլ րոպէին վաթսուն տարեկան
Կ՛անքի կանոնը հալվում է ինչպէս

Մի կնոջ հաճոյք:

ԹԱԳԱՒՈՐ

Ես նայում էի
Նորա աչքերում — Ների՛ր մարդկային
Տկարութեանս: Աշխարհի համար
Մի մուտք պակաս է դէպի քո սիրտը:
Լոյսը հանգել է քո աչքերի մէջ:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ի՞նչ էիք ուզում արդեօք այն մարդուց:
Նա ի՞նչ մի նոր բան պէտք է ցոյց տար ձեզ,
Որ դեռ յայտնի չէր: Այդքան ուրեմն
Ճանաչում էք դուք նորասիրութեան
Մոլեռանդութիւնն: Նորաղանդների
Սնապարծ լեզուն մի՞թէ ծանօթ չէր
Ձեր ականջներին: Եթէ բառերը
Արդէն խաղտում են ձեր համոզմունքը —
Ապա ասացէք, հարցնում եմ ես ձեզ,
Դուք ի՞նչ ճակատով մահով պատժեցիք
Հարիւր հազարներ, որոնք բարձրացան
Խարոյկի վերայ նոյն բանի համար:

ԹԱԳԱՒՈՐ

Մարդու կարօտ էր իմ սիրտը. բայց այս
Դօմինգօները —

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ի՞նչ են ձեզ մարդիկ:
Նոքա ձեզ համար միայն թուեր են:
Մի՞թէ նոր մէկանց սկսեմ քաղ անել
Ես իմ ալեզարդ աշակերտի հետ
Անցած դասերը: Երկրի Աստուածը
Թող չըկարօտի այն բանին, որ նա
Պիտի չըստանայ: Երբ համակրութեան
Ցայտնում էք կարօտ, չէ՞ որ աշխարհը
Խոստովանում էք ձեզ հետ հաւասար:
Եւ ի՞նչ իրաւունք, ասացէք, ունիք
Նոցա վրայ, որոնք հաւասար են ձեզ:

ԹԱԳԱՒՈՐ

Ես տկար մարդ եմ — Դու արարածից
Պահանջում ես այն, ինչ որ կարող է
Միայն Արարիչը։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ո՛չ, արքա՛յ, դուք ինձ
Չէք կարող խաբել։ Ես ձեզ հասկացայ։
Դուք կամենում էք ազատուել մեզնից։
Ձեզ ծանր է թւում սուրբ ուխտի լուծը։
Ուզում էք ազատ և մենակ լինել։
(Նա խօսքը կտրում է։ Թագաւորը լուռ է)
Մեր վրէժը առանք։ Շնորհակա՛լ եղէք
Սուրբ եկեղեցուց, որ ձեզ պատժում է
Իբրև բարի մայր։ Այն ընտրութիւնը,
Որ թոյլ տուինք ձեզ անել կուրօրէն,
Էր ձեր պատիժը։ Դուք խրատուեցաք,
Կրկին մեզ դարձաք — Եթէ որ հիմա
Ես չըլինէի ձեր առաջ կանգնած —
Վկայ է Աստուած, վաղը դուք, արքա՛յ,
Պիտի կանգնէիք այսպէս իմ առաջ։

ԹԱԳԱՒՈՐ

Այդպէս մի՛ խօսիր, զսպի՛ր քեզ, տէրտէր,
Ես չեմ համբերի։ Ես այդ խօսքերը
Չեմ կարող լսել։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ինչի՞ կանչեցիք
Սամուէլի ստուերը — Երկու թագաւոր
Արդէն տուել եմ Սպանիային,
Եւ յոյս ունէի մի հաստատուն գործ
Թողնել յիշատակ։ Իմ աշխատանքի
Պտուղը կորաւ։ Փիլիպպոս արքան
Իւր ձեռով քանդեց իմ շինութիւնը։
Այժմ ասացէք, տէ՛ր — ինչի՞ համար
Կանչուած եմ այստեղ։ Ի՞նչ էք կամենում։
Ես մտադիր չեմ միւս անգամ կրկնել

Այցելութիւնս։

ԹԱԳԱՒՈՐ

Մի գործ, վերջինը,
ցետոյ կարող ես գնալ խաղաղութեամբ։
Հաշտուինք միմեանց հետ — Հաշտուեցա՞նք, թէ ոչ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Եթէ Փիլիպպոս արքան զղջում է։

ԹԱԳԱՒՈՐ (կարճ լռութիւնից յետոյ)

Որդիս ինձանից ապստամբվում է։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ի՞նչ էք որոշում։

ԹԱԳԱՒՈՐ

Ոչինչ — ամէն ինչ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ի՞նչպէս հասկանամ այդ ամէն ինչը։

ԹԱԳԱՒՈՐ

Կըթողնեմ փախչել, եթէ չըսպանեմ։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ցետո՞յ։

ԹԱԳԱՒՈՐ

Կարո՞ղ ես նոր հաւատ հիմնել,
Որ արդարացնէ որդու սպանութիւնն։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Աստուծոյ Որդին մեռաւ խաչի վրայ,
Որ նա իւր մահով հաշտեցնէ մեզ հետ
Ցաւիտենական արդարութիւնը

ԹԱԳԱՒՈՐ

Բայց դու կարո՞ղ ես արդեօք տարածել
Եւրոպայի մէջ քո այդ կարծիքը։

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ամէն տեղ, ուր որ պաշտվում է խաչը։

ԹԱԳԱՒՈՐ

Ես բնութեան դէմ պիտի մեղանչեմ —

կարո՞ղ ես նորա ձայնը լռեցնել:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Բնութեան ձայնին խուլ է հաւատը:

ԹԱԳԱՒՈՐ

Ես քեզ տալիս եմ իմ իրաւունքը,
Դու ես դատաւոր — կարո՞ղ եմ ինքս
Իսպառ յետ քաշուել:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Դուք ինձ յանձնեցէք:

ԹԱԳԱՒՈՐ

Միակ որդիս է — Ո՞ւմ թողնեմ, ինչ որ
Ժողովել եմ ես:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ապականութեան,
Քան ազատութեան:

ԹԱԳԱՒՈՐ (վեր է կենում)

Համաձայն եմ: գնանք:

ՄԵԾ ԻՆԿՈՒԻԶԻՏՕՐ

Ո՞ւր գնանք

ԹԱԳԱՒՈՐ

Որ ձեզ յանձնեմ ձեր զոհը:
(Նա դուրս է տանում նորան)

Թագուհու սենեակը

ՎԵՐՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ԿԱՐԼՈՍ, ԹԱԳՈՒՀԻ, վերջը ԹԱԳԱՒՈՐ ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐՈՎ.

ԿԱՐԼՈՍ

(Կրօնաւորի շորերով, երեսին դիմակ, որ իսկոյն վեր է առնում. Թեւի տակը մերկ սուր։ Բոլորովին մութն է։ Նա մօտենում է մի դռան, որ բացվում է։ Դուրս է գալիս Թագուհին գիշերազգեստով, ձեռին վառած մոմ։ Կարլոսը խոնարհւում է նորա առաջ ծնկան վերայ)

Եղիսաբէթ:

ԹԱԳՈՒՀԻ

(տխուր նայում է նորան)

Ո՛հ, այսպէ՞ս ենք տեսնվում։

ԿԱՐԼՈՍ

Այսպէս ենք տեսնվում։

(լռութիւն)

ԹԱԳՈՒՀԻ

(աշխատելով հանդարտուիլ)

Վե՛ր կացէք։ Միմեանց
Թող չվրդովենք, Կարլօս։ Մենք անզօր
Արտասուքներով չըպէտք է պատուենք
Վեհ հանգուցեալին։ Արտասուքները
Թող թեթեւացնեն փոքր վշտերը —
Նա իրան զոհեց ձեզ համար։ Նա իւր
Թանկագին կեանքով գնեց ձեր կեանքը։
Եւ այդ արիւնը, մի՞թէ թափուեցաւ
Ցնորքի համար — Ես ձեր փոխանակ
Խօսք տուի նորան։ Նա, ունենալով
Ինձ երաշխաւոր, աւելի ուրախ
Հրաժարուեց կեանքից։ Մի՞թէ թոյլ կըտաք,
Որ ես սուտ դուրս գամ։

ԿԱՐԼՈՍ (ոգևորուած)

Ես մի մահարձան
Կանգնեցնեմ նորան, որի նմանը
Դեռ չեն կառուցել ոչ մի արքային —
Նորա պաշտելի գերեզմանի վրայ
Դրախտ կըծաղկեցնեմ։

ԹԱԳՈՒՀԻ

Կարլօս, ձեզանից
Այդ յոյսն ունէի։ Եւ նորա մահուան
Մեծ իմաստն այդ էր։ Նա ինձ աւանդեց
Իւր վերջին կամքը և նշանակեց
Կտակակատար։ Ահա ձեր ուխտը
Յիշեցնում եմ ձեզ։ Ես ինքս միշտ սուրբ
Կըպահեմ իմը։ — Նա ինձ աւանդեց

Դարձեալ մի կտակ — Ես խօսք եմ տուել —
Եւ ինչի՞ լռեմ — Նա իւր Կարլոսին,
Նա ձեզ ինձ յանձնեց — Ես էլ չեմ քաշուի
Աշխարհի առաջ — էլ մարդկանց առաջ
Դողալու չեմ ես։ Այժմ ուզումեմ
Աներկիւղ լինիլ ինչպէս բարեկամ։
Թող այսուհետեւ իմ սիրտը խօսի։
Առաքինութիւն կանչեց մեր սէրը
Ես հաւատումեմ և էլ իմ սիրտը —

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, մի վերջացնէք — Ես մինչև հիմա
Երազումն էի — Ես սիրումէի,
Այժմ զարթեցայ։ Մոռացութեան տանք
Բոլոր անցեալը։ Ահա՛, յետ առէք
Ձեր նամակները, և ոչնչացրէ՛ք
Դուք էլ իմերը։ Էլ մի վախենաք
Սրտիս յուզմունքից։ Այժմ վերջացաւ։
Մի մաքուր կրակ զտեց իմ անձը։
Իմ կիրքը արդէն գերեզմանումն է։
Ոչ մի յանցաւոր իղձ էլ չըմնաց
Այստեղ, կուրծքիս մէջ։
(կարճ լռութիւնից յետոյ բռնելով նորա ձեռը)
Մա՛յր — եկայ ձեզ մօտ
Որ հրաժեշտս տամ — Զգացի վերջապէս,
Թէ կայ աւելի մի բարձր բարիք,
Քան թէ ձեր սէրը — Մի գիշերուայ մէջ
Թեւաւորուեցաւ իմ դանդաղ կեանքը.
Ես այր մարդ դառայ։ Այսուհետեւ իմ
Կեանքի պաշտօնն է միմիայն նորա
Սուրբ յիշատակը։ Իմ հունձը կորաւ։
(Նա մօտենում է Թագուհուն, որ ծածկում է իւր երեսը)
Մա՛յր, դուք ինձ ոչինչ չունի՞ք ասելու։

ԹԱԳՈՒՀԻ

Ուշք մի՛ դարձնէք, Կարլո՛ս, լացիս վրայ —
Ջեմ կարող չըլալ — Բայց հաւատացէք,

Դուք բոլորովին հիացնում էք ինձ։

ԿԱՐԼՈՍ

Մեր դաշնակցութեան դուք էիք միակ
Խորհրդակիցը — այդ անուամբ կըմնաք
Ամբողջ աշխարհում դուք ամենից թանգ
Իմ սրտի համար։ Չեմ կարող ձեզ տալ
Բարեկամութիւնս, ինչպէս որ երէկ
Չէի կարող տալ սէրս այլ կնոջ։
Բայց միշտ ինձ համար սուրբ կըհամարիմ
Այրի թագուհին, եթէ որ երբեմն
Նախախնամութեան կամքով բարձրանամ
Այս գահի վերայ։

(Թագաւորը մեծ ինկուիզիտորի և շատ իշխանների հետ երևում է բեմի ետևի կողմում Կարլոսն և Թագուհին չեն նկատում նոցա)

Այժմ Սպանիայից
Ես հեռանումեմ, և էլ չեմ տեսնի
Երբէք իմ հօրը — երբէք այս կեանքում։
Էլ այսուհետև նորան չեմ յարգում։
Բնութիւնը մեռած է իմ սրտի մէջ —
Եղէ՛ք դուք նորան գարձեալ ամուսին։
Նա զրկուեց որդուց։ Ձեր ամուսնական
Պարտքերին մնացէք միշտ հաւատարիմ —
Այժմ շտապումեմ իմ ժողովուրդը
Փրկել հալածող բռնութեան ձեռից։
Մադրիդն ինձ արքայ կըտեսնէ, կամ թէ
Երբէք չի տեսնի։ Հիմա մնա՛ք բարով։

(Նա համբուրում է նորան)

ԹԱԳՈՒՀԻ

Ո՛հ, Կարլոս, ի՞նչ էք անում դուք ինձ հետ —
Հասնել չեմ կարող ձեր մեծանձնութեան,
Բայց ձեզ հասկանալ, ձեզնով հիանալ —
Այդ կարողեմ ես։

ԿԱՐԼՈՍ

Ո՛հ, Էլիսաբէթ,
Մի՞թէ ես պինդ չեմ։ Դուք իմ գրկումն էք,
Ես չեմ սասանում։ Այստեղից երէկ
Ինձ չէր հեռացնի մօտեցող մահուան

Ահ՜ն ու սարսափը։

(Նա թողնում է նորան)

Անցաւ։ Այժմ ես
Վստահ դէմ կերթամ իմ ճակատագրին։
Դուք իմ գիրկն էիք, չտատանեցայ —
Այս ի՞նչ էր, արդեօք բան չլսեցի՞ք։

(ժամացոյցը զարկում է)

ԹԱԳՈՒՀԻ

Ոչինչ չեմ լսում, բացի սոսկալի
Զանգակի ձայնից, որ յիշեցնում է
Հրաժեշտի ժամը։

ԿԱՐԼՈՍ

Բարի գիշեր, մայր։
Գէնտից կստանաք առաջին գիրս,
Որ մարդկանց առաջ կըքարոզէ մեր
Յարաբերութեան բոլոր գաղտնիքը։
Այժմ ես պէտք է ասպարէզ դուրս գամ
Դոն Փիլիպպոսի դէմ բաց, համարձակ։
Էլ այսուհետև ոչինչ ծածուկ բան
Չի լինի մեր մէջ։ Ձեզ մարդկանց աչքից
Պէտք չէ վախենալ — Այս է իմ վերջին
Խաբէութիւնը։

(Նա ուզում է առնել դիմակը Թագաւորը կանգնում է նոցա մէջ)

ԹԱԳԱՒՈՐ

Այո՛, վերջինդ է։

(Թագուհին ուշաթափվում է)

ԿԱՐԼՈՍ

(մօտ է վազում և ընդունում է նորան իւր թևերի վերայ)

Մեռա՞ւ։ Ո՛հ, Աստուած։

ԹԱԳԱՒՈՐ

(սառնութեամբ և կամաց մեծ ինկուիզիտորին)

Կարդինա՛լ, ահա՛
Ես իմը արի, արէ՛ք դուք ձերը։

(Նա դուրս է գնում)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՄԻ ՀԱՅԵԱՑՔ ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ

Գրականութեան մէջ կան մտքեր, որոնք իբրեւ անհակառակելի ճշմարտութիւններ ընդհանրացած, սովորական եղած են միայն այն պատճառով, որ մի որեւիցէ անձն, հիմնուելով շատ անգամ կիսատ թերատ իրողութիւնների վերայ, մի անգամ յայտնել է նոցա աշխարհին: Այս կարգի մտքերիցն է, ըստ մեզ, եւ այն կարծիքը, որով մարդկութեան ընդարձակ գերդաստանին պատկանող անցեալ ու ներկայ ազգերը բաժանում են պատմական, կէս-պատմական եւ պատմութիւն չունեցող ժողովրդների: Բայց ո՞ր հիման վերայ այս ինչ ազգը կատարելապէս պատմական են համարում, իսկ այն ինչ ազգը միայն կէս-պատմական. կամ ինչու՞ համար Աֆրիկէի, Ամերիկայի, Աւստրալիայի բնիկ վայրենիները բոլորովին արտաքսվում են պատմութիւնից, այն ինչ Չինացիք ու Հնդիկները պատմական ազգերի շարքումն են դասվում: Եթէ այն իրողութիւնը աչքի առաջ ունին, թէ Աֆրիկէի ու Ամերիկայի վայրենիների կեանքը չէ ներկայացնում մեզ ոչինչ զարգացում, ոչինչ շարժողութիւն, ապա ուրեմն այդ միեւնոյն հիման վրայ արտաքսուելու են պատմութիւնից Չինացիքն ու Հնդիկները, որովհետեւ նոցա մէջ էլ չէ երեւում ոչինչ զարգացում, ոչինչ պատմութիւն: Ամբողջ մարդկութեան պատմութեան մէջ դժուար թէ գտնուի մի ազգ, որ Չինացոց պէս զարմանալի յամառութեամբ պահպանած լինի նախնական աւանդութիւններն ու սովորութիւնները: Տէրութեան կազմութիւնը, գրականութիւնը կրթութիւնը, ճարտարութիւնն ու արուեստները—բոլորը համարեա ոչինչ փոփոխութեան չէ ենթարկուած այս ազգի մէջ երկու հազար հինգ հարիւր տարուան ընթացքում: Համարեա նոյնը կարելի է

տել և Հնդկաց համար, որոնց մէջ նոյնպէս վաղուց զարգացում չէ երևում և որոնց կեանքը նոյնպէս անշարժ ու անփոփոխ է, այնպէս որ երկու հազար տարի կամ գուցէ նաև աւելի առաջ այն դրութեան մէջ էին գտնվում, որի մէջ տեսնում ենք նոցա այսօր։ Ինչո՞վ են զանազանվում ուրեմն վերոյիշեալ վայրենի ժողովրդները Չինացիներից ու Հնդկացիներից։ Եթէ այս վերջինները պատմական ազգերի կարգումն են դասվում այն հիման վերայ, որ մարդկութեան պատմութեան մէջ մի նշանակեալ տեղ են բռնում, միևնոյն պատճառով դասուելու են այստեղ և Աֆրիկէի ու Ամերիկայի վայրենիները. սոքա էլ ընդհանուր մարդկային զարգացման նշանակեալ աստիճանն են ներկայացնում։ Ներկայումս մանաւանդ թէ հիմք կայ ենթադրելու, որ այս մարդկային ազգի գերդաստանից մերժուած ժողովրդները ժամանակով գուցէ պատմական ազգերի ընտրեալ խըմբից աւելի նշանակութիւն ունենան պատմութեան համար։ Մեր առօրեայ կեանքի պիտոյքներին ծառայող գիւտերից շատը առանց որևէ փոփոխութեան, կամ փոքր ինչ տարբերութեամբ գործ դրուած ենք տեսնում յիշեալ վայրենիների մէջ, որոնք հաղորդակցութիւն չունենալով քաղաքակիրթ ազգերի հետ՝ չէին կարող ընդունել նոցանից այդ գիւտերը. ընդհակառակն, պատմական ասուած ազգերը շատ բան ընդունեցին այն վայրենիներից ու իրանց սեփականութիւն դարձրին, առանց կասկածելու անգամ թէ ո՞րն է այս կամ այն առարկայի ծագումն ու սկզբնաւորութիւնը։

Բացի վերև յիշուած վայրենի ժողովրդներից կան մի կարգի ազգեր, որոնց վերայ պատմութիւնը առանձին ուշադրութիւն չէ դարձնում, ոմանք մինչև անգամ պատմական ազգերի շրջանից արտաքսում են նոցա գլխաւորապէս այն պատճառով, որ հնութիւնը շատ քիչ բան է աւանդել նոցա կեանքից, հետևաբար և իրանց եզրակացութիւնները հիմնում են ըստ մեծի մասին անձնական հաճոյքի և կամայական կարծիքների վերայ։ Այս կարգին պատկանում է և Հայոց ազգը, որի երկու հազար տարուան նախնական կեանքի շըրջանի վերայ, չասենք ամենևին, գոնեա շատ կիսատ թերատ տեղեկութիւններ ունինք. եղածն էլ մինչև այժմ դեռ արժանապէս չէ կարգի բերուել ու քննուել։ Բայց ինչի՞ց է, օրինակի համար, որ փիւնիկեցոց այդքան մեծ նշանակութիւն են տալիս պատմաբանները, որոնց կեանքից նոյնպէս շատ քիչ իրողութիւններ յայտնի են այսօր, և որոնց հետ ժամանակակից ազգերից Հայերը, ըստ մեզ, մեծ

նմանութիւն ունին։ Արդարև փիւնիկեցոց կրօնական և պատմական աւանդութիւնները բոլորովին կորած են, և այն ազգը որին համարեա բոլոր քաղաքակիրթ ազգերը իրանց այբուբենը պարտական են, ոչինչ գրականութիւն չէ թողել, բացի մի քանի աննշան հատուկտորներից։

Գլխաւոր նմանութիւնը որ գտնում ենք փիւնիկեցոց և Հայոց մէջ այն է, որ այս երկու ազգերը միւս բոլոր արևելեան ազգերի հակառակ՝ իրանց կեանքը ոչ այնքան աշխարհակալութեամբ անցկացրին, որքան մի ընդարձակ վաճառականութեամբ ծովի և ցամաքի վրայ. և եթէ փիւնիկեցոց նշանակութիւնը հիմնում են այն ենթադրութեան վրայ, որ այս ազգը իր վաճառականութեան և ծովագնացութեան պատճառով պէտք է մեծ ազդեցութիւն ունենար այն ժամանակի ծանօթ ազգերի վրայ, ինչո՞ չպէտք է կարծենք որ Հայերն էլ զուրկ չպիտի լինէին այդ ազդեցութիւնից, երբ հաւաստի գիտենք որ նոցա վաճառականութիւնն էլ տարածուած էր ոչ միայն դրացի, այլ և շատ հեռաւոր ժողովրդների հետ։

Վերջին ժամանակներումս, պէտք է խոստովանել, մի քանի արևմտեան գիտնականներ, չբաւականանալով նախորդ ուսումնականների խօսքերը կրկնելով, սկսան աւելի հիմնաւորապէս պարապել հայոց անցեալ կեանքովը, դիմելով պատմութեան ամենահին և ստուգագոյն աղբիւրներին. խօսքս սեպաձև արձանագրութիւնների վրայ է [1]), որոնց վաւերական ընթերցմունքը խոստանում է բոլորո-

---

[1]) Սեպաձև կամ բևեռաձև, այսինքն սեպերի կամ մեխերի նմանութիւն ունեցող տառեր կոչվում են այն նշանագրերը, որոնք գործ են դրուած Նինուէի, Բաբելոնի, Վանի, Պերսեպոլի և ուրիշ արձանագրութիւնների մէջ, և որոնց ընթերցմունքը առհասարակ մեծ յաղթութիւն է արդեան գիտութեան համար։ Սեպաձև տառերը, որոնք ձախից աջ են կարդացվում, երկու գլխաւոր տեսակների կամ դրութիւնների են բաժանվում. Արիական կամ Պերսեպոլեան և Անարիական։ Առաջին տեսակը ամենից պարզն է, որ սորանից 70 տարի առաջ բաւական յաջողութեամբ կարդացել է Մ. Գրոտեֆէնդ գերմանացին, իսկ նորանից յետոյ Բիւրնուֆ, Ժակէտ, Լասսէն և Րօուլինսըն անգլիացին այն աստիճանի կատարելութեան հասան իրանց հետազօտութիւնների մէջ, որ նոքա, և մանաւանդ վերջինը, արիական կամ պարսկական արձանագրութիւնների մեծ մասը կարդացին։ Երկրորդ՝ այսինքն Անարիական դրութեան պատկանող արձանագրութիւնները շատ բարդ են, և մի քանի երկրորդական տեսակների են բաժանվում։ Սոցա մէջ նշանաւոր է 1) Սկիւթական Շօշական տեսակը, որ 110—120 նշանագրերից բաղկա-

վին յեղափոխել մեր նախնական ժամանակների պատմութիւնը։ Արդէն երկու ուսումնական՝ Լընորման ֆրանսիացին և մանաւանդ Մօրթման գերմանացին իրանց հետազօտութիւններով մեծ աղմուկ բարձրացրին արևելագէտների մէջ։ Առաջինը ենթադրում է՝ թէ հայկեան գաղթականութիւնից առաջ արարատեան երկրի բնիկները կազմում էին Ալարոդեան ասած ժողովրդները, որոնք տիրապետող հայկեան տարրից հետզհետէ սեղմուելով քաշուեցան դէպի հիւսիս և կազմեցին Վրաց ազգայնութիւնը։ Իւր այս համարձակ ենթադրութիւնը ֆրանսիացի գիտնականը հիմնում է Վանի մի քանի արձանագրութիւնների վրայ, որոնց լեզուաբանական հետազօտութիւնից գալիս է այն եզրակացութեանը՝ թէ յիշեալ արձանագրութիւնների ու Վրաց լեզուի ձևերի մէջ շօշափելի նմանութիւններ կան։ Իսկ Մօրթմանը նոյն Վանի արձանագրութիւնների առիթով Պօլսոյ Հայ և յոյն հասարակութիւնների առաջ խօսած դասերի մէջ այնպիսի իշխանների անուններ ու պատմական անցքեր է յիշում, Հայկազանց շրջանին վերաբերեալ, որ ոչ Մովսէս Խորենացու և ոչ մի ուրիշ պատմագրի ծանօթ են։ Եթէ Վանը, Մանազկերտը, Արմաւիրը, Արտիմէդը, Հայոց հին կեանքի այս պատկառելի վկաները, դարևոր

ցած է։ Այս կարգի արձանագրութիւնների լեզուն հին Թուրք լեզուն է յիշեցնում՝ խառն Արիական լեզուի տարրերով։ 2) Նինուէական և Բաբելական տեսակը, որ ամենից բարդ ու դժուարալոյծն է՝ 6-700 նշանագիր պարունակելուն համար։ Այս կարգի արձանագրութիւնների լեզուն Սեմական է։ 3) Հայկական տեսակը, որ 120-130 նշանագիր ունի և մինչև այժմ անծանօթ մնացած լեզու է ներկայացնում։ «Այն հանճարեղ միտքը, ասում է Մօրթման հնախոյզը, որ Քրիստոսից 700 տարի առաջ Ասորեստանցոց գրի գրութիւնը հայ լեզուին յարմարացրած է, զարմանալի տաղանդի տէր եղած պիտի լինի. վասն զի այն գրութեան թէ բազմաթիւ նշանագրերը համարեա հինգերորդ մասին վերածած է և թէ նորա բազմանիշ մասունքները բոլորովին դուրս թողած է։ Այն իրաւացի համոզմունքով թէ աստուածային շունչը, որ մարդու մէջ է բնակում, հիանալի գործերի առաջ զմայլելով զարթնում է, Եգիպտացիք, Փիւնիկեցիք և Յոյները նշանագրերը հնարողներին աստուածական պատիւ ընծայեցին։ Հայոց Կադմոսը, որ Ասորեստանցոց նշանագրերը Հայաստան բերաւ և Հայ լեզուի հանգամանքներին յարմարացրեց, մեզ անծանօթ մնացած է. գուցէ աստուածների ցանկի մէջ գտնուող Գ ա ւ ի ր ա անունը այն անձի անունը լինի, որ բաղդատվում է հայերէնի գ ր ե լ և գ ի ր բառերի հետ։ Հայոց Կղէոնը այս յանցանքը միայն նորանով քաւեց, որ երախտագէտ յարգանքով աւանդեց մեզ միւս անձի (Մեսրոպ Մաշտոցի) անունը, որ հազար տարի վերջը արդի գործածած գրերը հնարեց»։

համրութիւնից յետոյ լեզու լինին, Հայաստանն անշուշտ իւր փոքրիկ բայց արժանաւոր տեղը կը ստանայ համաշխարհական պատմութեան մէջ:

Բացի հայկական արձանագրութիւններից, մեր պատմութեան հին և մութ ժամանակների համար հարուստ նիւթ կարող են մատակարարել Հայաստանի դրացի աշխարհների և առհասարակ այն ազգերի արձանագրութիւնները, որոնց հետ Հայերը հետզհետէ քաղաքական և մտաւոր յարաբերութիւններ ունեցել են. այսպէս են՝ Ասորեստանցիք, Բաբելացիք, Մարք և Պարսիկները:

Մենք այս անգամ ընթերցողներին ներկայացնում ենք Խորսապատի և Բիսութունի արձանագրութիւնների այն մասերը՝ որոնք Հայաստանին են վերաբերում, առաջինը Ասորեստանցոց տիրապետութեան վերաբերեալ, երկրորդը պարսկական իշխանութեան ժամանակին: Այս արձանագրութիւնները նորանով աւելի հետաքրքրական են մեզ համար, որ այս երկու շրջանների վերայ մեր տոհմային պատմագրութիւնը բոլորովին լռում է և համարեա լոկ իշխանների անունների ցանկն է աւանդում: Միւս կողմից, այս երկու ընդարձակ շրջանները ութ հարուր տարուայ չափ, այսինքն Հայկազանց պատմութեան ամենանշանաւոր ժամանակը պարունակելով, մենք ևս ստիպուած ենք գտնվում ընդհանրապէս մի հարևանցի հայեացք դարձնել առհասարակ Հայոց նախնական կեանքի շրջանի և ժամանակակից ազգերի հետ ունեցած յարաբերութիւնների վերայ: Մեր յօդուածի ընթացքում գուցէ ընթերցողը պատահի երբեմն այնպիսի տեղեկութիւնների, որոնց տեղեակ, գուցէ նաև ուսումնարանի նստարանից լսած է, այնու ամենայնիւ ներողամիտ կը լինի, աչքի առաջ ունենալով որ մենք, որքան էլ խորշինք, մեր գրուածի նիւթը ակամայ կը ստիպէ մեզ մի քանի կրկնութիւններ անել:

Հայկեան գաղթականութեան առասպելախառն պատմութիւնից յետոյ՝ Հայերը Ասորեստանցոց հետ կրկին պատահում են Արամի ժամանակ: Հայկի յաջորդները իրանց նախահօր ընտրած կենտրոնից՝ Բզնունեաց ծովի ափերից հեռանալով, քանի գնացին աւելի տարածուեցան ու ցրուեցան. և այն ժողովուրդը, որ սկզբումը մէկ կլիմայի տակ բնակելով փակուած ու միօրինակ կեանք էր վարում, միևնոյն սովորութիւններով, իրանց հօտերը արածեցնելով և երկիրը մշակելով, երբ որ միմեանցից բաժանուեցան ու ցրուեցան, զանազան կլիմաների ազդեցութեան տակ ընկան, և կեանքի հանգամանքներն էլ փոխուեցան: Հիւսիսային և առհասարակ լեռնոտ մասե-

րում բնակւող ցեղերի մէջ զարգացաւ աւելի անկախութեան ոգին, իսկ դաշտային տեղերում բնակւողները անտարակոյս սովորեցան աւելի հանդարտ ու խաղաղ կեանքի։ Սոքա բնականաբար վտանգի մէջ էին, երբ որ հետզհետէ տարածուելով սկսան դրացի ժողովուրդների հետ շփուել, արեւելեան կողմից Մարաց, հարաւային կողմից Ասորեստանցոց և արեւմտեան կողմէց Գամրաց կամ Կապադովկացոց հետ, որոնց յարձակմունքներից պաշտպանուելու համար՝ հարկ էր բոլոր ցեղերը միացնել և մէկ մարմին կազմել նոցանից, մէկ անձի հրամանի և իրաւունքների տակ։ Այդ բաղդը վիճակուեցաւ Արամ նահապետին, որ «հայրենասէր մարդ լինելով, ասում է պատմութիւնը, աւելի լաւ էր համարում մեռնել, քան թէ Հայաստանը տեսնել օտարներից ոտնակոխ եղած և իւր հայրենակիցներին օտարի լծի տակ ընկած»։ Արդարև Արամը կարճ միջոցում ոչ միայն իւր ազգը ազատեց օտարների հարստահարութիւնից, այլև երկրի սահմանները ընդարձակեց, մանաւանդ արեւմտեան կողմից, ուր Եփրատ ու Ալիս գետերի մէջ եղած տարածութիւնը գրաւելով Հայերը մօտեցան ու ծանօթացան երկու մեծ ծովերի—Պոնտոսին (Սև ծովին) ու Միջերկրականին։

Պատմութիւնից ակնարկւում է որ Արամի աշխարհակալական ձգտումները զսպել դժուար կը լինէր, եթէ նա իւր յաջողութիւնների ընթացքում չպատահէր իւր տէրութիւնից աւելի զօրաւոր ու կարգաւորեալ պետութեան, այն է Ասորեստանին, որի վերայ այն ժամանակ թագաւորում էր Նինոսը՝ հռչակաւոր Շամիրամի ամուսինը։ Այս կէս պատմական ու կէս առասպելական անձինքը, որոնց հները մեծամեծ աշխարհակալութիւններ են ընծայում, Եգիպտոսից մինչև Հնդկաստան հասցնելով նոցա, նոր ժամանակների քննութիւններին նայելով՝ շատ բանից զրկւում են. ոմանք մինչև անգամ նոցա պատմական գոյութիւնը ուրանում են և այս անձնաւորութիւնները երկու քրմական իշխանութիւնների տեղ են համարում, առաջինը Բէլի, իսկ երկրորդը Միհրի պաշտօնի փոխանակ։ Բայց այս վերջին համարձակ կարծիքը առ այժմ իբրև հաստատ ընդունելու բաւական փաստեր չկան։ Ընդհակառակն, Շամիրամի զանազան երկրներում թողած մեծագործ յիշատակարանները ու բերանացի աւանդութիւնները վկայում են ոչ միայն նորա պատմական գոյութիւնը, այլև չափաւոր աշխարհակալութիւնները։

Նինոսը Շամիրամի հետ ծանօթանալուց առաջ՝ Բաբելոնը

Ասորեստանի հետ միացրած և իւր զէնքերը հիւսիսային կողմերը տարած է համարվում հին պատմագրներից: Մեր ամենահին պատմական յիշատակարանը այս երևելի իշխանին Արամի ժամանակ Հայաստանի սահմանների վրայ է բերում: Բայց Ասորեստանի դիւցազնը, կասկածելով հայ նահապետի զօրութիւնից, իրաւունք է տալիս նորան արձակ համարձակ վարել իւր իշխանութիւնը և մարգարտէ վարսակալ դնել գլխին, Նինոսից յետոյ երկրորդ համարուելով: Դիոդորոս Սիկիլիացին Արամի (որին Բարզանէս Թագաւոր է կոչում) և Նինոսի յարաբերութիւնները մար-աքասեան պատմութիւնից փոքր ինչ տարբեր է պատմում, համարելով նախ Արամին յաղթուած և յետոյ Նինոսի մարդասիրութեամբ իւր աթոռը հաստատուած [1]):

Ինչպէս և լիցէ, այս բարեկամական յարաբերութիւնները երկար չտևեցին երկու ազգերի մէջ: Թէպէտ Արա Գեղեցիկի հետ Նինոսը մի և նոյն դաշինքը նորոգեց, բայց շուտով Նինոսը մեռաւ և նորա իշխանութիւնը անցաւ Շամիրամի ձեռքը: Այս աշխարհակալ ու մեծագործ թագուհին Նինոսի տիրապետած երկրների վրայ աւելացրեց Մարաստանը, Պարսկաստանը և ուրիշ երկրներ. Մնացել էր Հայաստանը, և այս գեղեցիկ երկիրը գրաւելու առիթը ազգային հին աւանդութիւնը տալիս է Շամիրամի բուռն ցանկութեան Արային իրան կենակից և թագակից անելու: Բայց հայ նահապետը այն ժամանակների համար զարմանալի ողջախոհութեամբ մերժեց Ասորեստանի դշխոյի առաջարկութիւնը, որ Արայի անշունչ դիակը գտնելու մխիթարութիւնը ունեցաւ:

Արայի մահով Հայաստանը դրացի երկրների պէս միացաւ Ասորեստանի պետութեան հետ ու նորա ընդարձակ նահանգներից մինը դարձաւ: Ասորեստանցիք ուրիշ երկրների հետ Հայաստանն էլ հինգ հարիւր տարուց աւելի կառավարեցին բնիկ երկրացի կուսակալների ձեռքով, որոնք իշխեցին Հայաստանի վերայ՝ տարեցտարի նշանակած հարկը տալով Ասորեստանի միապետներին: Նոքա իրաւունք ունէին նոյնպէս հայազգունդ զօրք կազմել երկրի պահպանութեան համար, որոնցով շատ անգամ մեծամեծ քաջութիւններ գործեցին:

Եթէ աչքի առաջ ունենանք այն պատմական ճշմարտութիւնը թէ Ասորեստանի միապետները երբէք չյաջողեցան կատարելապէս

---

[1]) Դիոդ. Սիկիլ. Գր. Բ, գլ. Ա:

նուաճել ու մի մարմին կազմել այն ազգութիւններից, որոնց զէնքի զօրութեամբ հնազանդեցրել էին, այն ժամանակ դիւրաւ կը հասկանանք որ այս ազգի լուծը չպէտք է ծանրանար Հայոց վրայ: Ընդհակառակն, Հայերը սկսելով աւելի մօտիկ յարաբերութիւններ ունենալ Ասորեստանցոց հետ այն ժամանակ՝ երբ նոքա Ասիայի ամենից քաղաքակիրթ ազգն էին հանդիսանում, շատ բան պէտք է սովորէին նոցանից. գեղարուեստների ճաշակը, ճարտարապետութիւնը, արձանագործութիւնը, քանդակագործութիւնը առաջին անգամ Ասորեստանցիք մտցրին Հայաստան. ասածիս վկայ եմ բերում Վան քաղաքը, որի շինութեան համար Շամիրամը վեց հազար ճարտարապետ ու երևելի արուեստաւոր բերել տուաւ Ասորեստանից և ուրիշ հպատակ երկրներից: Տարակոյս չկայ որ Նինուէական ճարտարութիւնը, վաճառականութիւնը և զինուորական արուեստը առանց ազդեցութեան չմնացին Հայաստանի վրայ տիրապետող ազգի կողմից:

Չնայելով այս անկախ հպատակութեանը, Հայաստանը ուրիշ հարկատու նահանգների պէս՝ ժամանակ առ ժամանակ բարձրացրեց անկախութեան դրօշակը. և այս բղխում էր մէկ կողմից Հայոց բնական ձգտումից դէպի անկախութիւնը, որ միայն վերջերը, ասիական ազգերի շարունակ տիրապետութիւնից և հարստահարութիւնից հանգաւ նոցա մէջ, իսկ միւս կողմից Ասորեստանի թագաւորների բարոյական անկումից և նոցա կառավարութեան եղանակից: Նինոսի ու Շամիրամի յաջորդները, իրանց պալատական զեղխ ու աննշան կեանքի մէջ զգալով իրանց տկարութիւնը, ըստ Դիոդորոսի հետևեալ քաղաքականութեանը հաւատարիմ մնացին, որ Նինուաս հաստատել էր: Այս թոյլ իշխանը նուաճած ազգերին հնազանդութեան մէջ պահելու համար՝ իր հարկատու երկրներից բազմաթիւ զօրք էր հաւաքում, իւրաքանչիւր գունդը իր ազգակից իշխանի հրամանատարութեան ներքոյ, որոնց Նինուէի շրջակայքումն էր պահում: Յետոյ տարուան վերջը այդ զօրքերը արձակում էր և նոցա տեղը ուրիշներին էր բերում: Այսպէս այս մեծամարմին բանակը անդադար նորոգուելով ժամանակ չկար որ զօրավարների ու զօրքի մէջ մտերմութիւն մտնէր և ամեն տեսակ դաւաճանութեան առաջն առնվում էր: Բայց այս միջոցը, եթէ մէկ կողմից ապահովացնում էր Ասորեստանի միապետներին, միւս կողմից առիթ էր տալիս նոցա հպատակներին անձամբ ականատես լինել Նինուէի պալատում տիրած զեղխութեան: Ահա այս ազգերի առաջնորդները այլ և այլ ժա-

մանակներում աշխատեցան Ասորեստանի լուծը թօթափել: Վերջապէս ութերորդ դարու սկզբում Վարբակէս և Բելեսիս, Մարաց ու Բաբելացւոց իշխանները, միաբանելով ուրիշ հպատակ ազգերի իշխանների հետ, գնացին Նինուէի վրայ: Պաշարման երրորդ տարին քաղաքն առնուեցաւ, որի փլատակների տակ դժբաղդ Սարդանապալի հետ թաղուեցաւ Ասորեստանի առաջին միապետութիւնը (788 Քրիստոսից առաջ):

Ի՞նչ էին անում այդ միջոցին Հայերը: Արդեօք նոքա մասնակից էին այդ քաղաքական խնդիրներին թէ ոչ: Հայոց պատմութիւնը մի վկայութիւն ունի միայն հաստատապէս պատասխանելու այս հարցմանը: Մեր Հայկակ նահապետը, ասում է Խորենացին, տասներորդը Կարդոսից յետոյ, ապստամբում է Ասորեստանցոց Բելոքոս Թագաւորից ու մեռնում է իւր ազգի անկախութեան համար [1]: Բայց Ասորեստանի սեպաձև արձանագրութիւնները, որոնք վերջին ժամանակներումս եւրոպական ուսումնականների շնորհքով կարդացւեցան, ցոյց են տալիս թէ Հայերը շարունակ փորձեր են արել իրանց երկրի անկախութիւնը ձեռք բերելու: Այս արձանագրութիւններին նայելով, Թագղաթ-Փաղասար Գ և նորա թոռը Սաղմանասար Գ տասներորդ դարումը մի քանի անգամ արշաւեցին Հայաստան՝ ժողովրդի ապստամբութեան առաջն առնելու համար: Առաջինը երկու անգամ մտաւ Հայոց երկիրը, ժողովրդեան վրայ հարկ դրաւ, Ասորեստանի աստուածների պաշտօնը մտցրեց նոցա մէջ և բնակիչների մէկ մասը տէրութեան ներսերը փոխադրեց [2]: Իսկ Սաղմանասարը բաւականացաւ միայն ծանր հարկեր առնելով ժողովրդից՝ ոսկի, արծաթ (հանքերից), ձի, ոչխար, եզ [3]: Այս վկայութիւնները կասկածելու տեղիք չեն թողնում, որ Հայերը գործակից են եղել Մարաց ու Բաբելացոց ութերորդ դարու յեղափոխութեան մէջ: Բայց թէ ո՛ր Հայ իշխանին պարտական եղաւ Հայաստանը իւր անկախութեան համար, այդ դժբաղդաբար անյայտ է մեզ:

---

1) Խոր. գր. Ա. գլ. ԺԹ:

2) Այդ ժամանակներից մնացել են անշուշտ մեր մէջ հետևեալ ասորաբաբելական աստուածութիւնները. Աստղիկ (ըստ Ասոր. Իշտար, ըստ փիւն. Աստարտա), Նանէ (ըստ Ասոր. Նանայ և Բարշամ (ըստ Ասոր. Բար-Շէմ):

3) J. J. Guillemin, Histoire del' Orient, եր. 38 և հետևեալները:

Սակայն Նինուէն շուտով վերականգնեցաւ իւր անկումից մի կարճ ժամանակ փայլելու համար: Թէպէտ այս երկրորդ միապետութեան առաջին թագաւորները չիշխեցին վերին Ասիայի վրայ, բայց ութերորդ դարու վերջին տարիներում արդէն Սարգոն թագաւորը (721—702) աշխատում է նորից ձեռք բերել հին տէրութեան նահանգները, որոնք իրանց անկախութիւնը ստացել կամ փորձել էին ստանալու: Խորսապատի սեպաձև արձանագրութիւնները շատ հետաքրքրական տեղեկութիւններ են տալիս Սարգոնի Հայաստան յանձն առած արշաւանքի վրայ [1]):

Ահա Սարգոնի բառական խօսքերը:

«Քանի որ Իրանզու Վանի իշխանը ապրում էր, նա հնազանդ ու հաւատարիմ էր իմ տէրութեանը. բայց ճակատագիրը տարաւ նորան: Նորա հպատակները նստեցրին գահի վրայ Ազա որդուն: Ուրսա (ըստ ոմանց Ուրսախ) հայազգին խռովութիւն հանեց, և Միլլիս լերան, Զիկարդայի ու Վանի մեծամեծների հետ միաբանած՝ հպատակներին յորդորեց ապստամբելու: Նոքա իրանց տիրոջ մարմինը թողին լեռների կատարների վրայ: Ուլլուսուն վանեցին, նորա եղբայրը, որին գահի վրայ նստեցրել էին, հակեցաւ Ուրսայի կողմը և տուաւ նորան քսակներու ամուր բերդեր իրանց պահապան զօրքերով: Սրտիս բարկութեան մէջ հաշուեցի Ասուր աստծու բանակները և յարձակեցայ այս երկրի վրայ: Ուլլուսուն Վանի իշխանը իւր զօրքով դուրս եկաւ և ապաւինեցաւ մի ապահով տեղ՝ բարձր լեռների խռոչներում: Ես գրաւեցի Իզիրտի՝ նորա իշխանանիստ քաղաքը, և Իզիբիա, Արմիտ ահաւոր բերդաքաղաքները. մոխիր դարձրի այդ քաղաքները, հանեցի բոլորը ինչ որ պատկանում էր Ուրսա հային. իմ ձեռքով բռնեցի երկու հարիւր հոգի նորա ընտանիքից, գրաւեցի յիսունևհինգ պարսպապատ քաղաքներ և մոխիր դարձրի: Ուլլուսունի քսաներկու ամուր քաղաքները, որ Ուրսան առել էր, միացրի Ասորեստանի հետ: Յետոյ բռնեցի Մելլիս լերան Սագադատի իշխանին ու մորթազերծ արի»:

---

[1]) Խորսապատը փոքրիկ գիւղ է Մուսուլի հիւսիսային արևելեան կողմը մի քանի մղոն հեռու հին Նինուէի տեղագրութիւնից: Այստեղ Պ. Բոտտա (Botta) ֆրանսիացի հիւպատոսը մի քանի տարի առաջ գտել է մի հին պալատի աւերակներ Քրիստոսից 700 տարի առաջ շինուած Սարգոն թագաւորի ձեռքով, որի անունը և գործքերը միայն այս վերջին ժամանակներումս պատմութեան սեպհականութիւն են դարձել:

Ջաշխատելով այս բոլորովին նոր պատմական ու աշխարհագրական անունների հետքերը գտնել [1]), այս արձանագրութիւնը ուրիշ կողմերից հետաքրքրական է մեզ համար և, կարելի է ասել, նոր լոյս է տարածում մեր պատմութեան այն ընդարձակ ժամանակամիջոցի վրայ, որի մասին մեր ազգային քրշատակարանները խորին լռութիւն են պահում: Նախ մենք սովոր ենք այդ ժամանակը նահապետական անուանել և կարծել թէ Հայերը այդ միջոցում հովուական ու երկրագործական կեանք են վարել այն գետնափորների մէջ, որոնց նկարագրութիւնը անում է յոյն Քսենոֆոնը: Խորսապատի արձանագրութիւնը, ընդհակառակն, ցոյց է տալիս թէ քաղաքակրթութիւնը մի նշանաւոր կէտի էր հասել այդ միջոցում Հայոց մէջ: Սարգոնի յիշած ահաւոր բերդաքաղաքները, քանիերկու ամրացած և քսանևհինգ պարսպապատ քաղաքները ու բերդապահ զօրքերը իրաւունք են տալիս այս եզրակացութիւնը անելու: Դարձեալ Սարգոնի սեպհական խօսքերից հաստատվում է, որ Ասորեստանի երկրորդ իշխանութեան ժամանակ Հայաստանի մէկ մասը միայն, հարաւայինը, հպատակում էր Ասորեստանին, այնինչ հիւսիսային արևելեանը, գէթ Կուր ու Երասխ գետերի մէջ եղած ընդարձակ հովիտը, որ Հայոց անկախութեան համար միշտ զօրաւոր ապաստան է եղել, ազատ էր այդ հպատակութիւնից: Սարգոնը միայն Ուլլուսունի քանիերկու քաղաքները, որ առաջուց էլ իրան էին պատկանում,

---

[1]) Ցայտնի է որ հայկազուն իշխանների մեզ ծանօթ անուններից շատը նշանական են և, ինչպէս պարզ երևում է, մի որ և իցէ անձնական յատկութեան են վերաբերում: Այսպէս են հետևեալները. Անուշ-աւան, Պարէտ (վերակացու, իշխան), Արբ-ակ, Ամպ-ակ (խմող), Սուր, Հաւան-ակ (համաձայն), Վաշտ-ակ (վաշտ-զօրքի խումբ), Առն-ակ, Նոր-այր, Գոռ-ակ, Հրանտ (գուցէ Հրատ), Ընձ-ակ (ինձ), Զարմ-այր, Պերճ, Արբ-ուն (կտրիճ հասակ), Բազուկ, Յուս-ակ, Սկայ-որդի, Պար-այր (գուցէ Պար-այր-պարագլուխ), Հր-աչեայ: Արդեօք Խորսապատի արձանագրութեան մէջ յիշուած անունները (եթէ միայն ուղիղ կարդացուած են) նոյնպէս նշանական չե՞ն և թարգմանաբար գործ դրուած: Ապագան միայն, հիմնուելով նորանոր և աւելի ճիշտ հետազօտութիւնների վրայ, կարող է այս հարցման պատասխանը տալ: Առ այժմ յիշում ենք ընթերցողին որ նոյն Ասորեստանցիք մեր Արամին Բար-Զանէս անունն էին տալիս, որ բառամանց նոյնպէս նշանական է, թէև այդ անուան ճիշտ նշանակութիւնը յայտնի չէ:

միացրեց Ասորեստանի հետ: Վերջապէս Խորսաբադի արձանագրութիւնը ցոյց է տալիս որ Հայերը այդ միջոցին այլևայլ ցեղերի էին բաժանուած, որոնք միմեանցից անկախ իշխանների ձեռքով էին կառավարւում: Սոքա, ինչպէս երևում է, երկրի ներքին զօրութիւնները գործ էին դնում օտարական ազդեցութիւնից բոլորովին ազատուելու համար: Ագա, Ուրսա, Սագադատի և Զիկարտայի իշխանները բոլորովին անկախ են. սոցանից վերջին երեքը պատերազմում են Ագայի դէմ, որ Սարգոնի հպատակն էր: Նոյն իսկ Մորթմանի լուսաբանած Վանի արձանագրութիւնների մէջ երևում է որ Հայ իշխանները ոչ միայն օտար պետութիւնների, այլև ազգակից իշխանների հետ էին կռւում: Արամից յետոյ ոչ ոք չյաջողեցաւ այդ բաժանուած իշխանութիւններին քաղաքական միութիւն տալ մինչև Պարոյր: Բայց և այնպէս Հայաստանը ոչ միայն կարողացաւ իւր անկախութիւնը պահել, մանաւանդ հիւսիսային արևելեան լեռնոտ մասերում, այլև անբաւականների ապաստանարան դարձաւ: Սարգոնի յաջորդ Սենեքերիմի որդիքը՝ Ադրամելէք և Սանասար, իրանց հօր սպանելուց յետոյ, ապաւինում են Հայաստան և Պարոյրի հօրից՝ Սկայորդի իշխանից սիրով ընդունվում են:

Այդ միջոցին արդէն Ասորեստանի երկրորդ միապետութեանը սպառնում էին բոլոր ասիական ազգերը, որոնք աւելի կամ պակաս հպատակ էին համարվում այդ պետութեանը: Սոցա մէջ Մարք կամ Մեդացիք, թէև Վարբակեսից յետոյ դարձեալ առաջուայ ցեղերի բաժանուեցան, ինչպես և Հայերը Արամից յետոյ, բայց Դէովկէս յաջողեցաւ այդ ցեղերից մի քաղաքական մարմին կազմել, և նորա որդին Փրաւորտէս այնքան զօրացաւ որ Մարաց երկրովը չբաւականացաւ: Պարսկաստանը առաջին երկիրն եղաւ որ նա նուաճեց, և սկսաւ միւս հպատակ ազգերից անկախ Նինուէի զօրութեան դէմ մաքառիլ: Վերջապէս պատերազմասէր ու խորագէտ Կիաքսար Ա գաղտնի դաշինք է կապում Հայոց Պարոյր և Բաբելացոց Նաբուպաղասար իշխանների հետ, որ երեքը միասին գնան Ասորեստանի թագաւորութիւնը կործանելու: Դաշնակից իշխանները գնում են Նինուէի վրայ, որ այս անգամ բոլորովին կործանուեցաւ, իր փլատակների տակ թաղելով Ասորեստանի վերջին Սարագոս թագաւորին իւր կանանց ու գանձերի հետ (625 Քրիստոսից առաջ):

Այս մեծ յեղափոխութիւնը, որ Ասիան կերպարանափոխ արաւ, հին մատենագրներից շփոթվում է Նինուէի առման և Ասորեստանի

առաջին միապետութեան անկման հետ, որ պատահեցաւ 788-ին։ Մովսէս Խորենացին, որ, ինչպէս յայտնի է, Հայկականց պատմութիւնը գրելիս գլխաւոր աղբիւր և առաջնորդ ունեցած է Մար-Աբասի գիրքը, այս խնդրիս մէջ չէ հետևում ոչ ասորի պատմագրին և ոչ «մայր և դայեակ ամենայն իմաստից» հանդիսացող հելլենական մատենագրներին, այլ մեզ անծանօթ Ասորեստանցոց ու Պարսից դիւանական աղբիւրներին [1]. այնու ամենայնիւ նա միևնոյն ժամանակագրական սխալի մէջ է ընկնում, երկու կողմի տարբեր պատմածները իրարու հետ խառնելով, և այս բանս համարեա անուղղակի կերպով խոստովանում է [2]։ Սակայն Հայ պատմագիրը տալիս է մեզ միջոց այս նշանաւոր խնդիրը լուծելու երկու պատմական անցքերով, որ Պարոյրի անմիջական նախորդ ու յաջորդ իշխանների օրին են պատահել, հետևաբար և Պարոյրի ճիշտ ժամանակը որոշում են։ Առաջինն է Սենեքերիմ Թագաւորի որդոց փախուստը Հայաստան Պարոյրի հօր Սկայորդու օրով. երկրորդը Պարոյրի որդու Հրաչէի օգնութիւն գնալը Նաբուգոդոնոսորին Յուդայեան Թագաւորութիւնը կործանելու։ Եւ մենք գիտենք որ Սենեքերիմը սպանուեցաւ 680-ին իսկ Նաբուգոդոնոսորը Նաբուպաղասարի որդին է, որ իւր Հրէաստանի արշաւանքները կատարեց նախ հօր կենդանութեան ժամանակ և ապա մենակ (606—588)։

Այսպէս ուրեմն Պարոյրը Կիաքսարի և Նաբուպաղասարի օգնութեամբ դառնում է Հայաստանի առաջին պսակակիր Թագաւորը, և այնուհետև մինչև Տիգրան Երուանդեան, այսինքն կէս դարուց աւելի, Հայաստանը իւր դաշնակցութիւնը և բարեկամութիւնը անխախտ պահեց Մարաց ու Բաբելացոց հետ։

Պարոյրի Թագ դնելովը Հայաստանը ստացաւ իւր քաղաքական միութեան հետ և կատարեալ անկախութիւն, որ ժողովրդական կեանքի վրայ էլ անտարակոյս փոփոխութիւն պիտի բերէր։ Բայց այս փոփոխութիւնը այնքան անզգալի էր, որ Հայերը շարունակեցին առաջուան պարզ ու ամփոփ կեանքովը ապրել իրանց երկրում,

---

[1] Մ. Խոր. գր. Ա. գլ. ԻԱ։

[2] «Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի, մի ինչ սքանչանար՝ Զի որպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառսն ամբաստանեցաք զառաջին նախնեացն մերոց անիմաստասէր բարուց ախորժակս, այս հանդիպի և աստանօր»։ Նոյն գլուխ։

Թէև դրսում ընդլայնեցին իրանց առևտրական Հաղորդակցութիւնների շրջանը ուրիշ ազգերի Հետ: Նոյն իսկ Պարոյրի անմիջական յաջորդը Հրաչեայ, իւր զէնքերը միացնելով Նաբուգոդոնոսորի աՀեղ բանակի Հետ, լայն դռներ է բաց անում Հայոց վաճառականական գործունէութեան Համար. Ասորոց, Հրէից, Փիւնիկեցոց, Եգիպտացոց երկրները (որ տեղերից անցաւ Հայ—բաբելոնեան բանակը) առատ առատ Հունձքեր էին առաջարկում Հայոց: Հայերը վաղուց արդէն ծանօթ էին Նինուէի, Բաբելոնի, Եկբատանի շռայլութեան ու փափկասէր կեանքին, բայց իրանց բնածին բարեխառնութեամբ թոյլ չտուին որ Արմաւրի դռներից ներս մտնեն: Այս փակ եւ ըստ մասին անՀաղորդ կեանքը, որքան էլ վնասակար լինէր Հայոց քաղաքակրթութեան և մտաւոր զարգացման Համար Հնութեան դարերում, այնու ամենայնիւ այնպիսի ժամանակ՝ երբ մեղկութիւնը և ընդՀանուր բարոյական անկումը սպառնում էր ազգերի գոյութեանը, պաՀպանեց ու ապաՀովացրեց նոցա ապագան: ԱՀա այս պատճառով գուցէ Հայերը Հետզհետէ տեսան Ասորեստանցոց, Բաբելացոց ու Մարաց զօրանալն ու անկումը, և իրանք մնացին աշխարՀի երեսին:

Այս վերջիններին՝ այսինքն Մարաց տեղ Ասիայում շուտով սկսաւ զօրանալ մի ուրիշ արիական ցեղ, այն է Պարսիկները, որոնց Կիւրոս Հանեց իրանց վայրենութիւնից ու պատրաստեց Ասիայում նշանաւոր դեր խաղալու Հինգ դար ու կէս Քրիստոսից առաջ:

Այս ժամանակները Հայոց թագաւորութեան գաՀը բարձրացաւ Երուանդ Սակաւակեաց թագաւորի որդին Տիգրան Ա.(565—520), ամենից նշանաւորը Հայկազանց թագաւորների մէջ իւր խելքովը, քաջութեամբը և քաղաքակրթական նպատակներովը: Տիգրանի թագաւորութիւնը Հայաստանի պատմութեան մէջ նշանաւոր է նորանով, որ այս երևելի իշխանը միտք արեց նոր ու ժամանակի յարմար քաղաքական կարգեր մտցնել Հայոց մէջ: Երկրի կառավարութիւնը, մշակութիւնը, վաճառականութիւնն ու ճարտարութիւնը այս թագաւորի շնորՀով նոր կենդանութիւն ստացան: Զօրքն ու զինուորական արուեստը ազատ չմնացին նորա ուշադրութիւնից. Հեծելազօրը, որի թիւը մինչև այն ժամանակ աննշան էր, բազմացրեց ու կարգի բերեց. իսկ Հետևակ զօրքը կրթեց և ամենի ձեռքը սուր, տէգ ու նիզակ տուեց: Տիգրանի զինական յաջողութիւնների պտուղն եղաւ երկրի վաճառականութեան ընդարձակութիւնը. այնպէս որ այնուՀետև Հայերը ոչ միայն իրանց առօրեայ պիտոյքի Հարկաւոր

առարկաները բերում էին օտար երկրներից, այլ և շքեղութեան ու զարդարանքի առարկաները. ոսկին, արծաթը և թանգագին ակները, գոյնզգոյն և պատուական կերպասները ողողուեցան Հայաստանի երևելի «շահաստաններում» կամ առևտրական քաղաքներում:

Արտաքին քաղաքականութեան մէջ Տիգրանը Կիւրոսի աջակից ու գործակից գտնուեցաւ ամէն տեղ. Մարաց թագաւորութեան կործանումը, լիւդական և բաբելական պատերազմները հայկական բանակի դաշնակցութեամբ կատարուեցան: Երեմիա մարգարէն յայտնի հրաւիրում է Հայոց այս վերջին արշաւանքին մասնակից լինելու:

Մովսէս Խորենացին, չնայելով իւր խորին ծերութեանը, զարմանալի փափուկ սրտի և ոգևորուող բնաւորութեան տէր մարդ է: Հայոց թագաւորութեան հաստատութեամբը այն աստիճանի է յափշտակվում, որ «երանի կը լինէր ինձ, բացագանչում է նա, եթէ փրկիչը այն ժամանակները աշխարհ եկած և ինձ գտած լինէր, որ ես էլ նոցա (այսինքն Հայկազուն թագաւորների ժամանակ) ապրէի, նոցա տէրութեամբը ուրախանայի և արդեան վտանգներից ազատուէի»: Բայց մի և նոյն ժամանակ Պարոյրի յաջորդների լոկ ցանկն է առաջարկում մեզ: Նոյնպէս Տիգրանի՝ այս ժողովրդական հերոսի անձնաւորութեամբ այնքան յափշտակվում է, որ հարուստ տեղեկութիւններով, երբեմն մինչև աւելորդ մանրամասնութիւններով զարդարում է նորա պատմութիւնը. իսկ նորա յաջորդների վրայ լռութեամբ է անցնում: Այս բղխում է գլխաւորապէս հների ունեցած կարծիքից պատմութեան վրայ, որոնք միշտ պատերազմական սխրագործութիւններին առաջին տեղն էին տալիս, իսկ ներքին կեանքի պայմանները շատ անգամ անուշադիր էին մնում: Բացի սորանից, Հայ Երոդոտոսը, թէև իւրերի վրայ լուրջ հայեացք և առողջ դատողութիւն ունի, բայց իւր պատմութիւնը գրելիս՝ «ծերացած, հիւանդոտ և թարգմանութիւններով զբաղուած լինելով», անդադար շտապում էր, խօսքը կարճ կտրելով, որ մի՛ գուցէ թէ սկսած գործը անկատար մնայ:

Մեր տոհմային պատմութեան պակասը Տիգրանի յաջորդների վերաբերութեամբ լրացնում է արտաքին պատմագրութիւնը, որից երևում է թէ այս շրջանին պատկանած թագաւորները մինչև Վահէ, այսինքն գրեթէ երկու հարիւր տարուայ ընթացքում (520—330) թագաւորեցին միայն Հայաստանի հիւսիսային արևելեան մասի վրայ, Կուր և Երասխ գետերի հովտի մէջ, իսկ արևմտեան և

հարաւային մասը Պարսից տէրութեան 20 նահանգներից մինն էր կազմում:

Յունաց պատմիչների խօսքերը ստուգվում են Բիսութուն ժայռի վերջին ժամանակներումս կարդացուած սեպաձև արձանագրութիւններով, որ Վշտասպեան Դարեհի հրամանով փորագրուած և նորա գործերն են պարունակում (521—486):

Քիրման-Շահից գրեթէ մէկ մղոն հեռու հիւսիսում, Բաղդադից Համադան տանող ձախ ճանապարհի վրայ գտնվում է Բիսութիւն ժայռը, որ ունի 456 մէթր բարձրութիւն: Նորա կողերի վրայ փորագրուած են հսկայաձև պատկերներ, սեպաձև արձանագրութիւններով շրջապատած, որոնք այնքան բազմաթիւ են, որ երկու ամիս ժամանակ հարկաւոր կը լինէր, ասում է Կէր Պորտըր անգլիացին, միայն օրինակելու համար այդ արձանագրութիւնները և պատկերները: Այս քանդակներից մինը պատկերացնում է մի թագաւոր խաղաղ դրութեան մէջ, որի առաջ շարուած են թշնամիները շղթայակապ: Նա ոտնակոխ է անում յաղթուած թշնամիներից մէկին: Այս թագաւորը Վշտասպեան Դարեհն է, իսկ գերիները այն իշխաններն են, որոնք օգուտ քաղելով Շմերտ մոգի պատճառով դուրս եկած խռովութիւններից, ապստամբել էին գրեթէ բովանդակ նահանգներում: Արձանագրութիւնը պատմում է Դարեհի թագաւոր նստելը և թվում է նորա տէրութեան նահանգները, որոնցից մեծ մասի հետ ստիպուեցաւ պատերազմել Դարեհ՝ իւր իշխանութիւնը վերականգնելու համար:

Ահա այս մի և նոյն արձանագրութեան մի մասը Հայաստանին է վերաբերում, և ցոյց է տալիս թէ Հայերը ինչ յամառութեամբ են կռուել Պարսից դէմ, Հայաստանի քաղաքական միութիւնը վերահաստատելու համար, որի մէկ մասի վրայ իշխում էր Դարեհը:

Բայց թողնենք որ ինքը Արքայից արքան խօսի.

«Յետոյ ուղարկեցի Հայաստան Դարդասէս հային, որ իմ սպասաւորն է, և ասացի նորան. «գնա և խորտակէ այն ապստամբ բանակը, որ չէ հնազանդում ինձ»: Դարդասէսը գնաց Հայաստանը նուաճելու: Ապստամբները պատերազմեցան նորա դէմ, բայց Որմիզդը օգնութիւն հասաւ ինձ. իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից:

«Ապստամբները երկրորդ անգամ յարձակեցան Դարդասէսի վրայ:

Որմիզդը օգնեց ինձ և իմ բանակը չարաչար յաղթեց ապստամբների բանակին:

«Երրորդ անգամ ապստամբները ընկան Դարդասխի վերայ: Որմիզդը շնորհեց ինձ օգնութիւն. իմ բանակը դարձեալ շատ մարդ սպանեց թշնամիների բանակից: Յետոյ Դարդէսը սպասեց Հայաստան մինչև իմ Մարաստան գալը»:

Այս երեք պատերազմներով Պարսիկները, հնայելով Դարեհի չափազանց խօսքերին, որ շատ բնական են այսպիսի պաշտօնական պատմութեան մէջ, Պարսիկները, ասում ենք, չկարողացան զսպել Հայոց արիութիւնը: Ընդհակառակն սոքա, ինչպէս երևում է, քշեցին Պարսից մինչև Ասորեստան, և Դարեհ ստիպուեցաւ նոր զօրավար ու նոր բանակ ուղարկել Հայոց վրայ:

«Ոմիսէսը իմ սպասաւորն է: Ես ուղարկեցի նորան Հայաստան և ասացի. «գնա, ոչնչացրու այն ապստամբ բանակը, որ չէ հնազանդում ինձ»: Ոմիսէսը գնաց Հայոց երկրին տիրապետելու: Ապստամբները Ոմիսէսի առաջն եկան պատերազմելու համար: Կայ Ասորեստանում մի երկիր . . . . . անունով. այնտեղ պատերազմեցան: Որմիզդը օգնութիւն հասաւ ինձ . իմ բանակը շատ մարդ սպանեց ապստամբների բանակից:

«Երկրորդ անգամ թշնամիքը ճանապարհ ընկան Ոմիսէսի դէմ պատերազմելու համար: Հայաստանում կայ մի երկիր Անթիգարա (?) անունով. այն տեղ կռուեցան: Որմիզդը շնորհեց ինձ իւր օգնութիւնը. իմ բանակը շատ մարդ սպանեց թշնամիներից: Յետոյ Ոմիսէսը սպասեց Հայաստան մինչև իմ Մարաց երկիր հասնիլը»[1]):

Դժբաղդաբար Դարեհը լռում է այս պատերազմների հետևանքի վրայ, մինչդեռ միւս ապստամբող ազգերի նուաճուիլը յայտնի յիշվում է արձանագրութեան մէջ, որոնց առաջնորդներին Դարեհը սաստիկ տանջանքներով սպանեց:

---

[1]) Oppert, Excursion en Mésopotamie (Ճանապարհորդութիւն Միջագետքում), եր. 198 և հետևեալները:—Պ. Օպպէրը այսպէս է որոշում այս արձանագրութիւնների մէջ պատմուած մի քանի անցքերի ժամանակը. դեկտ. 520, Դարեհը ստիպում է Բաբելացոց փակուիլ իրանց քաղաքի մէջ. յունվ. 519, Բաբելոնի պաշարման սկիզբը. օգոստ. 518, պաշարման վերջը, որ տևել է 20 ամիս: Այս պաշարման ժամանակ Մարք և Հայք ապստամբում են. դեկտ. 519, առաջին պատերազմ Մարաց դէմ. նոյ. 518, Մարք յաղթվում են Դարեհից. մայիս, օգոստոս և դեկտեմբեր 519, և մայիս 518, Հայք պատերազմում են Դարեհի զօրքի դէմ:

Ինչպէս և յետ, Դարեհի յաջորդները մինչև համանուն Դարեհ կոտոմանոսը շարունակեցին իշխել Հայաստանի հարաւային արևմտեան մասի վրայ, որ կառավարում էին պարսիկ սատրապների ձեռքով: Դարեհ Բ-ի և Արտաշէս Բ-ի ժամանակ (423—358) արևմտեան Հայաստանը կառավարում էր Պարսից երևելի իշխաններից մինը՝ Տերիբազ սատրապը: Նորա պալատը, որ գտնվում էր Եփրատի ափերի վերայ, իւր ճոխութեամբը չէր զանազանվում թագաւորական արքունիքից: Այս սատրապները իրանց զօրքը հաւաքում էին Հայաստանի լեռնոտ մասերից՝ Խաղտեաց, Տայոց, Կորդուաց աշխարհներից և Բասեան գաւառից: Սոքա թէպէտ և Պարսիկներից անկախ էին, ասում է Քսենոֆոնը, և իրանց կանանց ու որդոց հետ սարերը ապաւինելով՝ մօտ չէին թողնում Պարսից, մեծամեծ քարեր գլորելով նոցա վրայ, բայց իբրև վարձկան զօրք ծառայում էին արքայից արքային, որովհետև ունէին իրանց առանձին երկաթի զէնքերը, նետ, սաղաւարտ և վահան [1]:

Այս զօրքը սատրապի հրամանատարութեան ներքոյ միշտ ոտի վերայ էր պահվում, ինչպէս Պարսկաստանի ուրիշ նահանգներում, որպէս զի պատրաստ լինին հարկաւոր դէպքում ժողովրդի ապստամբութեան առաջն առնելու: Սատրապների իշխանութեան տակ գտնվում էին երկրորդական պաշտօնեաներ, որոնց պարտքն էր հարկերը հաւաքել և թագաւորին հասցնել: Բացի սորանից սատրապների պարտաւորութիւնն էր երկրագործութիւնը և երկրի ուրիշ շահերը պահպանել: Պարսիկները մեծ նշանակութիւն էին տալիս երկրի մշակութեանը. զրադաշտական վարդապետութիւնը երկրի մշակութիւնը իւր հետևողների սրբազան պարտաւորութիւններից մինն էր համարում: «Սուրբ է այն մարդը, ասում է Զէնդ-Աւեստան, որ իւր համար բնակութիւն է շինել երկրիս վրայ, որի մէջ պահպանում է կրակը, անասուններ, լաւ հօտեր և իւր կինն ու որդիքը: Ով որ բուսուցանում է երկրից ցորեն, ով որ մշակում է դաշտերի պտուղները, նա մշակում է անարատութիւնը. սորանով նա այնքան կատարում է Որմզդի օրէնքը, որքան եթէ հարիւր զոհ մատուցանէր»: Քսենոֆոնը պատմում է թէ Պարսից թագաւորը իւրաքանչիւր տարի սովորութիւն ունէր այցելելու իւր պետութեան մի մասը, և առանձին մարդիկ էր ուղարկում այն տեղերը որ ինքը անձամբ չէր կա-

[1] Քսենոֆոն, Արշաւանք Կիւրոսի, Գր. Դ. Գլ. Ա—Զ.

րող տեսնել: Նա ընծաներ էր պարգևում այն պաշտօնեաներին, որոնց խնամքին յանձնուած երկիրը լաւ մշակուած էր և լի էր պտուղներով ու ծառերով, և ընդարձակում էր նոցա իշխանութիւնը: Ընդհակառակն, նոքա որոնց նահանգը վատ մշակուած կամ սակաւամարդ էր, անհոգութիւնից լինի կամ հարստահարութիւնից, պատժվում և պաշտօնից զրկվում էին:

Սորանից երևում է որ պարսկական տիրապետութիւնը բաւական տանելի պիտի լինէր հպատակ ազգերի համար. եթէ այս վերջինները զուրկ էին քաղաքական իրաւունքներից, գոնեա մեծ հանգստութիւն ունէին և մի տեսակ նիւթական ապահովութիւն էին վայելում, թէև երբեմն սատրապները ի չարն էին գործ դնում իրանց իշխանութիւնը՝ նշանակած հարկից աւելի առնելով ժողովրդից: Այս տեսակ հարստահարութիւնների առաջն առնելու համար՝ Վշտասպեան Դարեհը տէրութիւնը բաժանեց քսան նահանգ և որոշեց միանգամայն թէ իւրաքանչիւր նահանգ որքան հարկ պիտի տայ ամենայն տարի փողով կամ բերքերով: Այս բաժանման համեմատ, Հայաստանի մի մասը Պակտիայի և ուրիշ շրջակայ երկրների հետ մինչև Պոնտոսը կազմում էր 13-րդ նահանգը և հատուցանում էր իւրաքանչիւր տարի 400 տաղանդ և 20,000 ձի:

Մինչև հիմայ ասածներիցս ընթերցողը պարզ տեսաւ որ հայ ազգը իւր գոյութեան առաջին և ամենաընդարձակ շրջանում, թէև միշտ պատած է եղել իրանից աւելի զօրաւոր ու կարգաւորեալ պետութիւններով, այնու ամենայնիւ միշտ գիտացել է իր արժանաւորութիւնը պահպանել, սուրը ձեռին անընդհատ կռուելով իւր անկախութեան և ազգային միութեան համար: Սորանով մեկնվում են ի հարկէ Թագղաթ-Փաղասարների, Սալմանասարների, Սարգոնների, Դարեհների անընդհատ արշաւանքները Հայաստան: Մի և նոյն ժամանակ ընթերցողը նկատեց անշուշտ որ այս վերջին դէպքերում Հայերը երբեմն նեղ տեղն ընկնելով՝ ապաւինում էին երկրի սարերը, գլխաւորապէս Կուր և Երասխ գետերի մէջ պարփակուած լեռնոտ հովիտը, ուր Հայոց անկախութեան ոգին միշտ պահպանուեցաւ հին աշխարհակալների փառասիրութիւնից, և որտեղից Հայերը ներշնչում էին այդ մի և նոյն հոգին դաշտային տեղերում բնակող եղբայրակիցներին: Այդ մասին արձանագրութիւնները և օտարական պատմագրութեան վկայութիւնները ձեռք ձեռքի տուած գնում են: Սարգոնի սեպհական վկայութիւնից երևում է որ «Ուլլուսուն,

վանի իշխանը, իւր զօրքով ապաւինելով մի ապահով տեղ՝ բարձր լեռների խոռոչներում», Սարգոնը ոչինչ վնաս չկարողացաւ հասցնել նորան: Նոյն իսկ Ասորեստանի իշխանները ծանր դէպքերում իրանց փրկութիւնը որոնում էին Հայաստանի սարերում: Քսենոֆոնը, որ վերևը բերած հատուածի մէջ նկարագրում է թէ Հայաստանի լեռնական ժողովուրդները ինչ միջոցներով պահպանում էին իրանց անկախութիւնը, մի պատերազմի պատմութիւն է անում, որ իբր թէ տեղի ունեցաւ Տիգրանի հօր Երուանդ Թագաւորի և Մարաց Աշտահակ ու Կիաքսար Թագաւորների մէջ: Թէ և այս պատմութեան վաւերականութիւնը հերքվում է թէ ընդհանուր պատմութիւնից և թէ ազգային աւանդութիւնից, բայց մի դէպք միայն հաստատում է հայ ժողովրդի մշտական սովորութիւնը, որ նեղ պարագաներում յաջողութեամբ գործ էին դնում, այն է Երուանդի բարձր լեռների վրայ ապաւինելը իւր ընտանիքով և գանձերով:

Այսպէս ուրեմն լեռները, երկրի այս բնական բերդերը, շնորհում էին Հայոց իրանց ցանկալի անկախութիւնը, երբ զէնքի զօրութեամբ չէին կարող պահպանել նորան, և այս ոչ միայն արևելեան աշխարհակալների օրովը, այլև մակեդոնացի մեծ աշխարհակալի ժամանակ և նորանից յետոյ մինչև Պարթևների Հայաստան գալը: Արդարև Արբէլայի ճակատամարտից յետոյ, թէև Աղէքսանդր Պարսկաստանի ընդարձակ տէրութեան նահանգներին տէր է դառնում, բայց Հայաստանը մի մասամբ նուաճուեցաւ մակեդոնացի աշխարհակալից: Այն կարծիքը՝ թէ հարաւային արևմտեան Հայաստանը Աղէքսանդրի ձեռը ընկնելուց յետոյ Վահէի շառաւիղները հիւսիսային արևելեան լեռնոտ մասերում պահպանում էին իրանց անկախութիւնը մինչև Պարթևների պատմական ասպարէզի մէջ երևալը [1]), բոլորովին հաւանականութիւն է ստանում, եթէ դիմենք արտաքին պատմիչներին, որոնք այս փոփոխական ու մրրկալից ժամանակների վրայ խօսելիս, երբ Խորենացու լակոնական վկայութեանը նայելով՝ «այր զարամբ ելանէին ոխրել աշխարհիս», միայն Հայաստանի հարաւային ու արևմտեան մասերի վրայ ակնարկութիւն են անում, իսկ հիւսիսային կողմերի վրայ այն ժամանակ են յիշատակութիւն անում, երբ Արտաշէս հայ իշխանը Սելևկացի-

[1]) Կ. Վ. Շահնազարեան, Ծրագիր պատմութեան Հայաստան աշխարհի, եր. 15.

ներից ապահով մնալու համար՝ իւր աթոռը հաստատում է վերին Հայաստանում: Բացի սորանից, յիշեալ պատմիչները որոշ ասում են թէ Աղէքսանդրի մահից յետոյ, երբ նորա զօրավարները Ասիայի ամենագեղեցիկ երկրները իրանց մէջ բաժանեցին, հիւսիսային նահանգները, որոնց հաշվումն է և մեր հայրենիքի մէկ մասը, բնիկ իշխանների ձեռով կառավարուեցաւ: Դժբաղդաբար պատմութիւնը չէ պահպանել այս ազգային իշխանների ոչ գործերը և ոչ նոյն իսկ անունները, որոնք շատ հաւանական է՝ Վահէի ցեղը մօտ երկու հարիւր տարի շարունակեցին Կուր և Երասխ գետերով պատսպարուած լեռնոտ հովտում, ուր, ինչպէս տեսանք, Հայոց անկախութեան հոգին շարունակ պահպանուեցաւ Ասիայի աշխարհակալներից:

Նոյն իսկ հարաւային արեւմտեան Հայաստանը, թէև մակեդոնացի դիւցազնի կանխահաս մահից յետոյ երկու առանձին կուսակալութեան բաժանուեցաւ, նախ Աղէքսանդրի ժառանգների խնամակալի՝ այն է Պերտիկկասի և յետոյ Անդիոքոս Գ. սելևկեան թագաւորի ձեռամբ, և այն Հայոց անկախութեան ոգին զսպելու դիտաւորութեամբ,—այնու ամենայնիւ Արդուարդ և Արտաւազ հայ իշխանները հետզհետէ փորձեր են արել յունական լուծը թօթափելու:

Տեսանք որ Հայաստան աշխարհը Նինոսներից ու Շամիրամներից սկսած՝ երբէք կատարելապէս նուաճված չէ եղել Ասորեստանցիներից, Պարսիկներից և Յոյներից, որոնք հետզհետէ ներգործել են ասիական ազգերի պատմական բաղդի վրայ: Տեսանք դարձեալ որ այս մեծ շրջանում, այսինքն համարեա տասներկու դար շարունակ, Հայերը անընդհատ ստիպուած են եղել մաքառել երկրի քաղաքական միութեան, հետևաբար և ազգայնութեան գոյութեան համար, որին յիշեալ ազգերը սպառնում էին: Հասկանալի է որ գոյութեան այս դարևոր կռուի մէջ Հայերը հարկադրուած լինելով շարունակ իրանց ուշք ու միտքը և բոլոր բարոյական ու նիւթական զօրութիւնները կենտրոնացնել ինքնապահպանութեան՝ ազգերի այս ամենաթանկ սեպհականութեան մէջ, ժամանակ չէին ունեցել, ի հարկէ, մտածելու մտաւոր և հոգևոր զարգացման վրայ, այսինքն առհասարակ կրթութեան և արուեստների բարգաւաճման վրայ [1]:

---

[1]) Մինչև հիմայ ժողոված հայկական արձանագրութիւնները թուով յիսունի են հասնում, բայց նոքա պատկերներով կամ քանդակներով զար-

Բայց եթէ պատմութիւնը, ազգերի այս անաչառ դատաւորը, ցոյց է տալիս որ Հայաստան աշխարհը, իւր գոյութեան առաջին և ամենաընդարձակ շրջանում, ամենից զօրաւոր, ծաղկեալ և յառաջադէմ երկիրը չէր, ինչպէս էին ասորա-բաբելական և մարա-պարսկական տէրութիւնները, այնու ամենայնիւ նա իւր նշանակութիւնն ու տեղը ունէր ասիական ազգերի խմբի մէջ. Հայկազուն իշխանների ու թագաւորների դաշնակցութեանն ու միջնորդութեանը դիմեցին միշտ հին աշխարհի մեծամեծ աշխարհակալները այն նշանաւոր խնդիրների մէջ, որոնք ազգերի բաղդը վճռեցին: Թէպէտ Արա գեղեցիկին յաջորդող իշխանների, ինչպէս նաև Պարոյրից ու Տիգրանից յետոյ իշխող թագաւորների վրայ պատմութիւնը զանց է անում խօսելու. բայց առաջինների մէջ Զարմայրի նման և վերջինների մէջ Պարոյրի ու Տիգրանի նման Ասիայի նշանաւոր խնդիրների մէջ խառն գտնուող իշխաններ պէտք է լինէին: Արդէն գիտենք որ Հայերը միանում են Քսերքսէսի ահեղ բանակի հետ պարսկական արշաւանքների մէջ Յունաց դէմ: Մ. Խորենացին մի տեղ Հայկազանց վերայ ընդհանրապէս խօսելով՝ ասում է. «Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ քաջաց ազգք քաջք. իսկ միջոցքն՝ որպէս ումեք թուիցի կոչել» [1]: Պատմագրի այս կարճիկ բայց նուրբ նկատողութիւնը օգնում է մեզ Հայկազուն իշխանների նշանակութիւնը հասկանալու. նոքա այն ժամանակ պատմական ասպարէզը հանդէս են գալիս, երբ հարկը ստիպում կամ հանգամանքները թոյլ էին տալիս, այսինքն երբ իրանց ժողովրդին մի վտանգ էր սպառնում, կամ աւելի ճիշտ՝ երբ դրացի ազգերը տկարանում են: Իսկ միջոցներումը ապրողները, իբրև դաշնակից, երբեմն և հարկատու ևս ժամանակից զօրաւոր պետութիւններին, նոցա պատերազմական ձեռնարկութիւններին մասնակից լինելով պատմութիւններն էլ նոցա պատմութեան հետ խառնվում

դարուած չեն, որոնց մէջ ներկայացնում են արձանագրութիւնների մէջ պատմուած անցքերը, և որոնք կարող էին մի ճաշակ տալ մեզ թէ գեղարուեստները ինչ աստիճանի կատարելութեան հասած էին հին Հայոց մէջ. Պ. Մորթմանը ենթադրում է թէ այս քանդակները 2500 տարուան ընթացքում կարող էին քանդուած լինել կրօնամոլ Պարսիկների, Արաբների, Մոնղոլների, Թուրքերի և նոցա նմանահաւատ հողեւորականների ձեռքով.

[1]) Խոր. Գր. Ա. գլ. ԼԱ.

էր: Այսպէս են, օրինակի համար, Հայկազանց առաջին շրջանից Զարմայր, երկրորդից — Հրաչեայ: Ահա այս պատճառով գուցէ ոչ ընդհանուր և ոչ ազգային պատմութիւնը նոցա գործերը գրի անցուցած ու մեզ աւանդած չէ. որովհետև այս վերջինը իւր համար աղբիւր ընտրած է քաղդէական և պարսկական արքայական դիւանները, այսինքն առհասարակ այն ազգերի՝ որոնց գործակից եղած են Հայերը իրանց ձեռնարկութիւնների մէջ, և որոնք հարկաւ փոյթ չպիտի ունենային այս վերջինների սխրագործութիւնները աչների հանելու:

Սորանով մեկնվում է և այն խնդիրը թէ Հայկազանց հարստութիւնը ինչ տեղ էր բռնում ասիական ազգերի պատմութեան մէջ: Հայաստանը ամենահին ժամանակներից սկսած մի քաղաքական մարմին էր կազմում այն ընդարձակ տէրութեանը, որի թագաւորները «արքայից արքայ» անունով հանդիսացան հետզհետէ Նինուէի, Բաբելոնի, Մարաստանի և Պարսկաստանի ինքնակալները: Այս կառավարութեան եղանակը, որ շարունակուեցաւ Արշակունեաց և Սասանեանց ժամանակը մինչև Արաբացոց տիրապետութեան ժամանակները, հիմնուած էր մի տեսակ անկախ հպատակութեան վերայ, որ ընկերական սանդուղքի ստորին աստիճանից սկսում և հասնում էր մինչև արքայից արքան: Արքայից արքան գահերիցութեան իրաւունք ունէր միւս երկրներում իշխող թագաւորների վերայ, որոնք իրանց իշխանութեան տակ ունէին առանձին նահանգների վերայ իշխող սատրապներ կամ ինչպէս մեզանում կոչվում էին՝ նախարարներ: Թէպէտ Արտաշէս Ա և Տիգրան Բ Արշակունի թագաւորների ժամանակ, կէս դարու չափ, Հայաստանը վայելեց նախագահութեան պատիւը, և Պակրիտուր անունով թագաւորը Վանի արձանագրութիւնների մէջ իրան «արքայից արքայ» է անուանում, իսկ նորա հինգերորդ յաջորդը Պակրիտուր Բ Ասորեստանի նահանգները նուաճում և իւր տէրութեան հպատակեցնում է [1]), բայց այդ կարճժամանակեայ բացառական երևոյթներ են: Հայերը ընկած լինելով արիական ցեղերի մէջ՝ այնպէս սեղմուեցան նոցանից, որ

---

[1]) Տես այս մասին Մորթմանի «Աւգսբուրգեան լրագրի» 1871 թուի 355 №ում տպած յօդուածը, որ հայերէն թարգմանուած ու տպուած է Կ. Պօլիս, 1872 թուին, հետևեալ վերնագրով. «Հայ բևեռաձև արձանագրութիւնք, լուսաբանեալ ի Մորթմանայ»: Յօդուածիս սկզբումը ծանօթութեան մէջ բերուած հատուածը այս տետրից հանած է:

երբէք չյաջողեցան տիրապէս իշխան դառնալ յիշեալ ցեղերի վըրայ ու առաջնակարգ պետութեան դեր խաղալ: Այնու ամենայնիւ այն քաղաքական փոթորիկների ժամանակ որ Նինոսի, Կիաքսարի, Կիւրոսի և Սելևկեանց օրերում դղրդեցին Ասիան, Հայերը՝ թէև երբեմն իբրև դաշնակից ու գործակից յարում են ժամանակակից զօրաւոր թագաւորներին, երբեմն հարկատու ու հպատակ են լինում նոցա, բայց միշտ կարողանում են իրանց ազգային արժանաւորութիւնը պահպանել:

Մակեդոնական-սելևկեան իշխանութեան ժամանակ, ճշմարիտ է, ազգի քաղաքական միութիւնը ջղակտուր եղաւ, բայց հայկական ժողովրդի ազգայնութիւնը կազմող տարրերը՝ լեզուն, կրօնը, վարքն ու բարքը և սովորութիւնները այնպէս խոր արմատ էին դրել հայկի սերունդների մէջ, որ յունական լեզուն ու քաղաքականութիւնը շատ թոյլ ներգործութիւն ունեցան մեր հայրենիքում: Այս է պատճառը որ այդ հարիւր ութսուն տարուայ ընթացքում՝ Հայերը միշտ թշնամական աչքով են նայել այս քաղաքակիրթ, բայց օտարական պետութեան վրայ և միշտ օգուտ էին քաղում կենտրոնական իշխանութեան կրիտիկական դրութիւնից անկախութիւնը ձեռք բերելու համար: Այնպէս չէր ուրիշ դրացի երկրներում: Բաւական է մի հայեացք դարձնել այն երկրների քարտէսի վրայ, որոնց միջով անցնում են Տիգրիս ու Եփրատ գետերը, որ հասկանանք թէ ինչ ազդեցութիւն ունեցաւ այն տեղերում յունական տիրապետութիւնը: Գաւառների, քաղաքների, գետերի, լեռների անունները հելլենական են: Բակտրիացոց երկրումը կազմուեցաւ առանձին հելլենա-բակտրիական թագաւորութիւն, որի թագաւորները երկար ժամանակ պահպանեցին ու ծաղկեցրին իրանց մայր հայրենիքի լեզուն Արեաց ցեղի այս սրբազան նահանգի մէջ: Իսկ Հայոց երկրում, ինչպէս և Պարսկաստանում, յունական լեզուն, վարքն ու բարքը և սովորութիւնները երևում են միայն այն ժամանակ, երբ այս ազգերը ընկնում են Պարթևաց իշխանութեան տակ:

Ասացինք որ Հայերը ընկած, սեղմուած էին արիական ցեղերի մէջ: Արդարև Հայաստանի արևելեան կողմը սկզբնական ժամանակներից կային Արեաց կամ Զենդաց մեծ գերդաստանի ցեղերը՝ Պարսիկք, Մարք կամ Մեդացիք, Բակտրիացիք և Սոկտիացիք, իսկ հարաւային կողմից Բաբելա-Ասորեստանցոց և Ասորոց ազգակից ցեղերը: Այս վերջինների հետ—չնայելով երկարատև յարաբերու-

թիւններին և Հայաստանի վրայ ունեցած ազդեցութեանը — սկզբից մի տեսակ հակառակութիւն ունէին Հայերը, որովհետև օտար էին նոցա և ծագմամբ և լեզուով: Այս մասին միաբան են միմեանց հետ արձանագրութիւնները և պատմական յիշատակարանները: Սորա հակառակ ամեն բան կապում, միացնում էր Հայոց Արևաց հետ, այսինքն Հայաստանի աշխարհագրական դիրքը, լեզուի ազգակցութիւնը, կրօնական հասկացողութիւնները և վերջապէս պատմական բաղդը:

Ով որ ուսումնասիրել է հին Հայաստանի աշխարհագրական դրութիւնը, նկատել է անշուշտ թէ այն տարածութիւնը, ուր իսկապէս ծլեցաւ ու զարգացաւ Հայոց ազգութիւնը և ուր գտնվում են նորա բոլոր նախնական յիշատակարանները, այսինքն Երասխ և Կուր գետերի կողմերը, բոլորովին մտնում, խառնվում էին Արևաց ցեղերի մէջ: Պարսկաստանը, որ արիական ցեղերի մէջ գլխաւոր դերը խաղաց, իւր Երասխ և Կուր գետերովը համարեա մի ուրիշ Հայաստան է ձևակերպում: Իսկ Մարաց ազգը, բացի մեզ տուած բազմաթիւ գաղթականներից, իւր երկրի սահմաններովը բոլորովին շփվում էր Հայաստանի հետ:

Լեզուի ազգակցութիւնը մի ուրիշ զօրաւոր փաստ է Հայոց ու Արևաց ցեղերի մէջ եղած մօտիկ յարբերութիւնները ցոյց տալու: Եւրոպական գիտնականները երկար ժամանակ վիճելուց ու միմեանց հակառակ կարծիքներ յայտնելուց յետոյ, որոնք բղխում էին այն հանգամանքից, որ հայկական լեզուն հիմնաւորապէս չէին ուսումնասիրել, վերջապէս միաբանեցան մեր լեզուն Արևաց հարուստ ճիւղի մէջ դասաւորելու, այնպէս որ Զենդաց լեզուի միջնորդութեամբ հայերէնը շատ մօտիկ է Հնդկաց սանսկրիտ կամ սրբազան լեզուին: Հայերէն լեզուի չորս հազար արմատական բառերի մեծ մասը Զենդաց լեզուի հետ նմանութիւն ունին. ընտանեկան յարաբերութիւններ և նիւթական առարկաներ բացատրող բառերը, դերանունները, թուական անունները, էական բայերը այս լեզուների մէջ միևնոյն են կամ զգալի նմանութիւններ ունին:

Ոչ պակաս նշանաւոր է արիական ցեղերի կրօնական ազդեցութիւնը Հայոց վրայ, ոչ առանձին աստուածութիւններով, ինչպէս է օրինակի համար ասորա-բաբելական աստուածների պաշտօնը, այլ ամբողջ վարդապետութեամբ. խօսքը զրադաշտական վարդապետութեան վրայ է, որ, ինչպէս յայտնի է, շատ կողմից մօտե-

նում է մովսիսական օրէնքին: Մեր հին լեզուի մէջ մի քանի կրօնական անուններ ենք գտնում, որոնք Պարսից ու Հայոց յատուկ են ու գրեթէ բոլոր զրադաշտական վարդապետութեան բովանդակութիւնը բացատրում են: Բարձրագոյն էակը կոչվում էր Հայոց մէջ Արամազդ (ըստ Զենդ-Աւեստայ Ահուրա-Մազդա), որից առաջ եկած են համարում «Աստուած» բառը, և որնոր Զրադաշտի վարդապետութեան համաձայն համարվում էր «երկնի և երկրի արարիչ»: Թէպէտ բարութեան սկզբի հակառակորդ չար էակը՝ Արհմն (ըստ Զենդ-Աւեստայ Ահրիման) չէ երևում Հայոց կրօնի մէջ, այնու ամենայնիւ նորան ծառայող դևերը շատ անգամ յիշատակվում են: Այնպէս և «Հրեշտակ» ու «դեւ» (պարսկ. ֆէրուէր կամ նոր ձևով ֆերիշթէ և դեւա, ըստ Զենդ-Աւեստայ բարի և չար ոգիներ) և «դժողք» (ըստ Զենդ-Աւեստայ Դուզախ—դևերի բնակարան) իրանց նախնական նշանակութեամբ Պարսկաստանից Հայաստան անցած և մինչև քրիստոնէական գաղափարների հետ միաւորուած են:

Կրակի պաշտօնը զրադաշտական վարդապետութեան մէջ մեծ տեղ էր բռնում: Հայերն էլ պաշտում էին նորան մի և նոյն «Միհր» անունով, իբրև որդի Արամազդայ և ընդհանուր հրոյ նշանակ: Միայն Հայոց սրբազան կրակը մի անտեսանելի «հուր» էր, որ տարին մի անգամ ներկայացնում էին խարոյկի ձևով. իսկ Պարսիկները պաշտում և միշտ անշէջ էին պահում նիւթական «կրակը»:

Աւելորդ չենք համարում յիշել այստեղ նոյնպէս, որ Մորթման հնագէտը իւր լուսաբանել աշխատած հայկական արձանագրութիւնների մէջ գտնում է Դիասպ, Խուդի, Հուպա աստուածութիւնները, որոնց համեմատում է Պարսից Ջիշպիշ, Խուտա և Խօպ բառերի հետ, հետևաբար կամ Պարսկաստանից անցել են Հայաստան և կամ այս վերջինից Պարսից երկիրը:

Բայց աւելի շօշափելի կը լինի Հայաստանի սերտ կապակցութիւնը Արեաց հետ, եթէ ուշք դարձնենք մեր ազգի պատմական բաղդի վրայ, որ բոլորովին կապուած ենք տեսնում յիշեալ ազգի բաղդի հետ բոլոր հնութեան դարերում: Եւ յիրաւի, Հայաստանը Մարաց ու Պարսից հետ Ասորեստանի տէրութեան նահանգ դարձաւ, Մարաց հետ կործանեց Ասորեստանի իշխանութիւնը, Պարսից և Մարաց հետ կործանեց Բաբելա-քաղդէական տէրութիւնը, Պարսից հետ ընկաւ Մակեդոնական-սելեւկեան իշխանութեան տակ, գրեթէ միևնոյն ժամանակ ազատուեցան այդ լծից և երկու զօրաւոր

թագաւորութիւններ կազմեցին միեւնոյն պարթեւական արշակունի հարստութեան ներքոյ, միատեսակ քաղաքային օրէնքներով ու կարգերով: Յետոյ երբ Սասանեան ցեղը բարձրացաւ Պարսկաստանի գահի վրայ և մանաւանդ երբ Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին, նախ երկու տէրութիւնների և ապա երկու ազգերի օգուտներն ու շահերը այլ ևս հասարակաց չէին, այնուհետև Հայերն ու Պարսիկները բոլորովին բաժանուեցան ու հեռացան միմեանցից:

Ի՞նչ եղաւ սորա անմիջական հետեւանքը: Հայ ազգը քրիստոնէութիւնը ընդունելով գուցէ Արեաց բազմաթիւ ցեղերի մէջ ընկղմելու վտանգից ազատուեցաւ. Ճշմարիտ կրօնը ընդունելով նա աչքերը դէպի արեւմուտք դարձրեց, և հոգեկան ստրկութիւնից ազատուելով կամեցաւ և մտաւոր ստրկութեան շղթաները փշրել, որ նորա քաղաքական կեանքը հաստատ հիման վրայ դրուելով կազդուրուի ու ամրանայ: Բայց չարաչար սխալուեցաւ իւր յոյսերի մէջ: Բիւզանդիոնի արքունիքը, Հայաստանի այս նոր և բնական դաշնակիցը, նայեցաւ նորա վրայ ոչ իբրև այնպիսի երկրի վրայ որ երկու ազգերի և առ հասարակ նոր սկզբունքների շահերն է ներկայացնում արեւելքում, այլ իբրև իրան «սեպհական դաստակերտի վրայ», որ վաղ թէ ուշ իւր փառասիրութեան աւարը պիտի դառնար:

Բայց եթէ Հայաստանը խաբուեցաւ իւր ակնկալութիւնների մէջ, Բիւզանդիոնի արքունիքը իւր կողմից ոչ պակաս սխալուեցաւ իւր բռնած քաղաքականութեան մէջ: Նա չհասկացաւ Հայաստանի նշանակութիւնը քրիստոնէութեան և նոյն իսկ իւր սեպհական գոյութեան վերաբերութեամբ: Նա չհասկացաւ որ Հայոց երկրին վիճակուած էր մի զօրաւոր թումբ լինել հետզհետէ աճող Արաբացիների, Թաթարների, Մողոլների, Թուրքերի յորձանքի դէմ, որոնք այս անհաւասար կռուի մէջ պիտի ողողէին ոչ միայն Հայաստանը, այլ և այն Բիւզանդիոնը որ իւր կուրութեան պատիժը պիտի կրէր վերջապէս, քաղաքականապէս անյայտանալով պատմական ասպարէզից, և Հայաստանի հետ հաւասարապէս ստրկական վիճակի ենթարկուելով:

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն) *

Սուլթան Աբդիւլ Մէճիդը։—Րէշիտ փաշայի յեղափոխութիւնները եւ Կիւլհանէի Խաթթի-Շէրիֆը։—Սորա հետեւանքները եւ Ցովակիմ հայ երիտասարդի նախատակութիւնը։—Կրօնական ազատութիւն եւ 1845 Թուի հրովարտակը։—Արեւելեան պատերազմը։—Խաթթի-Հիւմայիւն։—Փարիզի դաշնադրութիւնը։—Լիբանանու ապստամբութիւնը։—Աբդիւլ-Մէճիդի մահը։—Իւսքիւտարի ճեմարանը։—Յակոբ պատրիարքը։—Ժողովրդական հոգաբարձութիւն։—Մատթէոս Պատրիարքը եւ ընդհանուր հաշտութիւն։—Հոգեւոր եւ Գերագոյն ժողովներ։—Յակոբ եւ Գէորգ պատրիարքները։—Ն. Պալեան եւ «Սահմանադրութիւն Ազգային» կանոնադրութիւնը։—Գէորգի անկումն եւ Սարգիս պատրիարք։—1860 Թուի մայիսի 24-ին բացումն Տաճկաստանի հայոց Ազգային Սահմանադրութեան։—Պատրիարքների սառն յարաբերութիւնները Էջմիածնայ հետ 1828 Թուի պատերազմից յետոյ։—Տաճկաստանցիք մասնակցում են Ներսիսի ընտրութեանը։—Նուիրակների խնդիրը։—Մատթէոսի ընտրութիւնը։—«Խնդիր եւ Առաջարկութիւն» եւ Հնդկահայոց բողոքը։—Հայոց իրաւունքները Երուսաղէմայ մէջ հին օրերից սկսած։—Եգիպտոսի Թէմի բաժանումը։—Յունաց հետ ունեցած վէճերը Բէթլէհէմի Ս. Տաճարի մասին։—Ամերիկայի «Պօրտ» միսիօնարական ընկերութիւնը։—Քարոզիչները հասնում են Պօլիս։—Նոցա գիշերօթիկ ուսումնարանները եւ հայոց համակրութիւնը։—Բողոքականութիւնը հայոց մէջ։—Յակոբ եւ Մատթէոս պատրիարքների բռնած ընթացքը։—Հայ բողոքականներին տէրութեան տուած իրաւունքները։—Նոցա Թիւը։

Տաճկաստանը, իւր հետզհետէ կրած նեղութեանց պատճառաւ, արդէն սուլթան Մահմուտ Բ-ի օրերում իրաւունք տուեց եւրոպական հզօր տէրութեանցը խառնուիլ իւր ներքին գործերի մէջ։ Թէև

---

*) Տես «Փորձ» № 1, 1876 Թ։

կիշեալ սուլթանը իւր գահ նստելու օրից սկսած ձեռնամուխ էր եղած ներքին վերանորոգութեանցը, բայց տէրութեան արտաքին քաղաքական դժուարութիւնները այն աստիճան խոչընդոտ եղած էին նորա բարի դիտաւորութեանցը, որ Եւրոպական լրագրութիւնը սովորեց հաւատ չընծայել տաճկական ազատամիտ ֆիրմաններին, որոնք երբէք չէին էլ գործ դրվում: Որքան աւելի մօտ էին ուսումնասիրվում օսմանեան հին կարգ ու կանոնները, այնքան հակակրական էին լուսաւորեալ ազգերի զգացմունքները դէպի Թիւրքիան: Տակաւին սուլթան Մահմուդը չէր տեսած իւր սկսած վերանորոգութեանց պըտուղները, երբ Տաճկաստանը մեծամեծ վտանգների մէջ ընկաւ. Եգիպտոսի փոխարքայ Մահմէտ-Ալիի ապստամբութեան պատճառաւ: Եւ ահա տէրութեան ամենաշփոթ ժամանակներում վախճանեցաւ Մահմուտը, իւր գահը թողնելով 16 տարեկան որդուն՝ Թուլամորթ Աբդուլ Մէճիդին: Տաճկաստանի հպատակները միանգամայն տագնապի մէջ էին: Թիւրքերը տէրութեան նեղ դրութիւնը վերաբերում էին Մահմուտի սկսած վերանորոգութեանը, իսկ քրիստոնեայ հպատակները ամենևին հաւատ չէին ընծայում նոր մտցրած կարգ ու կանոններից սպասելիք բարօրութեանը: Միւս կողմից՝ Եգիպտոսի մէջ գործ դրած յեղափոխութիւնները աւելի համակրելի էին Եւրոպայի ազգութեանցը, քան թէ օսմանեան կայսրութեան խոստմունքները:

Տաճկաստանի այդ նեղ ժամանակներին Անգլիայից վերադառնում է դէպի Պօլիս այն ժամանակուայ տաճկաց մեծամեծներից ամենախելացի քաղաքագէտը — Րէշիտ փաշան: Այս գործունեայ մարդու գլխում ծնեց ցանկութիւն՝ երեկուայ բարբարոսական տէրութիւնը յանկարծ մի կանոնադրութեամբ, մի հրամանագրով դարձնել եւրոպական մի բարեկարգ տէրութիւն: Եւ ահա՝ 1839 թուի նոյեմբերի 2-ին, Կ. Պօլսոյ մէջ, Կիւլհանէի կայսերական պարանքի առաջ, երիտասարդ արքան իւր մեծամեծներով, ժողովրդի, զօրքերի, դեսպանների և ամեն իւր հպատակ ազգութեանց ներկայացուցիչների առաջ՝ հրապարակաւ երդմամբ հաստատեց Րէշիտ փաշայի յօրինած նշանաւոր կանոնադրութիւնը և կամ սահմանադրութիւնը, որ այնուհետև Կիւլհանէի Խաթթի-Շէրիֆ անունն է կրում: Այս սահմանադրութեան նշանակութիւնը Տաճկաստանի քրիստոնէից համար այնքան մեծ է, որ մենք աւելորդ չըհամարեցինք յառաջ բերել այստեղ դորա թարգմանութիւնը, մանաւանդ որ մինչև հիմա դորա հայ տպագրութիւնը չտեսանք:

«Ամբողջ աշխարհքին յայտնի է, այսպէս է սկսում յիշեալ Խաթթի-
«Շէրիֆը, որ օսմանեան տիրապետութեան առաջուայ ժամանակներին
«ամենքը իւրեանց կենաց սկզբունք համարած էին Ղուրանի փառաւոր
«հրամանները և տէրութեան օրէնքները։ Հետևաբար թագաւորութիւնը
«մեծանում էր և զարգանում, և առանց խտրութեան՝ բոլոր հպատակները
«համնում էին բարօրութեան գերագոյն աստիճանին։ Բայց վերջին 150
«տարուայ մէջ շատ անյաջող հանգամանքների շնորհիւ և այլևայլ պատ-
«ճառներով ձեռք վեր առան սրբազան օրէնքները յարգելուց, և այդ
«օրէնքներից ծագած կանոնները իւրեանց կենաց մէջ իբր մի առաջնորդող
«աստղ համարելուց դադարեցին. ուստի հինօրեայ ոյժը և բարօրութիւնը
«փոխուեցաւ թուլութեան և աղքատութեան։ Իսկ տէրութիւնը կորցնում է
«իւր ոյժը, երբ նորա սահմաններում օրէնքները չեն պահպանվում։

«Այս մտածողութիւնները անդադար զբաղեցնում են մեր միտքը, և
«մեր գահ նստելու օրից սկսած մենք առանց յոգնելու հոգս ենք տարած
«հասարակաց օգտի համար, գաւառների բարօրութեան համար և վերջա-
«պէս նուաճեալ ազգերի վիճակը բարւոքելու համար։ Եթէ ի նկատի ու-
«նենանք աշխարհագրական դրութիւնը օսմանեան նահանգների, նոցա հողի
«պտղաբերութիւնը, բնակչաց խելքն ու ընդունակութիւնը—այն ժամանակ
«չի կարելի չըհամոզուիլ, որ եթէ միայն ճշմարտապէս հոգս տարուի, քա-
«նի մի տարուայ մէջ շատ յաջող հետևանքներ կունենանք, ինչպէս որ և
«ողորմութեամբն Աստուծոյ յոյս ունինք տեսնել։

«Այս հանգամանքների մէջ, յոյս դնելով Ամենաբարձրելոյն ողորմու-
«թեան և մեր մարգարէի օգնութեան վրայ, մենք հարկաւոր համարեցինք
«նորանոր հիմնարկութեանց ձեռքով տալ օսմանեան պետութեան բոլոր
«երկիրներին բարօրութիւն և լաւ վարչութիւն։

«Այդ պետական հիմնարկութիւնները պիտի աչքի առաջ ունենան
«1) խոստմունքը, որ ապահովացնում է մեր հպատակների կեանքը, պատիւը
«և սեփականութիւնը. 2) համահաւասար բաժանումը և ժողովումը տէ-
«րութեան հարկերի. և 3) զօրաժողովի և զինուորական ծառայութեան
«սահմանադրութիւնը։

«Եւ արդարև ինչ կայ մարդուս համար թանգագին քան կեանքը և
«պատիւը։ Մինչև անգամ այն անձը, որի սիրտը բաբախում է բռնա-
«բարութեան անունը լսելիս, նա ևս, երբ իւր կեանքը և պատիւը վտանգի
«մէջ է տեսնում, նոյն բռնաբարութեանն է դիմում անձնապաշտպանու-
«թեան նպատակաւ և դորանով մեծ վնաս է հասուցանում վարչութեանը
«և երկրին։ Եւ ընդհակառակն, եթէ մէկը ապահովութիւն է վայելում,
«նա օրինազանց չի գտնուիլ և հետևաբար նորա գործքերը պիտի օգնեն տէ-
«րութեան և երկրացոց բարօրութեանը։ Եթէ չկայ կայքի ապահովու-
«թիւն, իհարկէ հայրենեաց և գահակալի ձայնը արձագանք չի գտնիլ այդ-
«պիսի երկրում. այդտեղ ոչ ոք չի պարապիլ ընդհանուր բարօրութեան
«խնդիրներով, քանի որ ամեն ոք զբաղուած է իւր անձնական ապահովու-

« թեան հոգսերով։ Հակառակ սորա, եթէ քաղաքացին ապահով է իւր
« կայքերի մասին, այն ժամանակը նորա մէջ ոչ միայն սնանվում է ցան-
« կութիւն՝ լայնացնել իւր գործունէութիւնը, այլև նորա սիրտը լի է լինում
« սիրով դէպի իւր գահակալը, իւր տէրութիւնը և իւր հայրենիքը։ Եւ այս
« զգացմունքները չարժաւիթ են լինում շատ գովելի գործքերի։

« Ոչ պակաս նշանաւոր է տէրութեան հարկերի համաքաժանման խըն-
« դիրը, որովհետև տէրութիւնը, որի վրայ դրած է պարտականութիւն
« պաշտպանել թագաւորութիւնը և այդ պատճառաւ ծախսերի պէտք ունի,
« ոչ այլ կերպ կարող է ձեռք բերել զօրք և այլևայլ պաշտօնատարաց
« համար պէտք եղած դրամը, եթէ ոչ իւր հպատակներից հարկ առնելով։
« Թէև, փառք Աստուծոյ, Մեր հպատակները քանի ժամանակից ի վեր ա-
« զատ են կեղեքիչ մենավաճառութեան հարկից, որ առաջուայ ժամանակ-
« ներում սխալմամբ տէրութեան եկամուտներից մէկն էր համարվում,
« բայց դեռ ևս կայ մի վնասակար և ըստ իւր հետևանաց չար սովորու-
« թիւն, այն է ի լ թ ի զ ա մ, այսինքն տէրութեան հարկերը կապալաւ տալը
« այն մենավաճառներին, որոնք խոստանում են աւելի վճարել։ Այս սիս-
« տեմը՝ քաղաքական և ելևմտական վարչութիւնները հպատակեցնում է
« մի մարդու կամաց, երբեմն մի այնպիսի մարդու, որ անսահման կրքերի
« և ցանկութեանց տէր է։ Եթէ այդ մենավաճառը բարեխիղճ մէկը չէ,
« այն ժամանակ նա աչքի առաջ կունենայ միմիայն իւր անձնական շա-
« հերը։ Այս պատճառաւ այսուհետև Օսմանեան տէրութեան ամեն մի
« մասը պիտի տայ մի որոշեալ գումար հարկ, որ համապատասխան լինի
« այդ երկրի ուժի և կարողութեանը, և բացի այդ որոշեալ գումարից, ուրիշ
« ոչինչ պահանջուելու չէ այդ երկրից։ Նմանապէս հաստատ կերպով որո-
« շուած պէտք է լինին առանձին օրէնքներով Մեր ցամաքային և ծովային
« զօրութեանց ծախսերը։

« Մենք արդէն ուշադրութիւն դարձրինք թագաւորութեան պաշտպա-
« նութեան նշանաւորութեան վրայ։ Եթէ համեմատ այս նպատակին բո-
« լոր բնակիչները պարտական են զինուոր տալ, այն ժամանակ հարկ է որ
« օրէնքները սահմանուին, թէ որ երկիրը որքան զինուոր տալու է և դոցա
« ծառայութեան տարիքը չափաւորելու է չորս կամ հինգ տարիով։ Անար-
« դարութիւն կլինէր և երկրագործութեանն ու արհեստագործութեանը մեծ
« վնաս պիտի հասնէր, եթէ այստեղ աւելի զինուոր առնուէր, այնտեղ սա-
« կաւ, քան թէ մի մի երկիր կարող էր զինուոր տալ։ Եւ վերջապէս, եթէ
« զինուորին ստիպէին ծառայել իւր ամբողջ կեանքումը, այդ կընշանակէր
« նորան յուսահատութեան հասցնել և միւս կողմից նպաստել երկրի
« անմարդանալուն։

« Այս բոլորը միասին ցոյց է տալիս, որ առանց այլևայլ օրէնքների,
« որոնց հարկաւորութիւնը վերը յիշուեցաւ, չկայ մի որ և իցէ տէրութեան
« համար ոչ հարստութիւն, ոչ զօրութիւն, ոչ բարօրութիւն, ոչ հանգիստ.
« իսկ օրէնքների մտցնելուց յետոյ սպասելու է յիշեալ բարիքը։ Այս պատ-

«ճառաւ ամենայն յանցանք պէտք է որ, համեմատ Աստուածային օրի-
«նաց, նախ քննուի, ապացուցուի և ապա դատապարտուի հրապարակաւ։
«Ոչ ոք չպէտք է պատժուի մահով ոչ գաղտնի, ոչ հրապարակաւ, ոչ Թու-
«նաւորուելով և ոչ ուրիշ միջոցներով, քանի որ օրինաւոր դատավճիռ չէ
«ստացած։ Նմանապէս ոչ ոք իրաւունք չունի անպատուել ուրիշներին։ Ամե-
«նայն ոք իրաւունք ունի իւր ամեն տեսակ սեփականութիւնից ուզեցած
«օգուտը քաղել և վարել ազատաբար, առանց ամենայն արգելքի ում
«կողմից և իցէ։ Ոչ սակաւ սորանից, յանցաւորի անմեղ ժառանգները
«չպիտի զրկուին իրանց օրինաւոր ժառանգութիւնից և դատապարտուածի
«կայքը յարքունիս չպիտի գրաւուին։

«Որովհետև փաղիշահի այս ողորմած հրովարտակը վերաբերում է Մեր
«ամեն հպատակներին՝ ինչ կրօնի և դաւանութեան և լինին դոքա, վասն
«որոյ ամենեքեանք պէտք է հաւասարապէս օգուտ քաղեն սորանից։ Ու-
«րեմն, այդպէս ահա, մենք տալիս ենք տէրութեան ամեն հպատակներին
«անխտրաբար, համաձայն Աստուածային օրինաց, կատարեալ ապահովու-
«թիւն նոցա կենաց, պատուոյ և կայից վերաբերութեամբ։

«Իսկ ինչ որ կվերաբերի յիշեալ կէտերի օրինաւոր իրագործութեան,
«այդ մասին մեր պետական վարչութիւնը, ըստ օրենի խորհրդածելուց յետոյ,
«կհաղորդակցէ մեր նախարարների և տէրութեան մեծամեծաց հետ այն
«օրերը, երբ մենք կնշանակենք հիմնական օրէնքները քննելու և սահ-
«մանելու համար, այն օրէնքները, որոնք պիտի վերաբերին կենաց և
«կայից ապահովութեանը և հարկերի համահաւասար բաժանմանը։ Այս
«խորհրդածութեանց ժամանակ ամենայն ոք (խորհրդականներից) պարտա-
«կան է համարձակ յայտնել իւր կարծիքները և խորհուրդ տալ։

«Այն օրէնքները, որոնք կվերաբերին զինուորական ծառայութեանը,
«կքննուին զինուորական խորհրդարանում սէրասքէրի (զինուորական նա-
«խարարի) ապարանքում։

«Ամեն մի վճռական կերպով քննուած օրէնք անմիջապէս պիտի մեզ
«ներկայացնուի և մենք մեր փաղիշահական ստորագրութեամբ ըստ օրինաց
«կըվաւերացնենք յաւիտենապէս։

«Որովհետև այս հիմնարկութիւնների միայնակ նպատակն է պահել
«պահպանել կրօնը, տէրութիւնը, ազգութիւնը և թագաւորութիւնը, այդ
«պատճառաւ Մենք պարտաւորում ենք չգործել ոչինչ, որ միանգամայն
«Մեր այս կամքին արգելառիթ լինի։ Իսկ յապահովութիւն Մեր այս
«խոստման, Մենք, երբ որ այս հրովարտակը կբերուի Շ ի ր կ ա յ ի - չ ա-
«ր ի ֆ ի (սրբազան դրօշակի) խորանը դրուելու ի պահուստ, իսկոյն յանուն
«Աստուծոյ կտանք Մեր երդումը բոլոր ուլեմների և տէրութեան մեծա-
«մեծների ներկայութեամբ և մի այդպիսի երդում կառնենք նոյն իսկ
«ուլեմներից և մեծամեծներից։

«Այդպէս ահա՝ երդուելուց յետոյ, ամենայն ոք, թէ ուլեմ լինի նա,
«թէ բարձրաստիճան պաշտօնեայ և թէ հասարակ ոմն, եթէ միայն այն

« հիմնարկութեանց դէմ ներգործէ ու այդ բանը հաստատուի, պէտք է համեմատ իւր մեղաց պատժուի, չնայելով նորա աստիճանին, արժանաւորութեանը կամ նշանակութեանը։ Այս մտքով քրէական օրէնքներ հաստատուելու են։

« Որովհետև հիմա տէրութեան բոլոր ծառայողները բաւականին ռոճիկ են ստանում, իսկ քիչ ստացողների ռոճիկներն էլ պէտք է աւելացնուին,—պէտք է որ մի խիստ օրէնք հրատարակուի ընդդէմ քաղաքական անբարոյականութեան և շահասիրութեան, որոնք գլխաւոր պատճառներ են Մեր տէրութեան անկմանը։

« Եւ որովհետև այս հրատարակուող կանոնադրութիւնները հիմնապէս վերահաստատում են եւ վերանորոգում հինաւուրց սովորութիւնները, վասնորոյ այս Իմ փադիշահական հրովարտակը պէտք է յայտնուի Կ. Պօլսոյ մէջ և կայսերութեան ամենագլխաւոր տեղերում, նաև պաշտօնական կերպով պիտի հաղորդուի Պօլսոյ մէջ գտնուող բարեկամ տէրութեանց դեսպաններին, որպէս զի նոքա վկայ լինին այս օրէնքների բաշխելուն, օրէնքների՝ որոնք, եթէ կամենայ Աստուած, պիտի յաւիտեան հաստատ մնան։

« Վերջ ամենայնի Թող պահէ Աստուած մեզ ամենիս իւր սուրբ հովանաւորութեան տակ։ Իսկ նոքա, որոնք այս օրինաց դէմ կլինին, այդպիսիները Թող Աստուծոյ պատուհասին արժանանան և զուրկ լինին ամեն տեսակ պաշտպանութիւնից։

Այս Հրովարտակի մէջ, որին այնքան մեծ նշանակութիւն է տրվում, բոլոր մտքերը պատկանում են սուլթան Մահմուդի թագաւորութեան ժամանակներին և մասամբ արդէն իրագործուած էին։ Հրովարտակի ուշի ուշով կարդացողը պիտի նկատէ, որ յիշեալ գրութեան մէջ նախ և առաջ Տաճկական տէրութեան անկման ու թուլութեան պատճառը համարվում են իսլամի հին օրէնքների դէմ ծագած արհամարհանքը և նոցա անգործադրութիւնը։ Այնուհետև Հրովարտակը չի ասում թէ այդ օրէնքները պիտի նորից գործ դրուէին իբր միակ միջոց տէրութեան մեծութիւնը վերականգնեցնելու, այլ ընդհակառակը ինքը պախարակում է քանի մի հին կարգ ու կանոնները և առաջարկում է միանգամայն նոր հիմնարկութիւններ, նոր օրէնքներ։ Սակայն վերջումը Հրովարտակը նորից մատնացոյց է լինում հին բարուց և օրինաց՝ իբր միակ միջոցների տէրութեան բարօրութեան։ Այս գրութեան մէջ, ըստ երևոյթին, նշմարվում են երկու մեծամեծ հակասութիւններ՝ այն է գովասանք և պախարակումն հին իսլամական օրինաց ու բարուց։ Բայց այդ հակասութիւնները գիտութեամբ են մտցրած Հրովարտակի մէջ, որի հեղինակը ցանկացած է մէկ կողմից քրիստոնէից

համակրութիւնը գրաւել նոր օրէնքներ խոստանալով, և միւս կողմից մահմեդականների սիրտը շահել հին բարուց վերահաստատութեամբը: Որքան սխալ պիտի համարուի մի այդպիսի երկդիմութիւն, այնքան և հասկանալի է, որ այն ժամանակուայ հանգամանքների մէջ ուրիշ կերպ գործել չէր կարելի: Թէև տակաւին Մահմուտ Բ ցանկութիւն ունէր քրիստոնէից և մահմեդական հպատակների իրաւունքները հաւասար տեսնել, բայց այդ հաւասարութիւնը Տաճկաստանի մէջ առաջին անգամ պաշտօնապէս հրապարակաւ քարոզուեցաւ յիշեալ հրովարտակի շնորհիւ և այս մասին Խաթթի-Շէրիֆը մի մեծ քայլ է դէպի յառաջադիմութիւն:

Ինչպէս և սպասելի էր, այս հրովարտակը շատ գեղեցիկ տպաւորութիւն ունեցաւ ամենքի վրայ թէ Թիւրքիայի մէջ և թէ Եւրոպայում: Քրիստոնեայ հպատակները, մի աննշան հարկ տալով յօգուտ զինուորութեան, համեմատաբար աւելի մեծ արտօնութեանց տէր էին դառնում, քան թէ նոյն իսկ տիրապետող ազգը—տաճիկը, որոնց վրայ միայն էր ծանրացած զինուորականութիւնը: Բայց և մահմեդականք ուրախ էին, որ իրանց ծառայութեան ժամանակամիջոցը կարճացրած էր: Ժողովուրդը մխիթարվում էր այն մտքով, որ տէրութեան աստիճանաւորները ձեռք պիտի վեր առնէին ամեն չարութիւններից, իսկ իրանք աստիճանաւորները ուրախ էին՝ որ այնուհետև առանց օրինաւոր դատի պատժի ենթարկուելու չէին:

Ինքն ըստ ինքեան Խաթթի-Շէրիֆը օրէնք չէ. դա մի հրովարտակ է որը պահանջում է, որ երեք հարցերի վերաբերութեամբ օրէնքներ պատրաստուին: Րէշիտ փաշան շտապեց պատրաստել և այդ օրէնքները, որոնք Թանզիմաթի—Հայրիջիէ անունով ներկայացուեցան պետական և զինուորական խորհրդի վաւերացմանը և կայսերական ձեռքով հաստատուեցան: Մինչև այս ժամանակ գաւառապետները և կուսակալները իւրեանց պաշտօնը ժառանգական և միանգամայն անփոփոխելի էին համարում, այն ինչ հիմա Պօլըայ դիւանը վճռեց, որ ոչ մի կուսակալ մի և նոյն պաշտօնի մէջ երկու երեք տարուց աւելի չմնայ: Բացի դորանից՝ այդ կուսակալներին կամ գաւառապետներին արգելուեցաւ մասնակցել հարկերի ժողովելու խնդրում. այս անգամ հարկեր ժողովելու համար ելևմտական նախարարութեան պաշտօնատարներ ուղարկուեցան: Այս փոփոխութիւնները որքան բարի հետևանքներ պիտի ունենային առհասարակ գաւառացոց համար, այնքան և վնասակար էին քանի մի հայ սե-

ղանաւորների համար, որոնք մինչև այս ժամանակը մեծամեծ պաշտօնականներին առաջուց այս ինչ կամ այն ինչ գումարը օժանդակելով, իրաւունք էին ձեռք բերում հարկերը և մաքսը յօգուտ իրեանց ժողովելու և առհասարակ տէրութեան զափթիների ձեռքով իրեանց քսակը հարստացնելու: Հայ ամիրաներից և աղաներից շատերը այս մտքով և այս որոշ նպատակաւ պաշտօնական պայմանագրութիւններ ունէին վարչութեան հետ: Հիմա յանկարծ այդ պայմանագրութիւնները տէրութեան կողմից անվաւեր հրատարակուեցան և հայ սեղանաւորներից շատերը դրամական մեծամեծ կորուստներ արին:

Սակայն եթէ հայ մեծամեծները զրկուեցան ապրուստի միջոցներից, հիմա տէրութիւնը բացեց իւր քրիստոնեայ հպատակների առաջ մի այլ ճանապարհ յառաջ երթալու՝ այն է իրաւունք տուեց համաձայն խաթթի-շէրիֆի տէրութեան ծառայութեանը մտնելու: Առաջին քրիստոնեայ փաշան Տաճկաստանի մէջ եղաւ մի անգղիացի զինուորական Վալկէր անունով: Բայց և հայերից ոմանք Աբդիւլ-Մէճիդի օրերով հասան բէյութեան, փաշայութեան և կամ էֆէնդիութեան:

Առհասարակ խաթթի-շէրիֆի հրատարակելու և գործ դնելու օրից սկսած քրիստոնէից դրութիւնը ընդհանրապէս լաւանում էր և նիւթապէս բարուոքւում: Սակայն քրիստոնէից այդ յառաջադիմութիւնը թէև միանգամայն համաձայն էր նոր օրէնքների խոստացած շնորհացը, բայց և այնպէս նախանձելի էր տաճկի հասարակութեան համար, որ սովոր չէր գ ե ա ւ ո ւ ր ն ե ր ի հետ հաւասար համարել իրան: Այդ նախանձի զգացմունքը պատճառ եղաւ շատ և շատ անբաւականութեանց Տաճկաստանի գաւառների մէջ, օրինակի համար Ադրիանուպօլիս, Զմիւռնիա, Կայսէրի, Կօնիա և քանի մի ուրիշ տեղեր: Առհասարակ տաճկական մոլեռանդութիւնը օրըստօրէ զարթնում էր և 1843 թուին հետևեալ աղէտալի դէպքը պատահեցաւ, որ միանգամայն գրաւեց ընդհանուր Եւրոպայի ուշադրութիւնը:

Մի հայ երիտասարդ՝ Յովակիմ Սարգսեան Փափազեան, Պօլսոյ Սամաթիա թաղից, քանի մի տարի առաջ ընտանեաց հետ անբաւականութիւն ունենալով, ընդունել էր մահմետական դաւանութիւնը, բայց յետոյ զղջացել էր, գաղտնի խոստովանել քահանային և շարունակում էր քրիստոնէութիւնը: Բայց որովհետև մի այսպիսի վարմունք տաճկաց օրէնքները ի մահ էին դատապարտում,

Յովակիմը փոխել էր իւր զգեստը, եւրոպական զգեստ հագնելով և կարծում էր թէ իւր արարքը մոռացման տուած պիտի լինին։ Յանկարծ Յովակիմը 1843 թուին Պօլսոյ մէջ մատնվում է տէրութեան և բանտարկվում, իսկ կարճ միջոցից յետոյ պետական խորհրդի ձեռքով 'ի մահ դատապարտվում։ Երիտասարդի ծնողաց խնդրանօք անգլիացոց դեսպանը բարեխօսեց մեծ վեզիրի առաջ Յովակիմի ազատութեան մասին և ստացաւ խոստմունք այդպիսի ազատութեան, բայց քանի մի օրից յետոյ խեղճ երիտասարդը հրապարակաւ գլխատուեցաւ և, իբր թէ եւրոպացի դեսպաններին ծաղրելու համար, նահատակութեան ժամանակ դեսպանական պաշտօնէի զգեստ հագցրին ու կտրած գլխի վրայ քանի մի օր շաբունակ եւրոպական գլխարկ (շափխա—շլեապ) ծածկեցին։ Որքան ցաւալի էր այս անցքը, այնքան և փրկարար Տաճկաստանի քրիստոնէից համար, որովհետև Յովակիմի նահատակութեան լուրը վերին աստիճանի զայրոյթ պատճառեց ոչ միայն եւրոպական առաջնակարգ տէրութեանցը, այլ և ընդհանուր լուսաւորեալ աշխարհին։ Դեսպանների բողոքը այնքան ազդու էր և սաստիկ, որ Տաճկաց պետութիւնը սարսափեցաւ և ակամայ պիտի կատարէր նոցա պահանջները. իսկ նոքա պահանջում էին որ ամէն քրիստոնեայ ազատ լինի մահմետականութիւնը ընդունելուց յետոյ ուզած ժամանակը նորէն վերադառնալու իւր նախնի քրիստոնէական դաւանութեանը։ Թէև այս բանը ընդունուեցաւ Տաճկաց տէրութիւնից, բայց գործ դրուեցաւ մի քանի ժամանակից յետոյ, երբ իբր թէ մահմետական ժողովուրդը պատրաստուեցաւ կրօնական ազատամտութեան համար։ Այսու ամենայնիւ՝ այս ժամանակից ահա թոյլ տրուեցաւ Տաճկաստանում հայոց և յունաց զանգակատներ շինել, զանգակ հնչեցնել և առհասարակ ազատապէս պաշտել իւրեանց կրօնը։

Կիւլխանէի Խաթթի-Շէրիֆի հրատարակելուց քանի մի տարի յետոյ, այն է 1845 թուին, Աբդիւլ-Մէճիդը մի հրովարտակ հանեց, որով յայտնում էր, թէ բացի զինուորական բարեկարգութեանց, արքայի Ֆռայած կամքերը տէրութեան պաշտօնեաները ողլխութեամբ չեն հասկացել և չեն գործ դրել։ Այդ պատճառաւ կայսրը հրամայում էր կանոնաւոր ուսումնարանների թիւը շատացնել։ Կուսակալները և գաւառապետները մինչև Մահմուդ Բ-ի օրերը անսահման իրաւունքների տէր էին. նոքա իրանց համար զօրք ունէին, հարկ էին ժողովում, ի մահ էին դատապարտում և

շատ անգամ ոտքի էին կանգնում տէրութեան դէմ: Սուլթան Մահմուդը վերցրեց նոցանից այդ իրաւունքները, իսկ սուլթան Մէճիդը աւելի կրճատեց նոցա մնացած իշխանութիւնը, գաւառական ժողովներ (մէջլիս) հաստատելով: փաշան, առանց մէջլիսի, ինքնագլուխ իրաւունք չունէր դատել, հարկ առնել և այլն: Այդ մէջլիսների անդամ ընտրուելու իրաւունքը արքայական հրովարտակով վայելում էին և քրիստոնեայ հպատակները, ուրեմն և հայք:

Առհասարակ մինչև այսօր Տաճկաստանի տուած իրաւունքները իւր հպատակ քրիստոնեայ ազգութեանցը աւելի կրօնական-ազգային իրաւունքներ էին, քան թէ ընդհանուր քաղաքական, որովհետև տակաւին պետական օրէնքները միանգամայն յօգուտ մահմետականների էին և տաճիկ ազգը իրանց մասին ամենևին հաւասարացրած չէր քրիստոնէից հետ:

Երկու օրէնք մանաւանդ շատ զգալի խտրութիւն էին պատճառում. նախ՝ որ օրէնքների առաջ քրիստոնեան այն աստիճան արհամարհելի էր հանդիսանում, որ նորա վկայութիւնը մահմետականի դէմ չէր ընդունվում. և երկրորդ՝ քրիստոնեայք, որպէս ստրուկներ, գերիք, պարտաւորվում էին տարեցտարի, իբր իրանց գլխագին կամ ազատութեան գին, խարաջ անունով հարկ վճարել: Քանի որ այս երկու օրէնքները չէին վերցրած, ոչինչ հաւասարութիւն կարելի չէր և քրիստոնեայք շատ քիչ հաւատ էին ընծայում տէրութեան զանազան խոստմանց և ազատամիտ խաթթի—հրովարտակներին:

Տաճկաստանի քրիստոնէից իրաւանց խնդիրը եթէ ոչ բուն պատճառը եղաւ, գոնէ շարժառիթն է համարվում վերջի արիւնահեղ Արևելեան պատերազմի: Ռուսաց տէրութիւնը՝ Թիւրքիայի քրիստոնէից պաշտպանութեան և ազատութեան համար՝ իւր զօրքերը դէպի Բալկանեան թերակղզին ուղղեց: Այն եւրոպական տէրութիւնները, որոնք Տաճկաստանի պաշտպան հանդիսացան ընդդէմ Ռուսիայի, լաւապէս գիտէին, որ իրանց պատասխանատվութեան վրայ էր մնում արևելեան քրիստոնէից արտօնութեանց խնդիրը և մի օր ամբողջ աշխարհքը պիտի մեղադրէր նոցա, որ թոյլ չէին տուած Նիկողայոս կայսեր այդ արտօնութիւնները ձեռք բերելու սրով և բրով: Հետևաբար Անգղիային և Գաղղիային մնում էր մի կողմից պատերազմ մղել ընդդէմ Սևաստոպոլի, միւս կողմից յառաջ տանել Թիւրքիայի քրիստոնէից վիճակի բարւոքման խնդիրը: Եւ ահա

Արեւելեան պատերազմի սկզբներում, հայոց պատրիարքին, ինչպէս և միւս ազգութեանց ներկայացուցիչներին, պաշտօնապէս կրկնվում է յանուն արքայի կրօնական և ազգային արտօնութիւնների և ազատութեան վերահաստատութիւնը: Մի և նոյն ժամանակ Անգղիոյ դեսպանը շտապում է Պօլսոյ հայոց պատրիարգարանը հաւատացնելու, որ այս անգամ Թիւրքիայի տէրութիւնը ինքը աւելի պիտի բարւոքէ հայոց վիճակը, քան թէ մեծամեծ արտօնութիւններ խոստացող Ռուսիան: Քանի մի ժամանակից յետոյ, այն է 16 մարտի 1854 թուին, տէրութեան հրովարտակ ելաւ, որով թոյլ էր տրվում քրիստոնէից վկայութիւնը քրէական գործերում, թէև այդ վկայութիւնը յօգուտ կամ ի վնաս մահմետականի լինի: Նոյն հրովարտակի զօրութեամբ գաւառների մէջ պիտի նոր դատարաններ բացուէին, որոնք միանգամայն անկախ պիտի լինէին մահմետական կրօնական օրէնքներից, և որոնք իրաւունք ունէին ամենայն տեսակ վէճեր և եղեռնագործութիւններ կամ յանցանքներ քննելու, բացի մահապարտութեան ծանր յանցանքից:

Մի տարուց յետոյ կայսերական նոր հրովարտակը աւետեց քրիստոնէից խարաջ հարկի վերցուիլը, և զինուորական հարկի մասին կատարեալ հաւասարութիւն մահմետական հպատակների հետ: Այս հրովարտակը իմացրեց, որ քրիստոնէից մէջէն նմանապէս զօրք պիտի առնուի այն ժամանակուայ Ղրիմի պատերազմի շարունակելու համար: Անգղիացի քաղաքագէտները, որոնց դրդելովը հրատարակուեցաւ յիշեալ խաթթին, միտք ունէին իւրեանց զօրապետների առաջնորդութեամբ մի քանի քաջավարժ քրիստոնեայ գունդեր կազմել Թիւրքիայի մէջ, և դորանով կարծում էին քրիստոնէից բարոյական և նիւթական դրութիւնը բարձրացնել և ազնուացնել: Սակայն, ինչպէս յայտնի է, Արևելքի մէջ ամենքեանք փախչում են զինուորութիւնից և ոչ ոք չի ուզում հասկանալ որ զինուոր գնալը ոչ թէ պատիժ է, այլ պատւոյ խնդիր: Հասկանալի է որ յիշեալ խաթթին վերին աստիճանի անբաւականութիւն պատճառեց Թիւրքիայի քրիստոնէից, որոնք սարսափով լսեցին կայսերական գորովագութ հրամանը ու ամեն ճիգ թափելով աշխատեցան դորա գործադրութիւնն արգելելու: Միւս կողմից՝ նոյն իսկ տաճիկ հասարակութիւնը անբաւական մնաց այդ խաթթիից, որովհետև քրիստոնեայ զօրքեր ունեցած ժամանակ մահմետականները պիտի կորցնէին իրանց գերապանցութիւնը և երբէք ապահով չպիտի լինէին

քրիստոնեայ ազգութեանց հպատակութեան մասին: Այս ընդհանուր անբաւականութիւնը ստիպեց Օսմանեան տէրութեանը քրիստոնեայ զօրք ժողովելու խնդիրը յետ ձգել մի անորոշ ժամանակ: Թէ ինչպէս են նայում այս խնդրին այժմեան հայք, պիտի տեսնենք իւր տեղը: Բայց զօրաժողովը յետաձգելով և խարաջ բառը վերցնելով, քրիստոնեայք իրաւամբ պարտական մնացին զինուորական հարկը տալու:

Դեռ ևս Արևելեան պատերազմից առաջ ռուսաց տէրութիւնը պահանջում էր, որ Տաճկաստանի քրիստոնէից իրաւունքները եւրոպական տէրութեանց պաշտպանութեան ներքոյ լինին: Անգլեան, Գաղղեան և Աւստրեան Ռուսաստանի այս ցանկութեան առաջն առնելու համար, պատերազմի վերջանալու ժամանակներին բարոյապէս ստիպեցին օսմանեան սուլթանին նորէն ապացուցանել իւր քրիստոնեայ հպատակներին իւր առատագութ սէրը և խնամքը, երևելի Խաթթի-Հիւմայիւն անունով հրովարտակը տալով 1856 թուին: Թէև Խաթթի-Հիւմայիւնն ևս Խաթթի-Շէրիֆի յաջողութիւնը ունեցաւ, մանաւանդ հայոց համար, բայց և այնպէս աւելորդ չենք համարում փոքր ի շատէ ծանօթացնել ընթերցողաց նորա գոնէ քանի մի գլխաւոր կէտերի հետ:

Խաթթի-Հիւմայիւնի մէջ սուլթանը վերահաստատում է Խաթթի-Շէրիֆի տուած իրաւունքները պատուի, կայքի և անձնական ապահովութեան մասին և նմանապէս այն բոլոր իրաւունքները և արտօնութիւնները, որոնք հին ու նոր ժամանակների մէջ տուած են ոչ-մահմետական ազգերին: Աշխարհակալ Մուհամէտ Բ ոչ-մահմետական ազգերի բարձրագոյն հոգևորականութեան վրայ պարտք էր դրած իւրեանց միլլէթների (ազգակիցների) աշխարհական գործերն ևս տեսնելու. այժմ այդ պարտականութիւնը վերացվում է, և պատրիարքները պիտի լինին միմիայն իբր բարձրագոյն հոգևոր ներկայացուցիչներ և տէրութիւնից ռոճիկ պիտի ստանան. իսկ քրիստոնէից աշխարհական գործերը տեսնելու համար ժողովուրդը պիտի ընտրէ մի ժողով հոգևորական և աշխարհական անձինքներից: Թէև առաջուայ օրէնքները քրիստոնէից եկեղեցեաց շինութեանց և նորոգութեանց համար շատ դժուարութիւններ էին ներկայացնում, բայց այժմ սուլթանը խոստանում է այդ արգելքները վերցնել և թեթևացնել: Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւնները մէկը միւսից գերազանց չպիտի համարուին: Խստիւ արգելվում է

տաճկաց բերանում ընդհանրացած և մինչև անգամ պաշտօնական թղթերի մէջ գործ ածած պատուի դիպչող գեաւուր և քեաֆիր անունների գործածութիւնը քրիստոնէից համար և ջհուդ բառը հրէից վերաբերութեամբ։ Բացի այս՝ հրատարակվում էր ամենաանսահման ազատութիւն կրօնի, և արգելւում էր (թէև մինչև անգամ տաճիկը քրիստոնէութիւն ընդունած լինի) բռնի փոխել տալ կրօնքը։ Առաջ տէրութեան բոլոր վարչութիւնը միանգամայն մահմետական էր, այժմ ոչ-մահմետական ազգերն ևս քաղաքական համահաւասար իրաւունքներ պիտի վայելէին, և տէրութեան քաղաքական պաշտօններ պիտի կրէին։ Ամենքեանք իրաւունք պիտի ունենան արքունական վարժատունների և բարձրագոյն ուսումնարանների մէջ ուսանելու։ Խառը դատարանները, կիսով չափ մահմետական և քրիստոնեայ դատաւորներից գոյացած, պիտի կարողանան մահմետականի և քրիստոնէի մէջ ծագած վէճերը տեսնելու։ Քրիստոնեայք պիտի մասնակցէին զինուորականութեան մէջ, բայց իրաւունք է տրվում քրիստոնէին իւր փոխարէն մէկ ուրիշին վարձելու. այս կէտի վերաբերութեամբ առանձին օրէնքների հրատարակութիւն էր խոստացվում։ Գաւառական և նահանգական ժողովների և մէջլիսների մէջ որոշեալ թուով քրիստոնեայ ներկայացուցիչներ պիտի լինին։ Թոյլ է տուած օտարահպատակներին որոշեալ պայմաններով անշարժ կալուածքներ գնել Թիւրքիայի մէջ։ Կայսերական պետական խորհրդարանի մէջ ևս քրիստոնեայ ներկայացուցիչներ պիտի լինին և այլն։ և այլն։

Այս խաթթի-հիւմայիւնը թէև շատ բան էր խոստանում, բայց և շատ կասկածելի էր քրիստոնէից աչքում, ամենքը գիտէին, որ մի հրովարտակով, մի թղթի կտորով չէին կարող վերացուիլ այն բռնութիւնները և հարստահարութիւնները, որոնք մի բնական բան էին դարձել տիրող տաճկաց և հպատակ քրիստոնէից համար. ամենքը զգում էին, որ դարևոր սովորութիւնները մի րոպէի մէջ չէին վերցուիլ, չորս հարիւր տարուայ խոցերը մի ժամուայ մէջ անկարելի էր բժշկել։ Մահմետականների գայրոյթը յիշեալ հրովարտակի պատճառաւ հասնում էր վերին աստիճանին և Անատօլիայի ու փոքր Ասիայի քանի մի տեղերում տաճիկները ջարդ էին տալիս ազատութիւն ցանկացող քրիստոնէից։ Դրամից զուրկ, նիւթապէս և բարոյապէս թուլացած տէրութիւնը անկարող էր լինում անմիջապէս գործ դնել խաթթի-հիւմայիւնը, որ և պատճառ էր

տալիս դրդող եւրոպական տէրութեանցը կարծելու՝ թէ Թիւրքիայի նախարարները կամք և ցանկութիւն չունին քայքայուող տէրութիւնը վերանորոգելու: Սակայն փարիզի (30 մարտի 1856 թուի) դաշնակցութեան իններորդ կէտը արգելում էր եւրոպացի տէրութեանցը միասին կամ առանձնապէս խառնուիլ Տաճկաստանի ներքին գործերում և կամ սուլթանի ու իւր հպատակների յարաբերութեանց մէջ: Այսպէս ահա եւրոպացիք ինքեանք կամաւոր կերպով կապեցին իւրեանց ձեռքերը Թիւրքիայի քրիստոնէից պաշտպանութեան գործում:

Քանի մի տարուց յետոյ, այն է 1860 թուին, Լիբանանու և Դամասկոսի սարսափելի ապստամբութիւնը, որ հազար քրիստոնէից կեանք արժեցաւ, լաւապէս ապացուցեց, թէ որ աստիճանի վտահալի են խաթթի-շէրիֆները և խաթթի-հիւմայիւնները Թիւրքիայի մէջ: Այս ապստամբութեան պատճառաւ Օսմանեան տէրութիւնը, դարձեալ Եւրոպացւոց խորհրդով, իբր թէ նորից ուզեց ապացուցանել լուսաւորեալ աշխարհին թէ իւր քրիստոնեայ և մահմետական հպատակաց մէջ խտրութիւն չի տեսնում և այս պատճառաւ Լիբանանու կուսակալ նշանակեց հռովմէադաւան հայ ազգի Անտօն Կարապետեան Տավուտեանին, որ սովորաբար Տավուտ փաշայ էր կոչվում:

Հազիւ յիշեալ ապստամբութիւնը վերջացաւ, և եւրոպական զօրքերը, որոնք Սիրիայի պաշտպանութեան էին գնացած, դեռ չէին թողած Օսմանեան հողը, որ Աբդիւլ-Մէճիդը վախճանեցաւ 1861 թուի յունիսին և իւր եղբայր Աբդիւլ-Ազիզը գահը նստաւ:

Երբ մի պատմական հայեացք ձգելու լինինք հայոց բարոյական կենաց վերայ, պիտի տեսնենք, որ հայ ժողովուրդը՝ իւր քաղաքական ազատութիւնը կորցնելու օրից սկսած՝ մի կերպ կենդանութիւն էր ցոյց տալիս տակաւին իւր եկեղեցուն և իւր հովիւների վարուց վերաբերեալ խնդիրների մէջ: Միմիայն ներկայ դարու մէջ հայք սկսում են արժանաւոր նշանակութիւն տալ ազգային ուսումնարանների և հիւանդանոցների խնդրոյն և այդպիսով փոքր առ փոքր եկեղեցին և ուսումնարանը համահաւասար մտածութեանց խնդիր են դառնում ազգի համար: Մինչև ներկայ դարս հայք չունէին ոչ մի ուսումնարան, ոչ հիւանդանոց կամ մի այլ աստուածահաճոյ

հիմնարկութիւն, որ ուղղակի ժողովրդական հանգանակութեամբ կամ օժանդակութեամբ պահուէր ու պահպանուէր և կամ որի վերայ հայ հասարակութիւնը իւր իրաւունքը տարածելու համոզմունքը ունենար: Սովորաբար եկեղեցական կալուածները կամ դրամագլուխները առաջնորդների և վարդապետների իրաւասութեան տակ էին. եկեղեցեաց բակերում եղած ուսումնարանները նմանապէս: Այդ առաջնորդները կամ վարդապետները իրանց օգնական, խորհրդակից կամ թշնամի ունէին տեղացի հայ աղաներին կամ իշխաններին, որոնք շատ քիչ է պատահած, որ ժողովրդի ձեռքով ընտրուած լինէին, այլ իւրեանց խորհրդակցութեան իրաւունքը մեծ մասը ձեռք են բերած իւրեանց հարստութեան կամ քաղաքական դրութեան շնորհիւ: Բաւական էր, օրինակի համար, որ այսինչ աղան կարինի տաճիկ կուսակալի սեղանաւորը (գէրաֆ) լինէր, այնուհետև նա ոչ միայն տեղական եկեղեցեաց հոգաբարձուն էր, այլ և անհաշիւ կառավարում էր բոլոր եկեղեցապատկան կայքը և ուզած ժամանակը, երբեմն ընդդէմ ժողովրդի կամաց, փոխում էր տեղացի առաջնորդին: Դեռ հեռու չեն այն ժամանակները, երբ եպիսկոպոսները և բարձրաստիճան եկեղեցականք այդ ազգային ի շ խ ա ն անուանեալ պարոնների առաջ ձեռքերը կուրծքին կանգնած էին խօսում......

Անգութ ժամանակը, շատ բան խլելով հայից, խլել է և իշխանութեան կամ լաւ ևս ասել իւր ժողովրդի առաջ իշխան լինելու արտօնութիւնը: Գոնէ մենք չգիտենք ոչ մի հայ գերդաստան որ պատմաբանօրէն կարողանար հաստատել իւր իշխանական ծագումը յընթացս վերջին երեք չորս հարիւր տարուայ: Եւ ժողովուրդը լաւ գիտէ, որ մինչև վերջին ժամանակները, աղաները և իշխանները յառաջ են եկած հարստութեան պատճառաւ, բաղդի բերմունքով: Այս զգացմունքը միշտ նկատելի է լինում հայ հասարակութեան մէջ, չնայելով որ նա խոնարհեցնում է իւր գլուխը իրան վերայ իշխանութիւն գործ դնող հարուստ պարոնի առաջ: Սակայն դոյն այդ հասարակութիւնը հարկ եղած ժամանակ միշտ փորձում է թօթափել իրանից իշխանի դրած լուծը և այս դէպքերում իւր հայազգի մեծատան ցոյց տուած բռնութիւնը աւելի անտանելի է համարում հայն, քան թէ օտարազգաց հարստահարութիւնը կամ տուած նեղութիւնները:

Աւանդութիւն է գուցէ, որ պատմում են, երբ թէ Պօլսոյ քանի

մի մեծանուն տոհմերը, որոնք ամիրայի պատուանունը ժառանգաբար պահած էին իւրեանց մէջ, յառաջ եկած լինէին հինօրեայ հայ իշխանական ցեղերից։ Այս մասին մեր անձնական յետազօտութիւնները մի պատմական հաստատ հիմք չգտան։ Ինչ և իցէ Տաճկաստանի մէջ կան քանի մի գերդաստաններ, որոնք 150 կամ 200 տարուայ ծագումն և իշխանական յարգանք ունին։ Ամիրայութիւնը, որ Արաբացոց ժամանակները իշխանական որոշ իրաւունքներ էր տալիս, Օսմանեան ժամանակները լոկ պատուանուն դարձաւ և այնքան արժան, որ մինչև անգամ կուսակալները առանց սուլթանի գիտութեան, իւրեանց հաճոյ երևցած մարդկանց ամիրայութեան պատուանուն էին շնորհում։ Շատերը հայերից արհեստագործութեամբ և մանաւանդ սեղանաւորութեամբ յառաջ եկած և ամիրայութեան հասած են և ոմանք դոցանից այդ պատուաւոր անունը կարողացած են պահել ժառանգաբար, իսկ ոմանք — ոչ։ Մի քանի ամիրայական տոհմեր ներկայ դարու մէջ իւրեանց հարստութեամբ, ազգասիրութեամբ և մարդասիրութեամբ հանրածանօթ են և ընդհանուր յարգանք և սէր վայելած, օրինակ, Տատեանները, Պալեանները, Տիւզեանները և այլք. սակայն ամիրաները և աղաները մեծ մասամբ այնպիսի ոգէտ և գռեհիկ մարդիկ են եղած, որ ժողովրդին կեղեքել, բռնանալ նորա վերայ, մատնել նորան և միով բանիւ ժողովրդին նեղութիւն տալ մինչև անգամ մեծ մարդութիւն և արժանաւորութիւն են համարած։ Ժողովուրդը, ինչպէս երևում է, երկար ժամանակ տանում էր ամիրաների և աղաների բռնութիւններին և պատճառ էր փնտռում, եթէ ոչ վրէժ առնելու, գոնէ անձամբ ազատուելու։ Հետագայ անցքը տեղիք տուեց ամիրաների և ժողովրդի մէջ պատերազմի ծագելուն և վերջինների յաղթութեանը։

Մինչև երեսուն թուականները Պօլսոյ մէջ հայք չունէին մի որ և իցէ բարձրագոյն և մանաւանդ գիշերօթիկ դպրոց, այն ինչ այդ բանի պահանջը շատ մեծ էր։ Այս մասին Պօլսոյ միւս քրիստոնեայ ազգութիւնները հայերից յառաջադէմ էին գտնուած։ Այն ժամանակուայ նշանաւոր հայ իշխան Պալեան Կարապետ ամիրան, որ արքունի ճարտարապետ էր, քանի մի ընկերակիցներով յառաջ տարաւ բարձրագոյն դպրոցի հիմնարկութեան գաղափարը և շուտով յաջողեցաւ իրան Պօլսոյ Իւսկիւտար թաղում Երուսաղէմապատկան մի շինութիւն նորոգել և երկյարկ, բազմասենեակ դպրոց

կառուցանել «Ճեմարան սուրբ Երուսաղէմայ» անունով, որ և բացուեցաւ 1839 թուին: Որոշած էր, որ Պօլսոյ միւս երկրորդական ուսումնարաններից աւարտող աշակերտները պիտի շարունակէին իւրեանց գիտութիւնը յիշեալ Ճեմարանի մէջ: Հարուստները (գիշերօթիկներից) վճարում էին տարեկան 3000 ղուրուշ, իսկ չքաւորների պահելու համար վճարում էր Երուսաղէմայ վանքը տարեկան մինչև 120,000 ղուրուշ: Սակայն այս եկամուտը չէր կարող բոլորովին ապահովացնել Ճեմարանը, վասնորոյ Պօլսոյ Յակոբ պատրիարգը սահմանեց, որ ամէն մի ճանապարհորդ (իսկ այն ժամանակ հայ ճանապարհորդները պատրիարգարանից պիտի առնէին իւրեանց անցագիրը) անցագիր առնելիս վճարէ յօգուտ Ճեմարանի 5 ղուրուշ: Պատրիարգարանի մէջ պիտի հիմնուէր մի արկղ «գանձարան» անունով, ուր պիտի ժողովուէր յիշեալ տուրքը, և այստեղից պիտի հոգացուէր թէ Ճեմարանի, թէ միւս դպրատանց, և թէ հիւանդանոցի և աղքատների պէտքը: Այդ արկղի վրայ հոգաբարձու նշանակեց 24 անձինք, որոնցից երկուսը ամիրայ սեղանաւորներից էին, իսկ մնացած 22-ը գլխաւոր արհեստաւորներից: Պալեան Կարապետ ամիրան սեղանաւոր ամիրաների մէջ թշնամիներ շատ ունէր. այս վերջինները իրանց ոխը Ճեմարանից էին ուզում առնել, վասնորոյ սոքա սկզբում խոստացան մի մի որդեգիր պահել յիշեալ դպրոցում, բայց յետոյ հրաժարուեցան տարեկան թօշակը վճարելուց և բացի դորանից աշխատեցան որ Երուսաղեմայ պատրիարքն ևս իւր խոստացած 120,000 ղ. չվճարէ: Սակայն Պալեանի կողմն անցաւ Յակոբ պատրիարգը, որ շատ նեղացած լինելով ամիրաների բռնակալութիւններից, միջոց էր փնտռում ժողովրդին յաղթող հանդիսացնել և միանգամայն հաւասարեցնել նորան գոռոզ սեղանաւորների հետ: Պատրիարքը քանի մի անգամ հրաւիրեց իւր մօտ ամիրաներին, որպէս զի հոգ տանեն մի 80,000 ղուրուշ ժողովելու, որովհետև քաղաքի բոլոր ազգային հիմնարկութիւնները խղճալի էին և դրամի պէտք ունէին. ամիրաները ինքեանք չընդունեցին պատրիարքի հրաւէրքը և դրամ տալուց հրաժարուեցան: Վշտացած պատրիարքը հրաժարուեցաւ իւր պաշտօնից և ամիրաների խնդրանօք տեղը անցաւ նախկին պատրիարքը Ստեփանոս եպիսկոպոսը, որ միանգամայն ամիրաների կողմն էր:

Ճեմարանը հետզհետէ ընկնում էր և 1841 թուի սկզբներում հարցաքննութեան հանդիսին դպրոցի տնօրէնը մի ատենաբանու-

թիւն արաւ, որի մէջ նկարագրեց Ճեմարանի ողորմելի դրութիւնը։ Այդ ճառը ժողովրդի վրայ մեծ ներգործութիւն արաւ և ներկայ եղողները «Մ ի ա կ ա մ» անունով ընկերութիւն կազմեցին՝ ամիրաներից անկախ Ճեմարանը հաստատ պահելու մտքով։ Պատրիարքը դէմ կացաւ այդ ընկերութեան և Ճեմարանի անունով ժողոված տուրքը հիւանդանոցին յատկացրեց։ Բանը հասաւ այն տեղ, որ Ճեմարանի աշակերտները սուլթանին խնդիրք տուին, որ դպրոցի յարատեւութեան համար 24 արհեստաւոր հոգաբարձուները հաստատուին իրանց պաշտօնի մէջ և ազգային ելումուտքը նոցա ձեռքով լինի։ Բարձրագոյն Դուռը համաձայնեցաւ և հրամայեց ընտրել հոգաբարձուներ։ Այս ընտրութեան համար նախ արհեստաւորները իրանց միջից առանձին վկայականներով երեսփոխաններ պիտի ընտրէին և ապա սոքա իրանց միջից 24 հոգաբարձու։ Արդէն ընտրութիւնները վերջացան և տէրութեան կողմանէ հաստատութեան ֆ է ր մ ա ն էին ստանում, որ ամիրաներից հաշիւ պահանջէին, սակայն այդ սեղանաւորները կարողացան յետ պահել տալ ֆէրմանը և ինքեանք ծիծաղում էին ժողովրդի վերայ։ Այս ժամանակ չքաւորութեան պատճառաւ Ճեմարանը փակուեցաւ։ Ժողովուրդը նորից դիմեց սուլթանին և սա յանձնեց Բարձրագոյն Դռանը քննել գործը։ Ամիրաների դրդմամբ տէրութիւնը ուզեց բանտարկել թէ 24 հոգաբարձուներին և թէ աղերսագիր ստորագրողներին։ Այս բանը լսելով, արհեստաւորները անմիջապէս փակեցին իրանց խանութները և մօտ 300 հոգի՝ ոմն գլխեպան խակէնտէր անունով պարոնի առաջնորդութեամբ Բ. Դռանը դիմեցին և իրանց ընկերների ազատութիւնը պահանջեցին։ Արտաքին գործոց նախարարը, որ գործը քննողն էր, վախից արձակեց ամենքին, բայց քանի մի օրից յետոյ ժողովրդին գլխաւորապէս դրդող անձինքը աքսորուեցան, Ստեփաննոս Պատրիարքը ընկաւ, և այս պաշտօնը դարձեալ ամիրաների ընտրութեամբ յանձնուեցաւ Աստուածատուր եպիսկոպոսին։ Չանցաւ երկու ամիս, արհեստաւորները նորից բողոք տուին սուլթանին, յայտնելով որ իրանց միտքն է ոչ թէ տէրութեան դէմ մաքառել, այլ ամիրաների լուծից ազատուել. Ժողովուրդը երդուել էր ամեն նեղութիւններ տանել, բայց յաղթող գտնուել։ Այս երդումը ամիրաներին վախ պատճառեց և սոքա քայլ արեցին ժողովրդի հետ հաշտուելու։ Տէրութիւնը առանձին հրովարտակաւ ընտրեց 27 արհեստաւորաց մի ժողով, որ ազ-

գոյին ելեւմուտքի հոգաբարձու և տեսուչ դարձաւ: Այդ հրովարտակը հրամայում էր պատրիարքին և ամիրաներին չխառնուել ամենևին յիշեալ հոգաբարձուաց կարգադրութեանց մէջ:

Հիմա արհեստաւորաց հոգաբարձութիւնը պիտի մատակարարէր պատրիարքարանը, քաղաքի վարժարանները և դպրոցները, հիւանդանոցը և այլն և այլն: Դրամի հարկաւորութիւնը մեծ էր, իսկ դրամ չկար: Մի տարի հազիւ կառավարելուց յետոյ յիշեալ հոգաբարձուք ստիպուած էին հրաժարական տալու և խնդրելու ամիրաներին որ նորից իրանք յանձն առնեն ազգային ելեւմտից հոգատարութիւնը: Այս անգամ ևս արքունական հրամանաւ ազգային արկղի հոգաբարձութիւնը ամիրաներին յանձնուեցաւ և որովհետև Աստուածատուր պատրիարքը չէր կարողանում հաշտեցնել ժողովրդին ամիրաների հետ, վասնորոյ պարտաւորուեցաւ հրաժարական տալ, և պատրիարք ընտրուեցաւ Մատթէոս եպիսկոպոսը (վերջը կաթողիկոս): Նոր պատրիարքը հաշտեցրեց ազգային կուսակցութիւնները և 30 հոգուց բաղկացած վարչութեան մի ժողով կազմեց, 16ը դոցանից ամիրաներ էին և 14ը հասարակ ժողովրդից: Չնայելով այս ժողովին, Մատթէոս պատրիարքը ամեն յարմարաւոր դէպքերում անձնիշխան էր վարվում և աւելի ժողովրդի կողմն էր պահում, քան թէ ամիրաների:

Մինչ այս հաշտութիւնը կարողացաւ կայանալ ազգիս մէջ, Իւսկիւտարի ճեմարանի շինութիւնը 1844 թուից սկսած անիրաւաբար անցած էր տէրութեան ձեռքը, որ արքունի զօրաց հիւանդանոց էր դարձրել: Մատթէոս պատրիարքը կարողացաւ այդ շինութիւնը նորից ազգին դարձնել՝ և 40 թոշակաւոր ու 10 աղքատ անթոշակ տղայ ժողովելով, 1846 թուին բացեց ճեմարանը, վերատեսչութիւնը յանձնելով Օտեան Պօղոս աղային: Շատ ուրիշ ազգային գործեր ևս յառաջացրեց յիշեալ պատրիարքը և մեծ մասը առանց ամիրաների հետ խորհրդակցելու, որ վերին աստիճանի վշտացնում էր ազգի «իշխաններին»: Ամիրաների բարկութիւնը Մատթէոսի դէմ բոլորովին յայտնուեցաւ, երբ 1846 թուի վերջին գաւառական առաջնորդների փոփոխութեան խնդիրը բարձրացաւ. ամիրաները, ըստ հին սովորութեան, կամենում էին իւրեանց հաճոյից համեմատ առաջնորդներ փոփոխելու իրաւունք ունենան, բայց Մատթէոս պատրիարքը պնդում էր, որ այդ իրաւունքը գաւառացի ժողովրդինն է, որ իւր կամքը պիտի յայտնէ պատրիարքին և

սորանից հաւանութիւն գտնէ, և թէ հոգևոր գործերում աշխարհական ամիրաները իրաւունք չունին խառնուելու: Թէ ինչ աստիճանի մեծասիրտ էին ամիրաները և ինչպիսի չնչին պատճառներից դրդուած թշնամանում էին դոքա պատրիարքի հետ, կարելի է հասկանալ օրինակի համար հետագայ անցքից: Այս միջոցներում շատ նշանաւոր էր Պօլսոյ հայոց մէջ Ճէզայիրլեան Մկրտիչ ամիրան, որ բարեկամ էր համարվում տէրութեան նախարարների և մեծամեծաց հետ. սա Մատթէոս պատրիարքին պաշտպանում էր և այդ էր պատճառը, որ միւս ամիրաները իւրեանց թշնամութիւնը յառաջ տանել չէին կարողանում: Ճէզայիրլեանի հայրը վախճանեցաւ և սորա թաղման հանդիսին պատրիարքը տկարութեան պատճառաւ չկարողացաւ ներկայ գտնուիլ: Այս բաւական էր որ Ճէզայիրլեանն ևս Մատթէոսի թշնամեաց կողմն անցնի, որոնք արդէն մտածում էին պատրիարքին հրաժարեցնել: Սակայն վերջինս իւր կողմն ունէր ժողովրդի ընդհանուր համակրութիւնը և ամիրաները՝ անցկացած օրինակները աչքի առաջ ունենալով, համարձակ չէին կարող ներգործել: Մի ելք մնաց վրէժխնդիր լինելու, այն է սահմանափակել պատրիարքի իրաւունքները կրօնական և քաղաքական ժողովներով: Եւ այս բանը ամիրաները յաջողութեամբ գլուխ տարան տէրութեան ձեռքով: 1847 թուի մայիսի 3 և 20-ին արքունական հրովարտակների հիմանց վրայ եկեղեցականներից, ամիրաներից և արհեստաւորներից ու վաճառականներից գումարուած ժողովը պատրիարքի նախագահութեամբ ընտրեց կ ր օ ն ա կ ա ն ժողով 14 եկեղեցականներից բաղկացած և ք ա ղ ա ք ա կ ա ն ժողով 20 աշխարհականներից: Կրօնականը կոչուեցաւ Հ ո գ և ո ր ժողով և կայացած էր 1 եպիսկոպոսից, 4 վարդապետներից և 9 աւագ քահանաներից: Իսկ քաղաքական ժողովը, որ և Գ ե ր ա գ ո յ ն կոչուեցաւ, կայացած էր 2 Տաճկան արքունի վառօդապետներից, 2 Պալեան արքունի ճարտարապետներից և 5 ուրիշ ամիրայ սեղանաւորներից—ընդամենը 9 ամիրաներից և 11 վաճառականներից, որոնց մէջ կային ոսկերիչ, ժամագործ, ղազազ, չուխաչի, հացագործ և այլն և այլն: Երկու ժողովների նախագահն ևս պատրիարքն էր նշանակուած: Ամեն երկու տարին մի անգամ յիշեալ ժողովների անդամների փոփոխութիւն պիտի լինէր և տէրութեան հրովարտակով հաստատուէր ընտրութիւնը: Հոգևոր ժողովը ամեն հինգշաբթի օր պիտի գումարուէր պատրիարքարանում և դորա իրաւունքն էր ա-

առաջնորդները փոփոխել, սոցա մէջ ծագած վէճերը քննել, փաշաների հարստահարութիւններից կամ օտարազգի անիրաւ պահանջներից պաշտպանել, գաւառների և մայրաքաղաքի մէջ ծագած կրօնական խնդիրները լուծել, եկեղեցեաց պայծառութեանը հոգ տանել ու երբ որ խնդիրը քաղաքական դարձաւ՝ անմիջապէս պատրիարքի ստորագրութեամբ գրաւոր հաղորդել քաղաքական ժողովին: Գերագոյն քաղաքական ժողովը պիտի գումարուէր պատրիարքարանում ամէն երեքշաբթի օր և պարտաւոր էր խնամք տանել հիւանդանոցների, դպրոցների, աղքատների ու որբերի մասին և մնացած ամէն տեսակ ազգային քաղաքական գործերը հոգալ: Ժողովները իւրեանց գործը սկսեցին:

Այս տնօրէնութիւնից գոհ էին ամիրաները, կարծելով թէ Մատթէոսից վրէժ առան, բայց և ուրախ էր Մատթէոսը գիտենալով, որ այնուհետև ընտրութիւնը ժողովրդից է կախուած: Շուտով զգալի եղաւ իշխանների համար պատրիարքի խաղացած խաղը և նոքա վճռեցին որ և իցէ կերպով հրաժարեցնել Մատթէոսին: Քանի մի անգամ հայ մեծամեծները առաջարկեցին իրան ինքնակամ հրաժարական տալ, բայց պատրիարքը չհամաձայնեցաւ. վերջապէս այդ առաջարկութիւնը եղաւ տէրութեան ձեռքով և Մատթէոսը 1848 թուին հրաժարական տուեց: Բայց այդ վսեմ պաշտօնը ընդդէմ ամիրաների կամքին և լոկ ժողովրդի ցանկութեամբ յանձնուեցաւ Նախկին պատրիարք Յակոբոսին: Սորա օրերով Տաճկաստանի հայք միանգամայն դպրոցներ բանալու վրայ էին և ժողովրդի ու իշխանների մէջ եղած գժտութիւնը նորից երևան չելաւ: Սակայն Իսկիւտարի Ճեմարանը Յակոբ պատրիարքը ստիպուեցաւ փակել դրամական ապրուստի չքաւորութեան պատճառաւ և տեղափոխել Նէտի-Գուլէի Ս. Փրկչի վանուց ուսումնարանը, ուր արդէն բաւականին որբ ու աղքատ տղայք ևս կային ժողովուած: 1858 թուի հոկտեմբերին Յակոբ պատրիարքը ծերութեան պատճառաւ հրաժարական տուեց և տեղը ընտրուեցաւ Բրուսայի առաջնորդ Գէորգ եպիսկոպոսը, որ ժողովրդի վերաբերութեամբ միանգամայն Մատթէոս և Յակոբ պատրիարքաց հակառակ ընթացքը բռնեց: Պէտք է ասել, որ թէ հոգեւոր և թէ ազգային Գերագոյն ժողովները մի որոշ կանոնադրութիւն չունէին. քանի մի անգամ փորձեր եղան ներքին վարչութեան վերաբերեալ այս և այն օրէնքները հաստատելու, բայց մեծ մասամբ անյաջող եղան: Հետևաբար չարութիւնները և օրինազանցու-

թիւնները անպակաս էին. ժողովքների մէջ տիրողը և ձայն յա-ռաջ տանողը նա էր, ով որ աւելի բարոյական և նիւթական ոյժ ունէր: Դարձեալ կամ ամիրաներն էին տիրապետում կամ պատրի-արգը: Գաւառացոց գործերը քննում էր ժողովը: Բայց գաւառացիք ժողովի մէջ ներկայացուցիչ չունէին: Գէորգ պատրիարքը, որ ար-դէն յայտնի էր հակաժողովրդասէր բնաւորութեամբ, հասցրեց այն տեղը, որ ամիսներով ժողովներ չէին նշանակվում, և նշանակուած ժամանակ ևս կռիւներից փախչող բարեմիտ երեսփոխանները չէին ներկայանում և ազգային հոգսերին ճար տեսնող ոչ ոք չկար: Շա-տերի մտքին է գուցէ մի ծաղրալի պատկեր, որ տպուեցաւ Պօլսոյ տաղանդաւոր Սվաճեանի Մեղու-ի մէջ 1859 թուին: Պատկերը ներկայացնում էր մի դահլիճ, աթոռները շարած և մէջը մէկ երկու երեսփոխաններ ընկերներին սպասելուց քուներնին տարած. պատկերի վրայի մակագրութիւնն էր «երկու ամիսէն ի վեր ընդհա-նուր ժողովները»:

Մինչ դեռ հայոց ազգային գործերը, շնորհիւ պատրիարքի, այդ ցաւալի դրութեան մէջ էին, արքունական Խաթթի-Հիւմայիւնից արդէն բաւականին օգուտ էին քաղում յոյները, հայ կաթոլիկները և տէրութեան միւս հպատակները: Նոքա ժողովքներ ունէին, քուէով երեսփոխաններ էին ընտրում և իրանց ազգային գործերը յա-ռաջ տանում: Հայոց այդ յետադէմ վիճակը շատ ցաւ էր պատ-ճառում քանի մի հայ երիտասարդական խմբերի, որոնց մէջ յղա-ցաւ միտք՝ համաձայն տէրութեան շնորհած արտօնութեանցը մի այնպիսի կանոնադրութիւն ստեղծել, որ բովանդակէր իւրեան մէջ թէ ազգի իրաւունքները և թէ պարտականութիւնները մաս-նաւորի դէպի ազգը և ազգի դէպի մասնաւոր անհատները: Այդ կա-նոնադրութիւնը պիտի որոշէր և գաւառացոց իրաւունքները, պիտի յայտնէր երեսփոխանութեան և քուէարկութեան պայմանները, պի-տի հաստատէր զանազան խորհուրդներ, դիւաններ, և պարզէր ընդ-հանուր ազգային ժողովի նշանակութիւնը: Ինչպէս երևում է 1870 թուին տ. Ռուսինեանի ընդհանուր ժողովի մէջ խօսած մի ճառից, մի վաղվաղուն մեծատուն երիտասարդ, Նիկողայոս Պալեան, դեռ ևս քառասուն թուականին Եւրոպայում պտտելիս, փորձիշատէ ուսումնա-սիրած լուսաւորեալ ազգերի սահմանադրական օրէնքները. այս անձին մէջ առաջին անգամ յղացել է գաղափար Տաճկաստանի հայոց հա-մար ևս մի այնպիսի կանոնադրութիւն ստեղծել, որ ընտրողական և

ազատական սկզբանց վերայ հիմնուած, միանգամայն համապատասխանէր ազգային յառաջադիմութեան բարձրագոյն ձգտմանց: Ցիսունական թուականներին Նիկողայոս Պալեանը, արքունի ճարտարապետի բարձր պաշտօնը կրելով, չէր դադարում կանոնադրութիւն ստեղծելու յիշեալ գաղափարը մշակելուց, և իրան այս գործի մէջ համակրող գտաւ քանի մի ուսումնական երիտասարդներ՝ Գրիգոր Օտեանին, Ռուսինեանին, Աղաթոնեանին, և այլոց, որոնց հետ միասին կազմեցին մի կանոնադրութիւն, Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ ի ւ ն ա զ գ ա յ ի ն անունով:

Այդ կանոնադրութիւնը, որ միանգամայն խաթթտի-հիւմայունի վերայ հաստատուած էր և տէրութեան շնորհած արտօնութեանց արտայայտումն էր, պէտք է պատրիարքի ձեռքով Գերագոյն ժողովի քննութեանը ենթարկուէր ու յետոյ ուղարկուէր տէրութեանը հաստատութեան համար: Գէորգ պատրիարքը, որ ազգային խնդիրների մէջ միշտ հակառակ էր գալիս ժողովրդական իրաւանց, ցանկութիւն ունէր առաւել հին եէնիչերական կարգուկանոնները վերականգնել, քան թէ իւր իրաւունքները և ձայնը ստորադրել մի ազգային ժողովի. այս պատճառաւ ահա նա դէմ դրաւ սահմանադրական կանոնադրութեանը, ներկայացնելով դորան իբրև մի ազգամիաս գործ: Արդէն ժողովրդի համբերութիւնը հատել էր Գէորգի ընթացքի պատճառաւ և այս անգամին նորա յամառութիւնը այլ ևս տանելի չէր: Ժողովուրդը պատրիարքի դէմ քանի մի ցոյցեր արաւ, պահանջելով որ հրաժարական տայ, բայց Գէորգը բռնի ուզեց վարել պատրիարքութիւնը, մինչև որ Բ. Դռնից իրան քաղաքավարի առաջարկութիւն եղաւ հրաժարել: Ապրիլի 21-ին 1860 թուին ժողովրդից չսիրուած Գէորգը հրաժարական տուեց ու պատրիարգական աթոռը անցաւ Ադրիանապոլսեցի Սարգիս եպիսկոպոսի ձեռքը:

Զնայելով Գէորգի հակառակութեանը՝ Սահմանադրական կանոնադրութեան հաստատութեան գործը յառաջ էր գնում. Ն. Պալեանը Բ. Դռան բարեհաճութիւնն ստացել էր, իսկ ազգի կողմից յիշեալ կանոնադրութիւնը խմբագրելու համար ընտրուած էր մի յանձնաժողով, որ կայանում էր մի եպիսկոպոսից, մի վարդապետից, երեք քահանաներից և 14 աշխարհականներից:

Նորընտիր Սարգիս պատրիարքը՝ 1860 թուի մայիսի 14-ին հաստատուելով իւր պաշտօնի մէջ, նոյն մայիսի 24-ին մի մեծ և

ընդհանուր ժողով գումարեց, ուր ներկայ գտնուեցան ազգիս բոլոր նշանաւոր անձինքը թէ հոգեւորականների և թէ աշխարհականների կողմից. ներկայ էր և Ծերունի Յակոբ նախկին պատրիարքը և միայն հրաժարեցրած պատրիարք Գէորգը չկար: Այստեղ, ահագին բազմութեան առաջ, Սահմանադրական անուանեալ յանձնաժողովը կարդաց իւր խմբագրած կանոնադրութիւնը և ապա դարձաւ դէպի պատրիարքն ու հոգեւորական դասը և հարց առաջարկեց՝ թէ արդեօք այդ կանոնադրութեան մէջ կա՞յ ինչ ընդդէմ կրօնի, եկեղեցու և կամ եկեղեցական կանոնաց: Ներկայ գտնուող կրօնականները հաւանութեամբ ընդունեցին յիշեալ կանոնադրութիւնը, որ նոյն օրը մազմաթիւ ստորագրութեամբ հաստատուեցաւ ազգի կողմից: Այդ կանոնադրութիւնը, որ յետոյ տէրութեան կողմից ևս հաւանութիւն գտաւ, կրում է Տաճկաստանի Հայոց Ազգային Սահմանադրութիւն անունը:

1828 և 1829 թուին Տաճկաց և Ռուսաց մէջ եղած պատերազմը և կարնոյ հայոց գաղթիլը դէպի Ռուսաստան, Օսմանեան կայսրութեանը չէ թէ կասկած տուեց հայոց հաւատարմութեան մասին, այլ այնքան զգուշացրեց, որ տէրութիւնը աշխատում էր այնուհետև իւր հպատակ հայերին հեռու պահել ռուսական ազդեցութիւնից: Արդէն այս պատերազմի ժամանակներից սկսած Բ. Դուռը արգելած էր Տաճկաստանի հայոց եկեղեցեաց մէջ Էջմիածնայ կաթողիկոսի անունը յիշատակել և միանգամայն դադարեցրած էր նուիրակների երթևեկութիւնը: Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի ընտրութեանը Տաճկաստանցիք մասնակից չեղան և առհասարակ այդ հայրապետի յարաբերութիւնները պատրիարքաց հետ շատ սառն էին: Այսու ամենայնիւ 1836 թուին սահմանած Ռուսիայի մէջ հայոց եկեղեցեաց վարչութեան կանոնադրութիւնը (պալաժէնիա) չմոռացաւ Տաճկաստանի հայերին ևս կաթողիկոսական ընտրութեան ժամանակ որոշ քանակութեամբ ձայն տալ: Այդ ձայնի իրաւունքը հարկ եղաւ իրագործել — Կարբեցու վախճանելուց յետոյ: Համաձայն վերոյիշեալ կանոնադրութեան, Էջմիածնայ միաբանութիւնը գրաւոր կերպիւ հրաւիրեց Տաճկաստանցի ազգայնոց մասնակցել կաթողիկոսական ընտրութեանը և դորա համար մի ամբողջ տարի ժամանակամիջոց տուաւ: Օսմանեան հպատակ հայերի կողմից յիշեալ

ընտրութեան համար երեսփոխան նշանակուեցաւ Նիկողայոս առաջնորդ կեսարացի Պետրոս վարդապետը, որ և հասաւ Էջմիածին ու Ներսէս Ե Աշտարակցու համար քուէ տուաւ: Ըստ երևութին թէ այս մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ և թէ այս Ներսիսի ընտրութիւնը Տաճկաստանի Հայոց վերայ նշանաւոր ազդեցութիւն արաւ և մինչդեռ Ներսէսը տակաւին Թիֆլիս էր, Պոլսոյ մէջ սկսեցին յիշատակել Էջմիածնայ կաթողիկոսի անունը նախ մասնաւոր կերպով, ապա Մատթէոս պատրիարքը աշխատեց վերցնել տէրութեան արգելքը և 1844 թուից սկսած յիշատակութիւնը ընդհանուր եղաւ Թիւրքիայի մէջ: Պատմում են, որ Մատթէոսը աշխատեցաւ վերցնել յիշեալ արգելքը՝ որովհետև դեռ այն ժամանակներից սկսած կաթողիկոսութեան հասնելու հաստատ միտք ունէր: Սակայն պատրիարքի այդ աշխատանաց հետ միասին վճռեցին, որ Էջմիածնայ նուիրակների երթևեկութիւնը ի Տաճկաստան միանգամայն վերցուի. Պոլսոյ պատրիարքը համարուի իբր փոխանորդ կաթողիկոսի, Էջմիածնայ եկամուտքը սա հաւաքէ և հասցնէ, սուրբ մեռոնը սորա անունով ուղարկուի և սա բաժանէ գաւառների մէջ և այլն և այլն: Նուիրակների վերջացնելովը, պատմում են, Մատթէոսը միտք ունեցաւ իւր պատրիարքութեանը մեծ նշանակութիւն տալ: Ինչ և իցէ, այս իրողութիւնները որ տաճկաց տէրութեան քաղաքականութեան մէջ էին մեկնութիւն գտնում, շատ դուրեկան չէին Էջմիածնայ կաթողիկոսի համար: Ներսէսը առաջինը ցաւ յայտնեց նուիրակների դադարման մասին. Մատթէոս կաթողիկոսը լուռ ու մունջ տարաւ այս խնդրին, գուցէ ինքը իրան մեղադրելով. իսկ այժմեան Գէորգ վեհափառը թէ և փորձ փորձեց այդ նուիրակութիւնը վերահաստատելու, սակայն անյաջող: Պէտք է խոստովանել որ որքան կաթողիկոսների անձնական քաղաքականութեանը ձեռնտու էին այդ նուիրակները, այնքան ևս թէ նիւթապէս և թէ բարոյապէս ժողովրդի համար վնասակար: Սորանով մեկնելու է, թէ ինչու վերջին ժամանակները Պոլսեցիք յամառութեամբ դէմ դրին նուիրակութեանը: Բայց այս մասին տակաւին կխօսենք իւր տեղը:

Ներսիսի կաթողիկոսական գահը նստելու օրից սկսած Էջմիածնայ և Պոլսոյ մէջ յարաբերութիւններ սկսան և Բրուսայի առաջնորդ Գէորգ վարդապետը և Երուսաղէմայ միաբան Դաւիթ վարդապետը Էջմիածին եկան եպիսկոպոս ձեռնադրուելու: Միւս կողմից Ներսէսը, Մատթէոսի պատրիարքութեան բարի համբաւը լսելով,

առիթ ունեցաւ աւելի մօտենալու Պօլսեցոց՝ պատրիարքի համար ադամանդեայ փառաւոր պանակի ուղարկելով։ Որովհետև մինչև այս ժամանակ մի այսպիսի շնորհաբաշխութեան օրինակ չէր եղած, վասն որոյ Մատթէոսը իւր բարեկամների խորհրդով այդ պանակին կրելու համար նախ սուլթանի բարեհաճութիւնը խնդրեց։ Տէրութիւնը թէև արգելք չեղաւ, բայց գուցէ այդ պարգևի ազդեցութիւնը նուազեցնելու համար, ինքը ևս վեց հատ պատուանշաններ ուղարկեց պատրիարքին, որ իւր իրաւասութեան տակ եղած առաջնորդներին բաժանէ։ Սակայն Ներսէս դորանով ևս չբաւականացաւ. Հայրապետը Զմիւռնիայի մեծ հրդեհի լուրը առնելով, շտապեց օգնելու այն տեղի Հայերին 1000 պօլուիմպէրիալ ուղարկելով, դրամական օժանդակութիւն տուեց և Զմիւռնիայի մէջ հաստատուած Սիւնեաց անունով ուսումնական ընկերութեանը։ Բացի այդ՝ Ներսէս քաջալերում էր Պօլսեցոց օրհնութեան կոնդակներով, Մատթէոս և Յակոբ պատրիարքներին, իբր առանձին պատիւ, կաթողիկոսական կոնքեռներ պարգևեց, և նոցանից փոխադարձօրէն զանազան ընծաներ ստացաւ։ Վերջին Արևելեան պատերազմը դադարեցրեց Ներսէսի այդ յարաբերութիւնները, իսկ խաղաղութեան վերահաստատուած ժամանակ Ներսէս այլևս կենդանի չէր։ Տաճկաստանցիք նորից հրաւէր ստացան մի տարուայ մէջ երեսփոխաններ ուղարկել Էջմիածին կաթողիկոսի ընտրութեան, սակայն Պօլսեցիք ոչ ոքի չուղարկեցին, այլ իւրեանց ձայնի իրաւունքը տուեցին Թիֆլիսի երեսփոխաններին, պատուիրելով մի և նոյն ժամանակ քուէ տալ երեք յետագայ եպիսկոպոսներից մէկին այն է՝ կամ Երուսաղէմայ պատրիարք Յովհաննէսին, կամ երբեմն պատրիարք Մատթէոսին և կամ Բրուսայի առաջնորդ Գէորգին։ Ինչպէս յայտնի է, այս անգամ կաթողիկոս ընտրուեցաւ Մատթէոսը, որի անունը նմանապէս սկսուեցաւ յիշատակուիլ Տաճկաստանի հայ եկեղեցեաց մէջ։ Այս եղելութեան հետ միասին Յակոբ պատրիարքը ծերութեան պատճառաւ հրաժարուեցաւ և տեղը անցաւ Բրուսայի առաջնորդ Գէորգը։ Վերջինս՝ կարծելով թէ Ներսէսի շնորհած կաթողիկոսական կոնքերը պատրիարքաց կրելու հասարակ իրաւունք է, փորձ փորձեց ինքը ևս կրելու, բայց Մատթէոս կաթողիկոսը, որ դեռ Պօլիս էր, խստիւ արգելեց այդ բանը։ Անյաջող եղաւ Գէորգ պատրիարքի և մի այլ ձեռնարկութիւնը. սա իբր թէ կամելով աւելի պարզել և որոշել Էջմիածնայ կաթողիկոսութեան և Պօլսեցոց յարաբերութիւնները, շտապեց մի խնդիր

և Առաջարկութիւն անունով ծրագիր պատրաստել, ստորագրել և ստորագրել տալ քանի մի անձանց: Սակայն Գէորգի այդ առաջարկութիւնը, որ ազգի մեծ մասի համար գաղտնի էր, ընդունելութիւն չգտաւ և շատերը գործի էութիւնը իմացան այն ժամանակ, երբ յանկարծ Հնդկաստանի հայք բողոքեցին այդ առաջարկութեան դէմ 1860 թուին Ֆրանսիայի մէջ հրատարակուող Փարիզ անունով հայ թերթի մէջ: Ահա այս յարաբերութեանց մէջ էին Էջմիածնայ կաթողիկոսները Տաճկաստանցոց հետ, երբ վերջինները ունեցան իւրեանց Սահմանադրութիւնը:

Երուսաղէմայ սուրբ տեղերի խնդիրը — որ միանգամայն քրիստոնէական դաւանութեանց միմեանց հետ ունեցած անվայել հակառակութեանց խնդիրն է — միշտ անհանգիստ է արած ոչ միայն մեր ազգը, այլև նոյն իսկ Տաճկաց տէրութեանը մեծամեծ դժուարութեանց մէջ է գցած և մինչև անգամ Արևելեան սարսափելի պատերազմի սկզբնապատճառը կամ պատրուակը եղած է:

Հայոց եկեղեցական պատմութեան ասելովը, մեր ազգային իրաւունքները Երուսաղէմայ և առհասարակ Պաղեստինի մէջ սկիզբն ունին նոյն իսկ Աբգար թագաւորի ժամանակներից, երբ սորա կինը՝ Հեղինէ դշխոյն՝ Երուսաղէմ եկաւ և այստեղ շինութիւններ արաւ: Սուրբն Յակոբ Տեառնեղբայր առաքեալը Երուսաղէմայ արևելեան մասում անշարժ կալուած ունէր. իբր թէ միւս Յակոբոս առաքեալի (որ որդի Զեբեթեայ էր անուանվում) գլուխը կտրեցին Հրէայք, այդ գլուխը Աստուածածնայ ձեռքով թաղուեցաւ յիշեալ կալուածում: Քանի մի ժամանակից յետոյ նահատակուեցաւ և Տեառնեղբայր Յակոբոսը ու սորա մարմինն էլ թաղուեցաւ նոյն տեղը: Տրդատ թագաւորի հրամանաւ յիշեալ առաքելոց գերեզմանի վրայ չորրորդ դարու սկզբում վանք շինուեցաւ սուրբ Յակոբայ անունով և յանձնուեցաւ հայ հոգևորականութեան իբրև ազգային կալուած և սեպհականութիւն: Այս օրուանից սկսած յիշեալ վանքում շարունակ եպիսկոպոս էր նստում, միաբանք կային և ամեն տեղից հայ ուխտաւորներ էին գալիս: Մի և նոյն ժամանակ Երուսաղէմայ մէջ նստում էր յոյն հայրապետ, որ ընդհանուր Պաղեստինի քրիստոնէից կառավարում էր և նախնի դարերու չորս գլխաւոր աթոռակալներից մէկն էր համարվում: Երբ որ Քաղկեդոնի ժողովից յետոյ

Հայոց և յունաց մէջ կրօնական վէճեր ծագեցան, յոյները սկսեցին հալածել հայերին Երուսաղէմի մէջ գլխաւորապէս Ծննդեան և Ջատկի տօները միասին չկատարելու համար: Դեռ ևս VI դարում Հայ նախարարները եօթը կենդինար դրամ (մօտ 5000 ռուբլի) ուղարկեցին Բիւզանդիոնի կայսեր՝ խնդրելով գրել Երուսաղէմ, որ հայերին և սրանց հետ միասին՝ Աղուանից՝ չնեղացնեն: Այսու ամենայնիւ յունաց և հայոց կռիւները շարունակվում էին, մինչև որ 637 թուին արաբացոց օգնութեամբ հայք յոյներից անկախ պատրիարք ունեցան: Այսուհետև, գուցէ քաղաքական պատճառներով հայք աւելի սիրելի էին արաբացոց ամիրապետներին, քան թէ յոյնք: Այդ ամիրապետների ազգին տուած հրովարտակներից երևում են Սուրբ Յակոբայ միաբանութեան թէ իրաւունքները և թէ կալուածների քանակութիւնը: Միևնոյն ժամանակ իմանում ենք որ դեռ ևս VII դարում Ասորիք, Ղպտիք և Հաբէշները իրանց համար Երուսաղէմի մէջ առանձին ներկայացուցիչ կամ պատրիարք չէին ունեցած, այլ հայոց պատրիարքի հովանաւորութեան տակ են գտնուած:

Մինչև տասնումէկերորդ դարը լատինացիք ևս Երուսաղէմայ մէջ պատրիարքութիւն չունէին: 1090 թուին խաչակիրները առաջին անգամ պապի կողմից առաջնորդ դրին այդ քաղաքում և շնորհիւ խաչակրաց քաղաքական իշխանութեան, այդ առաջնորդները մի առժամանակ նշանաւոր դեր էին խաղում և երբեմնապէս հայերին զրկանք պատճառում: Եգիպտոսի սուլթան Սալահատինը, 1187 թուին Երուսաղէմը առնելով, եօթը տարի փակած պահեց Ս. Յակոբայ վանքը, բայց յետոյ նորից հայերին յանձնեց: Կիլիկիայի մեր թագաւորները այդ միջոցում շատ օգնում էին Երուսաղէմայ մէջ հայ միաբանութեան ծաղկելուն: Այդպէս ահա Հեթում առաջի Բէթղեհէմի վանքը վերանորոգեց նոյնպէս: Կիլիկիայի մօտիկութեան պատճառաւ Երուսաղէմայ պատրիարքները մինչև XIII դարու վերջերը ըստ հոգևոր և մասամբ ըստ մարմնաւոր կենցաղավարութեան կախուած էին Ռուբինեան թագաւորներից և Սսոյ կաթողիկոսներից, բայց երբ Օշին արքայի ժամանակները Կոստանդին կաթողիկոսը թագաւորի հրամանաւ պահանջում էր Ս. Յակոբայ միաբանութիւնից հակիլ դէպի հաշտութիւն Բաղկեդոնացոց հետ, այն ժամանակ Սարգիս պատրիարքը, մերժելով այդ հրամանները, ամիրապետից հրովարտակ ստացաւ բոլորովին անկախ պատրիարգ լինելու: Ահա այս է

պատճառը, որ սովորաբար Երուսաղէմայ հայոց պատրիարքութիւնը այս հրովարտակի օրից, այսինքն 1311 թուիցն ենք համարում: Մենք չենք քննել թէ արաբացոց հասցրած նեղութիւնները և թէ յունաց կամ լատինաց հետ ունեցած մեր կռիւները ծագատկի կամ այլ և այլ պատճառներով. բայց աւելորդ չենք համարում յառաջ բերել այն իրողութիւնը, որ 1431 թուին վրացիք կաշառք տալով Եգիպտոսի սուլթանին խլեցին հայոց ձեռքից Գողգոթան, որի փոխարէն Ս. Յարութեան տաճարի մէջ Գողգոթայի յանդիման մի վերնատուն տուեցին, որ երկրորդ Գողգոթա աստւեցաւ:

Ամիրապետները Ս. Յակոբայ վանքի վերայ տարեկան հարկ էին դրած. Աբրահամ Ե պատրիարքի աշխատանօք վերցուեցաւ այդ տուրքը 1450 թուին: Երբ որ Բիւզանդիոնի կործանուելուց յետոյ, Երուսաղէմն էլ 1517 թուին անցաւ Օսմանեանց ձեռքը, սուլթան Սէլիմ Ա տեղեկացաւ այս քաղաքի մէջ ունեցած հայոց իրաւունքների և կալուածների մասին և այդ բոլորը մի հրովարտակով հաստատեց: Թէ և այդ հրովարտակը յաջորդ սուլթանների կողմից էլ վաւերացվում էին, այնու ամենայնիւ Ս. Յակոբայ միաբանները, իրանց իրաւունքները, նա մանաւանդ յունաց հետ ունեցած կռիւների ժամանակ, պաշտպանելու համար պարտաւորուած էին մեծ քանակութեամբ դրամ ծախս անել, որի պատճառաւ XVI, XVII և XVIII դարերում պատրիարքական աթոռը ծանր պարտքերի տակ ընկաւ և միմիայն ընդհանուր ազգի օգնութեամբ Գրիգոր Շղթայակիր պատրիարքի օրերով ազատութիւն գտաւ դրամը վճարելով: Այսու ամենայնիւ ուխտաւորաց նուիրատուութիւնից և ազգի ամեն ծուրեք ցոյց տուած օժանդակութիւնից խրախուսուած, երբեմն երբեմն պատրիարքները նորանոր կալուածներ էին ձեռք բերում կամ վանքեր և մատուններ էին շինում: Երկուսը այդ պատրիարքներից այն աստիճան բարերար հանդիսացան միաբանին, որ դոցա անունները՝ այն է Գրիգոր Պարոնտեառն և Գրիգոր Շղթայակրին պատարագի մէջ մինչև այսօր էլ յիշատակւում են:

Արդէն սուլթան Մահմուտ Բ-ի օրերով Երուսաղէմացոց ստացած արտօնութեանց մասին յիշեցինք մասամբ գործիս սկզբներում: Այստեղ պիտի աւելացնենք, որ ներկայ դարուս սկզբում, նոյն ինքն Մահմուտի հրամանաւ մի առժամանակ հարկ դրուեցաւ Ս. Յակոբի միաբանութեան վերայ, որ և պարտքի տակ գցեց դորան բայց այն ժամանակուայ Երուսաղէմայ Պօղոս պատրիարքը շատ բան ծախեց եկե-

ղեցական զարդերից և պարտքը տալուց յետոյ 1829 թուին ձեռք բերեց Քրիստոսի Սուրբ գերեզմանի վերայ պատարագ մատուցանելու իրաւունքը այն պայմանաւ միայն՝ որ ամենայն օր այդ տեղ պատարագեն նախ յոյնք, ապա Հայք և ապա լատինացիք:

Մինչև այս ժամանակները ամբողջ Եգիպտոսը Երուսաղէմայ թեմ էր համարվում և սորա պատրիարքին ստորադրուած էր ու ինքն ըստ ինքեան մի աննշան դեր էր խաղում: Մէհմէտ Ալի փաշայ ապստամբ կուսակալի օրերով ոչ միայն Եգիպտոսի նշանակութիւնը բարձրացաւ, այլ և այս գաւառի մէջ բնակուող Հայք, փաշայի արտաքին գործոց նախարար Պօղոս բէյ Եուսուֆեանին պաշտպան ունենալով, մի փառաւոր վիճակ ուզեցան ունենալ: Այն օրերը առաջնորդ ունէին նոքա մի Գաբրիէլ անունով վարդապետ, որին աշխատեցան եպիսկոպոս ձեռնադրել տալ: Երուսաղէմայ պատրիարքը նախ ամենևին չուզեց համաձայնել, որ Եգիպտոսի մէջ եպիսկոպոս նստի, ապա, տեսնելով ժողովրդի յամառութիւնը խոստացաւ տալ մի այլ եպիսկոպոս փոխանակ Գաբրիէլի: Սակայն արդէն ուշ էր· պատրիարքի ուղարկած եպիսկոպոսացու Դաւիթ վարդապետին Եգիպտոսի Հայք չընդունեցին, և իրանք բոլորովին բաժանուելով Երուսաղէմից Գաբրիէլին ուղարկեցին Սիս եպիսկոպոս ձեռնադրուելու: Վերջինը դառնալով իւր տեղը՝ անկախ վիճակ հաստատեց և Ս. Յակոբայ ուղարկելիք բոլոր եկամուտքը իւր վիճակին դարձուց: Միմիայն ազգային և հոգևոր գործերում ցայսօր ևս Եգիպտոսի եպիսկոպոսը ստորադրվում է Պօլսոյ պատրիարքին, նման միւս գաւառների առաջնորդներին:

Նոյն այս երեսուն թուականներին Երուսաղէմայ Հայ միաբանքը տպարան հաստատեցին, թանգարան հիմնեցին, քանի մի տարուց յետոյ ժառանգաւորաց դպրոց բացին և քանի մի ուրիշ բարեկարգութիւններ մտցրին:

Մի ժամանակ, ինչպէս պատմական յիշատակները վկայում են, Հայք Երուսաղէմայ մէջ 72 վանք ունէին և բազմաթիւ ժողովուրդ: Այժմ միմիայն 6 վանք ունին և մօտ 100 տուն, այն ևս աղքատ: Միաբանից թիւը այժմ հասնում է 200 ի կամ աւել ու պակաս: Այսու ամենայնիւ Երուսաղէմայ պատրիարքարանը շատ հարուստ է քան թէ Պօլսինը: Ներկայ դարուս առաջին յիսուն տարուայ մէջ, ինչպէս վկայում են, Պօլսոյ հիւանդանոցին, Իւսկիւտարի ճեմարանին, պատրիարքական պարտքերին և այլ և այլ ազգային ծախուց

Երուսաղէմայ պատրիարքարանը նպաստել է մօտ 50,000 քսակ կամ մօտ 1,750,000 ռուբլի (5,000,000 ֆրանք):

Աբդիւլ-Մէճիդի օրերով, այն է քառասուն թուականներին Երուսաղէմայ մէջ հայք անբաւականութիւն ունեցան յունաց հետ: Մինչև այս ժամանակները Բէթլէհէմի մէջ Ծննդեան վանքի բանալին յոյն պահապանի ձեռքին էր, որ թէև պարտական էր ամեն ուխտաւորին, ինչ ազգութեան և լինէր դա, դուռը բանալ, բայց յոյն կոնսամադին (այսպէս էր պահապանի անունը) չէր լսում հայ ուխտաւորների ձայնը և միմիայն պատրաստ էր իւր ազգակիցներին ծառայելու: Շատ համբերելուց յետոյ Երուսաղէմայ պատրիարքը իւր բողոքի ձայնը հասցրեց Մատթէոս պատրիարքի ականջին. վերջինս Պօլսոյ յունաց պատրիարգի և մեծամեծաց հետ նիստեր ունեցաւ ուր վճռեցին որ հետագայ չորս պայմաններից մէկը ընդունուի՝ 1) կամ մի ուրիշ բանալի տալ հայոց, 2) կամ մի այլազգի դռնապան դնել, 3) կամ բաց պահել այն դռները գիշեր ու ցերեկ 4) և կամ այն դրանը կից մի ուրիշ դուռ բանալ հայոց համար: Զնայելով այն վճռին, ոչ մէկը դրանցից չկատարեցին յոյները և խնդիրը բաց մնաց մինչև Արևելեան պատերազմը: Յայտնի է որ քսուննական թուականների սկզբներում Գաղղիան առաջին անգամ ձայն բարձրացրեց սուրբ Տեղեաց վերաբերութեամբ մի քանի իրաւացի և անիրաւացի պահանջներ անելով յօգուտ Երուսաղէմայ լատինական կղերի: Այդ պահանջները, ինչպէս ընդհանուր քրիստոնեայ դաւանութեանց իրաւանց խնդիրը, ամբողջ Եւրոպային քանի մի տարի զբաղեցրեց: Սակայն որովհետև այդ առարկան այս աշխատութեան նպատակից դուրս է, վասնորոյ այսքան միայն հարկ է յիշել, թէ Եւրոպական տէրութեանց ընդհանուր հաւանութեամբ վերոյիշեալ խնդիրը լուծուեցաւ այնպէս, որ Բէթլէհէմի Ս. Տաճարի դռները գիշեր ու ցերեկ բաց մնայ, բայց պահապան դռնապաններ ունենայ:

Ահա այս դրութեան մէջ գտաւ սուրբ Տեղեաց խնդիրը Ազգային Սահմանադրութիւնը:

Ներկայ դարուս սկզբներում Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներում հաստատվում է մի միսիօնարական ընկերութիւն «Պօրտ» անունով: Դորա նպատակն է հ ե թ ա ն ո ս ն ե ր ի ն Քրիս-

տոսի Աւետարանի հետ ծանօթացնել, քրիստոնեայ դարձնել: Այդ ընկերութիւնը բազմաթիւ անդամներ ունի և այնքան մեծ գումարի տէր է, որ տարեկան ծախսը երեք հարիւր հազարից մինչև չորս հարիւր հազար անգլիական լիրայի է հասնում, որ ասել է թէ 2-էն մինչև 3 միլլիոն ռուբլի: Մի և նոյն Ամերիկայում, մի և նոյն նպատակի, թէև տարբեր եղանակներով, ծառայում են և յետագայ ընկերութիւնները՝ 1) Ամերիկայի Աստուածաշունչի (Բրիտանական կամ Լոնդոնի ընկերութիւնից ջոկ է սա) ընկերութիւն, տարեկան մօտ կէս միլլիօն լիրայ ծախսով, 2) Երիցական քարոզչական ընկերութիւն, մօտ 300,000 լիրա ծախսով. 3) Նիւ Եօրքի Տետրակի ընկերութիւն—400,000 լիրայից աւելի ծախսով. 4) Բոստոնի Տետրակի ընկերութիւն—100,000 լիրայ ծախսով և այլն և այլն: Երբ որ Պօրտ ընկերութիւնը միտք ունի մի հեթանոսական (ինչպէս ասում են Ամերիկացիք) աշխարհ գործակատարներ ուղարկել Աւետարանը քարոզելու, իսկոյն յիշեալ Երիցական քարոզչական ընկերութիւնը առաջարկում է իւր ծառայութիւնը լեզուագէտ քարոզիչներ տալով: Աստուածաշունչի ընկերութիւնը անթիւ գեղեցիկ և հասկանալի լեզուով տպած հին ու նոր կտակարան է յանձնում այդ քարոզիչներին, որ դնացած հեթանոսների մէջ ձրի տարածեն: Նիւ Եօրքի և Բոստոնի Տետրակի ընկերութիւնները խնդրում են քարոզիչներից, որ իրանց տպած բարոյական և կիսակրօնական և կամ գիտնական, պատկերազարդ, սիրուն տպած տետրակներից և գրքերից քանի մի հարիւր սնդուկ տանեն հեթանոսներին դարձեալ ձրի բաժանելու և այլն և այլն: Այդպէս ահա չորս հինգ մեծագումար ընկերութիւններ մի և նոյն անձանց—քարոզիչների ձեռքով ոչինչ ծախս չեն խնայում քարոզչութեան գործը առաջ տանելու:

Զարմանալին այս է, որ նախ քան հայերին իմանալը թէ Ամերիկայում յիշեալ ընկերութիւնները կան, դոցա քարոզիչները արդէն գեղեցիկ և մաքուր աշխարհաբար հայերէն գիտէին: Թէ ում ձեռքով և որ ժամանակից սկսած պարապում էին այդ քարոզիչները հայերէնով—դժուարանում ենք ասել: Սակայն այսքանը յայտնի է, որ հայերէն լեզուի վրայ բողոքական քարոզիչները առաջի անգամ Անգլիայի մէջ ուշադրութիւն դարձրին, Բրիտանական Աստուածաշունչի ընկերութեան համար սուրբ Գիրքը նախ գրաբար տպելով, ապա աշխարհաբարի դարձնելով: Պօրտ ընկերութեան ուղարկած քարոզիչները Տաճկաստանի գաւառներից նախ ընտրեցին Պաղես-

տինը, ուր մուտք ունեցան առաջին անգամ 1819 թուին. սակայն այստեղ գուցէ սպասած յաջողութիւնը չգտնելով և միւս կողմից Թիւրքիայի հիւրասիրութիւնից օգուտ քաղելով, 1827 թուին հաս-տան Պօլիս: Մնում էր ընտրել, թէ որ ազգութեան կամ դաւանութեան մէջ սկսելու են գործ իրանց գործունէութիւնը: Խոհեմութիւնը չէր ներել Տաճկաց մոլեռանդութեանը դիպչել, որովհետև անկիրթ Թիւրքի սէրութեան եթէ ոչ պաշտպանութիւնը, գոնէ անտարբե-րութիւնը տակաւին շատ հարկաւոր էր այդ քարոզչաց: Յոյները միանգամայն քաղաքական ձգտումներով զբաղուած էին և այնքան ոգևորուած իրանց օրթոդոքսութեամբ, որ դոցա ոչ մերձենալ կա-րելի էր, ոչ խօսք հասկացնել: Հրէայք այդ ժամանակներն վիճա-կուած էին «Լոնդոնի ընկերութեան Հրէից համար» հասա-րակութեանը, ուրեմն մի և նոյն գործով Պօրտի քարոզիչներն պարա-պելու չէին: Կաթոլիկների քահանայք շատ զգոյշ էին, որ մէկը հա-մարձակուէր նոցա հօտին մերձենալու: Եւ ահա ասպարիզի վրայ մնացին միմիայն Հայք և ասորիք:

Պօրտի միսիօնարները իւրեանց գործունէութիւնը Հայոց մէջ սկսեցին Կ. Պօլսից: Նոքա Բէրա և Պէպէք թաղերում մեծ կա-լուածքներ ձեռք բերին և գեղեցիկ շինութիւններ կանգնեցնելով գիշերօթիկ և ամեն կերպ բարեվայելուչ ու բարեկարգ դպրոցներ բացին, ուր ձրի ընդունեցին հայ աղքատ տղայքը: Այդ դպրոցները բացուած ժամանակ Պօլսոյ մէջ Հայք ոչ միայն գիշերօթիկ դպրոց չունէին, ոչ միայն որբ և անտէր տղայոց սէրութիւն անող չկար, այլև եկեղեցեաց բակերում գտնուած ծաղկոցները կամ վարժա-րանները սակաւաթիւ էին և ամենաթշուառ դրութեան մէջ: Հաս-կանալի է, թէ ինչու հայոց տղայքը սիրով դիմեցին միսիօնարների ձրի դպրոցները, ուր անգլիերէն և գաղղիերէն էին սովորեցնում, մաթեմաթիկայի և բնական գիտութեան դասախօսութիւններ ա-նում, և այլն և այլն: Քարոզիչները սկզբում ամենևին կրօնքի խօսք չէին անում և Հայերի հետ խօսեցած ժամանակ նոցա բերանից անպակաս էին սիրելիս, բարեկամ, եղբայր պատուական, ծառայ եմ, և շատ ուրիշ շողոքորթող բառեր: Փոքր առ փոքր իւրեանց դպրոցների մէջ միսիօնարները պասերը և տօները վերցրին, իբր թէ աշակերտաց յարմարութիւնները փնտռելով: Ոչ ոք բողոքող չկար, վասն զի կրօնքի վերաբերութեամբ կասկած կրող ևս չկար: Քարոզիչները քանի մի քայլ ևս յառաջ գնացին. Նոքա կիւրակէս

դասեր բաց արին, ուր ժողովում էին բեռնակիրների, արհեստաւորների և առհասարակ ստորին դասի ժողովուրդ և այստեղ կարդալ սովորեցնում, աւետարանը աշխարհաբար թարգմանում, պատկերների դէմ խօսում, սրբոց բարեխօսութեան կամ մասունքների նշանակութիւնը ոչնչացնում, և այլն և այլն: Սակայն այս բոլորը այնքան աննշմարելի և արհեստական կերպով էր գործվում, որ ներկայ եղողները միանգամայն հաւանած ու համոզուած էին դուրս գալիս: Միսիօնարները մանաւանդ մեծ կուսակցութիւն և նշանաւոր թւով ժողովուրդ ստացան, երբ աղքատներին, որբերին և հիւանդներին ամսական ռոճիկ էին նշանակում, անգործ մարդկանց համար գործ էին որոնում, իսկ պարապ ժամանակը ապրուստ տալիս: Հայ աղքատ ժողովուրդը՝ սկսած լուացք անող կանանցից մինչև բեռնակիր մշակները՝ մի կերպ պարապութեան սովորեց: Միսիօնարների ռոճկով ապրողները բանուգործներին թողած, կրօնական վսեմ խնդիրների վրայ մեծ հակաճառութիւններ էին բաց անում փողոցների մէջ իրեանց արհեստակից եղբարց հետ: Արդէն բողոքականութիւնը իր արմատը գցել էր հայոց մէջ և կամաց կամաց Պոլսեն դէպի գաւառներն էր տարածվում:

Ամեն օր հայոց մեծամեծաց ականջին հասնում էր բողոքականաց քարոզչութեան ձայնը: Արդէն իշխաններից մի քանիսը մտածում էին, թէ ինչպէս առաջն առնել միսիօնարների քարոզութեանը, բայց ամենայն հնարք անգործադրելի էր երևում, քանի որ հայ աղայք պիտի յաճախէին նոցա գիշերօթիկ դպրոցները: Սորա դէմն առնելու համար Պալեան Կարապետ ամիրան աշխատեց հաստատել առաջին հայ գիշերօթիկ դպրոցը Խասգիւղում «Ճեմարան» անունով: Բայց ճեմարանի ունեցած վիճակը արդէն նկարագրած է վերև: Մնում էր աւելի ազդու միջոցներ ձեռք առնել: Այս մտքով ամիրաները շտապեցին Մարզուանու առաջնորդ Յակոբոս եպիսկոպոսին (որ յետոյ պատրիարք եղաւ) հրաւիրել Պոլիս, որպէս պատրիարքի խորհրդական, որովհետև այն ժամանակուայ Ստեփան պատրիարքը թոյլ բնաւորութեան տէր էր: Այժմ պէտք էր Յակոբոսի կարծիքով խստութեամբ վարուել, սակայն ոչ միսիօնարաց հետ, որովհետև նոքա օտար հպատակ էին և մեր իրաւասութիւնից դուրս. Մնում էր հալածել այն հայերին, որոնց վրայ կասկած կար, թէ միսիօնարների քարոզութեանը համակրում էին: Եւ որովհետև այդ համակրողները մի որոշ ընկերութիւն չէին կազմած, վասնորոյ հարկ

եղաւ խստութիւն գործ դնել այն Հայոց դէմ, որոնք այս և այն պատճառաւ ազատամիտ էին երևում և կամ մասնութեան ենթակայ էին լինում: Այդպէս ահա 1839 թուին պատրիարքական հրամանաւ, առանց քննութեան ու հարցուփորձի, աքսորուեցան դէպի փոքր Ասիա քանի մի այնպիսի վարժապետներ և հոգևորականներ, որոնք ամենևին միտք չէին ունեցած բողոքական լինելու և որոնցից մէկ երկուսը մինչև հիմա էլ կենդանի լինելով, պատիւ են բերում Պոլսոյ հայ կղերին: Այս խստութեամբ էլ չբաւականանալով, Հայոց պատրիարքը հարկաւոր համարեց եկեղեցու բեմից նզովել Լուտերին և նորա «աղանդը»: Յունաց պատրիարքն էլ այդ միջոցին կոնդակով նզովել էր լուտերականաց: Բայց երկուսին էլ աժան չնստեցաւ այդ, որովհետև գործի մէջ խառնուեցաւ Անգլիոյ դեսպան Կանինգը, որ այն օրերում Բ. Դրան վրայ մեծ ազդեցութիւն ունէր: Այս քաղաքագէտը պահանջեց, որ խստիւ պատժուին Բրիտանիայի կրօնքը նզովողները: Յունաց պատրիարքը անմիջապէս փոխուեցաւ, իսկ Հայոց պատրիարքին յանդիմանութիւն եկաւ, և քանի մի ժամանակից յետոյ սա ևս ընկաւ: Առ ժամանակ հալածանքները դադարեցան և միսիօնարք, քաջալերութիւն ստանալով, աւելի համարձակ սկսան յառաջ տանել իւրեանց քարոզութիւնը: Երբ որ չորս հինգ տարուց յետոյ Մատթէոսը պատրիարք եղաւ ու ժողովրդի ամբոխից հետ ունեցած կռիւը փոքր ինչ հանդարտուեցաւ, պատրիարքարանը ակամայ կամօք նորից պէտք է ուշադրութիւն դարձնէր ազգի մէջ բողոքականութիւն տարածուելու գործին: Մատթէոսի պահանջմամբ, 1845 թուին, Պոլսոյ քահանայք հաշիւ ներկայացրին պատրիարքարանին, որ եթէ իրանց ծուխից արդէն 8,000 հոգի հակած են բողոքականութեան: Որովհետև յայտնի էր որ մեծ մասը բողոքականութիւն ընդունող հայերից խաբուած էին միսիօնարների առատ բաժանած ոսկիներից և դրամական օժանդակութիւնից, վասնորոյ Մատթէոս պատրիարքը ևս իւրեանց տանու քահանաների ձեռքով հրաւիրեց մոլորեալներին իւր մօտ և քաղցրութեամբ համոզելով հաստատ մնալ լուսաւորչական կրօնի մէջ, խոստացաւ չքաւորներին նմանապէս ոսկի տալ և օգնել դրամով:

Չքաւոր հայք որքան հեշտութեամբ ընդունած էին դրամի համար բողոքականութիւնը, այնքան հեշտութեամբ ևս դառնում էին իրանց հայրական կրօնքին, երբ միայն կամ միսիօնարք դադարեցնում էին դրամ տալը և կամ հայք խոստանում էին նոյնչափ վճարել: Եկե-

ձուլթիւնից յառաջացած այդ վատ յատկութիւնը, դժբաղդաբար թէ բարեբաղդաբար, մինչև հիմա էլ տիրում է Տաճկաստանի մեր չքաւոր եղբարց մէջ, և ամենևին մի հազուագիւտ բան չէ փոքր Ասիայի կողմերը տեսնել մի հայ գիւղացի, որ իւր կեանքի մէջ, դրամի զօրութեամբ, չորս հինգ անգամ դարձած լինի հայութիւնից ի բողոքականութիւն և բողոքականութիւնից ի լուսաւորչականութիւն:

Այսպէս թէ այնպէս, Մատթէոսը կարողացաւ քաղցրութեամբ յետ դարձնել մօտ 5000 հոգի: Մնացած յամառուածների համար պատրիարքը անդադար, ժամերով քարոզներ էր ասում եկեղեցեաց մէջ և բացի այդ, վճարանութիւն ուղղիների համար Պօլսոյ Մայր եկեղեցու մօտ սենեակ յատկացրեց և Յովհաննէս Տէրոյենց (որ Տաճկաստանի լրագրութեան մէջ Ջամուրճեան անունով ևս յայտնի է) վարժապետին յանձնեց, որ այն սենեակի մէջ ուղղիների հետ վիճէ և լուսաւորչական կրօնի գերազանցութիւնը ապացուցանէ: Պատմում են, որ այս միջոցներով ևս վերադարձան 1500 հոգի և մնացին 1500 ամենայամառները: Սակայն գործը այդպէս խաղաղ չէր վերջանալու: Շատ տեղ հայոց մէջ կռիւներ և մարդասպանութիւններ եղան: Ամենաջերմեռանդ բողոքական հայքը այս տեղ ու այնտեղ վէճի բռնուելով համարձակւում էին իրանց հայրական կրօնը պախարակել, միևնոյնը փոխադարձաբար անում էին հայք, և գործը վերջանում էր արիւնհեղութեամբ: Մատթէոսը Ներսէս կաթողիկոսից պատուէր ստացաւ ամեն կերպ դէմ առնել բողոքականութեան: Նոյնը պահանջում էին շատերը հայերից: Ռուսաց դեսպանը որին նմանապէս հաճելի չէր միսիօնարաց յառաջադիմութիւնը, Մատթէոսի ուշադրութիւնը դարձրեց բողոքականութիւնից սպասելիք վտանգի վերայ: Բ. Դուռը ևս թէ և ուղղակի չէր խառնվում գործի մէջ, բայց մեծ պատրաստականութիւն էր ցոյց տալիս պաշտպանելու և բանտարկելու այն ամենին, որոնց մատնում էր հայ կղերը իբր բողոքականութեան գլխաւորների: Ինքը պատրիարքը շատ յամառ վիճողներին շղթայակապ պահում էր Ս. Փրկչի հիւանդանոցում և շատերին ևս աքսոր ուղարկում: Մի Իզմիրցի հայ քահանայ Վրթանէս անունով, ոչ միայն ընդունած էր բողոքականութիւնը, այլ և քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ պտտելով կատաղի մոլութեամբ ծաղրում և կշտամբում էր լուսաւորչական կրօնը և այն աստիճանի զայրացնում հայոց, որ Մատթէոս պատրիարքը 1846 թուին շրջաբերական կոնդակաւ բանադրեց թէ յիշեալ քահանային և թէ գլխաւոր յամառեալներին: Այդ կոնդակը, բացի այն՝ որ շատ

կծու և փուշ է մրմնջամայն անվայել լեզու էր գործածած, մերժելով բոլոր «բողոքական» անուանեալ Հայերին, պատուիրում էր լուսաւորչականներին վերջացնել նոցա հետ թէ ազգականութիւնը, թէ բարեկամութիւնը և թէ մարդասիրութիւնը, և մինչև անգամ նոցա հետ ոչ խօսել, ոչ առնել, ոչ տալ, և այլն և այլն։ Բնական է, որ հիմա բողոքականները շատ նեղ դրութեան մէջ մնացին։ Սոքա դիմեցին Ամերիկայի Միացեալ Նահանգաց, Պրուսիոյ, Անգղիոյ դեսպանների օգնութեանը, որովհետև իւրեանց աղաչանաց ձայնը Բ. Դրանը լսելի չէր լինում։ Երկար ժամանակ անգղիական դեսպան կանինգը աշխատեցաւ, մինչև որ կարողացաւ Հայ-բողոքականներին մեր պատրիարքի իրաւասութիւնից հանել։ Որովհետև այժմ մնացած էին յամառութեան մէջ ընդամենը 912 հոգիք, վասնորոյ Տաճկաց տէրութիւնը, համաձայնելով նոցա անկախութիւն տալ, այնու ամենայնիւ, սակաւութեան պատճառաւ, չուզեց ճանաչել իբրև մի առանձին ազգութիւն (միլլէթ), այլ յանձնեց Իհտիսաբի-աղասիի անուանեալ նախարարի պաշտպանութեանը։ 1850 թուին բողոքական Հայք անկախ քաղաքական և կրօնական մի հասարակութիւն ճանաչուեցան և Վէքիլ կամ Բրօղխտան-էֆէնդի անունով մի Հայ բողոքական պաշտօնակալ նորանց մեծաւոր դրուեցաւ՝ Բ. Դրան հետ յարաբերութիւններ ունենալու համար։ Վերջապէս 1853 թուին սուլթանի նոր հրովարտակով Հայ-բողոքականներին տուին այն իրաւունքները և արտօնութիւնները, որ Տաճկաստանի միւս քրիստոնեայ դաւանութիւնները վայելում էին այն օրերը։ Այստեղ աւելորդ չենք համարում ցոյց տալ թէ աւելի մօտիկ ժամանակներում որքան է Տաճկաստանի մէջ Հայ-բողոքականաց թիւը։ Դեռ ևս 1869 թուին Պօլսոյ մէջ բնիկ և դաւառացի կային 525 հոգի. Թիւրքիայի այլևայլ դաւառներում 15690. ընդամենը 16,215։ Դոքա ունէին արական սեռի դպրոցներ՝

Տիգրանակերտ	81	գիւղոյ	և	1847	աշ.
Բէրիայ (Հալէպ)	37	—	—	1440	—
Սեբաստիա —	20	—	—	752	—
Բրուսա —	11	—	—	416	—
Կարին —	11	—	—	170	—
Պօլիս —	4	—	—	98	—
Զմիւռնիա —	3	—	—	135	—
Ադրիանուպօլիս	3	—	—	40	—
Ընդամենը	170	—	—	4898	աշ.

Դոյա աղջկանց վարժարաններն են Այնթապի, Բաղէշ, Խարբերդ և Մարսուան, ամեն տեղ մէկ մէկ, ամենը 119 աշակերտուհիներով։

Բացի դոցանից ունին երեք աստուածաբանական դպրոցներ՝ ի Խարբերդ, Մարաշ և Մարսուան 90 աշակերտներով։ Ընդամենը դպրոցների թիւն է 177, իսկ ուսանողների 5107, որ ասել է թէ բողոքականների ընդհանուր թուի մօտ մէկ երրորդ մասը ուսանում է։

Ամերիկացի միսիօնարները բնակում են ի Պոլիս անձինք 8.—Նիկոմիդայ—1.—Բրուսա 2.—Մարսուան 2.—Կեսարիա 2.—Սեբաստիա 3.—Կարին 3.—Բաղէշ 2.—Խարբերդ 3.—Մարաշ 2.—Այնթապ 2.—Ատանայ 1.—Բէլլիս 1.—Անտիոք—1։ Ամենը 33 միսիօնարք։ Սոցանից ձեռնադրած աշխատ Հայ քարոզիչներ—37 *)։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆՑ

(Շարունակելի)

---

*) Այս գործի մէջ ինձ նպաստեցին հետագայ աշխատութիւնները․

1) Պատմութիւն Հայոց. Ա. Պէրպէրեան. Պոլիս. 1871.

2) «Մեղու» շաբաթաթերթ. Յ. Սվաճեանի. 1859 Թուականից․

3) Ատենագրութիւնք Ազգային Ընդհանուր Ժողովոյ. բացումն 1870 ամին. Պոլիս.

4) «Մասիս» լրագիր 1858—1860 Թուականից.

5) «Փարիզ» լրագիր 1860 Թուից․

6) Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղէմի. Բառնաբաս Վ. Գանձակեցւոյ. Պոլիս. 1870.

7) Նկարագիր աղէտից Երուսաղէմի 1820—1860. գործ Միհրդատեանի. Պոլիս. 1860.

8) «Աւետաբեր», շաբաթաթերթ բողոքականաց, 1855 Թուից սկսած․

9) Исторія Турціи 1826—1856, Розена. Спб. 1871 և այլն և այլն․

ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ *)

(ԳՈՐԾ Է. ԼԱԲՈՒԼԷԻ)

Չեմ կարծում թէ պատմութեան մէջ գտնուի մի բան, որ կարողանայ համեմատուիլ Միացեալ-Նահանգների դարմանալի աճման հետ. և արդարև, չըկայ մի երևոյթ, որ դորանից աւելի խորհրդածութիւնների նիւթ տայ: Հերիք եղան երկու դար, որ մի բուռ գաղթականներից տասնևչորս միլիօնի չափ մի ազգ կազմուի, որ, մօտաւոր հաշուով, դեռ քսան տարի անց չըկացած, կը հասնի հարիւր միլիօնի, որոնք՝ այդ դեռ երեկ ծնուած տէրութեան մէջ՝ մի և նոյն լեզուով կխօսին ու մի և նոյն ցեղին կպատկանին: 1780 թուին, առանց դրամի, առանց նաւերի, առանց հնարների, Ամերիկան մի ապստամբուած գաղթականութիւն էր, որ գիմում էր Ֆրանսիայի պաշտպանութեանը, իսկ այսօր, երկու ովկիանոսների վերայ Անգլիայի դէմ ախոյեան է հանդիսանում. վաղն էլ, ոչ թէ մի տէրութիւն միայն, այլ մի նոր աշխարհ կլինի դէմ յանդիման հին աշխարհի:

Դեռ այդ բոլորը չէ. այդ վիպասանական բախտ ունեցող ժողովուրդը մեզանից տարբեր է ապրում: Դա մի ժողովրդապետութիւն, մի հասարակապետութիւն է, այսինքն ընկերութեան և կառավարութեան այնպիսի մի ձև, որ Հռոմ ու Յունաստանը անկա-

---

*) Orations and Speeches, by Everett; 2 հատոր. 8 ծալ. Boston, 1850.—Die Kirche und Schule in Nord—Amerika, von D-r Hermann Wimmer; 1 հատ. 8 ծալ. Leipzig, 1853.

տար կերպով էին ճանաչում, բայց որ Եւրոպայում միշտ դատապարտել են, որպէս անգործադրելի ու ցնորական: Ուստի և Ֆրանկլինը դողդողալով էր ողջունում այդ նոր քաղաքականութիւնը, որ իւր ծագումն առնում է ոչ աստուածային իրաւունքից և ոչ մարդկային ուժից, այլ միայն բանականութիւնից. նա աղօթում էր, որ Աստուած պահպանէ հասարակապետական սահմանադրութիւնը, որովհետև զգում էր փորձի վճռողական լինելը, և եթէ դա չըյաջողուէր՝ ազատ կառավարութիւն ասուած բանը վերջացած էր: Սպասածից աւելի լսեց Աստուած նորա աղաչանքին: 1789 թուից սկսած՝ Ամերիկան է եղել այն միակ երկիրը, որ առանց ցնցմունքի յառաջ է գնացել, ուր ընկերութիւնը ապրել է առանց յեղափոխութեան, ուր մարդիկ սկզբունք և գաղափար անդադար չեն փոփոխել: Հաստատուն հիմքի վերայ բազմած հին Եւրոպան հիմն ի վեր դղրդուեցաւ. օրինագրքերն ու ժողովները կործանուեցան, և փորձերի ու անհամար աղէտների մէջ մենք շատ անգամ նախանձում էինք այս ժողովրդապետութեան խաղաղութեան և կայունութեանը, որ ամբաստանվում է միշտ իբր փոփոխական ու փոթորկալից, բայց որ միայն է անփոփոխ մնացել, ահա վաթսուն տարի է:

Ի՞նչից է այդ կազմակերպութեան հաստատունութիւնը. ո՞վ կը յայտնէ մեզ դորա տևողութեան գաղտնիքը: Սա արդէն քաղաքականութեան ամենամեծ հարցն է որի լուծումը գտնելու հետամուտ չեղան պետական մարդիկը Եւրոպայում: Ազատութեան ու Ամերիկայի ամենաջերմ բարեկամները միշտ դոցա լաւ ճանաչողները չեն. շատ անգամ ես երկիւղից է, տգիտութիւնից, թէ նախանձից, փորձ են փորձում Միացեալ Նահանգները քաղաքակրթուած ընկերութիւնների ընդհանուր պայմանից դուրս դնել, դորա մէջ մի հրաշք են ուզում տեսնել, որ հին ցամաքի վերաբերմամբ ոչինչ նշանակութիւն չունի: Այսպէս բացատրում են Միութեան բարգաւաճութիւնը երբեմն պատճառ բերելով հաստատութիւնների ժողովրդապետական յատկութիւն ունենալը, երբեմն ամենքի գործունէութեան առաջը բաց եղած երկրի անչափ տարածութիւնը և երբեմն ժողովրդի սակաւութիւնը, որ վարձքի սակը բարձր պահելով՝ բազմաղքատութեան առաջքն առնում է: Անշուշտ դոքա մեծ առաւելութիւններ են. բայց պէտք չէ հեռու գնալ տեսնելու համար, որ Սպանիայի հին գաղթականութիւնները, աւելի ընդարձակ ու լաւ տեղաւորուած քան Միացեալ Նահանգները, աւելի սակաւ բազմա-

մարդ ու նոցանից ոչ նուազ ժողովրդապետական, եթէ հաստատութիւններն ունենանք ի նկատի, մաշվում են թշուառաբար այն դրութեան մէջ, որում ծաղկում է Միութիւնը: Դա, ասում են դարձեալ, մի նոր ժողովուրդ է և հասարակապետութեան կառավարչական այնպիսի պարզ ձև է, որ յարմար է միայն նոր ծնուած ընկերութիւններին: Կրկնակի սխալ. որովհետև թէպէտ Ամերիկայում երկիրը, գետինը նոր է, բայց բնակիչները նոր չեն. միշտ մոռանում են, թէ Ամերիկացիները Անգլիացիներ են, որոնք ձեռք են բերել իւրեանց ազատութիւնները մեծ Շարթի օրից. հասարակապետութիւնը, ինչպէս այդ երկրում հասկանում են, այնպիսի մի փափուկ կազմութիւն է, որ տեղաւորելով իշխանութիւնը ժողովրդի ամբողջութեան մէջ և հնազանդուողների կամքին թոյլ տալով հնազանդութիւնը, յարմար է միայն այն մարդիկներին, որոնք քաղաքակրթութեան առաքինութիւններն ունին և ոչ թէ ախտերը: Ազատութիւնը Միացեալ-Նահանգներին կեանք է տալիս, իսկ Մեքսիկային— մահ: Ասում են, թէ այդ տարբեր բաղդերի պատճառը ցեղն է. հրաշալի լուծում, ուր բառը մտքի տեղ է դրվում: Որովհետև բուն խնդիրն այն է, որ իմանանք թէ որոնք են Անգլօ-Սաքսոնեան ցեղի յատկանիշ կողմերը, որտեղից է առնում նա այն եռանդը, որ թելադրում է նորան աշխարհի տիրապետութիւնը, որ բաց է անում նորա համար նոր երկիրներ, տալիսէ նորան Աւստրալիան, կարծես թէ Ամերիկան բաւական չէր:

Իրեանք Ամերիկացիք վաղուց գիտեն իւրեանց մեծութեան գաղտնիքը. այդ գաղտնիքը նոքա իւրեանց հետ Անգլիայից են բերել: Երկու դար է, որ նոքա թէև շարունակ հետամուտ են լինում քաղաքական վարչութեան աւելի պարզ ու աւելի ժողովրդական կերպերին, այսու ամենայնիւ երկրորդական նշանակութիւն են տալիս դորանց, լաւ գիտենալով, որ ազատութիւնը քաղաքացիների հոգուց աւելի կախումն ունի, քան թէ կառավարչական ձևից: Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակից նոքա պարզ ըմբռնել են այն, ինչ որ մենք այժմ սկսում ենք աղօտ նշմարել. այսինքն թէ ազատութիւնը մի ոյժ է, և ուրիշ ոչինչ. իւր բնութեամբ անտարբեր ոյժ, դէպի չարն ու դէպի բարին միապէս տանող: Եթէ ճնշես սորան բռնութեամբ սա կը խզէ կապերը, եթէ իւր կամքին թողնես, կամ կաւերէ, կամ կը բեղմնաւորէ իւրեան կառավարող ձեռքին ու գործածուելու կերպին համեմատ: Ամերիկացիներն այդ ուղղութիւնը

այն օրից գտան, երբ հասկացան, որ լուծուելու առաջարկուած հարցը նոյնն է՝ թէ մի ազգի և թէ մի անհատի վերաբերմամբ, և թէ այնպէս պէտք է վարուիլ քաղաքական ազատութեան հետ, ինչպէս և բնական, որովհետև դա միևնոյն ազատութիւնն է: Ո՛չ արտաքին պահպանողութեան և ո՛չ գրքի մէջ պէտք է գտնել բարոյական կանոնը, այլ մարդու սրտում, եթէ որ սորա պատուով ապրելուն ենք ցանկանում. Նոյնպէս և, քաղաքական կանոնը պէտք է գտնել ո՛չ թէ կառավարչական կազմուածի, այլ քաղաքացու հոգու մէջ: Մի ներքին առաջնորդ միայն կայ, որ կարող է մեզ պահել ազատութիւնը դէպի չարը գործ դնելուց և փրկել մեզ նորանով:

Առաջին գաղթականներին այդ ներքին առաջնորդ տուողը կրօնքն եղաւ: Բոլոր կեանքը ընդգրկող, հաւատացեալին իւր գծած նեղ շրջանից ոտքը դուրս չթողնելու հարկադրող խիստ ու բանագատ կրօնքը նշանակել է Ամերիկացուն անջնջելի կնիքով. դա է տուել նորան այն ծանրաբարոյ ու բարոյական բնութիւնը, որ զանազանում է նորան ուրիշներից, և աւելի աչքի է զարկում Նոր-Անգլիայում, ուր ժողովուրդը օտար խառնուրդ չունի և ամենատեղ էլ ճանաչվում է: Յետոյ, քաղաքակրթութեան տարածուելովը, արուեստների ժողովրդի մէջ ցրուելովը, նոյն իսկ ընկերութեան աշխարհական դառնալովը, կրթութիւնը բաժանուեցաւ կրօնքից, ո՛չ թէ նորան հակառակուելու համար, այլ ընդհակառակն՝ նոր միջոցներով օժանդակելու: Ազատութեան պահպանութիւնը յանձնուեցաւ այդ երկու քոյրերին, կրօնքին ու կրթութեան, երկու նեցուկներ, որոնց վերայ հանգչում է Ամերիկան: «Չկայ ազատութիւն՝ առանց կրօնքի ու կրթութեան», դա է քաղաքականութեան առաջին առածը, որի մասին ո՛չ մի Ամերիկացի չի կասկածում: —Ամենքը գիտեն՝ թէ ինչ տեղ ենք տուել մենք, մեր կառավարչական բոլոր փորձերի մէջ, այդ երկու ուժերին: Այն դերը, որ խաղում է Միացեալ-Նահանգներում կրօնը, այն տեղը որ դա բռնում է հասարակութեան մէջ, այն ազդեցութիւնը որ դա ունի սովորութիւնների և օրէնքների վերայ, պարոն Տօքվիլը հաղորդել է մեզ առանց որ և իցէ բան աւելացնելու:

Այսօր պարոն Էվրէտի ճառերն ու Դօկտոր Վիմմէրի վիճակագրութիւնը ցոյց կըտան մեզ թէ ինչ է կրթութիւնը Ամերիկայում, և թէ որքան խօսքն ու գործը տարբեր նշանակութիւն ունին այնտեղ՝ քան թէ Եւրոպայում: Այստեղ, տալիս են երև-

խայլին այն ծանօթութիւնները, որոնց նա մի օր պէտք կունենայ՝ հմուտ, աշխատաւոր, խելացի հողագործ լինելու համար. այնտեղ, կառավարութեան ու հասարակութեան կեանքի ու մահուան պայմանի հարցն է մշակվում: Ականջ դնենք Պ. Էվրէտին, որի ասածը շատ աւելի հեղինակութիւն ունին քան իմ խօսքերը:

«Չը մոռանանք, որ այն վտանգները, որոնց ենթարկուած է լինում ազատութիւնը, բոլորն անսահմանափակ իշխանութիւնից չեն յառաջ գալիս. Այն խելքն ու բանականութիւնը, որոնք հարկաւոր են ժողովրդին ազատութիւնը ձեռք բերելու համար, աւելի ևս հարկաւոր են անիշխանութիւնը հեռացնելու. Դա ազատութեան արժանի ժողովրդի ամենագլխաւոր փորձն է. Հայրական բռնակալութիւնների ներքոյ՝ կարգը պահպանվում է տէրութեան մէջ, կեանքն ու սեփականութիւնը պաշտպանվում են ուժեղ բազկով: Մի տեսակ ազատութեան, այն է ապօրէն բռնութեան դէմ, երաշխաւորութիւնը ապահովուած է լինում զինուորական ուժի ներկայութեամբ, որ հպատակեցնող մեծ գործիք է. Բայց ազատ կառավարութեան մէջ, ժողովրդի բանականութիւնն է միայն ընդհանուր խաղաղութիւն պահպանողը. Կարգը պահելու է ոչ թէ զինուորական ոստիկանութեամբ, ոչ թէ հեծելազօր վաշտականներով, այլ լուսաւորուած ժողովրդի յօժարակամ համաձայնութեամբ. այնպիսի ժողովրդի, որ հաստատ առաջադրել է թոյլ չտալ երբէք անիշխանութեանը՝ քանդելու բռնաւորութեան ձեռքից խլած իւր իրաւունքները. Որեմն, ինչպէս որ փափուկ կազմուածքի համար հիւանդութիւնը, և ազնիւ բնութեան համար վարք ու բարքի ապականութիւնը մի առանձին ծանր վտանգ ունին, նոյնպէս և մենք. եթէ երբէք թոյլ տանք որ մեր կառավարութեան սկզբունքը խանգարուի, սպասելու ենք մեծամեծ աւերների, ահաւոր սոսկումների և անօրինակ քանդումների. Ուստի և, Միացեալ Նահանգների համար, սա խորհրդածութեան մի շատ կարևոր խնդիր է. Աշխարհի սկզբից ոչ մի ազգ այսքան օրհնութիւններով ու ձիրքերով լի չէ եղել. ոչ մի ժողովուրդի հանդիսացած չէ եղել այս կերպով իւր սեպհական իրաւունքների պահապան լինելը. եթէ թոյլ տաք որ բանականութեան վերայ հիմնուած ազատութեան այս մեծ գործը վայր ընկնի, չըգիտեմ թէ ուր և երբ կարելի կլինի դարձեալ նոյնը ձեռք ձգել աշխարհիս վերայ»:

Կրթութիւնը Նոր-Անգլիայում (սա օրինակ երկիրն է, որին շատ անգամ հետևում են միւս նահանգները) մեր դաստիարակութիւնից տարբերվում է մանաւանդ առաջին աստիճանում: Առանց խօսելու կանանց ձեռքում գտնուած այն փոքրիկ ուսումնարանների մասին, որոնց շնորհիւ աւելի շուտ կարելի է սկսել երեխաների կրթութիւնը, մեր նախակարգ ուսումնարաններին համապատասխանում են այն հասարակական ու ձրիավարժ դպրոցները (common schools), որոնք այնքան կատարեալ են, որ ծնողներն՝ առանց տարակուսելու՝ ու-

ղարկում են իւրեանց որդիներին։ Այդպէս՝ առաջին իսկ օրից սկըս-վում է քաղաքացիների այն միութիւնը՝ որ պահանջում են հասարակական կեանքը ու ազատութեան օգուտը։ Դա մեր նախնիների մեզ տուած քաղաքական խրատներից մինն է, որ մենք ցնորքի տեղ ենք դրել, իսկ Ամերիկացիք ճշմարտութիւն են ընդունել։ Հանրական կրթութիւնը այդ օրինակ կատարելագործելու համար նոքա ոչինչ չեն խնայել։ Նայելով Դօկտոր Վիմմերի ասածին, հասարակական կրթութեան համար սեփականուած հարկը, Մասաչուսետում, 1850 թուին, մարդագլուխ մի դօլարի է եղել բարձրացած. սա Ֆրանսիայի համար 180 միլիոնի ծախս կանէր, որ զինուորութեան համար տուած, Ամերիկացոց անյայտ, հարկի դեռ կէսն է։ Միեւնոյն ժամանակ Տէրութեան ամենանշանաւոր մարդիկը ամբողջապէս նուիրել են իւրեանց այդ հայրենասիրական գործին։ Բօստօնում Պ. Օրաս Մէնը տասը տարու չափ հրաժարվում է քաղաքային ասպարիզից, ինքն իւրեան դպրոցների ու դպրութեանը անձնատուր անելով. Բօդ-Իսլանդի Կօննէկտիկուտի մէջ Պ. Հանրի Բարնարը ուսումնասուութիւնը կատարելագործում է այնպէս, որ արդէն գերմանական դաստիարակութեան հետ կարելի է համեմատել։ Ժողովուրդի ու ազատութեան այդ երկու բարեկամները գնացին այցելեցին Եւրոպան՝ դասատուութեան ամենալաւ եղանակները ուսումնասիրելու համար, ուսուցչական դպրոցներ հաստատեցին, նոր սերունդների բնութիւնը, միտքն ու առողջութիւնը խնամելու արուեստը ամէն տեղ սկըզբունք ընդունել տուին։ Սոցա աշխատանքի շնորհիւ Նոր-Անգլիան կարող է օրինակ դառնալ Եւրոպային սկզբնական կրթութեան գործում։

Շատ բան է այնպիսի ընտիր դպրոցներ ունենալը, ուր յօժարակամ դիմում են բոլոր բնակիչները. որքան երջանիկ կը լինէինք մենք էլ, եթէ մեր աղքատի որդիքը և ուսման այդ առաջին աստիճանին տիրանային։ Միացեալ Նահանգներում մարդիկ աւելի փառաւոր են, կրթութիւնը՝ այնտեղ շարունակ տեւում է, և աշխատաւորի համար աւելի երկար, քան թէ միջոց ունեցող մարդու։ Այն օրը, երբ աշխատաւորը դադարում է ուսանել, երբ նորա միտքն այլ ևս զբաղուած չէ, վատթար ձգտումները՝ սկսում են երևան գալ։ Դա սպառնում է վտանգաւոր քաղաքացի դառնալու, ուստի և հասարակութիւնը մի րոպէ էլ իւր հսկողութիւնը նորա վերայից չի կտրում։ Նախ՝ կիրակնաւոր դպրոցները գրաւում են նորա միտքը մինչև իւր քսանումէկ տարեկան հասակը։ Այստեղ, պարոն Էվրէտի խօսքով, հազար՝ հինգ

հարիւր կամաւոր ուսուցիչներ մատակարարում են մէկ միլիօն հինգ հարիւր հազար աշակերտների քրիստոնէի ու քաղաքացու պարտքերը: Այդ տեղից իսկ սկսվում է մի քարոզչութիւն, որի նշանակութիւնը մենք երբէք չենք հասկացել: Միլիօնաւոր ամեն տեսակ գրքեր ցրվում են ժողովրդի մէջ, որոնց նպատակն է լուսոյ ճառագայթը սփռել ամենախեղճուկ բնակութեան մէջ, կրթութեամբ բարոյականացնել ժողովուրդը: Մեզանում, ուր մամուլը շատ անգամ վնասում է, փոխանակ օգուտ տալու, մարդիկ չեն իմանում թէ որքան բարիք է յառաջացնում այդ խաչակիրը, որ հալածում է ամեն տեղից տգիտութիւնն ու կոպտութիւնը: Ի հարկէ Միացեալ նահանգներում էլ, ինչպէս և Անգլիա, կայ քաղաքական խիստ ու կրքոտ մամուլ. դորա ձայնն է մեզ հասնում. բայց բարիքով ու չարիքով լի օրագրերի կողքին կայ մի հակակշիռ, որ մենք երբէք չենք ունեցել: Դա այն բարերար, կրօնասէր ու ինքնանուէր մամուլն է, որ խօսում է ժողովրդի հետ մի ազնիւ լեզուով, լուսաւորում է նորա միտքը, վերացնում է վատ հակամիտութիւնները և մխիթարելով վեր է բարձրացնում նորան:

*Բացի այդ, որովհետև ոչ մի բան մարդկային խօսքի հետ չէ կարող համեմատուիլ, մանաւանդ երբ աշխարհի հարուստ ու բաղդաւոր մարդիկն են իւրեանց վերայ առնում հոգ տանել բաղդից զուրկ մնացածների վերայ, Ամերիկացիք բազմացնում են ընկերութիւնները, ժողովները, հրապարակական ընթերցանութիւնները. ամեն բան առիթ է գտնում ժողովուրդը լուսաւորելու. ամենաերևելի հանճարները, հասարակական կարծիքի առաջ բարի համբաւ ունեցող անձինքը, իւրեանց պարտք ու պատիւ են համարում խօսել ժողովրդի հետ պատմութիւնից, մատենագրութիւնից, քաղաքական անտեսութիւնից առած նիւթերի վերայ և գլխաւորապէս մարդու բնութեան մեծութեան ու արժանաւորութեան մասին: Այսպիսի բան կայ և Անգլիայում. և միայն մի օրինակ բերելու համար յիշում ենք Դը-Քարլէյ ազնիւ կոմսին, որ մի իրաւացի համբաւ է հանել Յօրկշէրի աշխատաւորներին խօսած ճառերով և արած ընթերցանութիւններով *): Չկայ խնդիր, որի մասին խօսելուց փախչեն. հրապարակապէս դատողութիւն են անում այնպիսի նիւթերի վերայ, որոնց մենք ձեռք անգամ չենք*

---

*) Lectures and Adresses in aid of popular education, by the right honorable the earl of Carlisle. London, 1852.

համարձակւում պարկել․ օրինակ՝ սեփականութեան իրաւունքի յատկութիւնը, կամ դրամագլխի ու աշխատանք իրաւունքները: Նոքա ոչ թէ հասարակականութիւնից են վախենում, այլ այն տգիտութիւնից, որ հասարակականութեան վտանգն է: Հասկանալի է, թէ որքան օգուտ ունին հասարակական ընթերցանութիւնները․ և զարմանալու չէ, եթէ մի բոստոնցի առատաձեռն քաղաքացի, Ջօն Լօուէլ, թողած է մէկ միլիօն երկու հարիւր հազար ֆրանկ իւր ծննդավայր քաղաքին, կրթութեան այդ միջոցը ընդարձակելու նպատակով: Ահա ինչ կերպով մի ժողովրդապետութեան մէջ հաստատւում ու պահպանւում են հասարակութեան զանազան դասակարգերի մէջ ներքին յարաբերութիւնները, կամ աւելի լաւ ասենք, ահա ինչ կերպով են ջնջւում զանազանութիւնները և մտցնում հաւասարութիւնը ժողովրդի շարքերում: Եթէ լաւ մտածենք, իսկոյն կը հասկանանք, որ կրթութիւնն է գլխաւորապէս, որ զանազանում է մարդկանց միմեանցից: Այս օրւան օրը հասարակութիւնը երկու մաս բաժանող միակ միջնորմը տգիտութիւնն է: Սա վերջին առանձնաշնորհութիւնն է, որ պէտք է վերացուի, միայն թէ այնպէս, ինչպէս Ամերիկան է ուզում, այսինքն՝ ոչ թէ հարստին վայր ձգելով, այլ աղքատի մտաւոր ու բարոյական պայմանը վեր բարձրացնելով, որպէս զի կարելի լինի հասնել ցանկալի հաւասարութեան ու միութեան:

Ժողովուրդը լուսաւորելու գործի բոլոր մեծութիւնը ամենալաւ զգացող, և այդպիսի մի սուրբ պաշտօն ամենայն ինքնանուիրութեամբ կատարող մարդկանց շարքում չեմ կարծում թէ լինի մէկը, որին, ճարտարութեան ու հանճարի կողմից, կարելի լինի համեմատել Պ․ Էդուարդ Էվրէտի հետ․ բացի այս՝ դժուար է մի աւելի լաւ օրինակ գտնել այն բանը ցոյց տալու համար, թէ ինչպէս աշխատութեամբ կարող է բարձրանալ մարդ, այդ աներախտագէտ ամբաստանուած ժողովրդապետութեան մէջ, և թէ ծառայութիւններ մատուցանելով, ինչպէս կարելի է ձեռք բերել ու պահպանել մի իրաւացի ժողովրդականութիւն:

Պ․ Էդուարդ Էվրէտ, ծնուել է Մասսաչուսէտսում, 1794 թուին․ Նա մի արժանայարգ քահանայի որդի էր, որբ մնացած մանուկ հասակում ու չքաւոր․ Նա այն հասարակական դպրոցների աշակերտն է, որոնց միշտ յարգել է: Նորա դաստիարակիչը եղել է Ժ․-Ս․ Բուքմինսթըն, որի անունը անծանօթ է Եւրոպայում, բայց որ մեծ գործեր է կատարել ու մեծ յիշատակ է թողել Բոստոնում: Սորա

ուղղութեան ներքոյ Պ. Էվէրտը, տասնեւինն տարեկան հասակում, Ունիտորների եկեղեցուն քահանայ դարձաւ. քսանհրեք տարեկան՝ կէմբրիջի համալսարանում յունական մատենագրութեան ուսուցիչ: Այդ ժամանակ նա իւր մէջ մի կարիք զգաց երթալ հնութիւնը բուն տեղում քննել և Յունաստանի տեսարաններից, աւերակներից ու մնջինական լուսից սովորել այն դասերը, որ մարդս չի գտնում գրքերի մէջ: Չորս տարի Եւրոպայում պտտելուց յետոյ, նա փորձով այն օգուտը ստացաւ, որ կարող է մարդ ձեռք բերել ամեն երկրի մարդկանց ու երկրի հետ ծանօթանալով: «Հիւսիսային Ամերիկայի Հանդիսի» խմբագիր, ասպարէզ դուրս եկած առաջին իսկ օրից նշանաւոր հռետոր, նա նշանակուեցաւ ծերակուտի և Միացեալ-նահանգների ներկայացուցիչների ժողովումը նստելու, ուր և ուղարկուեցաւ 1825-ին՝ իւր համաքաղաքացիներից. Նա մնաց այնտեղ տասը տարի իբրև անդամ և իբրև նախագահ արտաքին գործերի մասնաժողովին, թէև իւր չափաւորութեամբ նա շատ անգամ սակաւաթիւ կուսակցութեան կարգումն էր: 1835-ից մինչև 1837-ը երեք անգամ հետզհետէ Մասսաչուսէտի կառավարիչ ընտրուելով, Անգլիայի դեսպան նշանակուելով, վերջապէս՝ Գիլմոր նախագահից Պ. Վէբստըրի տեղ կարգուելով իբրև տէրութեան ատենադպիր, Պ. Էվըէտ, ինչպէս երևում է, այնպիսի մարդ էր, որ իւր անձնական արժանաւորութեամբ վաղ ժամանակներից առաջին տեղերը բռնեց և միշտ էլ պահպանեց: Միևնոյն ժամանակ դա մի զարմանալի կերպով զարգացած հանճար էր, նախնեաց հնութեամբ տոգորուած մատենագիր, որի ոգուն այնքան էր տիրացել, որ սկսեցին անուանել նորան դասական Էվըէտ (classical Everett): Հետաքրքրական է այս տեսակ մարդու հրապարակական կեանքը քննել, և այդ շատ հեշտ է անել մեր աչքի առաջ դրած երկու հատորներից: Այդտեղ ոչ գրականական աշխատութիւններ կան և ոչ քաղաքական բանախօսութիւններ, այլ միայն այն ճառերը, որ երեսուն տարի շարունակ տուել է Պ. Էվըէտը ամեն անգամ, երբ իւր հայրենակիցների հետ յարաբերութիւն է ունեցել: Ճառերի նիւթերը բնականապէս զանազան են, բայց իմաստը միշտ մի և նոյնն է. բոլորի նպատակը մէկ է, այն է ժողովրդի մտաւոր, բարոյական և քաղաքական կրթութիւնը: Միութիւնը երևում է հեղինակի խօսքի, ինչպէս և նորա կեանքի մէջ:

Կանինգ'ից յետոյ ես ոչ ոքին չեմ ճանաչում, որ կրթութեան

մասին աւելի բարձր ու ճիշտ գաղափար ունեցած և իր միտքն աւելի պարզ արտայայտած լինէր քան թէ Գ. Էվըէտը: Այն ճառերը, որ խօսել է նա Հասարակապետութեան մէջ կրթութեան կարեւորութեան մասին, Աշխատաւորների համար գիտութեան օգտի վերայ, Ուսուցչական դպրոցների վերայ, առողջ մտքի ամենաընտիր գործեր են. բայց պէտք է ասել, որ եթէ հռետորը այդ խնդրի վերայ այդպիսի ուղիղ հայեացք ունի, պատճառն այն է, որ միայն քաղաքագէտի աչքով չի նայել այս խնդրի վերայ, որ մանկութիւնից սկսած միշտ խորհել է մարդկային հոգու մեծ նշանակութեան վերայ, որ պատկանում է այնպիսի եկեղեցու, որ ամենայն խորհրդաւոր բան մերժելով, կրթութիւնը մարդուս փրկութեան միակ միջոցն է համարում: Գաղափարների զարգացման մէջ զգալի է Բուկմինստըրի ու Կանինգի ազդեցութիւնը, իսկ ձեւի վայելչութեան մէջ՝ հնութեան շունչը: Թող դասեն ընթերցողները Գիտութեան կարեւորութեան վերայ արտասանած ճառի եզրափակութիւնից:

«Դիտեցէք աշնան ժամանակ անտառի հիանալի կաղնին, հազարաւոր պտուղներով ծանրաբեռնուած: Սոցանից իւրաքանչիւրը կրում է իր մէջ մի կատարեալ ծառի սերմիկ, նոյնքան հիանալի, նոյնքան փառաւոր, որքան և հայրական բունը. Նոցանից իւրաքանչիւրը բեղմնաւորելու է մի նոր կաղնի, որ խոր պիտի թաղէ արմատները հողի ծոցը, ոստերը բարձր արձակէ դէպի երկինք ու մրրկի երեք հարիւր ձմեռների փոթորիկների դէմ: Մի բուռ հող միայն է հարկաւոր գետին ընկած պտուղը ծածկելու համար, փոքր ինչ խոնաւութիւն՝ սնունդ տալու նորան, և մի հովանի՝ պատսպարելու նորան, մինչև որ արմատ ձգէ: Այդքանը բաւական է, բայց այդ անհրաժեշտ պէտք է լինի. ապա թէ ոչ, առանց այդ օգնութեան որ ըստ երեւոյթին աննշան է, այն անհամար պտուղներից ոչ մէկին սահմանուած չէ ծառ դառնալու.

Դարձրէք այժմ ձեր աչքերը մեր ցանկալի հայրենիքի քաղաքների, աւանների ու գիւղերի վերայ. մտածեցէք թէ ինչից է կազմվում այն բազմութիւնը, որ արդէն սերմուած է մի քանի տեղերում, և արագ աճում է: Ժողովուրդը, ոչ անկենդան կոյտ է և ոչ գետինը նուաճելու համար վարժեցրած անասունների խմբակ, այլ բանական ու մտածող էակների միաբանութիւն: Մեր հասարակապետութիւնը կազմող բիւրաւոր հոգիների մէջ չի գտնվում

մի բանական էակ, որ ընդունակ չըլինի սովորական գիտութիւնների մէջ մեծամեծ յառաջադիմութիւններ անելու. և ո՛չ ոք չի կարող որոշել կամ սահմանափակել այն անձինքների թիւը, որ ամենաբարձր գիտերի հասնելու ձիրք ունին: Բոլոր մարդիկ բնականապէս նոյն զգայարանները, նոյն կարողութիւնները ունին, որ ունէին Նիւտոնի Ֆրանկլինի ու Ֆուլտոնի պէս մարդիկ: Ես չեմ հաստատում, թէ նոյն չափով ունենան, բայց ո՞վ է որ կհամարձակի ասել, թէ բոլորովին չունին: Ուրեմն, այդ բանականութիւններից իւրաքանչիւրը զարթեցնելու, իւրաքանչիւրին իւր հրաշալի զօրութեան զգացմունքը տալու և նորանից օգուտ քաղել սովորեցնելու համար քիչ բան է պէտք, բայց այդ քիչ բանը անհրաժեշտ է: Որքա՜ն աչքը հեռադիտակից աւելի հրաշալի գործիք է. Նախախնամութիւնը մեզ աչքեր է տուել, բայց արուեստը մեզ համար հեռադիտակ պէտք է պատրաստէ, եթէ ո՛չ երկինք հրաշալիքները մեզանից ծածուկ կմնան: Եթէ մարդկային բանականութեան մեծագոյն մասը կորչում է առանց զարգանալու, այդ այն տկար օգնութեան պակասութիւնից է, որ մարդկային միջոցները դիւրութեամբ կարող էին տա՛լ կատարելագործելով այն հիանալի ընդունակութիւնը, որ բնածին է մարդուն: Եթէ մի կաղին ապարդիւն հողի վերայ ընկնի ու չորանայ, մենք գիտենք կորուստի չափը. դա այնպիսի մի ծառի կորուստ է, որից պտուղը վայր էր ընկել: Բայց երբ մի բանական էակի միտքը անմշակ մնալուց խեղդվում ու զրկվում է այն մեծ նպատակներից, որոնց համար ստեղծուած է, դա այնպիսի մի կորուստ է, որ ո՛չ ոք չի կարող չափել. կորուստ ժամանակի և յաւիտենականութեան մէջ»:

Այդպիսի լեզուով տուած խորհուրդների վերայ աւելացնելու է մի ուրիշ հրահանգ ազատ երկիրների գործածութեան համար, հրահանգ, որի մէջ գերազանցում է Պ. Էվըէտը: Խօսքս այն հայրենասիրական ճառերի վերայ է, որոնք իւրաքանչիւր հռչակելի դէպքի կամ երևելի անձի մահուան տարեդարձի առիթով, թելադրում են ժողովրդին յարգելու և սիրելու նորանց, որոնք ծառայութիւն են արել հայրենիքին կամ իրանց խորհուրդներով կամ իրանց զէնքով, և ներշնչում են նորան այն հայրենասիրական նախանձը, այն առաքինութիւնը, որ Մօնտէսքիօն, հներից յետոյ, հասարակապետութեան էական յատկութիւններից մինն էր համարում: Միացեալ Նահանգները անարատ անցեալ ունենալու բաղդ ունին. այնտեղ չեն պատահել ո՛չ կրօնական պատերազմներ, ո՛չ ներքին քաղաքական կռիւներ, ո՛չ

բռնութիւն, ոչ յեղափոխութիւններ: Գեղեցիկ օրինակ. բայց և ինչպէս պահպանում են այն փառահեղ յիշատակները, ինչպէս փոյթ են տանում այդ մեծ ժառանգութիւնից մի նշխար անգամ չկորցնելու. ինչպէս անցեալը օրինակ են վերցնում ապագայի համար: Նոր-Անգլիայի պատմութիւնը ամբողջապէս ամփոփւում է Պ. Էվերէտի ճառերի մէջ: Այնտեղ տեսնում ես այն պանդուխտներին, որ զոհում են ամեն բան իրեանց հաւատի համար և աւելի սիրով յանձն են առնում հեռանալ իրեանց ծննդական երկրից, քան թէ ձեռք վերցնել խղճի ազատութիւնից: Տեսնում ես 1776-ի մարդկանց, որոնք բաժանվում են Անգլիայից իրաւունքի վերաբերեալ մի խնդրի պատճառով, և լաւ են համարում վտանգի մէջ դնել իրեանց բարեկեցութիւնն ու կեանքը՝ քան մի թեթև հարկ հատուցանել, որովհետև այդ հարկը ապօրէն է: Սա Ուարէնն է, անկախութեան առաջին զինուորն ու առաջին նահատակը. միւսը վեհանձն ու ասպետաբարոյ Հանկոկը, երրորդը Սամուէլ Ադամսը՝ վերջին պուրիտանը: Այս երկու ծերունիներից, որոնք տարիներով ու պատիւներով ճոխացած մեռնում են Ամերիկայի օրհնութիւնների մէջ, անկախութեան հրատարակուելու յիսներորդ տարեդարձի նոյն իսկ առաջին օրը, մէկը Ջէֆերսոնն է՝ այդ հռչակաւոր գործի ծրագրողը, միւսը Ջօն Ադամսն է նորա պաշտպանողը: Իսկ այս հեզ ու ազնիւ կերպարանքը՝ ինքը Ուաշինգտոնն է՝ աշխարհիս երեսին եղած ամենամեծասիրտ մարդը, այն հայրենասէրը, որ իւր երկրի ազատութիւնը պահպանել է ներքին ու արտաքին թշնամիների դէմ, այն քաղաքագէտը, որ բացի արդարութիւնից ուրիշ փառասիրութիւն չէ ունեցել, վերջապէս այն մարդը, որ իւր իմաստութեամբ ստեղծել է Միութիւնը և գերեզմանի խորքից էլ պաշտպանում է նորան իւր առաքինութիւնների յիշատակովն ու օրինակովը:

Հայրենիքի բոլոր այդ դիւցազուններին կենդանացնում է Պ. Էվերէտը, և իբրև օրինակ՝ ժողովրդի, յառաջ է բերում որ յափշտակուած ականջ է դնում նորան: Ոչ ոք դորանից աւելի ոգի ու հաղորդող եռանդ չունի, ոչ ոք աւելի լաւ չի ընտրել այն կէտերը, որոնք ներգործում են սրտի վերայ և մի և նոյն ոգևորութեամբ յափշտակում են թէ խօսողին, թէ լսողին: Յաջորդ հատուածը կապացուցանէ հեղինակի հանճարը այս նոր երևոյթի վերաբերմամբ: Երբ 1824-ին Լա-Ֆայէտ զօրապետը գնաց Միացեալ Նահանգները, ներկայ եղաւ հասարակական ընթերցանութիւններից մէկին, որոնք

Նոր-Անգլիայի ցանկալի հաճոյքներիցն են։ Ընթերցողը Պ. Էվըէտն էր. ահաւասիկ նորա ճառի վերջաւորութիւնը։

«Այս տարի լրանում է կէս դար այն թուականից, որնշանաւոր է համաշխարհական պատմութեան մէջ, այսինքն՝ մեր յեղափոխութեան պատերազմի սկզբից։ Ահաւասիկ մեր՝ իբրև առանձին ազգի՝ գոյութեան յոբելեանը։ Այն արժանայիշատակ դարագլխից սահած ժամանակը, քաջերի արիւնով սրբագործուած փոշու տակ ծածկել է մեծամեծ մարդկանց բազմութիւնը, որոնց պարտաւոր ենք, Աստուծուց յետոյ, մեր անկախութեան ու ազատութիւնների շնորհը։ Դեռ մի քանիսը մնում են մեր մէջ՝ իւրեանց աշխատանքների, կրած վշտերի գեղեցիկ պտուղները վայելելու. բայց մէկը կայ, որ ամբողջ ժողովրդի ձայնից հրաւիրուած, իւր ծերութեան օրերում, եկել է շնորհակալութիւնների տուրքը ստանալու այն ազգից, որին նուիրել էր իւր առոյգ օրերը։ Մեր պատմութեան էջերում գրուած է, թէ երբ Ամերիկայի այդ նախանձայոյզ բարեկամը դիմեց Փարիզում մեր գործակատարներին, 1776-ին, թոյլտւութիւն խնդրելու նոցանից, որ առաջին ճանապարհ ընկնող նաւով Ամերիկա ուղեւորուի, հարկադրուեցան պատասխանել նորան (հայրենիքի դրութիւնը այդպէս էր պահանջում), որ ոչ միջոց և ոչ բաւական վարկ ունին, որ կարողանան գոնէ մի նաւ զինուորել Ֆրանսիայի բոլոր նաւահանգիստներում։ «Եթէ այդպէս է, գոչեց երիտասարդ հերոսը, ես իմ նաւը կունենամ»։ Ուստի, երբ բոլոր Ամերիկան այնքան չքաւոր էր, որ չէր կարող նորան իւր ծովափունքը բերել, թողեց նա մատաղ հասակում իւր հայրենի կտուրը, ընտանեկան երջանկութիւնը, բաղդի ու աստիճանի վայելքները, որ գայ թաթախուի մի յուսահատ կռուի փոշու և արեան մէջ։

«Բարով եկար, ով մեր հայրերի բարեկամ, գալուստդ բարի մեր ափերի վերայ։ Երանի մեր աչքերին, որ զմայլումեն այս պատկառելի դէմքի տեսութեամբ։ Վայելիր այն յաղթանակը, որի նմանը երբէք չէ տեսել ոչ մի աշխարհակալ, ոչ մի ինքնակալ. հաւատա, որ բովանդակ Ամերիկայում չը կայ մի սիրտ, որ անունդ լսելով, չբաբախի ուրախութիւնից ու երախտագիտութիւնից։ Դու տեսել ես արդէն և ողջունել, կամ կըտեսնես շուտով վաղուան հայրենասէրների, իմաստուն խորհրդականների, արիասիրտ զօրականների փոքր մնացորդը, որոնց աջակից եղար՝ մեր ազատութիւնը գլուխ բերելու համար։ Բայց զուր կը փնտռես միւս բարեկամ կերպարանքները, որոնց համար երջանկութեան դար կըհամարուէր այսպիսի մի օր անցկացնել իրանց հինօրեայ զինակից եղբօր, վտանգների մէջ միասին դիմագրաւող ընկերի հետ։ Լինքօլն ու Գրինը, Կնօքսն ու Համիլտօնը գնացել են։ Սարատօգայի ու Իօրկ-Թաունի յաղթականները ընկել են այն թշնամու ձեռքով, որից ոչ ոք փախչել չի կարող։ Նա մանաւանդ՝ դիւցազունների ու մարդկանց առաջինը՝ պատանեկութեանդ բարեկամը, նա, որ իւր հայրենիքին բարեկամից էլ աւելի եղաւ, նա ննջում է իւր ազատած հողի մէջ։ Փոթոմաքի ափերում հանգչում է նա փառքի ու խաղաղութեան գրկում։ Կրկին կըտեսնես Մօն-Վէրնօնի հիւրընկալ հովանիները, բայց չես գտնիլ

քո յարգելի՛ն չէմքի վերայ։ Այն մխիթարիչ ձայնը, որ հասնում էր քեզ Օլմիւցի բանտ-աշտարակում, չի կարող լուծել այլ ևս լռութիւնը՝ գալուստդ շնորհաւորելու համար, իւր կտուրի տակ մտնելիս։ Բայց Ամերիկայի զաւակները նորա անունով կը հիւրընկալեն քեզ իրանց երախտագիտութեամբ։ Բարով եկար, հազար բարով մեր ափերի վերայ. ուր էլ որ շրջես մեր բոլոր նահանգների մէջ, ամէն քեզ լսող ականջ պիտի քեզ օրհնէ, ամէն քեզ տեսնող աչք՝ պիտի քեզ մեծարէ, և ամէն բերան սրտից բղխող խնդութեամբ պիտի գոչէ. բարով եկար, Լա-Ֆայէթ, գալուստդ բարի»։

Այսքանը բաւական է Պ. Էվրէտի տաղանդի չափը հասկացնելու համար. սիրելի է անշուշտ այդ աշխոյժ պերճախօսութիւնը, այդ շնորհալի ու կենդանի խօսքը. սակայն գիտացէք, որ Պ. Էվրէտը (ասում եմ այդ՝ ի փառս Միացեալ-Նահանգների) մի հատիկ չէ, այլ միայն իւր հայրենասիրական հետքի վերայ գնացող բազմաթիւ հռետորներից առաջինն է։ Աշխարհի մէջ մի երկիր չկայ, ուր աւելի սերտ խօսին ժողովրդի հետ և այնքան խնամքով պահպանում լինին այն ոգևորութիւնը, որ հասարակական ապականութեան առաջն առնում է, այն նուիրական հուրը, որ ազգերի իսկական կեանքն է։ Խնդիրը միշտ նոյնն է—առաքինութիւն, հայրենիք, կրթութիւն ու ազատութիւն. բայց ժողովուրդը լսելուց չի ձանձրանում, որովհետև օրաւուր աւելի լաւ է ըմբռնում և իրաւացի հպարտութեամբ վայելում այդ անգին բարիքը։ Դիտելու արժանի բան է, որ երբ Բալբօ աշխատում էր իտալական հայրենասիրութիւնը զարթեցնել ու պատրաստել ազատութիւնը, այնպէս էր խօսում Իտալիայի հետ, ինչպէս Պ. Էվրէտը Ամերիկայի։ «Առաքինի ու լուսաւոր լինենք, ասում էր նա, և շուտով ազատ կը լինինք»։ Իրաւունք ունէր. ազատութիւնը ծնվում ու պահպանվում է մի և նոյն պատճառներով։ Բալբօն գտել էր քաղաքական անկախութեան գաղտնիքը. բայց նորանից Իտալիային օգուտ քաղել տալու համար՝ պակասում էր նորան մամուլը, որ խօսքը հեռաւոր տեղեր է ցրվում, և մի ժողովուրդ, որ կրթութեամբ պատրաստուած լինէր այն բեղմնաւոր սերմերը ընդունելու։ Երանելի են նոքա, որոնք այնպիսի երկրում ու ժամանակում են ապրում, ուր մտածութիւնն ազատ ասպարէզ ունի, ուր ժողովուրդը խնդրում ու ստանում է լոյսը, և ուր, վերջապէս, մի և նոյն է սիրել ազատութիւն ու սիրել հայրենիք։

МАРТИРОСЪ АХНАЗАРОВЪ
Մ. Յ. ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ
Г. ТИФЛИСЪ.

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

(ՊԷՏԷՕՖԻ)

Պատանին պանդուխտ,
Վտակն իւր երկրում,
Խոր ձորերի մէջ
Առաջ են գընում:

Միայն պատանին
Դանդաղ է քայլում,
Այն ինչ վըտակը
Վազում, Թռչկոտում:

Պատանու բերնից
Մի ձայն չէ լսվում,
Սակայն վըտակը
Երգում, կարկաջում:

Անցան լեռները.
Վըտակն ու տըղան
Ընդարձակ դաշտով
Պիտի անց կենան:

Ուրախ վըտակը,
Տխուր պատանին
Իրանց դերերը
Այստեղ փոխեցին:

Լռեց վըտակը,
Հանդարտ է գլորվում.
Շտապեց պատանին
Եւ ուրախ երգում:

Վտակն հեռացաւ
Հայրենի երկրից,
Տեսաւ Հայրենիք
Պատանին նորից:

ԻՄ ԽՆԴՐԱԾ ՄԱՀԸ

(ՊԷՏԷՕՖԻ)

Եթէ Տէր Աստուած հաճէր ինձ ասել.
«Որդեա՛կ, իրաւունք տալիս եմ ես քեզ՝
«Քո ուզած մահը քեզ համար ընտրել»,
Ապա նորանից կը խնդրէի ես.

Որ աշուն լինի, գեղեցիկ աշուն,
Դեղնած տերևը փայլի արևում,
Գարունքից հովտում մնացած մի թռչուն
Երգէ անուշիկ ծառի ճիւղերում:

Ինչպէս գունաթափ մահն աշնան բնութեան
Վերայ է հասնում կամաց քայլերով,
Նոյնպէս հասնի ինձ — և ես զգամ միայն,
Երբ նա շօշափէ ինձ իւր ցուրտ ձեռով:

Եւ կը հնչեցնեմ այն թռչունի պէս
Ես կախարդական իմ վերջին երգը,
Որ կը թափանցէ այստեղ սրտերը
Եւ կը սլանայ մինչև երկինքը:

Եւ երբ կաւարտեմ իմ երգը, ապա
փակէ շրթունքս մի համբոյր վերջին,
Քաղցր համբոյրդ, շէկահէր աղջիկ,
Ամենասիրուն էակ երկրածին:

Բայց թէ չի հաճի Աստուած այդ բանին,
Ապա կը խնդրեմ, որ լինի գարուն,
Լինի պատերազմ, ուր մարդկանց կուրծքին
Ծաղկում են վարդեր արիւնոտ, փայլուն:

Եւ պատերազմի սոխակը — փողը
Հնչէ, խրախուսէ ճակատամարտը.
Ես այնտեղ լինիմ և իմ սրտիցը
Թող ծաղկի նոյնպէս արիւնոտ վարդը:

Եւ երբ ես խոցուած վայր կընկնիմ ձիուց,
փակէ շրթունքս մի համբոյր վերջին,
Քաղցր համբոյրդ, ով ազատութիւն,
Ամենասիրուն էակ երկնածին:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

(ՊԵՏՖՕՖԻ)

Արևը մտաւ: Նորան ոչ մի աստղ
Չը հետևեցաւ.— մութն է գիշերը.
Շուրջ չըկայ ճրագ, վառ է կանթեղս
Եւ հայրենիքիս բորբոքուող սէրը:

Ո՛հ, հայրենիքի սէրն է մի լոյս աստղ,
Իւր շուրջ սփռում է նա պայծառ շողեր.
Ո՛հ, խեղճ հայրենիք, խեղճ Մաճառաստան,
Դու շատ քիչ ունիս այդպիսի աստղեր:

Ի՛նչպէս դողում է կանթեղիս բոցը:
Արդէն կէս գիշե՞ր: Այո՛, այս փոքրիկ
Բոցի բոլորքը շրջան են առնում
Այժմ իմ ազգի մեծամեծ նախնիք:

Նոքա փայլում են, կարծես լինէին
Ամեն մէկը մի պայծառ արեգակ,
Այդպէս փայլում է նոցա պատիւը,
Նոցա փառքը և լուսեղէն պսակ:

Դո՛ւ, որ սողում ես այժմ խաւարում,
Մաճառ, մի՛ նայիր քո վեհ պապերին.
Քո աչքը թոյլ է — նա կը կուրանայ,
Թէ նայէ նա այս արեգակներին:

Ո՛վ դուք իմ ազգի փառաւոր նախնիք,
Դուք մրրիկ էիք աշխարհասասան.
Թոյլ և դողալով ընկած ձեր առաջ,
Ձեզ հնազանդվում էր ամբողջ Եւրոպան:

Այո՛, երբեմն մեծ էր Մաճառը,
Մեծ էր յաղթութեամբ, մեծ էր և հզօր.
Նորա մեծութեան փայլուն աստղերը
Բոլոր աշխարհում հանգել են այսօր:

Այնքան առաջ էր, ինչ որ ծաղկել է
Մաճառի ճակտին դափնէ պսակը,
Որ մեզ դժուար է երևակայել,
Թէ արդեօք ե՞րբ էր այդ ժամանակը:

Վաղուց է, ինչ որ Մաճառի ճակտին
Դափնէ պսակը չորցել է, թառամել,
Եւ այնքան հին է փառքդ, հայրենի՛ք,
Որ համարվում է նա այժմ առասպել:

Վաղուց աչքերս չէին արտասուել,
Բայց այժմ նոքա ահա՛ թրջուեցան:
Արդեօք սա ցո՞ղն է քո արշալոյսի,
Թէ վերջալոյսի, ո՛վ Մաճառաստան:

Արդեօք ի՞նչ էիր, դու Մաճառի փառք,
Վայր ընկնող ա՞ստղ մի փայլակնացայտ,
Որ միայն մի վայրկեան վառուեց երկնքում,
Ապա յաւիտեան չքացաւ անյայտ:

Թէ՞ մի գիսաւոր, որ դարերից յետ
Կրկին կը վառուիս նորոգուած լուսով,
Եւ ողջ ազգերը, ինչպէս երբեմն,
Պիտի նայեն քեզ ահ ու սարսափով:

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆ

(Les conflits de la science et de la religion, par J. W. Draper. Paris, 1875. in 8-⁰ p. 264.)

Սորանից վեց տարի առաջ Պիոս Թ Հռոմի պապը անձամբ հրատարակեց իւր անմեղանչականութիւնը: Այս վերջին յուսահատական փորձն էր Աստուծոյ փոխանորդի կողմից գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը յետ մղելու, մարդկային միտքը միջնադարեան շղթաներով կաշկանդելու:

Քաղաքակիրթ աշխարհը մի անարգական ժպիտով պատասխանեց Հռոմի ձգտումներին: Շատ ջերմեռանդ կաթոլիկներ անգամ գայթակղուեցան, և նոցա մամուլը խուլ բողոքներ արձակեց:

Մի քանի ուսումնականներ այս առիթով առանձին գրուածներ հրատարակեցին: Սոցա մէջ նշանաւոր է մանաւանդ Նիւ-Եօրկի համալսարանի պրօֆէսոր Դրէպէրի «Գիտութեան և կրօնի պատերազմները» անունով գիրքը, որի մէջ հեղինակը պատմաբանօրէն ցոյց է տալիս գիտութեան ու կաթոլիկական եկեղեցու մէջ եղած պատերազմները քրիստոնէութեան սկզբից մինչև մեր օրերը:

Դրէպէրի համբաւը տարածուած էր գիտնական աշխարհի մէջ նորա Եւրոպայի զարգացման պատմութեամբ և Ամերիկայի քաղաքական պատերազմի պատմութեամբ, որոնք թարգմանուած են եւրոպական զանազան լեզուներով: Այս նոր աշխատութեան մէջ Դրէպէրը գալիս է այն հետևանքին՝ թէ մի մեծ ճգնաժամ է պատրաստւում կաթոլիկական կրօնի համար, ճգնաժամ՝ որից արդեն քաղաքակրթութիւնը անշուշտ յաղթող պիտի դուրս գայ:

Ա.

Փրկչի աշխարհ գալուց չորս հարիւր տարի առաջ Յունաստանը սկսում էր արդէն կասկածական աչքով նայել ազգային հին կրօնի վրայ, որ շատ դարեր իւր ամենաթանգ համոզմունքն ու մխիթարութիւնն էր եղել: Նորա փիլիսոփաները, բնութիւնը ուսումնասիրելով՝ նշմարել էին սորա ազդեցութիւնների վեհութեան և Ողիմպոսի աստուածների ոչնչութեան մէջ եղած հակառակութիւնը: Նորա պատմաբանները մարդկային գործողութիւնների կանոնաւոր ընթացքը նկատելով, տեսել էին որ մի անցք չէ կատարվում որ իւր բնական պատճառը չունենայ նախընթաց անցքի մէջ, հետևաբար և հրաշքներն ու երկնային միջամտութիւնները որոնցով լի էին նախնական յիշատակարանները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մանուկ ժողովրդի վառ երևակայութեան պտուղներ:

Պատմաբաններին ու փիլիսոփաներին հետևեցան բանաստեղծները, որոնք ժողովրդի հետ աւելի մօտիկ յարաբերութիւն ունենալով՝ քարկոծուելու վտանգի մէջ են ընկնում, որովհետև հասարակութեան բարեպաշտ դասին դժուար էր հին կրօնական կարծիքներից բաժանուիլ: Առհասարակ կասկածաւորները ստացուածքից զրկվում, աքսորվում, սպանվում էին: Բայց այս բոլորը անկարող եղան մեծ հրդեհի առաջն առնելու, որ յունական դիցաբանութիւնը պիտի լափէր, նորա փլատակների վրայ նոր կրօնական գաղափարների շէնքը կառուցանելու համար:

Մի կարևոր հանգամանք, այն է Պարսկաստանի արշաւանքը և նորա ընդարձակ նահանգների տիրապետութիւնը Աղէքսանդր Մակեդոնացու ձեռքով, շտապեցրեց այդ յեղափոխութիւնը: Յունաց մտաւոր գործունէութիւնը մի հրաշալի զարկ ստացաւ: Հելլենական աշխարհի երևելի իմաստասէրները մակեդոնական բանակին հետևելով Դանուբից մինչև Նեղոս և Նեղոսից մինչև Գանգէս, իրանց զարմացման արժանի առարկաներ գտան նուաճած երկրներում: Նոքա տեսան Եգիպտոսի երկհազարամեան բուրգերը, խորհրդաւոր նշանագրերով ծածկուած կոթողները, թագաւորների հսկայական արձանները: Բաբելոնում նոքա տեսան Բէլի տաճարը, որի բարձրութիւնից քաղդէացիք երկու հազար տարուան ընթացքում երկնային լուսաւորների դիտողութիւններով էին պարապել, փառաւոր պալատների մնացորդներ, իրանց կախաղանաւոր պարտէզներով, Հա-

յաստանի լեռների ջրերով կազմուած արուեստական լիճը, որ ծառայում էր քաղաքը ջրելու, և Եփրատի տակով շինած ստորերկրեայ անցքը: Պարսկաստանում նոքա տեսան Պերսեպօլիսի շքեղ պալատները, լի մարդկային հանճարի արդիւնքներով՝ փորագրութիւններով, քանդակներով, կոթողներով, արձաններով, գրատուններով: Եկբատանը, պարսկական թագաւորների ամառանիստը, շրջապատած էր եօթը կարգ պարիսպներով, որոնք շինած էին գոյնզգոյն ողորկ քարերից և հետզհետէ բարձրանալով դէպի կենտրոնը՝ ներկայացնում էին եօթը մոլորակների ընթացքը երկնային կամարի վրայ: Միւս բանիւ հելլենական նկատող աչքերը անդադար նոր նոր տեսարաններ էին հանդիպում. այստեղ ներկայանում էին նոցա անվերջ անապատներ աւազով ծածկուած, ուրիշ տեղ բարձր լեռներ, որոնց գագաթները ամպերի մէջ էին ծածկվում: Արբէլայում նոքա պատերազմել էին Հնդկաստանի փղերի դէմ, և կասպեան անտառներում արքայական վագրներին իրանց որջերից դուրս բերին. անծանօթ կենդանիներ՝ ընդեղջիւրը ձիագետին, ուղտը, Նեղոսի ու Գանգէսի կոկորդիլոսը ապշեցնում էին նոցա իրանց մարմնի անճոռնիութեամբ և մեծութեամբ: Ոչ սակաւ տպաւորութիւն գործեցին նոցա վրայ մարդկային այլ և այլ ցեղերը իրանց հագուստներով. արևակէզ Ասորին, գորշ Պարսիկը, սև Աֆրիկացին:

Բայց մարդկային հանճարի արդիւնքներից, բուսական և կենդանական թագաւորութիւնների վերայ ստացած նոր գաղափարներից աւելի զօրաւոր կերպով ներգործեցին Յունաց մտաւոր զարգացման վրայ նուաճած երկրների կրօնական գաղափարները: Ողիմպոսի անբարոյական աստուածներին պաշտող Յոյները մի մեծ, մի գեղեցիկ և հաստատուն կրօնական դրութիւն գտան Պարսկաստանում, որի հիմունքը բոլորովին փիլիսոփայական էին: Պարսկաստանը, ինչպէս որ պատահում է բոլոր հին թագաւորութիւնների մէջ, զանազան կրօնական փոփոխութիւնների ենթարկուեցաւ. Նա հետզհետէ հետևել էր Զրադաշտի միաստուածութեան, երկուութեան և վերջապէս մոգութեան: Այն ժամանակները նա ընդունում էր մի գերագոյն էակ, ստեղծող և պահպանող, անարատ էութիւն ճշմարտութեան, աղբիւր ամենայն բարութեան. և ինչպէս տեսնում ենք երկրի վրայ, որ կեանքն ու շարժողութիւնը բղխում են հակառակ ոյժերի դիմադրութիւնից, այդպէս և այդ գերագոյն էակից ստոր կային երկու համահաւասար, համայաւէրժական սկզբունքներ, բարի և չար, լուսոյ և խաւարի

ներկայացուցիչներ: Այս երկու սկզբունքները միշտ կռուի մէջ են, երկիրն է նոցա պատերազմի դաշտը և մարդս նոցա վէճի առարկան: Բարի մարդը պէտք է որոնէ ճշմարտութիւնը, անարատութիւնը, աշխատութեան անձնատուր լինի: Նա կարող է իւր մահկանացու կեանքից յետոյ մի ուրիշ կեանք ձեռք բերել, կարող է յուսալ իւր մարմնի յարութեան և հոգու անմահութեան:

Ահա ինչ տեսարան էր բացվում աշխարհակալ Յոյների առաջ, որոնց մինչև այն ժամանակ անծանօթ էին փորձն ու զննողութիւնը, և որոնք ապրել էին միայն գաղափարական կեանքով:

Մակեդոնական դիւցազնի կանխահաս մահը ընդհատեց նորա մեծ դիտաւորութիւնները և շատ անկարգութիւնների ու արիւնհեղութիւնների պատճառ եղաւ: Այս փոփոխական ժամանակների միջոցում մի դէպք մանաւանդ գրաւում է մեր ուշադրութիւնը. Պտղոմէոսը, Փիլիպպոսի ապօրինի որդին և Աղէքսանդրի մանկութեան ընկերն ու զօրավարը, նշանակուեցաւ Եգիպտոսի կուսակալ, որի թագաւորութիւնը շուտով ձեռք բերաւ:

Պտղոմէոս Սոտերը (փրկիչ) իւր գահը չհաստատեց փարաւոնների հին մայրաքաղաքներում, այլ նորաշէն Աղէքսանդրիայում, որի հիմը ձգել էր մակեդոնացի աշխարհակալը, գուշակելով որ այդ քաղաքը մի օր Եւրոպայի ու Ասիայի վաճառականութեան շտեմարանը կը դառնայ: Աղէքսանդրիայի բնակիչները բաղկացած էին երեք որոշ ազգութիւններից.—Եգիպտացիներից, Յոյներից և Հրէաներից: Այս հանգամանքը մեծ ազդեցութիւն ունեցաւ արդեան Եւրոպայի կրօնի ստացած ձևի վրայ: Յոյն ճարտարապետները Աղէքսանդրիան զարդարել էին հոյակապ տաճարներով, պալատներով ու թատրոններով: Քաղաքի կենտրոնում, շքեղ պարտէզների, շատրուանների և կոթողների միջում, բարձրանում էր մի փառաւոր շիրիմ, որի մէջ հանգստանում էր Աղէքսանդրի զմռսած մարմինը: Բայց այս բոլոր փառահեղութիւնը ոչինչ էր այն ճշմարիտ հոյակապ յիշատակարանի առաջ, որի ազդեցութիւնը եգիպտական բուրգերի փոշի դառնալուց յետոյ էլ զգալի կը լինի աշխարհի վրայ. խօսքը Աղէքսանդրեան Մուսէոնի կամ Թանգարանի վրայ է, որի շինութիւնը սկսուեցաւ Պտղոմէոս Սոտերի ձեռքով և շարունակուեցաւ նորա որդու Պտղոմէոս Ֆիլադելֆոսի օրով: Այս ահագին շինութիւնը բաւական չեղաւ պարունակելու Պտղոմեանց հաւաքած բոլոր գրքերը, արձաններն ու պատկերները. շինուեցաւ մի երկրորդ գրատուն, որ

առաջինի հետ միասին պարունակում էր մօտ եօթը հարիւր հազար հատոր գիրք։

Այսպէս ուրեմն Աղէքսանդրիան աշխարհի լուսաւորութեան մայրաքաղաքը դարձաւ. այնտեղ պատահեցան միմեանց հետ Արեւելքի ու Արեւմուտքի հանճարները, այնտեղ պահպանուեցան ու բարգաւաճեցան հին աշխարհի ժառանգած գիտութիւնները։

Մուսէոնի գլխաւոր նպատակներից մինն էր իբրեւ ապաստանարան ծառայել այն մարդկանց համար, որոնք նուիրում էին իրանց գիտութեան և որոնք կերակրվում ու բնակւում էին թագաւորական հաշուով։ Նոքա ուսումնասիրում և ուսանողներին մատակարարում էին դպրութիւնները, մաթեմատիկան, աստղաբաշխութիւնը, բժշկութիւնը և այս չորս բաժիններից կախումն ունեցող միւս գիտութիւնները։ Մուսէոնի կողքին կար մի տնկաբանական և կենդանաբանական պարտէզ, բոյսերի ու կենդանիների ուսումը թեթեւացնելու համար։ Կար նոյնպէս մի աստղաբաշխական դիտանոց, ուր գտնվում էին բոլոր այն ժամանակի ծանօթ գործիքները։

Աշխարհի ամէն կողմերից բազմաթիւ ուսանողներ, որոնց թիւը տասնեչորս հազարից պակաս չէր լինում, դիմում էին դէպի այս մտաւոր կենտրոնը, ուր նոքա ագահութեամբ ուսումնասիրում էին գրականութեան ու գիտութիւնների բոլոր ճիւղերը։ Արեւելեան եկեղեցու հայրերից շատերը, Կղեմէս Աղէքսանդրացին, Որոգինէսը, Աթանասը այս դպրոցից են դուրս եկել։ Հինգերորդ դարու Հայոց մտաւոր շարժողութեան ներկայացուցիչը՝ Մովսէս Խորենացին և ուրիշ հայ մատենագիրներ նոյնպէս Աղէքսանդրիայում ստացան իրանց գրականական կրթութիւնը։

Աղէքսանդրի, Պտղոմէոսի ու Արիստոտէլի մէջ եղած սերտ բարեկամութեան հետեւանքն այն եղաւ որ պերիպատետիկեան փիլիսոփայութիւնը Մուսէոնի հիմնաքարը դարձաւ։ Այս փիլիսոփայութեան հիմնական սկզբունքն էր երեւոյթից դէպի պատճառը բարձրանալ, մասնաւոր իրերից դէպի ընդհանուր իրերը, և յետոյ ընդհանուր պատճառից իջնում էր երեւոյթի մանրամասնութիւնները քննելու։ Այս եղանակը պահանջում է մի մեծ աշխատութիւն, որովհետեւ պէտք է նախ երկարատեւ փորձերով ու զննութիւններով հանել իրերի գիտութեանը, և յետոյ որոշել նոցա մէջ եղած յարաբերութիւնները։ Ուրեմն արիստոտէլեան փիլիսոփայութիւնը դատողութեան պտուղ է և ոչ երեւակայութեան, որպիսի էր պղատո-

նախանը, որ աւելի հեշտ ու զուարճալի լինելով ժամանակ անցնելուց յետոյ, այսինքն Աղեքսանդրեան դպրոցի քրիստոնէական շրջանում մի քանի փոփոխութիւններով առաջինի տեղը բռնեց՝ նեօ կամ նոր-պղատոնական անունով: Գտնուեցան մինչև անգամ այնպիսի իմաստասէրներ, ինչպէս օրինակի համար մեր Դաւիթ Անյաղթը, որ աշխատեցան այս երկու փիլիսոփաների սկզբունքները իրարու հետ հաշտեցնել:

Արիստոտէլեան փիլիսոփայութեան հետևանքը երևեցաւ Աղեքսանդրեան դպրոցի ներկայացուցիչների մասնաւոր արդիւնքների և գիւտերի մէջ: Արքիմէդի խուզարկութիւնները մարմինների սեպհական ծանրութեան վրայ, Պտղոմէոսի աշխատութիւնը մաթեմատիկական աշխարհագրութեան վրայ, որ ապրեցաւ մինչև Նիւտոնի անմահ Սկզբունքների երևան գալը, Կտեսիբիոսի կրակի մեքենայի գիւտը, նորա աշակերտ Հերոյի առաջին շոգեմեքենան, Ապոլոնիոսի ջրի ժամացոյցը, Սոսիգենէս աստղաբաշխի Յուլեան տոմարի հաստատութիւնը, և այլն, այս բոլորը պերիպատետիկեան փիլիսոփայութեան պտուղներն են:

Բ.

Յոյների սկսած գործը հռոմայեցիք գլուխ տարան: Աղեքսանդրեան ուսումնականների ֆիզիկական, աշխարհագրական, աստղաբաշխական գիւտերը հիմքից շարժել էին հին դարերի կրօնական դրութիւնները, հռոմէական քաղաքականութիւնը վերջին հարուածը տուաւ նոցա:

Այն միջոցին երբ Հռոմի կառավարութիւնը հանրապետութիւնից միապետութեան փոխուեցաւ, Միջերկրականի ափերի վրայ գտնուած բոլոր երկրները իրանց անկախութիւնը կորցրել, մի կենտրոնական իշխանութեան հպատակ էին դարձել: Նուաճուած ազգերի աստուածները իբրև յաղթանակ բերուել էին Հռոմ, ուր մի արհամարհական ներողամտութեամբ թոյլ էր տուած նոցա պաշտօնը: Այն բարձր նշանակութիւնը որ իւրաքանչիւր մասնաւոր աստուածութիւն վայելում էր իւր երկրում՝ անյայտացաւ աշխարհի զանազան անկիւններից եկած աստուածների ու աստուածուհիների բազմութեան մէջ:

Թագաւորները նոյնպէս անյայտացել էին. նուաճուած թագաւորութիւնների մասնաւոր հարստութիւնները տեղի էին տուել մի ընդհանրական կայսեր. բնական էր որ բազմաստուածութիւնը ձգտէր նոյնպէս միաստուածութեան փոխուիլ: Հետևաբար սկսան աստուածական պատիւներ մատուցանել նախ մեռած կայսեր, և յետոյ նաև

կենդանի կայսեր: Կայսրութիւնը քաղաքականապէս իւր մեծութեան վերջին ծայրը հասնելով, կրօնականապէս նոյնպէս անբարոյականութեան վերջին աստիճանին էր հասել: Շռայլութիւնն ու ցանկասիրութիւնը նորա սիրելի նշանաբանն էին դարձել. փառահեղ տաճարներ, որոնց մէջ փայլում էին ոսկին ու թանգագին ակները, շքեղաբար զարդարուած սրահներ, լիքը կանանց հրապոյրները, փառաւոր բաղանիքներ, բանամարտների տեսարանները, ահա հռոմէական փառասիրութեան ձգտումները: Երկրի աշխարհականները այն կէտին էին հասել, որ ոյժը դարձել էր նոցա համար միակ պաշտելի առարկան: Ոյժը հերիք էր մատակարարելու նոցա այն բոլորը, որ մարդիկ աշխատութեամբ և վաճառականութեամբ ձեռք էին բերել: Յաղթող պատերազմների պտուղն եղաւ ստացուածների ու կալուածների արքունիք գրաւելը, նահանգներից առնուած մեծամեծ հարկերը, և կայսրը զօրութեան կենդանի պատկերն էր ներկայացնում:

Այդ միջոցին ասիական նահանգներից մէկի մէջ՝ Ասորիքում մի քանի մարդիկ ընկերացել էին ողորմածութեան և կրօնի նպատակով: Նոցա վարդապետութիւնը համաձայն էր այն համաշխարհական եղբայրսիրութեան զգացմանը որ բղխում էր նուաճած երկրների միանման դրութիւնից: Այդ սկզբունքները Յիսուսի քարոզած վարդապետութիւններն էին: Եբրայական ժողովուրդը, հին աւանդութիւնների համեմատ, սպասում էր մի փրկչի որ պիտի ծնէր իւր միջից և պիտի վերահաստատէր անցեալ փառքը: Յիսուսի աշակերտները ընդունեցին Նորան խոստացուած Մեսիայի տեղ. բայց քահանաները նորա ուսուցած վարդապետութիւնը իրանց շահերի հակառակ համարեցին, և մատնեցին Նորան հռոմէական կուսակալի ձեռքը, որ դպիրներին գոհացնելու համար՝ իւր ցանկութեան հակառակ թոյլ տուեց որ խաչի վրայ բեւեռեն Նորան:

Սակայն Յիսուսի քարոզած ողորմածութեան և ընդհանրական եղբայրսիրութեան սկզբունքները անմահ մնացին: Նորա աշակերտաները փոխանակ ցրուելու՝ աւելի սերտ կապով միացան: Նոքա սկսան մխիթարել ու պահպանել այրիներին ու որբերին, օգնել աղքատներին ու հիւանդներին: Այս առաջին փորձերից ծնաւ մի նոր, մի զօրաւոր հասարակութիւն. նոր, վասնզի հին աշխարհը երբէք դորա նմանը չէր տեսել. զօրաւոր, վասնզի մասնաւոր եկեղեցիները, որ սկզբումը բաժանուած ու առանձնացած էին, շուտով միաբանեցան՝ հասարակաց օգուտը աչքի առաջ ունենալով:

Հռոմի զինուորական տիրապետութիւնը յաղթուած ազգերի մէջ առաջացրել էր մի ընդհանրական խաղաղութիւն և ծնեցրել մի եղբայրսիրութեան զգացմունք: Հանգամանքները յարմար էին քրիստոնէական նոր սկզբունքը արագութեամբ ծաւալելու կայսրութեան նահանգների մէջ: Ասորոց երկրից դուրս գալով նա շուտով տարածուեցաւ Հայաստան, փոքր Ասիա, Կիպրոս, Յունաստան, Իտալիա, և մտաւ մինչև Գալլիա և Մեծ-Բրիտանիա: Քարոզիչները ամեն անկիւնները ցրուելով՝ շտապեցրին նորա տարածումը: Հին փիլիսոփայութիւններից ոչ մինը այդպիսի միջոց չէր գործ դրել իւր սկզբունքները տարածելու:

Երկար ժամանակ քրիստոնէութիւնը այս երեք բանն էր քարոզում. աստուածսիրութիւն, եղբայրսիրութիւն և կեանքի անարատութիւն: Քանի որ տկար էր, նորա միակ զէնքը համոզումն էր, որով ներգործում էր եկամուտների վրայ. բայց հետզհետէ աճելով ու զօրանալով՝ նա սկսաւ ցոյց տալ քաղաքական ձգտումներ, մի անզուսպ ցանկութիւն տէրութեան մէջ ուրիշ տէրութիւն կազմելու, կայսրութեան մէջ մի ուրիշ կայսրութիւն: Այս ուղղութեանը ամենամեծ յամառութեամբ հետևեցաւ մանաւորապէս հռոմէական կաթոլիկ եկեղեցին, որ վաղ ժամանակներից յղացաւ բոլոր ազգերն ու թագաւորութիւնները իւր իշխանութեան ենթարկելու փառասէր միտքը: Հռոմէական կայսրները հասկանալով որ այս ձգտումները կայսրութեան շահերին հակառակ էին, սկսան հալածել քրիստոնէութիւնը. բայց ի զուր, նոր կրօնը արագութեամբ տարածվում և սպրդում էր մինչև կեսարների արքունիքը, այնպէս որ Դիոկղետիանոսի յաջորդ Կոստանդիանոսը քրիստոնեաների օգնութեամբ բարձրացաւ կայսերական գահը:

Թէև քրիստոնէական կուսակցութիւնը այնքան զօրաւոր գտնուեցաւ որ աշխարհի մայրաքաղաքին կայսր տուաւ, բայց իւր հակառակորդ հեթանոսութիւնը կործանելու չափ ոյժ չունեցաւ երբէք. կռուի ելքը եղաւ երկուսի սկզբունքների միմեանց հետ խառնուելն ու ձուլուիլը: Այս կողմից Քրիստոնէութիւնը մահմետականութեան նման չեղաւ, որ բոլորովին ոչնչացրեց իւր հակառակորդներին և իւր վարդապետութիւնը թագաւորեցրեց առանց խառնուելու նոցա հետ:

Կոստանդիանոսը իւր վարմունքով միշտ ցոյց տուեց որ ինքը ամբողջ ժողովրդի անկողմնասէր կայսրն է, և չէ կամենում միայն մի կուսակցութեան թագապսակ ներկայացուցիչը լինել: Մէկ կողմից նա քրիստոնէական եկեղեցիներ էր կառուցանում, միւս կող-

մից հեթանոսական տաճարներ նորոգում. մէկ կողմից կղերին ականջ էր դնում, միւս կողմից հմանների ասածները լսում: Եթէ Նիկիոյ ժողովը գումարեց, նա մի և նոյն ժամանակ բաղդի արձանին պաշտօն էր մատուցանում: Միով բանիւ նորա ցանկութիւնն էր քրիստոնեայ ու հեթանոս միմեանց հետ որքան կարելի է աւելի ձուլել ու միաւորել, և այս բանում զօրաւոր օգնական եղաւ նորան մայրը Հեղինէն: Հին Յունաստանի աւելորդապաշտութիւնները երևան եկան, այսինքն այն ժամանակը երբ հեթանոսներին ցոյց էին տալիս այն գործիքները՝ որով շինուել էր Տրոյիայի ձին, Պելոպսի գայիսոնը, Աքիլլէսի նիզակը, Ագամեմնոնի սուրը, և այլն: Նոյնը անում էին և քրիստոնեաները, որոնք զանազան մասունքների համար տօներ նշանակեցին. Փրկչին խաչող բևեռները, նորա կողը ծակող գեղարդը, նորա գլխի փշէ պսակը մի և նոյն ժամանակ ցոյց էին տրվում զանազան վանքերում, և ոչոք չէր համարձակւում նոցա իսկականութեան վրայ կասկածել: Մինչև անգամ սրբերի հին հագուստները և նոցա գերեզմանների հողը պաշտելի առարկաներ դարձան: Կուսական կեանքը ամենամեծ առաքինութիւն համարուեցաւ, ծոմը ամենամեծ միջոց դևերը հալածելու և Աստուծոյ բարկութիւնը զիջեցնելու: Բազմաթիւ ուխտաւորներ գնում էին Սուրբ Երկիրը և այնտեղից բերած հողը մեծ գնով ծախում:

Ի՞նչ հետևեցաւ սորանից: Այն որ արևմտեան քրիստոնէութիւնը կերպարանափոխուեցաւ. մի կողմից նա կռապաշտութեան մէջ ընկաւ, միւս կողմից յունական դիցաբանութիւնը մինչև կատարելութիւն հասցրեց: Մի անհակառակելի ճշմարտութիւն է որ երբ երկու մարմին միմեանց հետ խառնվում են, երկուսի բաղադրութիւնը փոխվում է. հեթանոսութիւնը փոփոխուեցաւ քրիստոնէութեամբ, ինչպէս և քրիստոնէութիւնը հեթանոսութեամբ:

Հեթանոս կուսակցութեան ներկայացուցիչներն էին հին պատրիկեան գերդաստաններ և հին փիլիսոփայական դպրոցների աշակերտներ: Սոքա արհամարհական աչքով նայում էին իրանց հակառակորդների վրայ և պնդում էին թէ գիտութիւնը կարող է ձեռք բերուիլ միայն երկարատև ըննողութեամբ և մարդկային բանականութեամբ: Ընդհակառակն քրիստոնեայ կուսակցութիւնը յայտնում էր թէ ամենայն գիտութեան հիմը Սուրբ Գրքերն են և եկեղեցական աւանդութիւնները, թէ իր գրաւոր Յայտնութեամբ Աստուած ոչ միայն ճշմարտութիւնը յայտնել է, այլ ուսուցել է մեզ

այն բոլորը ինչ որ կամենում էր որ մենք իմանանք. ուրեմն Սուրբ Գիրքը պարունակում է բոլոր հարկաւոր գիտութիւնների գումարումը:

Այսպէս ահա երևեցան երկու հակառակ ուղղութիւններ, որոնցից մինը յայտնի է սրբազան գիտութիւն անունով, միւսը հեթանոսական: Մինը ընդունում էր Յայտնութիւնը իբրև առաջնորդ, միւսը՝ բանականութիւնը. առաջինը դիմում էր եկեղեցական Հայրերի ներշնչմանը, երկրորդը փիլիսոփաների դատողութեանը: Եկեղեցին ներկայացաւ իբրև պահապան և միջնորդ ամենայն գիտութեան: Նա միշտ պատրաստ էր իւր աշխարհային բազուկը բարձրացնել իւր որոշումները յարգել տալու համար: Սորանով նա մտաւ այն շաւիղը որ որոշեց իւր դերը աշխարհում. նա գայթակղութեան քար դարձաւ Եւրոպայի յառաջադիմութեան համար հազար տարի շարունակ:

Արևմտեան սուրբ Հայրերի մէջ ոչ ոք Օգոստինոսի չափ չաշխատեցաւ հակառակութիւն ծնեցնել գիտութեան ու կրօնի մէջ: Նա յեղաշրջեց Աստուածաշունչը իւր ճշմարիտ նպատակից, որ է մարդկանց առաջնորդել դէպի անարատ կեանքը, և տուեց նորան մի վտանգաւոր պաշտօն, այն է գիտնական ճշմարտութիւնների միջնորդ հանդիսանալ և մարդկային մտքի վրայ բռնանալ: Բաւական էր միանգամ օրինակ տալ, հետևողներ գտնուեցան: Յունաց երևելի փիլիսոփաների գրուածները պախարակուեցան ու դատապարտուեցան, իբրև հեթանոս մտքերի պիղծ արդիւնքներ: Աղէքսանդրիայի Մուսէոնի փառաւոր յիշատակարանները ծածկուեցան տգիտութեան թանձր ամպերի տակ, որոնցից յաճախ արձակվում էին եկեղեցական վրէժխնդրութեան կայծակները: Աստուածական յայտնութեամբ երևւան եկած գիտութիւնը չէր կարող թոյլ տալ ոչինչ փոփոխութիւն, ոչինչ յառաջադիմութիւն: Նա խորշեցնում էր մարդկանց ամեն տեսակ խուզարկութիւններից, ամեն նոր յայտնագործութիւնից, որովհետև նոցա վրայ առաջուց նայում էին իբրև յանդուգն ու անօգուտ գործերի վրայ, և մարդկային հետազօտութիւնները համարում էր պտուղ մի յանցաւոր հետաքրքրութեան, որով աշխատում ենք հասնել այն գաղտնիքների գիտութեանը, որ իբր թէ Աստուած չէ կամեցել յայտնել մեզ:

Բայց ի՞նչ է այդ սրբազան, յայտնագործուած գիտութիւնը, որի գումարումը եկեղեցական Հայրերը բաւական են համարում մարդուս համար:

Այդ գիտութիւնը ամենայն նիւթական կամ հոգևոր երևոյթ մի մարդկային գործողութեան հետ է համեմատում: Նորա համար Ամենակարողն անգամ մի մարդ է հսկայական հասակով: Երկիրը մի հարթ մակերևոյթ է. Երկնային հաստատութիւնը բոլորակաձև տարածվում է մեր գլխների վրայ իբրև մի գմբէթ կամ, ինչպէս որ ասում է Օգոստինոսը, իբրև մի մորթ որից վրաններ են կազմում: Աստղերը, արեգակը և լուսինը շարժվում են այնտեղ մարդուն ցերեկն ու գիշերը լոյս տալու համար: Երկիրս ստեղծուել է ոչնչից, և նորա մէջ բնակուող ցեղերը, բոյսերն ու կենդանիները, բոլորը վեց օրումն են ստեղծուել. Հաստատութիւնից բարձր երկինքն է. անդնդում, մեր ոտների տակ, գտնվում է դժոխքն ու խաւարը: Երկիրը տիեզերքի կենտրոնն է, նորա ամենակարևոր մասը, և ամեն ինչ երկրի համար է ստեղծուել:

Լակտանը խօսելով երկրիս գնդաձև լինելու հերետիկոսական վարդապետութեան վրայ, ասում է. «Զարմանալի չէ՞ որ կան այնպիսի անմիտ մարդիկ որ կարծում են թէ հունձքերն ու ծառերը գլխիվայր են բուսնում, և թէ միւս կիսագնտի մարդիկ գլխիվայր են շրջում: Եթէ այս հրէշաւոր կարծիքները պաշտպանողներին հարցնես թէ ինչպէս է լինում որ այս դէպքում առարկաները երկրից չեն բաժանվում, նոքա պատասխանում են թէ իրերի բնութեան մէջ կայ որ ծանր մարմինները ձգտում են դէպի կենտրոն, իսկ թեթև մարմինները ամեն կողմից ձգտում են դէպի երկինք: Ի՞նչ ասես նոցա որ այս կերպով սխալանքի մէջ ընկնելուց յետոյ, յամառում են իրանց խելագարութեան մէջ, և մի անհեթեթ կարծիք պաշտպանում են մի ուրիշ անհեթեթ կարծիքով»: Իսկ Օգոստինոսը հակոտնէի մասին յայտնում է թէ «անկարելի է որ երկրի միւս կողմը մարդիկ բնակին, որովհետև Սուրբ Գիրքը Ադամի սերունդի վրայ խօսելիս՝ չէ յիշատակում այդ ցեղը»:

Այդ յանդուգն գրութեան ամենազարմանալի մասն էր նորա տրամաբանութիւնը և ապացոյցների եղանակը. վերջինիս մէջ հրաշքը մեծ դեր էր խաղում: Մի արաբացի մատենագիր այս մասին խօսելով ասում է. «Եթէ մէկը պնդէ թէ երկուսը երեքից շատ է և իբրև ապացոյց աւելացնէ. ես այս գաւազանը օձի կը փոխեմ. ես կարող եմ հիանալ նորա ճարտարութեան վրայ, բայց ի հարկէ չեմ համոզուիլ»: Եւ սակայն այս տրամաբանութիւնը հազար տարուց աւելի իշխեց Եւրոպայի վրայ:

Կայսրութեան մէջ իշխող կուսակցութիւնը չկարողանալով արտադրել հեթանոսների հետ մրցելու արժանի արդիւնքներ, միանգամայն չկամենալով նորանից ստոր դրութիւն ընդունել, արտաքին գիտութեան հալածանքն ու ջնջումը քաղաքական անհրաժեշտութիւն դարձաւ: Այս անհրաժեշտութեան զօրութեամբ Պղատոնականք հալածուեցան Վալենտինիանոսի օրովը և շատերը մահ ստացան: Փիլիսոփայութիւնը վտանգաւոր դարձաւ. Նորա տեղը բռնեց հրաշալին ու մնոտի աւելորդապաշտութիւնը: Պտղոմեանց հաստատութիւնը անմահացնող մարդիկը տեղի տուին միայնակեաց ճգնաւորների և վանական կոյսերի անթիւ բազմութեանը, որոնք պատրաստեցին ու լրացրին նորա կործանումը:

Գ.

Հռոմէական աշխարհակալութիւնը կայսրների օրով իւր վերջին զարգացմանն էր հասել. էլ ոչինչ չէր մնացել տիրապետելու և զինուորական կեանքի ամենագեղեցիկ օրերը, յափշտակութեան պատերազմները, թշնամի նահանգների կողոպտելու ժամանակները անցել էին: Ուրիշ առարկաներ էին գրաւում փառասէրների ուշադրութիւնը. մի ուրիշ ճանապարհ բացվում էր նոցա առաջ և եկեղեցական ասպարէզը այնպիսի շահեր էր ներկայացնում որ ամենևին անարժան չէին համեմատուելու առաջուան զինական ասպարէզի մատակարարած օգուտների հետ:

Այս շրջանի եկեղեցական, կարելի է ասել նաև քաղաքական պատմութիւնը լի է երեք նշանաւոր եպիսկոպոսանիստ քաղաքների՝ Կոստանդնուպօլսի, Աղէքսանդրիայի և Հռոմի պատրիարքների կռիւներով, գահերիցութիւնը ձեռք բերելու համար: Կոստանդնուպօլիսը իւր իրաւունքները հիմնում էր այն հանգամանքի վրայ որ կայսեր նոր աթոռանիստն էր դարձել, Աղէքսանդրիան՝ իւր առևտրական և մտաւոր առաւելութեան վրայ, Հռոմը՝ իւր յիշատակների վրայ: Բայց Կոստանդնուպօլսի պատրիարքը կայսեր աչքի ու ձեռքի տակ լինելու անյարմարութիւնն ունէր. իսկ Աղէքսանդրիայի և Հռոմի եպիսկոպոսները աւելի ապահովութիւն էին գտնում իրանց հեռաւորութեան մէջ:

Արևելքի կրօնական վէճերը պտտվում էին ընդհանրապէս Աստուածային բնութեան և յատկութիւնների վրայ, Արևմուտքինը՝ մարդու և նորա յարաբերութիւնների վրայ: Այս հանգամանքը

մեծապէս ազդեց այն կերպարանափոխութեան վրայ, որին ենթարկուեցաւ քրիստոնէութիւնը Ասիայում ու Եւրոպայում: Այս ժամանակները կայսրութեան արեւելեան նահանգները մի մտաւոր անիշխանութեան տեսարան էին ներկայացնում. այնտեղ սաստիկ վէճեր կային Երրորդութեան, Աստուածային էութեան, Որդու ծագման, Սուրբ Հոգու բնութեան և Սուրբ Կուսի բարեխօսութեան վրայ: Այս կամ այն աղանդի յաղթական աղաղակները խառնվում էին հրաշքների և թափուած արեան հետ: Ոչ ոք չմտածեց երբէք բանականութեան լուսով քննել իւր հակառակորդների կարծիքները: Մարդկային երեւակայութեան ազատ ասպարէզ էր տուած աւելորդապաշտ գաղափարներ կազմելու, և քրիստոնէական երկինքը հասարակ ժողովրդի կարծիքով ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ Ողիմպոսը, որից առաջուան աստուածները քշուել էին նորերին տեղ տալու համար: Այն տեղ մի մեծ սպիտակափայլ գահի վրայ բազմած էր Հայր Աստուածը, աջ կողմը Որդին և Սուրբ Կոյսը, ձախ կողմը Սուրբ Հոգին: Հրեշտակների լեգէոններ տաւիղներով շրջապատում էին գահը: Քամակում, մի ընդարձակ տարածութեան մէջ, կային սեղաններ, որի շուրջը բազմած էին արդարները յաւերժական խնջոյք վայելելու:

Այս կերպով քրիստոնէութիւնը հեթանոսացնող ձգման մէջ իւրաքանչիւր եպիսկոպոս հարկաւոր էր համարում ընդունել տալ այն գաղափարները որ անյիշատակ ժամանակներից մնացել էին իրանց վիճակի ժողովրդի մէջ: Այսպէս Եգիպտացիք յաջողել էին արդէն ընդունել տալու իրանց գաղափարները Երրորդութեան մասին. այժմ նոքա կամենում էին Սուրբ Կոյսի երկրպագութեան առիթով Իսիսի պաշտօնը հաստատել:

Պատահեցաւ որ Անտիոքի եպիսկոպոս Նեստորը հրաւիրուեցաւ կայսրից Կոստանդնուպօլսի պատրիարքական աթոռը ժառանգելու (427-ին): Նեստորը մերժում էր Աստուածութիւնը մարդկային կերպարանքով ներկայացնող գաղափարները և պաշտում էր մի Աստուածային սկիզբ որ բռնում է ամբողջ տիեզերքը և օտար է մարդկային յատկութիւններից: Նա տոգորուած էր արիստոտէլեան գաղափարներով և աշխատում էր հաշտեցնել նոցա կրօնի հետ: Մի վէճ ծագեցաւ նորա և Աղէքսանդրիայի Կիւրեղ պատրիարքի մէջ. Կիւրեղը ներկայացնում էր Եկեղեցին հեթանոսացնող կուսակցութիւնը, Նեստորը՝ փիլիսոփայական կուսակցութիւնը: Կռիւը այնտեղ հասաւ որ կայսրը ստիպուեցաւ մի եկեղեցական ժողով գումարել Եփեսո-

տում, ուր Կիւրեղի նախագահութեամբ մէկ օրուան մէջ և Ասորոց եպիսկոպոսների բացակայութեամբը դատապարտուեցաւ Նեստորը:

Սակայն Նեստորի անկմամբ նորա աղանդը չոչընչացաւ: Նորա հետևողները, հիմնուելով Մատթէոսի առաջին գլխի վերջին տան և տասներեքերորդ գլխի քսանևչորսերորդ և քսանևհինգերորդ տուների վրայ, մերժեցին ճանաչելու Տիրամօր միշտ կուսութիւնը: Նոքա բազմութեամբ գաղթեցան Եփրատի ափի վրայ և հիմնեցին քաղդէական եկեղեցին: Եդեսիայի և Մծբինի դպրոցից դուրս եկան վարդապետներ որ նեստորական աղանդը տարածեցին Ասորոց երկիրը, Արաբիա, Հնդկաստան, Թաթարստան, Չինաստան և Եգիպտոս: Նեստորականք հետևում էին Արիստոտէլի վարդապետութեանը, այս պատճառով նոքա այս մեծ փիլիսոփայի գրուածները թարգմանեցին ասորի և պարսիկ լեզուներով:

Կոստանդնուպօլսի և Աղէքսանդրիայի մէջ ծագած վէճերը Արևմտեան Ասիան լցրել էին բազմաթիւ աղանդաւորներով, որոնք գաղանային ատելութեամբ գրգռուած էին միմեանց դէմ, և մանաւանդ կայսրի դէմ որ հալածել էր նոցա: Սորանից ծագեցաւ մի մեծ կրօնական յեղափոխութիւն որ ամբողջ աշխարհի վերայ տարածուեցաւ և որի հետևանքները զգալի են մինչև մեր օրերը:

Քրիստոսի 581 թուականին մի ուղտերի կարաւան, բեռնաւորած Երջանիկ Արաբիայի հարուստ բերքերով, գալիս էր Մէքքէից Ասորոց Բօսրա քաղաքը: Կարաւանի առաջնորդը Աբու-Տալէբ և նորա տասներկու տարեկան չուլըբի կամ Մուհամմէդ եղբօրորդին սիրալիր ընդունելութիւն գտան Բօսրայի նեստորականների վանքում: Վանականներից մինը, Բահիրա, ամէն ջանք գործ դրեց փոքրիկ Մուհամմէդին հեթանոսութիւնից դարձնելու:

Մահմէդի հայրենիքում ժողովրդական գլխաւոր առարկան էր մի սև քար, որ պահպանվում էր Քաաբայում և շրջապատած էր երեք հարիւր վաթսուն սուրբին կարգի կուռքերով, որոնք այն ժամանակի հաշուով ներկայացնում էին տարուան երեք հարիւր վաթսուն օրերը: Բայց քրիստոնէական գաղափարները անծանօթ չէին Արաբիային: Այս անկախ երկիրը, որ տարածվում է Հնդկական Ովկիանոսից մինչև Ասորոց անապատները, վաղուց արդէն աղանդաւորների համար մի ապահով ապաստանարան էր դարձել: Այնտեղ ապաւինել էին բազմաթիւ Հրէաներ Երուսաղէմը աւերուելուց յետոյ. այնտեղ քաշուեցաւ Պօղոս առաքեալը իւր դարձից յետոյ: Իսկ Մահ-

մէջի ժամանակ Արաբիայի անապատները լի էին քրիստոնեայ ճգնաւորներով, և սոքա շատ եկամուտներ էին արել արաբական գլխաւոր ցեղերի մէջ: Այստեղ ու այնտեղ երևում էին եկեղեցիներ, ուր ազատ պաշտվում էր նոր կրօնը: Հաբեշստանի քրիստոնեայ թագաւորները, որոնք նեստորական էին, իշխում էին Հարաւային Արաբիայի, այսինքն Եմէնի վրայ:

Բահիրա կրօնաւորը Բօսրայի վանքում ծանօթացրեց Մահմէդին նեստորականների վարդապետութիւնը: Նորանից երիտասարդ արաբացին տեղեկացաւ այս աղանդաւորների կրած հալածանքներին: Այստեղ յղացաւ նա մի մեծ ատելութիւն կայսրութեան եկեղեցու հեթանոսական սովորութիւնների դէմ և սովորեցաւ խօսել Քրիստուսի մասին, ոչ իբրև Աստուծոյ Որդու այլ իբրև Մարիամի Որդու վրայ, սովորութիւն որ նա երբէք չմոռացաւ իր առաքելութեան ընթացքում:

Երբ Մահմէտը այր դարձաւ, նա ամուսնացաւ մի հարուստ այրի կնոջ՝ Քադիջահի հետ, և այս ամուսնութիւնը միջոց տուաւ նորան անձնատուր լինելու իր կրօնական մտածողութիւններին: Նորա ազգականներից մինը, Վարակայ անունով, քրիստոնէութիւնը ընդունելով՝ թարգմանել էր Աստուածաշունչը արաբերէն լեզուով: Վարակայի հետ ունեցած խօսակցութիւնները աւելի ևս սաստկացրին Մահմէդի ատելութիւնը դէպի կռապաշտութիւնը:

Քրիստոնեայ անապատականների օրինակին հետևելով Մահմէդը քաշուեցաւ Հիրա լերան մի քարայրը իր սովորական մտածողութիւններին ու աղօթքներին անձնատուր լինելու համար: Նա այն հետևանքին եկաւ որ իրան շրջապատող վարդապետութիւնների ու վէճերի միջում մի բան պարզ էր երևում իր աչքին, այն է Աստուծոյ միութեան սկզբունքը: Արմաւենու վրայ կրթնած՝ նա մեկնեց իր գաղափարները ազգականներին ու բարեկամներին և յայտնեց նոցա թէ իր կեանքը պիտի նուիրէ ճշմարտութիւնը քարոզելու: Շատ անգամ կրկնեց նա իր քարոզութիւնների և նոյն իսկ Ղուրանի մէջ, թէ ինքը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի առաքեալ որ քարոզում է Աստուծոյ միութիւնը: Մինչև մահուան օրը նա ունէր մատին մի կնիք մատանու ձևով, որի վրայ փորագրուած էին այս բառերը. «Մահմէդ առաքեալ Աստուծոյ»: Թէև ատելով ատում էր նա կռապաշտական ձևերը, այնու ամենայնիւ չկարողացաւ բոլորովին ազատուիլ կերպարանացուցիչ գաղափարներից. Ղուրանի աստուածը, եթէ կարելի է այսպէս ասել,

կատարեալ մարդ է, մարմնով ու մտքով: Այս հանգամանքը մահմեդական աշխարհին աւելի տուեց կրօնը մարդկօրէն ըմբռնելու և ապագայ կեանքի վրայ ստոր ու անվայել գաղափար կազմելու: Մահմեդականների երկինքը եօթը յարկ ունի և ներկայացնում է մի արեւելեան շքեղ պալատ, լի մարմնական զուարճութիւններով, ուր միայն գեղեցիկ հարճեր կան և սեւաչեմ ստրուկներ: Սակայն արաբական գիտութեան ծաղկեալ շրջանի հասարակութիւնը այս գծուծ ու կոպիտ մտքերից ազատ էր և աւելի բարձր ու մարդասէր գաղափարների էր հետեւում:

Մարդ չէ կարող երեւակայել թէ Մահմեդի յաջորդները որպիսի արագութեամբ տարածեցին Մարգարէի հաստատած կրօնը աշխարհի զանազան կողմերը: Կարճ միջոցում նորա թագաւորութիւնը ձգուեցաւ Ալտայեան լեռներից մինչև Ատլանտեան Ովկիանոսը, կենտրոնական Ասիայից մինչև արեւմտեան Աֆրիկայի սահմանները: Երուսաղէմը, Աղէքսանդրիան, Կարքեդոնը (սուրբ Օգոստինոսի հայրենիքը) քրիստոնէութեան հինգ մայրաքաղաքներից երեքը նուաճուած ու կորած էին: Սարակինոսների մի փոքրիկ խումբ բաւական եղաւ Հռոմի արուարձանները կողոպտելու, սուրբ Պետրոսի և Պօղոսի գերեզմանները անպատուեցին, սուրբ Պետրոսի արծաթեայ սեղանը ուղարկուեցաւ Աֆրիկա. մե՛ծ բարոյական հարուած կաթոլիկութեան համար: Կոստանդնուպօլիսը մի քանի անգամ պաշարուել էր արդէն, նորա անկումը ժամանակի խնդիր էր միայն: Որ պէտի գար որ մահմեդականութիւնը տարածուէր Միջերկրականի ափերից մինչև հասարակօրեայ գիծը:

Արաբական ցեղերի աշխարհակալութեանը հետեւեցաւ նորանից աւելի զարմանալի գիտնական աշխարհակալութիւնը՝ փիլիսոփայութեան և գրականութեան ասպարէզում: Երկու ազդեցութիւն ներգործեցին Արաբացոց վրայ և ցոյց տուին նոցա բռնելու ընթացքը. Ասորոց երկրի Նեստորականները և Եգիպտոսի Հրէաները: Մահմեդը իւր կենդանութեան ժամանակ արգելել էր իւր հետեւողներին Նեստորականներին մի վնաս տալու, և Յեսուի-Աբբաս նոցա եպիսկոպոսը բարեկամական դաշինքներ էր կապել Մահմեդի և Օմարի հետ, իսկ Հարուն-ալ Ռաշիդը բոլոր հասարակաց դպրոցները յանձնել էր մի Նեստորականի վերահսկողութեանը: Մինչ Նեստորականները պարապած էին մահմեդական մանուկների կրթութեամբ, Հրէաները ընդունվում էին Արաբացոց տները իբրև գիտնական բժիշկներ:

Ղուրանի մէջ պարունակուած ճակատագրի վարդապետութիւնը մեծապէս օգնել էր մահմեդականների աշխարհակալութեանը և նոցա կրօնի տարածմանը սրի զօրութեամբ: «Ոչ մի մարդ չէ կարող շտապեցնել կամ հետաձգել իւր մահը: Մահը կը հասնի մեզ մինչև ամենաբարձր գագաթների վրայ: Աստուած սկզբից սահմանել է մեր վախճանի ժամանակն ու տեղը»: Սակայն պատերազմական կեանքը ցոյց տուեց նոցա որ բժշկութիւնը կարող է մեղմացնել ցաւը, վիրաբուժութիւնը՝ վէրքերը լաւացնել և թէ մեռնողները կարող են կեանք ստանալ գիտութեան միջնորդութեամբ: Հրէայ բժիշկները կենդանի բողոք էին Ղուրանի ճակատագրի դէմ: Կամաց կամաց այդ վարդապետութիւնը մեղմացաւ և սկսան ընդունել թէ մարդ կարող է մինչև մի աստիճան իւր ապագան պատրաստել, իսկ ազգերը ապրում են ամփոփոխ օրէնքների իշխանութեան ներքոյ: Այս կողմից քրիստոնեայ և մահմեդական ազգերի մէջ եղած զանազանութիւնը մեծ էր: Քրիստոնեան կարծում էր թէ մի օրէնք կառավարում էր աշխարհը. նա յոյս ունէր աղօթքներով, պաղատանքներով իրերի ընթացքը փոխել: Իսկ մահմեդականի համար մի որևիցէ մարմնի շարժողութիւնը նախնթաց շարժողութեան հետևանք էր, մի միտք ուրիշ մտքի յաջորդութիւն էր: Ամենայն պատմական երևոյթ իւր մեկնութիւնը ունէր նախընթաց երևոյթի մէջ, ամենայն մարդկային գործողութիւն մի ուրիշ գործողութեան հետևանք էր:

Ուշադրութեան արժանի բան է որ Սարակինոսները շուտով ազատուեցան նախնական մոլեռանդութիւնից և մի զարմանալի եռանդով անձնատուր եղան գիտնական հետազօտութիւններին, թէև Ղուրանը մեծ արգելք էր դնում գրականութեան և գիտութեան յառաջադիմութեանը: Մահմեդը այս գիրքը իւր հետևողներին տուել էր իբրև ամենակատարեալ գործ, անհերքելի ճշմարտութիւններ պարունակող գրուածք: Սակայն նորա մահից յետոյ հազիւ քսան տարի էր անցել, որ Ասորոց երկրի, փոքր Ասիայի ու Եգիպտոսի փորձերը Արաբացոց աչքերը բաց արին, և Ալին սկսել էր խրախուսել ամեն տեսակ ուսումնական հետազօտութիւնները: Մօաւիան որ թագաւորեց 661-ին մի նշանաւոր յեղափոխութիւն առաջացրեց կառավարութեան մէջ. ընտրողականից նա ժառանգական իշխանութեան փոխեց նորան, իւր աթոռը Մէդինէից Դամասկոս տարաւ և մեծ շքեղութիւն ու փարթամութիւն մտցրեց իւր պալատը: Նա-

խորտակեց խիստ մոլեռանդութեան շղթաները և դպրութեան պաշտպան ու բարեկամ հանդիսացաւ: Դեռ մէկ դար չէր անցել մարգարէի մահից յետոյ, և Յունաց գլխաւոր մատենագիրները թարգմանուած էին արաբերէն: Ալմանզուր (753-775), Բաղդադի առաջին խալիֆը, երկար ժամանակ նուիրեց աստղաբաշխական հետազօտութիւնների և հիմնեց բժշկական ու իրաւաբանական դպրոցներ: Նորա թոռը Հարուն-ալ-Ռաշիդ (786) հետևեցաւ նորա օրինակին և պատուիրեց որ բոլոր տէրութեան մէջ մզկիթների մօտ ուսումնարաններ բացուին: Բայց արաբական գիտութեան օգոստեան դարը եղաւ Ալ-Մամունի թագաւորութիւնը (813-832): Այս խալիֆի օրով Բաղդադը գիտութեան ճշմարիտ մայրաքաղաք դարձաւ. Նա կազմեց մի ահագին գրատուն և իրան շրջապատեց ուսումնարաններով:

Լուսաւորութեան այս եռանդը շարունակուեցաւ և այն ժամանակ, երբ ներքին երկպառակութիւններից յետոյ արաբական տէրութիւնը երեք մասն բաժանուեցաւ. Աբբասեանք Ասիայում, Ֆատիմեանք Եգիպտոսում, Օմայեանք Սպանիայում միմեանց ոսոխ հանդիսացան ոչ միայն կառավարութեան մէջ, այլ և դպրութիւնների ու գիտութիւնների մէջ:

Դպրութիւնների մէջ Արաբացիք ճաշակում էին բոլորը ինչ որ կարող էր սրել ու զարգացնել մարդկային միտքը: Նոքա պարծենում էին վերջին ժամանակները թէ աւելի բանաստեղծներ ունեցան քան ողջ միւս ազգերը միասին առած: Գիտութեան մէջ նոցա գերազանցութիւնն այն եղաւ որ ոչ թէ Եւրոպայի Յոյներին, այլ Աղէքսանդրեան Դպրոցի ուղղութեանը հետևեցան: Նոքա հասկացան որ տեսական վարդապետութիւնը չէ կարող առաջնորդել դէպի յառաջադիմութիւն, այլ միայն իրերի գործնական նկատողութիւնը: Այս է պատճառը որ նոքա մեծ յառաջադիմութիւն արին մաթեմատիկական ու փորձական գիտութիւնների մէջ. ալջեբրան և քիմիան արաբական մտքի ծնունդ են: Գիտութեան բոլոր ճիւղերը, պատմութիւնը, աշխարհագրութիւնը, վիճակագրութիւնը, քաղաքագիտութիւնը, երկրաչափութիւնը, եռանկիւնաչափութիւնը, մեքենայաբանութիւնը, աստղաբաշխութիւնը, բժշկութիւնը, ուսումնասիրուեցան ու մշակուեցան նոցանից. երևեցան մինչև անգամ զանազան լեզուների և հանրագիտութեան բառարաններ:

Ուսումնարանների վարչութիւնը յանձնվում էր երբեմն նեստո-

րականների, երբեմն հրէաների։ Արաբացիք ոչինչ խտրութիւն չէին անում ուսումնականների ազգութեան և դաւանած կրօնի մէջ։ Ալ-Մամուն մեծ խալիֆը ասում էր թէ «նոքա որ իրանց կեանքը նուիրումեն իրանց բնական կարողութիւնների զարգացմանը Աստուծոյ ընտրեալներն են, նորա ամենալաւ, ամենօգտակար ծառաները, և թէ նոքա որ ուսուցանում են գիտութիւնը և իմաստութիւնը, աշխարհի լուսաւորիչներն ու օրէնսդիրներն են. առանց նոցա օգնութեան աշխարհը կ'ընկնէր տգիտութեան ու բարբարոսութեան մէջ»։

Դ.

Մինչ արաբացի խալիֆներն ու էմիրները, յառաջադիմութեան պաշտպան ու բարեկամ հանդիսանալով, գիտութեան լոյսը սփռում էին աշխարհի ամեն կողմերը, արևմտեան քրիստոնէութեան ներկայացուցիչները, Հռոմի պապերը, ամեն անվայել հնարներով աշխատում էին մարդկային միտքը կաշկանդել ու խաւարի մէջ պահել։ Իրանց կոյր մոլեռանդութեան մէջ՝ նոքա մարդկութեան ամենամեծ անպատուութիւն բերող Ինկվիզիցիան կամ հաւատաքննութեան դատարանը հաստատեցին, կարծելով թէ մարմինը սպանելով՝ կարող են և միտքը սպանել, որ հազար տարուց աւելի երկաթի կապանքների մէջ մնալուց յետոյ վերջապէս յաղթող պիտի հանդիսանար։

Աստուածային բնութեան խնդրից յետոյ, որ անվերջ կռիւների առիթ էր տուել, երևեցան զանազան փորձեր մարդկային հոգու և աշխարհի բնութիւնը որոշելու, որ մեծամեծ հալածանքների ու անգթութիւնների պատճառ տուեց Աստուծոյ փոխանորդներին։

Հեթանոս յոյներն ու հռոմայեցիները հաստատում էին թէ մարդուս ոգին նորա մարմնի ձևն ունի, փոխվում և զարգանում է նորա հետ։ Սանդարամետը իջնող հերոսները հեշտութեամբ ճանաչում էին իրանց հին բարեկամներին, որոնք պահպանել էին իրանց դէմքի գծագրութիւնը և մինչև անգամ սովորական հագուստները։

Առաջին քրիստոնեաները, որ աւելի կենդանի հաւատ ունէին ապագայ կեանքի վերաբերութեամբ, պարզ տեսնել էին համարում արդարների ու մեղաւորների օթևանը։ Նոքա չէին կասկածում թէ միւս աշխարհում կը պատահին և կը խօսակցին իրանց բարեկամների հետ, և այս յոյսը մեղմացնում էր կենդանի մնացածների վշտերը և թեթևացնում մահուան ժամը։ Հոգիների վիճակի վրայ,

նոցա երկրից բաժանուելու օրից մինչեւ վերջին Դատաստանի օրը, զանազան կարծիքներ կային։ Ոմանք կարծում էին թէ նոքա թափառում էին գերեզմանների շուրջը, ուրիշները թէ օդումը թռչում, անմխիթար դրութեան մէջ են մնում։ Ժողովրդական կարծիքով Պետրոս առաքեալը երկնքի դռնապանն էր. նա կարող էր Արքայութեան դռները բանալ ու փակել, ընդունել ու մերժել հոգիներին իւր կամքի համեմատ։ Այս նստախապաշտութիւններից ծնան զանազան պատմութիւններ ուրուականների վրայ. մեռելների ոգիները, ժողովրդի կարծիքով, գալիս շրջում էին կենդանիների տների բոլորը և իրանց առաջուայ բնակարանները այցելում։

Աստուածային բնութեան վրայ կազմուած գաղափարների համեմատ են լինում սովորաբար և հոգու բնութեան գաղափարները։ Արեւմտեան ասիացիք ընդունել էին մի անձնաւոր Աստուածութիւն և սորա բնական հետեւանքն էր, հոգու վերաբերութեամբ, բղխման և կլանման վարդապետութիւնը։ Այսպէս, հնդկական աստուածաբանութիւնը ընդունում է մի տիեզերական ոգի որ ամեն բան թափանցում է. «Միայն մի Աստուած կայ, մի գերագոյն Ոգի, և նորա բնութիւնը մարդկային հոգու բնութեան նոյն և նմանն է։ Վեդայեան գրքերը քարոզում են թէ հոգին մի աշխարհածաւալ իմացականութիւնից բղխում ու կլանվում է, և թէ տեսանելի բնութիւնը իւր բոլոր գեղեցկութիւններով ու ներդաշնակութիւններով Աստուծոյ ստուերն է։

Այս վարդապետութիւնը Արիստոտէլի գրչի տակ մաքրուելով ու մշակուելով՝ անցաւ Աղէքսանդրեան Դպրոցը, այնտեղից էլ արաբացոց միջնորդութեամբ մտաւ Սպանիա, ուր կազմուեցաւ Ավէրրոյեան փիլիսոփայութիւնը։ Ավէրրօէսը ենթադրում էր թէ մարդու մահից յետոյ՝ նորա իմացական մասը կամ հոգին մի առանձին ու որոշ գոյութիւն չունի, այլ վերադառնում է տիեզերական ոգու մօտ, կլանվում է ներգործող իմացականութիւնից, աշխարհի ոգուց կամ Աստուծուց, աղբիւր՝ որից բղխել էր նա։ Տիեզերական իմացականութիւնը անստեղծ է, անվերջ, անապական, ոչ սկիզբն ունի և ոչ վերջ։ Անհատական հոգիները չեն աճեցնում նորան. նա բոլորովին բաժան է նիւթից։ Իսկ անհատական կամ կրաւորական իմացականութիւնը բղխում է տիեզերական իմացականութիւնից և կազմում է մարդու հոգին։ Մի նկատմամբ նա եղծանելի է և վերջանում է մարդու մարմնի հետ, իսկ միւս նկատմամբ նա անեղծ է.

վան զի մահից յետոյ վերադառնում է դէպի տիեզերական հոգին, այսպէսով բոլոր մարդկային հոգիները խառնվում, հալվում են մի հոգու մէջ, որ ամենի հոգին է։ Կեանքը չէ պատկանում անհատին, նա պատկանում է բնութեանը։ Մարդուս վախճանն է միանալ գերագոյն իմացականութեան հետ. սորանումն է կայանում հոգեկան երջանկութիւնը։

Ավէրրօէսի վարդապետութիւնը Սպանիայից անցաւ Իտալիա, Գերմանիա, Անգլիա և Ֆրանսիա, ուր փարիզի համալսարանի Ֆրանկիսկեանների մօտ ընդունելութիւն գտաւ։ Բայց այս վերջինների ոխերիմ թշնամիները՝ Դոմինիկեան կարգի կրօնաւորները զինուորուեցան սպանիացի փիլիսոփայի մտքերի դէմ։ Նոքա հրատարակեցին թէ Ավէրրօէսը ոչնչացնում է անձնաւորութիւնը, առաջնորդում է դէպի ճակատագիր, անբացատրելի է անում անհատական իմացականութիւնների տարբերութիւնն ու յառաջադիմութիւնը։ Այն կարծիքը թէ աշխարհի մէջ միայն մի իմացականութիւն կայ, մի սխալանք է որ կործանում է սրբերի արժանաւորութիւնը, և պարունակում է այն մտքի հաստատութիւնը թէ ամէն մարդիկ հաւասար են բարութեան մէջ։ Ի՞նչպէս, միթէ տարբերութիւն չպէ՞տք է լինի Պետրոսի սուրբ հոգու և Յուդայի մեղաւոր հոգու մէջ, միթէ նոքա միատեսա՞կ են, հաւասա՞ր են։ Ավէրրօէսը իւր անիծեալ վարդապետութեամբ ուրանում է ստեղծագործութիւնը, նախախնամութիւնը, յայտնութիւնը, Երրորդութիւնը, աղօթքի, ողորմութեան զօրութիւնը. նա ուրանում է Յարութիւնը և անմահութիւնը։

Հազիւ թէ Ֆերդինանդ Կաթոլիկի և Իզաբէլլայի զէնքերը ոչնչացրին արաբական տիրապետութիւնը Սպանիայում, և ահա պապութիւնը մտքը դրեց արմատախիլ անել Ավէրրօյութիւնը, որ նորա կարծիքով Եւրոպայի քրիստոնէութեան փոսը փորում էր։

Մինչև Ինոկենտիոս Դ (1243) եպիսկոպոսական մասնաւոր դատարաններից ջոկ ուրիշ բարձրագոյն դատարան չկար հերետիկոսական գործերը քննելու։ Ինկվիզիցիան, որ այդ ժամանակները հաստատուեցաւ, պապական և ընդհանրական, դատարան էր որ սահմանուեցաւ տեղական դատարանների փոխանակ։ Մարդկութեան և քրիստոնէութեան նախատինք բերող այս հաստատութիւնը հերետիկոսութիւնը ջնջելու առաջին փորձերը արաւ հարաւային Ֆրանսիայում, յետոյ նա հետզհետէ հաստատուեցաւ Իտալիայում, Գերմանիայում, Սպանիայում, վերջին երկրում գլխաւորապէս Հրէու-

թիւնը բնաջինջ անելու համար, որի մէջ Ավէրրօէսի մտքերը շատ տարածուած էին:

Նավարրայի կղերը քրիստոնեաներին գրգռել էր հրէաների դէմ, և սոցանից շատերը հալածանքից ազատուելու համար՝ երեսանց քրիստոնէութիւնը ընդունեցին: Պապի դեսպանը Կաստիլեայի պալատում, գրգռեց ժողովրդին Ինկվիզիցիայի հաստատութիւնը խնդրելու: Աղքատ հրէաները ամբաստանվում էին թէ զատկական օրերին քրիստոնեայ երեխաներ են մորթում, խաչելութիւնը ծաղր անելու մտքով, հարուստները մատնվում էին իբրև ավէրօյեաններ: Իզաբէլլան, իւր խոստովանահօր՝ դոմինիկեան Տօրկվեմադայի յորդորմամբ, պապից կոնդակ խնդրեց իւր տէրութեան մէջ Ինկվիզիցիան հաստատելու համար: Կոնդակը եկաւ 1478-ին, և դատարանը հաստատուեցաւ 1481-ին: Իւր գործունէութեան առաջին տարուան ընթացքում երկու հազար հոգի այրուեցան Անդալուզիայում. հազարաւոր դիակներ գերեզմաններից հանուեցան ու կրակի մատնուեցան, տասնեօթը հազար հոգի դատապարտուեցան տուգանք վճարելու կամ մշտնջենաւոր բանտարկութեան: Տօրկվեմադայի գազանային անգթութիւնների համբաւը ամէն տեղ տարածուեցաւ: Անանուն ամբաստանութիւններ թափւում էին ամէն կողմից. ամբաստանուածներն ու վկաները երես առ երես չէին բերվում. զոհերը տարվում ու տանջվում էին ստորերկրեայ տեղեր, որտեղից չէր կարելի նոցա աղաղակները լսել. դատապարտուածների ընտանիքը վերջին թշուառութեան մէջ էին ընկնում: Հաշվում են որ Տօրկվեմադան և իւր արբանեակները տասնևութ տարուան ընթացքում այրեցին տասըհազար երկու հարիւր քսան կենդանի անձինք, վեց հազար ութ հարիւր վաթսուն բացականների պատկերները, և զանազան տանջանքներ տուին ինըսունեօթը հազար երեք հարիւր քսանմէկ հոգու: Այս մոլեռանդ կրօնաւորը այրեց բոլոր գտած եբրայական Աստուածաշունչները և վեց հազար հատոր գիրք Սալամանկայի արևելեան գրադարանից: Իսկ պապական կառավարութիւնը մեծ եկամուտներ էր ձեռք բերում թողութեան թղթեր ծախելով հարուստներին, որոնք այս զզուելի միջոցով Ինկվիզիցիայի տանջանքներից ազատ էին մնում:

Բայց այս բոլոր զարհուրելի անգթութիւնները զուր եղան: Հրէաների դարձը չէր կատարվում, և Տօրկվեմադան պահանջեց որ անմիջապէս աքսորեն նոցա երկրից: 1892-ին աքսորանքի հրովար-

1492 ի

տուկը ստորագրուեցաւ: Բոլոր չմկրտուած Հրէաները, ինչ աստիճանի, հասակի կամ սեռի լինէին, հրաման ստացան յուլիս ամսից առաջ Սպանիայից հեռանալ: Սպանիական կղերը հրապարակների վրայ քարոզներ էր ասում այս ողորմելի զոհերի դէմ, որոնք, երբ գաղթելու ժամը եկաւ, ծածկում էին ճանապարհները իրանց բազմութեամբ և օդը թնդացնում իրանց ողբերով: Սպանիացիք անգամ սրտասովում էին այս խեղճերի վրայ, բայց արգելուած էր օգնել նոցա: Հրէաները ցրուեցան, մասամբ Իտալիա, մասամբ Աֆրիկա, Թուրքիա և Անգլիա: Հազարաւոր մարդիկ, մանաւանդ ստնտու կանայք, երեխաներ ու ծերեր մեռան ճանապարհին, շատերը ծարաւատանջ կորան:

Հրէաների վիճակին ենթարկուեցան շուտով և Մաւրիտանացիք: Մի եկեղեցական հրովարտակ հրատարակուեցաւ Սեվիլիայում 1502-ին, որ պարտք էր դնում կաստիլիացոց վրայ Աստուծոյ թշնամիներին հալածել իրանց երկրից և չմկրտուած Մավրիտանացոց պատուիրում էր հեռանալ Սպանիայից ապրիլ ամսից առաջ: Նոքա կարող էին Հրէաների պէս ծախել իրանց ստացուածքը, բայց իրաւունք չունէին հետները տանել ոսկի ու արծաթ: Բացի սորանից արգելում էին նոցա գնալ մահմետական երկրները. այս կողմից նոցա վիճակը Հրէաների վիճակից վատ էր, որ իրաւունք ունէին գնալ ուր և կամենային: Ահա մինչև որ տեղ էր հասնում Սպանիացոց կատաղի աններողամտութիւնը. նոքա համոզուած էին թէ իրանց կառավարութիւնը իրաւունք ունի կոտորելու բոլոր Մաւրիտանացիներին՝ անհաւատութեան մէջ ցոյց տուած խստութեան համար:

Այս միևնոյն զզուելի միջոցներին դիմեցին կաթոլիկութեան ներկայացուցիչները այն անհատների դէմ որոնք աշխատեցան որոշել աշխարհի բնութիւնը:

Բնութեան վրայ հարևանցի նայելով և ոչ քննողական աչքով, երկիր՝ մեզ երևում է իբրև մի հարթ մակերևոյթ որ պահպանում է իւր վրայ երկրային հաստատութիւնը, և այս վերջինս բաժանում է ստորին ջրերը վերին ջրերից, մեզ թւում է որ երկնային մարմինները, արեգակը, լուսինը, աստղերը, շարունակում են իրանց ընթացքը արևելքից արևմուտք՝ դանդաղութեամբ պտտելով անշարժ երկրի շուրջը, որնոր անհամեմատ մեծ է երևում քչեալ մարմիններից: Բոլոր գործարանաւոր մարմինների մէջ որ շրջապատում են մարդուն, ոչ մինը չէ հաւասարվում նորան արժանաւորութեամբ,

և այս պատճառով նա իրաւունք է համարում եզրակացնել թէ ամէն ինչ ստեղծուել է իր գործածութեան համար, արեգակը իր ցերեկները լուսաւորելու, լուսինը գիշերները լուսաւորելու համար:

Համեմատական աստուածաբանութիւնը ցոյց է տալիս որ աշխարհի ամեն կողմերը մարդիկ այսպէս են ըմբռնել բնութիւնը քաղաքակրթութեան առաջին աստիճաններում. ենթադրութիւն՝ որ երկիրս համարում է տիեզերքի կենտրոն, իսկ մարդը՝ ստեղծագործութեան գլխաւոր առարկայ:

Կրօնների մեծ մասը այս դրութեան վրայ է հիմնուել աշխարհի կազմութեան վերաբերութեամբ. հետեւաբար և մեծ նիւթական օգուտներ պահանջում էին պահպանել այս դրութիւնը ամենախիստ միջոցներով՝ չարագործութեամբ և սպանութեամբ, և չթոյլ տալ երբեք որ երկնքի ու երկրի տեղադրութեանը դիպչէին կամ մարդուս նախապատուութեանը տիեզերքի մէջ:

Սակայն այս մտքերը չէին կարող անխախտ մնալ: Հենց որ մարդիկ սկսան փոքր ինչ դատել այս առարկայի վրայ, երկրի մակերևոյթի հարթութեան խնդիրը իր հակառակորդները ունեցաւ: Շատ վաղ ժամանակներում արդէն գտել էին խաւարումների պատճառը: Լուսնի խաւարումները ցոյց էին տալիս որ երկրի ստուերը միշտ մանեկաւոր է. դորանից երկրի գնդաձեւութիւնը հետեւացնելու համար մի քայլ միայն հարկաւոր էր: Մի մարմին որ բոլոր դրութիւնների մէջ շրջանակաւոր ստուեր է արձակում՝, պէտք է գնդաձև լինի: Դարեր հարկաւոր եղան այս ճշմարտութիւնը ընդհանրացնելու Եւրոպայում. Քրիստափոր Կոլոմբոսի, Վասկո-դէ-Գամայի և Մագելլանի ծովային ճանապարհորդութիւնները տասնևհինգերորդ դարու վերջին և տասնևվեցերորդի սկզբին՝ ամենակոյր մարդկանց համոզեցին, և պապերի բոլոր բանադրանքները անկարող եղան այս հերետիկոսութիւնը ջնջելու:

Երկրի ձեւի ծանօթութեանը հետեւեցան նորա մակերևոյթը չափելու փորձերը, որով նա պիտի զրկուէր իր նախապատուութիւնից Տիեզերքի մէջ: Երկիրս ըստ երևութին աւելի մեծ լինելով քան միւս բոլոր աստղերը, բնական է որ նորան համարէին ոչ միայն իբրև աշխարհի կենտրոն, այլ իբրև ամբողջ աշխարհ. բոլոր մնացածը ոչինչ էր նորա առաջ:

Թէև երկրի գնդաձեւութեան հետեւանքները հակառակ էին աստուածաբանական գաղափարներին, այնու ամենայնիւ սոքա այնքան

չպիտի գայրացնէին կաթոլիկութեան ներկայացուցիչներին, որքան այն հետեւանքները, որոնց հասաւ գիտութիւնը երկրի իսկական տարածութիւնը ճանաչելով։ Արդէն Արիստարքոսը, հետեւելով Պիւթագորի հնդկաստանից բերած դրութեանը, ճանաչել էր երկրի ու արեգակի մէջ եղած մեծ հեռաւորութիւնը, հետեւաբար և այս վերջինի անչափ մեծութիւնը։ Նա հաստատում էր որ երկիրս մի աննշան կէտ է կազմում տիեզերքի մէջ, եթէ նորա տարածութիւնը համեմատուի աստղերի հեռաւորութեան հետ։ Բայց Արիստարքոսի կարծիքները ընդունելութիւն չգտան հներից, որոնց աչքին Պտղոմէոսի դրութիւնը գերազանց համարուեցաւ։ Վերջինս երկիրը աշխարհի կենտրոն էր համարում, և թողնում էր նորան իւր գերազանցութիւնը բնութեան մէջ. ուստի քրիստոնեայ աստուածաբանները չվրդովեցան նորա դրուածքի դէմ, և Պտղոմէոսի դրութիւնը մօտ հազար չորս հարիւր տարի ապրեցաւ, երկրորդ դարուց մինչև տասն եվեցերորդ դարը։

Այս ընդարձակ շրջանի ամենամեծ մասը սպառուեցաւ աստուածաբանական վէճերի մէջ Աստուծոյ բնութեան վրայ, և անվերջ կռիւների մէջ եկեղեցական իշխանութեան համար։ Եկեղեցական հայրերի հեղինակութիւնը, և այն կարծիքը թէ ամենայն ճշմարտութիւն պարունակվում է Սուրբ Գրքերի մէջ, յուսահատեցնում էին գիտնական հետազօտութիւններով պարապողներին։ Եթէ մի որևիցէ աստղաբաշխական խնդիր գրաւէր ոմանց ուշադրութիւնը, կասկածները լուծվում էին Օգոստինոսի կամ մի ուրիշ եկեղեցական մատենագրի խօսքերով և աւելորդ էր համարվում երկնային երևոյթները զննել։ Սրբազան գիտութեան շնորհուած գերազանցութիւնը այնտեղ հասցրեց Եւրոպայի ազգերին, որ հազար հինգ հարիւր տարուան ընթացքում քրիստոնէութիւնը ոչ մի աստղաբաշխ չհանեց իւր միջից։

Արաբացիք այս բանում աւելի ուղիղ ընթացք բռնեցին։ Նոցա ձգտումը դէպի ուսումնական հետազօտութիւնները սկսում էն Աղէքսանդրիայի տիրելու ժամանակից, մարգարէի մահից վեց տարի յետոյ։ Ալ-Մամունը Միքայէլ Գ.ի հետ կապած դաշնադրութեան զօրութեամբ ստացել էր նորանից Պտղոմէոսի գրուածքի մի օրինակը և թարգմանել էր տուել արաբերէն։ Այս գիրքը մեծ հեղինակութիւն ստացաւ արաբացի աստղաբաշխների առաջ, և օգնեց նոցա հետեւեալ նշանաւոր խնդիրները լուծելու։ Նոքա չափեցին երկրի տրա-

մագիծը, կազմեցին տեսանելի աստղերի ցուցակը, և նոցանից մեծերին այն անունները տուին որ մինչև այսօր էլ պահպանել են: Նոքա սահմանեցին արեգակնային տարու տևողութիւնը, գտան ճառագայթների բեկբեկումը, հնարեցին ճօճանակը, բացատրեցին արեգական և լուսնի երևիլը հորիզոնի վրայ, չափեցին մթնոլորտի սահմանը: Նոքա կառուցին առաջին դիտանոցը Եւրոպայում, և նոցա դիտողութիւններից շատերը այնքան ճիշտ էին որ նոր ժամանակների ամենամեծ մաթեմատիկոսները օգուտ քաղեցին նոցա հաշիւներից:

Մագելլանի երկրի շուրջը կատարած ճանապարհորդութիւնից յետոյ առաջին փորձերը գործ դրուեցան Եւրոպայում երկրի տրամագիծը չափելու. Սնէլլ Հոլլանդիայում, Նօրվուտ Անգլիայում, և Պիկար Ֆրանսիայում: Մի և նոյն ժամանակ Լեհաստանում մի ուրիշ ուսումնական՝ Կոպերնիկը աշխատում էր որոշել երկրի դրութիւնը արեգակի և ուրիշ մոլորակային մարմինների վերաբերութեամբ:

Իւր երիտասարդութեան ժամանակ Կոպերնիկը ճանապարհորդել էր Իտալիա, նուիրել էր իրան աստղաբաշխական ուսման և մաթեմատիկայի դասատու էր եղել Հռոմում: 1507-ին աւարտեց նա իւր գրուածքը Երկնային մարմինների շրջանների վրայ. բայց հասկանալով որ իւր սկզբունքները աստուածաբանական սկզբունքներին հակառակ գոլով՝ կաթոլիկական Եկեղեցու հալածանքներին պիտի ենթարկուէր, տասնևվեց տարի յետաձգեց իւր գրքի հրատարակութիւնը, և միայն 1543-ին Շոմբէրգ կարդինալի խնդիրքով հրատարակեց նորան: Կոպերնիկը մահուան անկողնումն էր՝ երբ իւր գրքի տպագիր օրինակը բերին նորան: Ինկվիզիցիան շտապեց դատապարտել նորա հերետիկոսութիւնը:

Աստղաբաշխները իրաւամբ հաստատում են թէ Կոպերնիկը մեծ յեղափոխութիւն առաջացրեց գիտութեան մէջ: Նա անհերքելի փաստերով ապացուցեց արևակենտրոնական տեսութիւնը, ցոյց տուեց որ հաստատուն աստղերի հեռաւորութիւնը անհուն է, և երկիրս միայն մի կէտ է տարածութեան մէջ: Հռոմէական Եկեղեցին զարհուրելով այն հետևանքներից, որոնց առաջնորդում էր կոպերնիկեան դրութիւնը, շտապեց դատապարտել նորան իբրև յայտնութեան հակառակ: Խլել երկրից իւր գերազանցութեան կարևորութիւնը տիեզերքի դրութեան մէջ, միւս աստղերը նորան հաւասար, երբեմն էլ նորանից գերազանց համարել, կղերի հասկացողութեամբ նուաղեցնում էր Աստուծոյ իրաւունքները: «Եթէ երկնային հաստատու-

թեան անթիւ լուսաւորներից իւրաքանչիւրը արբանեակներով շրջապատած աստղ է, որի մէջ էակներ են բնակում, եթէ մենք այնքան հեշտութեամբ ընկանք և միայն Աստուծոյ Որդու մահով կարողացանք գնուիլ, ի՞նչ բաղդի վիճակուեցան այն բոլոր էակները: Արդեօք նոքա՞ էլ ընկան, նոքա՞ էլ փրկիչ ունեցան:

1608-ին Լիպպէրզհէյ հոլլանդացին գտաւ որ երկու ոսպնաձև ապակիների միջով նայելով հեռաւոր առարկաները աւելի մեծ և աւելի պարզ էին երևում: Հեռադիտակը գտնուել էր: Յաջորդ տարին Գալիլէոս Ֆլօրէնցիացին, որ յայտնի էր արդէն իւր գրուածներով գիտութեան և մաթեմատիկայի վրայ, հնարեց մի այդպիսի գործիք իւր գործածութեան համար և այն աստիճանի կատարելութիւն տուաւ նորան, որ երեսուն տրամագծի մեծութեամբ ցոյց էր տալիս առարկաները: Լուսինը զննելով նա տեսաւ որ երկրի պէս ծածկուած է ձորերով ու լեռներով, որոնք ստուեր են արձակում: Երկնքի որ կողմը նայում էր, նա գտնում էր նոր նոր աստղեր որոնք հասարակ աչքին անտեսանելի էին: Արեգակի վերայ նա տեսաւ բծեր, և յայտնեց որ այս մեծ աստղը պտտում է իւր առանցքի վրայ:

Հեռադիտակի այս և ուրիշ գիւտերը ձգտում էին հաստատելու կոպէռնիկեան դրութիւնը և մեծ շփոթ պատճառեցին կաթոլիկութեանը: Գալիլէոսը ամբաստանուեցաւ իբրև խաբեբայ, հերետիկոս, հայհոյիչ, անաստուած: Իւր անձը պաշտպանելու մտքով նա մի նամակ ուղղեց Կաստէլլի աբեղային, որի մէջ ասում էր թէ Սուրբ Գիրքը տուած է մեզ ոչ իբրև գիտութեան, այլ բարոյականութեան առաջնորդ: Այս խօսքերը աւելի կատաղեցրին Ինկվիզիցիային, որ ստիպեց Գալիլէոսին հրաժարուիլ իւր հերետիկոսութիւնից, չուսուցանել երբէք թէ երկիրս պտտում է արեգակի շուրջը, չհրատարակել ոչ մի գիրք կոպէռնիկի վարդապետութեան վրայ: Գալիլէոսը համաձայնեցաւ, վասնզի գիտէր որ ճշմարտութիւնը հարկաւորութիւն չունի մարտիրոսներ ունենալու:

Բայց անցաւ տասնևվեց տարի և Գալիլէոսը հրատարակեց իւր *երկնային դրութիւն* անունով գրուածքը որ պարզում էր կոպէռնիկի վարդապետութիւնը: Նորից կանչուելով Ինկվիզիցիայի ատեանը, նա յանցաւոր համարուեցաւ հերետիկոսութեան մէջ և դատապարտուեցաւ չոգած և ձեռը Աստուածաշնչի վրայ դրած՝ իւր սեպհական բերանով ուրանալ և անիծել երկրի շրջանակաւոր պտոյտը. արեգակի շուրջը: Ի՜նչ տեսարան. մի պատկառելի ծերունի, իւր

դարու ամենամեծ մարդը, մահուան երկիւղից ստիպվում է հրաժարուիլ ճշմարտութիւնից: Իւր կեանքի վերջին տասը տարիները Գալիլէոսը բանտի տանջանքների մէջ անցկացրեց, և երբ մեռաւ, մերժեցին նորան եկեղեցական թաղումը: Եւ մի՞թէ մի վարդապետութեան սխալանքը բաւական ապացուցուած չէ՝ երբ ստիպուած է բռնութեան և հալածանքի վրայ հաստատուիլ: Ինկվիզիցիայի այն ժամանակուայ պաշտպանած կարծիքները մարդկային ազգի համար ծաղրելի առարկայ դարձան:

Նոր ժամանակների ամենամեծ մաթեմատիկոսներից մինը նկատում է որ Գալիլէոսի յայտնագործութիւնները մեծ նշանակութիւն ունին մարդկութեան համար, որովհետև ցոյց են տալիս թէ երկիրը ինչ տեղ է բռնում տիեզերքի մէջ: Եթէ երկիրը անշարժ է և բոլոր աստղերը պտտում են նորա շուրջը, մարդս իրաւունք ունի իրան բնութեան առաջին առարկան համարելու. իսկ եթէ երկիրը շատ մոլորակներից մինն է որ պտտում են արեգակի շուրջը, մի աննշան մարմին արեգակնային դրութեան մէջ, նա անյայտանում է երկնքի անհուն տարածութեան՝ մէջ, տարածութիւն՝ որի մէջ նոյն իսկ արեգակնային ամբողջ դրութիւնը մի կէտ է:

Հեռադիտակի գիւտը Կոպերնիկի վարդապետութեան յաղթութեան դարագլուխն է, և Գալիլէոսից յետոյ, չնայելով Ինկվիզիցիայի անգթութիւններին, աստղաբաշխական հետազօտութիւնները առաջ դարուեցան, որոնց հետևանքը եղաւ որոշել երկրի հեռաւորութիւնը արեգակից: Այդ միջոցներում Ջիորդանո Բրունո իտալացին, որ Կոպերնիկի մահից եօթը տարի յետոյ էր ծնել, հրատարակեց մի գրուածք Տիեզերքի և աշխարհների անչափութեան վրայ: Նա հրատարակել էր նոյնպէս Ջորեքշաբթի խօսակցութիւնները, որի մէջ պաշտպանում էր Կոպերնիկի դրութիւնը: Պէտք է ընդունել, ասում էր նա, որ Տիեզերքը ամբաւ տարածութիւն է և լի լուսաւոր ու անթափանցիկ մարմիններով, որոնցից շատերը բնակելի են, և թէ երկրիս շուրջը ոչինչ չկայ՝ բայց եթէ տարածութիւնը և աստղերը: Ավէրրօէսի վարդապետութեան հետևելով՝ Բրունոն ասում էր թէ կայ մի իմացականութիւն որ կենդանութիւն է տալիս տիեզերքին և թէ այդ բանը ապացուցանում է տեսանելի աշխարհը. Թէ այդ տիեզերական իմացականութիւնը մի զօրութիւն է որ ամեն ինչ պահպանում է, եթէ այդ զօրութիւնը չլինէր ամեն բան կ՚անյայտանար. Թէ այդ իմացական զօրութիւնը

որ ամէն տեղ է և ամէն բան թափանցում է, Աստուած է, որ ապրում է ամէն բանի մէջ, ոչ միայն կենդանի, այլ նաև անկենդան առարկաների մէջ:

Հռոմը չխրատուելով անցեալից, պահանջեց Բրունօյին Վենետկից և յանձնեց ինկվիզիցիայի դատարանին, որ դատելով նորան ոչ միայն իբրև հերետիկոս, այլ իբրև հերետիկոսապետ, որ ուսուցանում է աշխարհների բազմաւորութիւնը, դատապարտեց նորան խարոյկի վրայ այրուելու: «Գուցէ դուք աւելի երկիւղ էք զգում այդ վճիռը տալով, ասաց նա իր դատաւորներին, քան թէ ես լսելով նորան»: Ջիօրդանօ Բրունօն այրուեցաւ Հռոմում փետրվարի 17-ին 1600 թուին:

Ե.

Երբէք ոչ մի տէրութիւն, որքան էլ բռնաւորական լինի, կաթոլիկութեան պէս զզուելի միջոցների չէ դիմել գիտութեան, ճշմարտութեան ձայնը խղդելու: Եկեղեցին փոխանակ կրքերը հանդարտելու, ինչպէս որ նորա ուղղակի պարտաւորութիւնն էր, աւելի ևս գրգռում էր, և ոչինչ միջոց չէր խնայում իր հեղինակութիւնը անխախտ պահելու համար:

Եկեղեցական պատմագիրները հաստատում են որ երկրորդ դարուց արդէն, քրիստոնէական սիրոյ առաջին եռանդը հանգչելուց յետոյ, սկսաւ կռիւը հաւատի և բանականութեան, ·կրօնի և փիլիսոփայութեան մէջ: Այս վէճերը հանդարտեցնելու համար ստեղծեցին ժողովներ, որոնք սկզբում պարզ խորհրդների նշանակութիւն ունէին, բայց չորրորդ դարուց սկսած՝ այն է երբ քրիստոնէութիւնը նստաւ կայսերական գահի վրայ, նոցա վճիռները ստիպողական ու բռնաւորական ձև ստացան: Այս հանգամանքը եկեղեցին բոլորովին կերպարանափոխ արաւ: Եկեղեցական ժողովները գումարվում էին կայսեր հրամանով, ուր շատ անգամ յաղթութիւնը ձեռք բերելու համար՝ խառնվում էին պալատական կանանց ազդեցութիւնը, գործ էր դրվում կաշառք, բռնութիւն: Ժողովի անդամների բազմութիւնը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում սակաւաթիւ կուսակցութեան բողոքներին: Սորա հետևանքը այն եղաւ որ շուտով սկսան ժողովներ ժողովների դէմ կազմել, որոնց հակառակ որոշումները շփոթ ու երկպառակութիւն ձգեցին քրիստոնեաների մտքի մէջ: Միայն չորրորդ դարումը տասներեք ժողով կազմուեցաւ որ

արիոսեան աղանդը դատապարտեցին, տասնեւհինգը որ ընդունեցին նոյն աղանդը և տասնեւօթը որ կէս-արիոսականութիւն ընդունեցին. ընդամենը քառասունեւհինգ ժողով:

Հիլարիոս, Պուատիէի եպիսկոպոսը, ասում է թէ երկու այլանդակ ու ողորմելի սխալանքներ ընդունուեցան չորրորդ դարումը. առաջինը՝ թէ թոյլ է տուած ասել ու խաբել Եկեղեցու օգտի համար. երկրորդը, թէ հերետիկոսութիւնը պէտք է պատժուի քաղաքական և մարմնաւոր պատիժներով»: Արդարև յաջորդ վեց դարերի ընթացքում արևմտեան եկեղեցու պաշտպանած սկզբունքների վկաներն են կաշառքը, թոյնը, սուրը և կրակը. իսկ նորա յայտնած ճշմարտութիւնները հաստատվում են սուտ և մարդկային բանականութիւնը անպատուող հրաշքներով:

Բայց վերջապէս հասաւ անխուսափելի օրը: Այսպիսի այլանդակ ապացոյցների վրայ հիմնուած վարդապետութիւնները իրանց վարկը կորցրին շատերի առաջ: Երբ մօտենում ենք տասներեքերորդ դարին, տեսնում ենք որ թերահաւատութիւնը տարածվում է հասարակութեան ամէն դասերի մէջ: Նա երևում է նախ վանական կարգերի և յետոյ սպրդում է նաև ժողովրդի մէջ: Յաւիտենական աւետարանի պէս գրքեր լոյս են տեսնում առաջինների մէջ, աղանդներ՝ ինչպէս են Կաթարիստեանք, Ալբիգեանք, կազմվում են երկրորդների մէջ: Նոքա համաձայն էին առհասարակ թէ հրապարակաւ ճանաչուած կրօնը լի է սխալանքներով ու սնապաշտութիւններով, և թէ պապի յափշտակած գահերիցութիւնը ապօրինի ու բռնաւորական գործ է. թէ Հռոմի եպիսկոպոսի ձգտումը աշխարհի տէր լինելու, այնպէս որ նորա իշխանութիւնից դուրս ուրիշ քաղաքական իշխանութիւն չլինի, եկեղեցական կամ աշխարհային, բոլորովին անհիմն է և նախատական մարդկային իրաւունքների համար:

Այս ամպարշտութեան յորձանքի առաջն առնելու համար, պապական կառավարութիւնը երկու հաստատութիւն հիմնեց. Ինկվիզիցիան և Ականջալուր խոստովանութիւնը. վերջինը լրտեսելու միջոց էր, իսկ առաջինը ճնշելու միջոց: Սկզբնական ժամանակներում, երբ հասարակական ձայնը բողոքելու հնար չունէր, Ինկվիզիցիան յաճախ մէկ օրում և առանց դատի սպանում էր ամէն կարգի մարդիկ, ազնուականներ, աբեղաներ, աշխարհականներ, այնպէս որ 1481 ից մինչև 1808 այս զարհուրելի դատարանը դատապարտեց երեք հարիւր հազար մարդ,* որոնցից մօտ երկու հազար հոգի այրեց: Այնքան

տոկալի էր ինկվիզիցիայի վարմունքը որ Պակլեարիչեի բացագանչութիւնը հազարաւոր մարդկանց բացագանչութիւնն էր. «Համարեա անկարելի է այսօր քրիստոնեայ լինել և անկողնում մեռնել»: Ծածուկ խոստովանութիւնը ինկվիզիտորներին միջոց էր տալիս ամեն տեղ գտնուելու ու ամեն բան իմանալու. էլ մարդ չէր մնացել որ իւր տան մէջ ապահովութիւն գտնէ: Քահանայի ձեռին տանտիկինը, աղախինը մէկմէկ լրտեսներ էին, որոնց միջնորդութեամբ տեղեկանում էին տանտիրոջ ամենածածուկ գաղտնիքներին: Նա կանչւում էր դատարանը, ուր ասում էին նորան միայն թէ ամբաստանւում է հերետիկոսութեան մէջ, իսկ ամբաստանողի անունը չէին տալիս. պըտուտակը, պարանը, երկաթէ կօշիկը և ուրիշ տանջանքի գործիքներ նորա տեղն էին բռնում. անմեղ կամ մեղաւոր, նա վերջապէս ինքն իրան ամբաստանում էր:

Չնայելով իւր մեծ զօրութեանը, ինկվիզիցիան իւր նպատակին չհասաւ: Նորա բարբարոսութիւնների հետևանքն այն եղաւ որ կասկածը, թերահաւատութիւնը տիրեց Եւրոպային: Ուրանում էին նախախնամութիւնը, հոգու անմահութիւնը, մարդկային ազատութիւնը, և սկսում էին ճակատագրի հաւատալ. ահա այս տեղն էր հասցրել շատերին եկեղեցական բռնակալութիւնը: Չնայելով անողորմ հալածանքներին, կային մարդիկ, որոնք բարձրաձայն աղաղակում էին թէ հռոմէական եկեղեցին իւր նախնական անարատութիւնը կորցրել է. որոնք բողոքում էին թողութեան թղթեր ծախելու սովորութեան դէմ, որով աղօթքն ու ողորմութիւնը անօգուտ բաներ էին համարւում. որոնք հաստատում էին թէ աւելորդ է մեռելների համար աղօթել, որովհետև նոցա հոգիները արդէն արքայութեան կամ դժոխքի մէջ են:

Ճշմարտութիւնը հրաշքներով ապացուցանելու սովորութիւնը իւր վարկը կորցնում է տասներկուերորդ և տասներեքերորդ դարերում: Իսպանա-մաւրիտական փիլիսոփաների հեգնութիւնները լուսաւորեալ քահանաների ուշադրութիւնը դարձրին այդ խաբեբայական սովորութեան վրայ, և իրաւաբանութեան ուսումնասիրութիւնը սկսաւ առողջ մտքեր տարածել հասարակութիւնների մէջ օրինաւոր և փիլիսոփայական ապացոյցների եղանակի վրայ: Այնուհետև հերձուածները արագութեամբ տարածւում էին, այնպէս որ տասնեվեցերորդ դարու կրօնական վերանորոգութեան ժամանակ, Եւրոպայի ամեն անկիւններում կային բազմաթիւ մարդիկ որոնք ատելութեամբ

լցուած էին դէպի քրիստոնէութիւնը: Այս վտանգաւոր մարդկանց մէջ կային պերիպատետիկեանք, ինչպէս Պոմպոնատիոսը. փիլիսոփաներ և հանճարեղ մարդիկ, ինչպէս Բօդէնը, Րաբլէն, Մօնտէնը, Բէմբօն, Բրունօն:

Ուրեմն կրօնական վերանորոգութիւնը վաղուց խմորվում էր Եւրոպայում: Գերմանիային վիճակուեցաւ այդ յեղափոխութեան մեծ ասպարէզը լինել, ուր կրօնի ու խղճի ազատութեան ախոյեան հանդիսացաւ Օգոստինեան կարգի կրօնաւոր Լութերը: Այդ ժամանակները մտքերի ուղղութիւնը փոխուել էր. այլ ևս չէր կարելի Կենտրբուրիի արքեպիսկոպոսի պէս պահանջել որ մարդ նախ առանց քննութեան ընդունէր ու հաւատար ինչ որ ասում էին նորան և յետոյ աշխատէր հասկանալ ինչ որ հաւատով սովորել էր: Երբ կայետանը ասում էր Լութերին՝ «Դու պէտք է հաւատաս որ Փրկչի թափած մի կաթիլ արիւնը բաւական եղաւ մարդկային ազգը գնելու և թէ խաչի վրայ թափած մնացած արիւնը ժառանգութիւն է մնացել պապին, մի գանձ կազմելու համար որից դուրս են բերվում թողութեան թղթերը,» յամառ աբեղան վրդովվում էր այդպիսի այլանդակ խօսքերի դէմ և կը մերժէր նոյա եթէ հազարաւոր հրաշքներ մէջ բերուէին նորան համոզելու համար: Թողութեան թղթեր ծախելու ամօթալի սովորութիւնը առաջին անգամ մտցրին եպիսկոպոսները, որոնք այդ միջոցով ահագին փողեր ձեռք էին բերում իրանց շռայլ պէտքերի համար: Պապերը, տեսնելով թէ ինչ օգուտ կարելի է քաղել թողութեան թղթերից, խլեցին եպիսկոպոսներից այդ իրաւունքը և թողութիւնների մենավաճառութիւնը իրանց սեպհականեցրին առանձին գործակալներ կարգելով այդ առուտուրի համար, գլխաւորապէս աղքատ կարգերի կրօնաւորներից: Այս կարգերը մրցում էին միմեանց հետ. իւրաքանչիւրը պարծենում էր թէ իւր թղթերը աւելի զօրութիւն ունին, և վկայ էր բերում Աստուածածնի և գլխաւոր սրբերի առաջ ունեցած ընդունելութիւնը: Ոմանք մինչև անգամ կարծեցին թէ եկեղեցու դէմ դայրանալու գլխաւոր պատճառը Լութերի կողմից, որ Օգոստինեան էր, եղել էր այն շնորհը որ վայելում էր Դոմինիկեան կարգը թողութեան թղթեր ծախելու: Բայց իսկական պատճառը պարունակվում էր հետևեալ հարցի մէջ. Աստուածաշո՞ւնչը պարտական է եկեղեցու հեղինակութիւնը ճանաչել, թէ եկեղեցին Աստուածաշնչի հեղինակութիւնը:

Պատմութիւնից յայտնի են այս մեծ վէճի մանրամասնութիւնները, որ այնքան պատերազմների ու արիւնհեղութիւնների առիթ է տուել. թէ ինչպէս Լութերը Վիտտենբերգի մայր եկեղեցու դրան վրայ կպցրեց իննսունեւհինգ խնդիր եւ կանչուեցաւ Հռոմ դատուելու համար. ինչպէս դատապարտուեցաւ նա իբրեւ հերետիկոս եւ այդ խնդիրը մի տիեզերական ժողովի յանձնեց. ինչպէս բոլոր վէճերի մէջ քաւարանի, հացի եւ գինու գոյափոխութեան, գաղտնի խոստովանութեան եւ թողութեան վրայ, մի հիմնական գաղափար կար, այն է ազատ քննութեան իրաւունք. ինչպէս Լութերը բանադրուեցաւ 1520-ին, եւ ինչպէս նա այրեց պապի կոնդակը եւ եկեղեցական օրէնքների հատորները, յայտնելով թէ այդ օրէնքները ձգտում էին աշխարհային իշխանութիւնը կործանելու եւ պապականը զօրացնելու. ինչպէս այս ճարտար հնարքով շատ գերմանական իշխանների սիրտը գրաւեց. ինչպէս կանչուեցաւ Վորմսի կայսերական ժողովը, եւ հրաժարուելով թաք կացաւ Վարտբուրգի ամրոցում, մինչ նորա վարդապետութիւնը տարածվում էր եւ մի ուրիշ կրօնական յեղափոխութիւն ծագում էր Զուիցերիայում Ցվինգլիի եւ մասամբ Կալվինի առաջնորդութեամբ, եւ ինչպէս գերմանական վերանորոգութիւնը ստացաւ վերջապէս իւր քաղաքական կազմակերպութիւնը Սմալկալդում:

Այս բոլոր շարժողութեան հետեւանքն այն եղաւ որ բողոքական եկեղեցիները ընդունեցին այս սկիզբը, թէ Սուրբ Գրքի առաջնորդութիւնը բաւական է մարդու համար: Աւանդութիւնը մերժուեցաւ եւ Աստուածաշունչը ուղղակի մեկնելու իրաւունքը հաստատուեցաւ:

Սակայն Սուրբ Գրքի ընծայուած հեղինակութիւնը չէր սահմանափակվում լոկ բարոյական ու կրօնական նիւթերով. Նորան համարեցին փիլիսոփայութեան եւ գիտութեան միակ առաջնորդ: Ոմանք մինչեւ անգամ Եպիփանէսի պէս հեռու գնացին եւ համոզուեցան թէ Աստուածաշունչը հանքաբանութեան ամբողջ դրութիւն է պարունակում: Րէֆորմատորները գիտութեան մէջ միայն այն էին թոյլ տալիս ինչ որ համաձայնում էր Ծննդոց գրքի հետ: Նոցա մէջ կային մարդիկ որ համոզուած էին, թէ կրօնը եւ բարեպաշտութիւնը միայն այն ժամանակ կարող են ծաղկել, երբ ուսումը եւ գիտութիւնը կը վերանան: Այն տխուր սկզբունքը, որ երբեմն Տերտուղղիանոսը եւ Օգոստինոսը առաջ էին բերել եւ որից այնքան

օգուտ էր քաղել պապութիւնը, թէ ամենայն գիտութիւն պարունակուած է Սուրբ Գրքում, եռանդուն պաշտպաններ գտաւ: Վերանորոգութեան առաջնորդները, Լութերը և Մելանխտոնը, վճռել էին փիլիսոփայութիւնը արտաքսել եկեղեցուց: Լութերը հրապարակաւ յայտնեց Արիստոտէլի գրուածները ուսումնասիրելու անօգտակարութիւնը և նախատեց յունական փիլիսոփայութիւնը: Հետևաբար գիտութիւնը ոչնչով պարտական չեղաւ Գերմանիայի կրօնական վերանորոգութեանը:

Քրիստոնէութեան համար ամենադժբաղդ օրը այն եղաւ, երբ նա բաժանուեցաւ գիտութիւնից, երբ ստիպեց իւր նշանաւոր ներկայացուցչին, Որոգինէսին, հեռանալ Աղէքսանդրիայից և քաշուիլ Կեսարիա: Քրիստոնէութեան վարդապետները ի զուր աշխատեցան հետևեալ դարերում «Սուրբ Գրքերի ուղ և ծուծը քամել», ինչպէս որ ասում էին այն ժամանակները, մի գիտութիւն կազմելու և հարկաւոր բացատրութիւններ տալու համար: Չորրորդ դարուց մինչև տասնևվեցերորդ դարու պատմութիւնը ցոյց է տալիս թէ ինչ եղաւ նոցա ջանքերի հետևանքը: Տգիտութեան դարերը այս ուղղութեան պարտական են այն թանձր խաւարի համար որի մէջ թաղուած մնացին:

Ինկվիզիցիայի բոլոր միջոցները անզօր եղան կրօնական վերանորոգութեան առաջն առնել: Տպագրութեան գիւտից յետոյ նոր մտքերը սկսան արագութեամբ տարածուիլ Եւրոպայի մէջ. Պապերի աչքը վախեցաւ աւելի մեծ հարուածից, և նոքա հիմնեցին գրաքննութիւնը: Գրաքննիչների պարտաւորութիւնն էր քննել գրքերը ու տպագրելի ձեռագիրները և վճռել, թէ հաւատացեալները կարող են այդ գրքերը կարդալ թէ ոչ. ուղղել այն գրքերը, որոնց սխալները սակաւաթիւ են և որոնք պարունակում են օգտակար ու փրկարար ճշմարտութիւններ, և դատապարտել այն գրքերը, որոնց սկզբունքը հերետիկոսական ու վտանգաւոր են: Գրաքննիչների իրաւունքը ինկվիզիցիայի իրաւունքից աւելի տարածուած էր, որովհետև նոքա չէին հետամուտ լինում միայն այնպիսի մտքերի որ հաւատի են վերաբերում, այլ և բարոյականութեան, եկեղեցու կարգերի ու հասարակական շահերի են վերաբերում: Վերջերը պապերը սկսել էին պահանջել որ ամենայն գիրք, որ մասնաւոր թոյլտուութիւն չէր ստացած՝ արգելուէր: Այդ մի յանդուգն փորձ էր ժողովրդին օգտակար մտքերից հեռու պահելու:

Ինչպէս որ տեսանք, հակառակութիւնը կրօնի ու գիտութեան մէջ երեւան է գալիս հէնց Քրիստոնէութեան սկզբից. կարելի է հետեւել նորան հետզհետէ դարերի ընթացքում: Այդ հակառակութիւնը երեւում է Աղէքսանդրեան Մուսէոնի կործանման մէջ, Երիգենէսի և Վիկլէֆի դէմ յարուցուած վէճերի մէջ. այն արհամարհանքի մէջ՝ որով տասներեքերորդ դարու հերետիկոսները մերժեցին Աստուածաշնչի պատմութիւնը ստեղծագործութեան վրայ. բայց միայն Կոպերնիկի, Կեպլերի և Գալիլէոսի ժամանակներումն էր որ գիտութիւնը բուռն կերպով շարժեց իւր շղթաները: Եկեղեցու քաղաքական իշխանութիւնը շատ ընկած էր այն ժամանակ և նորա գլուխները տեսան որ իրանց շէնքը ամպերումն են կառուցել: Այն խիստ միջոցները, որոնց մինչև այն ժամանակ յաջողութեամբ էին դիմել, էլ չէին կարող գործ դրուիլ: Այստեղ ու այնտեղ մի մի փիլիսոփայ այրել աւելի վնաս կըհասցնէր քան օգուտ: Եկեղեցին բոլորովին յաղթուել էր Գալիլէոսի դէմ տուած պատերազմների մէջ, և երբ որ Նիւտընի անմահ գրուածքը լոյս տեսաւ, այլ ևս ոչինչ ընդդիմութիւն ցոյց չտուեց:

Նիւտընից մինչև մեր օրերը գիտութեան ու կրօնի մէջ եղած անջատումը աւելի ու աւելի զգալի եղաւ: Եկեղեցին յայտնել էր թէ երկիրս տիեզերքի կենտրոնական ու գլխաւոր մարմինն է. թէ արեգակը, լուսինը և աստղերը մեր հարկատուներն են. այս խնդրի մէջ նա յանդիմանուեցաւ աստղաբաշխութիւնից. նա հաստատել էր թէ մի համաշխարհային ջրհեղեղ ծածկել էր երկիրը և միայն տապանում գտնուած կենդանիներն էին փրկութիւն գտել. երկրաբանութիւնը ցոյց տուեց նորա սխալը: Նա ուսուցել էր թէ սորանից վեց հազար տարի առաջ առաջին մարդը երևել է երկրիս վրայ կատարեալ վիճակի մէջ, որ յետոյ նա կորցրեց, և գիտութիւնը ցոյց տուեց որ մարդս շատ աւելի առաջ էր ապրում և բոլորովին վայրենի դրութեան մէջ էր գտնվում:

Գ.

Աշխարհի կառավարութեան եղանակի վերայ երկու մեկնութիւն կայ: 1) Նախախնամութեան անընդհատ միջամտութիւնը. 2) Հաստատուն օրէնքի ներգործութիւնը:

Քահանաները միշտ կըհակուին դէպի առաջինը, որովհետև նոցա պաշտօնն է միջնորդ լինել աղօթող մարդու և ներգործող Նախախնամութեան մէջ: Նոցա նշանակութիւնը աւելանում է այն կարողութեամբ որով ենթադրվում է թէ ազդում են Նախախնամու-

թեան վրայ և առաջուց ճանաչում են նորա գործերը: Հին Հռոմում նոցա պաշտօնն էր մանաւանդ գուշակել ապագան պատգամներով, զոհերի փորոտիքը զննելով, գուշակութիւններով, և զոհեր մատուցանել աստուածներին ընդհանրապէս մարդկանց հետ հաշտեցնելու համար: Նոր Հռոմում, նոքա աւելի հեռու են գնում, և պնդում են թէ իրանց բարեխօսութեամբ կարող են կանոնաւորել մարդկային գործողութիւնների ընթացքը, հեռացնել մեզ սպառնացող վտանգները, մատակարարել մեր ցանկացած բարիքը, հրաշքներ գործել և մինչև անգամ բնութեան կարգը փոխել:

Հասկանալի է ուրեմն թէ ինչի համար քահանաները հակառակ են այն վարդապետութեան, որ ուսուցանում է թէ աշխարհս կառավարվում է օրէնքի բացարձակ իշխանութեամբ: Այս վարդապետութիւնը կարծես ստորացնում է նոցա արժանաւորութիւնը, նոցա նշանակութիւնը: Նոցա կարծիքով մեծ թշնամանք է ընդունել մի Աստուած, որի վերայ կարելի չլինի ներգործել մարդկային պաղատանքներով, մի սառն ու անկիրք աստուածութիւն կը լինի այդ:

Սակայն աստղերի կանոնաւոր շարժողութիւնը, շատ վաղ ժամանակներում արդէն, չէր կարող խորին տպաւորութիւն չգործել մտածող մարդկանց վրայ. արևի ծագումն ու մայր մտնելը, ցերեկուայ լոյսը որ երևում և անյայտանում է, լուսնի փոփոխութիւնները, եղանակների վերադարձը, մոլորակների ընթացքը, այս և սորա նման ուրիշ հազարաւոր երևոյթներ ի՞նչ են յայտնում մեզ, եթէ ոչ թէ իրերի մէջ մի կարգ ու կապ կայ: Գուցէ առաջին մարդկանց հաւատը բնութեան կանոնաւոր ընթացքի վերաբերութեամբ երբեմն երբեմն խախտվում էր հազուագիւտ երևոյթներով, որպիսի են խաւարումները, բայց նոցա հաւատը հարիւր անգամ աւելի զօրութեամբ պիտի վերածնէր, երբ որ նշմարեցին թէ խաւարումներն անգամ կանոնաւոր ժամանակներում երևում են, և թէ կարելի է առաջուց իմանալ նոցա երևելու ժամանակը:

Բոլոր աստղաբաշխական հետազօտութիւնները այս հետևանքին են հասել, թէ բնութեան օրէնքների մէջ երբէք չէ եղել մի ինքնակամ միջամտութիւն: Բնութեան փիլիսոփան հաստատում է թէ աշխարհում մի նշանակեալ ժամանակում արտադրվող իրերը նախընթաց իրերի ուղղակի հետևանք են և հետևորդ իրերի ուղղակի պատճառ. օրէնքը և պատահմունքը մեքանիկական անհրաժեշտութեան զանազան անուններ են:

Երեք շրջան է նկատվում աստղաբաշխութեան յառաջադիմութեան մէջ. առաջին շրջանում զննել են երկնային մարմինների շարժողութիւնները: Երկրորդ շրջանում գտել են նոցա իսկական շարժողութիւնները և մասնաւորապէս մոլորակների օրէնքները և շրջանառութեան ձևը. այս շրջանը պատկանում է Կոպերնիկին: Երրորդ շրջանում ճանաչել են այդ օրէնքների պատճառները, և այս շրջանը պատկանում է Նիւտոնին:

1867 տարին մի նշանաւոր թուական է ոչ միայն գիտութեան, այլ նաև մարդուս մտաւոր զարգացման պատմութեան համար: Այդ տարուան ընթացքում Նիւտոնը հրատարակեց իւր աննման, անմահ աշխատութիւնը օրէնքների վրայ:

Հիմնուելով այն սկզբունքի վրայ, թէ մարմինները, նայելով իրանց մեծութեանը և միմեանց բաժանող տարածութեանը, աւելի կամ պակաս ձգում են. միմեանց, Նիւտոնը ցոյց տուեց թէ կարելի է իմանալ երկնային մարմինների բոլոր շարժողութիւնները և թէ կեպլէրի օրէնքները, այսինքն ձուակերպ շարժողութիւնները, մարմինների գրաւած միջոցը, ժամանակի և տարածութեան յարաբերութիւնը, կարող էին առաջուց իմացուիլ:

Աղէքսանդրեան դպրոցի մաթեմատիկոսները ցոյց էին տուել որ մի ընկնող մարմնի ուղղութիւնը միշտ դէպի երկրի կենտրոնն է: Նիւտոնը բացատրեց որ այդ անշուշտ այդպէս պիտի լինի, որովհետև մի գնտաձև մարմնի ամենափոքր մասնիկների ձգողական զօրութիւնը այնպիսի է որ իբրև թէ այդ բոլոր մասնիկները մէջտեղում կենտրոնացած լինէին: Այս կենտրոնական զօրութիւնը, որ որոշում է մարմինների անկումը, անուանուեցաւ ձգողականութիւն:

Նիւտոնի արժանաւորութիւնը պարունակվում է նորանում որ մեքենագիտութեան օրէնքները յարմարացրեց երկնային մարմիններին, և հաստատեց որ ուսումնական տեսութիւնները պիտի հիմնուին զննողութեան և ճիշտ հաշիւների վրայ: Նա անհերքելի կերպով ապացուցեց որ լուսինը պահվում է իւր շրջանի մէջ, և ստիպուած է պտտել երկրի շուրջը այն ձգողական զօրութեամբ որ պատկանում է այս վերջին մոլորակին: Այսպէս և երկիրս և միւս մոլորակները ստիպուած են պտտել արեգակի շուրջը այն ձգողական զօրութեամբ, որ ունի այս աստղը, և մոլորակային մարմինների միմեանց վրայ ունեցած ներգործութիւնից զանազան արտուղութիւններ են առաջանում, որոնք, մարմինների մեծութիւնը ու տարածութիւնը գտնելուց

յետոյ, կարող են ճշտութեամբ որոշուիլ: Այսպէս ահա Ուրանոսի խոտորումովը իւր սովորական դրութիւնից գտնուեցաւ Նեպտուն մոլորակը:

Բողոքական աղանդների միջեանց մէջ ունեցած վէճերի և սոցա բոլորի կաթոլիկական եկեղեցու դէմ ունեցած թշնամական յարաբերութիւնների պատճառով, Նիւտոնի մեծ տեսութիւնը աննշմարելի կերպով անցաւ, և առանց դժուարութեան հաստատուեցաւ ամեն տեղ: Այս տեսութեան փիլիսոփայական հետևանքը մեծ կարևորութիւն ունէր, որովհետև նա ոչ միայն հաստատում էր Կոպերնիկի արևակենտրոնական վարդապետութիւնը և Կեպլէրի օրէնքները, այլ ապացուցանում էր, թէ ինչ որ էլ ասէ Եկեղեցին, արևը է ու պիտի լինի մեր կենտրոնը. թէ Կեպլէրի օրէնքները ոչ թէ բացառական երևոյթներ են, այլ մաթեմատիկական անհրաժեշտութեան արդիւնք, և թէ անկարելի է որ այլապէս լինի: Ուրիշ խօսքով, արեգակնային դրութիւնը չէ ընդհատվում նախախնամութեան միջամտութեամբ, այլ կառավարվում է մի անփոփոխելի օրէնքով, և այդ օրէնքը ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի մաթեմատիկական հարկաւորութիւն:

Դարձնենք այժմ մեր հայեացքը դէպի մի առարկայ, որ մի նկատմամբ ամենաաննշանն է, իսկ միւս նկատմամբ ամենակարևոր է մեզ համար: Արդեօք մարդկային հասարակութիւնը, իւր պատմական ասպարէզում, հպատակո՞ւմ է մի անփոփոխելի օրէնքի թէ ո՛չ: Կամ միթէ պիտի եզրակացնենք թէ հասարակութեան, ինչպէս և իւրաքանչիւր անհատի մէջ, ոչինչ չէ՞ առաջանում, թէ ամեն ինչ բղխում, առաջ է գալիս նախընթաց գոյութիւններից:

Եթէ մինը ծիծաղի այն վարդապետութեան վրայ որ ընդունում է թէ կենդանական ձևերը յաջորդաբար զարգացել են, զարգացում որ մի օրգանական անընդհատ շղթայ է կազմում կեանքի երկրիս վրայ երևան գալուց մինչև մեր օրերը, թող մտածէ թէ հէնց ինքն էլ զանազան փոփոխութիւնների ենթարկուել է: Իննամսեայ յղութեան ժամանակ, նորա կեանքի տիպը ջրային էր և այդ միջոցին նա հետզհետէ զանազան ձևեր է ստացել: Ծննդեան ժամանակ նորա կեանքի տիպը օդային է դարձել. նա սկսել է ներշնչել օդը և նոր սնունդ պահանջել. սակայն դեռ չէր կարող ոչ տեսնել, ոչ լսել, ոչ հասկանալ: Աստիճանաբար նա ստացել է կեանքի ճանաչողութիւնը, նշմարել է արտաքին աշխարհը: Ժամանակ անցնե-

ըւց յետոյ երևել են ատամները, և նորա սնունդը փոփոխութիւն է ստացել: Այս վիճակի մէջ նա անցել է մանկութեան ու պատանեկութեան օրերը, և հասակին համեմատ մարմնի անդամները մեծացել, մտաւոր կարողութիւնները աճել են: Տասնևհինգ տարեկան հասակում նորա բարոյական բնաւորութիւնը փոխուել է. նոր մտքեր, նոր կրքեր տիրապետել են նորան: Զարգացումը, փոփոխումը չէ դադարում այստեղ: Կեանքի և օրգանական կատարելութեան վերջին կէտը հասել է. յետոյ գալիս է անկումը: Աւելորդ է նկարագրել կեանքի այս տխուր շրջանը, մարմնի և մտքի տկարութիւնը: Այս յայտնի է որ բոլոր երկրիս վրայ բնակող մարդկային էակները, եթէ մի որևիցէ պատճառից յանկարծ չեն տարուել, մի դարու ընթացքում ստացել են այս բոլոր փոփոխական դրութիւնները:

Մի՞թէ ուրեմն մեզանից իւրաքանչիւրի մէկ վիճակից միւս վիճակի փոխուելու մէջ նախախնամութեան միջամտութիւնը պէտք է տեսնել, թէ աշխարհիս երեսը ծածկող մարդկային էակների անհամար բազմութիւնը ենթարկուել է մի անփոփոխ օրէնքի իշխանութեանը:

Բայց առանձին անհատներից կազմւում են հասարակութիւններն ու ազգերը: Ուրեմն նոցա և սոցա մէջ էլ մի և նոյն յարաբերութիւնները կան՝ ինչ յարաբերութիւններ նկատում ենք մարմնի լրացուցիչ մասների և նոյն իսկ մարմնի մէջ: Այս մասները իրանց պաշտօնը կատարելուց յետոյ մեռնում են:

Իւրաքանչիւր ազգ, ինչպէս և իւրաքանչիւր անհատ, ծնում է առանց իմանալու, մեռնում է առանց կամենալու, և շատ անգամ մահուան դէմ պատերազմելով: Ազգային կեանքը ոչնչով չէ զանազանվում անհատական կեանքից, բացի նորանից միայն որ աւելի երկար է տևում. բայց նա չէ կարող խուսափել իւր անհրաժեշտ վախճանից: Պատմական նկատմամբ իւրաքանչիւր ազգ ունի իւր մանկութիւնը, իւր երիտասարդութիւնը, իւր հասուն հասակը, իւր ծերութիւնը, եթէ միայն մի որևիցէ կողմնակի արգելք չէ խանգարում նորա կեանքի բնական ընթացքը:

Մեր ամենի կեանքի կերպարանափոխութիւնների մէջ, եթէ այդ կերպարանափոխութիւնները ամբողջ ու կատարեալ են, միշտ ընդհանուր բնաւորութիւններ են երևում. և որովհետև երևոյթների միակերպութիւնը ցոյց է տալիս թէ անհատները մի և նոյն օրէնքի ենթարկուած են, դորանից կարող ենք հետևեցնել թէ ազ-

դերի կեանքը, և մինչև անգամ ամբողջ մարդկութեան կեանքը, պատահման կամ հաճոյքի արդիւնք չէ, այլ մի կապ որի մէջ իւրաքանչիւր անցք իւր ստուգութիւնը առաջուց գրած ունի իւր նախընթաց անցքում, և իւր կարգին ապահովացնում է ապագայ անցքի ստուգութիւնը:

Բայց այս եզրակացութիւնը ստոյիկեան փիլիսոփայութեան հիմնական սկզբունքն է, որ շատ դէպքերում շատ յոյն և հռոմայեցի փիլիսոփաների, զօրապետների և կայսրների նեցուկն ու առաջնորդն է եղել: Այս դրութիւնը նոյնպէս չէ ընդունում թէ պատահմունքը առաջնորդում է անցքերին, այլ հաւատում է թէ մի հարկ տանում է նոցա դէպի վախճանական բարին, առաջնորդելով մարդուն դէպի հաստատամտութիւն և առաքինութիւն: Գուցէ ընդունելի համարուի Մօնտէսկիէօի կարծիքը երբ ասում էր թէ ստոյիկեան փիլիսոփայութեան կործանումը մեծ կորուստ է եղել աշխարհի համար, որովհետև նա միայն պատրաստել էր մեծ քաղաքացիք և մեծ մարդիկ:

Հռոմէական պապական եկեղեցին բոլորովին հակառակ է վերոյիշեալ սկզբունքին՝ աշխարհի կառավարութեան վերաբերութեամբ: Նորա եկեղեցական պատմութիւնը ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ հրաշքների ու գերբնական միջամտութիւնների ժամանակագրութիւն: Այն տեղ, տեսնում ես ու սրբերի աղօթքը կանգնեցնում է աստղերի ընթացքը և դադարեցնում բնութեան գնացքը. ամպերն ու պատկերները հրաշքներ են գործում, ինչպէս նաև ոսկորները, մազերը և ամեն տեսակ մասունքները. որոնք ըստինքեան յարգելի առարկաներ են, բայց ճշմարտութիւնը յայտնելու զօրութիւն չունին:

Է.

Հռոմէական քրիստոնէութիւնը կամ կաթոլիկութիւնը պատասխանատու է այն ողբալի դրութեան համար որի մէջ մնաց Եւրոպան չորրորդ դարուց մինչև տասնևվեցերորդ դարը:

Տասնևվեցերորդ դարու սկզբին, այսինքն կրօնական վերանորոգութեան ժամանակ, շատերը համեմատում էին հասարակութեան վիճակը նախընթաց դարերի վիճակի հետ: Բարոյական սկզբունքները ամենևին չէին փոխուել. միտքը առաջ չէր գնացել. հասարակութիւնը չէր յառաջադիմել: Յաւիտենական քաղաքի շքեղութիւնը անյայտացել էր. մարմարեայ փողոցները, որոնցով պարծենում էր

Օգոստոսը, այլ ևս չկային. տաճարները կործանած էին, սիւները խորտակուած, հսկայակերտ ջրմուղները որոնք անցնում էին Հռոմէական դաշտովը, մի տխուր տեսարան էին ներկայացնում: Կապիտոլիոնը այծերի բլուր էր դարձել և Հրապարակը որ տեղից երբեմն աշխարհին օրէնքներ էին տալիս, այժմ կոչվում էր կովերի դաշտ: Կեսարների պալատը ծածկուած էր հողակոյտներով. Կարակալլայի բաղանիքները, իրանց կամարակապ սրահներով, իրանց պարտէզներով, իրանց աւազաններով, ջրմուղների խորտակուելու պատճառով բարձի թողի էին արած: Պապերը և իրանց եղբօրորդիքը (նեպօտա) հնութեան յիշատակարանների աւերակներով իրանց համար պալատներ էին շինում, հին տաճարների կողոպուտով եկեղեցիներն էին զարդարում: Կորնթական հոյակապ սիւների վրայ սրբերի պատկերներ քանդակեցին. եգիպտական հիանալի կոթողները անպատուեցին նոր արձանագրութիւններով: Միով բանիւ պապական Հռոմը ոչինչ բանում չյարգեց նախնական Հռոմը. ընդհակառակն, ամեն քայլափոխում իւր աւերութեան հետքերը թողեց:

Քահանայապետները երբեմն Բիւզանդիայի կայսրների վասալներն էին եղել, երբեմն փրանկեան թագաւորների տեղապահները, երբեմն աշխարհի տէրերը: Նոցա դրութիւնը և նոցա կառավարութիւնը այնքան անգամ փոխուեցան որքան փոխուեցան Եւրոպական ազգերի դրութիւնն ու կառավարութիւնը: Նոցա քաղաքական սկզբունքները, գիտաւորութիւնները, ձգտումները շարունակ կերպարանափոխ եղան: Մի կէտ կար միայն որի վրայ նոքա միշտ հաստատ մնացին, այն է՝ աններողամտութիւնը կրօնական խնդիրների վերաբերութեամբ: Հռոմէական կառավարութիւնը, իրան համարելով Եւրոպայի կրօնական կեանքի կենտրոն, միշտ մերժել է այն միտքը թէ մի ուրիշ կրօն կարող է գոյութիւն ունենալ իւր իշխանութիւնից դուրս, և սակայն քաղաքականապէս և կրօնականապէս մինչև ուղեղը փտած էր: Էրասմը և Լութերը զարմանալով լսել և փշաքաղուելով տեսել էին հռոմէական հասարակութեան հայհոյանքները և անաստուածութիւնը:

Պատմութիւնը սոսկալի գոյներով նկարագրում է քրիստոնէութեան մայրաքաղաքի բարք ու վարքի ապականութիւնը: Պապերը իրանց ընտրութեան ժամանակ համարեա միշտ տարիքը առած մարդիկ էին, հետևաբար և իշխանութիւնը շարունակաբար ձեռքից ձեռք էր անցնում: Թէև Լութերի ժամանակ Հռոմի բնակիչների

թիւը եղել էր մինչև ութսուն հազար հոգի, բայց կային բազմաթիւ մարդիկ զանազան պատիւների ու հասարակական պաշտօնների տէր և աւելի մեծ բազմութիւն պաշտօնի հետամուտ եղողների։ Պապական գահի վրայ նստող բաղդաւոր մահկանացուն հազարաւոր պաշտօններ ունէր բաժանելու, պաշտօններ՝ որ առանց խղճահարուելու հներից խլում էր նոր ցանկացողներին ծախելու համար։ Հէնց այս նպատակով շատ պաշտօններ էլ ստեղծվում էին։ Ազնուութիւնը և ընդունակութիւնը ամենևին չէին գնահատվում. մի բան միայն հարցնում էին. պաշտօն ցանկացողը ի՞նչ օգուտ կարող է բերել պապական կուսակցութեան, և ո՞րքան կարող է վճարել ստացած տեղի համար։ Ուիլեամ Մէլըբուրին ասում է թէ իւր ժամանակ Հռոմում ամեն սրբազան իրերը առուտուրի առարկայ էին. Եկեղեցին դարձել էր մի արծաթի գործարան։ Անհամար գումարներ հաւաքվում էին զանազան պատճառներով Իտալիայից և Եւրոպայի միւս երկրներից։ Փող դիզելու ամենազզուելի միջոցն էին թողութեան թղթերը, որոնք հաւատացեալներին մեղանչելու իրաւունք էին տալիս։ Կրօնը, ինչպէս որ հասկանում էին նորան Իտալիայում, ոչ այլ ինչ էր բայց եթէ մի արհեստ ժողովրդները կողոպտելու։

Հռոմից դարձնենք մեր հայեացքը Եւրոպական ցամաքի վրայ, և տեսնենք թէ ինչ օգուտ է տուել նորան կաթոլիկութիւնը, որին դարևոր ժամանակներ ենթարկուեցաւ. ծառը իւր պտուղներից կը ճանաչենք։

Եւրոպական ցամաքը համարեա ամեն տեղ խիտ անտառներով ծածկուած էր։ Տեղ տեղ երևում էին քաղաքներ և վանքեր։ Ցած տեղերում, գետերի երկարութեամբ, ձգվում էին ճահիճներ որոնց ժանտահոտութիւնը ապականում էր օդը և հեռաւոր տեղ մահ էր տարածում։ Փարիզում և Լոնդոնում տները փայտաշէն ու հողաշէն էին, յարդով ու եղէգնով ծածկուած. պատուհաններ ամենևին չունէին, և շատ տների յատակը տախտակամածով ծածկուած չէր. մեր ժամանակի գորգերի տեղ՝ յարդ էին տարածում գետնի վրայ և այնպէս պառկում։ Վառարաններ նոյնպէս չկային. հնոցի ծուխը դուրս էր գալիս կտուրների երթիկով։ Մարդիկ, կանայք և երեխայք քնում էին մի և նոյն սենեակում, շատ անգամ ընտանի կենդանիների հետ միասին։ Անկողինը կազմվում էր սովորաբար մի յարդալից պարկից, և մի ուրիշ ասրալից պարկ բարձի տեղ դնում էին գլխների տակ։ Անձնական մաքրութիւնը անծանօթ էր այն ժամա-

նակ. տէրութեան բարձր պաշտօնեաների և մինչև անգամ կէնտրբէրիի արքեպիսկոպոսի վրայ եւ. էին գալիս զանազան միջատներ։ Մարմնի կեղտոտութիւնը ծածկելու համար, գործ էին ածում անուշահոտ իւղեր։ Հասարակ քաղաքացին կաշուէ շորեր էր հագնում, և եթէ շաբաթը մի անգամ ճաշին միս ուտէր, իւր անձը բաղդաւոր էր համարում. իսկ գիւղացին շատ անգամ յարդով էր ծածկում իւր մերկութիւնը, կանաչեղէնն էր նորա սովորական կերակուրը, երբեմն և ծառերի արմատներն էր ուտում. Անգլիայում կային գիւղեր որ հացի գործածութիւնը չէին ճանաչում։

Զարմանալի՞ է սորանից յետոյ որ 1030-ի սովի ժամանակ մարդկային միսը եփէին ու ծախէին, որ 1258-ի սովի ժամանակ տասնևհինգ հազար հոգի մեռնէին Լոնդոնում։ Զարմանալի՞ է որ ժանտախտը այնպիսի կոտորածներ գործէր որ կենդանի մնացածները բաւական չէին մեռելներին թաղելու։ 1348-ի ժանտախտի ժամանակ, որ Արևելքից եկել ամբողջ Եւրոպա տարածուել էր, ֆրանսիայի ժողովրդի երրորդ մասը կոտորուեցաւ։

Ահա այս վիճակի մէջ էին գիւղացիք և քաղաքների աղքատ բնակիչները։ Բայց և ազնուականների վիճակը նախանձելի չէր։ Անգլիայում ազնուականներից շատը, որկրամոլութեան ու մեղկութեան անձնատուր լինելով, եկեղեցի չէին գնում. այլ իրանց ննջարանում ասել էին տալիս քահանային առաւօտեան ժամերգութիւնը և պատարագը, իսկ իրանք անկողնում ձգուած ոչինչ չէին լսում։ Հասարակ ժողովուրդը հզօր պարոնի ձեռքին որս էր. նա խլում էր նորա ստացուածքը, ուղարկում էր նորան հեռաւոր երկրներ, բռնաբարում էր նորա աղջիկները կամ ստրուկի պէս ծախում։ Ֆէօդալական ամրոցները աւազակների որջեր էին։ Սաքսոնական ժամանակագիրները պատմում են թէ ինչպէս մարդիկ ու կանայք քաշէքաշ տարվում էին այդ ամրոցները, ուր նոցա մարմնի անդամները այրում էին, ոտներից կախում, պարաններով պինդ կապում և հազար ու մէկ չարչարանքներ տալիս՝ մինչև որ պահանջուած հարկը վճարէին։

Բոլոր Եւրոպայում տէրութեան շահաւոր պաշտօնները եկեղեցականների ձեռքին էին։ Ամեն տեղ երկու կառավարութիւն կար, ազգային կառավարութիւնը՝ որի ներկայացուցիչն էր տեղական իշխանը, և օտարական կառավարութիւնը՝ որի ներկայացուցիչներն էին պապի նուիրակները։ Բնականաբար հռոմէական ազդեցութիւնը ա-

ւելի զօրեղ էր. պապական նուիրակը ներկայացնում էր մի այնպիսի իշխանի կամքը որ ամբողջ ցամաքի վրայ իշխում էր: Իսկ տեղական իշխանի ազդեցութիւնը աւելի թոյլ էր, որովհետև դրացի երկրների մէջ հակառակութիւնները սովորաբար անպակաս էին, և Հռոմը խորամանկութեամբ աշխատում էր նոր նոր գժտութիւններ ծնեցնել: Եւրոպայի թագաւորները երբէք չկարողացան միանալ իրանց հասարակաց թշնամու դէմ: Երբ մի որ և իցէ հարց զարթում էր, պապերը իսկոյն խառնվում էին՝ ժողովրդի բարոյական և նիւթական օգուտը պատճառ բերելով. բայց նոցա իսկական նպատակն էր ապահովացնել իրանց ահագին եկամուտները և ապրելու միջոց տալ Եկեղեցու անթիւ սպասաւորներին: Պապի ու կղերի ստացած հարկերը շատ անգամ իշխանի պալատը գնացած հարկերից երկու ու երեք անգամ աւելի էին:

Մինչ բարձրաստիճան հոգևորականները աշխատում էին ձեռք բերել շահաւոր պաշտօններ և վանահայրերը կոմսերի հետ մրցում էին իրանց ստրուկների բազմութեամբ (կային վանահայրեր որ մինչև 20,000 ստրուկ ունէին), աղքատ աբեղաներ ամեն կողմից ողողում էին հասարակութիւնը, և խեղճերի քիչ ստացուածքի մի մասն էլ իրանք էին առնում: Անթիւ անհամար մարդիկ կային որ իրանց կեանքը ծուլութեամբ էին անցկացնում, մի օտար իշխան էին ճանաչում և ուրիշների աշխատանքով ապրում էին: Ամեն օր փոքրիկ հողերը միանում էին մեծ հողերի հետ, աղքատները աւելի ևս աղքատանում էին, հասարակութեան մէջ անբարոյականութիւնը աւելի ու աւելի տարածվում էր: Վանքերից դուրս ոչինչ կրթութիւն չկար. առհասարակ եկեղեցին չէր ցանկանում որ աշխարհականները կրթութիւն ստանային, այդ անհամաձայն կը լինէր նորա ընդունած նշանաբանին թէ «տգիտութիւնը բարեպաշտութեան մայր է»:

Այս ընդհանրական տգիտութիւնը պահպանում էր ամեն տեսակ սնապաշտութիւններ: Եւրոպան լի էր ամօթալի հրաշքներով: Ճանապարհները բռնած էին միշտ ուխտաւորներով որոնք գնում էին վանքերը զոհեր և ընծաներ մատուցանելու գտած բժշկութիւնների համար: Եկեղեցու քաղաքականութիւնը պահանջում էր միշտ բժիշկների և բժշկութեան վարկը կոտրել, որոնք դիւրահաւան ժողովրդի աչքը կարող էին բանալ և հասկացնել նոցա կղերի խաբէութիւնները: Ծանր հիւանդութիւնների համար ուրիշ ոչինչ դեղ

չկար բայց եթէ «Հայր մեր» և «Ողջոյն քեզ Մարիամ»: Տարափոխիկ հիւանդութիւնների առաջն առնելու համար աղօթքներ էին անում եկեղեցիներում, բայց առողջապահական միջոցների վրայ չէին մտածում: կարծում էին թէ քահանայի աղօթքները կը հեռացնեն ժանտախտը կեղտոտ ու գարշահոտ քաղաքներից, կը բերեն, պէտք եղած ժամանակը, անձրև կամ գեղեցիկ եղանակ, կը յեղաշրջեն խաւարումների և գիսաւոր աստղերի վնասակար ազդեցութիւնները:

Տարակոյս չկայ որ Եւրոպան այս դրութեան մէջ չէր ընկնիլ, եթէ Պետրոսի յաջորդները զբաղուած լինէին լոկ իրանց հօտի շինութեամբ ու երջանկութեամբ, ուրիշ խօսքով եթէ կաթոլիկական եկեղեցին իւր նախնական շրջանից դուրս եկած չլինէր:

Քրիստոնէութեան առաջին ժամանակներում, իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցի կատարեալ անկախութեամբ կառավարում էր իւր սեպհական գործերը, պահպանում էր իւր սովորութիւններն ու աւանդական կարգերը և վճռում էր բոլոր երկրորդական հարցերը որոնք եկեղեցու ընդհանուր օգուտներին չէին վերաբերում:

Մինչև իններորդ դարու սկիզբը Հռոմէական Եկեղեցու կազմակերպութիւնը ոչինչ էական փոփոխութեան չենթարկուեցաւ. բայց 845-ին Գալլիայի մի անկիւնից դուրս եկան Իսիդորեան ասած կանոնադրութիւնները, որ պարունակում էին զանազան անվաւեր թղթեր, հարիւրի չափ կեղծ հրովարտակներ իբր առաջին պապերից մնացած, և կրօնական ժողովների որոշումներ: Այս հնարքը օգնեց պապական իշխանութիւնը ընդարձակելու և եկեղեցու կառավարութեան եղանակը փոխելու, որ հանրապետականից միապետական դարձաւ: Մասնաւոր եպիսկոպոսները սկսան կախումն ունենալ Հռոմի արքունիքից և պապը աշխարհի գերագոյն դատաւորը դարձաւ եկեղեցական խնդիրների վերաբերութեամբ:

Մի ուրիշ շինծու յիշատակարան որ հնարուեցաւ Հռոմում ութերորդ դարում, ասում էր որ իբր թէ Կոստանդիանոս կայսրը, Սեղբեստրոս պապի ձեռքով բորոտութիւնից բժշկուելուն ու մկրտուելուն համար, Հռոմի աթոռին պարգևել էր Իտալիան և արևմտեան նահանգները, և ի նշան հնազանդութեան պապի ձիու սանձից բռնել էր:

Մէկ կողմից պապերը այսպիսի հնարներով աշխատում էին բոլոր եկեղեցական իշխանութիւնը կենտրոնացնել Հռոմում, միւս

կողմից այս ձգտումները իրագործելու նպատակով ամենայանդուգն մտքեր տարածում էին ժողովրդների մէջ. եկեղեցին ամբողջապէս պատկանում է պապին. պապը օրէնքից բարձր է և ոչինչ հաշիւ չպիտի տայ. ինչ որ ուրիշների համար սիմոնականութիւն է, պապի համար սիմոնականութիւն չէ. ով որ չէ հնազանդում նորան, մահուան արժանի է. ով որ մի անգամ մկրտուել է, պապի հպատակն է և պիտի լինի իւր ամբողջ կեանքում, որովհետև մկրտութիւնը անջնջելի է։ Մինչև տասներկուերորդ դարու վերջը հռոմէական քահանայապետները իրանց անուանում էին սուրբ Պետրոսի փոխանորդ. Իննովկենտիոս Գ-ից յետոյ նոքա իրանց անուանեցին Քրիստոսի փոխանորդ։

Բայց միահեծան իշխանները շատ փողի հարկաւորութիւն ունէին միշտ և պապերը այս կանոնից բացառութիւն չէին կազմում։ Գրիգոր Է սահմանեց նուիրակութիւններ։ Նուիրակներին յանձնվում էր երբեմն եկեղեցիները այցելել, երբեմն մի ուրիշ մասնաւոր գործ, բայց միշտ իրաւունք ունէին մեծ գումարներ բերել իրանց ճանապարհորդութիւններից։ Եւ որովհետև պապերը իշխանութիւն ունէին ոչ միայն օրէնքներ սահմանել, այլ և նոցա գործադրութիւնը կարճել, մի նոր կարգ սահմանեցին որով կարելի էր օրէնքից ազատ լինելու իրաւունքը գնել։ Պապը դարձել էր «Տիեզերական Եպիսկոպոս». նա սահմանել էր ամենայն ծուխերի մէջ դատաւորներ որոնք անմիջապէս իրանից կախումն ունէին, և կարող էր ամենայն գործ քննել իւր դատարաններում։ Նա նոյն յարաբերութիւնները ունէր եպիսկոպոսների հետ ինչ յարաբերութիւն ունի մի բացարձակ իշխան իւր սպաների հետ։ Նոքա միայն պապի հաճութեամբ կարող էին հրաժարուիլ իրանց եպիսկոպոսական պաշտօնից, և ազատ աթոռները պատկանում էին պապին։ Հազարաւոր դատեր լսվում էին իւրաքանչիւր տարի քահանայապետական դատարաններում և հարուստ հունձք էին բերում Հռոմին։ Յաճախ, մինչ ոսոխները վիճում էին իրանց իրաւունքների համար այս կամ այն պաշտօնը ձեռք բերելու, պապը հեռացնում էր ամենին և իւր մարդկանցից մէկին նշանակում։ Յաճախ զանազան պաշտօնների հետամուտ եղողները տարիներով մնում էին Հռոմում և այն տեղ մեռնում կամ իրանց հայրենիքը տանում էին քրիստոնէութեան մայրաքաղաքի ապականութեան տխուր յիշատակը։ Տասներեք և տասնևչորսերորդ դարերում, պապերը հսկայական քայլերով դիմում էին դէպի տիեզերական

տիրապետութիւնը: Առաջ նոքա բաւականանում էին զանազան հոգեւոր պաշտօնների համար ընտրելի մարդկանց անունները ներկայացնելով իշխանների հաստատութեանը, այժմ իրանք ուղղակի էին նշանակում: Վերջապէս բանն այնտեղ հասաւ որ եպիսկոպոսների պապին տուած երդումը հնազանդութեան պարտք էր դնում նոցա վրայ ոչ միայն կրօնական, այլ և քաղաքական խնդիրներում: Այն երկրներում ուր կառավարութեան երկուութիւն կար, այս միջոցը զարմանալի կերպով ընդարձակեց հոգեւոր իշխանութեան նշանակութիւնը:

Ամենայն մարդկային իրաւունք անխղճաբար ոտնակոխ եղաւ կենտրոնաւորութեան գործը գլուխ տանելու համար: Ազգատ կարգերի կրօնաւորները այս բանում Հռոմի զօրաւոր օգնականները հանդիսացան: Մի կողմից պապն էր և ազգատ կարգերը. միւս կողմից եպիսկոպոսներն ու ծխական կղերը: Հռոմէական արքունիքը յափշտակել էր սինհոդոսների, մետրոպոլիտների, եպիսկոպոսների և ազգային եկեղեցիների իրաւունքները: Եպիսկոպոսները շարունակ ընդդիմութիւն գտնելով պապական նուիրակների կողմից, էլ չէին կարող իրանց վիճակների մէջ կարգ ու կանոն պահել. աշխարհային քահանաները ոչինչ իշխանութիւն չունէին իրանց հօտի վրայ, որովհետև ազգատ կրօնաւորները շարունակ միջամուխ էին լինում նոցա գործի մէջ և արձակման ու թողութեան թղթեր էին ծախում. արծաթը գնում էր Հռոմ:

Պապերը էլ ժամանակ չունէին իրանց մասնաւոր հօտի, Հռոմէական երկրների հոգեւոր գործերով զբաղել: Հազարաւոր ուրիշ շահաւէտ դէպքեր կային որ պապական գանձարանը հարստացնում էին: «Ամեն անգամ որ մտնում եմ հռոմէական արքունիքի մի բարձրաստիճան պաշտօնէի սենեակը, գրում էր Ալվարօ Պէլայօ եպիսկոպոսը, գտնում եմ մարդիկ որ պարապած են ոսկէ կոյտեր համարելու»: Ոչ մի առիթ զանց չէր լինում Հռոմի իրաւասութիւնը տարածելու համար: Եպիսկոպոսները արտօնութիւններ էին ստանում իրանց կանոնիկոսների դէմ, կանոնիկոսները եպիսկոպոսների դէմ. եպիսկոպոսները, վանքերը և մասնաւոր անձինք այդ արտօնութիւնների հարկաւորութիւն ունէին նուիրակների հարստահարութիւնների դէմ դնելու համար:

Տասնեւմեկերորդ դարու վերջերը հռոմէական եկեղեցին հռոմէական արքունիքի փոխուեցաւ: Քրիստոնեայ ժողովրդի տեղ Հռոմում

կային միայն դիւանադպիրներ, նօտարներ, հարկահաններ որոնք ծախում էին արտօնութիւններ ու թողութեան թղթեր: Ամեն տեղ միայն խնդրատուներ էին երեւում, որոնք դռնից դուռ ման էին գալիս: Այն անհամար դատերի, արձակումների, շնորհների, թողութիւնների, պատուէրների ու որոշումների միջում որոնք վերաբերում էին Եւրոպայի ու Ասիայի զանազան երկրներին, տեղական եկեղեցու գործերը կորցրել էին իրանց կարեւորութիւնը: Հարիւրաւոր պաշտօնեաներ կային որոնք պապական գանձարանը լցնելով՝ աշխատում էին առաջ գնալ: Ամբողջ քրիստոնէական աշխարհը Հռոմի հարկատուն էր դարձել: Այնտեղ ամենքը զբաղուած էին միայն քաղաքական ու դատաստանական գործերով. մի բառ չէր արտաբերվում հոգեւոր խնդիրների վրայ. կրօնի նշմարանքն անգամ չէր մնացել: Ամեն գրիչ խաղացնելու համար փող էր վճարվում. պաշտօն, արձակում, թողութիւն, քաւութիւն — սոքա էին ամէնօրեայ ապրանքները: Խնդրատուն ստիպուած էր ամենին կաշառել, դռնապանից սկսած մինչեւ պապը, եթէ կամենում էր յաջողել: Այս բոլորի հետեւանքն այն էր որ տալիս է միշտ վատ օրինակը. ամենայն եկեղեցական իրաւունք էր համարում իւր երկրում միեւնոյնը գործել ինչ որ տեսել էր Հռոմում և սրբազան իրերի առուտուր անել իւր պարտքերը վճարելու համար:

Տասներեքերորդ դարի վերջին մի նոր թագաւորութիւն երեւան եկաւ որ կարող էր մեծ եկամուտներ մատակարարել. այդ թագաւորութիւնն էր քաւարանը: Սկսեցին ապացուցանել թէ պապը թողութիւններով կարող է քաւարանի բնակիչներին արքայութիւն ուղարկել: Այժմ արդէն կեղծաւորութիւնը աւելորդ է համարվում. սկսում են արձակ համարձակ ներգործել: Պետրոսի գահերիցութեան բողբոջը մի մեծ ծառ էր դարձել, այսինքն մի հսկայական միապետութիւն:

Ինկվիզիցիան պապական իշխանութեան զօրաւոր սիւներից մինն էր դարձել: Ամենայն ընդդիմութիւն մահուան պատիժ էր ստանում փայտակոյտի վրայ: Բաւական էր մի կասկած միայն որ յանցաւորը գազանային տանջանքների մատնուէր: Ամբաստանուածը չէր ճանաչում իւր ամբաստանողին. նորան թոյլ տուած չէր ոչ փաստաբան ունենալ և ոչ բողոքել: Ամբաստանուածների անմեղ ընտանիքները թշուառութեան մէջ էին մնում. նոցա ստացուածքի կէսը գնում էր պապի արքունիքը, կէսը ինկվիզիտորներին: Բաւական

շնորհք է, ասում էր Իննովկենտիոս Գ., եթէ այդ անհաւատների որդոց կենդանի թողնենք: Մի քանի պապեր, ինչպէս Նիկողայոս Գ., այդ թշուառների ստացուածքով հարստացնում էին իրանց ընտանիքը:

Հին Հռոմայեցոց տիրապետութեան ժամանակ լէգէոնները, տէ-րութեան նահանգները ցրուելով, միշտ օգնել էին քաղաքակրթու-թիւնը տարածելու. նոցա կարգապահութիւնը և գործունէութիւնը փրկարար օրինակներ էին Գալլիացոց, Գերմանացոց և Բրիտանացոց համար: Եւ թէպէտ նոքա պարտք չէին համարում իրանց նուա-ճուած ժողովրդների բարօրութեան համար հոգալ, այնու ամե-նայնիւ նոցա ներգործութեամբ այդ ժողովրդների անհատական և ընկերական պայմանները բարւոքեցան:

Նոյն ազդեցութիւնը ունեցաւ Հռոմի եկեղեցական տիրապե-տութիւնը: Գիւղերում՝ վանքերը լէգէոնների բանակների տեղ բռնե-ցին, քաղաքներում՝ Եկեղեցին լուսաւորութեան կենտրոն դարձաւ: Սակայն պէտք է յիշել որ պապական կառավարութեան գլխաւոր նպատակը չէ եղել քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը, այլ եկեղեցական տիրապետութեան ընդարձակութիւնը: Աշխարհական-ների ժողոված բարիքը պատահաբար և անուղղակի կերպով վիճա-կուեցաւ նոցա:

Իսկապէս եկեղեցական տիրապետութիւնը ոչինչ չէ արել ժո-ղովրդների նիւթական բարօրութեան և մտաւոր զարգացման հա-մար: Ընդհակառակն, այս վերջիններին աշխատում էին կոպտութեան ու տգիտութեան մէջ պահել: Դարեր դարերի յաջորդեցին և գիւ-ղացիք մնացին վայրենի դրութեան մէջ: Հաղորդակցութեան և տե-ղափոխութեան միջոցները, որ այնպէս զօրաւոր կերպով ներգոր-ծում են մտքերի զարգացման վրայ, ամենևին չկատարելագործուե-ցան. մարդկանց մեծ մասը մեռնում էին իրանց ծնած անկիւններում առանց երբէք դուրս գալու իրանց հայրենի գաւառից: Նոցա հա-մար իրանց վիճակը բարւոքելու կամ միտքը մշակելու ոչինչ յոյս չկար: Երբէք մի հնարք չմտածուեցաւ թշուառութեան ու սովերի առաջն առնելու: Վատառողջ սնունդը, անբաւարար հագուստը, անպիտան բնակարանները իրանց բնական հետևանքներն ունեցան. ժանտախտը և ուրիշ տարափոխիկ հիւանդութիւնները մեծ կոտո-րածներ էին գործում, այնպէս որ հազար տարուան շրջանում Եւ-րոպայի ժողովուրդը չէր կրկնապատկուել:

Ը.

Եւրոպան ցոյց տուաւ մեզ թէ ինչ կարող է անել հռովմէական քրիստոնէութիւնը քաղաքակրթութեան նկատմամբ. ժամանակակից Ամերիկան մի զարմանալի օրինակ է տալիս մեզ թէ ինչ կարող է անել գիտութիւնը նոյն քաղաքակրթութեան վերաբերութեամբ։

Տասնևեօթներորդ դարու ընթացքում մի ափ եւրոպական ժողովուրդ հաստատուել էր Ատլանտեան Ովկիանոսի կողերի վրայ։ Գրաւուելով Նոր Երկրի ձկնորսութեամբ, Ֆրանսիացիք մի փոքրիկ գաղթականութիւն ունէին Սուրբ Լաւրենտիոս գետի հիւսիսային կողմը. Անգլիացիք, Հոլլանդացիք և Շվեդացիք բռնած ունէին Նոր Անգլիայի ափերը կենտրոնական նահանգներում։ Այս արկածախնդիրների կազմած գիւղերի ետև տարածվում էր մի ընդարձակ ու անծանօթ երկիր, թափառական Հնդիկների բնակարան, որոնց թիւը Մեքսիկայի ծոցից մինչև Սուրբ Լաւրենտիոս գետը հարիւր ութսուն հազարից չէր անցնում։ Նոցանից իմացան Եւրոպացիք թէ այն առանձնացած տեղերում կան ահագին լճեր և մի մեծ գետ՝ Միսիսիպի անունով։ Բաժանուած լինելով իրանց ծննդեան տեղից փոթորկալից Ատլանդեան Ովկիանոսով, այնպիսի ժամանակ երբ այդ ծովը կտրելու համար ամիսներ հարկաւոր էին, այս գաղթականները կարծես կորած էին աշխարհի համար։

Սակայն տասնևութերորդ դարը դեռ չէր անցել, և այդ փոքրիկ ժողովրդի սերունդները կազմում էին աշխարհի ամենազօրաւոր տէրութիւններից մինը։ Նոքա հիմնել էին մի հանրապետութիւն որի տիրապետութիւնը ձգվում էր Ատլանտեան Ովկիանոսից մինչև Խաղաղականը։ Մէկ միլիոն մարդուց բաղկացած բանակով նոքա խորտակել էին իրանց բնական թշնամուն. ծովերի վրայ ունէին մօտ եօթը հարիւր պատերազմական նաւ հինգ հազար մեծ ու փոքր թնդանօթներով։ Իրանց ազգային կեանքը պաշտպանելու համար՝ նոքա չորս հազար միլիոն դոլլարից աւելի սպառել էին հինգ տարուան ընթացքում։ Պարբերական աշխարհահամարները ցոյց էին տալիս որ ժողովրդի թիւը կրկնապատկվում էր իւրաքանչիւր քսանևհինգ տարում, այնպէս որ կարելի է սպասել որ այս դարու վերջին այդ թիւը հարիւր միլիոնի հասնի։

Այն ցամաքը ուր առաջ թագաւորում էր լռութիւնը, այժմ մի

զարմանալի գործունէութեան տեսարան էր ներկայացնում. մեքենաների և մարդկանց աղմուկը հալածել էին այդ լռութիւնը: Անվերջ անտառների տեղ բարձրանում էին աւաններ ու քաղաքներ: Անսպառելի արդիւնքներ, բամբակը, ծխախոտը, արգաւանդ երկրի ուրիշ բերքերը, անվերջ սնունդ էին տալիս վաճառականութեան: Հանքերը տալիս էին անթիւ ոսկի, երկաթ ու գետնածուխ: Անհամար եկեղեցիներ և ուսումնարաններ վկայ էին այն բարոյական ազդեցութիւններին որ նոր կեանք էին տալիս նիւթական գործունէութեանը: Երկաթուղիները իրանց տարածութեամբ գերազանցում էին բոլոր Եւրոպայի երկաթուղիները միասին առած: 1873-ին եւրոպական երկաթուղիները միասին՝ վաթսուներեք հազար երեք հարիւր վաթսուն մղոնի տարածութիւն ունէին, ամերիկական երկաթուղիներից մէկը միայն եօթանասուն հազար վեց հարիւր յիսուն մղոնի տարածութիւն էր ներկայացնում: Այս գծերից մինը կտրում էր ամերիկական ցամաքը և երկու Ովկիանոսներն իրարու հետ կապում:

Սակայն այս նիւթական արգասիքներից աւելի գրաւում են մեր ուշադրութիւնը բարոյական և ընկերական արդիւնքները: Չորս միլիոն սևամորթ հնդիկներ ազատութիւն էին ստացել իրանց ստրկութիւնից: Օրէնսդրութիւնը հակվում էր աղքատների կողմը. Նա ձգտում էր փրկել նոցա չքաւորութիւնից և թեթևացնել ու ազնուացնել նոցա վիճակը: Ասպարէզը բաց էր տաղանդի առաջ. աշխատանքն ու խելքը ամեն բանի կարող էին հասնել: Տէրութեան առաջին պաշտօնները բռնում էին այն մարդիկը որ ամենախոնարհ վիճակից բարձրացել էին:

Ահա ինչ հետևանքների է հասնում մարդկային գործունէութիւնը, եթէ իւր ճանապարհի վրայ արգելքների չէ հանդիպում: Եւրոպայի քաղաքական յառաջադիմութիւնը աւելի բարդ տարրերից է բաղկացած: Նորա ներգործութեան եղանակն ու հետևանքները քննելուց առաջ, պատմենք հարևանցի կերպով թէ ինչպէս մուտք գործեց գիտնական սկզբունքը Եւրոպայում:

Խաչակրաց արշաւանքները շատ տարիների ընթացքում ոչ միայն անթիւ ոսկի ու արծաթ էին բերել Հռոմին, այլ և մեծապէս օժանդակել էին պապական իշխանութեան զօրանալուն ու տարածուելուն: Երկու կառավարութիւններից, հոգևորը և աշխարհականը, որ իշխում էին Եւրոպայի վրայ, առաջինը տէրն էր, երկրորդը՝ ծառան:

Ամեն կողմերից ոսկին ու արծաթը թափվում էր Իտալիա. աշխարհային իշխաններին չնչին եկամուտներ էին մնացել: Փիլիպպոս Գեղեցիկ, Ֆրանսիայի թագաւորը (1300), կամեցաւ իւր թագաւորութեան սպառման առաջն առնել: Նա արգելեց ոսկին ու արծաթը երկրից դուրս տանել առանց մասնաւոր թոյլտուութեան, և պատուիրեց որ եկեղեցական կալուածներից հարկ առնեն: Այս որոշումները մի կատաղի պատերազմի առիթ տուին պապութեան դէմ: Թագաւորը բանադրուեցաւ, դորա փոխարէն Փիլիպպոսը Բոնիփակիոս պապին իբրև անաստուած ամբաստանեց, պահանջելով որ նա դատուի ընդհանրական ժողովում: Նա ուղարկեց Իտալիա հաւատարիմ մարդիկ որ բռնեցին նորան և այնպիսի խստութեամբ վարուեցան նորա հետ որ մի քանի օրից յետոյ մեռաւ: Նորա յաջորդ Բենեդիկտոս ԺԱ թունաւորուեցաւ:

Ֆրանսիայի թագաւորը վճռել էր մաքրել ու վերանորոգել պապութիւնը, չթոյլ տալով որ մի քանի իտալական գերդաստանների սեպհական ժառանգութիւն մնայ, և աշխատելով ֆրանսիական ազդեցութիւնը զօրացնել Հռոմում: Նա խօսքը մէկ արաւ կարդինալների հետ, և մի ֆրանսիացի արքեպիսկոպոս բարձրացաւ քահանայապետութեան աթոռը Կղեմէս Ե անունով: Շուտով պապական արքունիքը փոխադրուեցաւ Աւինեօն և Հռոմը քրիստոնէութեան մայրաքաղաքի նշանակութիւնը կորցրեց երեք քառորդ դարու չափ:

Երբ 1376-ին կաթոլիկութեան գահը կրկին փոխադրուեցաւ Հռոմ, վերին Իտալիան պապերի երկարատև բացակայութեան պատճառով կերպարանափոխ էր եղել. մի մեծ մտաւոր և առևտրական շարժողութիւն տիրում էր ամեն տեղ: Միևնոյն ժամանակ ուրիշ յաջող հանգամանքներ էլ երևան եկան: Խաչակրաց արշաւանքների ձախորդ հետևանքը զսպել էր կրօնական եռանդը բոլոր քրիստոնէութեան մէջ: Եւրոպական ժողովուրդների մեծ զոհերը անպտուղ էին մնացել. Սուրբ Երկիրը առաջուան պէս Անհաւատների ձեռին էր: Հազարաւոր քրիստոնեայ զինուորներ որոնք վերադառնում էին այդ արշաւանքներից, չէին քաշվում ասելու թէ իրանց թշնամիներին այնպէս չէին գտել ինչպէս որ նկարագրել էր նոցա եկեղեցին. այլ ընդհակառակն քաջ, ազնիւ և արդար: Ռոմանտիկական գրականութեան ճաշակը տարածուել էր հարաւային Ֆրանսիայի քաղաքներում և թափառական տրուբադուրները (ժողովրդական երգիչներ) ամեն տեղ ցրվում էին իրանց երգերը: Նոցա երգերի նիւթերը լոկ

սիրահարական չէին, այլ յաճախ խօսում էին կրօնական կարգերի զարհուրելի անգթութիւնների, Լանգդոկի կոտորածների և քահանաների ապօրինի սիրահարական յարաբերութիւնների վրայ: Ասպետական գաղափարները եկել էին մաւրիտանական Սպանիայից և նոցա հետ պատուի ազնիւ զգացմունքը, որ ժամանակով ամբողջ Եւրոպային օրէնքներ պիտի գրէր:

Հռոմ վերադառնալուց յետոյ, պապերը կորցրին իրանց առաջուան ազդեցութիւնը իտալական Թերակղզու վրայ: Երկու սերունդից աւելի անցել էին նոցա բացակայութեան միջոցում, և մտաւոր յառաջադիմութիւնը սկսում էր արգելք լինել նոցա դիտաւորութիւններին: Պապութիւնը վերադարձել էր ոչ թէ բացարձակապէս իշխելու, այլ բաժանուելու և արևմտեան մեծ հերձուածը կազմելու համար: Այս երկպառակութիւններից երեք պապ ծագեցան, երեքն էլ կամենալով օրինաւոր համարուել, երեքն էլ իրանց հակառակորդներին անիծելով: Շուտով մի ընդհանուր ցասման զգացմունք տիրեց քրիստոնէական աշխարհին, և վճռեցին վերջ տալ այն ամօթալի տեսարաններին որոնց վկայ էին լինում: Կղերի լուսաւորեալ մասը որոշեց մի մշտական ժողով կազմել կրօնականների ներկայացուցիչներից, որի վճիռները կատարելու պարտաւորութիւնը դրուէր պապերի վրայ: Եթէ այս փրկարար դիտաւորութիւնը գլուխ եկած լինէր, այսօր գիտութիւնն ու կրօնը միմեանց դէմ չէին մրցիլ, կրօնական յեղափոխութիւնը տեղիք չէր ունենալ և բողոքական աղանդները միմեանց միսը չէին ուտիլ: Բայց Կոստանցիայի և Բազէլի ժողովները չյաջողեցան թօթափել Հռոմի լուծը և ցանկացած հետևանքին հասնել:

Այնու ամենայնիւ կաթոլիկութիւնը երթալով տկարանում էր. որքան աւելի թօթափում էին այն կապարեայ վերարկուն որով նա ծածկել էր աշխարհը, այնքան մարդկային բանականութիւնը պինդ կապանքներից ազատվում էր: Արաբացիք գտել էին բամբակից թուղթ շինելու արուեստը. իսկ Վենետիկցիք Չինաստանից բերել էին տպագրութեան արհեստը: Առաջին գիւտը հարկաւոր էր երկրորդի գործածութեան համար: Այդ ժամանակներից սկսում է մտքերի ազատ հաղորդակցութիւնը Եւրոպայում:

Տպագրութեան գիւտը մեծ հարուած տուաւ կաթոլիկութեան, որ մինչև այն ժամանակ իւր ձեռին պահել էր միջազգային հաղորդակցութիւնների մենավաճառութիւնը: Կաթոլիկութեան կենդրոնից

անընդհատ պատուէրներ էին գնում քրիստոնեայ երկրների կղերին, յորդորական կոնդակներ ուղարկվում էին որոնք եկեղեցիների ամբիոններից հաղորդվում էին ժողովրդին: Մամուլը խորտակեց այդ մենավաճառութիւնը և նորանից բղխած զօրութիւնը. օրագիրը շուտով բռնեց ամբիոնի տեղը:

Տպագրութեան և թղթի գիւտից յետոյ նիւթական ու բարոյական մեծ նշանակութիւն ունեցաւ կողմնացուցի գիւտը. Ամերիկայի գիւտը, Վասկօ-դէ-Գամայի ճանապարհորդութիւնը Աֆրիկայի շուրջը և վերջապէս Մագելլանի ուղևորութիւնը երկրի շուրջը իրանց հետևանքներով պարտական են կողմնացուցին: Այս երեք մեծ ծովագնացների ոգին տարածուեցաւ բոլոր Արևմուտքի վրայ: Ժողովրդները մինչև այն ժամանակ ապրել էին այս երկու սկզբունքներով. Հաւատարմութիւն ֆէօդալին, Հպատակութիւն եկեղեցուն. ուրեմն նոքա ապրում էին ուրիշների համար և ոչ իրանց համար: Այս երկու սկզբունքների քաղաքական ազդեցութիւնը վերին զարգացման հասել էր խաչակրաց արշաւանքների ժամանակ: Հազարաւոր մարդիկ կորել էին այնպիսի ձեռնարկութիւնների մէջ որ ոչինչ օգուտ չէին կարող բերել իրանց: Փորձը ցոյց էր տուել որ այդ արշաւանքներից միակ օգուտ քաղողներն էին պապերը, կարդինալները, Հռոմի միւս եկեղեցականները և Վենետիկի զինագործները: Բայց երբ տեղեկացան թէ համարձակ ու քաջ մարդիկ կարող էին Մեքսիկայի ու Պերուի գանձերին մասնակից լինել, Եւրոպական գործունէութեան ուղղութիւնը յանկարծ փոխուեցաւ: Կորտէզի և Պիզարրի արկածների պատմութեանը ամեն տեղ յափշտակութեամբ ականջ էին դնում, և կրօնական եռանդը տեղի տուեց ծովային ձեռնարկութիւններին: Եւրոպայի հասարակական պայմանները բոլորովին յեղաշրջուելու վրայ էին: Մինչև այն ժամանակ ամենայն մարդ նուիրել էր իւր բոլոր կարողութիւնը ֆէօդալին և եկեղեցականին. այժմ արդէն ամեն մարդ կամենում էր ինքը անձամբ վայելել իւր աշխատութեան պտուղը: Անհատականութեան ժամանակը եկել էր:

Անհատականութիւնը հիմնվում է այն սկզբան վրայ թէ ամենայն մարդ ինքն իրան է պատկանում, թէ նա ազատութիւն ունի իւր գաղափարները ունենալ, իւր ընտրած ճանապարհովը գնալ: Հէնց այդ պատճառով նա յաճախ մրցում է իւր նմանների հետ. բայց կռիւը աշխոյժ ու խրախոյս է տալիս նորան իւր նպատակին հասնելու:

Բաժանուիլ այն անշարժական սովորութիւններից որ Եւրոպան դարեւոր ժամանակներից ընդունել էր, կենդանութեան շունչ փչել նորա մէջ, թագաւորեցնել անհատականութեան սկզբունքը, նշանակում էր պատերազմ հրատարակել այն ազդեցութիւնների դէմ որ ծանրանում էին նորա վրայ: Տասնեչորս ու տասնեհինգերորդ դարերի իրերի ընթացքը գուշակում էին որ այդ պատերազմի գերագոյն օրը շուտով հասնելու է. վերջապէս նա հասաւ տասնեվեցերորդ դարու սկզբին, 1517-ին: Անհատականութիւնը հանդէս եկաւ մի յամառ գերմանացի աբեղայի անձնաւորութեամբ և հաստատուեցաւ, ինչպէս որ այն ժամանակի ոգին պահանջում էր, աստուածաբանական ձևով: Սկզբումը տեղի ունեցան մի քանի վէճեր թողութեան կոնդակների և ուրիշ աննշան խնդիրների վրայ. բայց շուտով երևան եկաւ գլխաւոր գաղափարը որի համար կռվում էին: Մարտին Լութերը մերժում էր մտածել իբր եկեղեցական առաջնորդների պէս. նա հաստատում էր թէ ինքը իրաւունք ունի անձամբ մեկնել Սուրբ Գիրքը:

Սկզբումը Հռոմը նշանակութիւն չտուաւ այդ շարժողութեանը. նա Լութերին համարում էր մի հասարակ աբեղայ, կռուասէր ու անհնազանդ: Եթէ Ինկվիզիցիան կարողացած լինէր ձեռք ձգել նորան, գործը շուտով կը վերջացնէր. բայց քանի որ վէճը շարունակվում էր, նշմարում էին որ Մարտինը մենակ չէր: Հազարաւոր մարդիկ օգնութիւն էին գալիս նորան, և այն մէջոցին որ նա գրում ու քարոզում էր, սոքա իրանց զէնքերը պատրաստում էին նոցա դէմ որոնց քարոզչի խօսքերը զայրացնում էին: Երկարատև ու արիւնահեղ պատերազմները վերջացան վեստֆալեան դաշնադրութեամբ: Հիւսիսային ու միջին Եւրոպան թոթափել էր Հռոմի լուծը, անհատականութիւնը յաղթող էր հանդիսացել և մարդս մտածելու իրաւունքը ձեռք էր բերել:

Բայց անկարելի էր որ այս մտածելու իրաւունքը, բացի կաթոլիկութեան հարուած տալուց, ուրիշ հետևանք չբերէր: Իրասմը շուտով բաժանուել էր այն շարժողութիւնից որի առաջնորդներից մինն էր եղել. ուրիշ տաղանդաւոր մարդիկ հետևել էին նորան: Նոքա նշմարել էին որ վերանորոգիչները նոյնպէս գիտութեան թշնամի էին և չկամեցան կրկին ենթարկուիլ այն ուղղութեանը որին կործանելու համար պատերազմել էին: Աղանդների կազմուիլը անհրաժեշտ բան էր, և սոքա այլ ևս ոչինչ երկիւղ չունենալով իրանց

լատինական մեծ թշնամուց՝ սկսան միմեանց դէմ պատերազմիլ փոփոխակի բաղդով, մինչև որ վերջապէս իւրաքանչիւր աղանդ համոզուեցաւ թէ հարկաւոր է իւր թշնամուն տալ այն ազատութիւնը որի կարիքը ինքն էլ է զգում: Այսպէս ահա փոխադարձ ճընշումներից ու անգթութիւններից ծագեցաւ ներողամտութեան մեծ սկզբունքը. քանի որ բողոքականութիւնը մանր աղանդների բաժանուի, այսինքն կամաց կամաց բոլորովին լուծուի, մարդիկ աւելի բարձր, աւելի ազնիւ վիճակի կը հասնին, այն է՝ մտքի բացարձակ ազատութեանը: Ներողամտութիւնը միայն նոցա մէջ կարող է առաջ գալ որոնք ընդունակ են հասկանալու ու յարգելու ուրիշների կարծիքները: Նա փիլիսոփայութեան դուստրն է, և պատմութիւնը ուսուցանում է մեզ արդարև որ փիլիսոփայութիւնը ոչնչացնում է կրօնական մոլեռանդութիւնը:

Ահա այս պատմական հանգամանքներում մտաւ Եւրոպայում գիտութիւնը, որի բարերար ազդեցութեան վրայ մնաց մի քանի խօսք ասելու:

Գիտութեան ազդեցութիւնը արդեան քաղաքակրթութեան վրայ երկու եղանակով արտայայտուեցաւ. մտաւորականապէս և տընտեսականապէս:

Առաջին եղանակի շնորհքով, գիտութիւնը խորտակեց աւանդութեան հեղինակութիւնը: Նա մերժեց անփաստ ընդունել որևէ անձի որոշումները, որքան էլ մեծ ու պատկառելի լինէր նա: Ֆիզիկական խնդիրներում նա մերժեց գերբնական ու հրաշալի աշխարհից բերուած ապացոյցները: Նա հրաժարուեցաւ *աստուածային նշաններից*, ինչպէս որ պահանջում էին երբեմն հրէաները, որոշեց թէ որևէ ճշմարտութեան ապացոյցը քննելի առարկայից պիտի առնուի և ոչ խնդրին օտար նիւթից, և այսպէսով բաժանուեցաւ այն օտարոտի տրամաբանութիւնից որ դարևոր ժամանակներ ծանրացաւ Եւրոպայի վրայ:

Ֆիզիկական հետազօտութիւնների մէջ՝ գիտութիւնը ընդունեց փորձել ամենայն ենթադրութիւնների արժողութիւնը, իւր հաշիւները հիմնելով այդ ենթադրութիւնն վրայ և յետոյերի քննելով թէ հաշիւները դիտողութիւններին համեմատ են դալիս թէ ոչ: Եթէ համեմատ չգային, ենթադրութիւնները մերժվում էին: Այսպէս վարուեցաւ երևելի Նիւտոնը իւր հետազօտութիւնների մէջ:

Մաթեմատիկական գիտութիւնները մի զօրաւոր գործիք էին

դարձել ոչ միայն գիտնական հետազօտութիւնների, այլև գիտնական դատողութիւնների համար. կարելի է ասել՝ որ նորա մտքի աշխատութիւնը մեքենական գործողութիւնների վերածւեցին, որովհետև նոցա ձևերը (ֆօրմուլ) շատ անգամ ազատեցին ուսումնականներին երկար բարակ մտածելուց: Ճիշտ դատողութեան սովորութիւնը տարածուեցաւ ամեն նիւթերի վրայ և մի ճշմարիտ մտաւորական յեղափոխութիւն առաջացրեց: Եւ չէին կարող բաւականանալ հրաշքների ապացոյցով և ընդունել միջնադարեան տրամաբանութիւնը:

Բնութեան գիտնական ուսումնասիրութիւնը չէ օգնում միայն մշակելու և ազնուացնելու մարդու միտքը, նա ծառայում է նոյնպէս նորա տնտեսական վիճակը բարւոքելու: Նա անընդհատ թելադրում է մարդուն իւր արած գիւտերը գործադրելու զանազան պիտոյքների համար:

Օրէնքների գիտութեանը հետզհետէ յաջորդում են այլևայլ գործնական գիւտեր, որ մի մեծ յեղափոխութիւն բերին աշխարհի կառավարութեան մէջ: Կար ժամանակ երբ տէրութիւնները պատերազմում էին ստրուկներ ձեռք բերելու համար: Բայց երբ նկատեցին թէ ֆիզիկական և մեքենական գործիչները կարող էին աւելի յաջողութեամբ գործ դրուիլ, քաղաքականութեան առարկան փոխուեցաւ: Այն օրից երբ ճանաչուեցաւ թէ մի նոր մեքենայ աւելի օգտակար է քան մի նոր ստրուկ խաղաղութիւնը պատերազմից գերազանց համարուեցաւ. և ոչ միայն այսքան, այլև այն ազգերը որոնք Ամերիկայի պէս բազմաթիւ ստրուկներ ունէին, մարդասիրական զգացմունքների հետ ըմբռնեցին և տնտեսական օգուտները և կամաւորապէս ազատութիւն շնորհեցին նոցա: Այս հոսանքին չկարողացաւ դիմանալ մինչև անգամ Ռուսաստանը:

Ուրեմն մենք այնպիսի ժամանակ ապրում ենք երբ մեքենան կատարում է մարդու և անասունի աշխատանքը: Մեր նպատակին հասնելու համար մենք դիմում ենք բնական ոյժերին և ոչ գերբնական միջամտութիւններին: Ահա այս արդեան քաղաքակրթութեան հետ է կռւում է կաթոլիկութիւնը: Պապութիւնը բարձրաձայն բողոքում է իրերի այս ընթացքի դէմ և պահանջում է որ մարդկութիւնը վերադառնայ դէպի միջնադարեան կեանքը:

Արդեան քաղաքակրթութիւնը մեծապէս պարտական է շոգեշարժ մեքենայի գիւտին, որ անմահ Ուատի փորձերի հետևանքն է: Շոգեշարժ մեքենան իւր բազմակողմանի գործածութեամբ քաղաքա-

կրթութեան ամենամեծ գործիչներից մինը դարձաւ: Նա կատարում է միլիոնաւոր գործաւորների աշխատութիւնը, և ժամանակ ու միջոց է տալիս այս վերջիններին իրանց մտաւոր կարողութիւնները մշակելու, այն ինչ առաջ ստիպուած էին իրանց ամբողջ կեանքը մեքենական աշխատանքով անցկացնելու: Նա որ երբեմն անիւն էր պտտում, այժմ ժամանակ է գտնում կարդալու ու մտածելու:

Շոգին առաջին գործադրութիւնը ջրհանների վրայ երևեցաւ, որոնց համար լոկ ոյժ է հարկաւոր: Բայց շուտով նա ցոյց տուեց թէ ինչ հրաշքներ կարող է կատարել մանելու և գործելու քնքոյշ արհեստի մէջ: Նա հագուստներ է գործում ամբողջ աշխարհի համար և ճարտարութիւնը կերպարանափոխեց զանազան ազգերի մէջ:

Նաւագնացութեան մէջ, նախ գետերի և ապա ծովերի վրայ, շոգեշարժ մեքենան առաջուան արագութիւնը քառապատկեց. քառասուն օրուան փոխանակ ութը օր բաւական է Ատլանտեան Ովկիանոսը անցնելու համար: Ինչպէս ջրի այնպէս և ցամաքի վրայ անհուն տարածութիւնները կարճեցնելով՝ շոգեշարժ մեքենան երկարացրեց մարդկային կեանքը. իսկ երկրագործական ու ճարտարութեան արդիւնքները արագութեամբ տեղափոխելով խրախուսեց աշխատանքը:

Կան ուրիշ շատ փոքրիկ գիւտեր որոնք զարմանալի կերպով օգնել են մարդկային կեանքի պայմանները բարւոքելու: Մեքենական սղոցիչները տարածեցին տախտակամածների գործածութիւնը որոնք բռնեցին հողէ, աղիւսէ ու քարէ յատակների տեղ: Ապակէգործութիւնը իւր աժանութեամբ միջոց տուեց ոչ միայն հարուստների տները, այլև շինականների խրճիթները լուսաւորելու: Առաջուան հնոցների տեղ հնարուեցան վառարաններ, որոնք սենեակների օդը մաքրում են:

Չնայելով կղերի խօսքերին, սկսան հասկանալ որ հիւանդութիւնները աստուածային պատիժ չեն, այլ կեղտոտութեան և թշուառութեան բնական հետևանքներ և թէ նոցա առաջն առնելու ամենալաւ միջոցն է ոչ թէ սրբերի բարեխօսութեանը դիմել, այլ հոգալ անձնական մաքրութեան և քաղաքները աւելելու ու ջրելու վրայ: Մարդիկ սկսան հասկանալ թէ աղքատ կարգի կրօնաւորների ասածներին հակառակ, չքաւորութիւնը մոլութիւնների աղբիւր է և կրթութեան խոչընդոտ, թէ վաճառականութեան տիրապետու-

թիւնը աւելի գերազանց է քան իշխանութեան տիրապետութիւնը, որովհետեւ նա ձգտում է մի տիեզերական Միութիւն առաջացնել․ նորա երազը, նորա յոյսը համաշխարհական խաղաղութիւնն է: Աշխարհահանդէսները, երկրագնդի այս մեծ վաճառանոցները, ազգերի ապագայ միութեան կարապետներն են:

Այն ոգին որ առաջացրել է այս ահագին մտաւոր շարժողութիւնը, որ կենդանացրել է վերջին երկու դարերի գիւտերը, անհատականութեան ոգին է․ իսկ շարժառիթը ոմանց համար հարստանալու յոյսն է, ուրիշների համար՝ անուն հանելու ցանկութիւնը: Ուրեմն զարմանալի չէ որ այդ ոգին քաղաքականապէս մարմին ստանար և առաջ բերէր անցեալ դարում երկու մեծ յեղափոխութիւններ, ամերիկականը և Ֆրանսիականը: Առաջինի հետեւանքն եղաւ մի մեծ ցամաք ամբողջապէս նուիրել Անհատականութեան զարգացմանը: Վերջինը, թէև Եւրոպայի քաղաքական կերպարանքը փոխեց և պատերազմական յաղթութիւններով փայլեց, սակայն մինչև հիմա դեռ իր նպատակին չէ հասել․ նա մի քանի անգամ թշուառութիւններ բերեց Ֆրանսիայի գլխին: Այս երկրի երկու կառավարութիւնները, հոգևորը և աշխարհայինը, փոփոխակի բարեկամ ու թշնամի են հանդիսացել արդեան քաղաքակրթութեան: Մի ձեռքով նա պսակեց բանականութիւնը, միւսով պապին իր գահի վրայ հաստատեց: Այս անբնական ընթացքը միայն այն ժամանակ կը դադարի երբ Ֆրանսիայի բոլոր զաւակները, մինչև վերջին շինականը, ճշմարիտ կրթութեան բարիքը կը ստանան:

Տեսանք թէ հոգևոր և դրական ու գործնական վարդապետութիւնները ինչ հետեւանքի հասցրին Եւրոպան պատմութեան երկու զանազան շրջաններում: Տեսանք թէ ինչ կատաղութեամբ երեւակայականը պատերազմեցաւ իրականի դէմ, պատերազմ՝ որ պիտի աւարտուէր վերջինի յաղթութեամբ․ որովհետեւ առաջինի սկզբունքն էր թէ տգիտութիւնը բարեպաշտութեան մայր է, երկրորդինը՝ թէ գիտութիւնը մարդուս իշխանութիւնն է երկրի վրայ:

Թ.

Մարդ չկայ որ ճանաչելով այժմեան մտքերի տրամադրութիւնը արեւմտեան քրիստոնէութեան մէջ, չգուշակէ թէ մի մտաւոր ու կրօնական ճգնաժամ պատրաստւում է մօտիկ ժամանակներում:

Հորիզոնի ամեն կողմերի վրայ երկինքը թխպում է. ամեն կողմից փոթորկի ձայներ են լսվում: Գերմանիայում, ազգային կուսակցութիւնը պատերազմի է պատրաստվում պապականութեան դէմ. Ֆրանսիայում, յառաջադէմ մարդիկը կռվում են անշարժների հետ, սպառելով իրանց ոյժերը և վայր ձգելով այս մեծ երկրի քաղաքական նշանակութիւնը: Իտալիայում, Հռոմը պատկանում է մի բանադրուած թագաւորի: Պապը, իրան գերի ձևացնելով, բանադրանքներ է արձակում Վատիկանից, և իւր բազմապատիկ սխալանքների միջում՝ հրատարակում է իւր անմեղանչականութիւնը: Մի կաթոլիկ արքեպիսկոպոս յայտնում է ճշմարտութեամբ թէ Եւրոպայի ազգերը կարծես հրապարակաւ բաժանվում են քրիստոնէութիւնից: Անգլիայում, Ամերիկայում կրօնական անձինք ցաւելով նշմարում են դարուս ուղղութիւնը, և պատրաստվում են վերջին ճգնաժամի համար:

Եւրոպայի բնակիչների թիւը երեք հարիւր ու մէկ միլիոնի է հասնում. հարիւր ութսուն և հինգ միլիոնը, այսինքն մօտ երկու երրորդ մասը հռոմէական կաթոլիկ են: Ուրեմն հռոմէական Եկեղեցին միւսներից շատ աւելի տարածուած ու աւելի զօրաւոր կերպով կազմակերպուած է. նորա վարչական ձևը շատ աւելի քաղաքական է քան կրօնական: Նորա սկզբունքն այն է թէ իշխանութիւնը պատկանում է կղերին, հնազանդութիւնը աշխարհականներին: Սկզբնական հանրապետական ձևերը աստիճանաբար հալուեցան կենտրոնացած ինքնիշխանութեան մէջ, որի ներկայացուցիչն է մարդ — Աստուծոյ փոխանորդը: Այդ եկեղեցին բարձրաձայն յայտնում է թէ իւր աստուածային յանձնարարութիւնը տարածվում է ազգերի աշխարհային կառավարութեան վրայ. թէ ինքը իրաւունք ունի տէրութիւնը ծառայեցնել իւր նպատակներին, իսկ տէրութիւնը իրաւունք չունի միջամուխ լինելու նորա գործերի մէջ. թէ մինչև բողոքական երկրներում, կախեալ իշխանութիւն չէ, այլ մի բացարձակ իշխանութիւն է ներկայացնում: Նա պնդում թէ տէրութիւնը ոչ մի իրաւունք չունի այդ իշխանութիւնը սահմանափակելու, թէ բողոքականութիւնը մի ապստամբութիւն է, հետևաբար և գոյութեան իրաւունք չունի. թէ կաթոլիկ եպիսկոպոսը ամեն տեղ է ու պիտի լինի միակ օրինաւոր հոգևոր հովիւը:

Պապականութիւնը նոյնպէս նշմարեց ու տեսաւ թէ ճգնա-

ժամը մօտ է, և առանց վարանելու իւր որոշումը աշկարայ յայտնեց և այն դրութիւնը բռնեց որ իրան աւելի լաւ է երևում:

Վատիկանի վերջին ժողովի գործերը պարզ ցոյց են տալիս նորա տրամադրութիւնը: Պիոս Թ, յունիսի 29-ի 1868-ի կոնդակով, մի տիեզերական ժողով գումարեց դեկտեմբերի 8-ի 1869-ի համար: Այս ժողովի նստերը փակուեցան 1870-ի յուլիս ամսի վերջին: Ժողովի քննութեանը առաջարկուած ուրիշ առարկաների միջում, երկուսը կան որ ամենամեծ կարևորութիւն ունէին. պապի անմեղանչականութիւնը և կրօնի ու գիտութեան մէջ եղած յարաբերութիւնները:

Սակայն պապի հրաւէրը մի ընդհանրական ընդունելութիւն չգտաւ:

Արևելեան եկեղեցիների կարծիքները պապի ձգտումներին հակառակ էին: Նոքա տեսնում էին որ հռոմէական քահանայապետը կամք ունի ընդհանուր քրիստոնէութեան գլուխ դառնալ, և այդ հակառակ էր իրանց սկզբունքին որ է՝ չճանաչել երբէք ուրիշ գլլուխ բացի Քրիստոսից: Նոքա մտածում էին թէ վատիկանի ժողովը միայն նոր վէճերի, նոր դայթակղութիւնների առիթ պիտի տայ: Այս պատկառելի եկեղեցիների տիրապետող զգացմունքը երևում է այն նամակից, որով Էջմիածնայ Հայոց վեհափառ կաթողիկոսը հրաժարվում է մասնակից լինել Վատիկանի ժողովին:

«Ի բաց թողեալ Ս. Հայրապետին Հռովմայ զայն որ յղձալին հայի միութիւն ի Յիսուս Քրիստոս, գրում էր 1869-ի սկզբում Էջմիածնի վեհափառ կաթողիկոսը Կոստանդնուպօլսի Հայոց Պատրիարքին, ինքնին հաճեալ է հրատարակել նախ զօրինակ հրաւիրական թղթոյ, և ապա առաքել զայնս առ Հովիւս Եկեղեցւոյ, որով ի կարծիս տայ ձգտիլ ամենեցուն թէ, Նորին Սրբազնութիւն կամի զանձն իւր ցուցանել գերագոյն իշխող, և գլուխ Քրիստոնէութեան ոչ ճանաչելով զհովուապետս Արևելեան Եկեղեցւոյ համապատիւս ինքեան աստիճանօք, իրաւասութեամբ և Առաքելական յաջորդութեամբ պատուեալս, զորս Հոգին սուրբ հաւասար իշխանութեամբ և շնորհօք զարդարեաց: Եւ զի զԱթոռն Հռովմայ բացայայտ հաչակէ ի թղթին կեդրոն միութեան, զորպիսի վարդապետութիւնս ոչ ընդունի սուրբ և ուղղափառ Եկեղեցին Հայաստանեայց ընդ այլոց ազգաց Արևելեան Եկեղեցեաց, Գլուխ եկեղեցւոյ զՓրկիչն մեր միայն զՔրիստոս ճանաչելով:»

Վատիկանի ժողովին մասնակցող պատրիարքները, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները եօթը հարիւր չորս հոգի էին:

Հռոմը շատ լաւ հասկացել էր որ գիտութիւնը իւր ձգտումներով ոչ միայն պապականութեան սիրելի վարդապետութիւնները խորտակում է, այլ և մի քաղաքական զօրութիւն է դառնում: Նա հասկացել էր որ մի մեծ բաժանում պատրաստւում է Եւրոպայում և թէ այդ ապստամբութեան հնոցը հիւսիսային Գերմանիան է:

Այս պատճառով նա ամենամեծ ուշադրութեամբ հետևել էր Աւստրո-պրուսական պատերազմին, և չէր կասկածում թէ նորա ելքը յաջող պիտի լինի Աւստրիային, հետևապէս և իրան: Սադովայի ճակատամարտը դառն կերպով խաբեց նորա յոյսերը:

Ֆրանս-պրուսական պատերազմի համբաւը իբրև նոր յուսոյ ճառագայթ ուրախութեամբ ընդունուեցաւ նորանից: Նա չէր կասկածում որ այդ պատերազմը պիտի վերջանար Ֆրանսիայի և իւր յաղթութեամբ: Սեդանը դարձեալ նորա քաղցր յոյսերը պարապ հանեց:

Եւ ոչինչ յոյս չունենալով արտաքին պատերազմներից, նա վճռեց փորձել մի ներքին ապստամբութիւն, և այն շարժողութիւնը որ մինչև այժմ դեռ շարունակվում է Գերմանիայում նորա մեքենայագործութիւնների պտուղն է:

Եթէ Աւստրիան և Ֆրանսիան յաղթող հանդիսանային, մի հարուածով կը խորտակուէր և՛ Պրուսիան և՛ բողոքականութիւնը:

Մինչ այս կերպով ներգործում էին դրսում, ներսը պատրաստում էին մի ուրիշ յարձակմունք որ բոլորովին բարոյական ու մտաւորական բնաւորութիւն ունէր: Դիտաւորութիւն ունէին յարուցանել միջնադարեան սպառուած ու փտած վարդապետութիւնները և մինչև վերջին ծայրը հասցնել նոցա՝ առանց փոյթ ունենալու նոցանից բղխած ծանր հետևանքների վրայ:

Ոչ միայն հաստատում էին թէ պապը աստուածային իրաւունքով իշխանութիւն ունի քաղաքական իշխանների հետ մասնակից լինել բոլոր ազգերի կառավարութեանը, այլ և գահերիցութեան իրաւունք էին տալիս Հռոմին և իշխանների վրայ հպատակութեան պարտք դնում ամեն անհամաձայնութեան դէպքերում:

Եւ՝ որովհետև այս վտանգները բղխում էին գիտութիւնից, նա ձեռնարկեց չափ դնել նորան և սահմանափակել նորա իրաւունքները. նա համարձակեցաւ մինչև անգամ արդեան քաղաքակրթութիւնը ամբաստանել:

Վաղուց արդէն, Նորին Սրբութեան 1848-ին Գայէտայից վերադառնալուց յետոյ, խորհում էին վճռաբար հանդէս դուրս գալ: Պապի մօտերքում խորհրդակիցները ճիզուիտներն էին, որոնք յուսալով թէ Աստուած իրանց համար անկարելին կարելի կ'անէ, կարծում էին թէ զառամած պապութիւնը կարող է երիտասարդանալ: Պապական մամուլը հրատարակեց եկեղեցու բացարձակ անկախութիւնը տէրութեան վերաբերութեամբ. եպիսկոպոսների կախումը պապից. ծխական կղերի կախումը եպիսկոպոսներից. բողոքականների պարտաւորութիւնը ուրանալու իրանց անաստուածութիւնը և վերադառնալու Հռոմի գիրկը: 1854-ին, դեկտեմբերի 8-ին, պապը հրատարակել էր Անարատ Յղութեան վարդապետութիւնը: Ճիշտ տասը տարի յետոյ, նա պարգևեց իւր հռչակաւոր Շրջաբերականը և Սիլլաբուսը

Շրջաբերական թուղթը գլխաւոր եկեղեցականների գործ է, որ ներկայացուեցաւ եպիսկոպոսների քննութեանը և վերջապէս կարդինալների ու պապի հաւանութիւնը ստացաւ: Սակայն կղերական անդամներից շատերը չէին համակրում այն կէտին որով դատապարտվում էր արդար քաղաքակրթութիւնը. մի քանի կարդինալներ դժկամակութեամբ էին միաբանում, իսկ կաթոլիկական մամուլը տհաճութեամբ էր ընդունում այդ օտարոտի ու ժամանակի ոգու հակառակ մտքերը: Աւելի նեղ դրութեան մէջ էին կաթոլիկ տէրութիւնները: Ֆրանսիական կառավարութիւնը թոյլ տուեց հրատարակել Շրջաբերականի այն մասը միայն որ վերաբերում էր Յոբելեանին: Աւստրիան և Իտալիան թոյլ տուին նորա հրատարակութիւնը առանց մասնաւոր հաւանութեան: Կաթոլիկ երկրների քաղաքական մամուլը և ազգային ժողովները անյաջող ընդունելութիւն արին նորան: Շատերը կարծում էին թէ նորա հետևանքը կարող է լինել միայն Եկեղեցին ու արդեան հասարակութիւնները միմեանցից աւելի բաժանել: Իտալական մամուլը համարում էր նորան նշան մի մեծ պատերազմի պապութեան ու քաղաքակրթութեան մէջ: Մինչև անգամ սպանիական լրագիրները ողբում էին Հռոմի կուրութեան վրայ, որ պատերազմի ասպարէզ էր կանչում դարուս յառաջադիմութիւնը:

Շրջաբերականը դատապարտում է այն վնասակար վարդապետութիւնը որ կամենում է որ խղճի ու կրօնի ազատութիւնը մարդուս իրաւունքը համարուի, ու այդ իրաւունքը օրէնքով հրատարակուի ու սրբագործուի, և այն անմիտ սկզբունքը թէ ժողովրդի կամքը որ արտայայտվում է հասարակաց կարծիքով (ինչպէս որ

անուանում են նորան) կամ ուրիշ միջոցներով, մի գերագոյն օրէնք է կազմում, անկախ բոլոր աստուածային ու մարդկային իրաւունքներից։ Նա ուրանում է հայրերի իրաւունքը իրանց որդոց արտաքոյ կաթոլիկական եկեղեցու կրթելու. բարձրաձայն բողոքում է նոցա «անամօթութեան» դէմ որոնք ներելի են համարում իրանց եկեղեցու և առաքելական գահի իշխանութիւնը, «որ բղխում է մեր Տէր Յիսուս Քրիստոսից, քաղաքական իշխանութեանը» հպատակեցնել։ Նորին Սրբութիւնը առաջարկում է իւր պատկառելի եղբայրներին որոնց ուղղւում է թուղթը, բազմապատկել իրանց աղօթքները և, «որպէս զի Աստուած աւելի հաստատուն կերպով ականջ դնէ այդ պաղատանքներին, դիմել ամենայն վստահութեամբ մեր նորա մօտ ունեցած միջնորդին՝ Աստուածամայր Մարիամ կուսին, որ նստած է իւր միակ որդու մեր Տէր Յիսուս Քրիստոսի աջ կողմը, ոսկեփայլ ու թանկագին զարդեր հագած. նորա բարեխօսութեամբ կարող ենք ամեն ինչ ստանալ։»

Հռոմի բացարձակարար հրատարակած սկզբունքները տհաճութեան առիթ պիտի տային մինչև անգամ այն կառավարութիւններին՝ որոնք մինչև այն ժամանակ ամենալաւ յարաբերութիւններ պահպանել էին նորա հետ։ Մի մեծ դժգոհութիւն արտայայտւեցաւ Ռուսաստանի կողմից և այդ անբաւականութեան հետևող դէպքերը դրդեցին պապին 1866-ի նոյեմբերի ճառի մէջ դատապարտել ռուսաց կառավարութեան ընթացքն ու վարմունքը։ Ռուսաստանի պատասխանն այն եղաւ որ Հռոմի հետ ունեցած կրօնական դաշնադրութեան (կօնկօրդատ) գործադրութիւնը խափանեց իւր տէրութեան մէջ։

Սադովայի պատերազմի ելքը (1866) որ այնպէս զօրաւոր կերպով շարժում էր Եւրոպայի և մանաւորապէս Հռոմի քաղաքական դրութիւնը, խրատ չեղաւ պապին. 1867-ի յուլիսի 27-ին նա մի ճառի մէջ հաստատեց Շրջաբերականն ու Սիլլաբուսը և յայտնեց տիեզերական ժողով գումարելու դիտաւորութիւնը։

Մինչ մէկ կողմից կոնդակը ցրւում էր աշխարհի ամեն կողմերը, միւս կողմից վէճեր էին ծագում Աւստրիայի հետ։ Րէյխսրաթը (ազգային ներկայացուցիչների ժողովը) օրէնքներ էր կազմել բոլոր կայսրութեան մէջ քաղաքական հաւասարութիւնը հաստատելու և եկեղեցու ազդեցութիւնը նուազեցնելու համար։ Պապական կառավարութիւնը բողոքեց այդ ընթացքի դէմ, և Աւստրիան ջնջեց 1855-ի դաշնադրութիւնը։

Պրուսիան որ Սադօվայից յետոյ զբաղուած էր գերմանական տէրութիւնների հետ իւր յարաբերութիւնները որոշելու, կամեցաւ բարեկամ մնալ Հռոմի հետ. նա թոյլ տուեց որ Սիլլաբուսը ամբողջութեամբ հրատարակուի իւր տէրութեան մէջ: Այս դիւրութեամբ Հռոմի պահանջողութիւնները աւելացան. նա բացարձակ յայտնեց որ հաւատացեալները պիտի նուիրեն եկեղեցուն իրանց կեանքը, իրանց ստացուածքը և մինչև անգամ իրանց կարծիքները. նա հրաւիրեց բողոքականներին, Հայերին և Յոյներին ճանաչել Հռոմի գահերիցութիւնը և հպատակել պապական իշխանութեան:

Վատիկանի ժողովը բացուեցաւ նշանակուած օրը: Նորա նպատակն էր գործադրել Սիլլաբուսի սկզբունքները, ընդունել անմեղանչականութեան վարդապետութիւնը և սահմանել կրօնի ու գիտութեան յարաբերութիւնները: Ամեն միջոցները գործ էին դրուել ճիզվիտների դիտաւորութիւնները յաղթող հանդիսացնելու: Եպիսկոպոսներին յայտնած էր որ նոքա Հռոմ կանչուեցան ոչ թէ վիճելու, այլ սրբագործելու այն վճիռները որ անմեղանչական պապը արդէն ընդունել էր. ուրեմն ազատ վիճաբանութեան խօսք չկար: Ժողովների արձանագրութիւնների քննութիւնն ու վերահայեցողութիւնը արգելուած էր, այնպէս որ հակառակորդ եպիսկոպոսներին համարեա թոյլ տուած չէր խօսելու: 1870-ին յունվարի 22-ին, բազմութիւնը ներկայացրեց մի թուղթ որ պահանջում էր սահմանել անմեղանչականութեան վարդապետութիւնը: Մի ուրիշ թուղթ ներկայացրեց հակառակորդ փոքրաթիւ կուսակցութիւնը: Հետևանքն այն եղաւ որ անբաւականներին արգելուեցաւ առանձին ժողովներ կազմելու և իրանց կարծիքները մամուլի միջնորդութեամբ հրատարակելու: Հակառակորդների ձայնը խեղդուեցաւ:

Որքան ժողովը իւր վախճանին մօտենում էր, այնքան բողոքների թիւը աւելանում էր զանազան երկրներում: Վիեննայի արքեպիսկոպոսը ուրիշ եպիսկոպոսների ու կարդինալների ստորագրութեամբ մի աղերսագիր ուղարկեց պապին, որով պաղատում էր Նորին Սրբազնութեանը չառաջարկել անմեղանչականութեան վարդապետութիւնը: Աւստրիայի առաջին նախարարը մի բողոք ուղղեց պապական կառավարութեանը, որով զգուշացնում էր թէ թոյլ չպիտի տրուի ձեռնամուխ լինել կայսրութեան իրաւունքներին: Ֆրանսիական կառավարութիւնը մի թուղթ ուղարկեց, որով խնդրում էր որ թոյլ տրուի Ֆրանսիացի մի եպիսկոպոսի ներկայացնել ժողովին նոյն

երկրի տրամադրութիւնը և իրաւունքները։ Նորան պատասխանեցին թէ հոգևորական անձը չէ կարող Ժողովի մէջ դեսպանի և անդամի պաշտօն կատարել միևնոյն ժամանակ։ Սորա վրայ Ֆրանսիական կառավարութիւնը ուղարկեց մի ուրիշ Թուղթ, որով դիմում էր եպիսկոպոսների չափաւորութեանը և Պապի խոհեմութեանը յուսալով որ անդրլեռնական գաղափարներ «հաւատոյ մասանց» մէջ չեն խառնուիլ։ Նա իւր յոյսը դնում էր նոյնպէս Ֆրանսիայի եպիսկոպոսների ազգասիրութեան վրայ որոնք կը պաշտպանեն երկրի աշխարհային ու քաղաքական օրէնքները Հռոմի աստուածպետական ձգտումների դէմ։ Հիւսիսային Գերմանիայի դաշնակցութիւնը միացաւ այս բողոքների հետ, ստիպելով պապական կառավարութեանը որ աչքի առաջ ունենայ նոցա։

Ժողովի փոքրաթիւ կուսակցութիւնը այս բողոքներից խրախուսուած, պահանջեց որ պապի անմեղանչականութեան վրայ խօսելուց առաջ՝ սահմանուին հոգևոր և քաղաքական իշխանութեան յարաբերութիւնները, և որոշուի այն խնդիրը թէ արդեօք Քրիստոս Պետրոսին և նորա յաջորդներին կարգե՞ց կայսրների ու թագաւորների վրայ։ Բայց այս բոլոր բողոքներին ոչինչ ուշադրութիւն չդարձրին։ Քուէարկութիւնը նշանակուեցաւ յուլիսի 13-ին. 601 քուէարկողներից 451ը անմեղանչականութեան համար ձայն տուին, և հինգ օր յետոյ պապը հրատարակեց աշխարհին իւր սեպհական անմեղանչութեան վարդապետութիւնը։

Բայց ահա ֆրանս-պրուսական պատերազմը հրատարակուեցաւ, և ութ օր յետոյ Ֆրանսիան իւր զօրքերը յետ կանչեց Հռոմից։ Իտալիայի Թագաւորը մի ինքնագիր նամակ ուղարկեց պապին, քաղաքավարի կերպով յայտնելով թէ հանգամանքները ստիպում են նորան իւր զօրքերը ուղարկել «Նորին Սրբութեան պաշտպանութեան և կարգի պահպանութեան համար», որպէս զի մի կողմից Իտալիայի ազգային ցանկութիւնները լրումն ստանան և միւս կողմից կաթոլիկութեան գլուխը, շրջապատուելով իտալական բարեպաշտ ժողովրդներից, «մի փառաւոր գահ պահպանէ Տիբերի ափերի վրայ, անկախ ամենայն մարդկային իշխանութիւնից։»

Պիոս Թ այս նամակին կարճ ու կծու պատասխան տուաւ։ «Գոհութիւն Աստուծոյ որ թոյլ է տուել Ձեր Մեծութեանը իմ կեանքի վերջին օրերը դառնութեամբ լցնելու։ Բայց ես ոչ ձեր պահանջմունքները կարող եմ կատարել և ոչ ձեր նամակում պարու-

նակուած սկզբունքները ընդունել: Բողոքում եմ Աստուծոյ և նորան եմ յանձնում իմ գործը որ նորա գործն է: Աղօթում եմ նորան որ թափէ իւր շնորհը Ձեր Մեծութեան վրայ, որ փրկէ ձեզ ամէն վտանգից և շնորհէ ձեզ իւր Թողութիւնը, որին այնքան հարկաւորութիւն ունիք:»

Իտալական զօրքերը մի աննշան ընդդիմութիւնից յետոյ մտան Հռոմ 1870-ի սեպտեմբերի 20-ին: Մի յայտարարութեամբ առաջարկուեցաւ քաղաքացոց քուէարկել հետևեալ հարցը. ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը ց ա ն կ ա ն ո՞ ւ մ է Ի տ ա լ ի ա յ ի մ ի ո ւ թ ի ւ ն ը թ է ո չ: Քուէարկութեան հետևանքը յայտնի է, և Վիկտոր Էմմանուէլը մի հրովարտակով յայտնեց որ իւր կառավարութիւնը հաւատարիմ պիտի մնայ այս սկզբին. ազատ եկեղեցի ազատ Տէրութեան մէջ:

Այդ միջոցում մի կուսակցութիւն կազմվում էր Գերմանական կղերի մէջ պապի յափշտակութիւններին դիմադրելու համար: Կուսակցութիւնը բողոքում էր այն ձգտումների դէմ որ կամենում էին «մի մարդ բարձրացնել Աստուծոյ գահի վրայ», և մերժում էր իւր գիտնական համոզմունքները ենթարկել եկեղեցական իշխանութեանը: Սկսան բանադրանքներ արձակել այդ ապստամբների դէմ և պահանջել անգամ որ մի քանի պրոֆէսօրների ամբիոնները յանձնուին անմեղանչականների՞: Պրուսական կառավարութիւնը, որ հասկացաւ թէ խնդիրը այնքան կրօնական չէ որքան քաղաքական, մերժեց կատարել այդ պահանջմունքը: Վէճը սաստկացաւ, և հետևեալ հարցը ինքնիրան ներկայացաւ. «Ո՞վ է տէրը երկրի մէջ, քաղաքական կառավարութիւնը թէ Եկեղեցին: Մարդիկ չեն կարող երկու իշխանի հնազանդել: Եթէ աշխարհային իշխանութիւնը չէ կարող հպատակել հոգևորին, պատերազմը անհրաժեշտ է երկուսի մէջ»: Եւ արդարև պատերազմը ամենակատաղի ու յամառ կերպով մղուեցաւ երկու կողմից էլ, որի հետևանքն այն եղաւ որ պրուսական օրէնսդրութեան մէջ հաստատուեցան հետևեալ չորս օրէնքները. առաջինը՝ որոշում էր թէ ինչ միջոցներով մասնաւոր մարդիկ կարող էին իրանց կապը կտրել Եկեղեցու հետ. երկրորդը սահմանափակում էր Եկեղեցու իշխանութիւնը եկեղեցական պատիժների վերաբերութեամբ. երրորդը, կանոնաւորում էր այդ մի և նոյն իշխանութեան իրաւունքը կարգապահութեան վերաբերութեամբ, արգելում էր մարմնաւոր պատիժները, որոշում էր տուգանքները, և իրաւունք էր տալիս հոգևորականներին թագաւորական դատարանին դիմել. չորրորդը, պատուիրում էր որ քահանայացուները լաւ կրթու-

թիւն ստանան, քննուի նոցա գիտութիւնը փիլիսոփայութեան, գերմանական պատմութեան ու գրականութեան մէջ, և կառավարութիւնից նշանակուէին իրանց պաշտօնի մէջ: Նա յայտնում էր նոյնպէս որ այն հիմնարկութիւնները որոնք չեն հպատակիլ տէրութեան վերահսկողութեանը կը փակուէին: Պրուսիան վճռել էր հաստատ պահել սահմանադրութեան այն յօդուածը որ ասում է թէ «կրօնական ազատութեան գործադրութիւնը չպիտի արգելէ քաղաքացիներին իրանց պարտաւորութիւնները կատարելու երկրի և տէրութեան վերաբերութեամբ»:

Եւրոպական յառաջադիմութեան փորձաքարը եղել է միշտ իւր կառավարութեան երկուութիւնը: Քանի որ մի ժողովուրդ երկու իշխան ունի, մի աշխարհական իշխան ներսում, մի հոգևոր իշխան դրսում, աշխարհական իշխանները զանազան ազգերի մէջ զանազան լինելով, իսկ հոգևոր իշխանը ամէնի համար նոյնը լինելով, հասկանալի է որ ազգերի պատմութիւնը միայն մանր կռիւների ու հակառակութիւնների յիշատակարան կը լինի:

Ով որ խորհում է այս նիւթի վրայ, հասկանում է թէ ինչու այն ազգերը որոնք թօթափել են այդ երկուութեան լուծը աւելի առաջ են գնացել և պարզ տեսնում է այն անշարժ վիճակի պատճառը, որի մէջ ընկած է Ֆրանսիան: Մի կողմից, նա կը կամենար Եւրոպայի գլուխը լինել. միւս կողմից, նա կաշկանդում է իրան մի դիակի հետ:

Պիոս Թ իւր յարուցած շարժողութեամբ երկու նպատակ ունէր աչքի առաջ. պապական քայքայած իշխանութիւնը զօրացնել, քրիստոնեայ ազգերի մտաւոր յառաջադիմութեան ղեկը իւր ձեռքն առնել:

Այս ձգտումներից առաջինի բնական հետևանքն է Եկեղեցու միջամտութիւնը քաղաքական գործերի մէջ: Ամենայն աշխարհական իշխանութիւն կախում պիտի ունենայ հոգևոր իշխանութիւնից. ամենայն օրէնք որ Եկեղեցու շահերին հակառակ է, պիտի վերանայ. այդ տեսակ օրէնքները պարտաւորիչ չեն հաւատացեալների համար:

Իսկ թէ ինչպէս պիտի գործ դնէ պապը ղեկավարի պաշտօնը քրիստոնեայ ազգերի մտաւոր յառաջադիմութեան մէջ, այդ երևում է նորա շրջաբերականի և Սիլլաբուսի մէջ պարունակուած սկզբունքներից: Սիլլաբուսը պախարակում է այն մարդկանց որոնք սոցա նման մտքեր են տարածում՝ թէ Աստուած և աշխարհը նոյն են. թէ չկայ ուրիշ

Աստուած բացի բնութիւնից թէ աստուածաբանական խնդիրները նոյն եղանակով պիտի քննուեն ինչպէս և փիլիսոփայական խնդիրները. թէ սքօլաստիկական սկզբունքները անգործադրելի են մեր դարում, թէ ամէնայն մարդ ազատ է իւր համար մի կրօն ընտրել և իւր բանականութեան լուսով առաջնորդուիլ. թէ աշխարհային իշխանութիւնը կարող է Եկեղեցու իրաւունքները որոշել և նորա իշխանութեան սահմանները ցոյց տալ. թէ Եկեղեցին իրաւունք չունի ոյժ գործ դնել կամ աշխարհական իրաւունք վարել. թէ կաթօլիկական կրօնը չպէտք է համարուի տէրութեան կրօն, ոչ էլ միւս կրօնները պիտի մերժուեն. թէ կաթոլիկ երկրներում բնակող անձինքը իրաւունք ունին ազատօրէն դաւանել իրանց կրօնը, թէ Հռոմի Քահանայապետը պէտք է համաձայնի և հաշտուի արդեան քաղաքակրութեան յառաջադիմութիւնների հետ։ Սիլլաբուսը պահանջում եկեղեցուն ենթարկել հասարակաց դպրոցների հսկողութիւնը և մերժում է այդ միևնոյն իրաւունքը քաղաքական իշխանութեանը։ Նա պահանջում է նոյնպէս ամուսնութիւնները և ամուսնական բաժանումները իւր գերագոյն հսկողութեանը յանձնել։

Այս սկզբունքների համեմատ Վատիկանի ժողովը իւր եկեղեցական սահմանադրութեան մէջ եկեղեցուն տալիս է մի գերագոյն ու գերբնական հսկողութեան իրաւունք ամէն բարոյական և նիւթական իրերի վրայ։ Քահանաները, եկեղեցական դասակարգութեան զանազան աստիճաններում, կարող են ազդել ապագայի վրայ, թէ իրանց յատուկ իշխանութեամբ, թէ երկնային զօրութիւնների առաջ ունեցած ազդեցութեամբ։ Եկեղեցու բացարձակ տէրը՝ պապը իշխանութիւն է ստացել իւր հաճոյքի համեմատ կապելու և արձակելու։ Թոյլ չէ տուած նորա դատաստանների դէմ բողոքելու որ և է տիեզերական ժողովի առաջ, որովհետև երկրի վրայ նորա իշխանութիւնից գերագոյն իշխանութիւն չկայ։

Զարմանալի՞ է սորանից յետոյ եթէ կաթոլիկական ծայրայեղ գաղափարները մերժողների թիւը օրէց օր աւելանում է։ Ի՞նչպէս կարելի է ընդունել իբրև անսխալական առաջնորդ նորան որ այդպիսի յանդուգն սխալանքների մէջ է ընկնում։ Այս և սորա նման հարցերի առաջ պապը անտարբերութեամբ լռում է, ոչինչ բացատրութիւն չէ տալիս. նա միայն իւր անսխալականութիւնն է առաջ բերում։

Սակայն ինչ որ էլ անէ, Հռոմի քահանայապետը միայն այն

իրաւունքները կունենայ որ կը շնորհէ նորան բանականութեան դատարանը: Նա չէ կարող անսխալականութիւն պահանջել կրօնական խնդիրների մէջ առանց պահանջելու նոյն անսխալականութիւնը գիտնական խնդիրների մէջ. որովհետև անսխալականութիւնը բովանդակում է իւր մէջ մի ընդհանրական, մի կատարեալ գիտութիւն. եթէ նա անսխալական է աստուածաբանութեան մէջ, անսխալական պէտք է լինի և գիտութեան մէջ: Ի՞նչպէս հաշտեցնենք պապի անսխալականութիւնը իւր և նախորդ պապերի սխալանքների հետ, որոնց մասին մի քանի անգամ խօսուեցաւ այս յօդուածի ընթացքում:

Դարուս ապստամբ ոգին զսպելու համար, պապական քաղաքագիտութիւնը կը կամենար ոյժ գործ դնել. նա համարձակում է բարձրաձայն յայտնել թէ «ինկվիզիցիան անհրաժեշտ կարիք է արդի անհաւատութեան դարում»: Միթէ կարելի՞ է չբողոքել մարդկային արժանաւորութեան անունով այն գազանային անգթութիւնների դէմ որ այս զարհուրելի հիմնարկութիւնը գործ է դրել դարևոր ժամանակներ. այժմ նորի՞ց մտածում են հաստատել նորան: Մի՞թէ մարդկային խիղճը իւր անկապտելի իրաւունքները չունի:

Մի մեծ, մի անանցանելի անդունդ դրած է կաթոլիկութեան և ներկայ դարու մէջ: Կաթոլիկութիւնը կամենում է որ կոյր հաւատը բանականութիւնից գերադանց համարուի և վերացականը իրականից բարձր: Նա կամենում է բնութեան միակ թարգմանը լինել, գիտութեան գերագոյն իշխանը: Նա առանց քաշուելու յայտնում է իւր ատելութիւնը ազատ կարգերի և սահմանադրական վարչութեան դէմ, և յանցանք է դնում նոցա վրայ որոնք պապի հաշտութիւնը արդեան քաղաքակրթութեան հետ ցանկալի կամ կարելի են համարում:

Եւ մի՞թէ, հարցնում է դարուս ոգին, մարդկային բանականութիւնը պիտի ենթարկուի այն տգէտ ու անգրագէտ մարդկանց որ քրիստոնէութեան առաջին դարերում գրել են: Նոր ժամանակի ոգին ոչինչ արժանաւորութիւն չէ տեսնում կոյր հաւատի մէջ. ընդհակառակն զգուշանում է նորանից: Նա հարկաւոր չէ համարում սուրբ համարել այն առասպելներն ու ստապատիր խաբէութիւնները որ կաթոլիկութիւնը հնարել է իւր օգտի համար և որոնք ներկայումս էլ չեն կարող մարդկանց աչքը կապել: Պապութիւնը անցել է, ինչպէս և մարդս, մանկութեան կաւիններից. նա գործ դրեց

իւր բոլոր ոյժերը չափահասութեան ժամանակ, և այժմ որ իւր ասպարէզը աւարտել է, ստացել է ծերերի կռուարար բնաւորութիւնը: Նորա երիտասարդութիւնը չէ կարող վերանորոգուել. Նա էլ ոչինչ յոյս չէ կարող ունենալ ապագայի վրայ, Նորան մնում է միայն անցեալ յիշատակների մխիթարութիւնը: Եւ ինչպէս որ հեթանոս Հռոմը իւր ստուերը երկար ժամանակ ծածկեց Նոր աշխարհի վրայ, այնպէս և քրիստոնեայ Հռոմը վերջին շնչին հասած՝ իւր ստուերը տարածում է Եւրոպայի վրայ:

Արդեան քաղաքակրթութիւնը կը համաձայնի՞ թողնել այն ճանապարհը որի վրայ այնքան զօրութիւն ու երջանկութիւն գտաւ: կը համաձայնի՞ յետ դառնալ դէպի միջնադարեան բարբարոսութիւնը. կը հպատակի՞ այն իշխանութեան հրամաններին որ իւր աստուածային ծագմամբ պարծենում է. ա՞յն իշխանութեան՝ որ շատ դարեր շարունակ Եւրոպան կապանքի մէջ պահեց, և մի գազանային անգթութեամբ փայտակոյտի վրայ բարձրացրեց յառաջադիմութեան բոլոր ներկայացուցիչներին. ա՞յն իշխանութեան՝ որ հիմնվում է ծածուկ խորհուրդների վրայ, և բարձր է համարում իրան բանականութիւնից և առողջ դատողութիւնից. ա՞յն իշխանութեան՝ որ իրան փառք է համարում ատել ազատութիւնը և ազատ սահմանադրութիւնները. որ չէ ծածկում իւր դիտաւորութիւնը, հանգամանքները ներած ժամանակ, մէկը ճնշելու և միւսները կործանելու. որ անմիտ է համարում այն կարծիքը որ խղճի ու կրօնի ազատութիւնը տալիս է մարդուն, և իւր բոլոր զօրութեամբ ընդդիմանում է այդ ազատութեան հաստատուելուն եւրոպական տէրութիւնների մէջ. որ արհամարհանքով մերժում է այն սկիզբը թէ ժողովրդի կամքը, հասարակաց կարծիքի միջնորդութեամբ արտայայտուած, օրէնքի զօրութիւն ունի. որ մերժում է մարդուն անձնական կարծիք ունենալու իրաւունքը կրօնական խնդիրների մէջ. ա՞յն իշխանութեան՝ որ յայտնում է իւր դիտաւորութիւնը ստիպողական միջոցների դիմել մարդկանց իւր սահմանած օրէնքներին հնազանդեցնելու համար, որ բռնաբարում է մասնաւոր կեանքի գաղտնիքը և խոստովանանքի մէջ կասկածելի մարդու ամուսնուն, դստեր և աղախնին լրտեսների է փոխում. որ դատում է Նորան առանց ամբաստանողի հետ երես առ երես բերելու. որ ստիպում է Նորան զարհուրելի տանջանքներով իւր անձը ամբաստանել. որ մերժում է հայրերին իւր որդոց կրթելու ազատ իրաւունքը. որ սեպհականում է

իրան մի գերագոյն իրաւունք ընտանեկան կեանքի վրայ հսկելու. որ յարձակւում է այն մարդկանց անամօթութեան վրայ որոնք ձգտում են Եկեղեցին աշխարհական իշխանութեան ենթարկելու և Եկեղեցին Տէրութիւնից բաժանելու. ա՛յն իշխանութեան՝ որ հրաժարւում է ամենայն ներողամտութեան գաղափարից, և պնդում է թէ միայն կաթոլիկական կրօնը իրաւունք ունի գոյութիւն ունենալու երկրիս վրայ, պահանջելով որ ամենայն օրէնք որ հակառակ է նորան լուծուի և իւր հպատակների վրայ պարտք դնելով որ չհնազանդին այդպիսի օրէնքի:

Այս իշխանութիւնը լաւ հասկանալով որ չէ կարող հրաշքներ անել իւր գործը յաջող հանդիսացնելու համար, մարդկային միջոցների է դիմում և իւր մեքենայութիւններով աղմուկ է ձգում հասարակութեան մէջ, և բռնաւորների հետ միաբանելով չարիքը տարածում է աշխարհի մէջ:

Նորա ձգտումները արտայայտում են մի ապստամբութիւն արդեան քաղաքակրթութեան դէմ և մի դիտաւորութիւն կործանելու նորան, փոյթ չէ եթէ մինչև անգամ ինքը հասարակութիւնը կործանուի նորա հետ: Այդպիսի դիտաւորութիւնների ենթարկուելու համար պէտքէ որ մարդիկ ստրկական ոգու տէր լինէին:

Ամեն մարդ գուշակում է անշուշտ որ կռուի վերջին ճգնաժամը հեռու չէ մեզանից: Ինչ որ հիմնվում է ստութեան ու խաբէութեան վրայ պիտի կործանուի: Կեղծաւորութեան հիմնած հաստատութիւնները վերջապէս պիտի ներկայանան բանականութեան դատաստանի առաջ: Հաւատը պիտի հաշիւ տայ իւր համար, և վերացականը պիտի տեղի տայ իրականի առաջ: Կրօնը պիտի ստիպուի թողնել բաժանուիլ այն տիրապետող դրութիւնից, որ նա յափշտակել էր գիտութեան դէմ մրցելու համար: Միտքը կատարեալ ազատութիւն կը ստանայ: Քահանան կը ստիպուի փակուիլ իւր ընտրած ասպարէզում. նա էլ չի աշխատիլ բռնանալ փիլիսոփայի վրայ, որ զգալով իւր ոյժը և դիտաւորութիւնների արդարութիւնը, էլ չի տանիլ այդ բռնութեան: Ինչ որ միանգամ գրուել է Եզրասի ձեռքով բաբելոնեան գետափի ուռենիների տակ, դարձեալ կը ճշմարտուի. «Ճշմարտութիւնը յաւիտենական է. նա երբէք չէ մեռնում, այլ ապրում ու աճում է միշտ:»

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

(Շարունակութիւն) *

ԺԲ.

Պերճական խմբի տուած ներկայացումներից ամենաանյաջող պիեսներից մէկն էր և «Արուսեակ» անունով ողբերգութիւնը, որ գրել էր պ. Ա. Երիցեանցը, տ. Արուսեակի խաղը տեսնելուց յետոյ Պօլսում, և այդ պատճառով էլ պիեսը նուիրուած էր դերասանուհի Արուսեակին: Հեղինակը նիւթը վերցրել էր Բագրատունեաց անկման ժամանակներից, ներկայացնելով անցքը Լօռւայ ձորերում, Հեթում անունով իշխանի ընտանեկան շրջանում:

Ես նպատակ չունիմ այդ պիեսայի մասին ընդարձակօրէն խօսել, միայն ուզում եմ պատմել մէկ քանի փոքրիկ իրողութիւններ, որ պատահեցան այդ պիեսայի ներկայացման ժամանակ, որից ընթերցողն ինքը կարող է գաղափար կազմել պիեսայի արժանաւորութեան մասին:

Պերճական խմբի ռեժիսօրն էր, ինչպէս ասացինք վերև, պ. Աղաբէգեանը: Խումբի հոգի տուողն էր պ. Ս. Մէլիք Նազարեանը, որ խաղում էր հերոսուհի Արուսեակի դերը:

Կրկնութիւնների ժամանակ դերասանուհին նկատում է որ վերջին գործողութեան մէջ, բոլոր գործող անձինքը մեռնում են և միայն ինքն է մնում բեմի վրայ:

—Իսկ ես ի՞նչ անեմ, իմ դրութիւնս շատ ծաղրալի է, ասում է դերասանուհին ռեժիսօր պ. Աղաբէգեանին, ամէնքը մեռնում են և ես մնում եմ սառած:

---

*) Տես փորձ № 1.

Առաջին անգամ պ. Աղաբէգեանը ականջ չէր դնում այդ նկատողութեանը, դժուարանալով մէկ որոշ պատասխան տալ, բայց երբ տ. Մէլիք-Նազարեանցը քանիցս անգամ կրկնում է իւր հարցը, վերջապէս յուսահատուած բիժիսօրը բացագանչում է.

—Ամա՛ն, կը տեմնես որ ամենքը մեռան, դուն ալ ընկի՛ր ու մեռի՛ր:

Այդպէս էլ արաւ դերասանուհին գործողութեան վերջում. երբ բոլոր գործող անձինքը սպանուած փռուեցան նորա բոլորիշուրջ, նա էլ մէկ մեղեդիանման երգ ասաց և ինքն էլ փռուեցաւ դիակների կոյտուածքի վերայ ու մեռաւ առանց որ և իցէ պատճառի, որից սաստիկ ծիծաղ բարձրացաւ հանդիսականների մէջ: Վարագոյրը ընկնելուց յետոյ սկսեցին դուրս կանչել հեղինակին, ինչպէս ընդունուած էր, բայց երբ երկար ծափահարութիւնից և զանազան հեգնական բացագանչութիւններից յետոյ հեղինակը չերևեցաւ, լուր տարածուեցաւ դահլիճում, թէ նա տեսնելով, որ իւր պիեսայի բոլոր գործող անձինքը մեռնում են, ինքն ևս համակրելով նոցա ողբերգական վիճակին և հիւանդ լինելով այդ ժամանակ, մեռել է տանը պիեսայի իսկ վերջանալու ժամանակ:

Թատրոնի նախամուտքերում լսվում էին հազար ու մէկ սուր խօսքեր և կատակներ ներկայացման մասին. տեղ տեղ կազմուած խմբերում, որոնց մէկի մէջ կանգնած էր պարոն Ե....: Այդ խմբի առաջից անցաւ շտապով Յ. Կարինեանցը, որին սաստիկ չէր սիրում յիշեալ պարոնը:

Վարժապե՛տ, վարժապե՛տ, կանչեց Ե.... Կարինեանցի ետևից, էդ ո՞ւր ես փախչում, դերասանները քեզ են պտռում որ տանեն բեմ և քեզ էլ միւսների հետ սպանեն:

Մէկ խօսքով ոչ մէկ ներկայացում այդքան սրախօսութեանց առիթ չէր տուել, ինչքան արժանայիշատակ «Արուսեակ» ողբերգութիւնը:

ԺԳ.

Պ. Միրիմանեանցը թէև սկզբում շատ փող ծախսեց հայ թատրոնական բեմի համար, օրինակ՝ կազմեց բեմական շորեր, և մինչև անգամ օգնում էր թէ դերասաններին և թէ դերասանուհիներին դրամական միջոցով, և դերասանուհիներից երեքին օրին. օր. Գայիանէին, Արամեանցին և Դաւթեանցին շարունակ երկու տարի ռոճիկ էր

տալիս, այսու ամենայնիւ, յանկարծ թողնելով իւր հովանաւորութիւնը, բարձի թողի արաւ մեր փոքրիկ խումբը. բայց ես և ընկերներս չյուսահատուեցանք:

Մենք վճռեցինք շարունակել մեր գործը անկախ ամենքից և այդ օրից ես յանձն առայ շարունակել մեր սկսած գործը և ընկայ դէս ու դէն արհամարհելով ամեն պատահած արգելք:

Պէտք էր նախ և առաջ մի՛ կանոնաւոր խումբ կազմել: Պերճը և Շահխաթունեանցը հեռացել էին Թիֆլիսից, այնպէս որ պ. Իզմիրեանցը չունէր ոչինչ միջոց շարունակելու իւր գործունէութիւնը: Ես հրաւիրեցի ցրուած խմբի անդամներին Պերճի ուսումնարանը: Հաւաքուեցան մօտ քան թէ քսանը հինգ հոգի, որոնցից ամեն մէկը իրան երևելի և հագուագիւտ դերասան էր համարում: Նշանակած ժամանակին եկայ և ես: Մեր ընկերութիւնը, որոշել էր հեռանալ փտած, անիմաստ և անհասկանալի ողբերգական պիեսներից և կազմել եւրոպական հասկացողութեան և ճաշակին համեմատ նոր ռեպերտուար: Այդ ժամանակ հայ-բեմը ոչինչ (բացի Տէր—Գրիգորեանցի «Ճլատ» Փուղինեանցի «Գալալ-Դալդյ» և Սունդուկեանցի «Գիշերուան սաբրը խեր է» պիեսներից) ոչ տեղական և ոչ թարգմանական պիեսներ երբէք բեմ չէր դուրս հանել: Ես սաստիկ ուրախացայ, երբ լսեցի, որ պ. Ա. Բաբանեանցը թարգմանել է «Սէր և Նախապաշարմունք» անունով կոմեդիան: Թէև առաջուց ծանօթ էի այդ երիտասարդի հետ, բայց նորա նոր թարգմանութեան պատճառով մենք շատ մօտեցանք և կազմուեցաւ մեր մէջ անկեղծ ընկերական յարաբերութիւն: Թէև ճշմարիտ է որ այդ պիեսն ունէր իւր մէջ պակասութիւններ լեզուի կողմից, բայց դա պատճառ եղաւ բեմ դուրս հանելու եւրոպական թարգմանութիւնները նոր աշխարհաբար լեզուով, որ մինչև «Սէր և Նախապաշարմունք»ի ներկայացնելը, շատերը, հայերի մէջ ընդունուած գիտնականներն անգամ անհնարին էին համարում:

Ես մնայ դահլիճը՝ այդ պիեսը կուանս տակ:

—Պարոննե՛ր, սկսեցի ես, հոգաբարձութիւն չկայ այլևս, մենք բաժանուած էինք մինչև հիմա առանձին խմբերի և վնասելով միմեանց, վնաս էինք տալիս և հայ թատրոնական գործի ապագային: Կը կամենա՞ք միանալ մեզ հետ և միասին տալ ներկայացումներ:

—Բայց մեզ ո՞վ կը վարձատրէ մեր աշխատանքի համար, հարցրին շատերը նորանցից:

—Նոյն իսկ գործը, պատասխանեցի ես և առաջարկեցի՝ բոլոր մեր միացած խումբը բաժանել երեք աստիճանի, ըստ արժանաւորութեան և աշխատանքի և այնպէս բաժանել նոցա մէջ ներկայացումներից մնացած օգուտը:

Իմ առաջարկութիւնս ընդունուեցաւ և ես հասայ իմ նպատակին. նախ հաւաքեցի ցրուած ոյժերը և այդ ոյժերից ընտրեցի հարկաւորներն ու ճշմարիտ օգտաւէտները, իսկ մնացած անընդունակները համոզելով որ ոչ իրանք կարող են օգուտ տալ թատրոնին և ոչ թատրոնը կարող է ապահովացնել իրանց վիճակը, ցրուեցան դէս ու դէն՝ ուրիշ գործ փնտռելու իրանց համար:

ԺԴ.

Այսպէս կազմուեցաւ Թիֆլիսում այն կանոնաւորուած խումբը, որ թէև երբեմն կերպարանափոխվում է և կորցնում իւր ամենաընտիր և գործունեայ, հայ թատրոնական գաղափարը հասկացող հանճարներից շատերին, բայց այսու ամենայնիւ նա միշտ մնում է իբրև բեմական ուսումնարան, որի մէջ ինքնուրոյն կրթվում են հայ բեմի համար դերասաններ, որոնք և շարունակում են այդ սկզբնական խմբի գործունէութիւնը և ուղղութիւնը:

ԺԵ.

Խումբը կազմեցինք հետևեալ անձինքներս, ես իբրև ռէժիսոր [1] և միևնոյն ժամանակ jeune premier և դրամատիկական հերոսների դերեր կատարող, Ամերիկեանցը, Մանդինեանցը իբրև առաջնակարգ serieus կոմիկական դերեր կատարողներ, Սուքիասեանցը իբրև ծաղրածու կամ կատակական կօմիկի դեր կատարող, Կուսիկեանցը, Թովմաս Ջարթիղեանցը (մեռած այժմ) Մասինեանցը, (շատ կարճ միջոցով) և ուրիշ երկրորդական դերասաններ, որոնց ես հիմա չեմ յիշում կանանց դերերի համար կային տ. Ս. Մելիքնազարեանցը, օր. օր. Գայիանէ, Ս. Դաւթեանց, [2]) Սաթինիկ (առաջ Տէր Աբրահամեանց) և Բ. Արամեանց:

---

[1]) Այդ օրից մնաց ինձ յատկացնել այդ պաշտօնի բուն նշանակութիւնը իւր բոլոր բեմական պարտաւորութիւններով:

[2]) Այդ օրիորդը շուտով հեռացաւ թատրոնից և անհետացաւ:

Գարունքն էր, Զատկից յետոյ, որ մենք սկսեցինք պատրաստել Սէր և Նախապաշարմունք: Գլխաւոր կնոջ՝ օր. Լէլի դերը, որ պիտի կատարէր օր. Գալիանէն և որ, ինչպէս ասում էին գիւղն էր գնացել [1]), տուինք տ. Մելիք-Նազարեանցին, Պէնէլօպայի դերը տուինք օր. Տէր Աբրահամեանցին (յետոյ Սաթինիկ), այրմարդկանց դերերից՝ Սիւլիվանի դերը վերցրի ես, Լորդ Գիստինգի դերը Ամերիկեանցը. Ֆրէդէրիկի դերը Կուսիկեանցը:

Պիեսը պատրաստեցինք. մնում էր վերցնել ներկայացման թոյլտուութիւնը քաղաքային մեծ թատրոնում, որի կառավարիչն էր, ինչպէս ասացինք, իշխան Եազօն Թումանեանցը:

Ես թէև ծանօթ չէի այդ ժամանակ այդ պարոնի հետ և թոյլտուութիւն ներկայացման համար միշտ վերցնում էր պ. Միրիմանեանցը, բայց վճռեցի առանց որ և է միջնորդի դիմել ուղղակի նորան և վերցնել թոյլտուութիւն:

Նախ և առաջ ես տեղեկացայ ուրիշներից թէ որ ժամին է այդ պարոնը ընդունում գործի համար այցելողներին և մէկ առաւօտ ութ և կէս ժամին գնացի իշխանի տունը, որ գտնվում էր Սօլօլակում:

Զանգը քաշեցի, յայտնեցի ծառային իմ ազգանունս և իսկոյն ինձ ներս հրաւիրեցին, որտեղ գտայ ես իշխանին նստած կաբինետում իշխանուհու հետ: Նոքա երկուքն էլ ինձ շատ քաղցր ընդունեցին և ես ստացայ թոյլտուութիւն ներկայացման համար, չեմ յիշում որ օրուայ համար, հարիւրական ռուբլի վարձով:

Ուրախ ուրախ դարձայ ընկերներիս մօտ, որոնք անհամբերութեամբ սպասում էին ինձ մէկ փոկրիկ կաֆէում:

Իսկոյն տպագրեցինք աֆիշները և տոմսակները (առաջին անգամ կարծեմ ամբողջ աֆիշան դուրս եկաւ միայն հայերէն պարունակութեամբ) և մէկ քանի օրից յետոյ տուինք ներկայացումն բազմաթիւ հասարակութեան առաջ:

Բրավօներին ու կեցցէներին վերջ չկար:

Այդ պիեսում առաջին անգամ Ամերիկեանցը ցոյց տուեց իւր կոմիքական հանճարը Լորդ Գէստինգի դերում:

---

[1]) Ինչպէս յետոյ իմացանք նա այդ ժամանակ Թիֆլիզումն էր և շրջում էր Թիֆլիզում գիմնազիստի շորերով, որովհետև յարմար չէր գտնում ամառուայ ժամանակ չոլ փոխուել և փողոցներով անցնել կրկնութիւններ գալու համար:

Միւս օրը մենք բաժանեցինք մեր մէջ բաւականին նշանաւոր գումար և համոզուեցանք ամենքս, որ առանց հոգաբարձուԹեան խառնուելու, մենք ինքներս առաւել վստահ և հաստատ կարող ենք առաջ տանել Թատրոնական գործը:

ԺՁ.

«Սէր և Նախապաշարմունքից» յետոյ մօտայ ընկան Թարգմանական պիեսներ, որոնցից նշանաւորներն էին «Ով որ քու բաբը չէ, նորա հետ մի ձգուիր» որը Թարգմանել էր ռուսերէնից պ. Տէր Աղէքսանդրեանց. «Թուղթ խաղացողի կեանքը» և «Շկոլի վարժապետ» Թարգմանութիւններ պ. Մ. Պատկանեանցի և «Կրեչինսկու հարսանիքը» Թարգմանութիւն պ. Ս. Մանդինեանցի: Այդ պիեսաներից ներկայացրին այդ միջոցին միայն «Ով որ քու բարը չէ, նրա հետ մի ձգուիր» ամբողջապէս մէկ անգամ և կտոր՝ երկրորդ անգամ. Շկոլի վարժապետը մնաց յաւիտեան հայ Թատրոնի րէպէրտուարում և Կրեչինսկու հարսնիքը կարծեմ երկու անգամ:

Ես կըխօսիմ «Շկոլի վաժապետի» և «Կրեչինսկու հարսանիքի» մասին, որովհետև այդ երկու պիեսների ներկայացումից յետոյ մեր ընկերական խումբը արդէն յայտնուեցաւ իբրև կանոնաւորուած խումբ, որ տեղեակ է Թատրոնական գործին և որ այդպիսի մէկ փոքրիկ խումբ կարող է իրագործել հայ Թատրոնի գոյուԹիւնը Թիֆլիսում:

Այդ երկու պիեսների մէջ ինչքան որ դերասանական ամբողջուԹիւնը (անսամբլը) կատարեալ էր այնքան ևս երկու դերասաններ գերազանցեցին իւրեանց հանճարաւոր խաղով դերերի բնաւորուԹիւնների կատարելումն: Այդպէս Ամերիկեանցը ստեղծեց «Շկոլի վարժապետից» որի դերն էր կատարում, կատարեալ հայ փալախայակիրԹ ուսուցչի դեր. իսկ պ. Մանդինեանցը մի և նոյն պիեսում բեմ դուրս գալու պէս, ԲԹամիտ աշակերտի դերում, այնպիսի մէկ դղրդոց և ծիծաղ բարձրացրեց հանդիսականների մէջ, որ մէկ քանի րոպէ շարունակ յուշարարը Թողեց իւր յուշարարուԹիւնը և դերասանները՝ իրանց դերերը: Նա ունէր հագին, ինչպէս լաւ յիշում եմ, կարճ սպիտակ չէրքեսկա, բրիկ, գլխին սպիտակ մօրԹուց գտակ, ուսին շալկած ունէր մէկ քանի մեծ և ծանր գրքեր, ձեռին քանոն և Թղթից շինած ճանճի որսգայԹ, և Թղթից շինած նոյնպէս Թրխկանոց, որոնք, նստելու պէս՝ իւրեան համար առանձին պատ-

բաստած աթոռի վերայ, նա գործ դրեց մեծ հմտութեամբ. Նախ թրխկացրեց և յետոյ սկսեց այնքան մեծ ուշադրութեամբ ճանճ բռնել, որ թւում էր թէ դորա ուսումնարան մտնելու միայն նպատակն է ճանճ բռնել. Ժողովրդի ծիծաղին վերջ չկար:

Բայց պէտք էր տեսնել այդ պարոնին «Կրէչինսկու Հարսանիքի» պիեսի մէջ, Ռասպլիւեվի դերում: Շատերը հանդիսականներից, որոնք տեսել էին այդ դերում երևելի ռուսաց դերասան Սադօվսկուն, նոյա, ռուսներից անգամ շատերը, խոստովանում էին որ Մանդինեանցը աննման Ռասպլիւեվ է:

Ես այստեղ հարկաւոր եմ համարում փոքր ինչ մանրամասն խօսել այդ պիեսի ներկայացման առիթով, որ ընթերցողին հասկանալի լինի՝ թէ ինչ դժուարութիւններով և ինչ դերասանական ոյժերով մենք ձեռն էինք մխում այդպիսի հաստատուն և ծանր պիեսներին և ինչ տանջանք էինք կրում, նաև րէժիսօրի պաշտօնակատարս, մինչև կըհասկացնէինք երկրորդական անձնաւորութեանց բնաւորութիւնը, դեր կատարող դերասաններին:

Երբ Մանդինեանցը վերջացրեց իւր թարգմանութիւնը, նա գրած էր Թիֆլիսի բարբառով, դարձեալ Գայիանէն չկար Թիֆլիսում, տ. Ս. Մելիք-Նազարեանցը և օր. Տէր Աբրահամեանցը (Սաթինիկ) այդ ժամանակ Պերճի ազդեցութեան տակն էին, որի հետ էր դարձել Թիֆլիս և անհնարին էր նոցա համոզել, որ մասնակցեն մեր խաղերին:

Մնում էին միայն դերասանուհիք, օր. օր. Արամեանցն ու Դաւթեանցը. օր. Արամեանցին վճռեցինք տալ Անդունէվ հասակաւոր կնոջ դերը, իսկ Լիդիայի՝ առաջին անձնաւորութեան դերը՝ մենք ստիպուած էինք տալ օր. Դաւթեանցին. որին, թողնենք որ բոլորովին անծանօթ էր թէ ռուսական և թէ եւրոպական կեանքին, անգամ Լիդիա անունը խորթ էր թւում:

Կրեչինսկու դերը ես էի պատրաստում: Մէկ տեսարանում հարկաւոր էր որ Լիդիան (օր. Դաւթեանցը) խոստովանէր Կրէչինսկուն, թէ սիրում է նորան:

Ամեն մէկ կրկնութեան ժամանակ, երբ օրիօրդը ծամծմելով և քաշքշելով խեղճ Լիդիայի դերը հասնում էր այն տեղին, որ պիտի արտասանէր սիրեմ բառը, նա յանկարծ ծածկում էր երեսը և լռում: Ամբողջ ամիս մենք պատրաստում էինք և հազիւ թէ

ներկայացման իսկ օրը կարողացանք համոզել դերասանուհուն, որ նա արտասանէր այդ բառը:

Դառնանք դէպի ներկայացումը և Մանդինեանցի խաղը:

Թատրոնի դահլիճը լիքն էր ամենաընտիր և խառն հասարակութիւնով, թիկնաթոռների կարգը համարեա ամբողջապէս բռնած ունէին փոխարքայի ադիւտանտները, որոնք մի քանի օրից յետոյ պիտի այդ պիեսի բնագիրը ներկայացնէին փոխարքայի պալատումը: Խաղն սկսուեցաւ. առաջին գործողութիւնը գնաց փոքր ինչ դանդաղ, որովհետև ինքը գործողութիւնը շատ երկար է և չունի հետաքրքրութեան արժանի կոմիզմ:

Սկսուեցաւ երկրորդ գործողութիւնը և Մանդինեանցի արտիստական խաղը զմայլեցրեց ամենքին: Այդ գործողութեան մէջ կայ մի տեսարան, որտեղ Կրէչինսկուն անշուշտ փող է հարկաւոր և նա ուղարկում է Ռասպլիւէվին որ նա «գլուխը գրաւ դնի», փող ճարի: Քիչ ժամանակից յետոյ խեղճ Ռասպլիւէվը այդ հանճարաւոր շարլատան Կրէչինսկու գործիքը՝ վերադառնում է դատարկաձեռն և կանգնում է դռան մէջ տեղը, վախենալով որ յայտնէ Կրէչինսկուն իւր անյաջողութիւնը:

Ես վերջացրել էի իմ մենախօսութիւնս, պիտի դառնայի դէպի միջի դուռը, որտեղից պիտի մտնէր Ռասպլիւէվը, հազիւ թէ վերջացրի վերջին խօսքս, հանդիսականների մէջ բարձրացաւ սաստիկ ծիծաղ և քսանաւոր դիտակներ մեզ ուղղուեցան դէպի բեմը:

Ես սկզբում շուարեցայ, բայց իսկոյն հասկացայ բանի էութիւնը և դարձայ դէպի թատրոնի խորքը, հէնց որ նայեցի դռան մէջ մեխուած Մանդինեանցին, որի երեսի վրայ նկարուած էր անվերջ տխմարութիւն և սաստիկ վախ, և որը շշկլուած պարապած էր իւր թելից գործած ձեռնոցներով, ծիծաղը խեղդեց ինձ, ես սկսեցի ծամել և կծել սաստիկ իմ շրթունքներս, որով և կարողացայ պահել ինձ:

— Հը՛, ասում է Կրէչինսկին:

Ռասպլիւէվը այլ ևս չի կարողանում պահել իւրեան և մէկ շատ յիմար ձևով բացագանչում է:

— Գ . . . . ր . . . . ր . . . . աւ, գրաւ են ուզում Միխայիլ Վասիլիչ:

Ծիծաղը սաստկացաւ սաստիկ ծափահարութեան հետ խառն:

ԺԷ.

Գ Ա Յ Ի Ա Ն Է Ն Տ Ղ Ա Յ Է

Գայանէի կատարած դերերը հետեւեալներն էին. Սաթէնիկ՝ «Վարդան Մամիկոնեանի» մէջ, Լէլի՝ «Սէր և Նախապաշարմունքի» մէջ, Կատօ՝ «Շկօլի վարժապետի» մէջ և Գունեայ «Ով որ քու բաբը չէ» կոմեդիայում, որի մէջ և իմացուեցաւ նորա տղայ լինելը:

Երեք ամբողջ տարի նա միշտ գալիս էր կրկնութիւններին առաջ Կարինեանցի տուն և յետոյ ինձ մօտ, միշտ հագնուած շատ համեստութեամբ և ոչ ոք մեզանից երբէք չէր կարող կասկածել, թէ այդ կնոջ հագուստի մէջ, սեղմուած կրինօլինում աղջիկը, մէկ չքաւոր երիտասարդ է, որ մնում էր երկու այրի կանանց մօտ և նրանց խորհրդատուութեամբ է մտել թատրոնի խումբը, փող վաստակելու նպատակով միայն:

Շատերն ասում էին թէ Յ. Կարինեանցը գիտէր և ամենայն զգուշութեամբ պահում էր այդ գաղտնիքը, չնայելով որ Գայիանէն երբեմն ամբողջ օրերով, անգամ գիշերներով, մնում էր նորա ընտանիքի մէջ. բայց ես դարձեալ կարծում եմ, որ հէնց ինքը հանգուցեալ Կարինեանցն ևս խաբուած էր:

Թէ ինչքան խորամանկութեամբ և խելօքութեամբ աղջիկ էր ձեւացնում նա իրան, բաւական է յիշել այս հետեւեալ չնչին անցքը:

Մէկ անգամ, ձմեռուայ սաստիկ ցեխ ժամանակներին, եկաւ ինձ մօտ երեկոյեան կրկնութեան: Պէտք է ասել, որ նա մնում էր Խարփուխի թաղում, իսկ ես վանքի թաղում, այսինքն մօտ վերստ ու կէս հեռաւորութեամբ: Ես նկատեցի, երբ նա նստեց, որ նորա կօշիկները մաշուած են և չունի կրկնակօշիկներ. ես առաջարկեցի միւս օրը երթալ այսինչ խանութը և վերցնել այնտեղից թէ կօշիկներ և թէ կրկնակօշիկներ: Միւս երեկոյ կրկնութիւնից առաջ, երբ մենք նստած կոլոլ սեղանի բոլորի շուրջ զբաղուած էինք խօսակցութիւններով, ես հարցրի թէ արդեօք լա՞ւ կօշիկներ եմ ասել: Նա յանկարծ օրիորդական ամօթխածութեամբ պատասխանեց ինձ:

—Ում առածն է որ լաւը չը լինի:

Շատ ժամանակից յետոյ, երբ մենք ծանօթ էինք արդէն նորա հետ, իբրև ուսանող երիտասարդի հետ, ես միշտ մտաբերում էի նորան այդ խորամանկութեամբ ասած խօսքերը և մենք ծիծաղում էինք երկուսով:

«Վարդան Մամիկոնեանի» երկրորդ անգամ ներկայացումից յետոյ սկսեցին խօսել թէ Գայիանէն տղայ է և մենք թէև լսել էինք այդ խօսակցութիւնը, բայց այնքան հաւատ չէինք ընծայում:

Վերջապէս «Ով որ քու բաբը չէ» պիեսը խաղալու գիշերը պ. Սուքիասեանցը կարծեմ ինձ յայտնեց, որ մենք սաստիկ խաբուած ենք և որ այդ մեր հրչակաւոր Գայիանէն մէկ ուսումնարանի երկրորդ դասատան աշակերտ է և որ նորա ազգն է * * և մենք կարող ենք վաղը այցելել նորան դասատան մէջ:

Այդ բանը, սաստիկ շփոթեց ինձ, նախ նորա համար, որ մենք խաբուած լինելով, խաբում էինք և հասարակութիւնը, տղային աղջիկ ներկայացնելով, և երկրորդ և գլխաւորը մեր խումբը և առհասարակ նորածին հայ-թատրոնի բեմը պէտք է կորցնէր այդպիսի ընդունակ և հանճարաւոր դերասանուհուն:

Խաղի միւս օրը ես և պ. Սուքիասեանցը գնացինք վերև ուսումնարանը և ես չէի կամենում հաւատալ իմ սեպհական տեսողութեանս, բայց վերջը ցաւօք սրտի համոզուեցայ, որ Գայիանէն տղայ է և, ինչպէս ասում էին ուսուցիչները, շատ բարոյական և աշխատասէր աշակերտ է:

Ընկերներիս հետ խորհուրդ անելուց յետոյ՝ ես վճռեցի նամակ ուղարկել Մեղուի խմբագրին, որով և յայտնեցի հայ հասարակութեան այդ հազուագիւտ իրողութիւնը:

ԺԲ.

Օրիորդ Գայիանէն իբրև մէկ ցնորք անհետացաւ այսուհետև հայ թատրոնական բեմից, մեր ոյժը թէև ընկաւ փոքր ինչ այդ կորուստով, բայց հայ թատրոնի գոյութիւնը դարձաւ անհրաժեշտ կարիք Թիֆլիզի մէջ:

Այդ ժամանակից սկսած մինչև Ֆասուլճեանցների գալը Պօլսից շատ բան, գուցէ և շատ հետաքրքիր անցքեր, ես չեմ յիշում, ուրեմն և կշարունակեմ նորանց Թիֆլիս գալու օրից:

Մեծ պասի օրերն էր, ինչպէս լաւ յիշում եմ, առաւօտեան տանից դուրս եկած ժամանակս պատահեց ինձ իմ ծանօթներիցս մէկը և յայտնեց, թէ Պօլսից դերասանուհի և դերասաններ են եկել, որոնք իջել են «Կովկաս» անուանուած հիւրանոցում:

Պէտք է ասած որ այդ ժամանակ ես մեծ համարմունք ունէի

առհասարակ պոլսական հայ ինտելէգէնցիայի վերայ և այդ պատճառով շատ ուրախացայ այդ լուրը լսելով:

Իսկոյն գտայ ընկերներիս՝ Սուքիասեանցին, Ամերիկեանցին և Մանդինեանցին և չորսով գնացինք այցելելու նորեկ դերասաններին:

Գնացինք հիւրանոցը, որ գտնվում էր, և կայ մինչև այժմ, այրուած Թատրոնի դիմացը: Հարցրինք նրանց իջած սենեակի համարը, մօտեցանք դռանը, բախեցինք դուռը, դուրս եկաւ մէկ նիհար և բարակ միջահասակ երիտասարդ:

Մենք հարցրինք Պօլսից եկած դերասաններին.

— Հրամեցէք, հրամեցէ՛ք, ասաց նիհար պարոնը և մենք մտանք սենեակը:

Առաջին և իսկ տպաւորութիւնը, պիտի խոստովանիմ, շատ ծանր թուաց ինձ: Սենեակի մէջ, բացի մեզ ընդունող նիհար երիտասարդից, կային մէկ շատ նիհար սև աչքունքով աղջիկ, սև, խիտ խառնուփնթոր եղած մազերով և մէկ հասակաւոր և երկայն սպիտակախառն մօրուքով մէկ ուրիշ մարդ, ծալապատիկ նստած սենեակի մէկ անկիւնում յատակի վերայ: Սենեակում թագաւորում էր սաստիկ անկարգութիւն:

Մեզ ընդունող պարոնը, որ ինքը պ. Ֆասուլճեանցն էր, իսկոյն մօտեցաւ սեղանին, ծոցից մէկ կտոր թուղթ հանեց և սկսեց կարդալ այնպէս, ինչպէս զինուորների կազարմաներում կարդում են ֆէլդֆէբէլները զինուորների քնելուց առաջ, որ իմանան, թէ բոլոր զինուորները ներկայ են թէ ոչ:

— Զմշկեան, կարդաց նա: Ես գլուխ տուի:

— Ամերիկեանց, Սուքիասեանց, Մանդինեանց, շարունակեց ինքնակոչ ֆէլդֆէբէլը, և ամէն մէկ ազգանունը արտասանելուց յետոյ, նա քննում էր մեզ ամէն մէկին, ինչպէս քննում են հիւրանոցներում կասկածաւոր կերպարանքները: Վերջապէս պարոնը հրաւիրեց մեզ նստել և սկսուեցաւ խօսակցութիւնը:

— Սա իմ կինս է, ասաց նա, և սա է պարոն Գ . . . ը:

— Ես, ողորմելի թափառականս, սկսեց վարդապետական ոճով յատակի վերայ ծալապատիկ նստած պարոնը, վերջապէս հասայ իմ նպատակիս և վերադարձայ իմ հայրենիքս:

— Պարոնը, կտրեց պ. Ֆասուլճեանցը նորա խօսքը, երևելի գրող է:

— Այնպիսի հիանալի բաներ կգրէ կոր, ընդմիջեց տիկին Ֆասուլճեանցը:

Բայց, մտածում էի ես այդ ժամանակ, նայելով Գ . . . ի, որի աղօտ մօրուքի մէջ ես հազար ու մէկ բաներ էի երեւակայում, և ասում էի, դիցուք թէ դա հանճարաւոր գրող է, բայց ինչո՞ւ է ծալապատիկ փռուել յատակի վերայ և ինչ նշանակութիւն ունի դա գերասանութեան վերաբերեալ գործի մէջ: Չընայելով որ յետոյ մենք մօտիկ ծանօթացանք այդ պարոնի հետ, այնու ամենայնիւ նորա էութիւնը և յարաբերութիւնը Ֆասուլիճեանցների հետ՝ մնաց ինձ համար հանելուկ մինչև այսօր:

Ֆասուլիճեանցների Թիֆլիս գալու նպատակն իմանալուց յետոյ, որ նոքա մտադիր են մէկ քանի ներկայացումն տալ, մենք առաջարկեցինք մեր պատրաստութիւնը, օգնել նորանց՝ և բերանացի պայման կապեցինք ընկերութեամբ տալ գարունքուայ միջոցին երեք ներկայացումն, որոնց եկամուտը պիտի երեք հաւասար բաժին անէինք, այնպէս որ երեք ներկայացման մուտքի երրորդ մասը պիտի պատկանէր Ֆասուլիճեանցներին՝ իսկ երկու երրորդ մասը մեր ընկերութեան:

Որոշեցինք տալ առաջին անգամ, եթէ չեմ սխալվում, «Թուղթ խաղացողի կեանքը»:

Այդ պիեսան մենք մի տարի առաջ կրկնել էինք Գալիանէի հետ, բայց չյաջողուեցաւ ներկայացնել զանազան արգելառիթ պատճառներով, և պէտք է ասել, որ այդ պիեսը թարգմանել էր պ. Մ. Պատկանեանցը սեպհական ինձ համար և ես պիտի խաղայի Ժօրժի դերը:

Երբ սկսեցինք որոշել դերերը, մենք առաջարկեցինք պ. Ֆասուլիճեանցին վերցնել սիրահարի դերը, բայց նա յանձն չառաւ և պահանջեց տալ նորան Ժօրժի դերը, իսկ ինձ առաջարկեց վերցնել Վարների դերը:

—Այդ դերը շատ յարմար կլինի ձեզ համար, դա հակառակորդի դեր է, ասաց նա:

Ես չվիճեցի, իսկ ընկերներս սկսեցին համոզել նորան, որ առաջին անգամի համար այդպիսի ծանր դեր չվերցնել, նաև որ այդ դերը արդէն ես պատրաստած ունէի. բայց երբ նկատեցինք, որ Ֆասուլիճեանցը վիրաւորվում է, մենք այլևս չվիճեցինք և սկսեցինք կրկնութիւնները:

Ես և ինձ հետ ամենքը հետաքրքրութեամբ սպասում էինք առաջին կրկնութեան, որ տեսնենք պ. Ֆասուլիճեանցի խաղի եղանակը կամ մետոդը, բայց դուրս եկաւ, որ սատանի փայտ և հին շկոլէ

աշակերտ է եղել. Նա ամէն մէկ խօսքը արտասանում էր մի առանձին շեշտադրութեամբ և խօսում էր երգելով, իսկ երբ հասնում էր էֆեկտի տեղին, յանկարծ այնպէս գոռում էր և իսկոյն կտրում խօսքը, որ մենք չէինք կարողանում լսել առանց ծիծաղի:

Փորձեցի մէկ կրկնութեան ժամանակ նկատել պ. Ֆասուլիճեանցին, որ այդ երգեցողական խաղի ձևը վաղուց արդէն աքսորուած է ամէն մէկ օրինաւոր թատրոնից և խորհուրդ տուի, որ նա թողնէ այդ ձևը:

— Ինչպէ՞ս, պատասխանեց նա, ես տեսած եմ երևելի դերասաններ և ես կրնամ պարծանքով ըսել, որ Էքշեանին հետևողն եմ:

Մենք շատ անգամ լսել էինք Էքշեանի երևելի խաղի մասին, բայց երբ պ. Ֆասուլիճեանցը խոստովանեց իւր նորա նման լինելը, ճշմարիտն ասեմ, այնուհետև ես փոխեցի իմ բարձր համարմունքս դէպի Էքշեանի հռչակաւոր խաղը:

Ինչ և իցէ կայացաւ առաջին ներկայացումն և նոցա հետ սկսուեցան սաստիկ ինտրիգներ: Նոյն իսկ սկզբում, երբ տպուեցան տոմսակները և նա, թէև գրեց իւր կնիքը ամէն մէկ տոմսակի վերայ, բայց հաշուի օրը սկսեց կասկածել, չնայելով որ բոլոր տոմսակների կարգադրութիւնը իւր ձեռքին էր, ինքն էր յանձնել տոմսապահին և նորանից հաշիւ ստացել:

Յետոյ կարծեմ խաղացինք «Լուկրեցիա Բորջիա» մէկ գործողութիւն և չգիտեմ ուրիշ ինչ, միայն կարծեմ առաջին անգամ խաղացինք «Երկուսս էլ քաղցածենք, երկուսս էլ փող չունինք» որ պ. Ֆասուլիճեանցը յայտնեց աֆիշի մէջ, թէ իւր շարադրութիւնն է և ինքը խաղաց քաղցածների մէկ դերը, իսկ միւսը պ. Մանդինեանցը:

Այդտեղ ևս ես յիշում եմ, որ երբ Ֆասուլիճեանցը բեմ պիտի դուրս գար, ես նկատեցի որ նորա հագուստի ձևը որ նա կարծում էր, թէ շատ էֆեկտավ է, սաստիկ անվայելուչ է, և խորհուրդ տուի ուղղել, բայց նա չլսեց ինձ և բեմ դուրս գնաց յարմարացնելով իւր հագուստին և այնպիսի մէկ նմանապէս անվայելուչ և կլոունական խաղ, որ ես ամաչեցի, թողի կուլիսները և գնացի վերև շոր հագնելու սենեակը:

Յետոյ այդ պիեսան խամելէոնի պէս գունափոխուելով իմ և ուրիշների գրչի տակ, մնաց մշտապէս մեր րեպերտուարում,

հնայելով որ ոչինչ իմաստ և կրթողական նշանակութիւն չունի իւր մէջ:

Այդ ներկայացումից յետոյ, համեմատ մեր բերանացի կապած պայմանին, տուինք մէկ ներկայացում ևս Ամերիկեանցի անունով: Հարկաւորէր նոր խաղ, և այդ իսկ ժամանակը պ. Պալասանեանցը թարգմանել էր երեք գործողութիւն Վիկտոր Հիւգոի «Էրնանիից», դարձեալ սեպհական ինձ համար, որի մէջ ես պիտի խաղայի Էրնանիի դերը, իսկ Դօնա-Սօլի Էրնանիի սիրուհու դերը պիտի խաղար, համաձայն մեր պայմանի, տ. Պայծառ Ֆասուլիճեանցը, իսկ իրան Ֆասուլիճեանցին խնդրեցինք վերցնել Դօն-Գոմէցի կամ ինչպէս օպէրայում ասուածէ, կոմս Սիլվայի դերը:

Պ. Ֆասուլիճեանցը հրաժարուեցաւ այդ դերից, ասելով որ նա կկամենար չմասնակցել այդ խաղում: Չխաղալու իրական պատճառը, ինչպէս յետոյ իմացայ, ոչ թէ այդ էր, այլ այն, որ նա կամենումէ եղել վերցնել Էրնանիի դերը: Թէև այդ հանգամանքում ևս ես համաձայնեցի հրաժարուիլ Էրնանիի դերից, բայց պ. Պալասանեանցը և ընկերներս կամեցան որ ես խաղամ Էրնանին և հազիւ հազ համոզէլէին պ. Ֆասուլիճեանցին, հրաժարուիլ իւր անտեղի պահանջողութիւնից, իսկ նա հրաժարուեց բոլորովին մասնակցելու ներկայացման և քիչ էր մնում որ նոյն ևս արգելէր խաղալ:

Մենք մնացինք առանց Դօն-Գոմէցի: Ես առաջարկեցի պ. Մանդինեանցին յանձն առնել այդ դերը, հնայելով որ բոլորովին նորան յարմար դեր չէր. սկզբում նա փոքր ինչ տատանում էր, ամենաիրաւացի պատճառով, որովհետև ժողովուրդը սովորել էր տեսնել նորան միշտ կօմիկական դերերում, այն ինչ այդ դերը, ամենասաստիկ դրամատիկական դեր էր, բայց վերջ ի վերջոյ համաձայնեցաւ, մէկ քանի օրուայ մէջ պատրաստեցինք և տուինք պիեսը: Երբէք ես չեմ մոռանալ այն տեղը, որտեղ առաջին անգամ պիեսի մէջ պիտի դուրս գար պ. Մանդինեանցը:

Ես բեմի վերայ էի այդ ժամանակ և երբ մօտեցաւ Մանդինեանցի դուրս գալու ժամանակը, սիրտս սկսեց սաստիկ բաբախել, որովհետև մտածեցի ես, Ռասպլիւեվի դերը կատարելուց յետոյ հասարակութիւնը կկարծէ թէ այս տեղ ևս պ. Մանդինեանցը պիտի կօմիկ դեր կատարէ և դուրս գալու պէս, եթէ նա մէկ որ և իցէ անզգոյշ շարժուածք անէ, կսկսեն ծիծաղել, կորչէին ամբողջ առաջին գործողութեան սաստիկ դրամատիկական տեսարանները, որոնք

հետեւում էին Դօն-Գօմէզի դուրս գալուց յետոյ: Մէկ էլ որ նորա բեմ դուրս գալուց առաջ, պ. Ամերիկեանցը Կարլոս V-ի դերում, փոխանակ սարսափ տարածելու հանդիսականների վերայ, սաստիկ ծիծաղ պատճառեց և քանի ուզում էր զսպել հանդիսականների ծիծաղը դրամատիկական շարժուածքներով այնքան առաւել սաստկանում էր ծիծաղը:

Միտս է՝ թէ ինչպէս այդ րոպէին ես հաղորդեցի բեմի վերայ իմ վախս Արամեանցին, որ խաղում էր աղախնու դերը, և սպասում էի սաստիկ ֆիասկօի:

Յանկարծ դռները բացուեցան և դուրս եկաւ ծեր և խիստ, մինչև արիւնարբութիւն գոռող և հպարտ Դօն-Գօմէզը, այդ Կարլոսի և եզուիտների անխիղճ գործիքը: Մէկ վայրկենում տիրեց դահլիճի մէջ սաստիկ լռութիւն և ամենքն սկսեցին լսել պ. Մանդինեանցին մեծ ուշադրութեամբ:

— Անպատւութիւն իմ սեպհական տանս մէջ, բացագանչեց չարութիւնից դողալով Դօն-Գօմէզ. և հանելով մանեակը, ձգեց գետին, որ ընկնելով յուշարարի փոսը, կարող էր ծիծաղ պատճառել. բայց ունեցաւ հակառակ ազդեցութիւն:

«Վեր առէք ոտնակոխ արէք իմ պատուանշանս, այդ, ա՛յդ է մնում միայն անել ևս Դօն-Գօմէզին» ասաց նա և ամեն նորա մէկ արտասանած բառից թոյն և արիւն էր թափում նորա շուրջը եղողների համար:

Մէկ խօսքով պ. Մանդինեանցը գերազանցեց իւրեան այդ դերում, և ամբողջ ներկայացումը յաջողակ գնաց, բացի պ. Ամերիկեանցի դերից, որի կատարելը աւելի դժուարացնում էին ահագին և երկայն մենախօսութիւնները նաև երրորդ թէ չորրորդ գործողութեան մէջ Կարլոս IV-ի գերեզմանի առաջ:

Այդ ներկայացման գիշերն էր, կարծեմ, որ մէկ շատ ծաղրալի անցք պատահեց թիկնաթոռներում, պ. Ամերիկեանցի մէկ երկար մենախօսութեան ժամանակ:

Առաջին կարգերից մէկում նստած էր մէկ հարուստ և քէփ սիրող մարդ, որ իւր կեանքում դուցէ առաջին անգամն էր մտել թատրոն: Պ. Ամերիկեանցի մենախօսութեան եղանակը այդ պարոնի վերայ, որի անունն էր Կակաբօ, այնպիսի մէկ նշանաւոր ազդեցութիւն էր ունեցել, որ նա աչքերը խփել էր և Մօրֆէի գիրկն էր

ընկել: Վերևից գալլէրից, յանկարծ, չար երիտասարդներից մէկը ձայն տուեց — կակա՛բօ:

Կակաբօն զարթնեց, վերև նայեց և դարձեալ ընկաւ Մօրֆէի գիրկը:

—Կակա՛բօ, կրկնեցին դարձեալ բարձրից: Կակաբօն դարձեալ վերև նայեց և դարձեալ քնեց:

—Կակա՛բօ, կակա՛բօ, սկսեցին շատ ձայներ: Այդ ժամանակ պ. Ամերիկեանցը, տեսնելով որ խանգարումեն իւր մենախօսութիւնը վերջացնել, առանց այլ և այլութեան դարձաւ դէպի քնասէր պարոնը.

—Տօ՛, կակաբօ, չե՞ս իմանում քեզ են կանչում, դուս գնա՛ էլի վա՛յ:

Սաստիկ ծիծաղ բարձրացաւ դահլիճի մէջ և այն օրից ես էլ չը տեսայ Կակաբօին թատրոնում:

ԺԹ.

«Էրնանիից» յետոյ մենք կարծեմ տուինք «Կոյրին զաւակ». անկապ ու անկանոն դրամա, Ֆասուլիճեանցների բերած բէպերտուարից և չնայելով այդ պիեսայի սաստիկ, պակասութիւններին, ժողովուրդը այնպէս սիրեց այդ պիեսան, որ միշտ երբ կրկնում էինք յետոյ այդ խաղը, համարեա տոմսակ չէր մնում կասսայում:

Այստեղ ևս պ. Ֆասուլիճեանցը գործ դրեց իւր խարդախ վարմունքը: «Կոյրին զաւակի» մէջ ինձ համար չկար դեր, որովհետև իմ դերս վերցրեց նա ինքը, իսկ ուրիշ երկրորդական դերերում ես անյարմար գտայ իմ բեմ դուրս գալը. բայց ստիպուած էի դուրս գալ այնպիսի մէկ Ֆայէրնօ անուանուած դերի մէջ, որ քանիցս անգամ ուսումնասիրել եմ որ մէկ որ և իցէ բնաւորութեան գաղափար կազմեմ գլխիս մէջ այդ դերից և չեմ կարողացել հանել նպատակիս, որովհետև ոչինչ բնաւորութիւն չկայ նորա մէջ: Այդ մէկ անհասկանալի անձնաւորութիւն է, հեղինակին հարկաւոր է եղել մէկ մարդասպան և նա վերցրել է մէկ անձնաւորութիւն, կնքել է նորան Ֆալէրնօ անունով և դուրս է բերել այդ պարոնին առանց մէկ որևիցէ պատճառի մարդիկ սպանելու և երեխաներ յափշտակելու համար: Երբ մէկ քանի անգամ ես յայտնեցի իմ կարծիքս, որ այդ դերում դուրս գալով ես ստորացնում եմ իմ դերասանական արժանաւորութիւնս, պ. Ֆասուլիճեանցը հեգնօրէն

ժպտալով ինձ բացատրում էր, որ ես հակառակորդի դերի նշանակութիւնը չեմ հասկանում, իսկ նորա կինը, ծաղրելով ուրիշների առաջ, յայտնում էր, որ ես չնայելով իմ «տգեղութեանս» և «ծերութեանս» կամենում եմ միշտ ջահէլների դեր խաղալ, իսկ նորա գեղեցկատես ամուսնուն տալ երկրորդական դերեր:

Այդպէս այդ ամառը մինչև յունիսի վերջերը, կարծեմ, մենք տուինք մօտ տասը թէ տասներկու ներկայացումներ և դադարեցինք:

Մինչև Ֆասուլեճեանցների գալը ես այնքան չէի հալածուել խաղընկերներից, ինչքան դորանց գալուց յետոյ, այնպէս որ ես սկսեցի բոլորովին զզուել թատրոնական գործունէութիւնից Թիֆլիսում և կամենում էի փոքր ինչ ճանապարհորդութիւն անել Հայաստանի կողմերը և յետոյ գնալ Պօլիս՝ նուիրել ինձ գրականութեան:

Ես հաղորդեցի իմ այդ միտքը պ. պ. Ամերիկեանցին և Մանգինեանցին. նոքա կամեցան միանալ ինձ հետ և միասին գնալ արտասահման (երևի սադրդական քանդր ցորքը): Երկար ժամանակ ես չէի համաձայնում ընկերութեամբ ճանապարհորդելու, նաև սաստիկ հակառակ էի պ. Մանգինեանցի Թիֆլիսից հեռանալուն, որովհետև վախենում էի, որ մեզ այդ ճանապարհորդութեան մէջ կարող է պատահել զանազան դիպուածներ, որոնց գուցէ նա չի տանիլ, բայց վերջապէս միացանք և ճանապարհ ընկանք դէպի Շուշի կամ Ղարաբաղ, որտեղից պիտի գնայինք Երևան, այնտեղից Ալէքսանդրապօլ և յետոյ Ղարսով ու Արզրումով Պօլիս [1]:

Բայց ինչպէս ասում է մի առած «խորհուրդ մարդկան կամք Աստուծոյ», այնպէս և մեր այդ մտադրութեան հետևանքն այն եղաւ, որ հազար ու մի անբաւականութիւնների և դիպուածների պատահելուց յետոյ, մենք վերադարձանք Թիֆլիս ամեն մէկս ջոկ ջոկ և ես պատիժ կրեցի նախախնամութիւնից իմ թեթևամիտ վարմունքիս համար, զրկուելով խեղճ հօրիցս, որի վերջին շունչին միայն վրայ հասայ և ամբողջ մի ժամ, ընկած նորա կիսամեռ ոտքերի տակ, հառաչելով լաց էի լինում, որ կարողանամ իմ արտասունքովս սրբել արած սխալանքս, որովհետև եթէ ես չհեռանայի այդ ամառը Թիֆլիսից, գուցէ խեղճ հայրս չէր մեռնիլ, որը մարգարէական հոգով գուշակեց, որ ես նորան այլ ևս կենդանի չեմ տեսնիլ. . . . . .

[1]) Այդ ճանապարհորդութեան յիշողութիւններս ես կաշխատեմ «Փորձի» հետագայ համարներից մէկի մէջ հաղորդել մեր ընթերցողներին։

Ի.

ԽԱԹԱ-ԲԱԼԱ

Պ. Սունդուկեանցը, որ միշտ հեռու էր պահում իրան մեզանից, սկսեց մօտենալ մեզ և կարճ միջոցում իմ և նորա մէջ կայացաւ մօտիկ ծանօթութիւն, անգամ բարեկամական յարաբերութիւն:

Մէկ առաւօտ, չգիտեմ ինչ բանի առիթով, ես մտայ նորա մօտ: Նա ինձ ցոյց տուաւ մէկ պատկեր, որ կախուած էր նորա գրասեղանի գլխից: Պատկերը ներկայացնում էր մէկ տան փասադ, որի պատուհանից երեւում էր մէկ փոքր սիրուն աղջկայ գլուխ՝ ժպիտը շրթունքին: Այդ պատուհանի տակ նկարած էր մէկ տախտա, որի վերայ կանգնած էր մէկ երիտասարդ և առաջարկում էր սիրուն աղջկան ընդունել իր ձեռքի վարդափունջը:

Պ. Սունդուկեանցը ինձ յայտնեց այդ ժամանակ թէ այդ պատկերը նորան միտք է տուել մէկ օրինաւոր և ամբողջ պիէս գրել: Եւ նա սկսեց բացատրել պիէսի նիւթը:

Ես նկատեցի այդ խօսակցութեան ժամանակ, որ ճշմարիտ նորա գլխի մէջ եփվում է մէկ հարուստ նիւթ, բայց որ նա չի վստահանում իրագործել իր միտքը:

—Դուք ազատ էք այսօր, հարցրի ես նորան: Նա ինձ պատասխանեց, որ կարող է այդ օրը դուրս չգնալ տանից:

—Ուրեմն, ասացի ես, պարապեցէք այսօր ինձ հետ և տեսնենք ինչ դուրս կգայ:

Նա փոքր ինչ տատանելուց յետոյ համաձայնեցաւ: Մենք մտանք, ինչպէս լաւ յիշում եմ, առաւօտեան ինը ժամին նորա դահլիճը, փակեցինք դռները, կարգադրեցինք, որ ոչ ոք մեզ չանհանգստացնէ և սկսեցինք գործը:

Ես առայ թուղթ ու գրիչը, նստեցի սեղանի մօտ և պ. Սունդուկեանցը սկսեց անց ու դարձ անելով թելադրել ինձ:

Երկու թէ երեք օր, լաւ չեմ յիշում, պ. Սունդուկեանցի նիւթը իրագործուեցաւ և մենք ստացանք մէկ հաստ տետրակ երկու գործողութիւնով և չորս պատկերով, որին կնքեցինք վերջը ԽԱԹԱ-ԲԱԼԱ անունով:

Միևնոյն ժամանակ Մ. Տ. Գրիգորեանցը գրել էր «Էս էլ քի Մօ-

ցէքլութիւն» անունով կատակ՝ մէկ արարուածով, և ապրիլի 7-ին 1866 թուի կայացաւ առաջին ներկայացումն այդ երկու պիեսների: Մէկ շաբաթ առաջ ամբողջ Թիֆլիսում այդ ներկայացումն էր դառել խօսակցութեան նիւթ, ամէն կողմից, ծանօթ թէ անծանօթ բնակիչներից, ստանում էի նամակներ, որը օթեակ էր խնդրում, որը թիկնաթոռ, մէկ խօսքով ներկայացման օրը էլ ոչ մէկ օթեակ չկար կասսայում և մեր տոմսապահ Գևորգովսկին, շատ ափսոսում էր, որ մենք չբարձրացրինք տեղերի գները:

Այս անգամ էլ մէկ բոլորովին առանձին ընտիր հասարակութիւն կար թատրոնում թէ կին թէ մարդ, որոնք այցելում էին օպերան և միշտ զզուանքով էին արտասանում հայ-թատրոնի անունը:

Պէտք է խոստովանած, որ պ. Սունդուկեանցը մեծ ջանք ու աշխատանք կրեց այդ ներկայացման ժամանակ: Ամբողջ ժամերով, երբեմն նաև ամբողջ օր, նա պարապում էր դերասանների հետ, որ լաւ հասկացնէ նոցա դերերի բնաւորութիւնը, մանաւանդ Աբրիկեանցի հետ, որին համարեա անգիր անել տուեց Գարասիմ Նախուլէժի դերը, այնպէս ինչպէս ինքն էր ուզում, այսինքն որոշ առոգանութիւնով և պատշաճ շեշտաւորութիւնով:

Այդ պիեսում ամենանշանաւոր դերը, որի համար գրուած էին համարեա միւս դերերը, Գարասիմ Նախուլէժի դերն էր, և յետոյ Խայու դերը, որ աննմանելի կերպով կատարում էր պ. Սուքիասեանցը, իսկ ես երիտասարդ Մասխեանցի դերն էի կատարում, որ շատ աննշան էր, և որը այդ ներկայացումից յետոյ դարձաւ հեղինակի համար քար գայթակղութեան: Թէև նա փոփոխեց վերջերում խեղճ Մասխեանցին, այսու ամենայնիւ նա մնաց միշտ անորոշ և աննշան ինչ՝ հակառակ հեղինակի ցանկութեանը, որ կամենում էր նորան հակայ Գարասիմ Նախուլէժի հետ միասին մէկ լուծ քաշել տալ:

Ես միշտ հակառակ էի այդ մտքին և միշտ պնդում էի, թէ այն շրջանում, որտեղ հզօր Գարասիմ Նախուլէժը ինչ ուզում անում է, միայն Մասխեանցի պէս աննշան և թոյլ բնաւորութեան տէր երիտասարդները կարող են շրջել:

Ինչ և իցէ «Խաթաբալայի» ներկայացումն այնպիսի մէկ յաջողութիւն ունեցաւ որ ոչ մէկ պիես, թէ դորանից առաջ և թէ դորանից յետոյ, երբէք չի ունեցել:,

Ներկայացումից յետոյ պ. Սունդուկեանցը հրաւիրեց իր մօտ ընթրելու բոլոր խումբը:

Այդ ընթրիքին, ինչպէս լաւ յիշում եմ հիմա, ներկայ էին հանգուցեալ Տէր Գրիգորեանցը, բժիշկ . . . . և ուրիշ մի քանի անձինք, որոնք պ. Սունդուկեանցի և մեզ հետ մօտիկ յարաբերութիւն ունէին:

Ընթրիքը հիանալի էր և գինին ամենալաւը: Սկսեցին կենացներ, ճառեր, երգեր, և այդ գիշերից կնքեցին պ. Ամերիկեանցին Գարասիմ Նակուլէչ անունով:

Ի վերջոյ, եթէ չեմ սխալւում, նորան կեցցէ գոչելով, սկսեցին ձեռների վերայ վեր ու վեր թռցնել:

Այդպէս ուրախ անցաւ այդ ներկայացման գիշերը և մենք վճռեցինք կրկնել «Խաթաբալան»:

Միւս օրը դարձեալ թոյլտուութիւն ստանալուց յետոյ, կարգադրեցինք նորից տպել աֆիշներ և տարածել, և նշանակեցինք կրկնութիւն թատրոնում: Երկու օրից յետոյ աֆիշները դուրս եկան, տոմսակները համարեա դարձեալ առաջուայ անգամի նման ծախուած էին: Ես մտայ Եւրոպա անուանուած սրճատունը, որ մի բաժակ սուրճ խմելուց յետոյ, գնամ կրկնութեան: Յանկարծ մտաւ պ. Ամերիկեանցը և սովորականից դուրս շատ սառը վարուեցաւ ինձ հետ: Ես սկսեցի կատակներ անել, կարծելով որ գուցէ նա նեղացած է որ և է պատճառով, բայց նա սաստիկ սառնութեամբ՝ յայտնեց ինձ, որ չի կարող մասնակցել այս անգամ «Խաթաբալայի» մէջ:

—Ի՞նչպէս, հարցրի ես, ականջներիս չհաւատալով: Չէ՞ որ մենք միասին վճռեցինք «Խաթաբալան» կրկնել:

—Վճռեցինք, բայց ես չեմ կարող խաղալ:

—Պատճա՞ռը, հարցրի ես:

—Պատճառը, որ չեմ կարող, իմ հանգամանքներն ինձ չեն ներում:

Ես մնացի սառած և շուարուեցայ բոլորովին, չիմանալով թէ ինչ անեմ: Նորից յայտարարութիւններ տալ ներկայացումը յետ ձգելու համար, դա շատ անվայելուչ էր, և մեծ վնաս կարելի էր տալ գործին: Թէև իմ ամենամեծ պակասութիւնս ամբողջ իմ կեանքիս մէջ եղել է իմ տաք բնաւորութիւնս, որի պատճառով ես միշտ տեղիք եմ տուել իմ թշնամիներին ամենաճշմարիտ հանգամանքում անգամ մեղադրել ինձ, բայց այս անգամ ես կարող եմ համարձակ խոստովանել, որ շատ անվրդով մնացի: Պ. Ամերիկեանցը

թողեց ինձ և հեռացաւ: Իսկոյն ես գտայ պ. պ. Սուքիասեանցին, կարինեանցին և յայտնեցի այդ անցքը: Մենք վճռեցինք որ անհնարին է յետ ձգել «Խաթաբալայի» ներկայացումն և երեքով դիմեցինք Սունդուկեանցի միջնորդութեա՛նը:

Միւս օրը, ներկայացումից մէկ օր առաջ, հաւաքուեցանք պ. Սունդուկեանցի մօտ և բանը պարզուեցաւ:

Ընկերութիւնը պայման կապեց միմեանց հետ, որով որոշուեցաւ այդ ներկայացումից յետոյ, որից ստացած օգուտը պիտի բաժանուէր ամբողջ ընկերութեան մէջ, տալ մի մի ներկայացումն յօգուտ պ. Ամիրխանեանցի, տ. Ս. Մէլիք-Նազարեանցի և մէկ ներկայացումն յօգուտ իմ և պ. Սուքիասեանցի: Այդպէս տուեցինք, ինչքան յիշում եմ, «Խաթաբալայի» երկրորդ ներկայացումն և նորանից յետոյ պ. Ամիրխանեանցը ընտրեց «Ժլատ» անունով պիեսը, հեղ. Տէր Գրիգորեանցի և չեմ յիշում ուրիշ ինչ վօդեվիլ. և այդ ներկայացումն տուեց նորան կարծեմ 800 ռուբլի, և առաջին անգամ հասարակութիւնից ստացաւ դա մէկ արծաթեայ պնակով զանազան արծաթեայ իրեղէններ, մօտ չորս հարիւր ռուբլու արժողութեամբ:

ԻԱ.

ԴՕՆ ՍԷԶԱՐ ԴԸ ԲԱԶԱՆ

Պ. Բաբանեանցը, խրախուսուած «Սէր և Նախապաշարմունքի» յաջողութիւնով, թարգմանեց ֆրանսերէնից Աղքատացած Ազնուական կամ Դօն Սէզար դը Բազան անունով կոմեդիան: Այդ պիեսը բոլորովին անսպասելի նորութիւն էր մեր նորածին բեմի համար: Որովհետև դորա թարգմանութիւնը պատրաստ էր մեծ պասից առաջ, մենք սկսեցինք դորա կրկնութիւնը մեծ պասուայ միջոցին և կրկնում էինք ամեն օր համարեա: Դերերը բաժանելու ժամանակ ես շատ դժուարանում էի Լազարիլլօի մանկլաւիկի դերի մասին, որի համար անպատճառ հարկաւոր էր փորձուած դերասանուհի, իսկ փորձուած դերասանուհիք միայն երկու հատ կային մեր խմբի մէջ, այն է՝ Տ. Ս. Մէլիք-Նազարեանցը. և Տ. Բ. Արամեանցը օր. Տէր-Աբրահամեանցը (յետոյ Սաթինին) համարւում էր շատ անփորձ, այնպէս

որ շատերը մեր ընկերներից խորհուրդ էին տալիս ինձ յանձնել այդ դերը մէկ որ և իցէ փոքր ի շատէ զարգացած փոքրիկ տղայի: Բայց ես, համարեա հակառակ իմ կարծիքիս, այդ դերը տուի օր. Տէր-Աբրահամեանցին (Սաթենիկին) և սկսեցի կրկնութիւնից դուրս պարապել դորա հետ առանձին և մէկ քանի կրկնութիւններից յետոյ թէ ես և թէ պ. Ա. Բաբանեանցը շատ բաւական մնացինք օրիորդի խաղովը:

Մինչև Դօն Սէզարի ներկայացումը, ոչ մէկ պիեսով մենք այնքան չէինք պարապել ինչքան դորանով: Թէ Բաբանեանցը թէ ես և թէ բոլոր ընկերներս աշխատում էինք, որ այդ պիեսը լաւ պատրաստուած դուրս բերէինք, որովհետև այդպիսի թարգմանական պիեսներ խաղալով, մենք կամենում էինք աքսորել բեմից անիմաստ և դժուարամարս ազգային ողբերգութիւնները, որոնցից հասարակութիւնը բացի «աւա՜ղ և ո՜հ» բացագանչութիւններից, ուրիշ ոչինչ տպաւորութիւն չէր դուրս տանում հայ-Թատրոնից:

Ինչպէս վերևն ասացի, իշխան Թումանեանցի արտասահման գնալուց յետոյ, ես, կարելի է ասել, դարձայ լիակատար տէր Թատրոնի, կապալառուի նման մէկ բան, այնպէս որ ես իրաւունք ունէի գործ դնել իմ ներկայացումներիս համար բոլոր Թատրոնի մէջ ունեցած թէ իրեղէնները և թէ միջոցները:

Կային այդ ժամանակ Թիֆլիսում մնացած օպերայի բալէտի խմբից մարդ ու կին Բալլինները և մէկ քանի ուրիշ պար եկող ռուս և իտալիացի օրիորդներ:

Դօն-Սէզարի ներկայացման համար ես հրաւիրեցի Բալլինին և նորա կնոջը, որ նոքա պար գան երրորդ գործողութեան մէջ, ինչպէս պատուիրած է պիեսում և վարձ խոստացայ երկուսին 30 ռ.: Թատրոնի հանդերձատնից հանել տուի ամենագեղեցիկ հագուստ պատշաճ այդ պիեսին, որի համար յայտնի բան է պիտի դարձնել վճարել առանձին գումար. դեկորացիաները որոշեցի ամենագեղեցիկներ յարմար գործողութեանց դիրքերին և միև նոյն ապրիլ ամսին կայացաւ առաջին ներկայացումն Դօն-Սէզար դը Բազանի:

Մինչև ճաշ ներկայացման օրը կասսումը հազիւ թէ կար 100 ռ., այնպէս որ յոյսս երեկոյեան վերայ էր և կարծում էի, որ ոչ մի տոմսակ չէր մնալ առանց ծախուելու: Մինչև ներկայացումն արդէն 200 ռուբլի ծախս էր արած և մնում էր դարձեալ 30 ռուբլի Բալլինների վարձը և 35 ռուբլի ուրիշ ծախսեր վճարելու:

Մինչև ճաշ եղանակը գեղեցիկ էր, այնպէս որ յուսալի էր որ երեկոն ևս լաւ կլինի. բայց դժբախտաբար ժամը հինգից երեկոյեան երկինքը թխպեց և սկսեց փոքր առ փոքր անձրևել: Վեց ժամին հաւաքուեցանք թատրոն հագնուելու: Յոգնած ամբողջ օրուայ աշխատանքից, հազար ու մէկ անբաւականութիւններ ունենալուց յետոյ թէ դերասանների և թէ թատրոնական անձինքների հետ ես մտայ թատրոնի հանդերձարանը և սկսեցի հագնուիլ: Այդ ժամանակ մտեցաւ ինձ թատրոնի դեկօրացիաները կարգադրող իմ ծանօթ հրէայ Դաւիթը և հարցրեց ինձ:

— Ի՞նչքան կլինի այս երեկոյեան մուտքը, պ. Չմշկեան:

— Չգիտեմ, ասացի ես:

— Կկամենաք որ ես գնամ և իմանամ կասսումը:

— Խնդրեմ, ասացի ես նորան:

Մէկ քանի րոպէից յետոյ վերադարձաւ Դաւիթը և գլուխը քաշ գցած յայտնեց ինձ, որ ես այդ երեկոյ կվնասուիմ սաստիկ, եթէ ներկայացումն յետ չձգեմ:

— Երբէք, ասացի ես. թող վնասուիմ. յետ չեմ ձգիլ:

Մէկ քանի րոպէից յետոյ Դաւիթը դարձեալ եկաւ, կասսայի գրութիւնն իմանալուց յետոյ, և սկսեց ինձ աղաչել որ յետ ձգեմ, քանի որ թատրոնը չի լուսաւորուած: Ես չհամաձայնեցայ:

Այդ առաջին դիպուածն էր, որ թատրոնի եկամուտը չպիտի ծածկէր ծախսը: Թէև այդ ժամանակ ես ունէի առաջին տուած ներկայացումից մօտ 70 ռուբլի, անտեսութիւն և որի վերայ գրած ունէի յոյս, որ նորանով կծածկեմ ծախսը, բայց կարծում եմ որ եթէ այդ յոյսն էլ չլինէր, ես էլի չէի յետ ձգիլ այդ ներկայացումն, ինչպէս և պատահել է շատ անգամ իմ հետագայ տուած ներկայացումների ժամանակ:

Ինչպէս վերևն ասացի, ես պարտական էի վճարել ամեն մէկ դերասանին, ընկերութիւնից դուրս, պայման արած վարձը. Տ. Ս. Մելիք-Նազարեանցին միայն պիտի վճարէի 30 ռ. օր. Տէր Աբրահամեանցին կարծեմ 10 ռ. ամենքին մօտաւորապէս 70 ռ:

Դաւիթը չհանգստացաւ իմ բացասութիւնով. նա նորից գնաց դերասանուհիների մօտ և կամենում էր միջնորդել նորանց, որ նոքա համոզեն ինձ չմնալ սաստիկ ծախսի տակ: Բարի հրեայ, ազնիւ մարդ, ես քեզ շատ բարձր եմ դասում իմ համազգակից

կոպիտ լուսաւորուածներից, որոնց համար խղճալ բանն անգամ նա հասկանալի է:

Տ. Ս. Մէլիք Նազարեանցը, որի վարձատրութիւնը ամենքից շատ էր դժուարացնում ինձ և որի նախատինքից ես առաւել շատ էի քաշվում քան թէ ինձ շրջապատող ինտրիգաներից, յանկարծ մարդ ուղարկեց և ներքև հրաւիրեց ինձ:

—Գէորգ, ասաց նա ինձ, ես հասկանում եմ քո դրութիւնը, դու խոհեմութիւն կանես, եթէ յետ ձգես ներկայացումը, բայց ես խնդրում եմ յետ չձգես, և թող մենք պատժուելով, պատժենք հայ հասարակութիւնը, որ չի համակրում մեզ: Ես հրաժարվում եմ իմ վարձից:

Հազիւ նա վերջացրեց իւր խօսքերը, ինձ շրջապատեցին միւս ընկերներս և ժամանակաւոր մասնակցողները և սկսեցին խրախուսել ու մխիթարել ինձ:

Աչքերս լցուեցան արտասունքով և ես սաստիկ ձայնով ճչացի.

—Зажигать лампы! (վառեցէք լապտերները): Խեղճ Դուլիթս թէև հայերէն ոչինչ չէր հասկանում, բայց զգաց որ ուրիշներն ևս խղճում են իմ դրութիւնը և նա ևս սկսեց դողալով, կրկնել իմ տուած հրամանը և ըստ թատրոնական ոճի, գնաց «Դօն Սէզարի» ներկայացումն հիանալի ձևով:

Ես մոռացայ յիշել և այն, որ բեմ ներքև գալուս պէս պ. Ա. Բաքանեանցը համարեա միշտ անբաժան էր ինձ հետ կուլիսներում և խրախուսելով թէ ինձ և թէ բոլոր ընկերներիս, մեկ առանձին ոյժ տուեց ներկայացման ընթացքին:

Միւս օրը ես գնացի հաշիւ տեսնելու մեր տոմսապահ Պետրովսկու հետ, որից տեղեկացայ, որ բացի իմ 70 ռ. մնացած նորա մօտ Ենօխովիոս առաջին տուած ներկայացումից, ես դարձեալ պիտի վճարեմ 35 ռ. թատրոնական զգեստների վարձը վճարելու համար և 30 ռ. պ. և տ. Բաղդիններին: Ես պարտաւորութիւն եմ համարում յիշել այստեղ, որ պ. Բաքանեանցը, բացի իւր բարոյական կարեկցութիւնից, օգնեց ինձ, հակառակ իմ կամքիս, նաև նիւթական միջոցով այդ պարտքերը վճարելու համար:

Միայն վարձատրութիւն ինձ և ընկերներիս համար մնաց այդ ներկայացման մասին մի քաջալերող և խրախուսիչ յօդուած, գրուած Մեղու շաբաթաթերթի մէջ այդ առիթով, որը մի և նոյն ժամանակ ցաւակցելով մեր կրած վնասին, որի պատճառը բերում էր նա

այդ ներկայացման երեկոյեան արհաւիրքը, առաջարկեց կրկնել մի և նոյն պիէսը։

Եւ ճշմարիտ որ երկրորդ ներկայացմանը համարեա լցուեցաւ թատրոնի դահլիճը, այնպէս որ ես, բացի դերասաններին վարձատրելուց, կարողացայ վճարել և ուրիշ առաջին ներկայացումից կրած վնասներս։

«Դօն-Սէզարից» յետոյ մենք պիտի տայինք «Վենետիկի վաճառական» իմ թարգմանութիւնս, որ ես նուիրել էի իշխանուհի Ա. Յ. Թումանեանցին, որ ոչ մէկ հայոց ներկայացում չէր թողնում առանց այցելութեան և կարելի է ասել մէկ առանձին համակրութիւն էր ցոյց տալիս մեր նորածին գործին, յորդորելով իւր ամուսնուն՝ իշխան Եագոր Թումանեանցին, օգնել մեզ բեմական միջոցներով։

Այդ տարի Ռուսաստանից եկել էին երկու բարձրատոհմ երիտասարդներ, որոնք առաջարկեցին ինձ և ընկերներիս տալ մէկ ներկայացում յօգուտ Պետերբուրգի չքաւոր ուսանողների։ Մենք, յայտնի բան է, ուրախութեամբ յանձն առանք և առաջին իսկ անգամին տուինք «Վենետիկի վաճառականից», կարծեմ, երկու գործողութիւն, և եթէ չեմ սխալվում, առաջին անգամ նմանապէս «Օսկան Պետրովիչը երազում» վօդէվիլը մէկ արարուածով, հեղ. պ. Սունդուկեանցի։ Այդ ներկայացումն արդիւնքի կողմանէ շատ յաջող գնաց, բայց դարձեալ չանցաւ առանց դիպուածի։

«Վենետիկի վաճառականի» երրորդ գործողութեան մէջ, այն հետաքրքիր տեղը, որտեղ Շեյլօկը (ես) տաքացած սրում է իւր դանակը, որ կտրէ մէկ գրվանքայ միս վաճառական Անտօնիօի մարմնից, յանկարծ մէկ սաստիկ աղմուկ բարձրացաւ բեմի վերայ, այնպէս որ թէ հանդիսականները և թէ դերասանները շուարուեցան, չիմանալով նորա պատճառը, բայց յետոյ յայտնուեց, որ այդ ժամանակ բեմի առաստաղը շոգի պատճառաւ բարձրացել էր և սաստիկ անձրև էր գալիս դուրսը, որից և աղմուկ բարձրացաւ բեմի վերայ։

Ես ևս շփոթուեցայ և այնպէս արագութեամբ սկսեցի սրել փայտեայ դանակս, որ նա միջից կես եղաւ, և ես հազիւ կարողացայ մէկ քանի աւելացրած խօսքերով պահել տալ ժողովրդի ծիծաղը։ Այդ ներկայացումն տուեց, ինչքան յիշում եմ, 400 ռ. զուտ դրամ, որ և յանձնուեցաւ իշխան Նապօլէօն Ամատունուն։

Եկաւ իմ և Սուքիասեանցի բենեֆիսի հերթը։ Մենք առաջուց շինեցինք հայ թատրոն այցելողների ցուցակ և վճռեցինք Սու-

քիասեանցի հետ միասին կառքով այցելել ամենքին: Ես առաջ Թէև չէի համաձայնում այդ տեսակ միջոցով այցելուներ հաւաքել Թատրոն, բայց ի վերջոյ համոզուեցայ:

Միւս օրը Սուքիասեանցը, որ առհասարակ սիրում էր իրան ցոյց տալ, վարձեց մի հիանալի կառք և մենք բազմեցինք նորա մէջ ու գնացինք այցելութեան:

Առաջին և լաւ այցելութիւններիս հարուստ երիտասարդների մէկին, որի մասին չէինք կասկածում, որ չի ընդունիլ մեզ, մի երկայնավիզ ծառայ դուրս եկաւ մեր զանգ տալուց յետոյ և շատ սառնասրտութեամբ յայտնեց մեզ առանց պլեպլութեան, որ նորա բարինը, (պարոնը) չի կարող ընդունել մեզ, բայց ընդունեց մեզանից աֆիշան:

Առաջին հարուածը Թէև դիպաւ իմ ինքնասիրութեանս, բայց ես չյուսահատուեցայ: Այդ տեղից գնացինք պ. Ս. Ն. Տէր Մկրտչեանցի մօտ, որի քաղաքավարի ընդունելութիւնից ես դարձեալ քաջալերուեցի, բայց երբ դուրս գալու ժամանակ առաջարկեց մեզ փող. ես սաստիկ վրդովուեցայ դարձեալ և կարծում եմ որ սաստիկ կարմրեցայ:

Դորանից դուրս գալու պէս՝ մտանք մի շատ հարուստ ընտանիք, որի մէջ միայն հինգ երիտասարդ հայ եղբայրք կային և որոնք ոչ մի օպերայից կամ ռուսերէն ներկայացումից յետ չէին ընկնում և որոնցից մէկը ահագին փողեր էր ծախսում այդ ժամանակուայ մի իտալացի դերասանուհու վերայ:

Զանգը քաշեցինք, դուրս եկաւ մի չափազանց երկայնավիզ ռուս ծառայ:

—Տա՞նն են պարոնները, հարցրինք մենք:

—Տանն են, պատասխանեց նա մեզ:

Մենք տուն ուղարկեցինք աֆիշան և ինքներս սպասում էինք պատշգամբի վերայ պատասխանին:

Մէկ քանի րոպէից յետոյ դուրս եկաւ լղլղացնման ծառան և առանց խօսք ասելու յետ տուեց աֆիշան: Այդտեղ այլևս համբերութիւնս տրաքուեց, ես խլեցի ծառայի ձեռից աֆիշան, կտոր կտոր արի և խփեցի պատուհանին, մի լաւ կուշտ հայհոյանք ուղղելով դէպի եղբարքը:

—Ջէ՞, բաւական է, ասացի ես Սուքիասեանցին, երբ դուրս եկանք այդ տանից, այցելիր մենակ ուր կամենաս. միայն ինձ ազատիր:

—Ամօթ է, արի՛, սկսեց համոզել ինձ պ. Սուքիասեանցը, ծիծաղեց հեթեթալով և հրելով ինձ կառքի մէջ: Քանի նա ծիծաղում էր, այնքան ես կատաղում էի, բայց վերջապէս չկարողացայ ընդդիմանալ, դարձեալ նստեցի և շարունակեցինք մեր ճանապարհորդութիւնը:

Յանկարծ կանգնեցանք մի շքեղ տան առաջ: Սուքիասեանցը զանգը քաշեց, դուրս եկաւ ծառան և շատ անվրդով յայտնեց որ տանը չեն:

Ես ներքև թռայ կառքից և փախայ: Պ. Սուքիասեանցը շատ բղաւեց ետևիցս, շարունակելով իր քրքջալի ծիծաղը, բայց ես անհետացայ անիծելով թատրոնն էլ, բենէֆիսն էլ: Պ. Սուքիասեանցը շարունակից ինքը այցելել մի քանի տեղ, բայց վերջը նա ես զզուեցաւ, և այդ առաջին և վերջին տոմսակ ծախելս էր իմ բենէֆիսին:

Այդ ներկայացումից յետոյ սկսեցին շոգերը և մենք ցրուեցանք զանազան կողմեր, պ. Ամերիկեանցը գնաց, կարծեմ, Բորժօմ թէ Ախալցխայ. պ. Սուքիասեանցը չեմ յիշում ուր, իսկ ես, խեղդուած պարտքերում, գնացի երկրաչափութեան, մասնաւոր պայմաններով, վրաց կալուածատէրերի հողերը բաժանելու, իրանց նոր ազատուած ստրուկների մէջ, և սաստիկ հիւանդացայ:

Գ. ՋՄՇԿԵԱՆ

(կը շարունակուի)

ԼՈՒՂՈՐԴ

(ՇԻԼԼԵՐ)

«Ո՞վ արդեօք, ասպետ կամ թէ մանկլաւիկ,
Սիրտ կ՚անէ մտնել այս անդունդի մէջ:
Մի ոսկէ գաւաթ ձգում եմ ահա,
Որ պիտի կուլ տայ այս վիհը անվերջ:
Ով ինձ գաւաթը կրկին ցոյց կը տայ,
Իւր սեփականն է, թող իրան մնայ»:

Ասում է արքան և ժայռի գլխից,
Որ անհուն ծովի վերայ է կախուած,
Ոսկէ գաւաթը ձգում է բարձրից
Նա Խարիբդայի յորձանքը կատաղած:
«Ո՞վ է սրտոտը, հարցնում եմ կրկին,
Որ վստահ իջնի այս փոսը մթին»:

Եւ ասպետները, մանկլաւիկները
Շուրջ կանգնած լսում են պապանձուելով,
Կատաղի ծովին ուղղած աչքերը.
Գաւաթը ստանալ չէ ուզում ոչ ով:
Եւ երրորդ անգամ հարցնում է արքան.
«Մի՞թէ ոչ մէկը սիրտ չունի այնքան»:

Չըկայ պատասխան ոչ ոքի բերնից —
Բայց մի մանկլաւիկ հեզ և անվեհեր
Ահա դուրս եկաւ թուլասիրտ խմբից
Եւ իսկոյն հանեց գօտին ու շորեր,
Եւ սարսափելով բոլոր այր ու կին
Նայում են չքնաղ երիտասարդին:

Երբ նա բարձրացաւ քարափի վերայ
Եւ աչքը ուղղեց այն մութ անդունդին,
Ջրերը, որոնց կուլ էր տալիս նա,
Խարիբդան թնդմամբ վիժում էր կրկին:
Եւ փրփրում էր, և կատաղում էր,
Սև ծոցը ինչպէս սև ամպ գոռում էր:
　　　　Շփոթվում է, եռում, սուլում, բառանչում,
　　　　Կարծես հուր ու ջուր միախառնվում են,
　　　　Փրփուրը մինչև երկինքն է թռչում,
　　　　Ալիքներն անվերջ իրար ճնշում են:
　　　　Եւ չէ վերջանում, և չէ դադարում,
　　　　Կարծես ծովն էլի նոր ծով է ծնում:
Յանկարծ կատաղի ուժը թուլացաւ,
Եւ փրփուրի մէջ ձիւնի պէս սպիտակ
Սոսկալի և մութ մի ճեղք բացուեցաւ,
Կարծես հասնում էր մինչ դժոխքի յատակ.
Եւ սարսափելի ուժով քաշում էր
Սև խորխորատը իր մէջ ալիքներ:
　　　　Հիմա շուտ, քանի հանդարտ է ծովը,
　　　　Պատանին Աստծուն ապաւինեցաւ,
　　　　Եւ — աղաղակեց, սոսկաց ժողովը,
　　　　Եւ յորձանքի մէջ նա անյայտացաւ:
　　　　Անդունդը փակեց իր բերանը սև,
　　　　Նա էլ չի տեսնի երկինք ու արև:
Ջրի երեսին տիրեց լռութիւն,
Բայց տակը դարձեալ գոռոց ու վրդով.
Եւ շշնջում է ափշած բազմութիւն,
«Բա՜ջ երիտասարդ դու, երթաս բարով»:
Եւ անդունդի մէջ խուլ գոռգռում է,
Ամենի սիրտը հեծում, դողում է:
　　　　Եթէ ձգէիր նոյն իսկ քո թագը
　　　　Ասելով. ով այն կըհանէ կրկին,
　　　　Է ինձ հաւասար, է իմ ժառանգը,
　　　　Ինձ չէր հրապուրի վարձը թանգագին:
　　　　Ո՞ր մահկանացուն կարող է պատմել,
　　　　Անդունդը ինչ է իր տակը ծածկել:

Արդէն շատ նաւեր ուժով քանդել է
Ծործանքը, նետել սեւ անդունդի տակ,
Նոցա տաշեղը միայն հանել է
Այս ամենակուլ որկորը անյագ։—
Եւ աւելի պարզ ու աւելի մօտ
Լսւում է ինչպէս մօտեցող որոտ։
Շփոթվում է, եռում, սուլում, բառաչում,
Կարծես հուր ու ջուր միախառնվում են,
Փրփուրը մինչեւ երկինքն է թռչում,
Ալիքներն անվերջ իրար ճնշում են։
Եւ փրփրում է, եւ կատաղում է,
Սեւ ծոցը ինչպէս սեւ ամպ գոռում է։
Բայց տե՛ս, այն խաւար փոսից դըժոխքի
Ահա՛ բարձրացաւ սպիտակ ինչպէս ձիւն
Մի թեւ, մի ծոծրակ եւ դէմ հօսանքի
Կռվում է, որքան ունի զօրութիւն։
Այդ նա՛ է, նա՛ է աջ ձեռով լողում,
Ոսկէ գաւաթը փայլում է ձախում։
Եւ նա շատ երկար խորը շունչ առաւ,
Ուրախ ողջունեց երկնքի լոյսը.
Ամենի բերնից յանկարծ դուրս թռաւ,
«Նա կենդանի՛ է, զուր չէր իւր յոյսը։
Թաց գերեզմանից, անդունդից մթին
Քաջը ազատեց իւր անմահ հոգին»։
Եկաւ։ Ամէնքը դիմաւորեցին։
Եւ նա իւր տիրոջ ոտը ընկնելով,
Ծնկաչոք յանձնեց գաւաթն արքային,
Որ իւր աղջկան արեց նշանով։
Կոյսն անոյշ գինով լցրեց գաւաթը,
Եւ այսպէս խօսեց երիտասարդը։
«Շա՛տ ապրի արքան։ Թող կեանք վայելէ,
Ով որ ապրում է արեւում փայլուն.
Բայց այնտեղ ցածում սարսափելի է,
Աստուծուն չըփորձէ թող մահկանացուն։
Թող չըցանկանայ երբէք նա տեսնել,
Ինչ որ Ստեղծողը խաւարով պատել»։

«Ինձ ներքև քաշեց արագ ինչպէս նետ,
Բայց այնտեղ յանկարծ մի մութ քարայրից
Յարձակուեց իմ դէմ կատաղի մի գետ,
Եւ ես բռնուեցայ կրկին հոսանքից—
Եւ ինձ դարձնում էր պտուտակի պէս,
Նորա դէմ կռուել կարող չէի ես»:

«Տեսնելով, որ ես կորած եմ անճար,
Խնդրեցի Աստծուն, որ փրկէ նա ինձ.
Եւ նա ցոյց տուեց դուրս ցցուած մի ժայռ,
Որ պինդ գրկեցի և պրծայ մահից:
Եւ կորալիոնի վրայ կախուած էր
Այնտեղ գաւաթը, թէ չէ կորած էր»:

«Դեռ մի լեռնաչափ անդունդ կար իմ տակ
Թոյլ լուսաւորուած կարմրափայլ լոյսով,
Որ համր էր, ինչպէս գերեզման մի փակ.
Բայց տեսնում էի ես սարսափելով
Ցածում մողէզներ, անթիւ վիշապներ
Եւ ամեն տեսակ ծովային հրէշներ»:

«Եւ եռում էին, ոլորվում էին
Իրար խառնուած անդնդում անտակ,
Նարկէզ, ձողաձուկ, ուռն ծովային
Եւ ծովի բորեան շնաձուկը անյագ,
Որ իւր բերանը լայն բաց անելով,
Ինձ մահ էր սպառնում սուր ատամներով»:

«Ես կախուած էի այնտեղ սոսկալով,
Հեռու մարդկային օգնող բազուկից,
Հեռու և մենակ սիրազգաց սրտով,
Եւ հրէշներով պատած չորս կողմից:
Եւ ինձ մարդկային մի ձայն չէր հասնում
Այն դըժոխային մութ անապատում»:

«Յանկարծ սարսափած տեսնեմ սողում է
Դէպ ինձ մի հրէշ հարիւրոտանի.
Նա արդէն բռնել ինձ պատրաստվում է—
Շուտ թողի ժայռը կորալիոնի:
Ինձ սաստիկ ուժով բռնեց հոսանքը
Վերև նետեց և — փրկեց իմ կեանքը»:

Արքան լսելով նորան զարմացած,
Ասաց. «Գաւաթը քեզ է պատկանում,
Եւ այս մատանին ահա՛ զարդարած
Մեծ ադամանդով քեզ եմ խոստանում,
Եթէ կըփորձես սուզուել դու կրկին
Եւ պատմել, ի՞նչ կայ ծովի յատակին։»
Արքայի դուստրը այս խօսքի վերայ
Դարձաւ իր հօրը սրտաշարժ ձայնով.
«Բաւական է, հա՛յր. թո՛ղ փորձը մնայ.
Նա արեց, ինչ որ կարող չէ ոչ ով։
Բայց թէ անպատճառ ուզում ես կրկնել,
Թո՛ղ սորան, փորձի՛ր ասպետ մի կանչել։»
Բայց արքան ձգեց գաւաթը նորից
Խարիբդայի մէջ և ասաց այսպէս.
«Թէ էլի բերես գաւաթը դու ինձ,
Անշուշտ առաջին ասպետս դու ես,
Եւ իմ աղջկան, որ թախանձագին
Բարեխօսում է, կառնես ամուսին։»
Երիտասարդի հոգին բորբոքուեց,
Նորա աչքերը ուրախ փայլեցին.
Սիրուն աղջիկը կարմրեց, դեղնեց
Եւ թուլանալով փռուեցաւ գետնին։
Եւ մանկլաւիկը թանկագին վարձով
Հրապուրուած, վստահ ձգեց իրան ծով։—
Դարձեալ բարձրանում, դարձեալ իջնում է
Կատղած հոսանքը սաստիկ թնդալով,
Աղջիկը առաջ թեքուած նայում է
Անդունդի վերայ սիրտը դողալով։
Բայց ալիքները իջնում են, ելնում,
Երիտասարդին էլ չեն դուրս հանում։

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՔՈՒՐԴԻ ԼԵԱՌՆ [1]

(ԳՈՐԾ ԱԼԲԵՐ ԱՑՆՕԻ)

I.

Վանայ լճից մի քանի մղոն դէպի հիւսիս, Դավրիժից Էրզրու-րում տանող ճանապարհների վերայ, հանդիպում է մարդ մի փոքր դաշտավայրի, ոռոգուած առուաջրով և զովացած դարևոր կաղնիների ստուերներով: 1860-ին մի աշնան օր եւրոպացի ճանապարհորդներ Պարսկաստանից գալով, իջան այդ դաշտավայրի մէջ՝ իւրեանց կէսօրուայ հանգիստն առնելու համար: Սոցանից մինը անգլիական զինուորական էր՝ Մէրէդիթ Գորդն Ստէվարտ անունով, Թագաւորական ճարտարապետների լիէտէնան: Սա Պարսկաստանից Անգլիայ էր տանում իւր հօրեղբօր աղջկանը՝ օրիորդ Լիւսի Բլանդըմէրին, որ ճանապարհ էր ընկել Մօրտօն անունով մի պառաւ տիկնոջ հովանաւորութեան ներքոյ: Սոցա հետ ընկերակցել էր և մի հայկազն օսմանեան պաշտօնեայ. բազմաթիւ բնիկ և Ֆրանկ ծառաներ ևս աւելանալով՝ լրացնում էին կարաւանը:

Լիւսի Բլանդըմէրի քսանըմէկ տարին նոր էր լրացել: Սա արդէն մատաղահաս ժամանակ զրկուել էր իւր մօրից: Հայրը գնդապետ էր Հնդկաստանում և շատ սակաւ էր երևում Անգլիայում. դեռահաս Լիւսին մեծացել էր իւր հօրեղբօր գերդաստանի մէջ: Հօրեղբայրը, Ուէստմօրլանդի ազնուական, թոյլ էր տալիս Լիւսին

---

[1]) Այս վէպի վերնագիրն է «La montagne kurde». եթէ հեղինակը աշխարհագրական ճշտութիւն պահպանէր, «Հայկական լեառն» կանուանէր, ինչպէս կընկատեն ընթերցողները:

Ծ. Խ.

ինքնագլուխ մեծանալու. բախտաւորապէս Տիկին Մորտոնը, որ նոյն գերդաստանին հեռաւոր ազգական էր, յօժարութիւն յայտնեց Լիւսիի դաստիարակուհին դառնալ և նորա կրթութեան վերայ հսկել: 1859 թուին մի գեղեցիկ օրիորդ էր, բարձրահասակ, խարտեաշ, զգայուն և միևնոյն ժամանակ հպարտ. նա մի վառ երևակայութիւն ունէր և հաստատ միտք. սիրում էր հին երաժշտութիւնը, հեռաւոր ճանապարհորդութիւնների նկարագրութիւնները և Թօմաս Մօրի ոտանաւորները: Լիւսիի հայրը աջակից զօրավար նշանակուելով, ուղարկուած էր Պարսկաստան քաղաքական և զինուորական յանձնարարութեամբ և բնակում էր Դաւրիժում: Լիւսին տիկին Մորտոնի հետ գնաց իւր հօրն այցելելու: Երկիրը շատ զարմացրեց և սկզբում՝ մինչև անգամ դուր չեկաւ նորան, որովհետև դա իւր պատկերագրքերի մէջ տեսած Արևելքի նման չէր, բայց շուտով մխիթարուեցաւ, ուրիշ անակնունելի գեղեցկութիւններ գտնելով, որոնք աւելի կենդանի և աւելի հիանալի էին, քան թէ իւրեան նկարագրած արհեստական գեղեցկութիւնները: Լիէտէնան Ստէվարտը այն մեծանուն իշխանի որդին, որի մօտ անցել էին Լիւսիի մանկութեան օրերը, օրիորդից առաջ էր գնացել Դաւրէժ Բլանդըմերին թիկնապահ: Սա շուտով սիրահարուեցաւ իւր սիրուն ազգականուհու վերայ. Լիւսին չը խրախուսեց Ստէվարտին բայց և չը մերժեց բոլորովին. օրիորդ Բլանդըմերը չէր ցանկանում տալ իւր վերջնական խօսքը: Բայց որովհետև հանգամանքն այնպէս բերաւ, որ երբ Լիւսին պիտի վերադառնար, այդ իսկ ժամանակը լիէտէնանին ևս յետ կանչեցին Անգլիա, ուստի Լիւսին համաձայնեցաւ իւր հօրեղբօր որդու հետ ճանապարհ ընկնիլ:

Ճանապարհորդութեան սկզբներում ոչ մի անախորժ արկածքի չհանդիպեցան. մինչև Տաճկաստանի սահմանին հասնելը եղանակն զմայլելի էր:

Այն օրը, երբ մենք պատահում ենք դոցա դաշտավայրում հաւաքուած, չորս ճանապարհորդները նոր էին վերջացրել իւրեանց նախաճաշիկը: Տիկին Մորտոնը պատրաստվում էր իւր սովորական քունն առնելու. լիէտէնանը բեռների միջից հանեց որսի հրացանը, որ ստացել էր Դաւրիժից, ճանապարհ ընկնելուց փոքր ինչ առաջ, և հայազգի պաշտօնեայ Տիգրան-Էֆենդու հետ հեռացաւ կարավանից, որ փորձէ նոր զէնքի շնորհքը:

Մինչ դեռ պառաւ տիկինը տեղաւորվում էր բարձերի վերայ

օրիորդ Բլանդըլմերը նստեցաւ քառակուսի վրանի լայն մուտքի առջևը: Նա տեսաւ որ Ստէվարտի ծառան վազեց դաշտի միւս ծայրը, մի երկայն ձող ցցեց, իսկ նորա ծայրից կապեց մի տախտակ, որ պէտք է լինէր նշանը: Առաջ հայն արձակեց հրացանը, բայց չդիպցրեց նշանին: Լիէտէնանը նորանից բաղդաւոր չգտնուեցաւ. պատճառը սովորական յաջողականութեան պակասն էր արդեօք, թէ նշանի շատ հեռու լինելը, բայց ինչ և իցէ, նա ոչ մի անգամ չկարողացաւ դիպցնել նշանին և այս ձախորդութիւնը շատ տխրեցրեց նորան:

Լիւսին աչքը դարձնելով դէպի դաշտի հակառակ կողմը, տեսաւ որ ճանապարհի կողքին իջել էին մի խումբ ճանապարհորդներ: Դոցանից մինը գլխին ֆէս ունէր և հագած էր Կ. Պօլսի կարճազգեստ. միւսները աղքատ էին հագնուած, ինչպէս գաւառի գիւղացիներ: Դոքա հեգնական հետաքրքրութեամբ էին նայում զինուորականի անյաջող հրացանաձգութեանը: Շուտով գիւղացիներից մինը, իւր տիրոջ հրամանով, վազեց դէպի բաց թողած ձիաները, վեր առաւ մէկի թամքից կախած մի երկայն ու սադափով զարդարած հրացան և բերաւ տուաւ իւր տիրոջը: Սա բաց արաւ կայծահանի բերանը, իղնկով մաքրեց, նորոգեց վառօդը և սկսեց համբերութեամբ սպասել մինչև Ստէվարտն ու Տիգրանը աւարտեն իւրեանց գործը: Յետոյ նա քանի մի քար դրեց միմեանց վերայ և հրացանի խողովակը դոցա վերայ դնելով բերանքսիվայր ձգուեցաւ գետնի վերայ ու երկար նշան դնելուց յետոյ արձակեց հրացանը: Գնդակը ծակեց տախտակը, թէև դա շատ հեռու էր:

Այդ յաջողութիւնը համարեա թէ հրաշք էր. զարմացած ճանապարհորդները յետ նայեցան, որ տեսնեն զարկողին: Բայց սա առանց յուզուելու՝ մի կտոր կտաւ անցցնելով հրացանի գաւազանի ծայրից, լաւ մաքրեց խողովակի ներսը. յետոյ մի թանաքամանի նման անօթից, որ ծառան մեկնեց նորան, ջուր վեր առաւ, խտակեց կայծահանը, վառօդ առաւ, կրկին լցրեց հրացանը, մի գնդակ մցրեց խողովակը և պարկեց կրկին արձակելու համար. այս պատրաստութիւնները երկու րոպէ քաշեցին: Երկրորդ գնդակը առաջինի կողքին դրեց [1]):

---

[1]) Քրդի երկրորդ գործողութիւնը սխալ է նկարագրուած. Թանաքամանի պէս անօթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն փոքրիկ իւղամանը, որ սա-

—Այս Թուրքը սատանի ձեռքով ձուլուած գնտակնե՞ր ունի, ասաց Ստեվարտը էֆենդուն, հրացանը վայր ձգելով կանաչի մէջ:

—Այդ մարդը Թուրքի կերպարանք չունի պատասխանեց Տիգրանը, չնայելով հագուստին, դա մի լեռնական է, նոյն իսկ մի քուրդ:

—Քուրդ թէ Թուրք, ինչ կուզէ լինի, շատ ճարպիկ մարդ է. գնամ իմ յարգանաց հաւաստիքը յայտնեմ, ասաց լէտէնանը, որ բուն անգլիացու յատկութեամբ յարգանքախառն զարմացքով լցվում էր այդպիսի մի քաջափորձ մարդ տեսնելիս:

Բայց Ստեվարտը ժամանակ չունեցաւ իւր երջանիկ հակառակորդին բարեմաղթութիւն անելու: Նա արդէն ճանապարհ էր ընկել իւր ընկերների հետ: Ճանապարհի պտոյտը նորան այն տեղով անցկացրեց, ուր որ Լուսին էր նստած նախընթաց տեսարանի ժամանակ. մեր օրիորդը կարողացաւ շատ մօտիկից տեսնել նորան: Սա քսաներէք, քսանչորս տարեկան մարդ էր, բարակ, ջլոտ, արծուեքիթ, սրաչեայ, այն լեռնականի կամ թէ բազէի աչքերով, որոնք մի մղոն հեռուից քարը քարից որոշում են հեղեղատի մէջ: Զարմանալի՛ բան, նա զէնք չէր կրում այնպիսի երկրում, ուր ամենախաղաղասէր մարդիկն էլ առանց Թրի քաղաքից դուրս չեն գնում. տաճկական հագուստը կոպիտ պարզութեամբ էր կարած, բայց բուն Թուրքմէնի ձին հուժկու, ճկուն և կրակոտ էր երևում:

Իւր խմբի մարդիկը զինուած էին հրացաններով ու դաշոյններով: Նա նկատեց Լուսիին, երբ միայն երկու քայլ տարածութիւն էր բաժանում նոցա. օրիորդի տեսքը նորա վերայ մի անսովոր և անսպասելի տպաւորութիւն գործեց: Նորա հայեացքը, երբ աչքը ձգեց օրիորդի վերայ, ապշումն ու հիացումն արտայայտեց: Առասպելի մարգարէն, որի համար Աստուած դրախտի պղնձեայ պարիսպը մի րոպէ ժամանակով բաց արաւ, գուցէ այնքան չշլացաւ երկնային հրաշալիքը տեսնելով, որքան այդ քուրդը օտար օրիորդի փայլուն դէմքից զմայլելով: Այս տպաւորութիւնը որքան կենդանի, այնքան և արագ եղաւ. նոյն միջոցին ձիաւորը չկարողացաւ սանձել իւր մէջ մի ուժեղ շարժումն, որ սարսափեցրեց անասունին և երկու ոտք վեր թռցրեց: Նա մի վայրկեան էլ չսարսափեց. ուժեղ ու վարժ

վորաբար կախում են գօտիկներից: Այդ իւղամանի մէջ լինում է մի կտոր դմակ կամ ձէթ (զէյթունի իւղ), որով և մաքրում կամ օծում են կայծահանի մասները, և ոչ թէ ջուր, որ այս գործողութեան մէջ տեղիք չունի:

Խ. Ծ.

ձեռքով ժողովեց երասանակը և ձին իսկոյնեւեթ իւր առաջուան ծանր քայլքն ստացաւ: Անցկենալով օրիորդ Բլանդըմերի մօտից քուրդը ողջոյն տուաւ: Օրիորդը չկարողացաւ անտարբեր մնալ նորա լուռ ու մունջ մեծարանքի դէմ: Շատ անգամ էին ասել իւրեան թէ գեղեցիկ է և ինքը երբէք արժէք չէր տուել այն շողոքորթութիւններին, որ առատութեամբ թափում էին նորա վերայ եւրոպական դահլիճներում. բայց այն լեզուն, որով խօսում էին այդ կիսաբարբարոս մարդու աչքերը, չէր կարող անկեղծ չլինել. դա ամենևին նման չէր դատարկ հաճոյաբանութեան:

Յաջորդ երեք օրը կարավանը շարունակեց իւր ճանապարհը: Լեռները աւելի ու աւելի սեպանում էին, իսկ ցերեկը մինչև կէսօր արեգակը, կարծես թէ, կորցրել էր իւր ջերմութիւնը. աշունքը անց էր կենում. մի առաւօտ խոտը եղեամով ծածկուեցաւ: Տաւրոսի մշտակայ ձիւներից եկող քամիները փչեցին դաշտի վերայ և մերկացրին ծառերը իւրեանց վերջին տերևներից, այն ինչ սև սև թռչուններ իրար խառնուած, թռչտում էին երկնքում: Ճանապարհորդները այլ ևս չկարողացան իւրեանց վրանների տակ քնել: Չորրորդ օրուայ երեկոյին հարկադրուեցան մի աղքատիկ գիւղի տներում իւրեանց ապաստան փնտռել: Միակ փոքր ի շատէ ընդարձակ բնակարանը գիւղի հայ քահանայինն էր. մուխտարը նորանց այնտեղ ուղարկեց: Մինչդեռ օտարականները տաքանում էին կրակարանի մօտ, ողորմելի տանուտէրը, կապոյտ կտաւի պատառոտուն հագուստով, մի անկիւնում լուռ ու մունջ նստած, քաշում էր իւր ծխախոտը: Նա իւր կեանքն անց էր կացնում հողագործութեամբ, ինչպէս և իւր ժողովուրդը, նա համարեա թէ նոցա նման գռեհիկ էր, և եթէ սև կտաւով փաթաթուած գտակ չունենար գլխին, նորան գիւղացու տեղ կարելի էր դնել: Տիգրանին իրան հայրենակից ճանաչելով՝ սկսեց գանգատել նորան իւր թշուառութեան մասին: Տէրտէրի ասելով՝ թուրքերը, հայ եպիսկոպոսը և քուրդերը խօսք մէկ էին արել, որ գիւղը կողոպտեն: —Սակայն, ասում էր նա, քրդերը մեր ամենադէշ թշնամիները չեն: Մեր շրջակայքում եղողները Աբդուրահմանլըի ցեղին են պատկանում. նոցա գլխաւորը Սէլիմ-աղան է, որ միայն ձեզ նման հարուստ ճանապարհորդների վերայ է յարձակվում:

Վերջին խօսքերը ապահովիչ չէին: Տիգրանն սկսեց հարց ու փորձ անել քահանային և իմացաւ, որ Աբդուրահմանլը-

ների աղան շատ անգամ կողոպտում էր կարավաններ, որպէս զի վրէժ առնէ վանայ փաշայից, որ շատ ժամանակ արդէն նեղացնում էր նորան: — Բայց և այնպէս Սէլիմ աղան չար մարդ չէ, աւելացրեց քահանան, միայն եթէ կառավարութիւնը ոյժ չունի նորան ընկճելու, պէտք է զգուշանայ սորա հետ անդադար կռուելուց: Սէլիմ աղան քաջ է և անվախ: Անցեալ գարունքին պարսից սահմանագլխում Մէկքիոյի գլխաւորը յափշտակել էր Սէլիմից մի հօտ ոչխար հովուի հետ միասին, պատճառ բերելով, թէ ոչխարները արածել էին Քաղարլու արօտատեղերում, որոնք պատկանում են պարսիկ քրդերին: Աբդուրահմանլին առաջ ոչինչ չասաց, բայց ահա երկու շաբաթ է, որ Թուրքի հագուստով և հինգ-վեց մարդ միայն հետն առնելով, յանկարծ յարձակուեցաւ Մէկքիոյի մարդկանց վերայ, շատերի գլուխը կտրել ու ազատել է իւր հովուին: Երեկ իւր բնակութեան տեղը վերադառնալով, նա այս գիւղից անցաւ:

Տիգրանը շուտով հասկացաւ, որ Աբդուրահմանլիների գլխաւորը անշուշտ այն ճարպիկ գնտաձիգն էր, որին հանդիպել էին չորս օր առաջ: Նա իւր կարծիքը հաղորդեց Ստէվարտին: — Է՛հ, եթէ յարձակուի մեզ վերայ, մենք կպաշտպանենք մեզ, ասաց լէյտէնանը: Այդ քուրդերը թէև յաջողակ են արձակում իւրեանց հրացանները, բայց ամբողջ կէս ժամ է անցնում, մինչև կրկին արձակեն: Այդ ենթադրութիւնը, որ կասկածանքի մէջ էր ձգում հային, ոչինչ վախ չէր պատճառում օրիորդ Բլանդըլմէրին: Քուրդ ձիաւորի յիշատակը նորա մտքից չէր հեռանում և դժգոհ չէր լինիլ, եթէ նորան կրկին մօտիկից տեսնէր. մանաւանդ որ նա մի հասարակ աւազակ չէր և օրիորդը պատճառ ունէր մտածելու, որ նա մեծ գինս չի տալ այն կարավանին, ուր ինքն է գտնվում: Ուստի Լիւսին շատ հանգիստ անցկացրեց գիշերը, այն ինչ իւր հօրեղբօր որդին աւելի անհանգիստ էր քան թէ ցոյց էր տալիս: Նա իւր վերայ չէր մտածում, այլ այն կանանց մասին, որոնց առաջնորդութիւնը իւր վերայ էր առել: Միւս օրը Ստէվարտը ճանապարհ ընկնելուց առաջ յուղարկաւոր զաւթիաներ ընտրեց մուխտարից: Նա լաւ գիտէր թէ ինչ արժէք ունին այս պաշտօնական պահապանները, բայց նորա միտքն այն էր, որ կարավանը թուով մեծացնէ, որպէս զի քուրդերը չըհամարձակէին ճանապարհը կտրել:

Դարձեալ երկու օր ճանապարհորդեցին և ոչինչ չար դէպք չարդարացրեց Տիգրան-էֆենդու կասկածը: Եւրոպացիները համարեա

թէ ամեն ժամ հանդիպում էին շարան շարան գրաստների իւրեանց տէրերի հետ, որոնք, ինչպէս երևում էր, շատ ապահով էին իրանց ճանապարհորդութեան մասին: Ճանապարհի վերայ աջ ու ձախ գտնվում էին բազմաթիւ թիւրքախառն հայ գիւղեր, ողորմելի ու թշուառ բնակիչներով: Այս չքաւորութիւնն անբացատրելի բան էր երևում այս խոտաւէտ արօտների և առատ ցորենի դաշտերի մէջ: Տիգրանի սիրտը տրորվում էր այս հակապատկերից: Առաջին անգամն էր, որ նա անցնում էր Հայաստանի՝ իւր բուն հայրենիքի միջով: Ծնուած ու սնուած Կ. Պօլսում, նա կովկասովն էր գնացել Դաւրէժ, ուր մասնակցում էր այն միջազգային յանձնաժողովին, որի մէջ Բլանդըլմեր զօրավարը Անգլիայի ներկայացուցիչն էր:— Իմ տարաբախտ երկիրը, ասում էր Տիգրանը, բոլոր Արևելքի պատերազմական դաշտն է եղել պատմութեան ծագումից սկսած մինչև մեր օրերը: Հէնց այսօր էլ բանակատեղի է հինգ վեց միմեանց ոխերիմ թշնամի ցեղերի. բայց որպէս թէ այս հերիք չէ, նոյն իսկ իմ հայրենակիցներն ևս անդադար միմեանց հետ կռուելով են ապրում: Այդու ամենայնիւ, տեսնում էք, որ մենք, որքան էլ որ թշուառ լինինք, դարձեալ ապրում ենք, իսկ միւս ազգերը անցնում անյայտանում են: Ով գիտէ, իրաւունք չունի՞նք արդեօք մենք աւելի լաւ ապագայի վերայ յոյս դնել:

Լիւտէնանը ուշադրութեամբ չէր ականջ դնում Տիգրանի ասածին, նա ուրիշ մտածմունքներով էր զբաղուած: Դավրիժից դուրս եկած օրից սկսած՝ նա իւր բոլոր յոյսը ճանապարհի արկածքների, միաբան կեանքի մտերմութեան վերայ էր դրել, որ կարողանայ օրիորդ Բլանդըլմէրին մօտիկանալ. Նա ջերմ ցանկութիւն ունէր խօսել նորա հետ այնպիսի մի նիւթի վերայ, որի մասին մինչև այն ժամանակ չէր կարողացել մի բան ասել: Իսկ օրերը միմեանց յաջորդելով անցնում էին, ժամ առ ժամ աւելի էր բորբոքվում նորա սէրը, բայց նա աւելի քան երբէք քաշվում էր իւր սիրտը բանալուց: Լիւսին Ստէվարտին ոչ համակրութիւն, ոչ անտարբերութիւն էր ցոյց տալիս. այլ կարծես թէ անտեղեակ էր այն զգացմունքներին, որ ներշնչում էր: Նա ուրախ էր և բարի. սիրում էր զրուցել, ճանապարհի հազար ու մէկ արկածքները աւելի էին սաստկացնում այս բոլորը: Այդ արկածքները, ինչպէս երևում էր, նորան շատ էին դուր գալիս և մի առանձին բաւականութիւն էր զգում տեսնելով իւր բարեկամների մասնակցութիւնը: Նա խմնում էր իշխել իւր զգաց-

մունքների վերայ, և չընայելով այս Թափառական կեանքին, չէր երեւում, որ ուզենար իւր սիրտը ուրիշ տեսակ հոգսով զբաղեցնել: Լիճտէնանը իւրեան անբաղդ էր համարում: Սա եռանդոտ գործունեայ էր, երբ մաքառում էր կեանքի դժուարութիւնների դէմ, սակայն վախենում էր ձեռք վարկել իւրեան հետաքրքրող հարցին: Իւր երկրի հաստատութիւնների ու ազգային սովորութիւնների գերազանցութեանը նա անդրդուելի նշանակութիւն էր տալիս. նա խաղաղ երջանկութիւն էր երազում իւր ընտրելի շրջանի և ընտանիքի համար: Մի երեւելի ու բարեծնունդ տանտիկին, ինչպիսին կլինէր իւր հօրեղբօր աղջիկը, սիրուն մանուկներով լիքը տուն, այն կանոնաւոր յառաջադիմութիւնը, որ իւր ընտրած ասպարէզը խոստանում էր — սորանից դուրս ուրիշ ոչինչ չէր ցանկանում. Նա չէր կարող ըմբռնել, որ օրիորդ Բլանդըմէրը ջերմ համակրութիւն չը ցոյց տայ՝ իւր հետ դէպի այսպիսի մի նպատակ դիմելու:

Տիկին Մորտօնը բնաւ չէր նկատում Ստէվարտի բարոյական յուզմունքները: Այս կինարմատը դեռ իւր երիտասարդութեան ժամանակ երկրագնտի քառորդ մասը պտըտել էր իւր մարդու հետ, որ զօրքի տնտեսական բաժնի մէջ հաշուապահ էր և շատ բան էր տեսել առանց շատ բանի նայելու: Մի օր պարոն հաշուապահը, թողնելով իւր հաշուեմատեանները, խառնուել է մաօրիներին հալածող մի գնդի հետ, ուր վայրենիները դորան իւրեանց ձեռքը ձգելով սպանել, և ինչպէս ասում էին, կերել են: Այդ ժամանակ տիկին Մորտօնը վերադարձաւ Անգլիա, ուր Լիւսիին կպչելով, այլ ևս չբաժանուեցաւ նորանից: Պարսկաստան գնալու լուրը նորան բնաւ չվախեցրեց, իսկ այնտեղից վերադառնալիս նա միշտ միահաւասար անվրդով էր: Ջորու վերայ նստած, նա բոլոր ժամանակ դիտում էր երկրի այն մասերը, որով անցնում էր կարավանը, ժամանակ առ ժամանակ արձակում էր ընդունուած զարմացական բացագանչութիւններ, ախորժակով ուտում էր, և լաւ քնում ամեն մէկ իջեւանում: Ճանապարհին անց ու դարձ անող թուրքերը այդ հաստ, կարմրաթուշ, հանգիստ աչքերով կնոջ տեսնելիս, որ միշտ պարզագոյն հագուստ ունէր հագած, կանգ էին առնում մի րոպէ և յարգանքով նայում էին նորան: Ճանապարհորդութեան ազատ միջոցներին նա գործում էր մի հիանալի բանուածք, որ սկսել էր Դավրէժումը և որ ներշնչած էր պարսկական ծաղկանկար ու թռչնանկար զարդարուն կերպասների յիշատակով:

II.

Երբ մեր ճանապարհորդները Քինիսին մօտեցան, գետինը ծածկուած էր ձիւնով. ձմեռն արդէն իջել էր բարձր տափարակների վերայ, ուր տարուայ վեց ամիսը Սիբիրիայի պէս ցրտեր է անում: Նոքա վճռեցին շտապել, որ չլինի թէ վատ եղանակների հանդիպին էզրումի ու Տրապիզոնի մէջ գտնուած լեռների վերայ: Նոքա սկսեցին աւելի երկար ճանապարհորդել. առաւօտը արշալոյսը բացուած ճանապարհ էին ընկնում, կէսօրին մի ժամ հանգիստ էին առնում ու կրկին յառաջ գնում մինչև գիշեր: Ցուրտն սկսում էր խստանալ, սպիտակ գորգը փռուած էր դաշտերի երեսին, սարերի ու սառած հեղեղատների վերայ: Երկայն գաւազանաձև սառոյցները կախ էին ընկած ջրվէժներից, նմանելով ձմեռից բռնուած նայադի բիւրեղացած մազերին, ուղղաձիգ ժայռերը, որոնք միայն էին սև մնացած այս անհուն սպիտակ տարածութեան մէջ, վեր էին կանգնած իբրև մահարձաններ. սոցա գագաթին իջած ագռաւները խփում էին թևերը և իւրեանց անդուր աղաղակներով այս անխոհեմների յետևիցն էին ընկնում, որոնք իւրեանց ներկայութեամբ չէին վախենում վրդովել հայկական ձմեռուայ լուռ խորհրդաւորութիւնը:

Շրջակայ բնութեան տխրութիւնը ազդում էր ճանապարհորդների վերայ, խօսակցութիւններն սկսեցին դադարել և կարաւանի մէջ լսվում էին միայն թրի պատեանների կանոնաւոր հարուածները լայն ասպանդակներին: Օրիորդ Բլանդըմէրը միակ պահում էր իւր պարզ ու վստահ զուարթութիւնը: Նա շատ գեղեցիկ էր իւր աժդարխանի գլխարկով, մազերը երկար ծամերով ընկնում էին սև մուշտակի վերայ: Նա ծաղր էր անում Տիգրան-էֆենդուն այն ոգևորութիւնը նկատելով, որ ներշնչվում էր նա իւր հայրենիքի տեսքով:

—Դուք ազգասէր չէք, ասում էր օրիորդը: Ինչո՞ւ դուք հայերդ չէք գալիս բոլորդ հաստատ բնակուելու այս գիւղերի գետնափոր խրճիթներում, ձեր ազգային ձիւների ծոցումը: Մարդս պէտք է իւր գաղափարները մինչև վերջը հասցնէ:

Երեք ժամին սկսեց թանձր ձիւն գալ: Այդ ժամանակ նոքա անց էին կենում բոլորովին անմարդաբնակ կիրճերով, իսկ ապաստանարանը դեռ ևս հեռու էր: Ձիաները դժուարութեամբ էին յառաջ գնում, ճանապարհորդները հաստ մուշտակների մէջ դողում էին.

ցրտից: Ժամը չորսին սկսեց փչել արևմտեան քամին: Փոթորկում էր ճանապարհի երկու կողմը բռնած պատաձև ժայռերի մէջ, բարձրացնում էր ձիւնը և բաժանում անշօշափելի մասնիկների. կարծես անհամար ասեղների ծայրեր մտնում էին մարդուս քիթը, աչքերը, ականջները և արգելում էին շնչել, տեսնել ու լսել: Լիէտէնանը երկու կինարմատներից փոքր ինչ առաջ էր գնում. Տիգրանը մօտեցաւ նորան և կամացուկ ասաց:—կարծեմ վտանգի մէջ ենք: Սա մի Թ ի փ ո ւ կամ ձիւնի փոթորկի սկիզբն է. Թիփին դեռ ես չէի տեսել, միայն շատ անգամ պատմել են ինձ դորա մասին և երևում է որ դա մի սարսափելի բան է:

—Վտանգն ի՞նչ տեսակ է:

—Նախ անասունները չեն ուզում էլ յառաջ երթալ և մարդիկն ինքեանք փոթորկող ձիւնից կուրացած, երկու ոտք հեռուն չեն տեսնում: Որովհետև ճանապարհի ամեն հետք անյայտանում է, մարդս ստիպուած է կանգ առնել այն տեղում, ուր գտնվում է, և Աստուծոյ ողորմութեանը ապաւինած, սպասել մրրկի դադարելուն:

—Փոթորիկը սովորաբար ո՞րքան է տևում:

—Այդ զանազան է լինում. երբեմն երկու ժամ, երբեմն երկու օր, պատասխանեց հայը, յանկարծ ծանր կերպարանք ստանալով ու վախենալով իւր ասած խօսքերից: Ասում են որ Արաբստանի սիմունը համեմատաբար ոչինչ է:

Նոյն րոպէին, լիէտենանը տեսաւ որ ջորեպանների գլխաւորը կանգնել էր ու խորհրդակցում էր իւր մարդիկների հետ: Ստէվարտը, որ ինչպէս և իւր հօրեղբօր աղջիկը, Դավրիժումը պարսկերէն էր սովորել, գնաց դէպի նորան հարցնելու թէ ինչ կայ.—Չէ՞ք տեսնում Թիփին, պատասխանեց ջորեպանը, թափ տալով ձիւնը մօրուքի ու խիտ յօնքերի վերայից:

—Ի՞նչ պէտք է անել:

—Մենք ընտրողութիւն անել չենք կարող: Ոչ մարդիկը և ոչ անասունները չեն կարող տասը քայլ փոխել և մի կէս ժամից յետոյ բանն աւելի ևս վատ կլինի: Թէ մրրիկը տևէ, կարծեմ որ մեծ վտանգի կհանդիպինք:

Ստէվարտը գնաց կանանցն ասելու, որ պէտք էր մի րոպէ կանգ առնել: Տիկին Մօրտօնը, որ վտանգի կասկած չունէր, ջորուցը շատ հանգիստ վայր եկաւ. բայց Լիւսին, որ շատ էր կարդացել սոսկալի մրրիկների նկարագրութիւններ, հասկացաւ բանի էութիւնը և գունաթափուեցաւ: Ստէվարտի սիրտը սեղմուեց, սիրոյ տառափանքը

կրկնապատկւում էր իւր վերայ արած պատասխանատուութեան զգացմունքովը:

Կարաւանով ճանապարհորդողները նաւով գնացողներին են նման. փորձը առաջիններին ցոյց է տուել թէ ինչպէս պէտք է վարուին լեռնային մրրիկներին հանդիպելիս, իսկ նաւաստիներին՝ թէ ինչ պէտք է անեն ծովի ալեկոծութեան ժամանակ: Դ ա թ ր ջ ի բ ա շ ի ն (ջորեպանների գլխաւորը) խմբի իսկական հրամանատարը, հրամայեց ճանապարհորդներին՝ վայր թափել բեռները և հանել միջից բոլոր վերմակները: Ժայռի ստորոտումը մի լայն գորգ փռեցին, յետոյ բոլոր ճանապարհորդները մէկ տեղ խմբուեցան, նստեցին միմեանց շատ մօտիկ ու վերմակները կամարի պէս փռեցին գլխների վերայով: Այսպէս ահա մի կենդանի բլրակ կազմեցին, որ շուտով ձիւնով ծածկուեցաւ: Մի ջորեպան աշխատում էր իւրեանց գլխի վերևից մի անցք պահպանել դրսի օդի համար: Պատմում են՝ թէ թիփուց բռնուած ճանապարհորդներ կարողացել են ապրել քսան, երեսուն, նոյն իսկ քառասուն ժամ այդ կերպով ձիւնի տակ թաղուած: Եթէ մրրիկը աւելի երկար տեւէ, ցուրտն ու քաղցը իւրեանց գործը կկատարեն: Յաջորդ գարնան հալհլոցին ճանապարհ ընկնող առաջին անցորդները գտնում են դիակներն անվնաս այն դրութեան մէջ, ուր մահը եկել հասել է նոցա:

Չկայ յուսահատութիւն, որ կարելի լինի համեմատել այդպիսի մի դրութեան ճակատագրի հետ: Ամենաանհամբեր մարդիկը հասկանում են կռուելու անկարելիութիւնը և հպատակւում են: Սակայն նոքա որոնք մօտիկից դիտել են այդ տեսակ մահը, կարծում են թէ դա համարեա թէ հանգիստ մահ է. ցուրտը թմրեցնում է սպանելուց առաջ և մարդս չի զգում վերջին րոպէները: Մի խոր, անյաղթելի քուն ազատում է մեռնողին հոգևարքի չարչարանքներից:

Երբ գիշերը վերայ հասաւ, մրրիկը առաջուանից կատաղի էր: Լիւսին նստած էր իւր հօրեղբօր որդու և տիկին Մօրտոնի մէջ տեղը: Սա վերջապէս հասկացել էր որ կարաւանը ծանր վտանգի մէջ է ու լաց էր լինում ոչ թէ իւր կեանքի, այլ իւր որդեգրուհու համար, որի երիտասարդութեան օրերը այսպիսի դառն վերջ պէտք է ստանային: Ստէվարտը մտածում էր, որ եթէ մահը գալու է, քաղցր կլինէր իւրեան մեռնիլ իւր ամենասիրելի էակի կողքին: Լիւսին, որ այդպիսի մի դրութեան մէջ անգամ չէր կորցրել իւր զուարթամտութիւնը, ցածրիկ ձայնով աղօթք էր անում: Հայը և պարսիկ ջորեպանները

անտրտունջ սպասում էին իւրեանց ճակատագրին: Արևելցիները, փոքր երեխաների նման, առանց արտասուքի ու առանց գանգատանքի, տեսնում էին վերջին ժամի հասնելը:

Ցուրտը ճանապարհորդներին դեռ շատ չէր նեղացնում, փոքրիկ տեղում հաւաքուած մարմինների ջերմութիւնը աւելի մեծ էր քան դրսինը, բայց ձիւնն անդադար գալիս էր և կարող էր գալ նաև երկրորդ, երրորդ օրը, ամբողջ շաբաթ: Վերջապէս նա ահագին ծանրութեամբ կդիզուէր ու այլ ևս հնար չէր լինիլ դրսի օդի մուտքը պահպանել: Ժամերը դարերի նման երկար էին անցնում, ճանապարհորդներն սկսեցին քաղցել:

Թէ եւրոպացիք և թէ բնիկները բոլորեքեան լուռ էին: Լսվում էր միայն քամու շչիւնն ու մռնչիւնը և ձիւնի այն զանգուածների խուլ ձայնը, որ ժամանակ առ ժամանակ բարձրից վայր էին հոսվում ձորը: Մի ջորեպան առանց մի խօսք ասելու վեր կացաւ կանգնեց որ վերմակի վերայից ձիւնը թափ տայ. բայց յետոյ փոխանակ նստելու կանգնած մնաց շատ րոպէներ, դիտելով դրսում անցածը:

— Ի՞նչ ես տեսնում, հարցրեց ղաթրջիբաշին:

— Ատրճանակդ ինձ տուր, պատասխանեց նա: Մի արջ պտոյտ է գալիս մեր բոլորը: — Եւ արձակեց ատրճանակը մթի մէջ: Այդ նոր վտանգը դեռ ոչ ոքի մտքով չէր անց կացել. Լիւսին զարհուրեցաւ մտածելով, թէ ինչ է սպասում նոցա: Հոգու հաստատութիւնը կարողութիւն էր տալիս իւրեան ձիւնի սպիտակ պատանքի տակ թաղուած մնալ, բայց նորա համար անտանելի էր մտածել, թէ այն վայրենի գազանը լրտեսում է իւրեան ինչպէս մի որսի, ու շուտով գուցէ իւր թաթերով բաց է անելու ձնեղէն յարկը և անբաղդ ճանապարհորդների միջից մի զոհ է ընտրելու: Փոքր առ փոքր սկսեց թուլանալ և վերջապէս ուշաթափ եղաւ:

Երբ ուշքը վրայ եկաւ, խոր գիշեր էր, և նորան թևերի վերայ տանում էր մի մարդ, որի դէմքը նա չէր կարող որոշել: Ձիւնը շարունակ գալիս էր ու քամին խփում էր երեսին. անշուշտ մրրկի այս խիստ համբոյրները նորան ուշաթափութիւնից հանեցին: Նա ոչինչ ցաւ չէր զգում, բայց մի տեսակ թմրութիւն էր եկել նորա վերայ, որ թոյլ չէր տալիս նորան խօսելու և իւր դրութեան մասին հարց ու փորձ անելու: Մի քանի րոպէից յետոյ նա զգաց որ գետնի վերայ դրին իրան, շատ մարդիկ նորա չորս բոլորքը ժողովուած կամաց խօսում էին: Նա բաց արաւ աչքերը և տեսաւ տիկին Մոր-

տօնին, որ նորա գիրկն ընկաւ։—Քեզ մեռած էի կարծում, սիրելիս, ասում էր բարեկամուհին, ջերմ համբոյրներ տալով։— Ստէվարտը Տիգրանն ու բոլոր կարավանի մարդիկը այնտեղ էին. փոքր ինչ հեռու, տեղական հագուստով մարդիկ խմբուած էին մի մեծ կրակի առաջ։ Աչքը շրջելով չորս կողմը, նա նկատեց քանդակագործուած գմբէթներ, կամարներ, սիւներ. այն տեղը, ուր գտնվում էին բոլորեքեանք, մի կիսաւեր վանք էր։

—Ի՞նչպէս եկանք մենք այստեղ, հարցրեց նա իւր հօրեղբօր որդուն։

Ստէվարտը պատմեց, որ Ջօրեպանը կրակել էր արջի վերայ ու չէր դիպցրել. և որ այս հանգամանքը շատ բարեբաղդ էր, որովհետև եթէ գազանը վիրաւորուած լինէր, կը յարձակուէր ճանապարհորդների ձիւնափոր ապաստանարանի վերայ, այն ինչ նա Պատրճանակի կրակուելու միայն ձայնը լսելով, իսկոյն փախաւ. իսկ միւս կողմից նոյն ձայնը բերել էր նոցա մօտ իւրեանց ազատողին։ — Ահա և նա, ասաց լէտէնանը, գնալով դէպի մի մարդ, որ կանգնած էր կրակի առաջ։ Օրիորդ Բլանդըմէրը ճանաչեց Սէլիմ-աղային։

Սա ծանր քայլով մօտեցաւ։ Տիկին Մօրտօնը վազեց դէպի նորան ու համարեա վիզը փաթաթուեց, գուշելով որ իւր կեանքի ազատողը նա է։ Քուրդը զարմացած մնաց երախտագիտութեան այդ ցոյցերը տեսնելով և իրան անհասկանալի լեզուով ասած խօսքերը լսելով։—Տիկիններն շնորհակալութիւն են անում, մեզ արած ծառայութեանդ համար, Աստուած բերաւ քեզ մեր ճանապարհի վերայ, ասաց Ստէվարտը պարսկերէն։

—Ամեն մարդու ճակատին գրուած է իւր գիրը, պատասխանեց աղան։ Ես աւելի գոհ պէտք է լինիմ իմ աստղից, որ ինձ այստեղ բերաւ, քան դուք ձերից, որ ինձ ձեզ հանդիպեցրեց, աւելացրեց նա աչքերը Լիւսիի վերայ բռնած։

Օրիորդը կամեցաւ ինքն ևս վեր կենալ իւր շնորհակալութիւնը յայտնելու համար, բայց չնայելով հօրեղբօր որդու օգնութեանը, չկարողացաւ ոտքի կանգնել։—Բերելուս ժամանակ խ ա թ ու ն ի ոտները ցրտից սառած պէտք է լինին, ասաց Սէլիմը։ Հարկաւոր է ոտները տրորել։—Տիկին Մօրտօնն շտապեց բարեկամուհու ոտները մերկացնել և տեսաւ որ նոքա սպիտակ, թմբրած ու մարմարինի նման սառն էին։ Ջիւնը բերին և բարեսիրտ տիկինը սկսեց շփշփել։ —Սառած ոտն այդպէս չեն շփիլ, ասաց քուրդը Ստէվարտին

ու մի շարժմունք արաւ, պառաւ անգլուհուն ցոյց տալու համար, թէ ինչպէս պէտք է այդ գործը կատարել. բայց մի միտք, որ յանկարծ նորա գլխից անց կացաւ, կանգնեցրեց նորան: Նա հասկացել էր, որ մի տղամարդու, մի անծանօթի օգնականութիւնը, ինչ հանգամանքում կուզէ լինէր, կարող էր նեղացնել օտարուհի ճանապարհորդին:—Արի այստեղ, Այշա, ասաց նա, դառնալով դէպի կրակի առաջ ժողովուած խումբը: Մի տասներկու տարեկան տղայ առաջ եկաւ: Սէլիմ աղան քրդերէն մի քանի խօսք ասաց նորան, և տղան չոքելով Լիւսիի մօտ, սկսեց տիկին Մորտոնի այնքան անյաջող կերպով սկսած գործը շարունակել: Մի քանի րոպէից յետոյ, օրիորդի ոտները սկսել էին կարմրագունուիլ և արիւնը շրջան էր անում. միայն նորան թոյլ չտուեին կրակին մօտենալու: Երբ օրիորդը փոքր ինչ բան կերաւ, երկու սիւնի միջովը մի կտաւ քաշեցին և երկու կինարմասները, այսքան յուզմունքներից յետոյ, վերջապէս գնացին հանգստանալու:

Տիգրանն ու լէյտէնանը այնուհետև հարցրին քրդին, թէ ինչպէս էր պատահել, որ այդպէս հարկաւոր ժամանակ նոցա ճանապարհի վերայ էր գտնուել:—Ես էս, պատասխանեց Սէլիմը, ձեզ պէս բռնուել էի թիփուց. միայն վաղուց էի ճանաչում այս վանքը ու այստեղ էի ապաւինել: Ինչպէս տեսնում ես, այս վանքը միայն հարիւր քայլ է հեռու ձեր մնացած տեղից. ձիւնն ու փոթորիկը ձեզ արգելք են եղել սորան գտնելու: Այստեղ հասնելով, գտայ մեր առաջը հաւաքուած այս գիւղացիներին, որոնք նոյնպէս վանքում կանգ էին առել մանր փայտով բեռնաւորուած իշաններովը, որ տանում էին Վրնիս ծախելու. մենք այդ փայտերից կրակ վառեցինք: Երբ քնելու վրայ էինք, մարդիկներից մինը, որ պահպան էր դրուած, եկաւ ինձ իմաց տալու, որ ատրճանակի ձայն է լսել: Մտածելով, որ կրակի ձայնը մի որ և իցէ մոլորուած ճանապարհորդի օգնութիւն կանչելու նշան կլինէր, գնացինք գտնելու: Ահա այս է բոլորը: Վաղը, եթէ մրրկի կատաղութիւնը պակասելու լինի, կերթամ իմ Սրդուրահմանլի գիւղս, որտեղից մարդիկ և այն բոլորը կբերեմ, ինչ որ հարկաւոր է, որ դուք կարողանաք ճանապարհ ընկնել. բայց ես յոյս ունիմ որ Էրզրումը երթալուց առաջ կգաք մի ժամանակ ինձ մօտ անց կացնելու: Որքան աղքատ էլ որ լինինք, դարձեալ կըկարողանաք իմ տանս գտնել ինչ որ հարկաւոր է լաւ հանգստանալու համար:—Ստէվարտն ու Տիգրանը շնորհակալութեամբ ըն-

դունեցին այդ հրաւէրը: Երբ առաւօտը զարթեցին, տեսան որ քուրդը նոցա մօտ չէ, լոյսը չծագած նա գնացել էր:

Արեգակի ճառագայթը ներս թափանցելով կտաւէ պատից, զարթեցրեց Լիւսիին: Արագ լուացուեցաւ սանտրուեցաւ ու եկաւ նստեց ընկերների հետ նախաճաշիկ անելու, որ նոյնպէս համեստ էր ինչպէս նախընթաց երեկոյի ընթրիքը: Նախաճաշիկն էր բաստուրմա, մածուն և չորացած ծիրան: Նախաճաշիկից յետոյ տիկին Մորտօնը բերել տուաւ այն երեւելի ձեռագործի տուփը, որ միւս բեռների հետ գտել էին ձիւնի տակ, և հանդարտութեամբ ձեռք զարկեց գործին: Տիգրանը յանձն առաւ՝ Լիւսիին ցոյց տալ վանքը: Յիշատակարանների մէջ այս վանքը երեւելի է և կառուցած է արդէն Սբ. Գրիգոր Լուսաւորչի ժամանակ. Թուրքերը Սարմաջիկի վանք են անուանել մի բաղեղի պատճառով, որ ծածկում է ճակատի քանդակագործութիւնները: Օրիորդ Բլանդըլմէրը ամենևին չէր հիանում, տեսնելով քարեայ երեք գմբէթները, վեհ կամարները, սրբերի պատկերները, որոնցով զարդարած էր հինաւուրց վանքը: Նա մտաբերում էր անցեալ օրուայ արկածքը, մտածում էր մահուան մասին, որ այնքան մօտիկ էր նորան ու այն անսպասելի ազատողի մասին, որ արհամարհելով ձիւնի մէջ թաղուելու կամ խաւարի մէջ մոլորուելու վտանգը, ազատել էր նորան ամենասարսափելի վտանգից: Ասում էին, որ դա մի աւազակ էր, բայց արեւելքի գաղափարները մեր գաղափարները չեն. բացի դորանից Լիւսիի ազգականները պարծենում էին, որ իրանց տոհմի մէջ շատ այդպիսի աւազակներ են ունեցել: Բլանդըլմէրները, որ միջին դարերում կողոպտում էին իւրեանց ամրոցից մօտիկ խրուած նաւերը, անշուշտ, աւելի նուազ խիղճ ունէին, քան Քուրդի-Լեւոն ասպետական աւազակը: Այն կալուածատէր նորմանները, ի հարկէ, չունէին այն նուրբ, վեհ բնութիւնը, զգացմունքների բարձրութիւնը, որ շատ անգամ ապացուցել էր ա[illegible]դուրահմանլին: Ի՞նչպէս պէտք էր երախտագէտ լինել այդպիսի մարդու արած ծառայութեանը: Օրիորդ Բլանդըլմէրը շատ տարակուսած էր:

Կէսօրին նա բարձեր բերել տուաւ եկեղեցու գաւթի տակ. երկինքն ստացել էր կրկին իւր լի պարզութիւնը: Արեգակը փայլում էր ձիւնի երեսին, որ հանդարտիկ էր այժմ, բայց որ երեկ երեկոյին երկրից երկինք էր պտըտեցնում իւր անշօշափելի կոհակները: Օրիորդ Բլանդըլմէրը երջանիկ էր, կրկին տեսնելով լոյսը. մի մեծ կո-

րստեան դռնից պրծնելիս մարդ զգում է առողջութեան արժէքը և կարծես, նորից ծնվում է քաղցր կեանքում ապրելու: Աչքը դէպի ամայի դաշտը տանելով՝ Լիւսին հեռուից ձիաւորների մի խումբ տեսաւ, որոնք գալիս էին հիւսիսային լեռների կողմից: Նոքա այնքան արագութեամբ էին յառաջանում, որքան ներում էր գետնին տարածուած թանձր ձիւնը: Սէլիմ-Աղան նոցա առաջն էր ընկել, բայց Լիւսին իսկոյն չճանաչեց նորան: Նա փոխել էր այն Թուրքի հագուստը, որ իւր վերայ ունէր դէպի Մէքկիօ արած արշաւանքի ժամանակ, ու կրկին երևում էր իւր ազգային պատերազմական փայլուն հանդերձով: Սպիտակներով փաթաթուած նեղ ու երկայն քիւլահը՝ կոնստանդնուպօլսի ֆէսի տեղն էր բռնում. կապուտ ֆստանը արծաթէ թելերի բանուածքներով պսպղում, ու քիլտի վերայ, որի նմանը Սկովտացիք էլ են ունենում, կախուած էին արծաթով զրուագուած մանր գործիքներ, որ Քրդերը գործ են ածում հրացանը լցնելու համար: Երկու հատ ատրճանակ խրուած էին մէջքին փաթաթած շալէ գօտու ծալքում. կողքից կախուած էր ապրեշումէ նեղ շերիտով այն հին թրերից մէկը, որոնց երկաթը համարեա թէ ուղիղ է, և որոնք այսօր շատ հազուագիւտ են: Եղջերուի նման թեթևադնաց թիւրքմէն ձին հազիւ թէ խրվում էր ձիւնի մէջ: Այս քուրդի գեղեցիկ դէմքը ազնիւ էր ու խելօք. շարժմունքը ցոյց էին տալիս նորա ջլոտ ու ճկուն զօրութիւնը, նա կարծես այն ընտելացած յովազների զօրութիւնն ունէր, որոնց հելլենական առասպելաբանութիւնը Հնդկային Բաքոսի ընկերակիցներին իբր երիվարներ էր տալիս: Ետևից գալիս էին երեսուն քուրդ ձիաւոր, գրեթէ նոյն ձևով հագնուած ու զինուած երկայն նիզակներով, որոնց ծայրերին ծածանում էին ապրեշումէ փունջեր: Ձմերային պայծառ օրուայ պսպղուն լոյսը ցոլանում էր թրերի ու նիզակների ողորկ պողպատի վերայ, և կրկին անդրադառնալով՝ բաժան բաժան ձևակերպվում էր ձիերի ոտներով վեր ցանուած փոքրիկ ծիրանի գօտիների ձիւնային փոշու մէջ:—Very beautiful indeed! գոչեց Ստէւարտը այդ երևոյթի վերայ, առանց իմանալու կրկնելով Ուէլլինգտըն դքսի երևելի բացագանչութիւնը:

Տիրուհի Մորտօնին զարթեցրին իւր կէսօրուայ քաղցր քնից. ճանապարհորդութեան պատրաստութիւնը շուտով տեսնուեցաւ, և նոքա ուղղուեցան դէպի Աբդուրահմանլի: Ճանապարհները լցուած էին մարդկերանցով. ղաթրջիները, որոնք թիփու երեսից արգելուել

էին գիւղերում, կրկին ընկել էին իւրեանց ճանապարհը, եւրոպացիները նորանց տեսան նստած փալանների վերայ, երգելով գեղեցիկ Դերիկոյի անգթութիւնների վէպը։ — Ես սիրում եմ Հայաստանը, ասաց Լիւսին էֆէնդուն, չնայելով նորա ձիւնին և երկար ձմեռներին. բայց, ինչ ուզում էք ասացէք, նա միշտ աղքատ կմնայ։

— Այդպէս մի՛ կարծէք. ընդհակառակն, նա հարուստ է. միայն այդ հարստութիւնը ապարդիւն է մնում։ Ցորենը, որ այժմ քնում է այս ձիւնի տակ, գարնանը այս բոլոր դաշտերը կըծածկէ այնպիսի հունձքով, որ բաւական է Եւրոպայի կէսը կերակրելու համար։ Որովհետև ճանապարհներ չկան, կարելի չէ ցորենը արտասահման ուղարկել, և այդ պատճառով նա փտում է հորերի մէջ։ Բայց հողը մեր ձեռքումն է, և մենք կպահպանենք նորան։ Հայերի համար ապագայի ամենալաւ գրաւականը դա է։

Նոցա կողքին լուռումունջ գնում էր Սէլիմ-Աղան։

— Ի՞նչ է տխրութեանդ պատճառը, հարցրեց նորան Լիւսին։ — Աբդուրահմանլին պատասխանեց նորան իւր սովորական ծանր ժպիտով։

Օ. Բլանդլըմէրը իւրեան յաղթած չհամարեց. սկսեց հարց ու փորձ անել աղային նորա ընտանեաց, նորա անցեալի և նորա ներկայ կեանքի մասին։ Սա վերջապէս սկսեց խօսիլ ու մի ճարտար պարզութեամբ նկարագրել նորան իւր թափառաշրջիկ կեցութեան վտանգներն ու զուարճութիւնները, ձմերային երկար պարապորդները՝ փակուած աներում, ոչխարի հօտերի ետևից արած ճանապարհորդութիւնները՝ տարուայ այն գեղեցիկ եղանակում, երբ նոցա ցեղը իւր վրանները տնկում էր Տաւրոսի անտուն տափարակի բոլոր լեռների վերայ. յետոյ թշնամի ցեղերի՝ թաբունների հետ արած կռիւները. գիշերային յարձակմունքները հեղեղատների ու անդունդների ափերի վերայ։ Պատմութեան ժամանակ, երբեմն երբեմն աչքերը անթարթ բռնում էր Լիւսիի վերայ, իւրեան մոռանում՝ նորա վերայ հիանում էր ու ձիավարում մի խորին երազացնորութեան մէջ ընկղմած։ Լիւսին պչրող (կօկէտ) չէր. բայց չէր կարող տեսնել աբդուրահմանլու սրտի բորբոքը, առանց մի ներքին զուարճութիւն զգալու։ — Ես կրակի հետ չեմ խաղում, մտածում էր նա։ Երեք օրից յետոյ միմեանցից շատ հեռու կլինինք։

Փոքր ինչ լռելուց յետոյ նա կրկին հարցրեց Սէլիմին նորա մտածմունքների պատճառը։ — Արդեօք դու վշտե՞ր ունիս, հարցրեց նա։

—Կարելի է, պատասխանեց Սէլիմը:

—Հոգ չէ. ես տեսնում եմ, որ վշտերը բոլոր կլիմաների հիւանդութիւն են: Բարեբախտաբար, աշխարհատես մարդիկն ասում են, որ վշտերն անբուժելի չեն:

Քուրդը նայեց նորան իր տխուր ժպիտով: Ընկերները փոքր յետ էին ընկել. նա հակուեց դէպի օր. Բլանդըմերը և, գրեթէ ականջում, ասաց նորան պարսկական երգի հետեւեալ տողերը:

—Ո՛վ Ֆէրիդուն, քո մտածմունքներդ տխուր են յուղարկաւոր լալականների նման։

—Քոյրիկ, օտարուհու խարտեաշ մազերը արևի ճառագայթներ են. ճառագայթները սիրտս են մտցել, ու ինձ կրակում են՝ այրում։

—Ո՛վ Ֆէրիդուն, մեր երկրի աղջիկները դեղ ունին այդ ցաւերի համար։

—Քո՛յրիկ, իմ քաշած ցաւս մոռացվում է միայն այն սգաւոր նոճիների տակ, որոնք քաղաքի դռների առաջն են բուսնում։

Օրիորդ Բլանդըմերը սաստիկ կարմրեցաւ:—Իմ մեղն է, մտածեց նա: Իմ հարցմունքներս անխոհեմ էին, և ես պէտք է այդ պատասխանը գուշակէի:—Այդ րոպէին Ստէվարտն ու Տիգրանը հասան նոցա, և Սէլիմը, խթելով ձիուն, հեռացաւ Լիւսիից: Նա Սէլիմին չէր մեղադրում. այդ խոստովանութիւնը, որ ինքն էր ակամայ գրգռել,—մի այնպիսի սրտաբեկ կերպով եղաւ, որ թոյլ չէր տալիս Սէլիմին յանդուգն համարելու: Մնացած ամբողջ օրը քուրդը հեռու մնաց օր. Բլանդըմերից. բայց սա չկարողացաւ դիմանալ, որ չմտածէր յաճախ այն պարսիկ բանաստեղծի մասին, որի համար «օտարուհու խարտեաշ մազերը արևի ճառագայթներ են»:

Տանջուած իւր սիրոյ անյաջողութիւններից ու իւր մտահոգութիւններից, Լէտէնանը չէր կարողացել առանց կրքի նշմարել հօրեղբօր աղջկայ ու աղայի երկար խօսակցութիւնը. Նա Սէլիմին իւրեան հակառակորդ չէր համարում. Նա կարող էր նախանձել իւր զօրաբաժնի վերջին աստիճանաւորին, բայց ոչ մի քրդի: Օրիորդ Բլանդըմերին մօտենալով, ասաց նորան անախորժ դէմքով:—Այն, ինչ որ դուք Սէլիմ աղային պատմում էիք, երևի մի շատ հետաքըքրաքան բան էր:

—Շատ հետաքըքրական, պատասխանեց համարեա թէ կոպտութեամբ Լիւսին, որին այդ հարցը դուր չեկաւ:

Խօսակցութիւնը այստեղ կանգնեց մինչև Աբդուրահմանի հասնելը:

III.

Աբդուրահմանլեանների գլխաւորը անկեղծ էր ասում, թէ «միայն գերեզմանումը կմոռացուի իւր քաշած ցաւը»: Նա Լիւսիին առաջին անգամ տեսնելիս շլացել էր: Լիւսիի գեղեցկութիւնը բոլորովին տարբեր լինելով Քրդստանի կանանց գեղեցկութիւնից, մեծ ներգործութիւն էր արել Սէլիմ աղայի վերայ, որ երբէք չէր կարծած, թէ աշխարհիս երեսին այդպիսի խարտեաշ մազեր գտնուին, այդպիսի զով այտեր, և այդպիսի վճիտ վառվռող կապոյտ աչեր: Երբ դէպքն այնպէս բերաւ, որ դա հանդիպեց այդ հրաշագեղ էակին, նա զգաց իսկոյն իւր սրտի մէջ սիրոյ անընդդիմադրելի բորբոքումն այնպէս, ինչպէս իւր աննուաճելի բնութեան բոլոր կրքերն էին: Նա միանգամայն գերի դարձաւ: Եթէ օրիորդ Բլանդըմերը մինչև անգամ իբրև գերի լինէր եկած իւր տունը և ոչ պատուասիրուած հիւր, այսու ամենայնիւ Սէլիմ աղան նորան դարձեալ արժանաւոր պատկառանք ցոյց կըտար. Նա խոստովանում էր մի գերագոյն էակի գերազանցութիւնը, որ տարբերվում էր այն բոլոր կանանցից, որոնց նա տեսել էր մինչև այն ժամանակ:

Նա հասկացաւ — թէև երբէք չէր կշռադատում իւր տպաւորութիւնները — որ դուրս էր մղուած իւր ծանօթ ճանապարհներից. հասկացաւ, և կորած զգաց ինքն իրան: Սա այն մարդու դրութեան մէջն էր ընկել, որ իւր օրումը ման եկած չլինի ծովափում, այլ միայն հաստատ գետնի վերայ, և յանկարծ տեղափոխուի երերուն աւազուտի մէջ: Այլ է եւրոպացին, որ այսպիսի դէպքում մաքառում, կռվում է նոյն իսկ անծանօթ ու գաղտնածածուկ վտանգների դէմ. արևելցին լռութեամբ է ընդունում իւր վիճակագիրը: Տանել վըշտերին ու համբերել — դա ճակատագրական ցեղերի նշանաբանն է: Երբ սիրտն իրան յայտնեց, որ սիրում է, երբ բնազդումն էլ միւս կողմից ասում էր նորան, որ անցք չունի յուսալու, այնուհետև նա ուրիշ հնար չգտաւ, բայց միայն թոյլ տալ, որ բախտի բերմունքը որոշէ դորա վախճանը: — Դեռ. սորան մի քանի ժամ, գուցե և մի քանի օր կտեսնեմ, մտածեց Սէլիմը: — Այսքանը եղաւ նորա մխիթարութիւնը, բայց թէ ինչ կարող էր պատահել նորա գնալուց յետոյ — դա ճակատագրի գործն էր և ոչ իւր: Մութ կերպով զգում էր, որ օրիորդը տակն ու վրայ էր արել իւր կեանքը, որ երբ նա այլ ևս մօտը չլինի, իւր սովորական կենցաղավարութիւնից ձեռք է քաշելու, բայց վերջնական որոշողութիւն անելու հոգսը գալիք ժամին էր թողնում:

Դեռ ես մութը չէր, երբ աղան ու իւր հիւրերը հասան Աբդուրահմանլի։ Մի խումբ կիսագետնափոր բնակութիւններ շարք շարք բարձրանում էին մի տեսակ հրուանդանի բաւականին սեպ զառիվայրի վերայ, որ երեք կողմից շրջապատուած էր սառած հեղեղատով։ Լայնատարած տներ թիկնած էին զառիվայրին, այնպէս որ աւելի բարձր գտնուած տների դռները բացվում էին աւելի ցածր գտնուածների տանիքների վերայ։ Շեմքը անցնելուց յետոյ, պէտք է իսկոյն մի քարէ սանդուղք իջնել՝ մասամբ ժայռի մէջ փորուած տան յատակին հասնելու համար։ Սոքա անփոփոխ մնացած նոյն «գետնափոր, պղնձեայ մեծ ամաններով լի բնակարաններն են, ուր լեռնականները իւրեանց անասուններով կենում են», որ նկարագրում էր, երկու հազար տարի առաջ կրտսեր Կիւրոսի վարձկան զօրքի գլխաւորը։

Յայտնի է, որ քրդերը միայն անունով են մահմեդական և նոցա կանայքը թիւրքուհիների պէս օտարականների առաջ երեսը չեն ծածկում։ Երբ եւրոպացիները աղայի տունը մտան, նոցա դիմաւորեց նորա քոյրը. սա մի ջահել, այրի մնացած կին էր։ Ինչպէս բոլոր աբդուրահմանլիները, որոնց թափառական կեանքի կէսը Պարսկաստանում, կէսը Թիւրքիայումն է անցնում, բաւականին լաւ պարսկերէն էր խօսում։ Օրիորդ Բլանդըրմէյրին սա փոքր ինչ հպարտ քաղաքավարութեամբ հիւրընկալեց. երեւում էր որ սովորած է տան մէջ հրամայելու և արևելքի կանանց երկչոտութեան հետքն անգամ չունէր։ Իրօք սա էր ցեղի գործերը վարում և սա էր ներշնչում փոքրիկ հասարակապետութեան որոշումները, որի նախագահը աղան էր։

Սա ներկայացրեց օրիորդ Բլանդըլմէյրին իւր մատաղահաս աղջկան, որ բնութեան մի զարմանալի բացառութեամբ, մի հիւսիսային կնոջ պէս խարտեաշ էր։ Լիւսին անունը հարցրեց։ — Ինձ Փրանջիկ են ասում (փոքր Ֆրանկ), պատասխանեց երեխան։ Այդ անունը ինձ տուել են մազերիս գոյնի պատճառով, որ նման են քո մազերին, աւելացրեց նա համբուրելով օրիորդ Բլանդըլմէյրի ուսերի վերայ ծածանուող ծամերը։

Իրիկնահացը շատ ճոխ եղաւ։ Երկրի սովորութեան համաձայն պատրաստուած մի ոչխար բերին, շամփուրներով խորոված, գեր հաւեր, որ հազուագիւտ բան է Թիւրքիայում, պահուեալ մրգեր և քանի մի տեսակ սեր։ Ճաշի ժամանակ մի ծեր երգիչ, որ իւր ցեղի բանաստեղծն ու կախարդն էր միանգամայն, երգում էր աբդուրահման-

լեների երեք լեզուով՝ քրդերէն, թուրքերէն և պարսկերէն: Հոմերոսի պէս դա էլ էր կոյր, և ձեռքում ունէր երեք լարանի մի գործիք. լարերը մետաղից էին և պինդ քարշած մի փայտէ տախտակի վերայ: Հելլենական բանաստեղծութեան Հայր Թափառաշրջիկ երգիչների քնարները սորանից աւելի բաղադրուած և աւելի դաշնակաւոր եղած պիտի չլինէին: Երբ վերկացան սեղանից, կամ աւելի ճիշդն ասելով, անագած մեծաբոլոր սինիից, ծերունին վայր դրեց կիթառը, վեր առաւ նէյը, որ մի անուշ ու տխրաձայն սրինգ է և ածեց այն եղանակի յառաջաբանութիւնը, որով սկսվում է Ֆէրիդունի վիշտ [1]) պարսկական երգը: Աղան յանկարծ ընդհատեց նորան, ասելով—հերիք է այդ տխուր երաժշտութիւնը — և երեկուայ բոլոր մնացորդ ժամանակը ընկղմուած երևեցաւ խոր մտածութեան մէջ և աւելի քան երբէք մտահոգ:

Սէլիմի քոյրը երկու օտարուհիներին տարաւ մօտակայ տունը, որ պատրաստուած էր նոցա ընդունելու համար:—Աղջիկս այստեղ կըմնայ, ասաց նա, գիշերը ձեզ հետ անցկացնելու:— Ննջարանը մեծ էր, շատ մաքուր և պայծառացած մի գեղեցիկ բոցավառ կրակի լուսով: Տախտի վերայ փռուած էին անկողիններ, որոնք ծածկուած էին հաստ ու ձող-ձող գոյնանի վերմակներով: Ամենից առաջ պառկեցաւ քնատար տիրուհի Մօրտօնը: Պառաւը շատ գոհ մնաց, քրդերի նիւթապէս ապրելու պայմանները լաւ հասկանալուն համար, և ասաց, թէ երկար ժամանակ էր, ինչ որ այդպէս լաւ անկողնի չէր հանդիպած: Հինգ րոպէ անցած չանցած, նա արդէն խոր քնի մէջ էր ընկղմուած: Լիւսին հանուեցաւ, բայց չէր երևում, որ շտապելիս լինի դէպի երազների գաւառը, նա երկար արթուն մնաց, խօսելով Ֆրանջիկի հետ: Յանկարծական գթով շարժուած, գրաւուել էր փոքրիկ քրդուհուց, որ իւր նման խարտեաշ էր և որին տեսնելիս կարծում էր, թէ իւր հայրենակից մէկին է տեսնում: Ֆրանջիկը իւր մօր խստաբարոյ յատկութիւնից ազատ էր մնացել. նոյն իսկ սկզբից քնքշութիւն և մտերմութիւն ցոյց տուաւ գեղեցիկ անգլուհուն:

Ֆրանջիկը շատ նման էր Սէլիմ աղային, նոյն սեաւ, անուշ

---

[1]) Ֆէրիդունը շատ հնուց պարսիկների դիւցազնական բանաստեղծութիւնների առարկայ հերոսն է: Երգահանները մինչև այսօր ևս յօժարութեամբ նորա արկածքները վերցնում են իրանց վէպերին նիւթ.

ու կրակոտ աչքերն էին, նոյն կրքոտ, բայց արտաքապէս սանձուած թերթեւունքները, նոյն միջահատուող մելամաղձութեան երեւոյթները. և օրիորդ Բլանդըլմերը դժգոհ չէր այդ նմանութեամբ: Աբդուրահմանլեի գլխաւորի անունը ստէպ երեխայի շրթունքների վերայ էին:

—Արդէն սիրում է նորան, կամ թէ շուտով սիրելու է, մտածում էր Լիւսին: Եւ Լիւսին գուցէ չէր խաբվում: Ֆրանջիկը շատ դեռահաս էր, բայց Հայաստանի կարճ ու արեւակէզ ամառները շուտ են հասցնում աղջիկներին, ուստի և ձմեռուայ գեղեցիկ առաւօտները, երբ Սէլիմ աղայի քրոջ աղջիկը ընդհատում էր իւր գործուածքը, որ նայէ հորիզոնում վազող ամպերի վերայ, նորա աչքերի մէջ նկատվում էր մի անհանգիստ մտածմունքի արտայայտութիւն, որ ինչպէս երեւում էր, մանկական բան չէր:

Օրիորդ Բլանդըլմերը հարցրեց նորան միանգամ, թէ ինչո՞ւ աչքերը ներկում էր այն սեւ գեղով, որին սիւրմէ են ասում:

—Մենք լեռնականներս, պատասխանել էր Ֆրանջիկ, ստիպուած ենք մեր կոպերը այսպէս ներկել: Սա ոչ թէ գեղեցիկ երեւալու համար է, այլ ահա այս սեւ գիծը, որ տեսնում էք, պահպանում է մեր աչքերը ձիւնի արձակած ճառագայթների փայլելուց: — Միայն միւս առաւօտը, երբ եկաւ Լիւսիին տեսնելու, սիւրմէի հետք չէր երեւում աչքերի վերայ. չգիտեմ ինչպէս էր հանել, ըստ որում ասում են շատ դժուար է հանվում այդ ներկը:

Այդ օրը Սէլիմ աղան ցոյց տուաւ գիւղը իւր հիւրերին: Աբդուրահմանլիները համեմատաբար սակաւաթիւ են, բայց բնականին հարուստ են, մինչև անգամ աւելի հարուստ, քան թէ Հայդէրանլիները, որոնց մէկ հատուածն են իրանք: Բոլոր տները համարեա լայնարձակ էին և չոր ու տաք: Պղնձէ ամանեղէնները, որոնցով լիքն էին տները, մաքրութիւնից փայլփլում էին: Մեծ մեծ գոմերը անասունների ձմեռնային ապաստանարաններն էին. այդ տեղ կային մանր ու նիհար եզներ, մեծադմակ հիանալի ոչխարներ, մինչև գետին քարշ ընկած երկար մազերով այծեր: Անասունների հօտի պահապաններն էին փորերը ներս ընկած և երկայնատրունք սոսկալի շները, որոնք սովոր էին արջերի հետ կռուելու և մի խածելով գայլ խեղդելու: Ոչխարագոմից դուրս էին գալիս աղջիկները՝ մազերի հիւսերը թիկունքներին փռուած և ձեռքներին բռնած փայլուն պղնձներ՝ լիքը փրփուր կաթնով. փոքր ինչ վայրենի կերպով անցնում էին օտարականների մօտից և մի վախկոտ ակնարկ ձգում նոցա վերայ:

Ուր որ գնացին այդ օրը, ամենի բերանից Սէլիմի անունը լսեցին։ Մի աղա չի կարող պահանջել քրդերից ոչ այն փոքր ինչ ստրկական հնազանդութիւնը և ոչ կոյր հպատակութիւնը, որով կատարվում են արևելցիների մէջ մեծերի հրամանները։ Ցեղի գլխաւորի իշխանութիւնը հիմնուած է ոչ այնքան նորա ծագումից թելադրուած պատկառանքի վերայ, որքան նորա քաջութեան, ճարպիկութեան և առհասարակ նորա անձնական արժանաւորութեան վերայ։ Աղաները այնպէս են լեռնայինների մէջ, ինչպէս էին միջին դարում իտալական քաղաքագլուխները, որոնց իշխանութիւնը շատ անգամ ժառանգական էր։ Սէլիմը ժառանգում էր բարձր աստիճանի ժողովրդի առաքինութիւններն ու թերութիւնները, օրինաւոր, ասպետական, խելացի ու լաւ մարդ էր, բայց նոյնպէս էլ սընապաշտ և շտապող վրէժխնդրութեան։ Դէպքը բերած ժամանակը ահարկու դատաւոր էր։ Մի հայ գիւղացի անցորդ Աբդուլրահմանլիում պատմեց Տիգրանին հետևեալ պատմութիւնը։ Ղարա-Աղաջ գիւղի ղադին ծեծում ու կողոպտում է մի դաշտեցի աղքատ քրիստոնեայ գիւղացու, որի յանցանքը այն է լինում, որ պաշտպանած է լինում իւր կնոջը մի զինուորականի ամօթալի անպատուութիւնից։ Սէլիմ աղան այդ միջոցին յետ գալիս է լինում այդ տեղով մի արշաւանքից, որ արել էր իւր մշտնջենական թշնամի Մէկքիոյի գլխաւորի դէմ։ Գիւղացին գալիս է գանգատվում դորան։ Աղան իւր ինքնագլուխ իշխանութեամբ մի համառօտ հարց ու փորձ է անում, բռնում է ղադուն իւր տան մէջ, կտրել է տալիս գլուխը, իսկ գիւղացուն առատ բաժին է տալիս ռայիայից ձեռք բերած աւարից։ Իշխանութիւնը զանազան պատճառներով, որ երկար կը լինի բացատրելը, անմիջապէս վրէժխնդիր չի լինում ղադու մահուան համար, և Աբդուլրահմանլիների գլխաւորը այդ օրից սկսած մեծ համբաւ է ստանում երկրի մէջ, որպէս տկարների պաշտպանող և յանցաւորութիւններն ուղղող։

Սէլիմը երջանիկ էր օրիորդ Բլանդըմէրին իւր գեղջկական ճոխութիւնը ցոյց տալու ժամանակ, բայց ոչ մի այնպիսի բառ չարտասանեց, որ անցեալ օրուայ խոստովանած զգացմունքները յիշեցնէր։ Գոհ մնաց, նայելով Լիւսիին, երկար զմայլելով, երբ նա իւր առջևովն էր քայլում, հասակի նրբութեան ու գնացքի շնորհալիութեան վերայ։ Օրիորդ Բլանդըմէրն էլ իւր վերայ զգաց վերջապէս այն համակրական ձգողութիւնը, որ քուրդը ներգործել էր

ամենի վերայ. ախորժանքով էր լսում նորա խօսքերը և պատասխանելիս իւր ձայնին մի անուշ գգուանքի եղանակ էր տալիս:

Օրիորդ Բլանդըմէրի երկու ընկերակիցները այնքան լաւ աչքով չէին նայում Սէլիմ-Աղային: Հայն իրան կապկպուած էր համարում մի աշխարհակալ, իւր ազգակիցներին միշտ նուաճող ցեղի գլխաւորի դիմաց: Մի ռայա, ինչ էլ որ լինի, ատում է մուսուլմանին: Միւս կողմանէ, թէև ամենքը քաղաքավարութեամբ էին վարվում Տիգրանի հետ, բայց յայտնի տեսնվում էր, որ նորա քրիստոնեայ էֆէնդի լինելը դուր չէր գալիս քրչերին, որոնց կարծիքները ազգութեան գերաղանցութեան մասին, նոյն իսկ լռելեայն, վիրաւորիչ էին: Սակայն երկու ճանապարհորդներից աւելի դժբաղդը անկասկած Ստէվարտ Լիճտէնանն էր: Քրդի հետ ծանօթանալուց յետոյ աստիճանաւորը զգում էր ինքն իրան իւր հօրեղբօր աղջկայ սրտից հեռու ձգուած: Բոլոր ճանապարհը իւր համար խաբուածութիւնների մի շարք էր եղել և դժբաղդութեան լրումն այն էր, որ չէր կարող ծածկել իրանից այն համակրութեան նմանող մասնաւոր ուշադրութիւնը, որ Լիւսին շնորհում էր հիւրնկալին: Այսպիսի զգացմունքով լցուած՝ Ստէվարտը խիստ բան էր համարում Արզուրահմանլուն շնորհապարտ մնալը: Եթէ հաւատացած լինէր, որ երկու հազար լիրա հատուցանելով, կարող էր իւր երախտագիտութեան տուրքից ազատուել, մեծ ուրախութեամբ կըհանէր քսակը գրպանից:

Երեկոյին մի կողմ քաշեց Լիւսիին ու հարցրեց, թէ արդեօք նա ե՞րբ է արժան համարում, որ երթան այդ տեղից: — Շատ էք շտապում, պատասխանեց Լիւսին: Բաւականին շնորհապարտ ենք աղային ու նորա ընկերներին, որ մի քանի օր էլ մօտերը մնալով պատուենք իրանց:

— Քիչ է մնում, որ կարծիք տանեմ, թէ դուք մի պատճառ ունիք երևի ձեր օրերն այստեղ երկարացնելու:

— Ի՞նչ էք ուզում ասել:

— Ասել եմ ուզում, թէ այդ մարդը եթէ քուրդ չըլինէր, կարելի կըլինէր կարծել, որ համարձակում է ձեզ սիրել, և դուք չէք վարվում այնպէս, որ դորա խելքը գլուխը բերէք:

Հազիւ այս խօսքերն արտասանեց Լիճտէնանը, որ բոլոր սրտով զղջաց ասածի վերայ. բայց ասածը լսած էր արդէն: Օրիորդ Բլանդըմէրը այնքան անպատուած համարեց իրան, որքան ինքն իրան

բոլորովին անմեղ չէր գտնում:—Եթէ մինչև անգամ այդպէս էլ լինէր, ինչպէս դուք էք կարծում, ասաց նա, ես դարձեալ չեմ իմանում, թէ ի՞նչն է արտօնութիւն տալիս ձեզ ինձանից հաշիւ պահանջելու: Ես ոչ ոքի հետ կապ չունիմ և ինքս եմ իմ գլխի տէրը:— Նա վեր կացաւ իսկոյն և զայրացած դուրս գնաց սենեակից:

Արդէն բաւականին մութն էր: Երբ յետ դարձան տուն, տիկին Մօրտօնն արդէն անկողին մտած ու քնած էր: Լիւսին նստաւ կրակարանի դիմաց: Ստէվարտը խոցել էր նորա սիրտը:—Ես նորան իրաւունք չեմ տուած նախանձելու իմ վերայ, ասում էր օրիորդն ինքն իրան: Յետոյ ինչո՞ւ է արհամարհանքով խօսում Սէլիմի վերայ: Լիւսին խոստովանելու էր ինքն իրան, որ անտարբեր չէր մնացել քրդի հրապուրանքներին, ինչպէս ասում էր իւր հօրեղբօր որդին և թէ Ստէվարտի այդ արհամարհանքի մի մասն էլ իրան էր դիպչում:

Մինչ դեռ Լիւսին տխրութեամբ նայում էր ցախերի խուրձից վեր վազող կրակի ալիքներին, դուռը բացուեցաւ. Ներս եկողը Ֆրանջիկն էր: Սա տեսնելով, որ Լիւսին խոր մտածմունքի մէջ թաղուած է, չըկամեցաւ նորան խանգարել: Նստաւ օրիորդի ոտքի տակին և լուռ ու մունջ սպասեց, մինչև Լիւսին իմացաւ նորա ներկայութիւնը:—Դու այստե՞ղ ես եղել, ասաց օրիորդը Ֆրանջիկին:—Լիւսին թեթևացաւ, մատաղ քրդուհուն իւր մօտ տեսնելով: Երեխան հանում էր նորան իւր առանձնութիւնից. տժգոհ իրանից և ուրիշներից, օրիորդ Բլանդըմէրին տաժանելի էր թվում այդ առանձնութիւնը, որի մէջ մղուած էր իւր տխուր մտածմունքներով:

Մի սքանչելի արարած էր Ֆրանջիկը, անուշ, գորովալից ու երկչոտ, զարմացնում էր բիրտ լեռնականներին, որոնց մէջ նա ծնել էր բախտի բերմամբ: Ստէպ ստէպ հազում էր, և հարցնում էին, թէ նորա մատղաշ կուրծքը ինչպէս կարող էր ծծել սարի խիստ օդը: Դեռ աւելի փոքրութեան ժամանակն էլ չէր մասնակցում իւր հասակակից երեխաների աղմկագոչ խաղերին, իսկ հիմա չէին կարողանում գուշակել, թէ նա ի՞նչ էր մտածում արդեօք երկար ժամերով նստած մի ժայռի վերայ, մտախոհ աչքով դիտելով սարերի գագաթների ոլորմոլոր եզերքները, որոնք հանում էին երկնքի մօտ որպէս ան-անհունութեան ափունքը կազմելով:

Գլուխը դրեց Լիւսիի ծնկներին և երկուսով սկսան խօսել: Այդպէս անցկացրին գիշերուայ մեծ մասը: Ֆրանջիկը, որին իւր մայրը

չէր փայփայում երբէք, համարելով նորան փոքր ինչ խենդամիտ, անասելի հաճոյք էր գտնում այդ խօսակցութիւնների մէջ: Նա չէր կարող իւր մասին շատ տեղեկութիւններ տալ իւր նոր բարեկամուհուն, ըստ որում դեռ անգէտ էր այդ կողմնէ, միայն սիրտը լցուած էր և հարկաւոր էր բաց անել: Երբէք հեռացած չլինելով իւր լեռներից, չճանաչելով անգամ մերձակայ քաղաքները, չէր կարող գանգատուել ճակատագրից և ոչ աւելի լաւին բաղձալ, միակ իւր քեռին էր այն էակը, որին արդարև սիրում էր, և բնազդմամբ իմանում էր, թէ կան ուրիշ տեղերում աւելի քաղցր երկիրներ, քան թէ իւր ծննդավայրի երկիրն է: Կը ցանկար անշուշտ Լիւսիի հետ գնալ, և սաստիկ տրտմում էր, մտածելով, որ շուտով բաժանուելու է նորանից: Յետոյ խօսում էր քեռու մասին, թէ նա ինչքան ուզում և սիրում էր իրան. երբէք չէր ասել նորան, թէ ջաղուները (կախարդները) վիճակ են ձգել փոքրիկ Փրանկի վերայ: Վերջապէս սկսաւ լաց լինել հեկեկալով: Լիւսին հարցրեց լացի պատճառը, բայց Ֆրանջիկը չըկարողացաւ ասել, որովհետև ինքն էլ չգիտէր: Օրիորդ Բլանդըմէրը պարկեցրեց նորան իւր մօտ անկողնի վերայ և աշխատեց հանգստացնել. նորա սիրտը, քիչ քիչ ցամաքեցան Ֆրանջիկի արտասուքները և քուն մտաւ իւր բարեկամուհու գրկի մէջ երեխայի նման:

Այդ րոպէին օրիորդ Բլանդըմէրին թւում էր, թէ բախտ բաժանողը սխալուել է իրան վիճակ տալու ժամանակ, ինչպէս վատ էր ընտրել նաև Ֆրանջիկինը: Ինքը շատ սիրով կըկարողանար ապրել այդ վայրենի գաւառի մէջ, որի վսեմ ու խիստ հորիզոններն ու սաստիկ հակադրութիւնները մոգում էին նորա եռանդոտ ու միանգամայն լուրջ բնաւորութեան ցնորքները: Նա մտածում էր, թէ ինքը կըկարողանայ գտնել այդտեղ ներքին բազմաթիւ հաճոյքներ, որոնք մի աւելի քաղաքակրթուած շրջանում զուցէ թէ պակասէին իրանից: Գալով հովուական կեանքի պարզութեանը, որ կարող էր մի այլ եւրոպացուհու զարհուրեցնել, ինքն առանց ցաւելու կընդելանար նորան:

Տեսաւ, որ քունը չի տանում, վեր առաւ Թարէքից Նարգիլէն որ յատկապէս իւր համար էր պատրաստուած: Նարգիլէի թամբաքին մի անուշահոտ խոտ է, չունի մեր ծխախոտի դառնութիւնը. դա շատ դուր է գալիս Արևելքում բնակող կանանց, նոյն իսկ Փրանկուհիներին, և Լիւսին Դաւրէժում սովորութիւն էր արել

ծխելը: Միայն այդ թամբաքուի տերևները գլխապտուածաբար խառն էին փոքր ինչ ափիոնով: Այնքան չկար թէև, որ բոլորովին հարբեցնէր օրիորդին, բայց որքան էլ որ տկար լինէր, չէր կարող անհետ անցնիլ: Դորա թմրեցուցիչ ներգործութեան տակ օրիորդի մտքերն սկսան մի տեսակ ազատութիւն ու թեթևութիւն ստանալ, ու թռան, վերացան դէպի ցնորքների աշխարհքը: Աչքերն անթարթ լարած դէպի առաստաղի գերանների նուրբ կորուածքները, որոնք կիսաբորբոք կրակի վերջին նշոյլներով ոսկեզօծուած էին, սկսաւ արթնութեան մէջ մի երազ տեսնել, որ քնի մէջ տեսած երազներից աւելի արկածալից էր: Նա երևակայում էր, որ ինքը նոյն բնակարանի տիրուհին էր, որ իւր կեանքը այնուհետև պիտի անցնէր այն գետնափոր մեծ բնակարանների, ձմեռնային աշխատանքների ու ամառնային երկար ամիսների թափառաշրջիկ հովուականութեան մէջ: Իւր հայրենակից տիկին Էսթէր Ստանհօփի նման ինքն էլ այն ցեղերի թագուհին կլինէր: Ֆրանջիկն իրան աղջիկ կդառնար, և նա որ իւր ազատարարն էր եղել, շնորհակալ պիտի լինէր իրանից, որ ինքն էլ իւր կողմից ազատելու էր նորան այն ցաւից, որի դէմ նոյն երկրի աղջիկներն ամենևին դեղ չունէին: Այս վերացական մտքերը այնպէս էին յաջորդում միմեանց, ինչպէս դանդաղաճօճ ու փրփրած ալիքները մէկ մէկի յետևից ափերին զարկուելով խորտակվում էն ու անհետ կորչում:

Կրակն արդէն հանգչելու վերայ էր. Լիւսին վեր կացաւ որ սաստկացնէ, բայց զգաց, որ գլուխը ծանրացել է: — Սենեակումս օդ չկայ, ասաց ինքն իրան: — Գնաց դուռը բաց արաւ: Լուռ գիշերի մէջ լսվում էր պահապան շների հաչոցը, որոնք վազվզում էին ոչխարագոմի չորս կողմով: Լիւսին տեսնում էր ձմեռուայ հեզ տեսարանը որպէս մի ամպի միջով, միայն մանր և փոքր ինչ աղօտ աստղերը կարծես սովորականից աւելի քաղցր մթնոլորտի մէջ էին փայլփլում: Լուսնեակի լուսով նշմարեց մի ստուեր, որ շրջում էր ձիւնի մէջ բարձր դռների վերայ. կարծեց թէ Սէլիմ-Աղան էր: Եւ յիրաւի նա էր: Օտարուհուն ճանաչելուց յետոյ Սէլիմը երկու ժամ քուն չունէր: Մօտենալով Լիւսիի բնակարանին, կամենում էր հեռացնել միտքը իրան սաստիկ գրաւող մտատանջութիւններից: Նա տեսաւ օրիորդ Բլանդըլմէրին, որ ուրուականի նման թիկնած էր դրան երկու կողմը գտնուող սիւներից մէկի վերայ: Քուրդը չէր կարող ենթադրել, որ նա նոյն ինքն լինէր, որին գտնում էր այնտեղ, դուրսը,

այդ ժամին։ Նա առաջ կարծեց, որ իւր ցեղի նախապապերից մէկը գերեզմանից վեր է կացել եկել, որ դարձեալ տեսնէ այն տեղերը, ուր անց էր կացրել իւր երիտասարդութեան օրերը։ Ուրուականի պատահիլը կենդանի մարդու համար մերձաւոր մահուան նշան է, այսու ամենայնիւ այս երեւոյթը չսարսափեցրեց Սէլիմին. Նորան թւում էր, թէ այդ անդրագերեզմանական պատգամաւորը եկել է, որ աւետէ նորան իւր համար անտանելի դարձած տանջանքի վախճանը։ Սէլիմը կանգ առաւ և սպասեց։ Աղջկի անակնկալ ներկայութիւնը Լիւսիի համար իւր երազի շարունակութիւնն էր. նա թողեց սիւնը, գիշերաշրջիկի պէս անցաւ փոքր փողոցից և գնաց ուղիղ դէպի նա։ Լուսնեակի լուսով Սէլիմը որոշեց ճանապարհորդ կինարմատի կերպարանքը, բայց այդ կերպարանքը այնքան օտարոտի երևաց իրան, որ այդպէս բան երբէք չէր տեսել։ Աղջիկը ձեռքը գլուխը տարաւ և դողդողաց. մէկ թռչելով հասաւ քուրդը և նորան իւր թևերի մէջ առաւ։ Զգալով նիտասարդ աղջկայ սրտի տրոփիւնը իւր կուրծքի վերայ, քուրդն աւելի սոսկաց, որքան չէր սոսկացել մի ուրուի հետ դէմ ու դէմ խօսելիս։ Քրդերին յայտնի ծանօթ բան է, որ մեռելները սիրում են դուրս գալ գերեզմանի նեղ բանտից, բայց այդ կենդանի հոգու կոչումը, Լիւսիի նման մի մեծարելի, ազնիւ ու ցրտասարսուռ Ֆրանկուհու կոչումը—ահա դա մի հրաշք է, որ վեր է ամենաջերմ սիրոյ կարողութիւնից։ Միւս կողմից այն ահագին խոշորացած աչքերը, օտարուհու կուրծքը բաբախեցնող այն սոսկումները ցոյց էին տալիս, որ նա ենթարկուել է մի անբացատրելի ու խորհրդաւոր ներգործութեան։ Նա լուռ էր և ճակատը կռթնեցնում էր աբդուրահմանլու ուսի վերայ։ Սէլիմը վայր ծռեց գլուխը դէպի նորան, և, դուցէ առանց իսկ իւր ուզելուն, շրթունքները համբուրեցին Բլանդըմէր օրիորդի դժգոյն այտը։ Սոսկաց նա այդ շօշափումից. նոյն իսկ ժամին մի պաղ քամի փչեց գիւղի վերայով, այն պաղ պաղ քամիներից, որոնք յագեցած են ձիւների խոնաւութեամբ։ Լիւսին արթնացաւ. պաղ հովը փոքր առ փոքր զովացրեց նորա ճակատը և հանդարտեցրեց ջղային յուզմունքը, որ յառաջացել էր ափիոնից։ Զարհուրեցաւ օրիորդը, ինքն իրան գտանելով քրդի գրկում, և հրեց նորան սաստկութեամբ։ Բոլոր անցածի յիշատակը միտքը բերեց, բայց դեռ չէր հասկանում, թէ կրակարանի մօտ սկսուած տարտամ ցնորքները ինչպէս էին բերել նորան մինչև այդտեղ։ Նա մի քանի րոպէ կանգնած մնաց Սէլիմի

դէմ, առանց խօսելու, յետոյ ասաց նորան.—Ես քեզ շատ զարմանալի եմ երեւում. ես ինքս էլ եմ զարմանում այստեղ լինելուս համար: Սենեակիս օդի սաստիկ տաքութիւնը ինձ նեղացրեց, ուզեցի մի րոպէ դրսումը շունչ քաշել, բայց ցուրտն ինձ առաւ. ես ուշաթափ կընկնէի ձիւնի մէջ, եթէ դուք այստեղ հանդիպած չը լինէիք ինձ օգնութիւն հասնելու: Հիմա լաւ եմ:

Լիսին եկաւ տուն մտաւ: Երբ դուռը հետ դրուեցաւ, նա յուզուած զգաց ինքն իրան, մի մեծ վտանգից նոր ազատուած մարդու նման:—Ա՛հ, ասաց նա կամացուկ, անցնելով իւր պառաւ ընկերուհու առջեւից,—չըգիտես դու, թէ ի՛նչ յիմարի ես մեծացրել:— Սենեակի օդը լիքն էր տարօրինակ շողիներով, որոնք թամբաքուի շոգիներից աւելի ազդու էին: Լիսին ճանաչեց ափիոնի յատկական հոտը և բոլոր անցքը պարզուեցաւ իրան: Կրակն արծարծեց և մի րոպէաչափ բաց արաւ թղթէ դռնակը, որ լուսամուտի տեղ էր բռնում:

Օրիորդ Բլանդըմերը երեկոյեան անցքի մանրամասնութիւնքը մտաբերելով, խիստ կերպով դատեց ինքն իրան: Մեղադրեց իրան իւր անխոհեմ ցնորքների համար, անգութ դատաւ ինքն իրան քրդի սիրոյ և իւր հօրեղբօր որդու բարեսրտութեան հետ խաղալուն համար: Թափառական կեանքի դէպքը, որ մի րոպէ իրան խելքից հանել էր, աչքին ատելի ու այլանդակ երեւեցաւ, ո՞վ գիտէ մինչեւ ուր կըտանէր նորան, եթէ նարգիլէի մէջ եղած ափիոնը փոքր ինչ աւելի լինէր, եթէ ձմեռնային քամու շունչը չըցրուէր նորա հարբեցութիւնը: Նա այլ եւս ուրիշ բան չէր մտածում, այլ միայն շուտով հեռանալ քրդի գիւղից, ինչպէս հեռանում են անդունդի եզերքից:

Ֆրանջիկը հանգիստ քնած էր, բայց մի արտասուքի կաթիլ կախուած էր նորա աչքի արտեւանունքի վերայ, Լիսին մի համբուրով ցամաքեցրեց այդ արտասուքը. յետոյ՝ չոքելով նորա անկողնու մօտ, կատարեց իւր երեկոյեան աղօթքը: Աղօթքի մէջ բարեմաղթութիւն էր անում իւր փոքրիկ ընկերուհու համար, որից շուտով բաժանուելու էր, և որ այսուհետեւ մենակ մնացած, ընկնելու էր ճակատագրի քմահաճութիւնների ձեռքը, որ խաղ է անում մարդկանց կեանքի հետ այնպէս, ինչպէս քամին վայր ընկած տերեւների հետ: Աղօթքը վերջացնելով, պառկեց Ֆրանջիկի մօտ. Նոցա ոսկեթել մազերը իրար հետ խառնուեցան բարձի վերայ, և սենեակի մէջ ուրիշ այլ ոչի՛նչ չըլսուեցաւ, բայց եթէ կրակարանի մոխրի մէջ ծածկուած ճպուռի ճռճռոցը:

IV.

Միւս առաւօտը, երբ Բլանդըմէրը հանդիպեցաւ Ստէվարտին, մեկնեց նորան իւր ձեռքը։— Ներեցէ՛ք ինձ, ասաց օրիորդը, ես անիրաւացի վարուեցայ ձեզ հետ, և շատ ափսոսում եմ։ Ես վատ բնաւորութիւն ունիմ, կաշխատեմ, որ ապագայում դուք սակաւ նըշմարէք այդ։ Այլ ևս չենք խօսիլ այս բանի մասին, այնպէս չէ՞։ Եւ ահա առաջին բաւականութիւնը ձեզ տալու համար, ճանապարհ ընկնինք վաղը։

Աբդուրահմանլուց Էրզուրում, կարավանով, երկու օրուայ ճանապարհ է, բայց յատկապէս այս ճանապարհորդութեան համար ընտրած ձիաները, որ դիմացկուն անասուններ էին, հանգստացել էին և կարելի էր առանց մեծ դժուարութեան այս տարածութիւնը մէկ օրում անցնել։ Վճռուեցաւ որ միւս օրը, արեգակը ծագելուց առաջ, ճանապարհ ընկնին։ Լիւսին յանձն առաւ այս որոշումը Սէլիմին յայտնել։— Իմ հօրեղբօր որդին, ասաց նա, ստիպուած է շուտով Եւրոպա վերադառնալ։ Ես ևս կարծում եմ լաւ չէր անիլ, եթէ աւելի երկար մնայի այսպիսի ցուրտ երկրում ինչպիսի է Հայաստանը։ Ինքներդ կարող էիք տեսնել որ ես տկար էի, ես վախենում եմ որ եթէ երեկուայ ջղային հիւանդութիւնս կրկնուի, դա վատ հետևանքներ կունենայ։

Քուրդը որ չէր սպասում այդպիսի յանկարծական վերադարձի, զգաց իւր սրտի թուլանալը, բայց արտաքուստ ոչինչ ցոյց չտուաւ։— Ձեր ցանկութիւնը կկատարուի, պատասխանեց նա. ես պատուէր կտամ, որ ամէն բան պատրաստուի վաղ առաւօտեան համար։

Օրը տխուր անցկացաւ. Ֆրանաջիկը այլ ևս չէր հեռանում օրիորդ Բլանդըմէրից և հազիւ բռնում էր լացը։ Լէյտէնանը ուզեց Աբդուրահմանլիների ցեղին թողնել իւր յիշատակը. նա առատ վարձատրում էր ամենաթեթև ծառայութիւններն անգամ։ Մի կողմ քաշեց կոյր երգչին և նորա երկու բուռը ոսկի մեճիտներով լցրեց։ Սա աղքատ և հպարտ, իբրև մի բանաստեղծ, ընդունեց այդ առատաձեռնութիւնը նոյն կերպով, ինչպէս այնտացի Դիմոդոկոսը թագաւորի պարգևներն էր ընդունում։— Քու պատուիդ համար ես մի երգ կըյօրինեմ, ասաց նա, ու քու անունդ երկար ժամանակ կենդանի կը մնայ Աբդուրահմանլիների որդոց մէջ։

Օրիորդ Բլանդըլմէրը ամբողջ գիշերը չքնեց։ Առաւօտեան ժամը չորսին նա և տիրուհի Մորտոնը վեր կացան ու պատրաստուեցան երթալու։ Երբ որ նոքա տանից դուրս եկան, կարծում էին՝ որ դրան առաջ ձիաներ և ձիապաններ կգտնեն. դորա փոխարէն նոքա տեսան որ բոլոր գիւղը ոտքի է կանգնած. նոցա առաջ ամենամեծ շփոթման պատկեր էր ներկայանում։ — Ինչ է պատահել, հարցրին նոքա Ստէվարտին, նշմարելով նորան աղջամղջի աղօտ լուսովը։

— Քուրդերը մեծ յուզման մէջ են, պատասխանեց զինուորականը։ Աղան անհետացել է և կէս ժամ է, որ անօգուտ փնտրում են նորան։

Օտարականները շուտով իմացան, որ երբ Սէլիմի ծառաները գնացել են իրանց տիրոջը իմաց անելու, որ հիւրերի գնալու ժամը մօտեցել է, նորա սենեակը դատարկ են գտել։ Իր սիրական ձին գոմումը չէր, զէնքերն էլ իրանց սովորական տեղումը չէին կախած։ Յաճախ պատահել էր, որ յանկարծակի արշաւանք գնայ կամ ճանապարհ ընկնի, բայց այդ դէպքում նա միշտ հետն էր առնում մի քանի մարդ և իր մտադրութիւնը առաջուց յայտնում էր քրոջը. այս անգամ նա ոչինչ չէր արել։ Այդպիսի անսպասելի գնալը անբացատրելի բան էր թւում և եթէ քրդերին դեռ խռովութեան մէջ չէր ձգում, գոնեա շատ էր զարմացնում նոցա։

Օրը շուտ բացուեցաւ. ձիւնի վերայ կարելի էր ձիու ոտքերի հետքերը տեսնել։ Հետքը տանում էր դէպի հարաւ-արեւելք, այսինքն Պարսկաստանի ճանապարհի կողմը։ Շատ մարդիկ ձի նստեցին աղային հասնելու համար։ Անգլիացիները չը կամեցան թողնել գիւղը, առանց մի որոշ բան իմանալու իւրեանց հիւրընկալ քրդի մասին և մնացին գիւղում լուր սպասելով։ Օրիորդ Բլանդըլմէրը կրկին մտել էր սենեակը. կիսաբաց լուսամտից նա լսում էր անց ու դարձ անողների խօսակցութիւնը. նա անկատար կերպով էր հասկանում, միայն այնքանը հաստատ երեւեցաւ նորան, թէ օտարականների մեղն էին համարում այն պատահարը որ ցեղի բոլոր մարդկանց շփոթում էր։ Անատոլու բնակիչները շատ անգամ ամենաանսովոր երեւոյթները ֆրանկների կախարդութիւններին են վերագրում։ Մի նախազգացմունք ասում էր Լիւսիին, որ քուրդերը կիսով չափ էին միայն սխալվում. նա վախենում էր որ գուցէ Աբդուրահմանլիների գլխաւորը դեռ սիրոյ ազդեցութեան տակն է և չլինի թէ նա մի յուսահատ որոշումն է արել։ Նա այնքան էր ճանաչում արեւելքը, որ չէր են-

թաղրում, թէ նա ուզենար զրկել իւրեան անտանելի դարձած կեանքից. բայց ով է կարող ասել, թէ ինչ խենդութիւններ կարող է գործել մարդ կրքերի ազդեցութեան ներքոյ:

Սակայն երեկոն հասաւ և ոչինչ նոր բան չիմացուեցաւ: Լիւսին գիշերուայ մեծ մասը անցկացրեց մխիթարելով Ֆրանչիսկին, որ չգիտէր թէ ինչն է իրան աւելի տրտմեցնում՝ բարեկամուհու երթալը, թէ՞ աղայի աներևութանալը: Երբ օրը լուսացաւ, ձիաւորները դեռ յետ չէին եկել: կառավանը այլ ևս չէր կարող իւր գնալը յետ ձգել. որոշեցին, որ իսկոյն ճանապարհ ընկնին. միայն որովհետև օտարականները մի քանի օր Էրզրումում պիտի մնային, խնդրեցին գլխաւորի քրոջից, որ երբ ինքը տեղեկութիւններ ստանայ աղայի մասին, մի մարդ ուղարկէ իրանց լուր հասցնելու: Լիւսին իւր մնաս բարովն արաւ անմխիթար Ֆրանչիսկին, որին նա իբրև յիշատակ՝ մի բիւրեղի ապարանջան թողեց, որ իբրև ընծայ ստացել էր Դավրիժումը փոխարքայի կնոջից. ցեղի մարդիկներից մի խումբ ճանապարհ ձգեց ամբողջ ժամ օտարականներին, թէև գիւղի գիտունները նոցա կախարդ էին համարում:

Առանց մի արգելքի պատահելու՝ գեղեցիկ եղանակով անցան ճանապարհը: Երրորդ օրուայ առաւօտը կառավանը դուրս եկաւ մի նեղ կիրճից՝ իւր առաջը երկրի ահագին տարածութիւն տեսնելով: Դա մի մեծ դաշտ էր, ծովի աւազանի նման, որի ալիքները ցամաքած էին: Լեռները շրջատեսարանի ձևով, մի անհուն կրկեսի աստիճանների պէս զետեղուած, շրջապատում էին դաշտը ամեն կողմից. սրածայր բարձր գագաթներ այստեղ այն տեղ վեր էին բարձրանում ստորին գագաթների սղոցաձև գծերից: Դաշտը ձիւնով ծածկուած էր. սև սև կէտեր, որոնցից ծուխ էր բարձրանում, ցոյց էին տալիս բազմաթիւ գիւղերի տեղերը: Հեռաւորութեան մէջ վերջին լեռների կողքում նշմարւում էր մի աւելի լայն սև բիծ. դա Էրզրումն էր: Շրջապատուած ձիւնի ահագին շերտերով, որ արեգակը վարդակապոյտ գոյներով էր ներկում, կիսաքօղարկուած մի թեթև մշուշով, որի միջից դուրս էին ցցւում մինարէթների ծայրերը, Էրզրումը երևում էր իբրև այն ցնորական քաղաքներից մէկը, որ կախուած են երկնքի ու երկրի մէջ տեղ և դևերի (geuies) բնակարաններ են համարւում:

Էրզրումը համարեա արդէն Եւրոպան էր. բայց որքան էլ որ երջանիկ եղաւ օրիորդ Բլանշըմէրը քաղաքակրթուած երկրներին մօ-

տին գտնուելով, այսու ամենայնիւ ծանր էր թւում նորան շարունակել ճանապարհորդութիւնը, առանց տեղեկութիւն ստանալու իւր լեռնական հիւրընկալի մասին. սակայն օրեր անցան, իսկ խոստացած լուրը չեկաւ: Պէտք էր երթալ Տրապիզոն ու այնտեղից անցնել Կօնստանդնուպօլիս: Այս վերջին քաղաքում անգլիացի ճանապարհորդները բաժանուեցան Տիգրան էֆէնդուց. իսկ տասնեհինգ օրից յետոյ հասան Լօնդօն:

Անցաւ մի տարի: Լիւսին որ պսակուել էր Ստէվարտի հետ, նստած էր Ուէստմօրլանդի ամրոցի սենեակներից մէկի պատուհանի առաջ: Կրկին ձմեռն էր. ծառաստանի հողաբլուրները, դաշտերն ու սառած լիճը անհետացել էին ձիւնի տակ: Այս պատկերը միտքը բերեց նորան Հայաստանի միայնութիւնները: Տիկնոջը մի նամակ բերին, որ ծածկուած էր փոստայի բազմազուն նշաններով. նա կտրեց կնիքը, որ արաբական տառերով Տիգրան էֆենդու անուան սկզբնատառերն էր ներկայացնում, ու կարդաց հետեւեալը.

«Կօստանդնուպօլիս. 26 հոկտեմբեր, 1861.

«Տիկին, դուք յանձնեցիք ինձ, որ լուր հաղորդեմ ձեզ մեր Քուրդի Լեռան բարեկամների մասին. ներեցէք, խնդրեմ, եթէ այդ լուրերը ուշ են հասնում ձեզ. աչքի առաջ ունենալով, որ դժուար է Պօլսում իմանալ, թէ ինչ է անց կենում Աբդուրահմանլը: Ահա նորերումս ինչ լսեցի, Քուրդստանից եկող մի ճանապարհորդից:

«Սելիմ աղան այլ եւս չի երեւացել իւր երկրում. յետեւից գնացող ձիաւորները հետքը կորցրել են Պարսկաստանի սահմանների վերայ, եւ շատ ամիսներ ոչինչ չեն լսել նորա մասին: Այս տարուայ սկզբում համբաւ էր տարածուել, իբր թէ Սելիմ աղան գնացել է Խորասանի սահմանների վերայ բնակութիւն հաստատած քրդերի մօտ. վերջապէս, կայ մի քանի ժամանակ, որ մի դերվիշ ճանապարհորդ, որ Մէշէդիցն է եկել, պատմել է, թէ Սելիմ աղան Կարմիր Աւազ անապատի Ուզբէկ քրդերի դէմ կռուելիս՝ դիտմամբ սպանել է տուել իւր գլուխը: Նորա կողմից այդպիսի մի տարօրինակ որոշման առիթները անյայտ են. իբրայլինները ասում են, որ այս բոլորի մէջ կախարդութիւն կայ. ինչ որ կվերաբերի ինձ, ես ոչինչ որոշ ենթադրութիւն անել չեմ կարող:

«Աբդուրահմանլւում մի բարեկամ էլ էք թողել, որ անդադար խօսում էր ձեր մասին, այն է մատաղ Ֆրանջիսկին. դժբախտաբար խեղճ երեխան ձմեռուայ սկզբում հիւանդացել է: Նա միշտ տկար

առողջութիւն ունէր. քեռու անյայտանալու ցաւն էլ օդի խստութիւնից նուազ ներգործութիւն չի արել վերան, և նա մեռել է դեռ գարունը չհասած։ Նա խնդրել է իւր մօրը, որ ձեր ընծայած ապարանջանով թաղէ նորան»։

—Խեղճ Ֆրանցիկ. խեղճ Սէլիմ. բացագանչեց Լիւսին, նամակը ձեռքից վայր ձգելով, նա երկար ժամանակ պատուհանի մօտ կանգնած մնաց, միևնոյն առարկայից մի րոպէ իւր միտքը չդարձնելով, իւր աչքը չվերացնելով ձմեռուայ այն տեսարանից, որ քուրդի երկրի տեսարանի էր նման։ Ձիւնի մէջ միակ դալարը՝ դաշտի վարի կողմը կղզիացած գերեզմանատան դալարին էր։ Այդ նոճիները կրկին նորա միտքը բերին պարսիկ բանաստեղծի մելամաղձիկ տողերը. սոքա երգում էին իւր ականջի մէջ, ինչպէս տխրութեամբ լի մնաս բարով։ Այդ օրից սկսած՝ Լիւսին յաճախ մտածում էր այն երկու գերեզմանների մասին, ուր ննջում էին Արևելքի խոր քնում նոքա, որոնք սիրել էին նորան։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԱՆԱՅ, *ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց։ Կոստանդնուպօլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան*, 1876։

Մեր պարբերական գրականութեան մէջ, Ռուսաստանում և Թուրքիայում, քանի ու քանի անգամ խօսուեցաւ ժողովրդական գրականութեան կարևորութեան վրայ, քանի ու քանի անգամ առաջարկութիւններ եղան Հայաստանի զանազան գաւառներից ժողովել այս գրականութեան տարրերը, —երգերը, զրոյցները կամ ինչպէս ժողովուրդն ասում է՝ հէքեաթները, առածները, հանելուկները կամ առեղծուածները և մինչև անգամ առանձին աղօթքները, անէծքներն ու երդումները, որոնք շատ վաղ ժամանակներից ժողովրդի բերանում աւանդաբար ապրում են, սերունդից սերունդ գալով հասնելով մինչև մեր ժամանակները։ Մի և նոյն ժամանակ համոզիչ փաստերով պարզուեցաւ այն խնդիրը՝ թէ ժողովրդեան այդ բանաւոր գրականութիւնը, ամենախոր հնութեան հետքեր պարունակելով իւր մէջ, մի թանկագին գանձ, մի անսպառելի աղբիւր պիտի համարուի հայ բանասէրի, պատմաբանի, փիլիսոփայի և մինչև բանաստեղծի համար՝ ազգային կեանքը հիմնաւորապէս հետազօտելու, որի վրայ, ցաւալի է ասել, մեր գրականութիւնը սկզբից մինչև այսօր ամենևին ուշք չէ դարձրել։ Թուրքիայում մինչև անգամ դիտաւորութիւն կար մի ուսումնական ընկերութիւն կազմել, որի նպատակը պիտի լինէր իւր անդամները Հայաստանի գաւառները ցրուել ժողովրդական անգիր աւանդութիւնները գրի անցնելու համար։ Բայց այդ դիտաւորութիւնները լոկ խօսքեր էին և մնացին, ինչպէս ասում են, ձայն բարբառոյ յանապատի։ Մենք շարունակեցինք և դեռ ևս շարունակում ենք տաք սենեակների մէջ, փափուկ

աթոռների վրայ նստած խօսել, խորհել ու գրել հայ ժողովրդի դրութեան վրայ, և առանց նորա կարօտութիւններին հիմնաւորապէս տեղեակ լինելու՝ կարծում ենք թէ նորա ցաւերին դարման ենք անում, նորա անթիւ վէրքերին սպեղանի դնում: Զարմանալի երևոյթ: Ի՞նչ կասէինք մենք այն բժշկին, որ իւր հիւանդին չտեսած՝ դեղեր մատակարարէր նորան. չէ՞ որ նորա տուած դեղերը կասկածելի կ'երևային մեր աչքին: Ինչո՞վ ենք ուրեմն զանազանվում այդ տեսակ բժիշկներից, մենք որ ժողովրդից հեռու ենք ապրում, և կարծում ենք թէ նորա բարոյական ու նիւթական դրութեան կատարելապէս ծանօթ ենք:

Արևմտեան քաղաքակիրթ ազգերը վաղուց արդէն հասկացել են ժողովրդական բերանացի աւանդութիւնների ժողովելու կարևորութիւնը գիտութեան համար: Այն տեղ շատ ականաւոր մարդիկ պարապել են ազգային աւանդութիւնների խուզարկութիւններով և մանրամասն հետազօտութիւններով, որոնց անմիջական հետևանքն եղաւ ստուար քերականութիւնների և աւելի ստուար բառարանների երևան գալը գաւառական բարբառների վրայ: Գերմանիայում Վիլհէլմ և Յակոբ Գրիմ եղբայրները համալսարանի ամբիոնը թողած՝ պայուսակը ուսերին և գաւազանը ձեռքերին գիւղից գիւղ և հիւղից հիւղ շրջելով ժողովեցին ու տպագրութեամբ հրատարակեցին բազմաթիւ ազգային զրոյցներ, որոնք մինչև այն ժամանակ հասարակութեան անծանօթ էին: Հեռու չգնանք. ռուս գիտնական Եակուշկինը գիւղացու հագուստ հագած՝ երկար ժամանակ շրջեցաւ ժողովրդի մէջ միևնոյն նպատակով. գիւղից գիւղ ու գինետնից գինետուն անցնելով՝ նա ժողովրդի ուրախութիւններին ուրախակից և ցաւերին ցաւակից էր լինում, առանց հասկացնելու նորան որ այդ խօսք ու զրոյցների ժամանակ ինքը նոցա բերանացի աւանդութիւնները գրի է անցնում: Այս և ուրիշ ազգերի ուսումնականների հաւաքած ժողովրդական գրականութեան տարրերը անհուն գանձեր երևան հանեցին նոյն ազգերի բանասէրների ու բանաստեղծների առաջ, նոր և մինչև այն ժամանակ անծանօթ նիւթ մատակարարեցին նոցա մտքին ու երևակայութեանը:

Մեզանում, պէտք է խոստովանել, այս գործի յաջողութեան մեծ արգելք եղաւ գլխաւորապէս այն հանգամանքը, որ մեր գրականութիւնը քրիստոնէութիւնից սկսած մինչև այս դարի սկիզբը

հոգեւորականութեան ձեռին գտնուեցաւ մի տեսակ մենավաճառութեան պէս, որին կարծես ազգի մեծամասնութիւնը իրաւունք չէր համարում իրան մասնակից լինելու: Հոգեւորական դասը նոր կրօնի՝ Քրիստոնէութեան սկզբունքը ազգի մէջ արմատացնելու պաշտօնը ստանձնելով՝ հարկաւ ամէն ջանք ու ճիգ պիտի թափէր հալածելու, արմատախիլ անելու նորա միջից այն բոլորը, ինչ որ յիշեցնում էր նորան առաջուայ հեթանոսական կեանքը: Այս պատճառով կղերը հէնց սկզբից մի տեսակ արհամարհական տոնլութեամբ և թշնամական աչքով էր նայում այն յամառութեան վրայ, որով ժողովուրդը, ինչպէս բնական է, պահպանում ու գործ էր դնում իւր բերանացի աւանդութիւնները՝ առտնին և հասարակական կեանքի դէպքերում: Հայաստանի քրիստոնէութեան առաջին դարի պատմիչ՝ Փաւստոս Բիւզանդացին մի տեսակ դառնութեամբ ակնարկում է, թէ Հայերը սիրելով սիրում էին իրանց հեթանոսական «վայրենի ու անբարոյական» երգերը: Նոյն և յաջորդ դարի մատենագրներից՝ Ագաթանգեղոսն ու Եզնիկը և յետագայ դարերում ուրիշները, եթէ երբեմն ակնարկութիւններ են անում Հայոց հեթանոսական կեանքի վրայ, այդ կամ իրանց գրուածքի նիւթից ստիպուած, հետեւաբար և ակամայ են անում, կամ նոյն կեանքի մի քանի ծիծաղելի երեւոյթները հերքելու դիտաւորութեամբ: Ահա այդ ժամանակներից մեզանում «առասպել» բառը, որով արտայայտվում էին ժողովրդական երեւակայութեան ստեղծած արդիւնքները, «ստութեան և անբարոյականութեան» գաղափարների հետ նոյնացան, իսկ այն էակները որոնց առիթով ստեղծուեցան այդ առասպելները — կենդանի «դիքը» և ազգային դիւցազները անկենդան «դիակի» համանիշ գաղափարը ստացան:

Մեր բոլոր մատենագրներից միայն մինը, Մովսէս Խորենացին, որ ամէնից առաջ գիտութեան պաշտօնեայ էր, արդարև հին դարերի նախապաշարմունքներից բարձր գտնուեցաւ, գնահատելով և օգուտ քաղելով ազգային առասպելներից, «որք զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ», և մի ուրիշ տեղ Փաւստոսի հակառակ ցաւելով բացագանչում է. «Ինձ թուի որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց»: Ցաւալի և միանգամայն զարմանալի է որ ոչ մի հայ պատմիչ չէ եղել, որ մեր պատմութեան առաջին երկու հարստութիւնների վերաբերութեամբ այս մեծ հեղինակի

գիրքը գաղափարած չլինի, և միևնոյն ժամանակ ոչ մինը չէ կամեցել նորա տուած օրինակին հետևելով՝ ազգային առասպելները լուսաբանել և պատմական ճշմարտութիւններ հանել նոցանից:

Եթէ մի կողմից մեր առաջին դարերի հոգևորականները ժողովրդական խօսքը հալածելով գուցէ այնքան մեղադրելի չեն, որովհետև երկիւղ էին կրում որ մի՛ գուցէ նոր կրօնի հաստատուելուն արգելք լինի նա, ի՞նչ պիտի ասենք ներկայումս, Ժթ-րդ դարում, նոյն կղերի համար, որ շարունակում է թշնամական աչքով նայել ազգային կեանքի երևոյթների վրայ, որ արտայայտվում են ժողովրդական գրականութեան միջնորդութեամբ: փորձեցէք, օրինակի համար, մի որևիցէ ուսումնարանում Սայաթ-Նովայի կամ մի ուրիշ ժողովրդական բանաստեղծի նշանակութիւնը ցոյց տալ, այն ամբիոնից ուր միշտ ծանր ու դժուարամարս հատուածներ էք կարդում, փորձեցէք, ասում եմ, մի ժողովրդական երգչի արդիւնքները կարդալ ու լուսաբանել, և կը տեսնէք որ ձեր ճակատին դատապարտութեան կնիքը կը դրոշմեն. ձեզ կը համարին նոր սերունդին անբարոյական բաներ քարոզող....

Ուրախալի է գոնէ որ հայ կղերի այս մեղքը առաջին անգամ յանձն առաւ. սրբել նոյն դասին պատկանող մի անձն՝ նուիրելով իւր գործունէութիւնը ժողովրդական գրականութեան. այդ ուշադրութեան արժանի հոգևորականն է արժանապատիւ Գարեգին վարդապետ Սրուանձտեանց: Գարեգին վարդապետը աշակերտ է այն հանրածանօթ անձի, որ ժողովրդի միջից դուրս գալով իւր բոլոր կեանքի ամենամեծ պարծանքը համարել է միշտ ժողովրդական մնալ, և ազգի ցաւերին անկեղծօրէն ցաւակից լինելով անընդհատ տքնել է նորա բարօրութեան համար: Ընթերցողը գուշակում է անշուշտ որ խօսքս Խրիմեանի վրայ է: Արդարև Խրիմեանը իւր աշակերտներին թելադրել է մի անսահման սէր դէպի հայ ժողովուրդը, մի անպայման անձնուիրութիւն դէպի նորա մտաւորական վերանորոգութեան գործը: Ինչ որ էլ ասեն նորա թշնամիքը, այնու ամենայնիւ չեն կարող չխոստովանել որ նա իրաւամբ արժանացել է այն պարզ բայց նախանձելի «Հայրիկ» անուան, որ ժողովուրդը տուել է իրան հայրական սիրով սիրողին: Հայրիկը իւր աշակերտներից ժողովրդի համար արժանի «եղբայրիկներ» պատրաստեց, որոնցից մինն է Գարեգին վարդապետը, որ 1874-75 թուերին հրատարակած «Գրոց և Բրոց»,

«Հնոց և Նորոց» և «Շուշան Շաւարշանայ» աշխատութիւններով մեծ աղմուկ հանեց հայ հասարակութեան մէջ:

Սրուանձտեանց վարդապետի նոր աշխատութիւնը, որի առիթով գրում ենք այս տողերը, կոչւում է «Մանանայ», որ հեղինակը մատուցանում է հայ բանասէրներին «ոչ իբրև Սինայ Անապատին երկնատեղաց նուիրական հաց, այլ իբրև Հայաստանի Գագաթին, որ երկրի ծաղկանց հիւթերէն օդին մէջ կը գոյանայ, ցօղով այգուն կը շաղախի, արևուն ջերմիկ ճառագայթներէն կը զանգի, կը հասուննայ, և շաքարախառն և մեղրի համով իբրև գինդ յակինթ կամ հատ հատ մարգարիտ կիջնայ մացառներու, տերևոց, դալար փշոց և մամուռակի ոստոց վրայ ի գոյն արծաթափայլ, և ի ձև նուան հատի, զոր ժողովեն մանկտիք և հարսունք բլիթ բլիթ յօրինելով պաշար կազմեն ի քաղցր ճաշակ անձանց և հիւրոց ի մեծարանս»:

Այս հետաքրքրական աշխատութիւնը կազմուած է հինգ զանազան բաժիններից, որոնցից առաջինը «Համ և հոտ հայրենեաց» անունն է կրում.—ընտիր նկարագիր Վանի բնութեան և բնակիչների կենցաղավարութեան, ուր տեղ են գտել նոյնպէս մանկական խաղեր, ժողովրդական սովորութիւններ և նախապաշարմունքներ, զանազան «զրոյց ու մրոյցներ» (եր. 39—133):

Այս նկարագրութիւնը, որի սկիզբը մի գեղեցիկ զուգապատկեր է Աբովեանի Քանաքեռցոց նկարագրին, ոչ այնքան ուսումնական, չոր ու ցամաք թուերի վրայ հիմնուած գրուածք է, որքան մի բանաստեղծական նկարագրութիւն, մի փունջ՝ որի իւրաքանչիւր ծաղկից արդարև բնութեան ու կեանքի «համ ու հոտ» է բուրում:

Արուսեակը ծագում է թէ չէ, բնութիւնը և նորա հետ թռչունները, կենդանիներն ու մարդիկը քնից սթափւում են և իրանց օրական պարապմունքներն սկսում: Տանտիկինը թոնիրը վառում է, հայթուխը թոնրի շուրջը նստած՝ հաց է թխում, նոր հացի և գիշերաեփի հոտը չորս կողմը տարածվում է: Այս տեղ հաց են բաժանում փողոցով անցուդարձ անողներին, այն տեղ՝ մատաղ, ուրիշ տեղ էլ՝ հարիսայ: Տներում տեղ տեղ կտաւ են գործում, ուրիշ տեղից էլ ճախրակ գործելու ձայն է գալիս: Տների դրանը մէկ մէկ աղջիկ կամ հարս է երևում, որոնք գաւիթները ջրելուց ու աւելելուց յետոյ՝ դուրս են գալիս փողոցները կամ «փողանները» աւելելու: Գործաւոր մշակներ, պատ քաշողներ, աղիւս կտրողներ, սարակներ՝ բահը բազուկների վրայ դրած եկեղեցու դուռն են գը-

նում․ առաջինները մի քանի ծունր դնելուց յետոյ՝ իրանց գործին են դնում, վերջինները այգի փորելու համար վարձուելու են սպասում: Այս տեղ ու այն տեղ երևում են ձիաւորներ, որոնք գնում են գիւղերը իրանց արտերը տեսնելու:

Գիւղերում աշխատասէր հողագործները վաղուց արդէն իրանց արօրներն ու լուծերը պատրաստել և բաւական տեղ հերկել են: Խրճիթներում հարսները կովերը կթել, սպիտակեղէն են պատրաստում: Աղջիկները խումբ խումբ շրջելով մարգերում և հովիտներում, ծաղիկներ ու բանջարներ են հաւաքում:

Արդէն արշալոյս է, և «այս բոպէին ոչ ոք ի քուն մնացած պէտք լինի, ապա թէ ոչ՝ օրուան բաղդէն ու ղըսմաթէն կը զրկուի»: Ահա գիւղացիք տան հարսների ուսցով[1]) ու դաղձով պատրաստած նոր պանիրը, ժաժիկը, պիթանը, չորթանը, մածունը, կարագ եղը աղջկանց հաւաքած բանջարները՝ սպիտկուկ, եղըջայ, սոխուկ, մանդակ, երնջակ, սխտորուկ, պտուկ, պօղէկ, ժախ, կանկառ, շրէշա, նուրիկ[2]), և այլն եղների վրայ բարձած, կամ իրանք շալակած տանում են քաղաքի փողոցների գլխները, կամ եկեղեցիների դռները դիզում ծախելու համար: Այդ միջոցին տղամարդիկը արդէն շուկայ գնացած են իրանց գործին, իսկ տան տիկինները տնային գործերով են զբաղվում, ո՛րը լուացք անում, ո՛րը բան ձևում կարում, ո՛րն էլ միջան քրքրում, բուրդ ու բամբակ գզում:

Թողնենք որ հեղինակը իւր բարեկամին տանի քաղաքից դուրս այգիներն ու դաշտերը և մէկ մէկ ցոյց տայ նորան Հայաստանի պատմական յիշատակները, իսկ մենք դառնանք տեսնենք թէ ինչպէս է զուարճանում Վանեցին կիրակի և տօն օրերը: Մեծ բազմութիւն հաւաքվում է ճոչ Քենդրձի ասած տեղը, ուր ջրի ափին ծառերի հովանիի տակ մարդիկ նստած ծխում, սուրճին խմում, ծանր ու բարակ զրոյց անում և զուարճանում են փոքր մանուկների խաղերով, որոնցից ոմանք առուակն են մտնում, քեղից ջրապտտիկ շինում և անցող դարձողի վրայ ջուր են սրսկում. ոմանք քարեր, գզզիկներ[4]) ու տաշեղներ ժողովում, փոքրիկ տներ են շինում, ոմանք

[1]) Մի անուշահոտ խոտ:

[2]) Այս բանջարների մեծ մասը աղաջուր են դնում կամ չորացնում ու կերակրի մէջ գործ են դնում: Կանկառը երկու տեսակ է. մէկ տեսակը թարմ՝ աղջուր են դնում, եղով տապակում. իսկ միւս տեսակից կաթն են հանում և թանձրացնում, ծամոն են կազմում: Կանկառի սերմը բովում են և սուրճի տեղ գործ են ածում:

[3]) Անկողնի մէջ լցուած բուրդը: [4]) Հողէ ամանի մանր կտորներ:

էլ առուակի աւազներից թումբեր են կազմում, ակօս ակօս բաժանում և խաղողի որթ, վարունկ ու դդում են անկում ու ջրում: Այստեղ մի խումբ մանուկներ գետինը փորում, թոնիր են շինում, կրակ վառում, ալիւր խմոր շաղախում, հաց թխում և ձուկ եփում ուտում են. այնտեղ գետնի փոշին հաւաքում են, ջրով կաւ շինում, պրակում, բոլորակ բլրաձև բերդ են յօրինում: Ոմանք էլ վերջապէս թղթէ նաւակի մէջ չիր ու չամիչ դնելով ջրի երեսին քաշում տանում են: Աւելի հասակաւորները պնդուկ, ճան, պարոն գզիր, խըլը, կորոց, թօփ ու չուանոցիկ խաղերն են խաղում. իսկ ամենից փոքրերը սուտիկ մուտիկ հարս ու փեսայ են դառնում. ուռի դալար ոստից դուդուկ են շինում, զուռնայի պէս փչում, խաղ ու տաղ են ասում, փայտէ ձիաների վրայ նստած, փայտէ թուր ու թղթէ վահան բռնած թրախաղ են խաղում: Չե՞ս զարմանում, կարդացող. այս մանուկները Ֆրեօբէլներ չունին, բնութիւնն է նոցա միակ ուսուցիչը:

Ընթերցողը, Հայի կորստաբեր պանդխտութիւնն իմանալով՝ գուցէ մտածէր ո՛ր տեղից են լոյս ընկել այդքան հայ երեխաներ Վանի փողոցներում, մանաւանդ եթէ յիշէք որ սորանից շատ աւելի աղայք զբօսնում են տներում և այգիներում: Ահա ինչպէս է լուծում այդ հանելուկը հեղինակը.

«Բայց դու գիտէ որքան բազմաթիւ անձինք 'ի Պօլիս և յայլուր պանդխտած են. մեր գիտցածները՝ անշուշտ կնոջ տէր և տղոց հէր են: Վասն զի երբ հարկն կըստիպէ որ մէկը պարտուց և կարօտութեան երեսէն պիտի պանդխտի, անոր ծնողք կամ ազգականները կ'աճապարեն «Աստուծոյ կամօք» աղջիկ մը կը պատրաստեն, կը նշանեն, և պարտք մ'նալ անոր հարսանեաց համար կ'առնեն, կը կարգեն. «Ոտքը կապենք, որպէս զի դառնայ» ըսելով: Արդարև որքան դժուարաւ այնուհետև պսակեալն կը մեկնի իր առագաստէն, ու թէպէտ իւր ոտքը կ'երթայ, բայց սիրտը կապուած կը մնայ պսականարօտին կապով. կ'անձկայ պանդխտութեան մէջ թուղթ մը ստանալ, որոյ գլուխ գրուած է «Յիսուսի Քրիստոսի ծառայ քո տան անդիւորից (ամուսնուց) շատ սիրով և յոյժ կարօտով բարև իմ երկու աչաց լոյս աղիզ գլխաւորին»: Եթէ ինն ամիս անցել է իրենց ամուսնութեան, նոյն թղթի մէջ այս սիրտը խլխլացնող բառերն ալ կ'ընթեռնու. «Եւ քո նորաբոյս ծաղիկ, քո սիրոյ պտուղ անուշահոտ վարդ Վարդանից, կամ Մանուշակից»: Եթէ տարիներ վրայ անցեր է, կը յաւելուն «Որ բուլբուլի պէս կը խօսի. որ հրեղէն հրեշտակի աչքեր ունի. որ արեգական պէս կը փելկտայ. որ սարեկի պէս կը ճխայ, կը թռվռայ, որ կաքւու պէս կը գվգվայ, մխ, կ'ասի, երբ կուգայ իմ խէրիկ»... և այլն: Իրաւ է ծնող մայր, ծերունի հայր, դրա-

ցիք, բարեկամք, քորք, եղբարք, այգին, ջուր, տուն, տեղ, և այլն, ասոնք ամէնք ալ կը յիշատակուին պանդխտին թղթին մէջ. և իւրաքանչիւրն իւր խօսքին ազդեցութիւնը կ'ընէ, բայց անոնց բուն կապը, որ զիրենք կը ձգէ և կը վերադարձնէ ի հայրենիս, բուն բոցն ու կրակը, որ գիշեր ցերեկ անոնց Ջիգերը կը խորովէ, Տան Անտիւորն է և անոնց սիրոյն անուշահոտ Պտուղն։ Ա՛յս միայն է որ այն ամենի Սև ծովու ալիքը և լերանց սառնամանիքը, զանազան վտանգներ և տագնապները կը քաղցրացնէ մեր հայրենակցաց, առ ոչինչս կը համարին Պօլսոյ փափկութիւնը, բարեկեցութիւնն ու ազատութիւնն, որոց թէև հարկ լինի՝ հինգ, վեց, եօթն, և այլ աւելի անգամ դիմել Պօլիս, նորէն կը վերադառնան. ու այսքան մանկանց հայր կը հանդիսանան։

«Օրհնեալ պառաւունք. օրհնեալ հարսունք. օրհնեալ մանկունք, որ այս կապը հնարած և յօրինած էք, և բուն կապն եղած էք. ապա թէ ոչ, այդ մեր շրջած այս գեղազարդ այգեստանեայց փողոցները կամ թախուր կամ անհայ պիտի գտնէինք»։

Սորանից յետոյ հեղինակը ընթերցողին մի քանի նախապաշարմունքների, աղօթքների, բժշկութիւնների, ծէսերի պատմութիւնների հանդիսատես անելուց յետոյ, հրաւիրում է նորան հեռուից հետևել երկու կնոջ, որոնք «Թուղթ իրիշկող Բարդուղիմոսի» տանից դուրս եկած՝ գնում էին գրողի չար ազդեցութեան վրայ խօսելով: Ո՛րքան պարտական ենք հեղինակին Շողէր խաթունի բերանով այդ հին ազգային ատծու գարհուրելի և միանգամայն բանաստեղծական նկարագիրը մեզ հաղորդելու համար:

«Թառիկ խաթուն, աւասա որ ըսկունի [1]։ Նարգիզ խաթուն գրողներաց հետ կառնի կուտայ (յարաբերութիւն ունի)։ Քանի քանի գիր [2]) լսեր եմ ուրնից [3]) որ կ'ասէր. «Գիշերս գրողներաց գլխաւոր կանչեր էր, գնացինք խորհուրդի, երբ որ ձեռաց հրեղէն կանաչ ձպոդ երեք գիր եղարկ գետին, հազար հազար գրողներ մէկ աչքը թարթի մէջ ժողուան եկան։ Ինոնց ժողուած տեղ՝ ինչխ [4]) որ Բաղդադու աշխարհն ըլլի, քանի աչքդ կտրի անոր անգլօխ մութ դաշտ մը, ոչ կանանչ կը պտնուի, ոչ էրունք [5]) թռչունք. սև քարեր, աւազէ սարեր։ Գրողներաց գլօխ ամպերաց մէջն ի, ոտքեր գետնի տակ անդունդ.ք հասեր ի. իդոնց երեսներ սև քանձ Ադամայ մութ [6]). իդոնց մըրթներ [7]) կախուեր ի չուամ [8]) ուրենց ծընկուեր. բերըններ քանձ Վանայ ծով. լեզուըները մեծ քանձ Վանայ բերդ. քիթ՝ քանձ Սիփանայ սար։ Խողու պէս մազոտ ի իդոնց լէշ. ըմէն մազից բոց կ'էլնի, կրակ կը թափի։ Հաւքու պէս թև ունեն կը թռնեն, խանի պէս կը քէլեն. մէկ ոտ Բաղդատն ի, մէկ ոտ կը թալի [9]) Սև ծով. մէկ ձեռ կը խառնի Ջինմաչին,

---

[1]) Այնպէս է. [2]) անգամ. [3]) իւրանից. [4]) ինչպէս. [5]) էր, էրունք= այր, քարայր, քարայրներ. [6]) գիշերային թանձր խաւար. [7]) բերանի ներքին շուրթն. [8]) մինչև. [9]) կը ձգէ։

մէկ ձեռն կը պարզի Ֆրանգստան։ Ուզեն կը պտտկնան կէննեն քանձ Լու մը ու անիծ, ուզեն կը դառնան քանձ երկինք գետին պատող սև ամբ մը։ ըմէն գրող ուր սինորն[1]) ունի, կը պտտեն, ռաստ էկածին կը զարնեն. Նէս տեսե մերնողներաց որու ոտքը, որու թև, որու քամակը, որու երեսը, որու ուրիշ տեղ մը կը կապուտնայ, գրողի զարկած ճպողի տեղն ի։ Նազան-տան[2]) մէկը կը հիւընդնայ, մէկը կիյնի կը մեռնի. էն ինչի.--գրողից զար-կուած կընի»։

Ցաւալի է որ հեղինակը, զարհուրելով նիւթերի քանակու-թիւնից, անդադար շտապում է խօսքը կարճ կտրել. բայց մենք ստիպուած ենք նորանից աւելի շտապել և առաջին բաժնին վերջ տալ այս տեղ մէջ բերելով մի հետաքրքրական տեղեկութիւն Սասունի և Տիգրանակերտի գիւղերի հայ բնակիչների վրայ, որոնք քրդերէն խօսում և քրդաբար են վարվում: Նոցա քահանաները գիւղեր ու քաղաքներ շրջելով՝ մուրացկանութեամբ են ապրում, հասարակ ընթերցանութիւնից անգամ զուրկ են, բայց կախար-դութեամբ են պարապում: Աւետարանի տեղ նոքա մի մի Ախտարք ունին: Ժողովուրդը ննջեցեալի վրայ յուսահատական ողբեր է ա-նում եօթն օր շարունակ: Եթէ մեռնողը անդրանիկ զաւակ է, յուղարկաւորութեան հանդէսի համար մի ձի են զարդարում, մեռ-նողի հագուստը, նորա սուրը, վահանը, հրացանը ձիու վրայ են քաշ ձգում. ննջեցեալի շուրջը հաւաքվում են մեռնողի կամ նորա ծնողների հայ, քուրդ և եզիդի բարեկամները: Դագաղի առաջ դնում են քանի չափ կանայք սևեր ծածկած, և քրդերէն ողբեր են ասում. իսկ նոցա ետևից գնում են տղամարդիկ՝ սև աբաները գլուխներին ծածկած, և լալականների հետ փոփոխակի ողբում նն-ջեցեալի մահը: Ծառերի և ջրերի պաշտօնը ընդհանուր է այս կող-մերի Հայերի, Քրդերի և Եզիդների մէջ: Քրիստոսի ծննդեան և մկր-տութեան առաւօտը քուրդերը ամէն կողմից գալիս են հայ քահա-նաներից հարցնում. «Աստուած սիրէք, խաչն ի՞նչ ասաց. այս տարի ձմեռը խիստ պիտի լինի թէ մեղմ, ամառը լի՞ թէ չոր»: — Եթէ մեռոնը ջրի երեսին մնաց, տարին բարելի է:

Մանանայի երկրորդ բաժինը «Հայրենեաց վէպք և զրոյցք» վերնագիրն ունի և նուիրած է ժողովրդական զրոյցներին, որոնցից վեցը Վանեցոց բարբառով են գրի առած, երկուսը Խիզանցոց բար-բառով, իսկ իններորդը հեղինակի գրչինն է, թէև նիւթն

[1]) Սահման. [2]) յանկարծ։

ու ձևը նոյնպէս ժողովրդական զրոյցների է պատկանում (եր. 153-234)։

Ընթերցողին վանեցոց բարբառի վրայ մի ճաշակ տալու համար՝ դնենք այստեղ այդ զրոյցներից մինը, թողնելով յօդուածիս վերջը այդ բարբառին յատուկ մի քանի առանձնութիւնները քննելու։

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴ

«Ժամանակով մարդու մէկ չատ ունեւոր կ'ըլնի, ու քուր ծուր ապրելով ինչ որ կայ չըկայ զըմէն կուտի կը նստի, հաց թաց կը կըտրի վէրէն. մէկ ձեռն կը դնի ծոց, մէկ ձեռն ուրեսին՝ կը մէջի [1]) վէր ուր հալին, ախ վախ անելով կը հալի մաշի։

«Ուր ճանչւորները կը ժողվին կուգան խօր բուլոր ու ինոնցից հալիւոր մը կը վերցի կասի. դու բան մ' արեր ես, քո դօլվաթ քեզնից խրտներ փախեր ի. էլի դնա քո դօլվաթի ետև, բալքի գտնես ձեռ բերես, առաջուայ պէս բաղդաւորւես։

«Գլխու ինկաւ մարդ. ելաւ զինքն խառ [2]) սարեր քարեր, գիչեր ցերեկ ուր դօլվաթ կը փառէր։ Գիչեր մը քընուկ տեղ էրազի մէջ կը տիսնայ որ ուր դօլվաթ բանձր սարի մ' գլօխ ինկուկ ի բերանսըվեր. ախ վախ կանի ուր պէս։ Առաւօտուն հետ զարթելուն կելնի կը չիտկուի, դեհ էն սար։

«Կերթայ կերթայ կը տիսնայ որ ճամհու վէրէն ասլան մ' ի նստեր։ Ասլան կը կանչի մարդուն կը հարցուցի. Դո՞ր [3]) կերթաս։ Մարդ կասի. Կերթամ իմ դօլվաթ գտնեմ։ Ասլան կասի. Ես գիտեմ քո դօլվաթ չատ գիտուն ի. ուրմից հարցու տե ես ինչո՞վ կը ժրեմ [4]) էս ա եօթ տարի է որ անկըլցել եմ. [5]) դառնալուդ արե ձիկ [6]) ասա. ես էլ իմ ձեռնից էկած աղէկութին կանեմ քե։—Մարդ խօսք կուտայ, կընցնի կերթայ։

«Կերթայ կերթայ, կը տիսնայ իգի մը, որ հազար նըմուչ պտղով լցուկ ի. քանի կը քաղի որ ուտի, կը տիսնայ որ լեղի են։ Իգու տէր ռատ կուգայ, էս մարդուն կը պըժտի. սորա կը հարցուցի դո՞ր կերթաս։ Մարդն ուր դարդը կասի իգու տիրոջ։—Որ ըսկուն ի քո դօլվըթից հարցու իմ իգու դարման ինչ ի, որ ինչ կանեմ չեմ անե, պտուղներ դառն կըլնեն։ Պատրուս արի, չէլաւ. նոր ցռուկ տնկիցի, չելաւ։ Երբ կը դառնաս ձիկ ջուղաբ բե իմ ձեռնէն ինչ աղէկութեն որ գայ, քե կանեմ։—Մարդ խօսք կուտայ, կընցնի կերթայ։

«Կերթայ կերթայ կը համնի մէկ քօչկ ու սարի մը. կը մտնի ինե, կը տիսնայ որ մէկ ջըհէլ ջիվան մը դալպասի մէջ կը պտտի. կը հարցուցի էս

[1]) կը մտածէ. [2]) ետ. [3]) կրճատումթիւն ը ն դ ո՞ ր (ո՞ր կողմը) գրաբար ձևի. [4]) ժի՞ր կը դառնամ. [5]) տկարացել եմ, ինչու բառից. կրճատուած ինչին բառից, ինչ. [6]) պատուաստ։

մարդուն. Աղբէր, դու էս տեղուանք ի՞նչ բան ունես։ Մարդն ի ուր գլխու էկածը կասի ինոր։

«Ջրհէլը կը դառնայ իրոր կասի. Ես չատ դօլվաթ, չատ ըռզակ [1]) ու ապրանք ունեմ, ամա ցաւ մ՚ ունեմ՝ որ գիչեր ցորեկ դարտով կընցուցեմ. Թէ որ քո դօվլըթից ձիկ ճար մը հարցուցես, յըմէն նըմուչ բարութնից կուտամ քե։—Մարդ խօսք խօսու, ընցաւ գնաց։

«Գնաց գնաց, տեսաւ որ ուր դօլվաթ գօ [2]) ինկե սարի գլօխ։ Բարև կուտայ կը նստի. չատ գանգատ կանի մօտէն. կը դառնայ ապսպրած բաներ կը հարցուցի, ըմէնու ջուղաբն էլ կառնի։

—Դէ էլի երթանք, կասի։

—Դու առաջ գնա, ես կուգամ, կասի դօլվաթ։

«Մարդ կը դառնայ կուգայ առաջ էն Ջրհէլը կը տիմնայ, կասի. քո դեղն էն ի, որ դու կորիճի մը հետ փսակուես, քո դարդն ու ցաւ կընցնի։

«Կուգայ իգին. իգու տէր կը կանչի, կասի. քո իգու ջուր որ առուից որ կուգայ, էն առուի մէջ ոսկւոյ մաղան կայ, ոսկւոյ փշրանք ջրի հետ կուգայ, ծառեր կը ծծեն, պտըղներ կը դառնաման. եա ջրի առուն փոխի, եա մաղան քակի հան դուս, պտըղներաց համը կանուշնայ։

«Կուգայ ասլանի մօտ կը նստի մարդ. նազլ կանի ուր գօլվաթ տեսնալը, իգու տէրն ու Ջրհէլն։ Ասլան կը հարցուցի կասի. Ջրհէլ քե աղէկութեն մը չարա՞ց։ Մարդ կասի. Ասաց, արե ձիկ առ, նըստենք մէկտեղ Աստծու բարութեն վայելենք. ես ղայիլ չեղայ։

«Ասլան կը հարցուցի. իգու տէրն ինչ աղէկութեն արաց։ Մարդ կասի. իգու տէր ոսկւոյ մաղաններ քակեց ինհան, կօլօն մը ոսկի էլաւ, խտու ձիկ. ես չառի, ասի. Ո՞վ իդոնք կը շըլկի կը տանի չում տուն»։

«Է՛, կասի ասլան. Ձիկ համար ինչ դեղ ասաց։ Մարդ կասի. Քե համար էլ ասաց, որ անխելք մարդու գլօխն ուտի կը ժրի։

«Ասլան աղէկ մը վեր դիր կ՚անի իրոր ասածները. յուչիկ մը թաթը կը պարղի դեհ մարդու գլօխը. կը բռնի զարնի գետին, կը փշրի կուտի։ Կասի. Ես իմ Աստուած. քանձ քե անխելք մարդ չեմ կանայ գտնե աստուրիս [3]) իրես»։

Զրոյցների նիւթը արդէն յայտնի է և այս խնդրի վրայ խօսելու դիտաւորութիւն չունիմ: Մի հանգամանք միայն ուշադրութեան արժանի է, այն է որ զանազան գաւառների զրոյցները, երբեմն նաև միմեանց հետ ոչինչ հաղորդակցութիւն չունեցող ազգերի վէպերն ու երգերը իրանց բովանդակութեամբ նման են միմեանց: Մեր հեղինակի հաւաքուածուի հէնց առաջին (Գառնիկ աղբէր) զրոյցի սկիզբը բոլորովին նման է մեր կողմերը նոյն նիւթի վրայ

---

1) Բարիք, հարստութիւն. 2) ահա. 3) այս աշխարհիս։

պատմուած զրոյցի հետ, իսկ վերջին մասը Ֆրանսիական Cendrillon անունով վէպիկի հետ: Քանի՜ը մեր ծանօթ զրոյցներից Գրիմ եղբայրների հաւաքած գերմանական զրոյցների հետ շօշափելի նմանութիւններ ունին: Նոյն իսկ մեր հին ժողովրդական գրականութիւնից Մասիսում շղթայակապ եղած Արտաւազդ թագաւորը յիշեցնում է մեզ Կովկասում կապուած Հերակլէսին. Նոյնպէս Տորք դիւցազնի վրայ պատմուած զրոյցները յիշեցնում են Հոմերոսի մէջ բերած խորամանկ Ոդիսեւսի անցքը միականի Պոլիփեմի հետ:

Այս տեսակ նմանութիւններ շատ կան զանազան ազգերի առասպելների մէջ, և սխալ կարծիք կը լինէր, եթէ ենթադրէինք թէ նոքա փոխառութիւնից առաջ եկած են: Ո՛չ, այդ նմանութիւնները բղխում են այն հանգամանքից, որ ազգերը, մանաւանդ ցեղակից ժողովրդները, իրանց կեանքի մանուկ հասակում (ինչպէս ներկայումս էլ զանազան ազգերի փոքրահասակ մանուկները) հասկացողութեամբ նման են միմեանց, այս պատճառով շատ անգամ նոյն և մի առասպելներ են ստեղծում:

Միայն այն ժամանակ երբ ժողովրդները գրաւոր գրականութեան ազդեցութեամբ ազգայնութեան առանձին պատկեր են ստանում, նոցա կեանքի հետ մտաւոր արդիւնքներն էլ որոշւում են միմեանցից:

«Մանանայի» երրորդ բաժինը — Երգք և Նուագք Հայրենեաց» — բացի երգերից ներկայացնում է հանելուկներ, ծածկագրութիւններ, արագախօսութիւններ, ծածկախօսութիւններ, դիւթութիւններ, մի քանի բժշկական տեղեկութիւններ ձեռագիր բժշկարանից հանած, հաւախօսութիւններ, կենդանակերպների և աստղերի ազդեցութիւնը մարդկանց վրայ (եր. 235—339):

Երգերը երկուսի են բաժանուած, մի մասը թէպէտ գրական են, բայց գաւառական ձևերի ու ոճերի հետ խառն են. իսկ միւս մասը վանեցոց ժողովրդական երգերն են: Առաջիններից վեց տաղ հանած են Աղթամարի վանքի ձեռագիր տաղարանից և Գրիգոր Աղթամարեցու գրչին են պատկանում, մնացած տասներկուսը Յովհաննէս Թուլկուրանցի, Ստեփաննոսի և ուրիշ երգիչների: Քանի՛ ու քանի տաղանդներ իրանց բանաստեղծական կրակը ծածկեցին, հանգցրին վարդապետական սև վերարկուի ու վեղարի տակ. քանի՛սն էլ այդ երկնային խանդը զսպել չկարողանալով՝ այլաբանօրէն յայտնեցին իրանց զգացմունքները, երբեմն վարդ ու բլբուլ երգելով, եր-

բեմն Էջմիածին կամ մի ուրիշ սրբազան առարկայ. մի օրինակ քեզ Պետրոս Ղափանցին....

Բուն «ժողովրդական» երգերից, որոնք դժբաղդաբար սակաւ են բերած Մանանայի մէջ, ահա մի փոքր օրինակ.

ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Չինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակն երկընուց,
Հովըւի փողն էր անուշ։
Հօտաղն եզներ կ'արածայ,
Մաճկալ պառկեր, քունն անուշ։
Ջրգըրգուն քամին կը փչէ,
Ծովային հովն էր անուշ։
Դաշտեր ձորեր մընջեր են,
Ջրրեր գլգլան ձէնն անուշ։
Հաւքեր թառան ուրենց բուն,
Բըլբուլի տաղն էր անուշ,
Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

Նոյնպէս և հանելուկները շատ սակաւ են թուով (երեսուն), իսկ առածներ, թէ և հաւաքած ունի հեղինակը, բայց նոցա հրատարակութիւնը ուրիշ անգամի է թողում, պատճառ բերելով դրքի սուղութիւնը։

Հանելուկները, այն կարճիկ յանգաւոր խօսքերը, որոնցով ազատ ժամերում միմեանց սրամտութիւնն են փորձում, արտայայտում են ժողովրդի հայեացքն ու հասկացողութիւնը բնութեան, աստուածութեան և մարդու վրայ։ Ահա մէկ—երկուսը.

Սեղան սատափէ,
Ոսկերն արծաթէ,
Լուսնակն ի փակ,
Բանլիքն արեգակ։ (Սառոյց)

—

Բռնեմ ափովս,
Թալեմ թաթովս.
Մեռնի տարով,
Ապրի բարով։ (Ցորեն)

—

Քար վէր վարին՝ քար չէ,
Կ'արածայ՝ տաւար չէ,
Ձու կ'ածէ՝ հաւ չէ։ (կրիայ)

Ժողովուրդը զուարճանալու, միտքը սրելու և նոր սերունդի լեզուն դիւրաթեքք անելու ուրիշ միջոցներ էլ ունի. օրինակի համար բառերը յեղաշրջելով արտաբերել ըէհ, ըէմ, դըամ, ցահ կամ ցախ, փոխանակ հէր, մէր, մարդ, հաց կամ խաց. կամ «եղբայրագիր» ասած ծածկագրութիւնը գործ ածելով, որի մէջ ա-ի տեղ բ են գրում, բ-ի տեղ գ, գ-ի փոխանակ դ, և այսպէս մինչև վերջը. զօրօրինակ՝ աղբեր, բարեկամ, սերտ բառերի տեղ գրում են՝ բճգզց, գբցզհբյ, վզցր, որ արտաբերելու հնար չլինելով՝ հարկաւ ուղիղ են կարդում: կամ վերջապէս լեզուի դիւրաթեքութեան համար շատ նոյնահնչիւն տառեր պարունակող բառեր միմեանց մօտ բերում են, որ եօթն անգամ արագ ու անսայթաք կրկնելու է. «Մեր բաղչան կայ տասն տանձի ծառ, տասն տանձի ծառի ծէրին տասն ծանր տանձ»:

Սորանից աւելի արուեստով ստեղծած է այն ծածկագրութիւնը, որով լեզուի տառերը չորս կարգի են բաժանում՝ ա, ժ, ճ, ռ, որոնցից իւրաքանչիւրի միջոցում, ինչպէս յայտնի է, իննական տառ կայ: Նախ մի ուղիղ գիծ են քաշում, որի տակ հորիզոնական ձևով շարուած կէտերով որոշում են գրուելու բառի իւրաքանչիւր դասը, նայելով թէ որ կարգին է վերաբերում. իսկ գծից վերև ուղղահայեաց ձևով շարուած կէտերը ցոյց են տալիս թէ յիշեալ չորս կարգի տառերից քանիերորդն է. ահա մի օրինակ.



ե ր կ ի ն ք ը պ ա ր դ է

Այս յիշեցնում է Անիի մի եկեղեցու պատերի վրայ գտնուած ու «Բազմավէպի» մէջ հրատարակուած ծածկագրութիւնը:

Գրքի չորրորդ բաժինը կազմում է մի շատ հետաքրքրական «ժամանակագրութիւն» սորանից հարիւր տարի առաջ գրուած խառն գրաբար ու աշխարհաբար լեզուով, որ Վանի մէջ օրինակուած է հեղինակի եղբօր ձեռքով: Այս ժամանակագրութիւնը, որի հեղինակը անյայտ է, խօսում է Հայոց ՌՃԼԳ թուականից մինչև ՌՄԼ (1133-1230) Վան նստող փաշաների գործերի վրայ: Այս մօտ

հարիւր տարուան ընթացքում վանում նստել են եօթանասուն փաշայ, որոնցից իւրաքանչիւրը միջին հաշուով մնացել է այդ քաղաքում 17 ամիս: Այս հանգամանքը առաջ է գալիս նորանից, որ փաշաները պետութեան նահանգները կապալով էին առնում կենտրոնական կառավարութիւնից, և ով որ աւելի դրամ խոստանար, նորան էին ուղարկում: Շատ անգամ մի և նոյն փաշան իւր յաջորդին պաշտօնից զրկել է տալիս և կրկին յետ է դառնում՝ կապալադրամը աւելացնելով: Նահանգների և գաւառների կառավարութեան այս եղանակը մինչև այժմ շարունակվում է Թուրքիայում: Հասկանալի է թէ խեղճ հայ ժողովուրդը, որի վրայ ծանրանում էին բոլոր հարկերը, մինչև որ աստիճան հարստահարվում ու կեղեքվում էր այդ փաշաների կողմից, որոնք դրան հարկը վճարելուց յետոյ, ամեն տեսակ ապօրինի միջոցներով աշխատում էին որքան կարելի է շուտ ապահովացնել իրանց նիւթականապէս, հաստատ իմանալով որ երկար կեանք չունին, իշխանութիւնը շատ ժամանակ ձեռներին մնալու չէ: Այս պատճառով նոքա անիրաւութիւն անիրաւութեան վրայ և անգթութիւն անգթութեան վրայ էին գործում: Արդարև, ժամանակագրութեան իւրաքանչիւր տողը լի է հայ ժողովրդի կրած չարչարանքներով, ապօրինի կերպով պահանջուած հարկերի և հաւատափոխութեան պատճառով. խեղճերին անգթաբար խեղդում, կախում, մորթազերծ էին անում, կանանց բռնաբարում էին, մատաղահաս երեխանց ոտներից կախ տալով կէս էին անում, կանանոցները պատանիներով ու աղջիկներով լցնում . . . : Ժողովուրդը ոչինչ ընդդիմութիւն չէր ցոյց տալիս, որովհետև հրաման կար որ «Քրիստոնեայ ոք մի՛ իշխեսցէ սպիտակ չալմայ, դեղին մաշ և մեստ հագնել, և ոչ թուր, թուանք, խանչալ պահել, և ոչ թամքով այարով ձի հեծնել»: Այնու ամենայնիւ հայերը երբեմն ճարահատած փորձում էին բազմութեամբ գնալ կենտրոնական կառավարութեանը գանգատելու. բայց նոյն անխիղճ փաշաների շողոքորթութիւնը ճանապարհից յետ էր դարձնում նոցա, մանաւանդ որ նոքա երկնչում էին որ եթէ գանգատները անլսելի լինին, յետ դառնալիս՝ փաշաների վրէժխնդրութեան զոհ պիտի լինին: Իսկ մեր հոգևորականները ինչ էին անում այդպիսի միջոցներին: Նոքա փոխանակ իշխող տէրութեան և հարստահարուած ժողովրդի մէջ միջնորդ հանդիսանալու, այս վերջինի դրութիւնը փոքր ինչ թեթևացնելու համար, նոքա, ասում եմ, աստուածահաճոյ գործերով էին զբաղւում, այսինքն վանքեր

ու եկեղեցիներ էին շինում, մոռանալով որ եկեղեցին ժողովրդի համար է և Աստուծոյ տաճարը յաճախողները շարունակ կոտորածներից և հաւատափոխութիւնից քչանում, սպառվում են:

Ժամանակագրութիւնը խօսում է նոյնպէս բնութեան երևոյթների վրայ, արևի և լուսնի խաւարումների և մանաւանդ երկրաշարժների վրայ, որոնք ի հարկէ ոչ թէ երկրի հրաբխային լեռների ազդեցութիւնից, այլ աստուածային բարկութիւնից առաջ եկած են համարվում:

Վերջապէս «Մանանայի» հինգերորդ և վերջին բաժինը կազմում է մի «բառարան», որ պարունակում է մօտ 800 բառ (եր. 407-456), շատը մեզ համար նոր ու անծանօթ. միայն բոյսերի ու բանջարների վերաբերեալ 167 բառ ենք գտնում:

Առ հասարակ Վանի և նորա շրջակայքի բարբառը միւս գաւառական բարբառներից որոշվում է գլխաւորապէս ձայնական փոփոխութիւններով, սղումներով ու ամփոփումներով և մի քանի հոլովական ու խոնարհական առանձնութիւններով:

Վանի բարբառի յատկութեամբ

ա սղուելով փոխվում է **ը**, երբեմն էլ **ե**. ինչպէս. **ը**մէն, **ը**նցաւ, **ը**ստեղ, հալ**ը**ներ (հալաւ).— **ե**սոր, **ե**դոր, **ե**նոնցից:

ե բառերի առաջին վանկում և մանաւանդ սկզբում փոխվում է **է**. **է**րեք, **է**րես, **է**կեր են, **է**բե, (եբեր), **է**հան (եհան), **է**զարկ (եզարկ), կը տ**է**սնան, կծ**է**ցին:

այ երկբարբառը ամփոփուելով փոխվում է **է**. **է**ն, **է**դ, ձ**է**ն, ք**է**լել, փ**է**դատ, տղ**է**:

իւ երկբարբառը սղվում է **ու**. **ու**ր, **ու**րենց, **ու**րն **ու**ր (ինքն իրան), աղբ**ու**ր:— **թիւն** վերջացած բառերի մէջ այս երկբարբառը փոխվում է **ե**. իսկ հոլովելիս բոլորովին դուրս է ձգվում. պատմու**թեն**, աղեկու**թնէ**, խօրոտկու**թնէ**ց:

ոյ Երկբարբառը սղվում է **ո**. ք**ո**ր (քոյր), լ**ո**ս բ**ո**ն, շ**ո**տ (շուտ):

Բաղաձայններից հ և պ քիչ անգամ փոխվում են **խ** և **փ**. **խ**աց, **խ**էր, **խ**ուրնի **խ**րեղէն, **փ**ակել **փ**որտել:

Գոյականների հոլովման մէջ շատ ընդհանրացած են եզակի սեռականի համար **ու**, իսկ յոգն. սեռ. համար **ուց**. գէլ**ու**, դառ**ու**, պառաւ**ու**ն, թագաւոր**ու** արծւ**ու**.— սարեր**ուց**, ճըժեր**ուց**, ծընկուեր**ուց**, գլխներ**ուց**, ձագեր**ուց**, թևեր**ուց**:

Եզակի բացառականում **էն** վերջաւորութեան հետ շատ անգամ

գտնում ենք մեզ ծանօթ էց, օց ձեւերը. խօսէն, ծօցէն, հօրէց, մարդօց, տարօց:

Հայցականում երբեմն երեւում է Մշեցոց զ նախդիրը, որ դրվում է և նախադասա յատկացուցչի վրայ. զըմէն, զըմէնի ջուղաբն:

Միւս նախդիրներն առ հասարակ գործածական չեն. բարդութիւնների մէջ ե նախդիրը փոխվում է ը. սարերնըվեր, բերանըվեր:

Նախադրութիւններից ոմանք հոլովական բառերից նախադաս են վարվում. ծօռ հալոր. վէր իմ աչէց (աչքիս վրայ). հեռ քե. մէջ ոսկի մաղէն:

Եւ շաղկապը կրճատվում է սովորաբար, եթէ յաջորդ բառը ձայնաւորով սկսի. մեր 'ւաղջիկ. աչ ք'ւիրես. նեա 'ւանեզ. բե 'ւարի:

Որոշեալ յօդը սովորաբար անգործածելի է. զօր. իմ գլօխ դնեմ քօ գօգ քնեմ: Ընդհակառակն անորոշ յօդը երբեմն կրկնվում է՝ բառի սկզբում մէկ, իսկ վերջում մը ձեւով. Մէկ ջհել ջիւան մը:

Բայերի մէջ մեր ապառնին արեւմտեան բարբառների ընդհանուր սովորութեամբ ներկայի տեղ է գործ ածվում. միայն եզ վերջացածների եզ. 3 րդ դէմքը ե է լինում. այսպէս. ով ե. ի՞նչ խօսք ե. կ՚անե, կը հանե, կը կորե:

Անցեալ դերբայների վերջից երբեմն, իսկ հրամայականի վերջից գրեթէ միշտ ր տառը դուրս է ձգվում. այսպէս ասում են՝ ես եմ ըրածե. էն ի մնացե, չեմ ծնե. չեմ բուսե.—բե՛ (բեր) կե՛ (կեր), տե՝ (տես), եղե՛ (եղեր):

Քեզ, ձեզ, մեզ դերանունների զ նոյնպէս դուրս է ձգվում. քե, մե, ձե:—Ինչ դերանուան տեղ գործ է ածվում չէկ ձեւը, կրճատութիւն ինչէկ ծանօթ բառի:

Կրաւորական, փոխադարձ ու անդրադարձ բայերի անցեալ կատարեալը ց դառ չունի վառան. կորսան. լուացան. սպանան. փոխանակ վառուեցան, սպանուեցան:

Ցնել վերջաւորուած բայերի ներկան առանձին կազմութիւն ունի. կ՚ընցուցեմ. կը հասցուցեմ. կը կոտրցուցեմ. կը նստցուցեմ:

Զել վերջաւորուած բայ չկայ, այլ միայն նել. կը փախնե. կը բռնե. կը դըպնե:

Վանի բարբառի մէջ կան շատ առաջին կարգի ընտիր բառեր, երբեմն նաև արմատներ, որ հին լեզուն միայն բարդութիւնների մէջ գործ է դնում: Այսպէս են օրինակի համար՝ «քէն, կեր (կերակուր), փողպատ (օձիք) փեղկ (դրան թև) վանդակ, նշանաբան, բռնատուն

(բանդ) գալըն, շապկել, բանթող, գրկաչափ, ափալթալթիկ» (գրբրյափիլթերս), ևայլն:

Ուշադրութեան արժանի են նոյնպէս առանձին ոճերը, ինչպէս՝ «օր մը օրանց (մի յաւուրց), տեղոց տեղ, (տեղնիտեղ), հացբերան աշխատել. սև սուգ կապել», և այլն:

Յաւական է որ մարդ խնկական աղբիւրների վրայ փոքր ինչ պարապի գաւառական բարբառներով, և անշուշտ կը համոզուի որ նոքա առհասարակ թանկագին գանձեր են պարունակում, որ մեր գրականական լեզուն կարող էր և պէտք էր վաղուց արդէն ընդունէր ու սեպհականէր: Մեր նոր լեզուի աղքատութիւնը զգալով, մանաւանդ բառերի կողմից, մենք անդադար դիմում ենք գրոց լեզուին, չհասկանալով կամ չկամենալով հասկանալ որ հին լեզուի բառարանները, որքան էլ ստուար լինին, այնու ամենայնիւ շատ ու շատ բառեր չեն մտել նոցա մէջ, և պատճառը շատ հասկանալի է: Մեր հին մատենագրների գրուածները վերաբերում են առանձնապէս պատմական և կրօնական-փիլիսոփայական ճիւղերին. գիտութիւնները և մանաւանդ ժողովրդի առանձին և հրապարակական կեանքի երևոյթները ամենևին չեն մշակուել ուսումնական և բանաստեղծական գրուածների միջնորդութեամբ. հետևաբար և այդ հարուստ շրջաններին վերաբերեալ բառերը ձեռագրների մէջ չլինելով՝ չէին կարող բառարանների մէջ մուտ գտնել: Բացէ.ք մի Ֆրանսիական-Հայ կամ իտալական-Հայ բառգիրք և համարեա ամենայն երեսի մէջ կը գտնէ.ք հետևեալ մեկնութիւնները. «է բոյս ինչ, է թռչուն ինչ, է ձուկ ինչ, է ծաղիկ ինչ, է գործի ինչ, է թուփ ինչ», և այլն: Դարձէք այժմ դէպի կենդանի բառարանները, դէպի գաւառական բարբառները, և ձեր տարակուսութիւնների լուծումը կը ստանաք: Արուանձտեան վարդապետը միայն բոյսերին վերաբերեալ 167 բառ է գտնում վանեցոց մէջ, և մենք վստահ ենք որ այդ ցանկը դեռ շատ ու շատ թերի է, որ անշուշտ ժամանակին կը լրանայ, երբ գաւառական բարբառների հետազօտութեան գործը գլուխ գայ:

Ժողովրդական բարբառների գրականական լեզուի հետ ունեցած մօտիկ յարաբերութիւնների վրայ մտածելիս՝ ես միշտ յիշում եմ երևելի լեզուաբան Մաքս Միւլլերի գեղեցիկ համեմատութիւնը, թէ գաւառական բարբառները նման են փոքրիկ առուների, իսկ գրականական լեզուն՝ մի ծովի, որի մէջ թափվում են առուները. եթէ առուների ընթացքը կտրես, ծովը շուտով կը ցա-

մաքի: Հետևաբար գրականական լեզուի կենդանութիւնն ու գոյութիւնն անգամ կախուած են գաւառական բարբառների մշակութիւնից և այս վերջինների հարստութիւնները առաջինի մէջ մտցնելուց:

Այս ճշմարտութիւնը աչքի առաջ ունենալով մենք միշտ ամենամեծ համակրութեամբ պիտի ողջունենք «Մանանայի» նման հրատարակութիւնները, և ուրախ ենք հաղորդելու ընթերցողներին, որ Սրուանձտեան վարդապետը դիտաւորութիւն ունի իւր ձեռնարկութիւնը շարունակելու: Միայն թոյլ ենք տալիս մեզ մի համեստ նկատողութիւն անել արժանապատիւ հօրը, այն է աշխատել, որքան կարելի է, չծանրաբեռնել իւր հրատարակութիւնները նիւթին չվերաբերուած կամ վաղուց ծանօթ բաներ տպելով: Մենք նորանից, Ալիշանեանի առածին պէս, պահանջում ենք «աւելի մեծ բրոյներ, որ գրոյն ալ աւելի ընդարձակ ըլլայ»: «Մանանայի» մէջ, օրինակի համար, աւելորդ են մեր կարծիքով Տ. Գաբրիէլ Պատկանեանի «Դողթան երգը», Նարեկացու «Ծննդեան և Յարութեան» տաղերը և Աբովեանի «Ողբը», որոնց տեղ առաւել օգտակար կը լինէր անշուշտ մէկ-երկու ժողովրդական զրոյց, մէկ-երկու երգ աւելի հրատարակել: Բացի սորանից գրքի մէջ բաւական տեղ են բռնում երբեմն երկար ու ձիգ դատողութիւններ այլևայլ առարկաների վրայ, որոնք խնդիրը պարզելու տեղ՝ աւելի ևս մթնեցնում են: Այսպէս, յայտնելով այն ենթադրութիւնը թէ Վանի սեպաձև արձանագրութիւնների մէջ գործ դրուած հայերէն լեզուն աւելի մօտիկ պէտք է լինի ժողովրդական լեզուին քան մեր գրաբարը, հեղինակը ասում է. «Խնդիր է թէ «Հա՞յր, մա՞յր ուղիղ են, եթէ հէր, մէր» հնչել, արդեօք ո՞ր ձևով կարդալու է եթէ բևեռագրի մէջ պատահի»: Այն ինչ շատ պարզ է որ է հնչիւնը ամփոփուած ու սղուած է նախնական այ հնչիւնից. փոփոխութիւն որ ուրիշ լեզուների մէջ էլ երևում է: Շատ աւելի լաւ կը լինէր, եթէ հեղինակը իրան հեռու պահած լինէր այս տեսակ դատողութիւններից ու խորհրդածութիւններից, որոնք գիրքը ստուարացնելուց աւելի խորհուրդ չունին և որոնց տեղ զրոյցների, երգերի, հանելուկների բաժինները կարելի էր աւելի ամբողջացնել և մի նոր բաժին էլ մտցնել գրքի մէջ, այն է առածները: Հեղինակի համար մանաւանդ հեշտ էր այդ բանը կատարել, որովհետև առածների, հանելուկների և առակների վրայ խօսելիս՝ խոստովանում է թէ «ես մաս մը ունիմ, հանդերձ կաճէտցի ծերու (պակասամտաց) վրայ շինած առասպելներով»:

Առհասարակ ցանկալի կը լինէր որ արժանապատիւ հայրը իւր ապագայ աշխատութիւնների մէջ աւելի հաւատարիմ մնար «Մանանայի» յառաջաբանի մէջ գծած ծրագրին: «Ես գրականութեան այն շինական մշակն եմ, ասում է նա, որ ի վայրիս և ի մայրիս կը թարթափի. լեռնային, դաշտային տունկեր, ծաղիկներ և բոյսեր կը ժողովէ, և կողովով կ'ածէ զայն ի վաճառ ի հրապարակս քաղաքին, յորմէ առեալ քաղաքացին՝ արուեստիւ կը վերամնկէ զայն և կը դարմանէ ի պարտէզս և ի բուրաստանս ապարանից մեծատանց: Իսկապէս այս է իմ երկն. բանասիրաց և գրասիրաց համար պատրաստած նախնական նիւթ»:

Շատ ուղիղ էք ասում, արժանապատիւ հայր. ձեր կոչումն է ազգի գրագէտների ու բանասէրների համար հում նիւթ պատրաստել: Հետևեցէք այդ կոչմանը և հաւատի եղէք որ ձեր՝ ազգային գրականութեան մատուցած ծառայութիւնը փոքր չի լինիլ:

Մի վերջին նկատողութիւն էլ: Առհասարակ մեր հեղինակը չափազանց շատ ընկած է գրոց լեզուի ազդեցութեան ներքոյ, այնպէս որ երբեմն ամբողջ նախադասութիւններ գրաբար ձևով գրած են, ինչպէս որ երևում է յօդուածիս մէջ բերած հատուածներից: Ժողովրդական կեանքով պարապողին մանաւանդ ներելի չէ նոր գրականական լեզուն մինչև այդ աստիճան գրաբարի խիստ խնամակալութեան ներքոյ դնել:

ԳՐԻԶ

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ, ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ. Կոստանդնուպօլիս, 1874: Երկրորդ տիպ: Գինն է 15 ղրուշ:

«Մանանայի» հետ մեր կողմերը առաջին անգամ երևեցաւ և այս գիրքը, թէև արդէն սորանից երկու տարի առաջ երկրորդ տպագրութեամբ հրատարակուած է: Այս ապացոյց է ընդհանրապէս այն սառն անհոգութեան, որով երկու կողմի՝ Թուրքիայի և Ռուսիայի հայ գրագէտները փոխադարձաբար անտարբեր են դէպի հայ միտքը ու հասարակ և դէպի հայ կեանքը մասնաւորապէս: Ո՞վ կարող է, օրինակի համար, մեզանում ասել թէ անցեալ 1875 թուին ինչ գրքեր են տպագրուել մեր Թուրքիաբնակ եղբայրների մէջ, կամ

աւելին ասեմ, ո՞վ կարող է ասել թէ ներկայումս ինչ հայ պարբերական հրատարակութիւններ լոյս են տեսնում առ հասարակ Թուրքիայում, քանի՛ շաբաթաթերթ և օրաթերթ կայ այնտեղ: Ամօթով պէտք է ասել, որ այս տեսակ տեղեկութիւններ մենք երբեմն քաղում ենք օտարական աղբիւրներից, այն է եւրոպական մամուլից: Միևնոյն մեղադրանքը վերաբերում է հարկաւ և մեր Թուրքիաբնակ եղբայրներին:

Սակայն եթէ երկու կողմի հասարակութիւնները ոչինչ մօտաւոր յարաբերութիւն չունեին միմեանց հետ և համարեա իրարու անծանօթ են, արդեօք չկա՞յ մի միջոց այդ յարաբերութիւնը հաստատելու: Ճշմարիտ է, մենք համարեա չունինք հասարակաց գրադարաններ կամ Թանգարաններ, եղածներն էլ երկու կողմի գրագէտներին միապէս անյայտ են: Այս գրադարանների միջնորդութեամբ կարելի էր ծանօթանալ ընդհանրապէս հայ հասարակութիւնների մօտաւոր և բարոյական կեանքի, նոցա ընկերական դրութեան, նոցա միտքը զբաղեցնող առօրեայ խնդիրների հետ: Բայց մի՞թէ առ այժմ այդ յարաբերութիւնը վերականգնելու համար չէին կարող միջնորդ հանդիսանալ հայ գրավաճառները: Թիֆլիսումը ներկայումս երեք հայ գրավաճառ կայ, Կոստանդնուպօլսում, Զմիւռնիայում և Թուրքիայի ուրիշ հայ կենտրոններում միասին առած՝ շատ աւելի: Այդ հայ գրախանութները կարող էին ամենայն յաջողութեամբ հայ մտքի միջնորդի պաշտօն կատարել, յանձն առնելով երկու կողմի պարբերական հրատարակութիւնների համար բաժանորդագրութիւններ հաւաքել և հայ գրագէտների մտաւոր արդիւնքները միմեանց մէջ փոխանակել: Մի ընթերցարան այդպիսի գրախանութի կողքին, ուր կարելի լինէր արևմտեան հայ լրագրեր ու գրքեր կարդալ, նոյնպէս իւր արդիւնքը կ'ունենար: [1])

Այս ընդհանուր նկատողութիւնից յետոյ դառնանք դէպի մեր հեղինակը:

---

[1]) Այս ընթացքը պահանջում է նոյն իսկ գրավաճառների նիւթական օգուտը, եթէ նոքա մտածում են իրանց առևտրական ասպարէզը ընդլայնել: Իհարկէ, սկզբումը, ինչպէս ամէն բանի մէջ, այսպէս և այստեղ փոքր ինչ զոհողութիւն է հարկաւոր, և խկոյն ոսկէ սարեր չսպասել, առ այժմ քչով բաւականանալով և իրանց յոյսը դնելով ապագայի վրայ, որ անշուշտ կը վարձատրէ նոցա փափէս:

Պ. Մինաս Չերազի «Գրական փորձերը» բաղկացած են զանազան աւելի կամ պակաս ընդարձակ հատուածներից այլ և այլ նիւթերի վրայ: Առաջին տեղը, երկար՝ բայց սիրուն յառաջաբանից յետոյ (62 երես), բռնում են «տաղերը», փոքրիկ ոտանաւորներ, թուով տասներկու, ընդհանրապէս քնարական յատկութեամբ, ուր փոփոխակի երգվում են Պէշիկթաշլեանի մահը, Լամարտինի տապանը, Նուբար փաշան, որդեկորոյս մայրը, զեփիւռը, Խրիմեանը, պանդուխտը և այլն (եր. 1—26): Յետոյ գալիս են կարճիկ «ճառեր», ընդամենը ութը, ընդհանրապէս դաստիարակութեան և լուսաւորութեան վրայ (27—97). տասը-տասնեհինգ «առածներ» (կամ աւելի ճիշդ այն հատու խօսքերը, որ Եւրոպացիք **«Pensées»** են անուանում), որոնցից իմանում ենք երբեմն և վաղուց յայտնի ճշմարտութիւններ, օրինակի համար թէ՝ «Հանճարը կը ստեղծէ». «երկու նամակ», որոնց և հեղինակը կարծես առանձին նշանակութիւն չէ տալիս իր՝ յառաջաբանի մէջ. «գրադատութիւններ», ընդ ամենը հինգ, ժամանակակից հայ թատրոնական գրուածների վրայ, որոնց մտրակում է իրանց պակասութիւնների համար թէ գրականական արժանաւորութեան և թէ բեմական արուեստի կողմից (106—159): Վերջապէս գրքի վերջին և բաւական նշանաւոր մասը բռնում են «Արգօսի խոհերը» վերնագրով խորհրդածութիւններ այլ և այլ նիւթերի վրայ և փոքրիկ պատկերներ բնութիւնից և հասարակական կեանքից (160—234):

Ահա այս է «Գրական փորձերի» բովանդակութիւնը, որ հեղինակը նուիրում է իւր հօրը այսպիսի խօսքերով. «Կը ձօնեմ այս գիրքը իմ վաղամեռիկ հայրին, Գրիգոր Չերազ, որ մի գործաւոր էր ատաղձագործ, տգէտ, աղքատ, թշուառ, այլ պարկեշտ և ազնիւ»:

Ընթերցողը կը կամենայ անշուշտ մի դատողութիւն լսել այս գրքի ներքին արժանաւորութիւնների վրայ: Ահա երկու խօսքով: Գեղեցիկ զգացմունքներ, ազնիւ ձգտումներ, խոհուն դատողութիւններ, լուրջ հայեացք իրերի վրայ. կենդանի և ճիշտ նկարագիրներ, անսահման անձնուիրութիւն դէպի հայ ազգը և մանաւանդ դէպի ժողովրդի ստորին կարգը, որին պատկանում է և հեղինակը իւր ծննդեամբ և որի մտաւոր ու նիւթական աղքատութեան և թշուառութեան վրայ ջերմ ու անկեղծ արտասուքներ է թափում, դրաւիչ լեզու, զգայուն սիրտ՝ սիրող արևմտեան քաղաքակրթութեան, որի ներկայացուցիչների անունները

չափազանց շատ է յիշում, զարմանալի եռանդուն բնաւորութիւն, որով երբեմն ծայրահեղութիւնների մէջ է ընկնում, երիտասարդ հասակի յատուկ համարում իւր սեպհական գործունէութեան վրայ, որ երբեմն անձնագովութեան է մտնում,—ահա սոքա են այն տպաւորութիւնները որ մարդ դուրս է բերում այս աշխատութեան ընթերցումից, այս են մեր առաջ դրած գրքի գեղեցիկ և թոյլ, արժանաւոր ու թերի կողմերը: Լաւ կողմերը վերաբերում են ի հարկէ հեղինակի ճշմարիտ տաղանդին, որ խոստանում է զարգանալ և շատ աւելի գեղեցիկ արդիւնքներ արտադրել, «եթէ ազգս ինձ խրախոյս բառնայ այս վեհերոտ փորձիս մէջ, թէ քաջալերէ առաջին քայլս գրական ասպարէզին մէջ»: Իսկ թոյլ կողմերը տրուելու են այն հանգամանքին, որ մեր հեղինակը դեռ պատանեկութեան հասակի մէջ, դեռ ուսումնարանի նստարանի վրայ էր, երբ գրեց այդ արդարև ըստ մեծի մասին գեղեցիկ հատուածները, որոնցից շատը Պօլսոյ մամուլը առանձին բաւականութեամբ շտապում էր հրատարակել:

Երիտասարդական հասակի այդ բնական եռանդից ու յանձնապաստանութիւնից առաջնորդուած՝ մեր հեղինակը մոռացեց իւր կարողութիւնից և մեր նոր լեզուի հանգամանքներին նայելով՝ նաև իւր իրաւունքից բարձր գործի ձեռնամուխ լինել, այն է վերանորոգել արևմտեան հայ գրաւոր լեզուն: Այս խնդիրը այնքան կարևորութիւն ունի Հայոց նոր կեանքի համար, որ մի քանի բացատրութիւնների կարօտ է:

Յայտնի է որ նոր հայերէն կամ, ինչպէս որ սովորութեան է եղած ասել, «աշխարհաբար» լեզուն, որ ժողովրդի բերանում վաղուց էր ապրում, գրականութեան մէջ այս դարի սկզբից սկսաւ գործածուիլ, Թուրքիաբնակ Հայոց մէջ մամուլի միջնորդութեամբ, իսկ մեր մէջ առաջին զարկը տուաւ յիշատակի արժանի Խ. Աբովեանի զգայուն գրչի տակ և հետզհետէ ընդհանրացաւ հրապարակական թերթերի և դասական գրքերի միջնորդութեամբ: Աւելորդ է այստեղ յիշել այն հալածանքները որ գրոց լեզուի պաշտպանները յարուցին նոր լեզուի ախոյեանների դէմ, չնայելով որ մեծ մասը ծանօթ չէին անգամ այն լեզուի հոգուն որ այնպիսի յամառութեամբ պաշտպանում էին: Նոքա առհասարակ բարձրից և արհամարհական ժպիտը երեսների վրայ խօսում էին այն նորածին ու անմեղ մանկան վրայ, որ երկար ժամանակ գետնափոր տեղեր սողալուց յետոյ, ուժ էր կանգ-

նել, լոյս աշխարհ եկել. ապօրինի ծնունդ համարեցին նորան, գռեհկական, կոշտ ու կոպիտ ածականներ դրոշմեցին նորա ճակատին, մոռանալով որ իրանք էլ մի և նոյն լեզուն են գործ դնում իրանց առանձին կեանքի մէջ և, որ աւելի ծիծաղելին է, գռեհկական լեզուի գոյութիւնը և ինքնուրոյնութիւնը հերքելու համար՝ նոյն գռեհկական լեզուն էին գործ դնում: Վերջապէս այս ախոյեաններից ոմանք, տեղի տալով ժամանակի պահանջներին, առաջ բերին այն անհեթեթ կարծիքը թէ նոր լեզուն ընդունելու է միայն իբրև անհրաժեշտ չարիք, որ ժամանակին պիտի վերանայ, և վերջապէս պիտի թագաւորէ գրոց լեզուն: Այս ուրիշ ազգերի գրականութիւնների մէջ երբէք չտեսնուած ու չլսուած տեսութեանը հետևելով՝ նոքա կազմեցին մի խառնուրդ հին և նոր լեզուներից, գրաբարից և աշխարհաբարից, որ ոչ մէկն էր և ոչ միւսը, այլ իւր այլանդակութեամբը յիշեցնում է մեզ հին դիցաբանութեան այն մարմարեայ հրէշաւոր արձանները, որոնցից կէսը մէկ և կէսը ուրիշ կենդանու, իսկ ամբողջը երևակայական էակի պատկեր էր ներկայացնում: Իբրև ապացոյց բաւական է յիշել ընթերցողին հանգուցեալ «Ծռաքաղի» լեզուն, որ իւր հետևողներն ունի մինչև այսօր, թէև այս վերջինները ուրիշ ուղղութեան կամ, աւելի ճիշտ ասել, ոչ մի ուղղութեան տէր չեն:

Սակայն և նոր լեզուի ախոյեանները իրանց չափազանց եռանդից և խնդիրը պէտք եղած կէտից չդիտելով՝ անդադար ծայրահեղութիւնների մէջ ընկան, երբեմն կարծելով թէ նոր լեզուն նոր ժամանակների թարգման լինելով՝ եւրոպական լեզուների կաղապարի վրայ պիտի ձուլուի, երբեմն ձգտեցան նոր ու ինքնահնար ձևեր մտցնել լեզուի մէջ, որ նորա հոգուն հակառակ էին, երբեմն էլ նոր լեզուի մէջ հնի ձևերը մտցնելու փորձութեան մէջ ընկան: Այս կուսակցութեան ներկայացուցիչներից մինը, Պ. Ս. Նազարեանցը, իւր երկարատև գրականական գործունէութեամբ հաստատում է մեր ասածները: Ընթերցողը յիշում է անշուշտ որ «Հիւսիսափայլից» առաջ նա ուրիշ լեզու էր գործ դնում, այդ ամսագիրը հրատարակելու ժամանակ՝ ուրիշ, իսկ վերջին ժամանակներում դարձեալ ուրիշ լեզու, ուր գրոց լեզուի հիմնական ձևերը երևան են գալիս:

Ինչ որ մեր լեզուի համար ասացինք, նոյնը դժբաղդաբար պէտք է կրկնենք և արևմտեան, այսինքն առհասարակ մեր Թուրքիայի եղբայրակիցների լեզուի վերաբերութեամբ: Նոյն կռիւները, նոյն անպտուղ ու անհետևանք վէճերը, նոյն պատճառաբանու-

թիւնները և հակառակ փաստերը երևեցան և այնտեղ նոր լեզուի վերաբերութեամբ, և մինչև այժմ դեռ շարունակվում են: Նոքա մանաւանդ աւելի տաք բնաւորութեան և վառ երևակայութեան տէր լինելով, օրօրոցից սկսած այնքան չարչարեցին ու տանջեցին այդ խեղճ մանկան, որ մինչև այժմ դեռ խելքը գլուխը չէ եկել: Կոստանդնուպօլսում այս տարի երկրորդ քառորդին, եթէ չեմ սխալվում, կազմուեցաւ մի ընկերութիւն երիտասարդ տաք գլուխներից, որի գործունէութեան հետևանքն եղաւ նոր լեզուի Քերականութեան հրատարակութիւնը: Ցաւում ենք որ այդ գիրքը ձեռի տակ չունինք, որ կարողանայինք մի գաղափար տալ ընթերցողին թէ ինչ այլանդակութիւնների կարող է հասնել մարդկային խելքը, եթէ հաստատ հողի, իրական աշխարհի մէջ կանգնած չէ, այլ օդում, իդէալական աշխարհումն է պտոյտ գալիս:

Այս փորձերը լեզուն իւր բնական սահմանից դուրս հանելու և քմածին ու կամայական ձևերով պատուաստելու՝ դեռ ևս շարունակվում են Վօսփորի ափերում, չխրատուելով ամենևին այն հանգամանքից, որ այդ տղայական փորձերը մէկ կողմից երևում են, միւս կողմից մռայութեան անդունդն են գնում: Ամէն պատանի որ առաջին անգամ գրիչը ձեռք է առնում, պարտք է համարում իրան **խօր օեղհօլէն** լեզուով հանդէս դուրս գալ, մոռանալով որ լեզուն իւր սեպհականութիւնը չէ, այլ ժողովրդինը, որի բարբառներից նա գլխաւորապէս իւր սնունդը պիտի առնու:

Պ. Մ. Ջերազը «Գրական փորձերի» մէջ նոյնպէս **խօր օեղհօլէն** լեզուովն է ասպարէզ գալիս և մինչև անգամ յառաջաբանի չորս հինգ երեսի մէջ ամփոփում է իւր հնարած քերականութիւնը:

Քննենք համառօտ այդ ձևերը:

Յայտնի է որ իւրաքանչիւր լեզուի բառերը փոխուելու ժամանակ՝ նոքա ենթարկվում են զանազան ձայնական փոփոխութիւնների կամ սղվում, ամփոփվում են: Հայերէն լեզուի յատկութեամբ, օրինակի համար, **է**, **ոյ** փոխվում են **ե**, **ու**. իսկ **ե**, **ու**, մանաւանդ միավանկների մէջ, անյայտանում են: Մեր հեղինակը այդ անկանոնութիւնը կանոնաւորելով՝ ասում ու գրում է **Սէրտի**, **Գէծի**, **Գէնի** (գինի), **գլուխին**, **Թողուլով**: Իւ վերջաւորուած բայերը հոլովելիս՝ **ե** տառը փոխվում է **ե**. բայց որովհետև միւս վերջաւորութեամբ բայերի ձայնաւորները չեն փոխվում, պարոնը անփոփոխ է պահում և այստեղ **ե** տառը միակերպութեան համար, որ նորան շատ սիրելի է առհա-

սարակ. նա ասում է՝ ընկէլ, տանէլ, թռչէլ, կորչէլ, թարգմանուէլ, ներկայացուէլ, փոխանակ՝ տանելու, կորչելու, ներկայացուելու: Լ վերջացած բառերը յօդ ընդունելու ժամանակ՝ լ տառը դուրս են թողնում, կամ եթէ պահում են՝ ն յօդն են ընդունում: Պարոնը իրան կիրթ ճաշակի տէր է համարում ասելով՝ մեքենայը, քահանայը, ծառայը, ապագայը, փոխանակ՝ մեքենան, ապագան, կամ քահանայն, ծառայն: Իրան սիրելի միակերպութեան սկզբին հետևելով՝ մեր քերականը ընդունում է միայն մի հոլովում՝ ի սեռականով և ամեն տեսակ բառ մէկ կանգունով չափում. «աշխատութիւնի, գովելի (գովելու), մարդի, կնի, հայրի, մայրի, եղբայրի քոյրի, Աստուածիս: Գ տառով վերջաւորուած բառերից այդ տառը երբեմն իբրև աւելորդ ջնջում է, երբեմն իբրև հարկաւոր պահում է. այսպէս ասում է՝ օրէններ, «խօսեր, գիրերի» (գիրք). և միևնոյն ժամանակ «օրինօք, աչք, բարքեր»: Բացի սորանից պարոնը աշխատում է գրաբարը աշխարհաբարի հետ հաշտեցնել, գործածելով և հին լեզուի ձևեր, այսինքն երկու առանձին գոյութիւն ունեցող մարմինների խառնուրդից մի անբնական մարմին կազմելով. այսպէս գտնում ենք գործածուած «գնաց, ի նմանէ, ի ձէնջ, աչք ի գետին, սմա համար», և այլն:

Սոքա են ընդհանրապէս մեր հեղինակի առաջարկած լեզուի ձևերը: Իւր ձեռնարկութիւնը արդարացնելու համար՝ պարոնը յիշում է թէ այն օրից երբ սկսաւ գրել, զգաց թէ քաօսի և անիշխանութեան մէջ է աշխարհաբար լեզուն, նման այն ազգին որ գործ է ածում այդ լեզուն: Իսկ իւր բռնած ընթացքը արդարացնելու մտքով՝ նա ասում է. «Զերծ ամեն նախապաշարումէ հաւասարապէս սիրելով ամեն գրութիւն, չը թողուլով ինձ տածել մի բացառիկ համակրութիւն կամ հակակրութիւն, բաղդատեցի մեր լեզուին զանազանութիւնները. ուր գրաբարը աշխարհաբարէն աւելի բանաւոր կանոնաւոր, դիւրին, պայծառ էր, գրաբարը ընդունեցայ. ուր Տփղիս լաւագոյն էր Կոստանդնուպօլիսէն, Տփղիսին յարեցայ. ուր Վասպուրական իրաւունք ունէր և ոչ Լեհաստան, Վասպուրականին հետևեցայ. և, այսպէս, ջանացի կազմել մի լեզու որ կարենայ ընդունելի լինիլ ամենին, անձնիւր գաւառ իւր երեսփոխանը ունենալով հոն»:

Ներեցէք, պատուելի պարոն Չերազ, բայց այդ կամ կատակ է ձեր կողմից, կամ հաճոյանք: Ձեր առաջ բերած ձևերը, հաւատացնում եմ ձեզ, յիշեալ բարբառներից ոչ մինի մէջ չկան. բացի

Թիֆլիսի է սեռականից, որ դուք անխտիր գործ էք դնում ամէն տեսակ բառերի մէջ, կանոնաւոր և անկանոն, գոյական և դերբայ: Ձեր սկզբին հաւատարիմ մնալու համար՝ լաւ կը լինէր որ դերանունների մէջ էլ ասէք եսէ, եսով, դուէ, դուով, դուքով, և այլն, և ոչ վերև յիշուած գրաբար ձևերը գործ դնէիք, որոնք ամենևին «կանոնաւոր, գիւղին ու պայծառ չէին»:

Ոչ, յարգելի պարոն, լեզուն անհոգի ու անկենդան նիւթ չէ, որ կարելի լինի նորան մեր ուզածին պէս մէկ կաղապարի վրայ ձևել, նորա բոլոր ձևերը մէկ կանոնով չափել: Լեզուն հոգի է, կենդանութիւն է, ստեղծագործութիւն է: Այն հրաշալի երևակայութեամբ որով ժողովուրդը իւր գոյութեան մանուկ հասակում ստեղծեց իւր գեղեցիկ առասպելները, միևնոյն կարողութեամբ ստեղծեց և այն առասպելները բացատրող լեզուն: Ստեղծագործութիւնը ազատութիւն է սիրում, ինչպէս որ դուք ինքներդ էլ լաւ հասկանում էք, նորան չէ կարելի բռնաբարել կամ շղթայել, սառն կանոնների ու միակերպութեան տակ ձգելով: Տեսէք, նոր լեզուները հներից շատ աւելի պարզ, ամփոփ ու տրամաբանական են, նոքա դասական լեզուների պէս ոչ այնքան զարդարուն ձևերի, որքան մտքի ետևից են լինում, այնու ամենայնիւ անթիւ անկանոնութիւններ ունին: Այդ անկանոնութիւններն են շատ անգամ լեզուի գեղեցկութիւնները, որովհետև նոքա ստեղծագործութեան արդիւնք են:

Ընթերցող, կարդա, օրինակի համար, մեր հեղինակի հետևեալ երկու տողը և կը համաձայնիս ինձ հետ, որ մի շատ չնչին, բայց լեզուի էական յատկութեան դէմ մեղանչելով սառն ու անբնական են. «Սրբազան պերճախօսութիւնը . . . միտք աւելի սիրտի կը զարնէ, և սիրտէ աւելի հոգիի, որուն մթնոլորտը կը թուի»:

Այս գուցէ ոմանց համար ձանձրալի դիտողութիւնից յետոյ, ընթերցողին բաւականութիւն պատճառելու և միանգամայն հեղինակի գրականական տաղանդը երևան հանելու դիտաւորութեամբ, առաջ բերենք նորա գրքից մէկ հատուած:

Ահա օրինակի համար, ինչ գեղեցիկ գոյներով նկարագրում է նա պանդուխտ հայ մշակի սրտաճմլիկ պատկերը.

«Մի կողմէն Ոսկեղջիւրի ծոցովը մանիկաւոր միւս կողմէն Քարա-Աղաճի բլրակներովը և Օք-Մէյտանի դաշտերովը սահմանափակ մի գիւղ կայ ընդարձակ. մեր Հասգիւղն է այդ, «Կոստանդնուպոլսի Աթէնքը», որպէս կ'ասէր Շահնազարեան»

«կան գիւղեր որոց հորիզոնին մէջ կարծես մի ղուարթութիւնի ծիածան կը ցոլայ. երկինը նոցա վրայ կապոյտ ժպիտներ կ՚արձակէ, երկիրը կանաչ ժպիտներ կը սփռէ նոցա չուրջը, և ծովը նոցա ստորոտը կը խայտայ բիւրեղէ ծիծաղներով։ Այս գիւղերէն չէ Հասգիւղ, խնդուն գիւղ չէ այնւ Թիւրքիայի չատ վայրերին պէս, հոն ալ մի ծիւրող միօրինակութիւն կը ծանրանայ, միօրինակութիւն որ մարդը կը յոգնեցունէ և կը տխրեցունէ, ուժաթափ կ՚ընէ երևակայութիւնին թևերը, կը ցամքեցունէ երիտասարդ աւիւնը, կեանքը կը խամրեցունէ։ Հասգիւղ չատ քիչ անգամ կը խզէ այս տաղտուկ միաձևութիւնը, չատ քիչ անգամ կ՚առուգանայ այս երկար հոգեվարին մէջ։ Իմ ծննդավայրին այդ մի քանի օրերին, այդ մի քանի տօներին ամենէն հետաքրքրականը, ազմկայոյզը և խոհեր ներշնչողն է անշուշտ Նոր Կիրակէի հանդէսը, որ երեք օր կը տևէ և որոյ վրայ պիտի խօսիմ առաջին անգամ։—

Մի ձորակ կայ որ Օք-Մէյտանին կ՚անջատէ Հասգիւղէն. ձմեռը մի հեղեղ կը չչէ և կը սողայ նորա յատակէն՝ իբր մի օձ դեղին սաթէ. ամառը գոյնագոյն Թիթեռնիկներ կը Թրթռան հոն։ Այդ ժեռուտ ձորակին աջ կողմը կը կանգնին ճերմակ, կանանչ, կապոյտ վրաններ. անխոնջ Թըմբուկը և փողը կը սկսին հրաւէր կարդալ պանդուխտ Հայերին, որք Արամաստանի ամեն կողմերէն Կոնստանդնուպօլիս գաղթած են և որք, նոյն օրը, Կոստանդնուպօլիսի ամեն կողմերէն Հասգիւղ կը դիմեն։ Հրաւէրը կ՚ընդունին նոքա. Հայերը, հեզ գառնուկներ, հովիւի սրինգին կը լսեն. գաւառվայրը անմիջապէս կը ծածկուի հազարաւոր անձերի տակ։ Ամեն քաղաք իւր ներկայացուցիչը ունի հոն. հոյակապ է մանաւանդ Մչեցին, երբ ճերմակ կարմիր ծաղկանկար ոչախչին գլուխին վրայ, ոսկեԹոյր և վարդագոյն գիծերով մետաքսէ բաճկոնով, որոյ Թեզանիքները հովին տրուած կը ծածանին, կը սկսի իւր կէս զինուորական պարը, և գոռոզապէս իւր ձախ բազուկը կը բարձրացունէ ասոխին դէմ, որ հազար և մի ձևերով յառաջ կը գայ, ետ կը քաչուի։ Այլ ձգեմք այս մանր պարագայերը, որք խոր հմտութիւն կը պահանջեն Հայաստանի արդի բարքերին և սովորութիւններին. բարոյական մասը վեր հանեմք, պանդուխտների ներքին վիճակը քննեմք, սիրտը չօչափեմք. և այս նպատակին դիւրով հասնելի համար, ձեռք առնումք մին ի նոցանէ, զոր Վարդան պիտի կոչեմ։

Ո՞րպէս կը զուարճանայ Վարդան։

—Պանդուխտի պէս։

Այսինքն։

—Այն բառը կը պարունակէր ամեն իմաստ. այլ դի բացատրութիւն կուզէք, լսեցէք ուրեմն։ Վարդան հայրենի նուագարաններէն առաջնորդուած, զբօսավայրը կը հասնի յուզումների յորձանի մէջ ալէծուփ. Թմբկահարին հարուածները կ՚ամկնին իւր կուրծքին վրայ, սիրտին Թելերը կը զալարուին։

Օ՛հ, մի քիչ օղի, բարեկամ...։

Եւ բաժակը պարպելով, կը կարծէ մոռնալ իր հայրենիքը։ Յանկարծ, դիմացի վրանէն մի ձայն կը լսուի. մի հայրենական երգի նշխարն է այն, ով երիցս սուրբ նշխար...

Ղարիպին սիրտն է խոց, ծիծերն է վէրէմ.

Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ։

Վարդանի բիբերը կը մթագնին, աչքերը կ՚ողողուին արտօսրով, Վարդանի հոգին կը ճմլուի....

Օ՜հ մի քիչ օղի...։

Եւ բաժակը քամելով, կը կարծէ մոռնալ հայրենիքը։ Պարել կը սկսին ուրիշները, կը ներկայացունեն այն պարը որ այնչափ քաղցր էր Վարդանին և իր մտերիմներին հայրենի դաշտերի վրայ. ու՞ր են այն սիրելիները... Իր չուրջը կը նայի կը տեսնէ մի կիսափուլ պատ և դիրեդար չիրիմներ, կիսափուլ իր սրտին պէս, դիրետար իր յիշատակներին պէս... Թունդ կ՚ելնէ հոգին։

Օղի՛ ինձ, աճապարէ...։

Գինեպանը կը մատուակէ, Վարդան կը կարծէ թաղել իր վիշտերը ըմպելիին բաժակին մէջ։ Ճակատը կը հակէ ափին վրայ, և սիրելիները մի առ մի կը չարուին իր միտին առջև։ Հեռացէք, անգութ երազներ, ո՜հ մի՛ չարչարէք նժդեհը....

Օղի՛ տուէք Վարդանին, օղի՛ տուէք, տագնապի մէջ է...։

Դարձեալ կը ներկայանան ընկճող երազներ։ Կը տեսնէ կինը. այո, ինքն է... ծխնափայլ լաչակը ճակատին վրայէ ոլորելով վարդ շուրթերին վրայ բերած կնքած է. իր սրբութիւնին դրոշմն է այն, բայց տես որպէ՛ս կը փախչի անգութը նժդեհին առջևէ, աչքին ծայրովը նմանայելով...։ Նազլո՛ւ» կը գոչէ. և կը զարթի Վարդան։

Օղի՛ բերէք, ո՜հ, օղի...։

Երազները կը յամառին դարձեալ։ Իր անդրանիկ որդին, սէրին առաջին երաշխը, Գառնիկը կը տեսնէ. օ՜հ որչափ ալ մեծցած է... երկու քոյրիկներին ձեռքը բռնած է. կ՚անցնին երեքն ալ, երեքն ալ կ՚անցնին գլխակոր, աչք ի գետին։

Օղի հասցուցէք ո՜հ, կը նուաղի նժդեհը...

Կ՚օրրենայ Վարդան, խօլ ընթացի կըտայ զինքն, առանց արածը գիտնալի. և ամեն մարդ կը կարծէ թէ կը զուարճանայ նժդեհը...։»

Այնպէս չէ՞, ընթերցող, որ մի սևամած ամպ պատեց սիրտդ. անողորմ պանդխտութիւնը և հայ մշակի հոգին մաշող, զօրութիւնները սպառող փուշը աչքիդ առաջ եկան...

Եթէ հեղինակի գիրքը ունենար ընթերցողը, կը հրաւիրէինք նորան այս պատկերը համեմատել նոյն նիւթի վրայ գրուած տաղի հետ. նա լոկ ոտանաւոր խօսք է, իսկ սա թէև արձակ, բայց բանաստեղծութիւն է։

Այսպիսի հատուածներ շատ կան «Գրական փորձերի» մէջ: ընթերցողին խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այս գիրքը, որի ընթերցումը, վստահ ենք, առանձին բաւականութիւն կը պատճառէ նորան, մանաւանդ երբ յիշէ որ տաղանդաւոր հեղինակը 15, 16 և 17 տարեկան հասակումն է գրել այդ հատուածները: Մենք բոլոր սրտից յաջողութիւն ենք ցանկանում այս նոր տաղանդին, և հաւատացած ենք որ նա շատ առաջ կ'երթայ: Միայն անկեղծօրէն խորհուրդ ենք տալիս նորան լեզուի վերաբերութեամբ հրաժարուիլ այն ինքնահնար ձևերից, որոնց մասին հեղինակի ասածը գուցէ և ճշմարիտ լինի թէ՝ մէկ քառորդի մէջ գրուած չեն, այլ ամբողջ տարիների մէջ (ի՞նչ, օրօրոցի՞ց արդէն) խորհուած, փորձուած, սրբագրուած, շօշափուած և շօշափուած են հարիւր անգամ (sic!), մինչև որ այդ վերջնական անձնաւորութիւնը զգեցած են:

Անկեղծաբար կրկնում ենք ձեզ, պատուելի պ. Ջերազ, ինչպէս որ հաւատացած ենք որ ձեր տաղանդը ապագայ ունի, այսպէս հաւաստի ենք որ ձեր կառուցած լեզուական շէնքը, որչափ էլ խորհուած, փորձուած, սրբագրուած, շօշափուած ու դարձեալ շօշափուած լինի, այնու ամենայնիւ հաստատուն հիմք չունի, այլ աւազի վրայ բարձրացած շէնքի նման է, որ մի փոքր քամի գետնի հետ կը հաւասարեցնէ: Լաւ է որ ինքներդ վաղօրօք համոզուիք և այնքան այրականութիւն ունենաք (այդ առաքինութիւնը ձեզ պակաս չէ), որ ձեր ապագայ աշխատութիւնների մէջ հրաժարուիք այդ տարօրինակ ձևերից, որով ձեր լեզուն աւելի ազդու, աւելի գրաւիչ կը լինի:

ԳՐԻԶ

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ, երկասիրեաց Խրիմեան Հայրիկ ի պէտս Հայոց ընտանեաց: Կոստանդնուպոլիս, 1876:

Կոստանդնուպօլսի պատրիարքական աթոռից հրաժարուելուց յետոյ, «Վասպուրականի Արծիւը» դարձեալ սկսաւ իւր գրականական գործունէութիւնը առաջարկել իւր «Բարեկամ Հայ ժողովրդի» առօրեայ պիտոյքներին, նորա ընտանեկան կեանքի անմխիթար հան-

գամանքներին նուիրելով իր փափուկ գրիչը: Զորս տարուան պատրիարքութեան փոքրիկ շրջանը բաւական եղաւ նորան անձամբ ականատես ու ականջալուր լինելու Հայ ընտանիքի բազմապատիկ աղէտներին և ամէնից աղէտաւոր ամուսնական խնդիրներին, որոնց պատմութիւնը այնքան ծանրալուր, թւանշանները այնքան բարդ են՝ որ հեղինակը հրաժարվում է ամբողջութեամբ ու մանրամասնօրէն առաջ բերել, և երկրայող ընթերցողին վկայ ու ապացոյց կոչում է Պատրիարքարանի Դատաստանական խնդիրների արձանագիրը, ուր նորա հետաքրքրութիւնը կարող է առատ սնունդ գտնել:

Զննելով հայ ընտանեկան կեանքի մէջ մտած բազմաթիւ զեղծմունքներին, որոնց ցուցակը օր աւուր վրայ ծանրաբեռնվում է, հեղինակը ամենևին չէ յուսահատվում, այլ իր սովորական արիութեամբ պատերազմում է նոցա դէմ, անկեղծ խստութեամբ պախարակում, արմատախիլ անել է աշխատում անբարոյականութեան բազմաճղի ծառը, որ այնպէս խոր արմատ է գրել Հայ ընտանիքի և մանաւանդ վերին կարգի հասարակութեան մէջ. եռանդուն փաստաբան է հանդիսանում հայ կնոջ ազատութեան, այր մարդու հետ հաւասար կրթութիւն և իրաւունքներ պահանջելով այն էակի համար որ գերդաստանի հոգին է. միով բանիւ իր բոլոր ջանքն ու ճիգը թափում է խոստացեալ երանաւէտ կեանքը երկրի վրայ տեղափոխելու, երկնային դրախտը թագաւորեցնելու հայ ընտանիքի, հայ հասարակութեան, ամբողջ հայ ժողովրդի մէջ:

Այս է ահա երկու խօսքով մեր առաջ դրած գրքի պարունակութիւնը:

Զարմանալի է ժամանակի հոսանքի ազդեցութիւնը մարդկային մտքի յառաջադիմութեան վրայ: Կար ժամանակ երբ, Արևելք և Արևմուտք, կղերը գիտութեան և բարոյականութեան միակ ներկայացուցիչը լինելով՝ գերդաստանական, աշխարհային կեանքը մի ժամանակաւոր անհրաժեշտ չարիք էր համարում, որից շուտով պիտի ազատուէր մարդկութիւնը հանդերձեալ երանաւէտ կեանքը վայելելու համար: Այս պատճառով նա քարոզում էր մարդկութեանը այս երկրաւոր կեանքում փախչել հեռու հեռու անապատները, կուսական, ճգնաւորական կեանք վարել, գազանների պէս որջերում, այրերում ապրել, մարմինը ամէն տեսակ խիստ կրթութիւններով չարչարել, դաշտերի խոտը լինի նորա միակ սնունդը, առուակների ջուրը՝ նորա միակ ըմպելիքը: Մոռանալով Փրկչի հաստատած և Ա-

ռաքեալների տարածած սկզբունքը, որով ընդունվում էր երկու սեռի բարոյական հաւասարութիւնը (այսուհետև չէք խտիր, ոչ արուի և ոչ իգի, զի ամենքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս), հոգևորականութիւնը նորոգեց ու երկար ժամանակ պահպանեց հին կտակարանական հայեացքը կնոջ վրայ, իբրև աղբիւր չարութեան այս երկրաւոր կեանքում: Արևմտեան և մանաւանդ արևելեան սուրբ հայրերի գրուածներում կինը, որ գերդաստանական կեանքի հիմն է կաղմում, անդադար կոչվում է «արարիչ չարութեանց, առիթ դայթակղութեան, սկիզբն մեղանչականութեան, մայր ամենայն յանցանաց, գործիք սատանայի, տարագրեալ ի դրախտէն» և այլն:

Այս խիստ հալածանքների, այս դարևոր նախապաշարմունքների զօրութիւնը այնքան մեծ է, որ ներկայումս անգամ մի հոգևորական անձն կարծես մի տեսակ երկիւղով ձեռնամուխ է լինում գերդաստանական կեանքի ջատագով հանդիսանալու, որ մի՛ գուցէ բամբասանքների առարկայ լինի այն դասակարգի կողմից որին և ինքը պատկանում է իւր կոչումով. «Ձիս պիտի դատե՞ք արդեօք, ասում է մեր հեղինակը, երբ Եկեղեցւոյ վարդապետս, Աւետարանի աշակերտ, կենաց հացին տնտես, թողու իւր բարձրագոյն պաշտօն, Պօղոսի քարոզած երկնից անճառ դրախտը, և երկնի ընտանեկան Դրախտի համար ճառէ: Ճշմարիտ կը լինէր քո այդ դատաստան, եթէ երկնից դրախտ մոռնայի ու չկապէի զայն երկրիս դրախտի հետը, որ իսկապէս երկնից դրախտի հիմն է: Ես Եկեղեցւոյ համար կը խօսիմ, որ Քրիստոսի տնկած դրախտն է. և նորա սուրբ ընտանիքն են նոր Եկեղեցւոյ զաւակները»:

Գանք այժմ այս գրքի բովանդակութիւնը քննելու:

«Դրախտի ընտանիքը» բաղկանում է 18 գլխից, ընդ ամենը 248 փոքր ութածալ երես: Առաջին երկու գլուխները մեզ համար հետաքրքրութիւն չունին: Նոքա պարունակում են վաղուց յայտնի տեղեկութիւններ առաջին մարդկային զոյգի կեանքի վրայ Եդեմական դրախտում և դրախտից դուրս, Սուրբ գրքի և սրբազան մատենագրների համեմատ, ինչպէս որ սպասվում ու պահանջվում է մի եկեղեցական մատենագրից:

Սորա փոխարէն մենք աւելի բան էինք սպասում երրորդ գլխից, ուր խօսվում է «Հայոց նահապետական տան ու ընտանիքի» վրայ: Նոյն իսկ գրքի նիւթը պահանջում էր քննել այդ շրջանի կեանքի հանգամանքները, ցոյց տալ թէ արդեօք բազմակնութեան սովո-

րութիւնը, որ տարածուած էր շատ ասիական ազգերի մէջ, գոյութիւն ունէ՞ր հայ ժողովրդի մէջ իւր կեանքի նախնական շրջանում. կամ գոնէ Հայերը հետզհետէ Ասորեստանցոց, Բաբելացոց, Մարաց, Պարսից, Արաբացոց, Թաթարաց հետ սերտ յարաբերութիւններ ունենալով՝ այդ կորստաբեր սովորութիւնը մտցրի՞ն իրանց մէջ թէ ոչ: Չկարծեմ թէ քննադատութիւնը խնդրին իւր կարեւոր նշանակութիւնը չտալուց լռել է: Աւելի հաւանական է որ նա աչքի առաջ ունենալով Հայոց բնածին ու ամէն ժամանակների սեպհական բարեխառնութիւնը և ընտանեկան կեանքի սրբութիւնը, աններև է համարում որ բազմակնութիւնը հայ ընտանիքի շէնքից մուտք չէ գտել: Նոյն իսկ ազգային հին առասպելները, որոնք մեր կարծածից աւելի ճշմարտութիւն են պարունակում, կարծես հաստատում են այդ: Մեր հին նահապետներից մէկի՝ Արա Գեղեցկի վրայ պատմուած և իւր հնութեամբը պատկառելի եղած աւանդութիւնը վկայում է որ Հայկազանց հարստութեան իշխանները և հայ ժողովուրդը անծանօթ էին բազմակնութեան: Ամէն բան ստիպում է մեզ կարծել որ այս պժգալի սովորութիւնը Արշակունիք մտցրին Հայոց արքունիքը, և արքունիքից, ինչպէս երևում է, սպրդեցաւ և նախարարական տները: Պարթևները, որոնց հասկացողութեամբ, ըստ Յուստինոսի, «բռնաբարութիւնը մարդկանց սեպհականութիւն, իսկ հեզութիւնը կանանց բաժին էր համարվում», քրիստոնէութեան դարերումն էլ պահպանեցին բազմակնութիւնը, որ ամուսնական սրբութեան օրէնքները ջնջում է. և Հայր Մարդպետը, պալատական կանանոցի վերակացուն կամ ներքինապետը, մեծ ազդեցութեան տէր էր ու մեծ դեր էր խաղում քրիստոնեայ Արշակունեաց արքունիքում: Եթէ հայ ազգը նոյնպէս վարակուած լինէր այս եկամուտ ախտով, այդ յայտնի կը լինէր մեզ եկեղեցական ժողովների պատմութիւնից և կրօնական օրէնքների սահմանադրութիւնից, որոնց միջնորդութեամբ դիմում էին միշտ քրիստոնէութեան նախանձախնդիր ախոյեանները հին կեանքի այն երևոյթները ջնջելու՝ որոնք նոր սկզբունքների հետ համաձայն չէին: Ներսէս Մեծը, որ այնպիսի խստութեամբ վարուեցաւ Հայոց նախարարների այն սովորութեան դէմ, որով սոքա իրանց հարստութիւնն ու կալուածները չքաժանուելու համար՝ ազգականների մէջ խնամութիւն էին անում, ի՞նչ շանթեր պիտի արձակէր բազմակնութեան դէմ, որ քրիստոնէութեան գաղափարներին բոլորովին հակառակ է....:

Մեր հեղինակը, Հայոց սկզբնական կեանքի վերաբերութեամբ բաւականանալով այն նկատողութեամբ թէ Հայկի սերունդը զանազան ազգութիւնների հետ խառնուելով ու ձուլուելով՝ ընտանեկան կեանքը չէր կարող անեղծ մնալ, անցնում է ամուսնութեան վրայ խօսելու, որի շարժառիթը սէրն է, և նպատակը մարդկային սեռի բարգաւաճումը: Մարդկային բնութիւնը այնպէս կազմուած է որ այր մարդը միշտ կին մարդու ընկերութիւնն է որոնում, և կինը այր մարդու ընկերութիւնը. կեանքի բոլոր ուրախութիւնները աւելի մեծ ու զգալի են, վշտերը աւելի թեթև ու տանելի՝ այս փոքրիկ ընկերութեան մէջ: Շատ ուղիղ է ասում բանաստեղծը.

Սիրտը սրտի միշտ կարօտ է.
Երբ երկու սիրտ մի վիշտ ունին,
Նոցա վիշտը կիսած է.
Երբ երկու սիրտ մի խինդ ունին,
Խնդութիւնը կրկին է:

Հեղինակը հաւասար խստութեամբ զինաւորվում է և այն անձերի դէմ՝ որոնք, ամուսնութեան և մարդու բնաւորութեան պատիւը չիմանալով, անասնական կեանք են վարում, և այն ծայրահեղ մոլեռանդների դէմ՝ որոնք երկար ժամանակ քարոզեցին թէ ամուսնութիւնը անառակութիւն է, թէ մարդս պիտի հրաժարուի աշխարհից, պիտի խորշի կնոջից իբրև չար արարածից, Դիոգինէսի նման անտուն ու անընտանի կարասի մէջ պիտի բնակի:

Դիմադրելով Սուրբ Գրքի այն խօսքը՝ թէ «Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել» Առաքեալի այն խօսքին՝ թէ «Բարւոք է մարդոյ կին մարդ չմերձենալ», Հեղինակը հաւատացնում է թէ մարդիկ ոչ դատապարտուած են կուսական կեանք վարելու առանց երբէք ամուսնութեան, և ոչ ամուսնանալ առանց երբէք բացառութեան: Որովհետև եթէ ամէն մարդ առաքեալների նման անծնունդ մնար, մարդկութիւնը շատով կը սպառուէր, կամ եթէ Պօղոս առաքեալի նման իրանց կամաւ ներքինացնող Աւետարանի անձնուէր պաշտօնեաներ չլինէին, ո՞վ կը քարոզէր Աստուծոյ խօսքը անմախաղ, անցուպ բարբարոս հեթանոսների մէջ, ո՞վ կը թափէր արիւն հաւատի վկայութեան համար այն ժամանակ՝ երբ քրիստոնէութիւնը հեթանոսութեան բռնութիւնից ստիպուած էր գետնի տակ, ստորերկրեայ անցքերում ծածկուիլ:

Սորանից յետոյ հեղինակը խօսում է ընտանեկան կեանքի վրայ

որի լաւ կամ վատ, յաջող կամ անյաջող պայմաններից կախում ունի հայ հասարակութեան, ամբողջ հայ ազգի յառաջադիմութիւնը կամ յետադիմութիւնը: Ինչպէս որ ժողովրդի լուսաւորութիւնը, բարոյական և նիւթական հարստութիւնը, զօրութիւնն ու փառքը ընտանիքի ծոցից են բղխում, այսպէս և ժողովրդի աղքատութեան, ստրկութեան, մեռելութեան ու կորստեան սկզբնապատճառը նոյն ընտանիքն է:

Այս վերջին անմխիթար դրութիւնը վերացնելու միակ միջոցը հեղինակը, ինչպէս բնական է, համարում է ուսումը և դաստիարակութիւնը, և ամենից առաջ ընտանեկան դաստիարակութիւնը, հօր և մօր ձեռքով, այսինքն նոյն իսկ ընտանիքը: Նա շատ ուղիղ նկատում է որ ծնողքը չարաչար սխալվում են իրանց զաւակների դաստիարակութեան բոլոր բեռը թողնելով դպրոցին ու մանկավարժներին: Բայց չենք կարող համաձայնել նորա այն կարծիքի հետ՝ թէ «մանկավարժներն միայն մտքին հետը կը խօսին, սրտին հոգւոյն հետ բան չունին», թէ ընտանեկան կեանքից դուրս դաստիարակութիւն չկայ, և թէ «օտար վարձկանը» չէ կարող «այնպէս սիրել ու կրթել ինչպէս գորովասիրտ ծնողք»: Այդպէս չէ. Ճշմարիտ դաստիարակութիւնը միտքն ու սիրտը միմեանցից չէ բաժանում, այլ երկուսը միասին է կրթում, և ճշմարիտ դաստիարակը իւր սաներին անկեղծ սիրով, հօր պէս, եղբօր պէս, գուցէ և աւելի է սիրում: Ուրիշ բան է թէ մեզանում այդ տեսակ դաստիարակներ սակաւ են, գուցէ և ամենեւին չկան, չենք հակառակում. բայց և ընտանեկան դաստիարակութեան նշանակութիւնը ճանաչող հայրեր ու մայրեր շատ հազուագիւտ են: Մեր բոլոր աշխատանքը պիտի լինի այնպիսի ընթացք տալ մեր ուսումնարաններին որ ապագայի համար արժանաւոր հայրեր ու մայրեր պատրաստեն, որպէս զի ընտանեկան դաստիարակութեան հիմք դրուի, և դպրոցական կրթութիւնը ոչ այլ ինչ լինի եթէ ոչ ընտանեկանի շարունակութիւնը:

Ամուսնութեան կամ ընտանեկան կեանքի խափանարար զեղծմունքների վրայ խօսելով, հեղինակը արդարացի բարկութեամբ մեղադրում է այն երիտասարդներին որոնք իրանց սանձակոտոր ազատութեան մէջ ցանկասիրութեան ընդարձակ ասպարէզ գտնելով՝ հարկաւոր չեն համարում՝ ամուսնութեան սուրբ կապով միայն մի ամուսնու հետ կապուել, այլ առագաստից դուրս, ամէն տեղ միջոցներ են որոնում իրանց րոպէական կիրքը յագեցնելու. և շատ

դժբաղդ անծին կամ ծնած մանկիկներ դատապարտում են կամ բնաւ արև չտեսած չքանալ, և կամ անհայր, անմայր ու անտուն թափառական շրջել աշխարհի հրապարակի վրայ: Նոյն խստութեամբ մեղադրում է նա ընտանեկան կեանքի մէջ տիրած զեղխութիւնը, որի մէջ մինչև պարանոց թաղուած են թէ հարուստ և թէ միջակ դասակարգի պատկանող շատ հայ ընտանիք. շքեղ տուն, փառաւոր կառք ու ձի, թանկագին կահ կարասիք, հարուստ զարդեր, անթիւ նորասիրութեան ձևեր, այս բոլորը մորախների պէս սպառում են ամուսնութեան բաժին սեղանի հացը, սոքա են որ շատերին խորշեցնում են ամուսնութիւնից, և հեղինակը չէ իմանում թէ ում աւելի մեղադրէ, պճնասէր օրիորդին, որ պատասխանում է թէ հաճոյանալու համար զարդ է սիրում, թէ ունայնասէր երիտասարդին, որ իւր ամուսնութիւնից փախչելուն նոյն զարդասիրութիւնն է պատճառ բերում: Այս զեղխ ու շռայլ կեանքը համարում է նա պատճառ որ կոստանդնուպօլսի Հայոց թիւը աճելու տեղ նուազում է: Յովակիմ պատրիարքի ժամանակից, այսինքն Հայոց Օսմանեան մայրաքաղաքը գաղթել սկսած օրից մինչև այսօր, մօտ 500 տարի կայ, և այս հինգ դարի ընթացքում Հայոցը թիւ տասնևհինգ կամ շատ շատ քսան հազար ընտանիքի է հասնում:

Բացի այս արգելքներից, ամուսնութեան ու ազգի բարգաւաճման խափանարար են երկրի բնական և պատահան արգելքները՝ հարստահարութիւնը, չքաւորութիւնը և սոցա հետևանք գաղթականութիւնը: Բայց և այնպէս ժողովրդի երկրագործ չքաւոր դասը հակուած է դէպի ամուսնութիւնը, դէպի ընտանեկան կեանքը: «Գիւղացի հողագործ ժողովուրդը, ասում է հեղինակը, անխորհուրդ չէ, իւր անուս վիճակի մէջ նախատեսութիւն ունի: Նա ամուսնութիւն կը սիրէ, որպէս զի ընտանեաց մէջ աշխատաւոր մշակները շատնան. Նորա համար շատ պէտք են մանչեր ու աղջիկներ: Նա միշտ այնպէս կը դատէ, որ ընտանեկան հարստութեան աղբիւրը ժրաջան զաւակներն են:»

Ընտանեկան կեանքի այսպիսի դժբաղդութիւնների առաջն առնելու համար, հեղինակը պահանջում է նախ որ ամուսնացող օրիորդներին և երիտասարդներին ազատ ընտրութեան իրաւունք տրուի, զգուշանալով միանգամայն որ խնամութիւնը առանց արենակցութեան լինի, վասն զի այդ տեսակ ամուսնութիւնների չար հետևանքները յայտնի են. Երկրորդ, միտ դնել որ ամուսնացողների

հասակի մէջ համեմատութիւն լինի. «Որչափ անբնական է և մեծ խիղճ, երբ բռնութիւն կամ հրապոյր և կամ թէ շահ կը ջանան իրարու հետ պատուաստել երկու ամուսինները, որ մին դալար նորատունկ է և միւսն հինաւուրց հաստացեալ ծառ, որ աշնան մօտ է, իւր տերևներ դեղնած պիտի թօթափին, բունը փտած է, և ստեղունք գօսանալ սկսած են»: Բայց չենք կարող համաձայնիլ հեղինակի հետ, թէ կոյսն անշուշտ կոյսի հետ պիտի ամուսնանայ, և այրին այրի հետ. Թէև այս եկեղեցու սահմանած օրէնք լինի, որ «Հայրենի գաւառներէն շատերը երկիւղածութեամբ կը պահեն»:

Ու պակաս վրդովելով խօսում է հեղինակը այն սովորութեան դէմ, որ ամուսնութիւնը շահավաճառութեան միջոց է համարում: Մինչ գիւղական կեանքի մէջ ծնողքը իրանց աղջիկը վաճառելու են հանում, զանազան պարգևներ պահանջելով փեսայի կողմից, քաղաքացի ընտանիք երիտասարդներին վաճառահանում են, հազարներ պահանջելով աղջկանց ծնողաց կողմից: Այս երկու սովորութիւնները հաւասարապէս պախարակելի ու դատապարտելի են, բայց երկուսն էլ յիշեալ երկու դասակարգերի կեանքի հանգամանքներից են բղխում: Ուստի մեր կարծիքով սխալվում է հեղինակը, երբ համարում է թէ շինական ընտանիքը վերոյիշեալ սովորութեամբ «կնոջ պատիւ և արժանաւորութիւն բարձրացոյց», ինչպէս որ կը սխալուէր քաղաքացին դորա նման մի պատճառ բերելով հարսնացուից դրամ ու օժիտ պահանջելուն: Ոչ, այստեղ ուրիշ պատճառներ կան. շինականը իւր աղջկան փոխարէն մեծ մեծ պարգևներ է պահանջում, որովհետև ինքը զրկվում է ջուխտ աշխատող բազուկներից, և փեսայցուի տունը հարստացնում է ապագայ աշխատող ուժերով: Իսկ քաղաքացին հարսնացուից պահանջում է որ իւր հանդերձը, իւր հացը, միով բանիւ իւր նիւթական ապահովութիւնը հետը բերէ, որովհետև նա ոչ իբրև լծակից ու հաւասար աշխատող է մտնում փեսայացուի տունը, այլ սովորաբար միայն տիկինի պէս զարդարուելու, պատրաստ տեղից ուտելու ու զուարճանալու համար:

Ամուսնական կեանքի գլխաւոր պայմանը պիտի լինի, հեղինակի արդար կարծիքով, երկու ամուսինների փոխադարձ հաւասարմութիւնը՝ քնքոյշ ու անկեղծ սիրոյ վրայ հիմնուած, որ աշխատելու է միշտ թարմ ու դալար պահել. «Հզօրագոյն է սէր երկու ամուսնաւոր սիրելեաց մէջ, Երկու շնչով կը շնչէ, երկու սրտով կը միանայ, երկու լեզուով կը խօսի, երկու ոգւով կապրի, երկու կեանքով

կը զօրանայ. եթէ մին պակասի՝ սէր կը մեռնի. զի սիրոյ կեանքը երկու սրտից միութիւնն է։... Իսկ երբ մեռնի ու դառնանայ մտերիմ լծակիցներու սէրը՝ այնուհետեւ աշխարհիս քաղցրութեան ամբողջ ճաշակները, երջանկութիւն իւր ամէն հանգամանքներով թէ ի միասին գան՝ կարող չեն դառնացած սէրը յանուշութիւն փոխել»։

Սիրոյ խանդարման աղէտաբեր հետեւանքներից այնքան սոսկում է մեր հեղինակը, որ կարծես աւելի լաւ է համարում Հայաստանի հարսների քօղն ու եօթնամեայ անխօս լռութիւնը, փեսաների ծերերի առաջ ձեռները դօշին ոտի կանգնելը, քան կէս ու կեղծ քաղաքակրթուած քաղաքացիների սովորութիւնները. «Ես գիտեմ քո այժմեան կեանք և կրթութիւն. դեռ խանձարուէն նոր ելար, ազատութիւն կը կանչես. դեռ դայթ ի դայթ գետնի վերայ ուղիղ քալել չգիտես՝ ազատութեան չուանին վերայ ելեր կը ճօճաս, չունելով ձեռքդ դաստիարակութեան այն ձողն ու կշիռ, որով կարենաս անկասկած խաղալ ազատութեան բարակ լարին վերայ»։

Երկու ամուսինների փոխադարձ պարտաւորութիւնները և իրաւունքները քննելիս՝ հեղինակը ջատագով ու պաշտպան է հանդիսանում կնոջ ազատութեան, և այր մարդու հետ հաւասար իրաւունքներ է պահանջում նորա համար. այս նորա գրուածքի գլխաւոր արժանաւորութիւններից մինն է։ Եկեղեցին ամուսնական կեանքի պարտաւորութիւնները այսպէս է որոշում. նա այր մարդուն **գլուխ** է անուանում կնոջ, իսկ կնոջ վրայ իբրև պարտք դնում է **հնազանդութիւնը**։ Ահա ինչպէս է մեկնում հեղինակը այս բառերը.

Առաքեալը երբ կնոջ համար հնազանդութիւն կը պատուիրէ, արդեօք այնպէ՞ս է ինչպէս ժողովուրդը՝ բռնակալ իշխանին, զինուոր՝ զօրապետին, ստրուկ ծառայն իւր տիրոջ։ Ո՛չ, այդպէս չէ. կինն ոչ բռնակալութեան հպատակ է, ոչ զինուոր է և ոչ ստրուկ ծառայ։ Կինն իւր ամուսնոյն ազատ ընկեր և հաւասար լծակիցն է ամենայն իրաւամբ։ Ուստի կինն ազախին չէ. այլ տան տիկին և թագուհի. թէպէտ և այր մարդ թագաւոր լինի, իշխան լինի, տէր և գլուխ լինի, բնաւ իրաւունք չունի և կարող չէ այնպէս իշխել, ինչպէս կիշխեն աշխարհիս այլ և այլ տիրող գլուխները իշխանական գաւազանով. վասն զի ընտանեկան կեանքին ու վարչութեան մէջ իշխանական սուր, ստիկանութիւն և գաւազան չկայ. այլ միայն սէր, խնամք և միութիւն։ Եւ ի՞նչպէս կարելի է որ այր մարդ բռնակալ լինի կնոջ վերայ, չարաչար ճնշէ ու նուաճէ իւր կեանքն և ընկերը. Այր տիրապէս ճանչնայ թէ կինը բարոյապէս իւր մարմին, իւր սիրտ և ոգին է, և ամուսնական կապակցութիւնը՝ մի թիւ է, երկու չէ. միթէ հնար է, իրաւունք է որ մարդը ինքզինք և իւր իսկ անձին ազատութիւնը իբրև օտարի՝ բռնակալէ, և

մինչև իսկ հարուածէ, չարչարէ և խեղդէ, կարծելով թէ իրաւունք ունի. որովհետև ինքն զօրաւոր և ուժաւոր է թէ բազկով թէ բանիւ, և միանգամայն աշխարհիս առեւանը իւր ձեռքն է. եթէ կին իւր զրկանաց համար բողոքէ, ո՞վ է իւր իրաւունքը լսող և դատաստան տեսնող, դարձեալ ինքն (մարդն) է դատաւոր ու վճռատու։

Եւ փոքր ինչ յետոյ աւելացնում է.

«Ամուսնական միութեան մէջ այր և կինը՝ մի մարմին է. այլ կինը գլուխ չէ. կը հաւանինք հոգեխօս Առաքելոյն, թէ կնոջ գլուխ այրն է. սակայն ո՞վ կարող է մտաբերել թէ ուրեմն կինը նորա ոտքն է, պատուանդան է և այլն։ Ո՛չ, կին այր մարդոյն նուաստագոյն մասն չէ, այլ նորա կողի բուն միջակէտէն է, նորա սրտին հոգւոյն մօտ՝ յորմէ Արարչապետին իմաստութիւնը խորհրդով մի ոսկր առաւ և ամուսնական մարմինը լրացուց։ Եթէ համարիմք դարձեալ այր մարդ իբր տէր ամուսնական կեանքին մէջ, միթէ իրաւունք ունի խստութեամբ իշխել, տիրապետութեամբ վարել, կամ կարծել թէ կինը իւր ստացուածն է և կամ արծաթագին ծառայ։ Եթէ զօրութիւն ունի, բուռն են իւր բազուկները, նա միթէ իրաւունք կը ստանայ ջարդել ու փշրել իւր կողին մի տկար ոսկրը. իւր կեանք բառնալ ու չիմանալ (իրևի չզգալ)։... Իսկ եթէ իրաւապէս կը ճանաչէ որ կինը իւր կենակից ամուսին է, մինչև ցմահ դաշնակից ընկերն է, իւր աշխատութեան հաւասար լծակիցն է, բախտին ու ապերջանկութեան մէջ անբաժանելի կարեկիցն է, իւր մահուան ու շիրմին վերայ լացող ողբերգուն է, իւր թողուցած որբ զաւակներուն խնամատար մայրն է, իւր գերեզմանն օրհնող ու յիշատակն անմահ պահող ջերմեռանդ այրին է. ուրեմն պէտք է գիտնայ, երբ ամուսնաւէր կինը այս պարտիքները կատարէ, այլ ևս ինչ պարտք կը մնայ»։

Մի ուրիշ տեղ նոր ժամանակների գիտութեան և ազատութեան ազդեցութեան վրայ խօսելիս՝ նա հետևեալ մտքերն է յայտնում.

«Առաջին անգամ երբ կինը այբ գիրը արտասանեց՝ ինքնին լուծեց իւր համրութիւնը, կինը կարդաց ու ճանչցաւ իւր իրաւունք. բողոքեց ու հռչակեց աշխարհին առաջ թէ ինքն ևս իւր ամուսնոյն չափ ազատութեան իրաւունք ունի. կինը ընտանեաց մայր է, պէտք է խօսի և այր մարդոց ընկերութեան մէջ հաւասար աթոռ ունենայ։ Կին եթէ իւր ամուսնոյն ազատ ու ճշմարիտ կենակիցն է, արժան է, որ նա աշխարհի կեանքը ճանչնայ, մարդկային ընդհանուր ընկերութեան հետ մտերմանայ, խորհիլ գիտնայ, մտածել սովորի, փոքր ի շատէ վերահասու լինի այն ամէն իրաց, ինչ որ մտաւոր ու բանաւոր մարդոյն բնական և ազատ իրաւունք կը պահանջեն»։

Այս սկզբունքներին հետևելով՝ հեղինակը պահանջում է որ երկու ամուսինները իրանց պարապմունքների մէջ միշտ միմեանց խորհրդակից լինին. այրը իւր առևտրական գործողութիւնների դրու-

թիւնը, արուեստի մէջ ունեցած յաջողութիւնն ու անյաջողութիւնը հաղորդէ կնոջը. նոյնպէս և կինը իւրաւունին գործերի, իւր տանտիկնութեան վերաբերեալ հաշիւները հաւատարմութեամբ տայ մարդուն: Եթէ այրը ինքնահաւան հպարտութեամբ նուաստութիւն կամ ամօթ համարի իւր դրութիւնը յայտնել կնոջ, եթէ կինը շռայլ պէտքերի-համար խնայողութիւնը ձեռից թողնէ, անշուշտ օր կը գայ որ ամէն խաբէութիւն կը բացուի, բայց աւա՜ղ, ուշ կը լինի արդէն, դժբաղդութեան առաջն առնել հնար չի լինիլ... Մտներդ բերէք «Քանդած օջախի» մէջ նկարագրուած աղէտալի տեսարանը, ուր անհոգ ու շռայլ տանտիկինը իւր շքեղ տանը բազմաթիւ հիւրերով շրջապատած լօտօ է խաղում, երբ յանկարծ գալիս են իւր ամուսնուն պարտքի համար բռնելու, և տունը վեր են գրում...

Մայրական մեծ ու առաջին պարտաւորութիւնն է իւր նորածին զաւակը սեպհական կաթով սնուցանել: Հեղինակը սաստիկ բողոքում է այն ընդհանրացած սովորութեան դէմ, որով հարուստ դասակարգի մայրեր, նուաստութիւն և ամօթ համարելով, իրանց մանուկները օտար կաթի և օտար գրկի են յանձնում: Նա շատ ուղիղ նկատում է. թէ մայրը իւր զաւակը դայեակի, այս կաթ վաճառող կնոջ ստինքով դիելով՝ երկու զրկանք ի միասին է գործում:

«Դայեակն եւ անշուշտ նորածին զաւկի ծնող է. ո՛հ, մի տառապեալ մայր է նա. որ անհնարին կարօտութենէն ստիպեալ իւր մանկիկն մի ուրիշ մօր կը յանձնէ նուազ վարձքով, կերթայ կը դեգերի մեծատանց տուները, որպէս զի իւր կաթն աւելի գնով վաճառէ. որ իւր մանկան արդար իրաւունքն է։ Ողորմելի որդեզուրկ կին պարտաւորեալ է իւր դայեկութեան վարձքէն մի մասն վարձեալ կնոջ տալ, և մնացեալ վարձովն իւր ընտանեկան ապրուստ հոգալ։ Ձեզ կը թողում, Հայոց ճշմարիտ մայրեր, դուք դատեցէք, այս երկու մայրերէն ո՞րն է աւելի յանցապարտ. կարօտագին դայեակն, որ առ չքաւորութեանն՝ իւր կաթը կը վաճառէ, թէ հարուստ տիկին, որ սնուցիչ կերակուրներէն լիանալով ու յափրանալով՝ թաթաղուն զեղուն լցուած ստինքները աղբիւրի պէս կաթ կը հոսեն, և որ թէպէտ մայրական կոչումն ունի, այլ անխղճաբար կը խցէ այդ կաթնաբուխ ակները։ Բարեպաշտ տիկին երկու զրկանք ի միասին կը գործէ. զրկանք մի իւր բնածին մանկան, զրկանք մի եւս դայեկին մանկան, որոյ բաժին կաթն դրամով կը գնէ։ Ո՛հ, աղքատիկ մօր կաթն՝ իւր խեղճ տղեկին կեանքն է. արդեօք տիկին մայր՝ իւր մանկան կեանքը փրկելու համար վշտագին դայեկամօր մանկան կեանքը չի՞ զոհեր։ Այո, այսպէս է աշխարհիս դատաստանը. երբ հզօրները զանգօրը կը ճմլեն, զարմանք չէ որ տիրոջ և տիկնոջ մանուկը

նոյնպէս խանձարուրէն սկսի յաղթահարել ու ճնշել ծառայն դայեկամօր մանուկը։

Հեղինակը մի առանձին գլուխ նուիրում է մանուկների ընտանեկան դաստիարակութեան։ Մանկան ինքնաճանաչութիւնը զարթելուց յետոյ, նորա վառ երեւակայութեան ազդեցութեամբ ծնում է և մի զարմանալի ու անյագ հետաքրքրութիւն, որով նա ջանում է իմանալ թէ իրան շրջապատող բնութիւնը, ծառերը, ծաղիկները, արեգակը, լուսինը, աստղերը, և այլն ինչ են և ինչի համար են։ Հեղինակը պահանջում է որ այս բացատրութիւնների մէջ ծնողքը պարտք համարին իրանց աստուածպաշտութեան գաղափարը զարթեցնել երեխայի մէջ, ցոյց տալով թէ ամէն բանի սկիզբն ու պատճառը Աստուած է։ Ի հարկէ այդ բացատրութիւնները որքան կարելի է պարզ ու թեթև պիտի լինին և ազատ աստուածաբանական հայեացքներից։ Ընտանեկան դաստիարակութեան գործը պիտի լինի երեխայի բնական հետաքրքրութեան ուղղութիւն տալ, աշխատել զարգացնել նորա մտաւոր ու ֆիզիքական կարողութիւնները, նորա ուշադրութիւնը դարձնելով իրան շրջապատող բնութեան վրայ, և չխօսել այնպիսի առարկաների վրայ որ երեխան իւր սեպհական աչքերով չէ տեսել, հետևաբար և չէ կարող ըմբռնել։ Բայց որքան էլ խորշինք, անհնարին է որ երեխան չզբաղի գերագոյն էակի հարցով և նորա փոքրիկ գլուխը չլցուի զանազան աւելորդապաշտութիւններով ու նախապաշարմունքներով. այս կողմից երեխայի զարգացումը ներկայացնում է ժողովուրդների զարգացման զանազան աստիճանները։ Երեխան նկատելով որ բնութեան երեւոյթների վրայ ունեցած կասկածները փարատողը հայրն է, ինքն ըստ ինքեան մի մեծ գաղափար է կազմում նորա ամէնիմաստութեան, ամենակարողութեան վրայ։ Բայց շատ ժամանակ չէ անցնում, և հայրը էլ չէ կարողանում երեխայի բոլոր հարցերին պատասխանել, նորա բոլոր կասկածները լուծել. նա պարտաւորվում է խոստովանել իւր տկարութիւնը, ցոյց տալով որ կայ մի գերագոյն էակ, մի ուրիշ հայր որին պատկանում է ամէնիմաստութիւնը, ամենակարողութիւնը. նա հարկաւոր է համարում Աստուծոյ վրայ մի գաղափար տալ երեխային։ Այդ գաղափարի հետ ինքն ըստ ինքեան միաւորվում են զանազան սնոտի ու աւելորդապաշտ կարծիքներ. երեխան դառնում է մի փոքրիկ հեթանոս։ Միայն ժամանակը, դաստիարակութեան բարերար ազդեցութեան ներքոյ, ազատում է նորան

այդ սնոտիապաշտութիւններից և ուղիղ հասկացողութիւն տալիս Աստուծոյ, բնութեան և մարդու վրայ:

Ծնողաց չափազանց սէրը և չափազանց խստութիւնը հաւասարապէս պախարակելի են հեղինակի աչքին. որովհետև առաջինը երեխայի մէջ ծնեցնում է կամակորութիւն, ինքնահաւանութիւն, զայրացկոտութիւն և անտեղի պահանջողութիւններ. իսկ չափազանց խստութիւնը, մանաւանդ երբ մարդկային արժանաւորութիւնը նուաստացնող ծեծը գործ է դրվում, ճնշում և ջլատում է երեխայի բնական աշխոյժ ու զուարթ հոգին, որով նորա միտքը բթանում է, սիրտը կոշտանում և առ հասարակ մի կրաւորական եակ է դառնում:

Առ հասարակ բարոյական դաստիարակութեան մէջ հեղինակը աւելի բարի օրինակ է պահանջում քան խրատ, և այս խնդրի առիթով երկարօրէն խօսում է վերջին գլխի մէջ, ուր երևան է հանում այն բոլոր ախտերը որ հայ ընտանիքի շէմքից ներս են մտել և օրէցօր աճում են, ժառանգաբար որդոց որդի անցնելով. «ցանկութիւն բազմախորտիկ սեղանոյ և զինարբեցութեան, ցանկութիւն շքեղ հանդերձի և նորասիրութեան, ցանկութիւն մեծածախս շինութեան և թանկագին կահ կարասեաց,» և առ հասարակ ձգտումն անառակ կեանք վարելու, որ «խաղաղ ընտանիքը խռովող, ընտանեկան միութիւն քակող, հայրենական տան հաստատ հիմունք հիմն ի վեր շրջող է:»

Առանձին խստութեամբ խօսում է նա խաղամոլութեան վրայ, որ շատ տարածուած է ոչ միայն մեզանում, այլ ինչպէս երևում է և կոստանդնուպոլսի հայ ընտանիքների մէջ, ուր ոչ միայն հայրեր, այր մարդիկ, այլ և շատ մայրեր ու կանայք այս ախտով վարակուած են, իրանց առանձին տնտեսութիւնը և զաւակների խնամքն ու կրթութիւնը բարձի թողի անելով:

Հայ ընտանիքը այդ ախտերից ազատելու, նորա բարոյական ցաւերը բժշկելու պարտքը հեղինակը դնում է ծխական քահանայի, տան երէցի վրայ, որ բաւական չպիտի համարի իւր պաշտօնի համար միայն Սաղմոս, Շարական ու Մաշտոց, միայն եկեղեցական խորհուրդները ու ծիսական կարգերը կատարել. նորա նուիրական պարտականութիւնը պիտի լինի ծխական ընտանիքի բարոյական ու նիւթական պէտքերը դարմանել, բանդ գնալ, բանտարկեալի կապանքը թեթևացնել, հիւանդին տեսութիւն երթալ, «սուրբ Պօղոսի թաշ-

կենակով նորա քրտինքը սրբել, դեղ ու ճար գտնել․ Թէ քաղցեալ է հաց տալ, թէ ծարաւ է՝ ջուր տալ, թէ մերկ՝ հանդերձ։»

Ընտիր քահանաներ չունենալու յանցանքը հեղինակը մասամբ տալիս է հասարակութեանը, որ շատ անգամ ուսեալ ու արժանաւոր անձինք թողած՝ անպատիւ, տգէտ և անարժան մարդիկ ընտրում և աշխատում է քահանայ ձեռնադրել տալ, պարծանք համարելով իրան մի ծոյլ ու անգործ մարդու ընտանիքը թշուառութիւնից ազատել և ուրիշ հարիւրաւոր ընտանիքներ հոգեպէս թշուառացնել։

Վերջապէս հեղինակը յորդորում է ամէն կարգի ու վիճակի մարդկանց աչքի առաջ ունենալ օրահաս վախճանը և ըստ այնմ տնօրինել իրանց կեանքը, որ մի բարի յիշատակ թողուն և մահուան ու գերեզմանի մէջ ևս ապրին։ Նա պարտաւորութիւն է դնում իւրաքանչիւր անհատի վրայ իւր սեպհական նիւթական և բարոյական հարստութիւնից մի բաժին հանել ազգին. արծաթի տէր և անարծաթ հոգևորականին յորդորում է որ մէկը իւր դրամը կտակէ, միւսը իւր գիրք ու խրատը. քաղաքացին թող կտակէ իւր ընտանիքին արհեստ, աշխատութիւն, տնտեսութիւն, խնայողութիւն. շինական ծերունին թող կտակէ իւր բազմանդամ գերդաստանին «սիրել մշակութիւնը, հողն ու մաճը. երբէք չի վաճառեն իրենց կեանքը ու հարստութեան մշտաբուխ աղբիւրը, այսինքն հայրենի երկիրն ու գետին»։

«Եւ դուք ինչ պիտի կտակէք, հայրենեաց կարօտ խեղճ պանդուխտ Հայեր. դուք կտակեցէք ձեր զաւակաց ու եղբարց, երբ օտարութեան մէջ կը հասնի ձեր վրայ, ոհ, մահ ու գերեզման. այո, նզովիք կտակեցէք որ նոքա հայրենի հողին ու երկրին մէջ տքնին ու աշխատին, թող չարաչար լինին, թող կոփահարին, թող հարստահարին, թող մաշին, թող մեռնին, թող իրենց գերեզման իրենց արտին լինի, թող չգան այս տանջանաց տեղը. ուր ձեր ազատ եզն ու մաճ թողլով՝ բեռնակիր կը լինիք. և շատ անգամ բեռանց ծանրութենէն ձեր ոսկորները կը ճարճատին և ձեր հուժկու բազուկները կը թուլնան. երես ընդ գետին կը թաւալիք փողոցի սալայատակաց վերայ. կը բառնան ու կը թաղեն զձեզ անյիշատակ չիրիմներու մէջ, ուր չեն ու չկան ընտանեկան գերեզման, ձեր պապերուն ու մամերուն խաչաքարեր ու ոսկորները»։

—Իսկ դառն աղքատութիւնը . . . իսկ սովատանջ քաղցածութիւնը…

Ո՛հ, Հայրիկ, մոռացա՞ր արդէն. Դու ինքդ տխուր գոյներով

նկարագրեցիր այդ չքաւորութեան աղէկտուր տեսարանը: Եթէ Հայ շինականի եզն ու գոմէշը յափշտակում են, ինչո՞վ հերկէ իւր արտիկը. եթէ նորա դառն քրտինքը ուրիշներն են վայելում, ինչո՞վ կերակրուի: Չէ՞ որ անիծեալ պանդխտութիւնը կը մօտաբերէ ու կը գաղթէ իւր երկրից, օտար երկնքի տակ մի կտոր հաց ճարելու, թողլով հայր, մայր, ամուսին, որդիք և իւր սիրելի արտիկը, որ փշով ու տատասկով ծածկվում է․․․: Ի՞նչպէս ես ուզում, Հայրիկ, որ պանդուխտը քո այդ կտակը սուրբ համարի իւր համար, երբ Դու ինքդ աչքովդ տեսել, ականջովդ լսել, սրտովդ զգացել ես Հայ շինականի թշուառութիւնը: Լսէ, ընթերցող.

«Ա՛հ, թէ որ հաց չլինի՝ մայրերը անօթի կը մնան. և երբ մայրերը անօթի մնան, նորածին մանուկներու կաթ կը ցամքի։ Երանի թէ այս լինէր միայն չքաւորութեան արկածն. թող աղքատութիւն տառապէր զիրենք, միայն թէ երկու ամուսինք իրարու հետ անբաժան ապրէին։ Ո՛չ, չքաւորութիւն չի խնայեր, նորապսակ ամուսիններն անգամ քաղցր հայրենիքէն, սիրոյ գիրկերէն հանելով ի պանդխտութիւն կը վարէ. այսօր քան հազարէն աւելի մեր հայրենեաց պանդուխտ զաւակները կը տառապին մայրաքաղաքիս մէջ, հինգ, տասն, տասնեւհինգ և մինչև քսան երեսուն տարի օտարութեան մէջ տառապելով՝ որոց շատերն ալ հայրերի հողէն և իրենց նախնեաց գերեզմանէն զրկուելով՝ օտար երկրին ու հողին տակ կը թաղուին. ով կը տնկէ նոցա վերայ մի խաչքար և կը գրէ նոցա յիշատակը... Աշխարհ, որոյ ժողովուրդը դեռ տգէտ է, անուս է, անարուեստ է, կեանքն՝ իւր հնութեան մէջն է, ազատութեան, յառաջդիմութեան տարերք չունի, կը ճնշուի, կը հարստահարուի թէ իւր ձեռքով թէ օտարին, իւր հացը դառնութեան հաց է, իւր ջուրը՝ կարօտանաց, իւր օրերը վշտամբեր են, իւր կեանքն ապերջանիկ. նա կը դողայ միշտ այն ամէն արհաւիրքէն, որ զինքն շրջապատեր են. ինչպէս կարելի է յուսալ թէ այդպիսի դառն բախտի վիճակեալ ժողովուրդը հարսանեաց թմբուկ զարնէ, պար խաղայ, ամուսնանայ, ընտանեաց հայր լինի, ժողովուրդին թիւ յաւելու, ազգ, հայրենիք բարգաւաճի ու բարձրանայ»։

Հայրիկ, Քո այդ հակասական նկարագիրները բերելով՝ չեմ կամենում մեղադրել Քեզ: Ես զգում եմ, հասկանում եմ որ այս հակադիր պատկերները կարող էին ծնուիլ Քո վեհ մտքում: Տարիներով ապրելով Հայ երկրում, բուն Հայ ժողովրդի շրջանում, ականատես ես եղել նորա հարստահարութիւններին, հասկացել ես գաղթականութեան և պանդխտութեան կորստաբեր հետեւանքները և այդ անհրաժեշտ չարիքի առաջն առնելու կարեւորութիւնը: Հայ շինականը փրկութեան մեծ յոյսեր էր դնում Քո վրայ, երբ Ազգի մեծա-

մանութեան գլուխ լինելու կանչուեցար: Դու նորա դառն վիճակը ամոքելու խօսք տուիր անկեղծօրէն, և նա հաւատաց քեզ, որովհետև գիտէր որ ընդունակ չես խաբելու: Ազգային երեսփոխանների ժողովում քանի ու քանի անգամ ձայնդ բարձրացրիր գաւառական ժողովրդների հարստահարութեան մի դարման անելու համար: Բայց նա, այդ ազգային երեսփոխանութիւնը, որ Կոստանդնուպօլսում նստած Ազգի կարօտութիւններին խնամք տանել է կարծում, չլսեց համեստ ձայնդ, չհասկացաւ քեզ, և խնդիրներից ամենակարևորը, ամենակենսականը յետաձգելով՝ ուրիշ երկրորդական հարցերով պարապեցաւ: Այո՛, քանի որ Ազգային Սահմանադրութիւնը իւր ազդեցութիւնը միայն Կոստանդնուպօլսի և նորա շրջակայ քաղաքների վրայ պիտի տարածէ, քանի որ ազգային երեսփոխանութեան ականջը խուլ կը մնայ գաւառական ժողովրդների ձայնը լսելու, որ մինչև երկինք է բողոքում, գաղթականների թիւը օրէցօր կ'աւելանայ և Հայաստանը վերջապէս թափուր ու ամայի կը մնայ իւր բնակիչներից:

Համառօտենք մեր խօսքերը: Առ հասարակ Խրիմեան Սրբազանի աշխատութիւնը օգտակար գործ է և բոլորովին յարմար մեր հասարակութեան ներկայ պահանջմունքներին. այս պատճառով մենք կը ցանկայինք տեսնել նորա գիրքը իւրաքանչիւր հայ ընտանիքի սեղանի վրայ: Մենք բոլորովին համակրում ենք նորա այն մտքերին որով գծագրում է հօր և մօր կոչումը, այր և կին մարդու փոխադարձ պարտաւորութիւնները և իրաւունքները ամուսնական կեանքի մէջ, ընդունում ենք այն դարմանները որ նա առաջարկում է հայ ընտանիքի մէջ մտած զեղծմունքների առաջն առնելու, բոլորովին համաձայն ենք այն ազատութեան և իրաւունքներին որ նա պահանջում է կին մարդու համար. վերջապէս նորա նկարագրած տան երէցը ծխական քահանայի ամենակատարեալ տիպն է, որ ցանկալի կը լինէր տեսնել և Աստուծոյ տաճարում և հայ ընտանեկան շրջանում:

Բայց Հայրիկի գիրքը պակասութիւններից էլ զերծ չէ, և ինչ զարմանք. փայլուն արեգակի վրայ էլ բծեր կան: Պակասաւոր են հեղինակի յայտնած մտքերը ընտանեկան ու դպրոցական դաստիարակութեան և դաստիարակների վրայ, որոնց նա վարձկան մշակներ է համարում: Եւրոպական քաղաքակրթութեան շուտաքայլ յառաջդիմութեան առաջ, որ մեզանում յաճախ միայն արտաքուստ է ներգործում, հեղինակը երբեմն տատանում է, հակվում է դէպի

հնութիւնը, իրաւունք է տալիս պառաւ մամիկներին, որոնք ափսոսում են իրանց ժամանակը, ցաւում են որ կինը քօղն ու լաչակը ձգեց, լեզու բացեց և ընկերութեան մէջ մտաւ. Նա կարծես զարհուրում է այն մտքից որ գուցէ օր գայ՝ երբ կինը Սահմանադրութիւն կանչէ, այր մարդու հետ հաւասար քուէ տալու իրաւունքը խնդրէ։

Այս մի քանի աղօտ բծերը ոչինչ են այն լուսաւոր հայեացքների, կենդանի իմաստների, ճշմարիտ զգացմունքների առաջ՝ որոնք մտքի և սրտի վրայ միանգամայն ներգործում են։ Զարմանալի է մինչև անգամ թէ ինչպէս մի մարդ, որ ոչ մի եւրոպական լեզուի տեղեակ չէ, հետևաբար և արևմտեան քաղաքակրթութեան ծանօթացել է ոչ իսկական աղբիւրներից, այլ միայն մեր աղքատ գրականութեան միջնորդութեամբ, կարողանում է այդպիսի գեղեցիկ և լուրջ մտքեր յայտնել։ Եւ մենք սրտանց կ'ուրախանայինք եթէ մեր Հայրիկը վարչական ծանր բեռից ազատուած՝ շարունակէր նուիրել իւր ազատ ժամերը հայ գրականական գործին։ Կառավարիչ Հայրիկը սիրելի էր իւր «բարեկամ հայ ժողովրդին», քարոզիչ Հայրիկի կենդանի ձայնը միշտ քաղցր ու ախորժելի կը հնչէ նորա ականջին։

ԳՐԻԶ

ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, *աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց։ Բագու*, 1876։
(223 *երես փոքր* 8-*ածալ*)

«Բալակիրեվի զուարճախօսութիւններից» յետոյ այս երկրորդ փորձն է զուարճացնելով ու ծիծաղեցնելով ընթերցանութեան սէրը արծարծելու մեր միջին դասի ժողովրդի մէջ, որ դժբաղդաբար շատ քիչ սովոր է կարդալ, երևակայելով թէ գիրք կարդալը իւր խելքի բանը չէ, և թէ Գուտտէմբէրգի գիւտը լոկ «ուսում առածների» սեպհականութիւն է։

Զուարճախօսութիւնը ընկերական կեանքի աղն է, և մենք մանաւանդ, իբրև ասիացի ժողովուրդ, շատ ենք սիրում հիւրասիրութեան հացը տեսակ տեսակ սրախօսութիւններով համեմել։ Խնջոյքների, հացկերոյթների ժամանակ, Բաքոսի դիւթական ըմպելիքի ազդեցութեան ներքոյ, հայի բնական ծանրութիւնն ու լռութիւնը տեղի է

տալի մի ախորժելի զուարթութեան, լեզուները բացվում են, հեգնական սուրը անխնայ կտրում է աջ ու ձախ, ամէն կողմից թափվում են զանազան սրամտութիւններ: Հանդէս է գալիս Նասրէդդին խօջան, արեւելեան ժողովրդների Ջօն Բուլը, և հայը պարզ մտութեամբ ամէն զուարճալի ու խելացի խօսք նորա անունովն է մկրտում, առանց կասկածելու որ այդ սրամտութիւններից շատը իւր հայրերից ու պապերից ժառանգութիւն են մնացել իրան, և իւր որդիքն ու թոռները իրանց հերթին իւր սեպհական զուարճախօսութիւնները նոյնպէս Նասրէդդինի անունովն են կնքելու . . . :

Պ. Նազարեանցի հաւաքածուն ընթերցողի ուշադրութիւնը գրաւում է այն կողմից որ օտարազգի անեկդօտների հետ խառն պարունակում է և հայ կեանքից առնուած զուարճախօսութիւններ: Այս նկատմամբ հեղինակի աշխատութեան երկրորդ հատորը խոստանում է շատ աւելի հետաքրքրական լինել, որովհետև բովանդակելու է լոկ հայ կեանքին պատկանած զուարճախօսութիւններ: Ահա այս պատճառով ցանկանում ենք Պ. Նազարեանցի գրքի առաջին հատորի բովանդակութեան ու լեզուի վրայ մի քանի նկատողութիւններ անել, որոնք գուցէ փոքր ինչ օգուտ կը բերեն նորան իւր աշխատութեան երկրորդ հատորի մէջ:

Հեղինակը իւր անեկդօտների մեծ մասը քաղել է հետևեալ գրքերից. «Анекдоты нѣмецкіе, французскіе, американскіе и англійскіе. С.-Петербургъ, годъ 1874» և «Анекдоты всѣхъ вѣковъ и народовъ. К. Е. В. т. I, годъ 1876»: Նա հաւատացնում է թէ խիստ ընտրութեամբ է վարուել «մանաւանդ» այս գրքերի հետ. որովհետև սոքա պարունակում են «իւրեանց մէջ և շատ անհամ անկեդօտներ», որոնց եթէ անխտիր ներմուծած լինէր իւր աշխատութեան մէջ, նորա գիրքը «երեք անգամ աւելի հաստ կը լինէր»: Այդ շատ լաւ է. բայց չենք հասկանում թէ ինչն մեր հեղինակը նոյն խստութեամբ չէ վարուել և հայ կեանքից առած անեկդօտների հետ, որոնց մէջ ոչ միայն անհամ ու անալի սրաբանութիւններ ենք պատահում, այլ որ աւելի ծանրակշիռ է, կան և այնպիսի անեկդօտներ որ մարդկային արժանաւորութիւնը վիրաւորում են, և գուցէ միայն կոպիտ ճաշակի տէր անձին ծիծաղելիութեան, երբ կրկնելով ամենուն չեն կրկնել նորա միտքը: Այսպէս ահա տեսնում ենք որ քարոզիչ քահանան ու բարեպաշտ ժողովրդականը միմեանց ապտակներ են տալիս եկեղեցում. մարդը իւր կնոջ, կինը մարդուն, հայրը որդուն և

այս վերջինը իւր ծնողին տալով, էշ և սոցա նման ածականներ են տալիս: կամ ի՞նչ միտք ունի երկու թլվատ երեխայ խօսեցնելով ծիծաղել նոցա բնական պակասութեան վրայ: Մտրակել կեղծաւո-թիւնը, գողութիւնը, ստութիւնը, ժլատութիւնը և ուրիշ բարոյա-կան պակասութիւններ, ի հարկէ օգտակար և հարկաւոր գործ է. իսկ թլվատի, կաղի, կոյրի, սապատողի վրայ յարձակուելով ոչինչ օգուտ չենք կարող բերել, այլ միայն աւելի կը քարացնենք այս բնական պակասութիւնների տէր մարդկանց սիրտը և ատելի կը դառնանք նոցա աչքին:

Մեր հեղինակը շատ քիչ ուշք է դարձնում նոյնպէս լեզուի կանոնաւորութեան ու մշակութեան վրայ. նորա գրքի մէջ բաւական յաճախ պատահում են սխալներ լեզուի տարրական կանոնների դէմ: Այսպէս, օրինակի համար, գործ դրած ենք տեսնում յոգնակի են-թակայի հետ եզակի ստորոգրեալ. Ուսերը պատառուեց (պատռուեցան). Մեր անեկդոտները մի զարկ կը տար (մի զարկ կը տային). քանակական անունների հետ յոգնակի գոյական. տասնը՞ եղբայրներ, երկու բարեկամ-ներ և այլն փոխանակ տասնը՞ եղբայր, երկու բարեկամ [1]). բայերի մէջ ապառնի և հրամայական ժամանակների սխալ գործածութիւն. չէս անցկացներ. մի՛ անհանգստացներ իմ փոշին. կը փախչէ. մի՛ շփոթուեր, և այլն, փոխանակ՝ չէս անցկացնիր. մի անհանգստացնիր. կը փախչի, մի շփոթուիր. բառերի անճիշտ գործածութիւն. աստեղագէտ (astrologue) փոխա-նակ աստղաբաշխ (astronome), նուագէտ (երաժշտական գործիքի տեղ). մի փոքրիկ քաղաքի դրանը շինած էր յաղթական բրաբէոն, փոխանակ ասելու՝ յաղթական կամար. սեղանի շուրջը նստած անձերը.—նստածէլ, այն էլ մի բանի շուրջը միայն շատի համար կ'ասուի. օտար բառերի կիր-առութիւն այնտեղ ուր բուն հայկականները սովորական են մեր մէջ. այսպէս են՝ գազէտ, էտաժ, բուտիլկա, հասուդ, աֆիշ, տրակտիր և այլն:

Նոյնպէս պատահում ենք յաճախ օտար ձևերի և անսովոր ու մութ դարձուածների, որոնցից շատ սակաւները ազատ են մնում օտար լեզուներից թարգմանելու ժամանակ: Ահա մի քանի օրինակ. Չգիտէր ինչ մտածել (не зналъ что думать, ne savait que penser), փո-

---

[1]) Այս դէպքում գոյականը յոգնակի է դրվում միայն այն ժամանակ երբ որոշուած է. այսպէս ասում ենք՝ Երկու բարեկամ ճանապարհ էին գնում միասին, և Երկու բարեկամները յաճախ տեսնվում էին միմեանց հետ:

խանակ՝ չգիտէր թէ ինչ մտածէ. ցաւում եմ խանգարել ձեր հանգստութիւնը, փոխանակ՝ ցաւում եմ որ խանգարում եմ, կամ պարզապէս՝ ցաւում եմ որ անհանգիստ եմ անում ձեզ. ինչ շատ հետաքրքրում է իմանալ (мнѣ очень любопытно знать), փոխանակ՝ ես շատ հետաքրքիր եմ իմանալու. պատրաստուելով դէպի մահը (приготовляясь къ смерти), այսինքն՝ մեռնելու կամ մահուան պատրաստուելով: Մէկը չորս և միւսը հինգ տարեկան երեխաներ. այսինքն՝ Երկու երեխայ, մէկը չորս և միւսը հինգ տարեկան. Դէպքին հարկաւոր էր եղած որ թաղելու ժամանակը փոխանակուած լինէր դագաղների մէջ, այսինքն՝ Պատահեցաւ որ թաղման ժամանակ դագաղները իրարու հետ խառնուեցան: Յառաջաբանի մէջ հեղինակն ասում է. «Անեկդօտները անվերջանալի են թէ անցեալում և թէ անցեալից յետոյ», և եթէ իսկոյն վրայ չբերէր հետևեալ նախադասութիւնը, «Ուստի մենք կաշխատենք շարունակ անեկդօտներ ժողովելը,—շատ գլուխ պէտք է կոտրէինք նախընթացը հասկանալու համար:

Վերջապէս Պ. Նազարեանցի աշխատութիւնը հայ հրատարակութիւնների մէջ ընդունուած սովորութեամբ՝ լի է տպագրական սխալներով, և գրքի վերջին երեսում, նոյնպէս ընդունուած սովորութեամբ, հեղինակը «հրաւիրում է ընթերցողների ներողամտութիւնը դէպի այն մանր սխալները (խնդրում է ընթերցողների ներողամտութիւնը այն մանր սխալների համար), որոնք սահել են սրբագրողի աչքից»: Բայց այդ նկատողութիւնից յետոյ, կազմի վերջին երեսի վրայ, հայերէն բառը կարդում ենք խոշոր տառերով տպած՝ ՀԱՑԵՆ, իսկ Թիֆլիզի հասարակ թաղը՝ ռուս կառավարների արտաբերութեամբ—АВЛЕБАРЪ: Այդ արդէն նշանակում է չափազանց դէպի չարը գործ դնել ընթերցողների ներողամտութիւնը:

ԳՐԻՉ

BIBLIOGRAPHIE MOLIÉRESQUE, par Paul Lacroix (bibliophile Jacob), conservateur de la bibliothèque de l' Arsenal. Seconde édition revue, corrigée et considérablement augmentée. Paris, 1875. A. Fontaine, libraire (XIX, p. 412, in-8). 25 francs.

«Փորձի» խմբագրութիւնը ստացաւ Փարիզից «Մօլիէրեան մատենագրութիւն» անունով գիրքը:

Եթէ յանձն ենք առնում մեր ամսագրի ընթերցողներին ծանօթացնել Պ. Լակրուայի աշխատութիւնը, այս այն դիտաւորու-

թեամբ ենք անում՝ որ կամենում ենք ցոյց տալ թէ մինչ մենք սառն անհոգութեամբ ենք վարվում մեր հնադարեան ընտիր մատենագրների հետ, չիմանալով թէ ինչ գրուածներ են հրատարակուել նոցա աշխատութիւնների մասին,—ոչ մեզանում, որովհետև մեր մէջ Աստուծոյ տուածից շատ քիչ կան գրականութեամբ պարապողներ, այլ Եւրոպայում,—մինչ մենք տեղեակ չենք թէ որը մեր մատենագրներից ինչ լեզուներով ու քանի անգամ է թարգմանուած, թէ նոցա գրուածները ինչ արժէք ունին գիտութեան համար,-արեւմտեան գիտնականները սկսում են պատուել իրանց հռչակաւոր հեղինակների յիշատակը, մի միայն մատենագրի մասին առանձին հատոր հրատարակելով, որ պարունակում է նոյն մատենագրի կեանքի ու գործերի վրայ գրուած բոլոր աշխատութիւնների ցանկը թէ ազգային և թէ օտար գրականութիւնների մէջ: Այս բանում առաջին օրինակը տուին անգլիացիք: Արդէն շատ տարի կայ որ նոքա իրանց հռչակաւոր ողբերգակ բանաստեղծի՝ Շէկսպիրի անունով առանձին թանգարան և առանձին գրատուն հիմնեցին Ստրասֆորդում, ուր ծնել ու մեռել է այս համաշխարհական բանաստեղծը: Այնտեղ Շէկսպիրի հանճարը պաշտող ազգասէրները հաւաքեցին այն բոլոր նշխարները որ մնացել են նորանից յետոյ, նորան ներկայացնող պատկերները, նորա մասին հրատարակուած բոլոր անգլիերէն և օտար գրքերը, նորա գրուածների բոլոր հրատարակութիւնները:

Նոյնը ձգտում են անել ներկայումս և Ֆրանսիացիք իրանց հանճարեղ կատակերգակ բանաստեղծի համար Փարիզում, որ Մօլիէրի օրօրոցն ու գերեզմանը տեսնելու պատիւն ունեցաւ: Պ. Լակրուայի աշխատութիւնը, որի վերնագիրը յիշեցինք յօդուածիս սկզբում, երեք տարուան ընթացքում երկու հրատարակութիւն ունեցաւ, և այժմ նորա օրինակին հետևելով Պ. Էմիլ Պիկօն (Picot) պատրաստում է երկու գիրք Մօլիէրի ժամանակակից Կոռնէյլ և Ռասին ողբերգակ բանաստեղծների մասին, որ հետզհետէ հրատարակուելու են «Կոռնէյլեան մատենագրութիւն» և «Ռասինեան մատենագրութիւն» անուններով:

Ժան Բատիստ Բօկլէն, մականուամբ Մօլիէր (Molière), կեղծ անուն՝ որ նա ընդունեց նախ իբրև դերասան և յետոյ պահպանեց և իբրև մատենագիր, ծաղկեցաւ Ֆրանսիական գրականութեան օգոստեան դարում (1622-1673): Այդ ժամանակները Ֆրանսիան հե-

ծեծում էր Բուրբոնների ծանր բռնակալութեան ներքոյ։ Լուդովիկոս ԺԴ հաւատարիմ մնալով այն սկզբին որ բարձրաձայն յայտնել էր ազգային ներկայացուցիչների ժողովում, թէ «Տէրութիւնը ես եմ» (L'état c'est moi), արդարև իւր մէջ կենտրոնացրել էր ամենայն իշխանութիւն ու իրաւունք։ Երբէք Ֆրանսիական ազգը այն աստիճանի ճնշողութեան մէջ չէր եղած՝ ինչպէս այդ ժամանակ, երբ այդ կիսաստուածի պալատական շքեղութեան ճառագայթները սփռւում էին ամբողջ Եւրոպայի վրայ, և ոչինչ չէ ստորացրել այնպէս բանաստեղծութիւնը, ինչպէս այն զզուելի շողոքորթութիւնը, որով նա փառաբանում էր այս անամօթ բռնաւորին և նորա անբարոյական թոռանը՝ Լուդովիկոսը ԺԵ-ին։ Այս բաժանումը որ Ֆրանսուա Ա Վալուայեան տան թագաւորի ժամանակներից ընկել էր ժողովրդեան ու գրականութեան մէջ, այժմ իւր զարգացման վերին աստիճանին հասաւ։ Բանաստեղծները ոչ թէ ժողովրդի համար էին գրում, այլ Վերսայլի պալատի համար, և Լուդովիկոս ԺԴ, իբրև մի նոր Մեկենաս, դափնիներ ու թոշակներ էր բաժանում։ Բանաստեղծութիւնը համարուեցաւ մտքի արդիւնք. նորա չոր ու ցամաք և աղքատ բովանդակութեան մէջ սխալմամբ տեսնում էին հելլենական վսեմ պարզութիւնը։ Գրականութիւնը, ստրկօրէն հետևելով հների նեղ ու սահմանափակ օրէնքներին, ձևը մտքից բարձր համարեց և այնպիսի ճաշակագիտական կանոններ սահմանեց, որոնցից խոտորուիլը մեծ սրբապղծութիւն էր համարվում։ Լուդովիկեան դարու կլասիկականութիւնը, աղէքսանդրեան յոյների գրականութեան նման, սառն ուսումնականութեան արդիւնք է, և մի կողմ դնելով մի քանի ճշմարիտ հանճարներ, որոնք այդ ձևական ու պայմանական ուղղութիւնից բարձր գտնուեցան, մեծ մասի մէջ երևում է մի արհամարհանք դէպի բնականութիւնը, մի ձանձրալի երկարաբանութիւն, մի սառն յափշտակութիւն, մի հռետորական ոգևորութիւն, որ այնքան նմանութիւն ունի բանաստեղծութեան հետ, որքան արուեստական վարդը նման է բնական վարդին։

Այս ուղղութիւնը ամենազօրաւոր կերպով արտայայտուեցաւ ողբերգութեան մէջ, որ հիմնուեցաւ Արիստոտէլի վերացականապէս ըմբռնուած երեք միութիւնների սկզբան վրայ՝ միութիւն գործողութեան, միութիւն տեղի և ժամանակի, և իւր նիւթերն առնում էր գլխաւորապէս յունական, հռոմէական և արևելեան պատմութիւններից։

Ողբերգութեան հետ կատարելագործուեցաւ Ֆրանսիայում և կատակերգութիւնը, որ թէև նոյն արուեստականութեան վրայ հիմնուեցաւ, բայց երեք միութիւնների տեսութիւնը, որ շատ դժուար դրութեան մէջ էր դնում ողբերգակ բանաստեղծին, կատակերգակին շատ յարմար էր գալիս, որովհետև կատակերգութեան մէջ տեղի ունեցող մանր հնարները արագութեամբ տանում են դէպի նշանակեալ նպատակը: Բացի սորանից, կատակերգութեան շրջանը ընտանեկան ու հասարակական կեանքը լինելով, բանաստեղծը հեշտութեամբ կարող էր պահպանել և տեղի միութիւնը: Վերջապէս նոյն իսկ աղէքսանդրեան տաղաչափական ձևը, որ ողբերգութեան մէջ խօսքը ձգձգելով յաճախ չոր ու ցամաք միակերպութեան մէջ է ընկնում, կատակերգութեան մէջ, ընդհակառակն, խօսակցական ձև ընդունելով՝ մի տեսակ աշխուժութիւն ու թեթևութիւն է ստանում, որ հանդիսատեսների ծիծաղը շարժում է: Ի հարկէ այս պայմանների համար հարկաւոր է որ կատակեգակը ճշմարիտ հանճար լինի, որպիսի էր արդարև Մօլիէրը ֆրանսիական և առհասարակ նոր կատակերգութեան հայրը:

Ժողովրդի միջից դուրս գալով և մանկութիւնից իւր սեպհական ոյժերին անձնատուր լինելով՝ Մօլիէրը առիթ ունեցաւ ուսումնասիրել կեանքը իւր դառն իրականութեան մէջ և ճանաչել մարդկանց իրանց ընտանեկան ու հասարակական յարաբերութիւնների մէջ: Սորանից բղխում է նորա ստեղծած բնաւորութիւնների աննման ճշտութիւնը, ինչպէս նաև այն բարոյական խստութիւնը որ նորա ծաղրածութեան հիմն է կազմում, հետևելով միշտ հին կանոնին, այն է՝ ridendo dicere verum, այսինքն՝ ծիծաղելով ասել ճշմարտութիւնը: Մօլիէրը իւր ռամկապետական ու յեղափոխական սկզբունքները ստիպուեցաւ պալատական շողոքորթ խեղկատակի դիմակով ծածկել. այլապէս չէր կարող նա հանդէս դուրս գալ այն ժամանակի ֆրանսիական ազնուականութեան դէմ և ծաղրել նորա մոլութիւնները իւր անմահ կատակներով, չէր համարձակիլ պալատականների երեսից կեղծաւորութեան ու սուտ բարեպաշտութեան դիմակը խլել այնպիսի անվեհերութեամբ, որ ամէն ժամանակների մարդկային մտքի պատիւն է եղել: Իւր բանաստեղծական ասպարէզը Մօլիէրը սկսաւ «l' Etourdi» կատակերգութեամբ, որին հետևեցան «le Dépit amoureux» և «les précieuses ridicules»: ընդամէնը երեսուն երկու կատակերգութիւն գրեց նա,

որոնցից ամենաընտիրները համարվում են՝ «Ecole des maris», «le Mariage forcé», «le Misanthrope», «Tartuffe», «l'Avare» և «le Bourgeois gentilhomme»։ Յայտնի է որ Մօլիէրը մեծ օգուտ քաղեց մէկ կողմից իտալական ժողովրդական կատակերգութիւնից և սպանիական գրականութիւնից, միւս կողմից Պղօտիոսից և Տերենտիոսից, ինչպէս նաև ֆրանսիական ժողովրդական գրականութիւնից և Րաբլէից․ բայց նա այնպէս անկախ ու ինքնուրոյն կերպով մշակեց իւր գրուածները, որ Ֆրանսիացիք արժանապէս անուանեցին նորան իրանց կատակերգութեան հայրը, իսկ նոր աշխարհի համար նա առհասարակ բնաւորական կատակերգութեան ստեղծողն եղաւ, այսինքն այնպիսի կատակերգութեան, որի մէջ մի նշանակեալ գաղափար է տիրապետում, իսկ նորա հակադիր երևոյթները արտայայտվում են գրուածի զանազան բնաւորութիւնների մէջ։ Մօլիէրի Ագահը, Տարտիւֆը, Ազնուական քաղքենին և այլն մարդկային հասարակութեան զանազան կարգերի անմահ ու համաշխարհական տիպերն են ներկայացնում․ այս է պատճառը որ այս չնաշխարհիկ բանաստեղծի կատակերգութիւնները համարեա բոլոր լեզուներով թարգմանուած ու զանազան ազգերի բեմերի վրայ ներկայացուած են։

Պ․ Լակրուայի «Մօլիէրեան մատենագրութեան» երկրորդ տպագրութիւնը բաղկանում է քառասուն գլխից և պարունակում է 1733 թուահամար, որոնց մէջ մանրամասնօրէն յիշատակվում են Մօլիէրի կատակերգութիւնների հրատարակութիւնները, թարգմանութիւնները, հետևողութիւնները, քննական յօդուածներ նորա գրուածների նշանակութեան ու լեզուի վրայ, գովասանական և պարսաւական գրութիւններ Մօլիէրի և նորա կատակերգութիւնների վրայ, կենսագրական յօդուածներ և զանազան պատմութիւններ բանաստեղծի և նորա կնոջ կեանքի վրայ, նորա դերասանական խմբի վրայ, և այլն և այլն։ Գրքի վերջում կայ մի մանրամասն ցուցակ, այբուբենական կարգով դրած, որ թեթևացնում է գրքի գործածութիւնը։ Գրքի սկզբում դրած է Մօլիէրի պատկերը՝ 1669-ի նկարից օրինակած։

Թէև Պ․ Լակրուայի հաւաքածուն ընդհանրապէս շատ հարուստ է մանրամասն և հետաքրքրական ծանօթութիւններով, այնու ամենայնիւ չէ կարելի ասել թէ բոլորովին կատարեալ ու անթերի գործ լինի։ Կան շատ մատենագրներ, ինչպէս են օրինակի համար հետևեալները, Բուտէրվէք, Ջարլս Դիբդին, Գէօտէ, Ստինդալ,

որոնք աւելի կամ պակաս գրել են Մօլիէրի մասին, բայց արժանի չեն համարուել յիշատակուելու, կամ գուցէ անգիտութեամբ դուրս են մնացել քաղուածից։ Մօլիէրի նշանակութեան վրայ գրուած առանձին աշխատութիւններից պակաս են՝ Բրօմիգի համեմատութիւն Պղօտիոսի Aulularia-ի և Մօլիէրի Ագահի, Բուրգշտէյնֆուրտ 1854, Զէգէլկէնի de Mollerii fabula Avari nomine inscripta, Bremae 1856 (դօկտօրական դիսերտացիա), Հուբերտի le Phormion de Térence et les fourberies de Scapin de Molière, 1859, Ջարլս կօվդէնի Molière-Characters, Էդիմբուրգ 1865։ Բացի սորանից, պարբերական հրատարակութիւնների մէջ շատ քննական յօդուածներ կան տպած Մօլիէրի մասին, ինչպէս Լաունի յօդուածը Herrigի Archivում, Բօբօլսկիի յօդուածը Մօլիէրի լեզուի վրայ, քննական յօդուածներ Literarisches Centralblattի մէջ, մինչևանգամ զանազան յօդուածներ Revue des deux mondesի մէջ, որոնք հաւաքողի աչքից ընկել են։ Նոյնպէս Մօլիէրի անգլիական Թարգմանութեան նորագոյն հրատարակութիւնը, որ իբրև ընտիր գործ հաշակուած է, առանց յիշատակութեան մնաց։

Հետաքրքրական է համեմատել Մօլիէրի կատակերգութիւնների Թարգմանութիւնները, քանակութեան կողմից, զանազան փոքրիկ ազգութիւնների մէջ։ Հունգարացոց մէջ Ֆրանսիացի բանաստեղծի տասնևմէկ կատակերգութիւնները Թարգմանուած են, որոնցից Կանանց ուսումնարանը երկու անգամ, իսկ Ագահը երեք անգամ։ Խրվաթների մէջ եօթը Թարգմանութիւն կայ, որոնցից Զգօնաբէլը, Ակամայ Բժիշկը և Երեւակայական Բժիշկը երկու անգամ Թարգմանուեցան։ Յունաց մէջ տասնևհինգ հատուած Թարգմանած կայ, որոնցից Ագահը և Ստիպուած ամուսնութիւնը երեք Թարգմանութիւն ունին։ Ռումանացիք տասներկու Թարգմանութիւն ունին, որոնցից Մարդատեացը երկու անգամ Թարգմանուել է։ Պարսկերէն միայն մի կատակերգութիւն կայ Թարգմանած տպաւոր—Մարդատեացը։ Տաճկերէն՝ Ահմէդ Վէֆիք էֆէնդին հետևողաբար Թարգմանեց Ժորժ Դանդէնը, Ակամայ Բժիշկը և Ստիպուած ամուսնութիւնը, որ սորանից վեց տարի առաջ մի մասնաւոր հայ դերասանական խումբ յանձնառու եղաւ ներկայացնել Պօլսի տաճկական Թաղում ժամանակաւորապէս շինուած Թատրոնում։ Այս ձեռնարկութիւնը այնքան յաջողութիւն գտաւ որ մինչև հիմայ էլ շարունակվում է, չնայելով որ կանանց դերերը կատարում են հայ պատանիներ՝ կինացի հագուստ հագած։

Իսկ հայկական թարգմանութիւնների մասին գիտէս, ընթերցող, թէ ինչպէս է ձեռք բերել իւր տեղեկութիւնները ֆրանսիացի հեղինակը. հայկական անձնասիրութիւնդ անշուշտ առանձին բաւականութիւն կը զգայ իմանալով որ պարոն Ջէմս Բօթչիլդի, դրամագլխի այս թագաւորի միջնորդութեամբ է ստացել նա հայ թարգմանութիւնների ցանկը պ. Միքայէլ Միանսարեանցից: Բայց այդ ցանկը թերի է, որովհետև պարունակում է միայն պ. Տիգրան Ցէտէեանի հետևեալ երեք թարգմանութիւնները—Սէրը բժիշկ է, Ակամայ բժիշկ և Ագահ (Զմիւռնիա) և պ. Տիգրան Գարագաշեանի մէկ թարգմանութիւնը—Լը Բուրժուաժէ (Պօլիս). Իսկ ձեռագիր թարգմանութիւններից յիշվում է միայն բժիշկ Փուղինեանցի Թիֆլիսի հայկական բեմի համար յարմարացրած Ժլատը: Բայց չեն յիշատակուած Կ. Պօլսում հրատարակուած Պարոն դը Պուրսօնեակը և Թիֆլիսի հետևեալ ձեռագիր թարգմանութիւնները. Կանանց դպրոցն և Ստիպուած ամուսնութիւն, թարգ. պ. Գէորգ Չմշկեանի, Ակամայ բժիշկ, թարգ. պ. պ. Չմշկեանի և Քիշմիշեանցի, և բժիշկ Փուղինեանցի [illegible], փոխադրութիւն Ստիպուած ամուսնութեան: Այս ձեռագիր կատակերգութիւնները մի քանի անգամ ներկայացուած են Թիֆլիսի բեմի վրայ: Այսպէս ուրեմն Մօլիէրի հայ թարգմանութիւնները և փոխադրութիւնները ընդամէնը տասն են թւով: Իսկ վրացիք հետևողաբար թարգմանել են Մօլիէրի հետևեալ չորս կատակերգութիւնները. Ստիպուած ամուսնութիւն, Զգանարէլ, Սկապէնի խարդախութիւնները և Ակամայ բժիշկ, վերջինը պ. Կլդիանիի փոխադրութիւնն է:

Յոյս ունինք որ պ. Լակրուան իւր աշխատութեան նոր հրատարակութեան մէջ, որ անշուշտ կարճ միջոցից յետոյ լոյս կը տեսնէ, ուրիշ պակասութիւնների հետ կը լրացնէ հայ թարգմանութիւնների ցուցակը և մի նոր բաժին կը բանայ վրացերէն թարգմանութիւնների համար:

ԳՐԻՉ

ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

(ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ)

Արեւելագէտների առաջին համազգային ժողովը եղած է 1873 թուին Փարիզում, երկրորդը 1874 թուին Լօնդօնում, և երրորդը այս տարուայ օգոստոս ամսին Ս. Պետերբուրգում։

Արդէն Լօնդօնի ժողովը՝ հետագայ նիստի համար Ռուսիայի մայրաքաղաքը որոշելով, մի և նոյն ժամանակը մի մասնաժողով էր ընտրած, որի վերայ պարտականութիւն էր դրած պէտք եղած կարգադրութիւններն անելու։ Այդ մասնաժողովի նախագահն էր Ս. Պետերբուրգի կայսերական համալսարանի մէջ արեւելեան պատմութեան և լեզուների պրօֆէսօր պ. Գրիգօրիեվը. մասնաժողովի անդամներն էին նոյն համալսարանի մէջ հայոց լեզուի պրօֆէսօր պ. Ք. Պատկանեանը, եբրայական, ասորական և քաղդէական լեզուների ուսուցիչ պ. Խվօլսօնը և Թուրքէստանի մէջ գտնուած ուսումնարանների ընդհանուր տեսուչ արեւելագէտ պ. Կունը։ Մասնաժողովը մօտ երկու տարու չափ աշխատելով՝ հրաւիրած էր բոլոր հանրածանօթ արեւելագէտներին պաշտօնապէս կամ մասնաւոր կերպով մասնակցելու Պետերբուրգի ժողովին և իւր կողմանէ 38 հարց պատրաստած ու հրատարակած էր ի քննութիւն։ Այդ հարցերը վերաբերում էին գլխաւորապէս Միջին, Արեւելեան և Հիւսիսային Ասիայի ազգութեանց պատմութեանը, թէև Արաբիան և Եգիպտոսը ևս չէին մոռացուած։ Վրացոց և Կովկասեան միւս ազգութեանց վերաբերութեամբ ոչ մի հարց չկար առաջարկուած։ Միայնակ 25-րորդ հարցը վերաբերում էր հայոց պատմական աշխարհագրութեանը, այն է՝ թէ Մխիթարեանց 1843 թուին տպած ու Մովսէս Խորենացուն սեպհականացրած աշխարհագրութիւնը արդեօք ո՞ր դարու և ո՞ւմ հեղինակութիւնն է։ Իւր տեղը կը ծանօթանանք այս խնդրի քննութեանը հետ։

Ռուսիոյ տէրութիւնը ամէն միջոց գործ էր դրած ժողովի մէջ մասնակցող օտարազգի արեւելագէտներին կարելոյն չափ հիւրասիրելու և պատուելու, և, չնայելով ներկայ չփոթ ժամանակներին, ինչպէս հետագայ ցուցակից պիտի տեսնենք, շատ նշանաւոր ուսումնականներ շտապել էին

համնելու այս հիւսիսային մայրաքաղաքը միմիայն իսէր գիտութեան և յառաջադիմութեան։ Ամենից շատ եկած էին անգլիացիք և ամենից սակաւ գերմանացիք։ Այդպէս ահա Լօնդօնից և ընդհանուր Անգլիայի կողմանէ եկած էին՝ 1) նշանաւոր ուսումնական Ռօբէրտ Դուգլասը, որ Չինացոց լեզուի պրօֆէսօր և Բրիտանական Թանգարանի վերատեսուչն է, 2) Դուբլինի ակադէմիայի կողմից—պրօֆէսօր Ատկինսօնը, 3) Օքսֆորդի համալսարանի կողմից—Գէնէրին, 4) Լօնդօնի աշխարհագրական ընկերութեան կողմից—Կլարկը, 5) Լօնդօնի լեզուագիտական ընկերութեան կողմից—Բրանդրէտը, 6) Բիբլէական հնախօսական ընկերութեան, անտրօպօլօգիական և քանի մի ուրիշ ընկերութեանց կողմանէ—Կուստը, եայլն եայլն։ Ընդամենը Անգլիայից եկած էին մօտ 30 հոգի, որոնց մէջ կային երկու տիկին և երեք օրիորդ։ Այդ ուսումնականները գլխաւորապէս Լօնդօնի, Մանչէստէրի, Դուբլինի, Օքսֆորդի և Կէմբրիջի համալսարանների պրօֆէսօրներն են։ Անգլիացիներից յետոյ քանակութեամբ նշանաւոր էին ֆրանսիացիք, որոնց թիւը համնումէր 12ի։ Ֆրանսիայի պաշտօնական ներկայացուցիչն էր Շարլ Շէֆէր, որ արևելեան լեզուաց ճեմարանի՟ կառավարիչ է։ Նշանաւոր էր նմանապէս հռչակուած Օպպէրտը, որի մասնագիտութեան մէջ մտնում են և հայոց բևեռաձև գրութիւնները։ Պ. Օպպէրտի հետ եկած էր և իւր կինը։ Ըստ քանակութեան երրորդ տեղը բռնած ունէին իտալացիք, որոնց պաշտօնական ներկայացուցիչն էր Ֆլօրէնցիայի համալսարանի պրօֆէսօր պ. Անջէլօ դէ Գուբէրնատիս։ Աւստրիայի և Մաջարստանի կողմից ներկայ էին պ. պ. Zschokke, Marschall *և այլք. Բէրլինից—պ.* Sachau, *Դրէզդէնից պ.* Weber, *Դանիմարքայից*—von Mehren, *Շուէդիայից և Նորվէգիայից—պ. պ.* Tegner *և* Lieblein. *Սակսէն Վէյմարից—պ.* Stickel. *Տաճկաստանի կողմից վսեմ. Ահմէդ-Վէֆիկ-Էֆէնդին. Ճապօնիայի կողմից—պ.* Enomotto *եայլն եայլն։ Ընդամենը օտարազգիների թիւը համնում էր 100ի։ Սակայն դոցա միջից, ինչպէս ասացի, զգալի կերպով պակաս էին գերմանացի ուսումնականներից շատերը, որոնց բացակայութիւնը տեսակ տեսակ են մեկնում։ Մասնաւորապէս մեր հայերէնով պարապողներից բացակայ էին պ. պ. Լէնօրմանը, Մօրդմանը, Դիւլօրիէն, մասամբ Ռէնանը, Միւլլէրը, Գէօրգ Սմիտը, որ մօտ ժամանակներումս վախճանեցաւ, եայլն եայլն։*

Թէև արևելագէտների ժողովների մէջ գործածած լեզուն ցայժմ գաղղիական և գերմանականն էր գլխաւորապէս, բայց որովհետև այս անգամի նիստերը Պետերբուրգ պիտի լինէին, վասնորոյ ռուսական լեզուի գործածութիւնը ևս թոյլ էր տրուած։ Ասում են, որ օտարազգի արևելագէտներից մի քանիսը այս վերջին երկու տարուայ մէջ այնքան ուսումնասիրել են ռուսաց լեզուն այս ժողովի համար, որ կարողանում են հասկանալ և հասկացնել. նոցա ռուսական լեզուի գիտութիւնը ես անձամբ կվկայեմ։

Գալով Ռուսիայի արևելագէտների մասնակցութեանը, պէտք է ասել, որ ամենքի վերայ մի ծանր տպաւորութիւն ունեցաւ Պետերբուրգի կայսերական Գիտութեանց Ակադէմիայի անդամների բացակայութիւնը։ Ինչպէս

յայտնի է, այդ ակադէմիայի անդամներն ևս գլխաւորապէս գերմանացիք են։ Ասում են սոքա նեղացել են, թէ ինչու այդ ժողովը գումարուած է համալսարանականների ձեռքով և ոչ ակադէմիայի։ Ինչ և իցէ՝ երբ, օրինակ, խնդիրը կովկասեան ազգութեանց վերայ էր, ոչ մէկ նիստին ներկայ չէին պ. պ. Բրոսսէն, Դօրնը և այլք։ Ռուսիայի գաւառական ներկայացուցիչները նշանաւոր էին՝ Մոսկվայի կողմից—տիկին Օլգա Ֆէդչէնկօն, որ անձամբ ճանապարհորդած է Միջին Ասիա և որի ամուսինը անցեալ տարիքը զոհ գնաց իւր հետաքրքրութեանը, Վեզուվիա հրաբուխի վերայ անհետանալով։ Ղազանից եկած էր այնտեղի համալսարանի արաբացոց լեզուի պրոֆէսոր Գօթվալդը, Դօրպատից — Վօլք, Վարշավայից — Տիսենգաուզէն, Հելսինգֆորսից—Լագուս, Թիֆլիսից—Բերժէ, Օդէսսայից—տեղոյն գերմանացի հիւպատոս Օտտօ Բլաու, Իրկուտսկից և Տաշկէնտից—տեղացի լրագրապետները, ևայլն ևայլն։ Ընդամենը օտարազգիների հետ միասին մասնակցողների թիւը հասնում էր 750ի։ Դոցա հաշւում հայերից էին պ. պ. Քերովբէ Պատկանեանը և սորա եղբայրը, պ. Հախվերդեանը, ես և կինս։ Վրաց կողմից՝ պ. պ. Ցագարէլի, Ջուբինօվ և Գօզօբէրիձէ։ Այդպէս ահա մայրաքաղաքների գիտնական հայերից պակաս էին պ. պ. Էմինը, Նազարեանցը, Եզեանցը, Ղամազեանցը, և այլք։

Օգոստոսի 20ին, Պետերբուրգի կայսերական համալսարանի դահլիճի մէջ, որ գեղեցիկ զարդարուած էր ծաղիկներով, ժողովուել էին 5 կամ 6 հարիւր մարդ ու կին, Արևելագէտների համազգային երրորդ ժողովի նիստերը բացուելու հանդէսը տեսնելու։ Ներկայ էին այս օրերս Ռուսիա հիւր եկած Բրազիլիայի կայսր Դօն Պէդրօն, մեր լուսաւորութեան նախարարը և շատ մեծամեծներ։ Հանդէսը բացուեցաւ մասնաժողովի նախագահ պ. Գրիգօրիեվի իմաստալից ճառովը, որից մի քանի կտորներ առաջ բերելը պարտք եմ համարում։

« Պէտք է խոստովանել, ասաց նա, որ ներկայ ժամանակս ուսումնա-
« կան պարապմունքներին շատ նպաստաւոր չէ, ասիական և եւրոպական
« աշխարհները՝ յուզուած քաղաքական և կրօնական կրքերից, սաստիկ
« շփոթի մէջ են. ամեն տեղ տիրում է մի խուլ զայրոյթ։ Ազգութիւն-
« ները զինուորվում են ազգութեանց դէմ, կրօնքի մէկը բարձրացնում է
« իւր դրօշակը միւս կրօնքի դէմ, և այն տեղերը, ուր պատերազմը բա-
« ցուել է, կռիւը սպանդանոցի է փոխարկուել։ Ահա տխուր տեսարան,
« որ հաստատում է, թէ դժբաղդաբար տակաւին շատ հեռու է մե-
« զանից այն ապագան, երբ ընդհանուր մարդկութիւնը պիտի լինի մի հօտ
« իւր միակ հովիւով։»

« Բայց այդ երջանիկ ապագայի մասին յուսահատուիլ պէտք չէ։
« Մինչև անգամ հիմա, այս կրքերի յուզուած ժամանակը, կայ մի խաղաղ
« ապաստանարան, ուր չեն համարձակիլ մտնել կրքերը—մի ապաստանարան,
« որ խոստանում է մեզ աւելի բաղդաւոր ապագայ։ Այդ ապաստանարանն է
« գիտութիւնը. և ահա այդ մասին մեր աչքի առաջ մի փառաւոր ապացոյց

« ունինք՝ այս դահլիճիս մէջ քանի մի մաքառող ազգութեանց ներկայա-
« ցուցիչները գրկախառնուել են եղբայրական ընկերութեան մէջ, որ
« միայնակ և ամենքի համար թանգագին նպատակ ունի, այն է փնտռել
« ճշմարտութիւն, և միայնակ զէնք այդ նպատակին հասնելու — խաղաղ և
« յարատև աշխատանք, die langsam schafft, doch nie zerstört (որ կա-
« մաց է ստեղծում, բայց երբէք չի քանդում) ինչպէս ասում է գերմանացի
« բանաստեղծը։»

Այնուհետև պ. Գրիգորիէվը շնորհաւորեց օտարազգիների գալուստը և յաջողութիւն ցանկացաւ։ Սորան պատասխանեց գաղղիացի ուսումնական Շէֆէրը, որ շնորհակալ լինելով համակրական ընդունելութեան համար, իւր ճառի մէջ ասաց։

« Այս խաղաղ ընկերութեան մէջ մենք պիտի մաքառինք յանուն
« գիտութեան, մեր միակ նպատակը պիտի լինի ուղղել դէպի ընդհանուր
« օգուտը Արևելագիտութիւնը, որի ամենալաւ ներկայացուցիչներին մենք
« տեսնում ենք ներկայ հանդիսիս մէջ։»

Ճառերից յետոյ մասնաժողովը կարդաց իւր գործունէութեան հաշիւը, ապա ժողովի նախագահ ընտրուեցաւ դարձեալ պ. Գրիգորիէվը։ Ժողովը իւր գործունէութիւնը բաժանեց հետագայ ինը մասնագիտութեանց, այն է՝ 1 Սիբիրիան, 2 Միջին Ասիան, 3 Կովկաս, 4 Անդրկովկաս 5 Արևելքն Ասիայի, 6 Հնդկաստան, 7 Ցաճկաստան, 8 Հնախօսութիւն և 9 Կրօններ։ Ամեն մի մասնագիտութեան համար առանձին նիստ որոշուեցաւ և ամեն մէկ նիստի համար առանձին նախագահ իւր երկու օգնականներով։

Նիստերի մէջ խօսողները, նախագահից առաջուց իրաւունք առնելով, բարձրանում էին ամբիոնի վերայ և ճառում էին ընդամենը 10 կամ 15 րոպէ, որից աւելի արգելուած էր խօսել. այնու ամենայնիւ ամեն մէկ նիստը դարձեալ 2 կամ 3 ժամ էր տևում։

Ներկայ նամակիս մէջ, ընթերցողի ուշադրութիւնը կհրաւիրեմ աւելի այն ճառերի վերայ, որոնք խօսուեցան կամ հայոց վերաբերութեամբ և կամ այն երկիրների մասին, որոնց կեանքի հետ փոքր ի շատէ կապ ունի և մեր պատմութիւնը։ Մնացած նիստերի և ճառերի մասին պարտաւորուած կլինիմ քանի մի բառով անցնիլ։

Օգոստոսի 21ին առաւօտը ներքին գործոց նախարարի դահլիճում եղաւ առաջին մասնագիտական նիստը, նախագահութեամբ գաղղիացի Շէֆէրի։ Մասնագիտութիւնն էր Միջին Ասիան։ Այս նիստի մէջ մեր հայերի համար ուշադրութեան արժանի էր պ. Օպպէրտի խօսածը։ Սա ասաց որ բևեռաձև գրութեանց մէջ գտած ունի այնպիսի լեզուներ, որոնք ոչ արիական և ոչ սեմիտական բարբառներին են պատկանում։ Պ. Օպպէրտը այդ լեզուները սեպհականեցնում է երբեմն Իրանստանի մէջ բնակւող մի ազգութեան, որին գիտնականը ս ո ւ զ օ - մ ի դ ի ա կ ա ն անուն է տալիս, և որ նորա կարծիքով ոչ արիական և ոչ սեմիտական ազգութիւններից

չէ։ Այդ աղգութիւնը արիացի-պարսիկների տիրապետութիւնից առաջ, երկար դարեր տիրումէր Իրանստանի և Խուժաստանի մէջ։ Այդ ազգութեան լեզուներից մէկն է Միդիացոցը, միւսը Սուզիանի լեզուն, որի հետքերը նշմարվում են 2300 մինչև 560 թուականները Քրիստոսի ծնունդից առաջ։ Պ. Օպպէրտը այդ լեզուներից թարգմանութիւններ ներկայացրեց և դոցա քերականութեան վերայ խօսեց։ Եթէ պ. Օպպէրտի այս կարծիքները աճումն ստանան, տարակոյս չկայ որ հայոց լեզուի պատմութեան և մանաւանդ բևեռաձև գրութեանց վերայ մի նոր լոյս կըձգեն։

Սորանից յետոյ նշանաւոր էր Կալկաթայից եկած անգլիացի պրոֆէսոր Լօնգի կարդացածը. Արիական ցեղի, սորա Միջին Ասիայի մէջ ծագման և դէպի Եւրոպա ու Հնդկաստան գաղթելու մասին։ Հրաւիրելով ռուս ուսումնականներին անգլիացի գիտնականների հետ միասին այս խնդիրը վերջնական կերպով պարզելու, ինքը ժողովին 13 հետաքրքրական հարց առաջարկեց, հարցեր—որոնք միանգամայն պիտի բացատրեն և հայոց ազգի ծագումը և Հայաստան երկրի սկզբնական պատմութիւնը։

Նոյն Օգոստոսի 21ին երեկոյեան նիստն էր Կովկասեան մասնագիտութեան վերաբերութեամբ։ Թէև նախագահը պիտի լինէր հայազգի արևելագէտ պ. Ղամաղեանցը, բայց սա բացակայ էր հիւանդութեան պատճառով, վասնորոյ նախագահեց պ. Բէրժէն, որ ճառեց Կովկասեան ազգութեանց մէջ արհեստների որ աստիճան ծաղկելու մասին։ Ինքը պ. Բէրժէն բերած էր հետը և սենեակների մէկի մէջ հանդէս էր դրած Կովկասեան արհեստագործութեան իրեղէնները, որ ժողոված էր պ. Բաղդէն. բայց այս մասին յետոյ։ Պ. Բէրժէի ճառից առաջ կարդացուեցաւ նշանաւոր Բենանի նամակը, որ ցաւ էր յայտնում, թէ չպիտի կարողանայ ներկայ լինիլ ժողովին։

Սորանից յետոյ խօսք առաւ պ. Գրիգորիէվը, որի ճառի իմաստը այն էր, թէ սխալ է, երբ եւրոպացի կամ մի քանի ասիացի ազգութեանցը «կովկասեան ցեղ» անուն են տալիս և կարծում են, թէ դոքա Կովկասի կողմերից եկած լինին։ Այդ անուն տուողը առաջինը եղաւ նշանաւոր Բլումէնբախը, որ իւր գագաթների ժողովարանի մէջ ամենակատարեալ կազմուած գագաթը մի Չէրքէզ կնոջ գագաթն ունենալով, կարծել է թէ ամենակատարեալ նախագաղափարը մարդուս—Կովկասի բնակչաց մէջ փնտռելու է։ Պ. Գրիգորիէվը պնդում էր, որ Կովկասեան լեռները երբէք ազգերի օրօրան չեն կարող լինիլ, վասն, զի լեռների մէջ ապաստանվում են միմիայն հանգչող, չքացող ազգերը, բռնաւորուած, հալածուած ազգութիւնները։ Այնուհետև պ. Գրիգորիէվը կարճօրէն բացատրեց, թէ ինչպէս հնդկա-եւրոպական ազգութիւնները մուտք են գործել Եւրոպա՝ մի կողմը թողնելով Կովկասը։ Այս ճառի վերջը նորէն խօսք առաւ պ. Բէրժէն։ Սա աշխատեց ցոյց տալ, որ Կովկասի կողմը գործածուած արհեստագործութիւններից ամենից սակաւ եւրոպական ներգործութեան տակ են ըն-

կած՝ մետաքսեղէն և բամբակեղէն գործուածները, պղնձէ անօթները։ Ուշադրութիւն դարձրեց դոցա ձևերի, նկարչութեան և պնդութեան վերայ նայլն նայլն։

Օգոստոսի 23ին առաւօտը Անմէդ-Վէֆիկ-Էֆէնդիի նախագահութեամբ եղած նիստը միանգամայն Տաճկաստանին էր նուիրուած։ Խօսեցածների մեծ մասը Արաբաց, Տաճկաց, Սլավոնաց և մի քանի ուրիշ ազգութեանց վերայ էր և միմիայն մասնագէտների համար հետաքրքրական։ Աւելի նշանաւոր էր այն իրողութիւնը, որ այսպիսի ուսումնական ժողովում նախագահում էր տաճիկը՝ Անմէդ-Վէֆիկ-Էֆէնդին մի հաստանդամ, հսկայ մարդ է, կարճ մօրուքով և կարմիր ֆէսը գլխին. սա ծնած է 1818 թուին, ուսումէ առած Փարիզ, և Տաճկաստան վերադարձած ժամանակ հիմնաւոր կերպով ուսումնասիրել է իւր մայրենի տաճկական լեզուն։ Սա անուն է ստացել սկզբում ամեն տարի Սալաամէ անունով վիճակագրական և պատմական ժողովածուն հրատարակելով, որի մի քանի հատորները գաղղիերէն ևս հրատարակուած են։ 1849 թուին այս անձը Ռումէլիայի կառավարիչ նշանակուեցաւ, 1851 թուին Պարսկաստանում դեսպան էր. այնուհետև արդարութեան նախարարի և քանի մի ուրիշ բարձր պաշտօններ էր կատարում։ Վերջին տարիքը քաղաքական գործերի մէջ սակաւ է խառնվում և միանգամայն իւր անձը գիտութեան է նուիրած։ Սա արևելեան գրականութեան մէջ յայտնի է քանի մի նշանաւոր հեղինակութիւններով, որոնց մի առ մի յիշելը այստեղ աւելորդ համարեցի։

Նոյն Օգոստոսի 23ին գիշերը գիտնական de Rosny նախագահութեամբ նիստը պարապեց մեծ մասամբ Ճապօնիայով և Չինաստանով։ Ճապօնիայի վերաբերութեամբ պարզուեցաւ այն բանը, որ այդ երկրի մէջ գտնուող ամենահին գրաւոր յիշատակարանները վերաբերում են միմիայն VII դարուն (Քրիստոսից յետոյ)։ Սորանից յետոյ խօսուեցաւ Չինացոց և Ճապօնացոց լեզուների վերայ և գիտնական de Rosny (դէ-Րօնի) հաստատում էր, որ ճապօնացոց քերականութիւնը մեծ ազգականութիւն ունի տաճկաց, մաջարաց և ֆինաց քերականութեան հետ։ Այս նիստի մէջ խօսեց նոյն առարկաների վերայ և ռուս գիտնական Վասիլիէվը, որ գեղեցիկ կերպով ուսումնասիրած է չինարէնը ու հաշուած է, որ այս ազգի այբուբենական նշանները 40,000 ից անց են կենում։

Օգոստոսի 24ին առաւօտեան նիստը, գիտնական Կէրնի նախագահութեամբ, նուիրուած էր Հնդկաստանին, Պարսկաստանին և դոցա մէջ եղած ազգութեանցը։ Իտալացի Անջէլօ-դէ-Գուբերնատիս գիտնականը հաշուեց, թէ ինչու ինչ է արել վերջին ժամանակներում Իտալիան Արևելքը ուսումնասիրելու համար։ Դուրս է գալիս, որ իտալացիք շատ հաստատուն կերպով ուսումնասիրում են ի թիւս այլոց և մեր հայրենիքը, ոչ ի հարկէ պապական և պրօպագանդայի աչքով, ինչպէս սովորած ենք տեսնել այդ աշխարհի որդոց ցայսօրուայ աշխատանքները. այլ զուտ, մաքուր ուսումնական կէտից։ Այս մասին կըխօսիմ առանձնապէս։ Ներկայ նիստիս մէջ

խօսուեցաւ Աֆղանստանի լեզուի ու պատմութեան մասին, այնուհետեւ գիտնական Օպպէրտը քննեց Ա վ է ս տ ա և Զ է ն դ բառերը, իսկ Մակնամարա ուսումնականը մի գրաւոր քննութիւն ներկայացրեց, որով հաստատում էր, թէ հին ժամանակները երբ և ինչ տեղ խ օ լ է ր ա հիւանդութիւնը մեծամեծ վնասներ է տուած։

Նոյն օրը երեկոյան, գիտնական Վասիլիէվի նախագահութեամբ, նիստը նուիրուեցաւ Սիբիրիայի ազգութեանց։ Այս առարկան թէև մեր հայերի համար չատ հետաքրքրական չէ, բայց և այնպէս յիշելու եմ այն իրողութիւնը, որ ներկայ նիստիս մէջ խօսող գտնուեցան նախ մի ռուս կին, տիկին Ֆէդչէնկօ, որի մասին վերև յիշեցի, և երկրորդ տեղացի, բուն սիբիրացի վայրենի ազգութեանց ներկայացուցիչները, չինական-մօնղօլական այլանդակ պատկերներով, ոմանք իւրեանց գոյնզգոյն զգեստներով և ոմանք եւրոպական ֆրակ հագած, սպիտակ ձեռնոցներով։ Սոքա միմեանց ետև ամբիոնի վերայ բարձրանալով, թէև աղաւաղած ռուսական հնչմունքով, բայց և այնպէս չատ հետաքրքրական բաներ հաղորդեցին Օստիակ, Բուրիատ, Կիրգիզ, Եակուտ և այլ ազգութեանց կրօնից և սովորութեանց մասին։ Բոլորեքեանք մեծ ծափահարութեամբ ընդունուեցան։

Հետևեալ օրը, օգոստոսի 25-ի առաւօտը, նիստը եղաւ Անդրկովկասեան, այսինքն հայ, վրացի և մահմետական ազգութեանց վերաբերութեամբ։ Նախագահն էր մերազգի գիտնական Քերովբէ Պատկանեանը, իսկ նորա օգնականներն էին Կլարկ և Իստվիկ ուսումնականները։ Նիստը բացուելուց յետոյ պ. Պատկանեանը ժողովի ուշադրութիւնը դարձրեց պ. Միանսարեանցի տպագրած Bibliographia Caucasica et Transcaucasica աշխատութեան առաջին հատորի վերայ։ Այնուհետեւ պ. Բէրժէն, ներկայացնելով մի մեծադիր ձեռագիր Ադիր-բէջանի լեզուով եղած երգերի, խօսեց այդ լեզուի և իւր ժողովածուի մասին։ Ապա պ. Բօննէլ գիտնականը կարճօրէն մեկնեց իւր դեռ չտպագրած աշխատութեան իմաստը, որի մէջ խօսում է Սկիւթաց և Սարմատաց ազգերի Իրանից ունեցած ծագման և դոցա դէպի Եւրոպա գաղթելու մասին Կովկասեան երկիրների վերայով։ Հէվէլս-բէրգից ուղարկել էր իւր մի տպագրութեան առաջին թերթերը պ. Շմիտը, որի մէջ ապացուցանում էր, թէ Եգիպտացիք ամենահին ազգն են, որոնք իրաւունք ունին կոչուելու հայ-խամիտեցիք։ Սոցա քաղաքականութիւնը Միջագետից անցած է Պարսից ծոցով դէպի Արաբիա, Եթովպիա և ապա զետեղուել է Նեղոս գետի եզերքում։ Իւր հետաքրքիր քննութեանց մէջ գիտնականը ուշադրութիւն է դարձնում այն իրողութեան վերայ, որ ամերիկացի ազգութեանց և հայ-կովկասեան ազգութեանց կրօնների մէջ մեծ նմանութիւն կայ, որ ի հարկէ պատահական չէ։

Այնուհետև առաջարկուեցաւ հայոց գրականութեան վերաբերեալ հարցը. թէ ո՛ր դարու հեղինակութիւն համարելու է 1843 թուին Մխիթարեանց տպած աշխարհագրութիւնը, որ Մովսէս Խորենացու չինածն է համարվում։ Այս մասին պ. Ք. Պատկանեանը ասաց, որ հինգերորդ դարու

հայոց պատմաբան Մովսէս Խորենացու աշխատութիւնը յայտնի եղաւ ուսումնական աշխարհին մանաւանդ այն օրից, երբ անգլիացի Վիստոն եղբայրք 1836 թուին Լոնդոնի մէջ լատիներէն լեզուով տպեցին։ Դեռ ևս այն ժամանակը դորան կից տպած էր և յիշեալ աշխարհագրութեան թարգմանութիւնը։ Երկրորդ թարգմանութիւնը այդ աշխատութեան արաւ գաղղիացի հայագէտ Սէն-Մարտէնը, բայց սա այդ աշխատութիւնը մի խիստ քննութեան տակ դցեց և մօտ քանի չափ պատմական կոպիտ սխալներ գտնելով, իրաւունք համարեց կարծել, թէ դա 950 թուականի գրութիւն է։ Որպէս թէ ի պատասխան այդ քննութեան, Վենետիկցիք տպագրեցին յիշեալ աշխարհագրութիւնը նորից 1843 թուին, և որովհետև համեմատած էին դոքա մօտ 12 ամենահին և ամենաընտիր գրչագիր օրինակներ, վասնորոյ այս նոր տպագրութեան միջից վերացած է պատմական սխալների մեծ մասը։ Այնու ամենայնիւ այս ուղղած և բուն բնագրին աւելի մօտ եղած տպագրութիւնն ևս դարձեալ տեղիք է տալիս կարծելու, որ դա հինգերորդ դարուց յետոյ է գրուած։ Ներկայ ժամանակներում բոլոր մասնագէտները, ի թիւս որոց հ. Ղևոնդ Ալիշանը և Կիպէրտը, համաձայն են, որ մեր ունեցած աշխարհագրութիւնը չինած է կամ VII դարու սկզբին, կամ արաբաց առաջին արշաւանքի ժամանակ ի Հայաստան, այսինքն նոյն եօթներորդ դարու կիսին։ Ուրեմն, ինչպէս Սէն Մարտէնը ևս իրաւացի կերպով կարծում է, այդ աշխարհագրութիւնը չի կարող Մովսէս Խորենացու աշխատութիւնը լինիլ։ Պ. Պատկանեանի հետազօտութեանցը նայելով, դորա հեղինակը եօթներորդ դարու մէջ է ապրած, ժամանակակից է Մաւրիկիոս կայսեր և Խոսրով Պարթևի, և կարծելու է, որ Անանիա Շիրակացին լինի....

Պ. Պատկանեանի ասածի կարճ իմաստը առ այժմ հաղորդելով, ընթերցողաց հետաքրքրութիւնը աւելի մանրամասնօրէն կխոստանամք բաւականացնել, երբ մեծարգոյ գիտնականը իւր հետազօտութիւնը կբարեհաճի տպագրելու։

Սորան հետևեց նշանաւոր Օպպէրտի ճառը՝ հայ բևեռաձև գրութեանց լեզուի մասին։ Թէև դա մեզ յայտնի հայերէնին ամենևին նման չէ, բայց այնու ամենայնիւ նախնի հայոց լեզուն է, որ և այդ պատճառով Պ. Օպպէրտը Ա ր մ ե ն ի ա կ ա ց ո ց լեզու է կոչում։ Այդ լեզուն բոլորովին ծանօթ չէ և ոչ մի կերպ բացատրուած չէ ոչ թարգմանութեանց և ոչ համեմատական լեզուագիտութեան միջոցաւ։ Այդ արմենիակացոց գրութեանց մէջ շատ են այնպիսի նշաններ, որոնք մի մի գաղափար են արտայայտում, և որոնք ասորականներին նման լինելով, շուտով են հասկացվում. սակայն պատահում են և այնպիսի տառեր, որոնք միմիայն առանձին տառերի նշանակութիւն ունին և այդ ժամանակը նոցա միտքը անհասկանալի է։

Պ. Օպպէրտից յետոյ խօսքն ընկաւ ինձ։ Ես հաղորդեցի, որ ինչքան ես ուսումնասիրած եմ հայոց ձեռագիրները, հինգերորդ դարուց մինչև ցայսօր հայ գրչագիր տառերը գլխաւորապէս եօթը տեսակ փոփոխութիւն են կրած։ Այդպէս ահա իմ տեսած ամենահին ձեռագրի, որ 603 թուականին է

գրած, տառերը քառանկիւնի են, այն ինչ հիմա հայ գրչագիր տառերը գերմանացոց գոտիկական ձևին են մօտենում։ Հայ գրչագիրների մէջ պատահած տառական նկարչութիւնների վերայ նշմարվում է Բիւզանդացոց, Արաբացոց և Պարսից արհեստների հետևանքը։ Ձեռագիր արտագրողները, որոնք սովորաբար գրիչ անուն էին կրում, հայոց մէջ առանձին յարգ ունէին և դոցանից մի քանիսի անունները պատմական յիշատակագիրների մէջ յիշվում են։ Չնայելով որ զանազան ժամանակ անհամար հայ ձեռագիրներ ոչնչացրած են ներքին և արտաքին թշնամիք, դարձեալ հայ գրչագիրների թիւը շատ մեծ է։ Այնուհետև ես խօսեցի Էջմիածնայ գրքատան, Հռովմայ Վենետիկի, Փարիզու, Լօնդօնի Վիէննայի և Բէրլինի գրքատանց մէջ գտնուած հայ ժողովածուների վերայ։ Ցոյց տուի նմանապէս թէ Ռուսաստանի մէջ ինչ և ինչ տեղեր են գտնվում այդպիսի ժողովածուներ։ Վերջ ամենայնի ժողովի ուշադրութիւնը հրաւիրեցի երբեմն Հաղբատայ մէջ գտնուած այն գրչագիրների վերայ, որ մի քանի վկայութեանցը նայելով, մեր Սուրբ Թարգմանչաց ձեռագիրներն են եղած ու միջին դարերում յիշեալ վանքը բերուած։ Թէ երբ և ինչպէս անհետացան այդ թանգագին գրքերը՝ յայտնի չէ։ 1872 թուին, իմ Հաղբատ գտնուած ժամանակ, յաջողեցաւ ինձ ձեռք բերել մի անմատչելի քարայրից մօտ 180 հատ կիսաքարացած հայ ձեռագիրներ, մագաղաթի և չինական թղթի վերայ գրած։ Այս մագաղաթները արդեօք հինգերորդ դարու գրութիւնները չե՞ն։

Ընդ սմին պատիւ ունեցայ ներկայացնել ժողովին քանի մի հատ այդ կիսաքարացած գրքերից։

Ինձանից յետոյ խօսեց վրացի երիտասարդ գիտնականը՝ պ. Ցագարէլին։ Սա ասաց որ պատրաստած ունի տպագրութեան համար մօտ 150 առակներ XVII դարու մէջ ժողոված վրացերէն լեզուաւ։ Ամենասակաւ մասը այդ առակների նմանութիւն ունի միւս ասիական կամ եւրոպական առակների հետ, իսկ մեծ մասը, կարծելու է, որ բուն վրաց մտքի ծնունդ է։ Այնուհետև պ. Զուբինով վրացի ծերունին խօսեց վրաց Վախթանգի ժողոված օրէնքների վերայ տեղ տեղ յիշելով և այն հայ օրէնսգրքերն ու օրէնսդրութիւնները, որոնցից օգուտ է քաղել վրաց թագաւորը։

Այս նիստի ժամանակ ժողովը մի շնորհաւորութեան հեռագիր ստացաւ մեծանուն Լէսսէպսից, որ այդ միջոցում Մարսէլիայի մէջ գաղղիացի արևելագէտներից մի տեղական ժողով էր կազմել։

Օգոստոսի 27-ին պ. Օպպէրտի նախագահութեամբ եղած նիստը հնախօսութեան էր նուիրուած։ Այս անգամ նշանաւոր էր պ. Լէրխի կարդացածը բուխարացոց դրամների մասին։ Պ. Լագուսը լատիներէն լեզուաւ ճառեց այն կուֆիկական դրամների վերայ, որոնք Ֆինլանդիայի մէջ գտնուած են։ Սորա լատիներէն խօսիլը այնքան ոգևորեց ժողովին, որ Օպպէրտը և Շտիկէլը շտապեցին նմանապէս լատիներէն լեզուաւ շնորհաւորել հին Հռովմայ լեզուի գործածութիւնը։ Այս նիստի մէջ պ. Օպպէրտը հաղորդեց Կարլոս Էնէբերգ երիտասարդ արևելագէտի մահը, որ մօտ ժա-

մանավանդ Մուսուլի մէջ զոհ եղաւ գիտութեանը։ Ժողովը իւր ցաւակցութիւնը յայտնեց թէ Էնէբէրգի և թէ Վալէն և Քէլգրէն գիտնականաց մահուան պատճառաւ։

Օգոստոսի 28-ին գլխնական Գուզլասի նախագահութեամբ եղած նիստի մէջ կրօնի վերաբերեալ խնդիրների վերայ խօսուեցաւ։ Այս անգամ պ. դէ-Գուբերնատիս իտալացին համեմատեց այն աւանդութիւնները, որ ունին հրէայք և հնդկացիք աշխարհաստեղծութեան և ջրհեղեղի վերաբերութեամբ։ Ապա պ. Օպպէրտը մի հեռագիր կարդաց, որ հաղորդում էր անգլիացի մեծանուն հնախօս Սմիտի մահը (19 օգոստոսի) և յետոյ պատմեց իւր կարդացած մի բևեռագրի բովանդակութիւնը։ Այդ բևեռագիրը գտած է հանգուցեալ Սմիտը, իսկ պարունակութիւնն է համաշխարհական ջրհեղեղի հետաքրքրական պատմութիւնը։ Նամակիս երկարութեան պատճառով մնացածների խօսածների մասին պարտաւորվում եմ լռել։

Վերջապէս Օգոստոսի 31-ին եղաւ արևելագէտների ընդհանուր ու վերջին նիստը։ Այս անգամ որոշեցին որ 1) արևելագէտների հետևեալ, այսինքն չորրորդ, համազգային նիստը լինի Իտալիայի Ֆլօրէնցիա քաղաքում, այս նիստը կազմակերպելու համար այժմէն ընտրուեցաւ մի մասնաժողով, որ պիտի ժամանակը որոշէ և հրաւէր կարդայ, 2) տպագրել այս երրորդ նիստի աշխատութիւնները, և այլն և այլն։

Այսպիսով վերջացաւ այս համազգային ուսումնական ժողովը։ Վեհափառ Կայսեր կողմից արևելագէտները հրաւիրուեցան քաղաքիս Թանգարանները դիտելու, Պէտէրգօֆը տեսնելու, Ցարսկօյէ Սէլօի պալատում ճաշի հրաւիրուեցան և երեկոյեան Պաւլօվսկ երաժշտութիւն լսեցին։ Վերջ ամենայնի նիստերը գոցուելուց յետոյ մեզ ամենքիս հրաւիրեցին այստեղի փառաւոր կլուբներից մէկի մէջ վերջին անգամ ճաշ ուտելու և միմեանց հրաժարական տալու։ Մօտ 100 հոգի կին և մարդ սեղանի նստեցին. այստեղ ամեն ազգ իւր ներկայացուցիչն ունէր։ Ճաշին խօսուած ճառերի լեզուն Բաբիլոնեան աշտարակաշինութիւնն էր յիշեցնում, մէկը խօսում էր լատիներէն, միւսը պատասխանում անգլիերէն, երրորդը արաբերէն, չորրորդը եակուտի կամ տունգուզի լեզուով։ Գիտնականներից մէկը չինարէն լեզուով իւր խօսքն ուղղեց դէպի պ. Վասիլիէվ չինագէտը։ Վերջինս պատասխանեց նոյն իսկ չինարէն և յետոյ ռուսերէն թարգմանեց այս խօսքերը՝ «Դուք մի այնպիսի լեզուով սկսեցիք խօսել, որ ձեր ասածը ես չեմ հասկանում, իմ ասածը դուք»։ Ընդհանուր ծափահարութիւն։ Առ հասարակ ճաշից յետոյ մարդ զարմանում էր թէ ինչպէս այն առաւօտուայ . չոր ու ցամաք, անկեանք, կիսակմախք դարձած ուսումնական արևելագէտ պարոնները ևս ընդունակ են եղել չամպանիայի ոգիով ոգևորուիլ ու կենդանանալ....։

Թէ ո՛ր աստիճանի բաւական մնացին եւրոպացիք ներկայ ժողովից, այդ սպասենք նոցանից լսելու....։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆ

Պետերբուրգ.
Սեպտ. 10-ը։

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

. . . .

Քաղաքական և բարոյական գիտութիւնների մէջ, ասում է Լապլասը, գործ դնենք այն եղանակը, որ հիմնվում է նկատողութիւնների ու թուանշանների վերայ, այն միևնոյն եղանակը, որ այնքան օգուտ է բերել մեզ բնական գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ: Եւ այս հրաւէրն ընդունեց ժամանակակից սօսիօլօգական գիտութիւնը. սա ուրիշ եղանակ չի գործ դնում մարդկային հասարակութիւններն ուսումնասիրելիս, այլ միայն այն՝ որ ընդունուած է ճիշտ գիտութիւնների մէջ, և հէնց այդ պատճառով է, որ ներկայումս մարդկային հասարակութեան կեանքը անհատական կեանքին են նմանեցնում և ապացուցանում են, որ երկուսն էլ միևնոյն անժխտելի ու ճիշտ օրէնքներին են հետևում: Եթէ այս այսպէս է, ուրեմն խօսելով մի հիւանդ և թոյլ հասարակութեան մասին և կամենալով օգնել այդպիսի հասարակութեան, այն միջոցները պիտի գործ դնենք, որ գործ են դրվում հիւանդ անհատին առողջացնելու ժամանակ: Եթէ անհատի հիւանդութեան պատճառը նորա պատալօգիկական դրութիւնն է, եթէ նորա ներքին գործարանների գործակատարութիւնը անկանոն է, բժիշկն աշխատում է դոցա վերականգնելու համար՝ գործ դնել այն միջոցները, որոնք կարող են աւելի շուտ ու կարճ ճանապարհով նպատակին հասցընել. հիւանդին տալիս են հնար՝ պարզ օդ ծծելով, սննդական կերակուրներ ուտելով և վերջապէս դեղեր ընդունելով, իւր բնական գործարանների միջնորդութեամբ առողջութիւնը վերականգնեցնել: Այդ բնական միջոցներն են գործ դնում մեր դարում և հիւանդ հասարակութիւնը առողջացնելու համար:

Եթէ մի հասարակութեան մէջ թոյլ է կրօնական զգացմուն-

քը, աշխատում են նպաստել ժողովրդի կրօնական դաստիարակութեանը, և ահա ինչ միջոցներ են առաջարկվում դորա համար. նպաստել, որ ժամերգութիւնը անխափան կատարուի և կրօնը տարածուի. նպաստել, որ տաճարներ շինուին, եկեղեցական պաշտօնեաները նիւթականապէս ապահովուին. հոգ տանել այն ուսումնարանների կանոնաւոր կազմակերպութեանը, որոնց նպատակն է եկեղեցականներ պատրաստել: Եթէ ժողովրդի ճաշակագիտական զարգացումը պակասաւոր է, աշխատում են զանազան օգտակար տեղեկութիւններ տարածել գեղարուեստների ու երաժշտութեան վերայ, նպաստում են թատրոնների զարգացմանը: Ժողովրդի մտաւոր դաստիարակութեան համար՝ մեր ժամանակը առաջարկում է հիմնել ճեմարաններ, գիմնազիոններ, ժողովրդական դպրոցներ, մասնագիտական ուսումնարաններ, ուսումնական ընկերութիւններ, գիտնականների ժողովներ, հրապարակական գրադարաններ ու թանգարաններ: Ժողովրդի նիւթական բարօրութեան պայմանների ապահովութեան համար արդեան քաղաքակրթութիւնը շատ աւելի միջոցներ է առաջարկում — հիմնել գիւղատնտեսական ընկերութիւններ, բանկեր, գիւղատնտեսների ժողովներ, գիւղատնտեսական ուսումնարաններ, գիւղատնտեսական արդիւնքների հանդէսներ, նպաստել գիւղատնտեսներին երկիրը պարարտացնելու գործի մէջ, զարգացնել պարտիզպանութիւնը, այգեգործութիւնը, մեղուապահութիւնը, անտառապահութիւնը, անասնապահութիւնը, գազանների ու ձկների առուտուրը: Վաճառականութեան ու ճարտարութեան բարգաւաճման համար մեր դարն առաջարկում է առևտրական ընկերութիւններ կազմել, ապահովացնել առևտրական վարկը բանկերի միջնորդութեամբ, ծաղկեցնել առևտրական տներն ու վաճառանոցները: Հաղորդակցութեան ճանապարհների յարմարութեան համար առաջարկվում է շինել երկաթուղիներ, սալայատակներ, բանալ նոր նոր գիւղական ճանապարհներ, նաւագնացութիւնը ծաղկեցնել և այլն և այլն: Աղքատներին խնամելու և չքաւորութեան առաջքն առնելու համար՝ ժամանակակից մարդկութիւնը հնարեց մի քանի բարեգործական ձևեր, այնէ՝ մասնաւոր, հասարակական և կառավարչական բարեգործութիւնները, աշխատում է աղքատութեան պատճառները հեռացնել, հիմնելով մշակների ընկերութիւններ ու աշխատանքի տներ, փոխադարձ ապահովութեան ընկերութիւններ, խնայողական սնդուկներ, փոխադարձ օժանդակութեան

ընկերութիւններ և այլն և այլն, իսկ ժողովրդական ապրուստը ապահովացնելու և սովի առաջն առնելու համար՝ աշխատում է բարգաւաճել հացի առուտուրը, սահմանել հացի շտեմարաններ, կարօտեալների համար գործ գտնել, վերջապէս ժողովում է նուիրատուութիւններ:

Ահա այն միջոցները, որոնցով մարդկային հասարակութիւնը յառաջ է գնացել, ահա այն միջոցները, որոնց մասին և մեր գրականութիւնը պէտք է մտածէ, քննէ և առաջարկէ հայոց ազգի դրութիւնը առհասարակ և մասնաւորապէս Թուրքիայի հայոց դրութիւնը բարւոքելու, միայն դոցա մէջ է մեր ազգի փրկութիւնը, միայն դոցանով է կարող մեր ազգը մրցել ուրիշ ազգերի հետ:

Իդէալական մարդասիրութեան ժամանակն անցաւ: Այժմ այն ազգը միայն կարող և արժանի է ուրիշ ազգերի համակրութիւնն ու օգնութիւնն սպասել, որ իւր տոկուն աշխատութեամբ, իւր ինքնուրոյն յառաջադիմութեամբ ցոյց է տուել որ ինքն էլ ազգ է և ընդհանուր մարդկութեան մէջ կարող է մի դեր խաղալ՝ նորա ընդհանուր գաղափարներն իրագործելով:

Օսմանեան պետութեան այժմեան կազմակերպութիւնը և քաղաքական դրութիւնը ամենայն միջոց տալիս է, որ ազգն այդ ճանապարհով յառաջ գնայ: Դորա համար ի հարկէ առաջին գործն է գնալ Հայաստան և ուսումնասիրել նորա դրութիւնը, և ապա հանգամանքների համեմատ գործ դնել այն, որ աւելի կարևոր և աւելի յարմար համարուի:

Թուրքիայի հայերի դրութեան վերայ խօսելիս՝ պարտաւորութիւն ենք համարում այստեղ մի բանի վերայ ուշք դարձնել: Մենք հայերի բարօրութիւնը, օսմանեան տէրութեան մէջ, ոչ մի այլ տեղ չենք ուզում որոնել, բայց եթէ Հայաստանում.... Հայաստան ասելով մենք չենք հասկանում հայերի բնակած այն տեղերը ubi bene նոցա համար,—այլ հասկանում ենք աշխարհագրական Հայաստանը: Այդ երկրի վերայ պիտի դառնայ բոլոր հայերի ուշադրութիւնը, նորա բնակիչների համար պիտի մտածեն խոհական հայերը, նոցա դրութիւնը պիտի աշխատեն բարւոքել: Այն ազգը որ իւր երկիրը չունի (մանաւանդ Թուրքիայում), նա ազգ չէ համարվում...Քանի որ մեր հայ մտածողները և գործ կատարողները իրանց նպատակին հասած պիտի համարեն իրանց, երբ Պօլսում և Զմիւռնիայում մի վարժատուն են բաց անում և միևնոյն ժամանակ մոռանում են որ կայ Երզրում,

վան . . . . երբ այս տեղերը իրանց համար կարծես թէ օտար են համարում, իբրև լոկ օսմանեան տէրութեան մի գաւառ, մենք իրաւունք չունինք մեր ազգը ազգութեանց կարգը դասել և նորա համար քաղաքական իրաւունքներ պահանջել: Հայաստանը բարձրագոյն Դրան առաջ պիտի Հ ա յ ա ս տ ա ն ընդունուի և հայերի մասին խօսելիս՝ այդ երկիրը նոցա հայրենիքը պիտի համարուի և նոցա իրաւունքների բունը [1]:

Ուրեմն Ազգիս գրութիւնը բարւոքելու համար մեր առաջին գործը պիտի լինի ուսումնասիրել Հայաստանը և նորա ժողովուրդը. որովհետև ինչպէս որ առանց հիւանդութեան ամենաչնչին երևոյթները ճանաչելու, անկարելի է հիւանդին օգնութիւն հասցնել, նոյնպէս և մի ազգութեան օգնելու համար, առաջ պէտք է ծանօթանալ այն ազգութեան հետ և ապա դարման տանել այն պիտոյքներին, որոնց կարօտութիւնը աւելի է զգում նա: Տաճկական Հայաստանի ժամանակակից ցաւը գաղթականութիւնն է. սա այնպիսի ցաւ է, որ եթէ շուտով նորա առաջքը չառնուի, գուցէ յետոյ ուշ՝ լինի: Ի՞նչ է այդ գաղթականութեան պատճառը. մեր գրականութիւնը հազիւ թէ դորա պատասխանը տայ, քանի որ գրականութեան կենտրոնները զանազան օտար մայրաքաղաքներն են, քանի որ ազգային ասպարիզում հանդէս դուրս եկողները միայն իդէալական ու երևակայական կերպով են ծանօթ իրանց

1) Առանձին ուրախութեամբ յիշում ենք այս տեղ մեր համակրելի հեղինակ պ. Փորթուգալեանի «Մանզումէ Էֆքեար» լրագրի մէջ տպած այն տողերը, որ արդարև ցոյց են տալիս թէ Թուրքիայում վերջապէս հայերը սկսում են զգալ իրանց իբրև մի քաղաքական ազգութիւն. «Կ. Պօլսի հայերը, ասումէ մեր հեղինակը, մայսի 24-ին միայն բաժակը իւրեանց ձեռքը կը յիշեն Հայաստանը, բայց գինիի ուժով միայն արձակուած «կեցցէի» աղաղակները ինչ օգուտ կրնան տալ ամայի և աւերակ դարձած Հայաստանին. Կ. Պօլսի հայերը երբ մի պատահական առարկայ յանկարծ գայ իւրեանց եռանդը արծարծել, յայնժամ միայն վայրկենական յափշտակութիւնով կ'ելնեն, Հայաստան, Հայաստան կը պոռան. բայց ո՞րպիսի բան է Հայաստան, ինչ է նորա ներքին կեանքը, ինչ են նորա ցաւերը, չեն գիտեր որ դարման տանին. Ո՛չ, երիտասարդներ, ոչ, այդպէս ձեր տուները կակուղիկ բաստեռներին վրայ բազմած, անկարելի է ձեզ ճանաչել Հայաստանը, պէտք է որ Պոսփորի ափերէն դուրս ելնէք, երթաք արտասուքներով համբուրէք այն սրբազան վայրերը, տեսնէք, քննէք Հայաստանը և այն տեղի հային կեանքը, այնտեղ թափէք ձեր քրտինքները որ կարեն արդիւնաւորուիլ.»

հայրենիքին, քանի որ նոքա հեռու են մնում մինչև անգամ այն միջոցից, որ օտարներն անգամ գործ են դնում մի ազգութեան հետ ծանօթանալու համար, այն է ճանապարհորդութիւն ի Հայաստան: Հայաստանի երկիրը, լսում ենք մենք, արգաւանդ է, ջուրը բաւական է, օդն ընտիր. ուրեմն ի՞նչն է ստիպում մեր հայրենակիցներին գաղթել: Գուցէ փողը պակաս է՝ երկիրը մշակելու, գուցէ ճանապարհներ չկան՝ արդիւնքները վաճառահանելու. ուրեմն պէտք է գիւղական բանկեր բանալ, ինչո՞ չենք աշխատում ընկերութիւններ կազմել ճանապարհներ շինելու համար, ինչո՞ չենք դիմում եւրոպական դրամագլուխներին, եթէ մեր միջոցները սահմանափակ են:

Մեզ հաւատացնում են, թէ Տաճկական Հայաստանում մարդու կեանքն ու կայքը անապահով դրութեան մէջ են: Բայց մի ով քըննե՞լ է, թէ ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են պատահում յարձակմունքներ հայոց կայքի ու կեանքի վերայ: Մենք, օրինակի համար, հաստատ աղբիւրներից լսած ենք, որ քրդերն ու աւազակները հայ գիւղերի վերայ գրեթէ միայն այն ժամանակ են յարձակվում, երբ գիւղի մէջ մնում են ծերեր ու կանայք, իսկ տղամարդիկը գնացած են լինում Թուրքիայի մեծ քաղաքները և Կովկասու կողմերը փող աշխատելու: Գուցէ բարւոքելով գիւղերի դրութիւնը, մենք աննկատելի կերպով հասնինք և այն հետևանքին, որ ոչ միայն գաղթականութեան առաջն առնենք, այլ և գաղթածներին յետ դարձնենք իրանց հայրենիքը:

Մեղադրում են օսմանեան պետութեան աստիճանաւորներին, փաշաներին, կայմակամներին, որոնք նպաստում են մեր ազգի թուլանալուն: Նախ՝ այդպիսեաց թիւը հազիւ թէ խիստ շատ լինի. երկրորդ, ո՞ր պետութեան մէջ չեն պատահում գուցէ աւելի մեծ յանցանքներ կառավարիչների կողմից: Մենք միայն հաւաստի ենք, որ այդպիսիներին ամեն իշխանութիւն, ուրեմն և Բարձրագոյն Դուռը, երբ նոցա յանցաւոր գործերին տեղեկանում է, առանց պատժի չի թողնում: Բացի դորանից՝ պիտի ընդունինք, որ այն նեղութիւնները, որ քրդերն ու աւազակները պատճառում են քրիստոնեաներին Հայաստանում, յանցանքներ են, պատժելի արարմունքներ են. ինչո՞ւ հայն ինքը չպէտք է պաշտպանէ իւր կեանքն ու կայքը այդպիսի յանցաւորների դէմ՝ երբ կառավարութիւնը չի հասնում նոցա հալածելուն, եթէ մինչև անգամ հարկաւոր լինի պաշտպանութեան ժամանակ սուր և կրակ գործ դնել: Պաշտպանութեան իրա-

ւունքը մինչև այն աստիճան բնական բան է համարվում, ամեն ազգերում և ամեն ժամանակներում ընդունուած, որ նորա օրինաւորութիւնը ապացուցանելու համար՝ երկար ժամանակ բաւականացան հիմնուելով մարդկային բնածին իրաւունքի վերայ:

Ամենայն ապօրինի յարձակմունք պաշտպանուելու իրաւունք է տալիս նորան, որի վերայ լինում է այդ յարձակմունքը: Բայց որովհետև պետութեան մէջ քաղաքացիք իրանց պաշտպանելու իրաւունքը թողում են կառավարութեան, այս պատճառով ինքնապաշտպանութիւնը ի հարկէ միայն այն դէպքում կարող է տեղիք ունենալ, երբ հասարակական իշխանութիւնը չի կարող պէտք եղած պաշտպանութիւնը ցոյց տալ: Որքան մենք գործին ծանօթ ենք, հայերը միշտ գտնվում են այն դրութեան մէջ, որ ինքնապաշտպանութիւնը միայն կարող է ազատել նոցա չարագործներից և աւազակներից: Այսպէս է ամեն ազգի քրէական օրէնքների բնական կանոնը: Մենք ծանօթ չենք օսմանեան պետութեան քրէական օրէնսդրութեան հետ, բայց կարծում ենք թէ այդ բնական կանոնը գտնվում է և այնտեղ: Մենք կարծում ենք մինչև անգամ, որ եթէ տաճկական օրէնսդրութեան մէջ այդ կանոնը զետեղուած էլ չլինի, քրիստոնեայ ազգը այն հանգամանքներում, երբ կառավարութեան կողմից պաշտպանութիւն չգտնելով՝ ինքը թրով և սրով պաշտպանում է իւր պատիւը, ինչքը, հանգստութիւնը,—այդպիսի հանգամանքներում քրիստոնեայ ազգը միշտ կարող է պաշտպանութիւն գտնել երաշխաւոր տէրութիւնների կողմից, թէև այդպիսի պաշտպանութեան պէտք է դիմել միայն վերջին րոպէներում:

Ինքնապաշտպանութեան վերայ երկար կանգնեցանք, որովհետև մեր գրականութիւնը միշտ այլապէս է մեկնում այն չարագործութիւնները, որ կատարվում են օսմանեան պետութեան մէջ հայերի վերաբերութեամբ: Մենք կարծում ենք և մինչև անգամ համոզուած ենք, որ երբ դադարէր Հայաստանի շինականների հայրենիք թողնելը փող աշխատելու դիտաւորութեամբ, եթէ փոխանակ մահակների նոքա կարողանային սուր ու հրացան բանեցնել, որ Թուրքիայում արգելուած չէ, գոնէ հայերին Հայաստանում, այն ժամանակ նոքա, կարծում ենք, էլ գանգատելու առիթ չէին ունենալ:

Եթէ եւրոպացիք հարիւրաւոր տարիներ սորանից առաջ Ամերիկայում՝ պատերազմելով նախնական բնութեան դէմ, կատաղի գազանների և անտառաբնակ գունամորթ վայրենիների դէմ, կարո-

ղացան համնել այժմեան դրութեանը, մի՞թէ հայերը՝ տասնեւիննե-րորդ դարում, օսմանեան պետութեան մէջ, որ եւրոպական տէրու-թիւնների շարքում վերջին տեղը չի բռնում, հայերը,ասում ենք, չե՞ն կարող այնքան անել, որ Հայաստանը Հայաստան համարուի և նորա բնակիչները այն դրութիւնն ընդունին, որ իրանց պատիւը, ըն-տանիքը և կեանքը ապահով ու բարւոքեալ վիճակի մէջ լինի:

Օսմանեան պետութեան մէջ հայերի դրութիւնը՝ մահմէտա-կանների վերաբերութեամբ՝ ունի և մի ուրիշ յարմարութիւն:

Այնտեղ հայերը բնականապէս աւելի զարգացած են, աւելի քաղաքակիրթ են, իսկ քրիստոնէական քաղաքակրթութիւնը այն-պիսի մի զօրութիւն է, որ իրան հպատակեցնում է ամեն բան, մինչև անգամ եթէ մահմէտական մոլեռանդութիւն էլ լինի: Մենք մտա-բերում ենք մի անձի անուն, որ յիսուն թուականներին ձեռնամուխ եղաւ մեծ գործեր գործելու, բայց ափսոս որ չկարողացաւ սկսածը գլուխ տանել: Այդ անձն է տիգրանակերտցի Մկրտիչ վարդապետը (այժմ եպիսկոպոս[1]), որ Հրաշագործ մականուն ստացաւ: Դա իւր քարոզութիւնների մէջ հրահանգելով ժողովրդին եկեղեցու և քրիս-տոնէութեան բարձր պատուիրանները արդիւնագործել, այն աստի-ճանի ազդեցութիւն ստացաւ մոլեռանդ կարծեցեալ մահմէտա-կանների մէջ, որ անուն հանեց, թէ իւր սուրբ խօսքերով և աղօթք-ներով հիւանդներ է բժշկում, հրաշքներ է գործում... մինչև անգամ Մկրտիչ հայր սուրբը Պօլսում եղած ժամանակ սերալ կանչուեցաւ, հրաւիրուեցաւ սուլթանուհիների համար աղօթք անե-լու: Դորանով չվերջացաւ նորա գործունէութիւնը: Հայր սուրբը քրդերի մէջ կամեցաւ տարածել քրիստոնէական գիտելիքը, այբբե-նարաններ, քերականութիւններ յօրինեց նոցա համար . . . . և ազգը առատ վարձատրում էր աշխոյժ վարդապետին (այդ կողմից ի-բաւ որ մեր ազգը օրինակելի է), քանի որ Հրաշագործ մակա-նունը կրում էր իւր վերայ և դեռ չէր դարձել Հրէշագործ, ինչպէս որ վերջը սկսեցին մականուանել նորան:

Մեր առաջարկած միջոցները այն ժամանակ միանգամայն պտղա-բեր պիտի լինին, երբ նոքա արդիւնաւորուին նոյն այն քրդերի օգնութեամբ ու մասնակցութեամբ, որոնք այժմ ահ ու դող են

---

[1]) Խնդրում ենք մեր ընթերցողներին, որ տիգրանակերտցի Մկրտիչ եպիսկոպոսի անունը չշփոթեն Մկրտիչ Խրիմեան հայրիկի անուան հետ։

բերում մեր գիւղերի վերայ . . . . և այդ բանը թէև դժուար է բայց անիրագործելի չէ։ Եթէ Մկրտիչ Հրաշագործը, որ վերջը հրէշագործ դարձաւ, կարող էր այնքան մօտենալ մահմէտականներին, որ մայրաքաղաքի սերալը կանչուի սուլթանի կանանց մօտ, մի՞թէ աւելի ևս չեն կարող այն մարդիկը, որ առիթ չունին վերջը հրէշագործ դառնալու։ Չէ՞ որ քրդերի անցեալը բաւական երաշխաւորութիւն է տալիս մեզ, չէ՞ որ նոքա հայ քրիստոնեաների հետ պաշտում են և մի քանի սուրբեր և ուխտատեղեք։ Յիշե՞նք արդեօք այստեղ և վանայ Պօղոս վարդապետին, նորա մտերիմ բարեկամութիւնը քրդերի շէյխների և գլխաւորների հետ . . . . Եթէ Պօղոս հայր սուրբը, ինչպէս հաւատացնում են, ի չարն էր գործ դնում իւր բարեկամութիւնը, գուցէ ուրիշներին յաջողի ի բարին գործ դնել յօգուտ երկու ազգութիւնների ևս։

Ամենայն իրաւունք և բարութիւն աշխարհիս մէջ, ասում է գերմանացի իրաւաբան Իհերինգ պրօֆէսօրը, ստացվում են կռուով. միայն այն իրաւունքը և բարութիւնը թանգ և հաստատուն են ժողովրդի մէջ, աւելացնում ենք մենք, որ հէնց միայն կռուի միջնորդութեամբ են ստացուել։ Կռիւ ասելով՝ չենք ուզում հասկանալ յեղափոխական միջոցները, ապստամբութիւնը և այլն։ Հայերի դրութիւնը Թուրքիայում, նոցա վայելած իրաւունքներն ու արտօնութիւնները դեռ այնքան են, որ առանց ապստամբութեան դիմելու, կարող են բարւոքել իրանց դրութիւնը...

Թէ «Ազգային սահմանադրութիւնը», որ հայերը վայելում են Թուրքիայում, որքան կարող է օգնել ազգի յառաջադիմութեանը, թէ ինչ պակասութիւններ և արժանաւորութիւններ ունի նա, թէ ինչ պիտի լինի հայերի դրութիւնը, երբ օսմանեան պետութեան կառավարութեան մէջ ժողովրդական տարր մտցնելու վերայ են, «ժողովուրդ» հասկանալով մուսուլմաններին և քրիստոնեաներին անխտիր—դորա մասին «փորձը» մի ուրիշ անգամ կը խօսի։

ԹԻՖԼԻՍԻ ՇՐՋԱԿԱՑ ԳԻՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա.

Աշխարհիս երեսին ոչինչ բան չըկայ, որ կեանք ասուած բանից աւելի բարձր և աւելի թանգագին լինի։ Քրիստոս այն էր ուսուցանում, ինչ որ պէտք էր ժողովրդին երջանիկ կեանք ունենալու

համար. Նա քարոզում էր սէր, ազատութիւն, հաւասարութիւն: Եւ ո՞վ արդեօք աւելի սիրով կը գրկէր այս կենսատու պատուէրները. ի հարկէ նոքա, որոնք զուրկ էին կատարեալ կեանքից, մարդավայել վիճակից, մարդկային իրաւունքից, նոքա, որոնք ստրուկ էին, ծառայ էին, ընկճուած էին, թշուառ էին, աղքատ էին, հարստահարուած էին. վասն զի դորանց էր կանչում Քրիստոս, ասելով «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ». Իսկ դպիրների և փարիսեցիների գլխին վայ էր կարդում, նոցա անարժան և անկարելի էր համարում մտնել իւր նոր կեանքը, որ արքայութեան էր նմանեցնում: Նա տեսնում էր, որ իւր ասածները ձեռնտու չէին աշխարհի հարստահարողներին և բռնակալներին, որոնք հալածելով հալածում էին նորան, ուստի և «Դիւրին է, ասում էր, ուղտին ասղի ծակով անցնելը, քան այդ մեծատուններին՝ երկնային արքայութիւն մտնելը»:

Այս այսպէս լինելուց յետոյ՝ մեր մէջ դեռ գտնվում են շատ բթամիտ և ինքնակոչ աստուածաբաններ, հանգոյն հին փարիսեցիների, որոնք զարմանում են հասարակ, անուս ժողովրդի կրօնափոխութեան վերայ և դորա մէջ լոկ անբարոյականութիւն են նշմարում, ասելով՝ մի կտոր հացի համար են փոխում իրանց կրօնը: Կուզէինք իմանալ, թէ ե՞րբ է արդեօք ուրիշ կերպ եղել կրօնափոխութիւնները, և կամ ժողովրդի ո՞ր դասից է սկըսուել, եթէ ոչ անուս և գռեհիկ դասակարգից, աղքատ և հացի կարօտ ամբոխից. և մի՞թէ այդ անբարոյականութիւն է: Մի՞թէ կեանքի վերայ լոկ բարոյական, տնտեսական կէտից նայելն անբարոյականութիւն է: Մի՞թէ անբարոյականութիւն է հաւատալը, թէ «շաբաթ վասն մարդոյ արարաւ և ոչ թէ մարդ վասն շաբաթու»: Ընդհակառակն՝ ամեն մի բարեկիրթ և լուսաւորեալ անձն, ամեն մի իրաւախոհ և ժողովրդասէր անձն, երկար տարիներ ուսանելուց և մըտմտալուց յետոյ՝ մարդկային իրաւունքի վերաբերութեամբ՝ գալիս է վերջիվերջոյ այն եզրակացութեանը, ինչ որ գիւղացի ռամիկն ունի առանց ուսանելու, առանց գիտութեան այբուբենն իմանալու: Բնութիւնը իւր հարազատ որդոցը շատ բան է սովեցնում, որից զուրկ են շատ համալսարանակիրթներ: Գիւղացին այն է սիրում, առայն է ձգտում, ինչ որ բնական է, աստուածային է, մարդավայել է. աշխարհիս իմաստուններն են, որ նոցա այդ բնական ձգտման առաջքն առնում են....

Բ.

Մենք մօտաւոր ծանօթութիւն չունինք ոչ Տաճկաստանի և ոչ Պարսկաստանի գիւղերի վիճակի հետ, բայց ծանօթ ենք Թիֆլիսի շրջակայ գիւղերի, որոնց մասին և պիտի լինի առ այժմ մեր ասելիքը: Գնացէք այդ գիւղերից որը կամենաք, ամեն տեղ միմեանց վերայ դարսուած գետնափոր խրճիթներ կը գտնէք. մտէք այդ մարդաբոյների մէկի մէջ, և դուք կը տեսնէք, որ այդ միակ խրճիթն է գիւղացու ննջարանը, խոհանոցը, մառանը, շտեմարանը, սեղանատունը, հիւրանոցը և այլն: Դոցա հագուստը պատառոտուն, դոցա կերակուրը ցամաք հացն է, այն էլ հազիւ մաքուր ցորենի ալիւրից, այլ կամ գարուց է և կամ սմինդրից ու կորեկից: Տեսնելով այս անտանելի թշուառութիւնը, դուք ակամայ կը հարցնէք ձեզ, թէ այս ի՞նչ կը նշանակէ. այս մարդիկը Թիֆլիսի քթի տակ ապրելով՝ կարող են իրանց ամեն մի արդիւնաբերութիւնը օգտակար գնով վաճառել և իրանց կեցութիւնը բարւոքել, ինչո՞ւ ուրեմն այսքան թշուառ են. երևի ծոյլ են, տգէտ են, վայրենի են: Ամենևին ոչ: Ուրեմն ի՞նչ է պատճառը:

Մեր գիւղացոց թշուառութիւնը նոր բան չէ, այլ հետևանք և շարունակութիւնն է հին թշուառութեան, հին բռնակալութեան, այն ճնշման, որի մէջ գտնւում էր ժողովուրդը վրաց իշխանների ձեռքին: Ռուսաստանի հովանաւորութեան տակ մտնելուց յետոյ ժողովուրդն սկսել է փոքր առ փոքր դուրս գալ հնադարեան թշուառութիւնից, բայց նա դեռ ևս կաշկանդուած է հին բռնակալութեան ազդեցութեամբ, որ ժառանգական ցաւի պէս թունաւորել է նորա արիւնն ու մարմինը: Այս պատճառով ահա մեր գիւղացոց տնտեսական և բարոյական թշուառութեան աղբիւրը ոչ թէ ներկայի մէջ պէտք է փնտռել, որ անկարելի է, այլ մօտաւոր և հեռաւոր անցեալի:

Պարզենք մեր միտքը:

10—15 տարով մեզանից առաջ սկսեալ յետ յետ երթալով մինչև պատմութեան սկզբները, այդ անհուն շրջանի մէջ մեր գիւղացիներին ստրկութեան մէջ կը գտնէք: Ստրկութի՜ւն . . . սոսկալի՜ վիճակ: Գիւղացին ոչինչ սեփականութիւն չունէր, իւր տնկած ծառը իրանը չէր, իւր պահած եզը իրանը չէր.... բայց ինչ եմ ասում, մի՞թէ դոքա աւելի էին քան իւր գլուխը, իւր կինն ու զաւակը, որոնք նոյն-

պէս իրանը չէին։ Ստրկատէրը որդուն հօրից, աղջկանը մօրից, քրոջը եղբօրից բաժանում էր, մէկին մի պարսկի վերայ վաճառում, միւսին մի տաճկի, մէկէլին մի լէկզու…

Եւ այսու ամենայնիւ ժողովուրդն ապրո՜ւմ էր էլի, աճո՜ւմ էր, և լուռ ու մունջ տանո՜ւմ այդ բարբարոսութիւնը։

Ժողովուրդը տարէցտարի նուազում էր, միայն ազնուականներն էին աճում ստրուկների հաշուով, և որքան աճում էին ազնուականները, այնքան առաւել նուազում էր ժողովուրդը։ Օրինակի համար՝ եթէ մի պարոն ունենում էր հարիւր տուն ստրուկ, նա ապրում էր այդ հարիւր տան հաշուով, բայց այդ պարոնը իրանից յետոյ հինգ ժառանգ էր թողում, որոնք հարիւր տունը բաժանելով իրանց մէջ, ստանում էին քսանական տուն. այդ ասել է թէ՝ այժմ քսան տունը պէտք է այնքան ծանրաբեռնուէր, որքան մի ժամանակ հարիւրը։ Իսկ եթէ դորա վերայ աւելանար և այնպիսի հանգամանք, որ որդին աւելի շռայլ լինէր հօրից և աւելի անգութ, ի՞նչ կը լինէր ստրուկների դրութիւնը, որոնք պէտք է իրանց պարոնի բոլոր պարտքերը վճարէին և նորան այնպէս ապրեցնէին, ինչպէս ապրում էին միւս աւելի բազմաթիւ ստրկատէր պարոնները։

Մի այսպիսի երկրում և այսպիսի օրէնքի տակ եղող ժողովրդի լուսաւորութեան մասին էլ ասելիք չի մնում։ Ժողովուրդը երկու դասի էր բաժանուած, մէկը ժառանգական տէր, միւսը ժառանգական ծառայ։ Մէկի որդիքը բռնակալութեան և խստասրտութեան ձեւերն էին սովորում, միւսինը ստրկութեան և հլու հպատակութեան — ահա այդ երկրի միակ ուսումն ու կրթութիւնը։ Մնում էր եկեղեցին, որ պիտի որպէս թէ կրօնապէս մխիթարէր ժողովրդին, բայց չըկար վանք, չըկար եկեղեցի, որ իւր սեփական ստրուկները չունենար, ուրեմն ժողովուրդը եկեղեցու գիրկն ընկնելով ևս չէր կարող փրկութիւն յուսալ, այլ դարձեալ ստրկութիւն, ըստ որում օրէնք կար, որ ով մի կալուածատիրոջից հեռանար և ուրիշի կալուածում հաստատէր իւր բնակութիւնը, նա պիտի վերջին կալուածատիրոջ ստրուկը դառնար։ Այս վիճակին էին ենթարկվում և ուրիշ երկրից Վրաստան գաղթողները, որոնք մի որ և իցէ ստրկատիրոջ կալուածում բնակութիւն էին հաստատում միամտաբար, չիմանալով, որ վրացոց մէջ մի այդպիսի օրէնք կայ, ինչպէս Գօրի գաղթող Ղարաբաղցոց հետ պատահեցաւ այդ բանը։

Գուցէ Վրաստանի հետ անծանօթ եղողները մեզ հարցնեն, թէ

այդ երկրի մէջ եթէ այդչափ բարբարոսութիւն կար, ինչո՞ւ ժողովուրդը չէր գաղթում ուրիշ երկիր: Կըպատասխանենք. նախ՝ ստրուկները տգէտ, անուս, մերկ և թշուառ էին, ծառի պէս բուսել էին իրանց երկրի մէջ և թշուառութեան բոլոր փոթորիկներին ընդելացել: Երկրորդ՝ դոքա քրիստոնեայ էին, իսկ շրջակայ երկիրները մահմեդական: Յայտնի է, որ ժողովուրդը մի երկրի միայն կրօնին է տալիս նշանակութիւն, և աւելի լաւ է համարում իւր հաւատակից տէրութեան մէջ ստրուկ լինել, քան թէ անհաւատակցի մօտ ազատ: Չէնց այդ էլ որ չըլինի, մի՞թէ հեշտ բան է հեռանալ իւր հայրենի հողից ու ջրից, իւր պապերի գերեզմաններից: Նոյն իսկ հայերի վերաբերութեամբ մի հրաշք է գաղթականութիւնը, և երբէք չէր կարող տեղի ունենալ, եթէ դուրս չըգային սուտ Մովսէսներ հայ հոգևորականներից և թովչական ճարտարութեամբ չըխաբէին խեղճ ժողովրդին, թէ Աւետեաց երկիր են տանում նորան, մոռանալով միանգամայն, որ Մովսէս օտարութիւնից հայրենիք տարաւ և ոչ հայրենիքից օտարութիւն: Վրացիք սուտ Մովսէսներ չունեցան և չէին կարող ունենալ, ըստ որում դոցա բարձրաստիճան հոգևորականները, ինչպէս ասացինք, ստրկատէրեր էին: Վերջապէս Վրաստանը մի անկախ տէրութիւն էր, մի՞թէ թոյլ կըտար ազատ գաղթականութիւն, բայց իրանց տէրերին սպանողներ և փախչողներ շատ էին լինում:

Ինչո՞ւ չէր ոտքի կանգնում ժողովուրդը, և ինչո՞ւ էր լուռ ու մունջ տանում այդ ստրկական լուծը:

Յիրաւի, կարծես դա մի շատ բնական բան կլինէր: Բայց այդ կարելի է մի զարգացած ժողովրդեան համար ասել, իսկ մեր գիւղացիք շատ հնազանդ էին իրանց ճակատագրին: Նոքա աչքերը բացել այդ վիճակն էին տեսել, և կարծում էին, թէ աշխարհիս օրէնքն ամենայն տեղ այդպէս է. և ի՞նչ տեղիք կար ուրիշ կերպ մտածելու: Ուսում չըկար, ճանապարհորդութիւն չըկար, ոչինչ յարաբերութիւն լուսաւորեալ երկիրների հետ: Մանկութիւնից լսում էին միայն հայհոյանք, նախատինք, ծեծ, բռնութիւն, որին արդէն տրամադիր էին ժառանգականապէս և ամենայն սիրով ու յօժարութեամբ տանում էին: Ուրեմն ի՞նչ պատճառ պէտք է բերէին ոտքի կանգնելով: Եթէ սորա վերայ աւելացնենք և այն հանգամանքը, որ ամեն պարոն իւր գիւղի մէջն էր կենում, գիշեր ցերեկ հսկում էր նոցա վերայ, իւր ձեռքի տակ ունէր ճարպիկ լրտեսներ, որոնց

միջնորդութեամբ իմանում էր մինչև անգամ, թէ ով ինչ երազ է տեսել, էլ ի՞նչ դաւաճանութիւն, ի՞նչ ապստամբութիւն կարող էր յառաջ գալ....

Գ.

Վերջապէս վրաց թագաւորը ներքին թշուառութիւնից և արտաքին թշնամիների ասպատակութիւններից նեղն գալով՝ իւր երկիրը ձգեց հզօր Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Ռուսաստանը ներկայ դարուս սկզբին իւր գիրկն առաւ Վրաստանը և պաշտպանեց նորան արտաքին թշնամիներից, բայց սորկութիւնը չվերջացրեց, ըստ որում նոյն իսկ Ռուսաստանի մէջ էլ մի և նոյն վիճակի մէջ էր ժողովուրդը: Դորա հակառակ հրաման ելաւ, թէ ով կալուածատէր է կամ սորկատէր և այդ մասին գրաւոր ապացոյց ունի, իւր թղթերն առաջարկէ ի հաստատութիւն: Այդ այն ժամանակն էր, երբ նորանոր չլսուած ազգանուններ դուրս եկան նոյն իսկ Հայերից, և խօսվում էր ժողովրդի մէջ, թէ շատ փողատէր պարոններ ազնուականների կարգն անցան, որով ազնուականների թիւը աւելի շատացաւ....

Պէտք է գիտենալ, որ մեզանում սեփական կալուած գիւղերում միայն ազնուականը կարող է ունենալ, իսկ ազնուական դառնալն այդ ժամանակ շատ հեշտացաւ. կարժէր մի որ և իցէ ազնուականի մի գումար տալ և նորա ազգակիցը համարուիլ: Ազնուականութիւն ձեռք բերելուց յետոյ, շատ հեշտ էր և կալուածք ձեռք բերելը: Օրէնք կար, որ ինչ ազնուական տասը տարի մի տեղից տասանորդ լինի առած, նոյն տեղը կարող է իրան մնալ, իսկ տասանորդ առնելը շատ դիւրին էր: Գիւղացիք մօղրով անուանեալ մի կառավարիչ ունէին, որ Մօլօխի պաշտօն էր կատարում և ժողովրդին պանական երկիւղի տակ պահում: Ահա այդ մօղրօվները, որոնց ոչ ոք չէր կարող յիշել առանց սոսկալու, այն մօղրօվները, որոնք բրածեծի տակ չորցնում էին ժողովրդին, եթէ մի հրաման գրէին մի գիւղի վերայ, թէ դուք այսուհետև այս ինչ մարդու ճորտն էք, գիւղացիք լուռ ու մունջ կը հնազանդէին նոցա հրամանին, ուր մնաց թէ մի չուալ ցորեն տալ մի ինքնակոչ ազնուականի, որպէս ողորմութիւն, օգնութիւն կամ մինչև անգամ պարտաւորութիւն, չիմանալով, որ այդ քիչը յետոյ պիտի շատանայ, և թէ այդ մարդը դորանով յետոյ պէտք է խլէ խեղճ գիւղացիների ձեռքից նոցա հողը: Եւ յիրաւի, քանի մի տարուց յետոյ, մէկ էլ տեսնես ահա մի

երկրաչափ եկաւ և գիւղացոց դարերով անվէճ և ազատ վայելած հողը չափեց և նոր կալուածատիրոջը պահ տուաւ, օրէնքում յիշուած բոլոր պայմանները կատարելով հանդերձ, ի հարկէ բոլորը սուտ, բոլորը կեղծ և շինծու, բայց ո՞վ է խօսողը և ապացուցանողը: Խեղճ գիւղացին լեզու չգիտէ, օրէնք չգիտէ. ո՞ւմ դիմէ, ի՞նչ անէ, կամ ո՞վ է նորա բերնին մտիկ տալիս: Ոչ ոք չի զարմանալ սորա վերայ, եթէ ի նկատի ունենայ, որ այդ ժամանակ դատաստանական վերանորոգութիւններ եղած չէր, մարմնական պատիժը վերացուած չէր, բրածեծը հրաշքներ էր գործում: Բացի սորանից՝ երկրի բոլոր կառավարիչները ազնուականներն էին, բոլորեքեանք միմեանց օգնում, միմեանց պաշտպանում էին, ոչ մէկը միւսին պարտական չէր մնում: Պատահում էր, որ այդ մարդկանց մի քանիսը ազգակից էլ էին լինում, մէկի դէմ պէտք էր միւսին բողոքուէր, մինչ դեռ բոլորի խօսքը մէկ էր և ամենքն էլ բաժին ունէին յափշտակուած կալուածից:

Այսպէս ահա Թիֆլիսի շրջակայ գիւղերի հողերը համարեա բոլորն էլ Թաւադական են: Այդ հողերը երկու կերպով են տիրապետուած, կամ որ վրաց Թագաւորներն են ընծայել կամ վաճառել, բայց ոչ այն չափով, ինչ չափով որ նոքա են այժմ տիրապետում, և կամ որ յետոյ են ձեռք բերուել կողմնակի հնարներով, ապօրինի միջոցներով: Այժմ գիւղացին հողի բերքը կիսում է կալուածատիրոջ հետ և կամ կապալով վերցնում աւելի թանգ գնով. երկոքին դէպքումն ևս հողը չի մշակվում, չի բարւոքվում, ըստ որում այն հողը, որ այս տարի կիրակոսի ձեռին է, վաղը մարկոսի ձեռքն է անցնում, և ո՞վ կը ցանկանայ ուրիշի հողը մշակել: Իսկ կալուածատէրն այդ մասին շատ հոգ չի անում, նա իւր բոլոր ջանքը յափշտակելու վերայ է գործ դնում և կարծես մի ներքին բնազդում նորան ասում է՝ այսօր է թէ վաղը՝ դու պիտի զրկուիս քո ունեցածիցդ, ըստ որում անիրաւաբար ես ձեռք բերել: Եւ յիրաւի, ով կը կարծէր, թէ ստրուկները երբ և իցէ պիտի ազատուին, սակայն ազատուեցան: 1858 Թուականին ներկայ ազատարար կայսրը ազատութիւն շնորհեց Ռուսաստանի ստրուկներին, իսկ 1864-ին Վրաստանի: Սակայն ժողովուրդը դարձեալ մնաց իւր նախկին կալուածատէրերի ազդեցութեան տակ և նախկին տգիտութեան և թշուառութեան մէջ, որում այսօր և այժմ տեսնում ենք և պատճառը չիմանալով յանդիմանում նորան....

Դ.

Բանն այսպէս լինելուց յետոյ, ինչպէս պատմեցինք շատ համառօտ և հարևանցի կերպով, էլ ինչ զարմանք է, որ Վրաստանն այսօր գեղեցիկ դրախտի նմանելու փոխանակ, փուշ և տատասկ է բուսուցանում: Մեր գիւղացիք ոչ միայն բնութեան առատ պարգևներից են զրկուած, ոչ միայն կալուածատէրերի քմահաճ հարստահարութեանն են ենթարկուած, այլև աւազակների անընդհատ կողոպտութեանը: Կարծես քիչ է կարկուտն ու մարախը, թրթուրն ու մուկը, տօթն ու ցուրտը, գայլն ու գազանը, հողի նուազութիւնը, ջրի պակասութիւնը, տաւարի ցաւը — կարծես քիչ է այս ամենը, սոցա վերայ աւելանում են և աւազակները: Եւ ինչպէս վստահ, ինչպէս համարձակ, օրը ցերեկով վրայ են տալիս տանում խեղճ գիւղացու միակ ջուխտ եզը, որով նա պահում է իւր ամբողջ գերդաստանը, միակ ձին, և յետին չքաւորութեան մէջ գցում նորան, ինչպէս կասեն, բոլորովին մէջքը կոտրում: Չըհաշուելով այն ամենը, ինչ որ բռնութեամբ և սպանութեամբ է խլվում, չըհաշուելով թաքուն և անդարձ կերպով գողացածները — նորերումս մի նոր տեսակ գողունի առուտուր էլ է բացուել, որ աւելի հեշտ և անվտանգ է գողերի համար: Ալին գողանում է գրիգորի ձին և մուստաֆին ուղարկում տիրոջը յայտնելու, թէ ինչ կըտաս, որ գնամ ձիդ բերեմ: Պայմանի մէջ համաձայնում են և գրիգորը իւր սեփական ձին կրկին առնում է փողով, իսկական գնից մի քանի մանէթ պակասով: Գանգատել, մատնել չի կարող, ըստ որում դորանով իւր կեանքը վտանգի պիտի ենթարկի և ոչինչ էլ չը պիտի շահուի. փորձով տեսնում են, որ մարդասպանները արձակ համարձակ ման են գալիս և շարունակում իրանց եղեռնագործութիւնքը վրէժ առնելով իրանց մատնողից, նորա դէզերը կրակ տալով, ծառերը կտրատելով և մինչև անգամ եզան ու գոմշի ոտները ջղատելով:

Ահա մեր գիւղական կեանքի հերոսութիւնները, ահա այն նահապետական դրախտավայր տեղերը, ուր սրնգի քաղցր ձայնի տեղ վայ ու կոծ է լսվում, ուր սառնորակ աղբիւրների խոխոջալու փոխանակ մարդկային արիւն է հոսում, ուր մարդու կեանքը ապահով չէ նոյն իսկ իւր հարևանի կողմից, հին սիրոյ տեղ այժմ թագաւորում է ատելութիւն, նախանձ, չարակամութիւն. վասն զի գլուխ պահելը պատուաւոր կերպով դժուարացել է, պէտք է իրար ձեռ-

քից յափշտակեն մի կտոր ամենօրեայ հացը, որ արեան գնով է ձեռք բերվում. . . . .

Այսպիսի մի անապահով տեղ, կարծեմ որ, էլ խօսք չի կարող լինիլ անասնապահութեան մասին, իսկ այգեգործութիւն Թաւաղի հողում՝ աւելի ձեռնտու չէ, մանաւանդ հիմա, երբ գիւղացին իւր խաղողի բոլոր արտաբերութիւնից օգուտ քաղելու իրաւունք չունի: Իսկ կենսական պահանջները տարէցտարի աւելանում են, հարկերի տեսակներն առատանում, ամեն մարդ լաւ ուտել ու լաւ հագնել է ուզում, շատ գիւղերում սամօվարը մուտ է գործել, ծառայողների ընտանիքը ամարանոց է ուզում գնալ, մինչև անգամ տաք ջրերը... չը հաշուելով փաստաբանների ստացածը, որ բոլորովին ի զուր է կորչում....

Ե.

Սակայն կան գիւղեր, որոնք մի փոքրիկ ուսումնարան պահելու չափ կարողութիւն կունենան: Բայց ինչպէս է նայում գիւղացին ուսման վերայ: Ուսումը միջոց է տալիս մարդուն աւելի երջանիկ ապրելու, ասում է նա, բայց որովհետև դարաւոր փաստերից այն եզրակացութեանն է եկել, որ գիւղացին երբէք չի կարող երջանիկ ապրել, և չի տեսել մի որքան և իցէ ուսում առած մարդ, որ կարողանար գէթ գրագիր լինիլ, և գիւղումը ապրէր, երկրագործութեան պարապէր, ուստի նա ասում է՝ իմ որդիս որ ուսում ունենայ, չինովնիկ հօ չի կարող դառնալ, ըստ որում ոչ տէրտէրի տղայ է և ոչ ազնուականի, բայց գոնէ կը կարողանայ իւր առածն ու տուածը գրել, կերթայ քաղաք և մի վաճառականի մօտ կըմտնի, ուր և երջանիկ կապրի....

Պէտք է գիտենալ, որ գիւղացու համար աշխատող ձեռքը թանգ արժէ: Ով որ արու զաւակներով հարուստ է, նա յոյս ունի և նիւթապէս ապահովվելու իրան, բայց կան շատ գիւղեր, ուր աշխատող ձեռքերը աշխատութիւն չեն գտնում. իրանց ունեցած հողը այնքան սակաւ է, որի մշակութեան համար բաւական է և մի հոգին. ոչխար, տաւար, խոզ պահելու տեղ չունին, չունին և այգետեղեր, այդ պատճառով ահա աշխատող ձեռքերը գնում են քաղաք մշակութեան, ուր ոչ միայն ձեռքով, այլև մէջքով են աշխատում, և աշխատում են ոչ միայն փողի, այլև հացի համար: Գիւղացին բեռնակրութիւն է անում, որ հաց գնէ իւր տան հա-

մար: Գիւղացու հաց գնելը, քանի որ ինքը երկրագործ է ամենաստակալի դրութիւն է, եթէ ինկատի ունենանք, որ դոքա համարեա ցամաք հացով են ապրում և շատ են ուտում: Ի դէպ է այստեղ ակնարկել, որ մեր Թիֆլիսի գրողներից ոմանք մշակ բառով մշեցի են հասկանում և կարծում են, թէ Թիֆլիսի բեռնակիրները մշեցիք են: Ինչպիսի ցնորք . . . Թիֆլիսի մէջ անհնարին է գտնել գէթ մի հատ բեռնակիր մշեցի: Թիֆլիսի բեռնակիր հայերը Հին-Նախիջևանի շըրջակայ գիւղերիցն են, որոնք խաների կալուածներում բնակելով՝ ապրելու չափ արդիւնք չեն հանում իրանց տարեկան վաստակից, մնացած բեռնակիրները վրացիք են, որոնք հայ գիւղացիներից տասնապապատիկ թշուառութեան մէջ են գտնվում և եթէ դոքա չափազանց սակաւապէտ չըլինէին, վաղուց արդէն անհետացած կը լինէին աշխարհքի երեսից: Իսկ Մշեցիք, որոնք ի հարկէ հացի համար չեն գալիս աշխատելու, այլ միայն փողի, շինութեանց վերայ են աշխատում, յանձն չառնելով այդ գործի մէջ ևս դժուար մասը, այն է նաւքաշութիւնը, որ պարսկահպատակ պարսիկներն են կատարում:

Այսպէս ահա գիւղացին գիւղումը գործ չունենալով, գալիս է քաղաք, բայց այդպիսիների թիւը խիստ շատ է, իսկ քաղաքի գործը շատ քիչ, այդ պատճառով էլ համարեա ոչինչ չեն վաստակում, և ինչ որ վաստակում են, այն էլ իրանց սնունդից կըտրելով միայն: Ուրիշ բան կը լինէր, եթէ Թիֆլիսումը լինէին բազմաթիւ գործարաններ: Այդ հանգամանքը թէև խախուտ և երերուն միջոց է, բայց այսու ամենայնիւ մի տեսակ մրցում կը յառաջացնէր հողատիրոջ և գործարանատիրոջ մէջ, որով կը բարձրանար աշխատաւորի վարձը: Բայց ամենից լաւը և հիմնաւորը այն է, որ աւատականութիւն չըլինի և հողը պատկանի հողագործ դասին, ինչպէս պատկանում է գերմանացի գաղթականներին:

Թիֆլիսի մօտակայքում գտնուող գերմանական գիւղերից երևելին է Ռատէվանը (Եկատէրինէնֆէլդ): Ռատէվան մտնողը կարծում է, թէ մի փոքրիկ, բայց խիստ սիրուն և գեղեցիկ քաղաքի մէջ մտաւ. տները հոյակապ, երկյարկ, եռայարկ, փողոցները լայն, մաքուր և այլն: Այդ գիւղը մի կատարեալ ովազիս է իւր շուրջը եղած անապատական գիւղերի մէջ: Ամեն դորան այցելողը առատ նախատինք է թափում հայ ու վրացի գիւղացիների վերայ, թէ ինչո՞ւ չեն աշխատում նմանիլ նոցա, մոռանալով, որ եթէ Հայաստանի քրդերին անգամ նոյն դրութեան մէջ դնես, որում այդ գերմանա-

ցիքն են եղել և են, դոցանից գերազանց կգտնուէին: Բացատրենք մեր ակնարկութիւնը: Այդ գերմանացիներին տրուած էր այլևայլ արտօնութիւններ և առանձնաշնորհութիւններ, ի թիւս որոց և ինքնավարութեան իրաւունք: Տեղական ոստիկանութիւնը դոցա ներքին գործերում և դատերում իրաւունք չունէր խառնուելու: Դոքա ունէին նաև մի բարձրաստիճան խնամակալ և պաշտպան, որ միշտ հսկում էր դոցա բարեկեցութեան վերայ, և ամեն հարկաւոր դիպուածում դրամական օժանդակութիւն էր հայցում գանձարանից: Հասան խանի ժամանակ, երբ այդտեղի գիւղերը կողոպտուեցան, ի թիւս նոցա և դոյն իսկ Ռատէվանը, ոչ մի գիւղ կարեկցութեան չարժանացաւ, բայց Ռատէվանի վերայ փողի կարկուտ թափեցին, որով և միջոց տուին կրկին շտկուելու: Առատ ջրի վերայ, թագաւորական հողում, բոլորովին ինքնակախ, և ազատ բազմատեսակ հարկերից, բարոյապէս ու նիւթապէս օգնողներ և յորդորողներ ունենալով, դոքա տարէցտարի ընդարձակեցին իրանց հողերն ու այգիները: Դոքա նոր որ եկան, հողագործութեան արհեստը մերոնց չափ չգիտէին, կալ կասելու սովորութիւն չունէին, սերմ պատրաստելուց միանգամայն անտեղեակ էին, և դեռ մինչև այսօր էլ սերմացուն մեր գիւղացիներից են առնում, իրանք մի բարձր խելքի տէր չեն, չունին հայ գիւղացու ոչ սրամտութիւնը, ոչ ճարպիկութիւնն ու քաջութիւնը, բայց ունին գեղեցիկ կարգ ու կանոն, պատուական սովորութիւններ, որոնք մի տեսակ ընդելմունք են դարձել դոցա համար: Դոցա մէջ ուսումը պարտադիր է, Լութէրի օրէնքով, բայց առած ուսումները շատ չնչին բան է. փոքր ինչ կարդալ-գրել են սովորում ամենահին մեթոդով, փոքր ինչ հաշուել և մի քանի եկեղեցական երգեր ու աղօթքներ, այդ էլ մի քանի տարուց յետոյ բոլորովին մոռանում են: Բուն գերմանական լեզուն, գրականութիւնից օգուտ քաղելու չափ, չեն սովորում, (իրանց լեզուն շվաբերէն է) գոնէ երկրագործութեան սկզբունք չեն ստանում ուսումնարանում: Բայց խելացի այցելուք միշտ անպակաս են դոցա միջից, իրանց քահանան միշտ արտասահմանից է գալիս, որ դոցա շատ բան է սովորեցնում, այսինքն, պատուիրում, քարոզում, առաջնորդում, ինչպէս նաև իրանց բժիշկը: Այսպիսի հանգամանքներում ինչ գիւղացի պէտք է լինի, որ լաւ չլինի: Մեր Նոր-Նախիջևանցիք իրանց գիւղերով ինչ պակաս էին արտօնութեան շնորհիւ, ինչո՞ւ ենք ուրեմն զարմանում Ռատէվանցոց վերայ, մինչ դեռ Նախիջևանցիք տասնապատիկ բարձր են դոցանից: Ո՞ւմ տաս

արտօնութիւններ, ո՞ւմ տաս բարեկեցութեան ամեն միջոցները, և նա չըլլանայ: Մինչ դեռ մի մեծանուն գեներալ գալիս էր Ռատէվան և հօր պէս նոցա խրատում, յորդորում, խրախուսում և կանոններ տալիս, որ հասարակական շտեմարան և գանձարան ունենան, միջնորդում էր, բարեխօսում կառավարութեան առաջ և նոցա կարօտութեանց առաջքն առնում, այդ միևնոյն ժամանակ Ռատէվանի մօտակայ գիւղերում կատարվում էին դժոխային եղեռնագործութիւններ, որոնց մէջ ներգործող անձինքն էին կամ կալուածատէրը իւր ծառաներով և կամ մօղըօվը իւր եսաուլներով, որոնք մի մի կնուտ ձեռքներին, աչք ու երես չը հարցնելով մտրակում էին խեղճ գիւղացիներին և վայ ու կոծ բարձրացնում ամբողջ գիւղի մէջ: Եւ ինչո՞ւ համար, ոչինչ, իրաւունք ցոյց տալու համար, հէնց էնպէս, զուարճութեան ու քէֆի համար: Էլ ի՞նչ զարմանք է ուրեմն, որ մեր գիւղացիք մնան հնազարեան թշուառութեան մէջ, իսկ գերմանացիք ճոխանան: Աւելի ծիծաղելին այն է, որ շատերն ասում են, թէ այդ գերմանացիք նորա համար են այդ տեղ բնակեցրած, որ դոցա հետևէին և միւս գիւղերը: Այդ միևնոյն է, եթէ ասենք, թէ մի մեծագումար դրամատէր եթէ մի շերմապահութեան գործարան բաց անէ մի որևիցէ գիւղում, բոլոր գիւղացիք նորան հետևելով մի մի նոյնպիսի գործարան բաց կանեն, առանց նորա դրամագլուխն ունենալու....

Ջ.

Մինչ դեռ Մօղըօվի հրամանով գիւղացիք բազմատեսակ հարկեր էին տալիս, որոնք անուանվում էին մ օ ր ի գ ե ա (որ չըգիտեմ ինչ ասել է) չափար փուլի, եօլ փուլի, մախտա, բացի սոցանից, կօռ, բէգառ, քանի մի սայլ փայտ, ես և իւրաքանչիւր գիւղ իւր բացառական բերքերից պիտի բաժին հասցնէր իւր մօղըօվին, օրինակ մի տեղից գինի, միւս տեղից սպիտակ ալիւր, մի ուրիշ տեղից սիսեռ, լոբի, պանիր, ամեն տեղից մեղրահացեր, հաւեր, գառներ—այլև, եթէ մօղըօվը տեղական ազնուականներիցն էր և ունէր այգի, գիւղացիք պիտի անվարձ, իրանց եզ ու գոմշով փուշ ու բհիր կրէին, սրէին, ցցէին, չափարէին, իսկ արտերը հնձէին, կրէին, կասէին, տանէին քաղաք և այլն և այլն—մինչ դեռ, ասում եմ, գիւղացոց վերայ ծանրանում էր այս հարկերն ու չորքաշութիւնները, ցեցերի մի ուրիշ խումբ էլ էր երևան գալիս, որոնք ոչ թէ կնուտով

էին մտնում գիւղերը, այլ խաչով ու աւետարանով, երկայն ու սպիտակ մօրուքներով: Դոքա էին յաջորդները, բարեկարգիչ կամ գործակալ ասուած տէրտէրները և աբեղայ նուիրակները: Սոքա գնում էին գիւղերը ոչ թէ քարոզելու, մխիթարելու, ուղիղ ճանապարհ ցոյց տալու, վերջապէս օգնելու բարոյապէս, այլ դարձեալ փող, փող և էլի փող ժողովելու, անունը դնելով սրբադրամ, պտղի, հոգեբաժին, լուսագին, պսակդրամ, և գին մաշտոցի, ճաշոցի, արարատի: Հաւաքում էին այդ փողերը և ատելութեան ու զզուանքի հետք թողելով, անցնում գնում:

Սոցա թւումը չեն նուիրակները: Դոքա ողորմութիւն են հաւաքում դերվիշի պէս, բայց բոլորովին այլ մէտօդով: Դոքա օգուտ քաղելով ժողովրդի նախապաշարմունքից, նախ և առաջ մի թովչական քարոզով բարձրացնում են վարդապետի անէծքի հզօր ազդեցութիւնը և անմիջապէս կատարումը, ասելով, որ ամեն մի գիւղ, եթէ լաւ չընդունի վարդապետին, նա էլ այնպէս կը կործանուի, ինչպէս կործանուեցաւ Անին մի վարդապետի անէծքով, և ուրիշ չեղած հրաշքներ պատմելով կապում է գիւղացոց աչքերը և ընկնում դռնէդուռ ողորմութիւն հաւաքելու իբր թէ, և առնում է ամեն տեսակ բան, որից մի կօթ ցորեն, որից մի չանախ ալիւր, որից մի պղնձէ թաս, վերջապէս ոչ մի տուն նորան չի կարող ասել «Աստուած տայ», այլ Աստուծոյ տուածից ինչ որ ունի, պիտի տայ: Շատ ջերմեռանդ կանայք իրանց գլխների շարքերիցն են կտրում մի քանի դրամ և տալիս վարդապետին, որ ազատ մնան նորա անէծքից....

Այլ են էջմիածնի նուիրակները, որոնք յօգուտ շինութեանց են փող հաւաքում: Սոքա հաւաքում են գիւղի հասարակութիւնը և սկսում են սակարկութիւն անել շատ տեղ: Գիւղացիք աղաչում են, որ մի քիչ պակասեցնէ: Եթէ հայր սուրբը գթոտ մարդ է, փոքր ինչ զիջողութիւն է անում, իսկ եթէ ոչ՝ հաստատ է մնում իւր պահանջի մէջ և հաւատացած է, որ անշուշտ կառնէ, ըստ որում ո՞ր գիւղ կուզենայ վարդապետի անէծքի տակ ընկնիլ: Մի հայր սուրբ, որ այժմ սինօդի անդամ է և եպիսկոպոս (Մ. Ե. Ս.) անձամբ անձին պատմեց մեզ հետևեալ անցքը:

« Դարալագեազում մի գիւղ իմ պահանջածը չը տուաւ, և
« ես խռովելով գնացի մի ուրիշ գիւղ: Միւս օրը ժլատութիւն
« անող գիւղացիք յետ կանչեցին ինձ, աղաչեցին, թէ ինչ ուզում

«ես՝ ա՛ռ, միայն մեզ օրհնիր և այնպէս գնա՛։ Եւ սկսեցին պատ-
«մել, թէ ինչպէս իմ հեռանալուս պէս՝ իրանց նախիրը, տուն դառ-
«նալիս, մնացել էր ճահճի մէջ, որոնց հազիւ հազ ազատել էին։
«Գիւղացիք այդ բնական դէպքը իմ անբաւականութեանն էին վե-
«րագրել, բայց ես, ի հարկէ, չասացի, որ այդ տեսակ նա-
«խապաշարմունքներին մի՛ հաւատաք, ըստ որում ինձ ձեռնտու
«չէր» . . . .

ԳԻՒՂԱՑԻ

ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ

(Ճանապարհորդական տպաւորութիւն)

Այս ամառ բարեպատեհ միջոց ունեցայ—շնորհիւ իմ բարեկամներից մէկին—ճանապարհորդելու դէպի Լօռու գաւառը, որ հին ժամանակ Գուգարաց աշխարհ էր կոչվում։

Այս ճանապարհորդութեանս միջոցին ես այնքան տպաւորութիւններ ստացայ, որոնք գրի անցցնելու համար պէտք է մի թեթևագրիչ հեղինակի ձեռք և ընդունակութիւն ունենալ։ Արդարև, բաւական է Թիֆլիզից դուրս գալ, Կօդայով ուղևորուիլ դէպի Շուլավէր, Պրէգէտ, Աղքօրփի (Կարմնջագեղ), Պրիվօլնօյէ, Բայդար, Ուռուտ, Ջալալ-Օղլու, Վօրօնցօվկա, Նոր Ղարաքլիս, Շիշթափա, Զաթախ, Եկատէրինէնֆելդ—(Ռատէվան), Խաչին—բաւական է այսքանը տեսնել, իմանալու համար, որ տպաւորութեանց մեծ աղբիւր կգտնի ճանապարհորդը։ Շուլավէրը, Աղքօրփին, Բայդարը, Ուռուտը, Ջալալ-Օղլուն և Խաչինը Հայոց գիւղեր են. Պրէգէտը—Յունաց, Պրիվօլնօյէ--Ռուսաց, Վօրօնցօվկան—Մօլօկանների, Նոր Ղարաքլիսը և Շիշթափան— Հայ կաթոլիկաց, Եկատէրինէնֆէլդը—Գերմանացոց, Կօդան—Վրաց և Հայոց խառն։ Մենք չյիշեցինք Թուրքաց գիւղերը, որոնք ցրուած են բոլոր Բօրչալուի մէջ։ Ուրեմն այդ փոքր տեղում բնակւում են եօթը ազգութիւն, ութերորդն էլ Հայ կաթոլիկներ, որոնք, պէտք է խոստովանել ի պատիւ նոցա, իւրեանց չեն որոշում Հայերից, ասելով, թէ «ինչ Հայ Լուսաւորչական, ինչ Հայ կաթոլիկ—մէկ է. մէկ ազգ ենք, լեզուներս մէկ է, հաւատներս ջոկ»։

Այս փոքր տեղում այսքան ազգութիւններ են բնակւում, ամեն մինի կեանքի եղանակը, պարապմունքը և բոլոր աշխարհատեսութիւնը տարբերվում է միւսի կեանքից, պարապմունքից և աշխարհատեսութիւնից. բայց և այնպէս՝ կարծես միմեանց չեն նկատում, միմեանցից բան սովորելու ցանկութիւն չեն յայտնում, միով բանիւ միմեանցից խորշում են։

Մտէք, օրինակ, Աղքօրփի—տեղի դիրքը շատ զմայլելի է. բայց հողը, երկիրը այնքան փոքր է, որ խեղճ գիւղացին հազիւ օրական պարէնը կարողանում է հանել գետնից. ուստի նորա կենցաղավարութիւնը ողորմելի կթուի ամեն մի անցորդի համար։ Նոյն գետնի պակասութիւնը աչքի է ընկնում բոլոր Հայոց, Վրաց, Հայ Կաթոլիկաց և Թուրքաց գիւղերում, ոչ աւելի ունին նաև Յոյնք։ Չնայելով սորան, Հայ ժողովուրդը այն չէ, ինչ որ մենք սովոր ենք կարծելու նոցա մասին, տեսնելով Վրաստանի միջի Հայ գիւղերը։ Վրաստանի մէջ ապրող Հայը ողորմելի է ոչ պակաս և հազիւ թէ ոչ աւելի բուն Հայաստանի Հայից. որքան աւելի ճնշուած, բթացած է Վրաստանի Հայը Հայաստանի Հայից — այդ գիտէ միայն ականատեսը։ Մենք մեր ճանապարհորդութիւնից առաջ երևակայել անգամ չէինք կարող տեսնելու մի Հայ գիւղացի առողջ դատողութեամբ և ծանրութեամբ խորհող, երբէք չէինք կարող հաւատալ, թէ Հայ գիւղացին հրացան կամ սուր ունի կամ կարող է բանեցնել նորան մեծ քաջութեամբ (օրինակ՝ Աղքօրփեցիք ընդդէմ Թուրք փախստական աւազակների) մենք չգիտէինք, որ Հայ գիւղացին գիտէ ձի նստել և մեծ քաջասրտութեամբ պատերազմել ձիու վերայ հեծած (օրինակ Շուլավէրցիք) իւրեանց անդադար անհանգստացնող աւազակների դէմ. մենք շատ բան չգիտէինք—այժմ մենք մեր աչքով տեսանք այդ ամենը և Հայ գիւղացին մեր հայեացքում խիստ բարձրացաւ և իւրեան քաջ նախնեաց եթէ ոչ իսկական պատկերը յիշեցրեց մեզ, որ անմահ երանելի պատմագիրք աւանդել են – գոնեա մենք տեսանք, որ Հայի գլխում կայ խելք, կայ հասկացողութիւն, Հայի սրտում կայ քաջութիւն։ Կայ այս բոլորը, բայց չկայ հող, ուստի չկայ հարստութիւն։ Հայը քաջ է, բայց աղքատ. Հայը խելօք է, բայց անձեռնհաս կատարելագործութեան. Հայը հասկանում է իւր բարիքը, և չունի միջոց դիմելու նորան. և այլն։

Հայաստանի Հայը, այն գլուխը ծռած, անհասկացող և իւր բարիքը չճանաչող Վրաստանի Հայը չէ. ոչ, Հայաստանի Հայը—Գուգարաց Աշխարհի Հայը—Աղքօրփի գիւղի Հայը մի խիստ համակրական տիպ է և արժանի է, որ մի օր իւր բոլոր պարզ յատկութիւններով մի պատուական և փորձառու գրչի շնորհիւ, հանրածանօթ դառնայ ամեն մի Հայի։

Եւ կարող է արդեօք այլապէս լինել—երբ նոյն իսկ բնութիւնը Աղքօրփին զարդարել է զմայլելի անտառով և սառնորակ աղբիւրներով։ Այդ անտառների միջից բարձրանում է Լալվար սարը, որ ըստ կարծեաց գիւղացւոց, ամենաբարձր սարն է աշխարհիս երեսին։ «Զարմանալի սար է էս Լալվարը, ասում էր մեր ուղեցոյց գիւղացի Վարդան պատանեակը, ուր երթաս—կերևայ. սրանից բանձր սար չկայ։» Կարող է այլապէս լինել, երբ ամեն կիւրակէ և տօն օրեր բոլոր գիւղը, երիտասարդք և աղջկունք, զբօսնելու են գնում իւրեանց աննման անտառը և տերևախիտ ծառերի մէջ, զովացնում են իւրեանց ծարաւը Գերեզմանաքարի և Գիզաքարի անմահական աղբիւրների ջրով.... .

Երևակայենք, որ Աղքօրփին ունի շատ հող, որ լիովին վարձատրէր

խեղճ գիւղացու աշխատանքը, և մենք կունենանք մի գիւղ, մի Հայի գիւղ, որ ոչնչով չէր զանազանուիլ ամենաբարեկարգ եւրոպական գիւղից։ Բայց չկայ հող—չի լինիլ և բարեկարգութիւն։

Հայ կաթոլիկաց գիւղերում հարցափորձ անելու ժամանակ գիւղացոց՝ նոցա տնտեսական դրութեան մասին, մի գիւղացի, պատմելով թէ հողի մեծ պակասութիւն են զգում, ունեցածն էլ իւրեանցը չէ, իշխ. Օրբելիանովինն է, որին գետնահարկ են տալիս, աւելացրեց սրտաճմլիկ ձայնով. «աղա, թէ կհարցնես անոր համար, որ մեր ցաւերին դարման էնես, հա—մենք ալ քեզի օխնող կլլինք, թէ չէ, նահախ տեղը դարդերս բաց կէնէս նէ, գրողի մը տեղ չեմ դնի խօսքերդ. աղպէմնէր չատ եկեր գնացեր են, հարցուցեր են ու բօշ անցեր է։ Աղա, հոգուդ ղուրբան, ագեար բան մը կրնաս էնել նէ, էրա՛—մենք ալ մարդու սրայ անցնինք....

Ընթերցողն ունի իրաւունք ենթադրելու, որ այս գիւղը կունենայ գոնէ մի ազգային ուսումնարան։ Կըսխալուի։ Թեմական տեսուչը յընթացս իւր երկամեայ պաշտօնավարութեան, չի բարեհաճել այցելելու Աղքօրփի, և սա մնացել է առանց ուսումնարանի։ Միայն մեր գնալուց մի քանի շաբաթ առաջ գաւառապետը հրամանագրել էր, որ ուսումնարանի համար մի շինութիւն կառուցանեն։ Այս իրողութիւնը խիստ անախորժ տպաւորութիւն գործեց մեզ վերայ, մանաւանդ երբ այս հանգամանքը պատմող գիւղացի երիտասարդ Յակոբը աւելացրեց, որ Աղքօրփու Տէր Վարդան ծերունի քահանան ինքը հարուստ է, ունի 60 հազար ռուբլի փող (որ գուցէ չափազանցութիւն է) և միանգամայն անհոգ է։ «Իրա տղէն Թիֆլիզ Հայի ուսումնարան է դրկել, ամսէն 7 մանէթ է տալիս, մեզ համար փիքր չի անում—նրանն էն է գեղըցու փողերը դիզէ, գեղըցոնց նեղացնէ, անպսակ թողնէ, իրա ուզածը չտալու համար—ուրիշ դարդ չունի»։

Գիւղացին հոգևորականի վերայ այսպէս է խօսում, և ինչպէս չխօսի, քանի որ քահանան փոխանակ արթուն հովիւ լինելու իւր հօտին, մտածում է իւր հազարների վերայ և դեռևս 60 հազարից յետոյ ևս հարստահարում է առանց նորան էլ զրկուած գիւղացուն։ Քահանան գիտէ ուսման կարևորութիւնը, որ ուղարկում է իւր որդուն Թիֆլիզ, ինչու չպէտք է հոգայ նաև իւրեան յանձնեալ հօտի ուսման կարիքը և մի փոքրիկ դպրոց չբանայ նոցա համար։ Այն գիւղը կամ գիւղերը, որտեղից նա դիզել է իւր հազարները, մեծ յօժարութեամբ կհոգային նաև իւրեանց ուսումնարանների ծախքերը, չնայելով իւրեանց ողորմելի տնտեսական դրութեանը։

Ասողին լռող պէտք է. ինչ հոգս, ինչ ցաւ. Թեմական տեսուչը թող չայցելէ իւրեան յանձնած վիճակը, տեղի քահանան թող մտածէ յագեցնելու իւր անյագ գրպանը, գիւղացին, խեղճ գիւղացին թող մնայ իւր տգիտութեան մէջ. ինչ փոյթ։ Երանի՜ մեզ....

Նոյն դրութեան մէջ են և շատ գիւղեր. նոյն անհոգութիւնը մենք տեսանք Թեմական տեսչի կողմից և այլ գիւղերում։ Բայղարցիք առաջին անգամ լսեցին «Թեմական տեսուչ» տիտղոսը, Ուռուտցիք նոյնպէս, Ջալալ

Օղլցիք—նոյնպէս, Խաչինեցիք—նոյնպէս... Հեռու ծուր ենք գնում։ Թեմական տեսուչը եղել է Շուլավէր. ճանապարհին անցել է, ի հարկէ, Կօղայով և Կօղան չունի ուսումնարան։ Այժմ վրաց ազգի կալուածատէրերից մինը հիմք է դցել ուսումնարանի շինութեան, ուր պէտք է ուսանին անխտիր՝ Հայեր և Վրացիք՞ և այս՝ Թիֆլիզից 26 վերստ հեռու։ Ամբողջ գիւղում հայախօսութիւն չկայ, այժմ ամեն բան կարգին կերթայ։

Շուլավէրն ունի ուսումնարան, որ բացուել է ութը տարի առաջ շնորհիւ Թիֆլիզաբնակ պ. Նաղիրեանի, և ցայսօր ստանում է նորանից օժանդակութիւն։

Ուռուտն ունի ուսումնարան, Ջալալ-Օղլին ունի թէ տղայոց և թէ օրիորդաց (մասնաւոր) ուսումնարաններ։ Բայց և ոչ մինը նոցանից իւր գոյութեամբ պարտական չէ ոչ թեմական վերատեսչին, ոչ տեղական քահանաներին, այլ նոյն իսկ գեղացոց, կամ մասնաւոր անձանց աշխատութեամբ են բացուել։ Ուռուտի ուսումնարանի ուսուցիչ պ. Մկրտիչ Դանիէլեանցը (Շորագեալցի) ստանում է տարեկան 100 ռ., մի կոդ ցորեն և պանիր։ Սորանից աւելի չեն ստանում և մեր միւս ուսուցիչները։ Ջալալ-Օղլու տղայոց ուսումնարանում ուսուցիչ է պ. Յարութիւն Յարութիւնեանը։

Միայն Շուլավէրը կարող է մի փոքր աւելի վարձատրել ուսուցչին։

Մենք միայն ուսումնարանաց կողմից չենք զրկուած։ Ջալալ-Օղլուց մի քանի վերստ հեռու Մարց կոչուած մի տեղ կայ, որ ամենահարուստ անտառ ունի և ինչ էք կարծում, ումն է այդ գանձը։ Մեր հոգևոր իշխանութեան, որ միանգամայն անծանօթ լինելով այդ գանձին և չճանաչելով նորա գինը—կապալով է տուել տարեկան հազար կամ հազար հինգհարիւր ռուբլով, մինչդեռ այդ տեղը, ըստ ասութեան հասկացող մարդոց, տարեկան հազարներ կարող է տալ....

Եկեղեցիները բոլոր Հայ փոքրիկ գիւղերում անշէն են. միայն Շուլավէրում և Ջալալ-Օղլում կան քարաշէն, բայց դեռ չաւարտած եկեղեցիք, որոնց վրայ նշանաւոր գումար է ծախսուած։

Գիւղացոց շինութիւնների մասին աւելորդ է խօսել։ Հարուստ Շուլավէրն անգամ, որ 20 հազար մանէթ է ծախսել իւր եկեղեցու վրայ և պահում է մի քանի քահանաներ—չատ աղքատ բնակարանների մէջ է բնակում։ Միւս գիւղերը անշուշտ աւելի վատթար վիճակի մէջ պէտք է լինին և են։

Այս է ընդհանուր պատկերը մեր Հայ գիւղերի և նոցա բնակչաց։

Մտէք ռուսաց Պրիվօլնօէ գիւղը. դուք կտեսնէք բազմաթիւ շինութիւններ, գետնից բարձր և քարաշէն. լայն փողոցներ՝ թէև անմաքուր, մի քարաշէն փառաւոր—թէև քանդած եկեղեցի և մի անշէն տղայոց ուսումնարան (օրիորդաց ուսումնարան չկայ)։ Մտէք գիւղացու տունը, դուք իսկոյն կընկատէք, որ նա հարուստ է. ունի բազմաթիւ կաթնատու կենդանիներ, որոնք իւրեանց պարարտութեամբ անհամեմատ գերազանց են մեր գիւղացոց անասուններից։

Հարցրէք ռուս գիւղացուն, թէ ձմեռը որտեղ է պահում իւր անասունը, —բացօդեայ, կպատասխանէ ռուսը։ Միթէ չեն մրսիլ, զարմանքով կհարցասիրէք դուք, և կստանաք հետևեալ պատասխանը—Անասունը ցրտից կը մրսի, եթէ նորա կերակուրը քիչ է. բայց եթէ անխնայ ուտելիք տաք նորան և անդադար փոխէք նորա տակի խոտը, որ խոնաւութիւնը չներգործէ կենդանու վերայ, նա ամբողջ ձմեռը պառկած կորոճայ. քանի ցուրտը խիստ լինի, այնքան աւելի խոտ կուտէ և կպարարտանայ։

Յայտնեցէք Հայ գիւղացուն ռուսի այս գիւղատնտեսական վարդապետութիւնը—նա ժպտալով կպատասխանէ, որ ի հարկէ ռուսը կարող է այդ անել, բայց մենք չենք կարող. մենք անասունը գոմումն ենք պահում, որ քիչ ուտէ, որովհետև մենք հող չունինք, մեզ այդքան խոտ ով կտայ։ Տեսէք գիւղի չորս կողմը—որքան տեղ արօտատեղիք են և որքան խոտ են հնձում սոքա։ Մի օր այս հողերի մեծ մասը Աղքօրփեցոց ձեռքն էր, բայց երբ իշխան Վորոնցովի ժամանակ ռուս զինուորներին բնակեցրին այստեղ, մեր հողերի մեծ մասը անցաւ սոցա ձեռքը՝ մենք աղքատացանք, սոքա չէնացան։

Լսելով Հայի այս պատասխանը, դուք ստիպուած պէտքէ լռէք, հասկանալով, որ հողը ամեն ինչ կարող է անել գիւղացու համար. առանց հողի նա ոչինչ է։

Մտէք այժմ մոլոկանների գիւղը—Վորոնցովկան և կզարմանաք, տեսնելով մի կողմից հարուստ սրբատաշ քարերով շինութիւններ, միւս կողմից անասելի զարշահոտութիւն և անմաքրութիւն՝ թէ փողոցում և թէ տների բակերում։ Մոլոկանների պէս կեղտոտ, անմաքուր ժողովուրդ դժուար թէ մի ուրիշը լինի։ Բայց հարուստ են և լաւ հարուստ։

Մոլոկանները զետեղուած էին իշխան Օրբէլիանովի գետնի վերայ, որ յետոյ նոքա գնեցին։ Կառավարութիւնը շատ օգնեց սոցա—տուաւ 32 հազար ռուբլի 15 տարի ժամանակով անտոկոս և բացի դորանից՝ իշխան Օրբէլիանովից վերջին անգամ գնած հողի համար Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասու փոխարքան (ըստ ասութեան Մոլոկանների) նուիրեց իւր անձնական քսակից 5000 ռ.։ «Մեզ շատ են սիրում, թէ կառավարութիւնը և թէ նոյն իսկ փոխարքան», ասացին Մոլոկանները։

Սոքա ունին ուսումնարան, ուր ժողովրդական Ռուսաց ուսումնարանաց վերատեսչի կարգադրութեամբ պէտքէ նշանակուի մի ռուսազգի ուսուցիչ։ Այս առթիւ կամեցանք իմանալ նոցա կարծիքը, թէ միթէ չեն վախենում, որ ռուս ուսուցիչը շեղէ երեխայոց իւրեանց աղանդից, դարձնելով նոցա դէպի յունադաւան եկեղեցին։—Մոլոկաններից մի ծերունի ժպտալով պատասխանեց, որ վերաբերութեամբ կրօնական հայեացքի, նոքա միանգամայն կասկած չունին, թող ուսուցանէ ուսուցիչը ինչ և կամի. քանի շատ բան գիտենայ մարդս, այնքան լաւ. բայց և այնպէս շեղել մեզ ուղիղ ճանապարհից անկարելի է։ Կարծես ծերունին կամենում էր սորան յարակցել և այն, որ «գուցէ ինքը ուսուցիչը ծանօթանալով մեր դաւանու-

թեանը, չեղուի իւր եկեղեցու դաւանութիւնից—բայց մեր երեխայքը, երբէք—նոքա այդպէս չեն դաստիարակուած»։ Մեզ զարմացրեց այս համարձակ վստահութիւնը դէպի իւրեանց դաստիարակութիւնը։

Ասացինք հարուստ են Մօլօկանները և ի հարկէ հարուստ կլինին—քանի որ կառավարութեան օժանդակութիւնը անպակաս է նոցանից. հող շատ ունին սոքա։ Ասենք և այն, որ քաջ մարդիկ են Մօլօկանները և բաւականանանք այսքանով։

Վերջապէս հասանք գերմանական գիւղը՝ Եկատերինէնֆէլդ (Ռատէվան)։ փողոցները լայն և սալայատակ, քարեայ տներ, պատուական պարտէզներ, մի հոյակապ, սրբատաշ քարերով կառուցած եկեղեցի, մաքուր ուսումնարան, գեղեցիկ գիւղական վարչութեան ատեան և սորան կից հացի ամբարանոց։

Այս բոլորը ցոյց է տալիս, որ գիւղը հարուստ և հասկացող ժողովուրդ ունի—միով բանիւ գերմանական գիւղ է։

Մտնում ենք ուսումնարանը—մի մաքուր և մեծ սենեակ է ներկայանում մեր առաջև, աջ ու ձախ կողմում դասաւորած են վայելուչ ձևի նըստարաններ՝ աջ կողմում նստած են օրիորդներ, ձախ կողմում տղայք և կարդում են։ Պատի վերայ կախած է աշխարհագրական քարտէզ և սենեակի մէջ տեղում դրած է ուսուցչի ամբիոնը։

Ուսուցիչն ստանում է տարեկան 500 ռ., երկու այգի՝ մշակութեան համար և ամեն մի աշակերտից տարեկան մի փութ հաց։

Մտնում ենք միւս սենեակը—փոքր դասատունը— նոյն կարգը և նոյն ձևն ենք տեսնում, միայն ուսուցչի տեղ ուսուցչուհի, որ ստանում է կիսով չափ ռոճիկ։ Սա ուսուցչի ամուսինն է։ Հարցնում ենք ուսուցչի մասին, թէ որտեղացի է։ Պատասխանում են, որ յատուկ բերել են տուել Վիւրտէնբէրգից, որտեղից և իրանք են գաղթել։

Գիւղի տանուտէրից հարցափորձ անելով տեղեկանում ենք, որ Կովկասում եղած գերմանական բոլոր 7 գիւղերը ունին մի ընդհանուր փոխատու գանձարան, ուր ամեն մի տուն տարեկան մի ռուբլի է տալիս։ Իսկ Եկատէրինֆէլդը բացի իւր մասնակցութիւնից ընդհանուր գերմանական գանձարանին, ունի և մասնաւոր փոխատու գանձարան, ուր ամեն մի տուն ամսական մի ռուբլի է վճարում։

Գիւղն ունի կրամիտի գործարան, որ ընդհանուր սեփականութիւն է։

Գիւղի տանուտիրոջ առաջնորդութեամբ մտնում ենք փառաւոր եկեղեցին և հիացած ենք մնում մաքրութեան վերայ։ Եկեղեցու դռան բանալին ուսուցչի ձեռքին է, որովհետև սա և ժամակոչ է՝ զանգ է տալիս և երգեցիկ խմբի կառավարիչ, և երգէօնի վերայ ածող։ Այս բոլոր ծառայութեանց համար ստանում է տարեկան մի մասնաւոր ռոճիկ։ Ուսուցիչը նուագում է երգէօնի վերայ, եկեղեցին քաղցր արձագանք է տալիս սորան և այդ ներդաշնակութիւնը հակում է մարդուս աղօթելու....

Տանուտէրը ցոյց տուաւ մեզ գիւղական կառավարութեան ատեանը։

Մի մեծ սենեակ, որի աջ կողմից շինած է բեմ տանուտիրոջ, դատաւորների և քարտուղարի համար. ձախ կողմից դասաւորուած են նստարաններ ժողովրդեան համար։ Աջ կողմի պատի վերայ կախած են զանազան աշխարհահանդէսներից ստացած պատուաւոր վկայագրեր, իսկ ձախ կողմում երևում է մի քարտէզ։ Մօտենում ենք և մեր աչքերին չենք հաւատում—Եկատէրինէնֆէլդի պլանն է։

Այս վերջին հանգամանքը խոր մտածողութեանց է ենթարկում մեզ և յիշում ենք ակամայ ոչ միայն մեր գիւղերի ատեանները, այլ և քաղաքները, ի թիւս որոց և Թիֆլիզի, ուր այդպիսի բան չկայ և կարծես չի կարող լինել . . .

Ատենին կից սենեակը ամբարն է, որ լի է ցորենով։

Այս համառօտ նկարագիրը պարզ ցոյց է տալիս գերմանական գիւղի հարստութիւնն ու քաղաքակրթութիւնը։ Գերմանացին ամեն տեղ գերմանացի է։

Սոցա հարստութիւնը խաղողի այգիներից է, որոնցից տարին մօտ հարիւր հազար թունգի գինի է քամվում։

Խաչին գիւղը ևս ունի այգիներ, բայց տեղի սակաւութիւնը դարձեալ խեղճ Հայի ձեռքը կապում է և բոլոր արդիւնքը մտնում է Գերմանացոց ճարպիկ գրպանը։

Շուլավէրը նոյնպէս լաւ այգիներ ունի, որոնցից մեծ քանակութեամբ, մօտ 100 հազար թունգի, գինի է պատրաստվում. բայց ինչ օգուտ, որ ջուր չկայ և խեղճերն ստիպուած են իւրեանց բոլոր յոյսերը երկնքի վերայ դնել։ Միւս կողմից չմոռանանք և այն, որ Գերմանացիք 200 տանից պակաս են, իսկ Շուլավէրցիք մօտ 700 տուն են, այն ինչ երկուսն ևս պատրաստում են 100 ական հազար թունգի գինի։ Եթէ ջուր լինի, Շուլավէրը շատ առաջ կարող է գնալ։

Ջրի մասին հոգս քաշողներ եղել են, բայց դեռ ևս բոլորն իզուր է անցել։ Մեր թերուս և ագէտ ժողովրդոց մէջ այդպիսի բարերար առաջարկութիւններ իրագործուելու չեն դեռ ևս, այնինչ քաղաքակիրթ Գերմանացիք այդ կանէին, և անում են միշտ։

Ահա համառօտ նկարագիրը այն ազգութիւնների, որոնք մեր հին Գուգարաց աշխարհում բնակվում են։

Սորանից պարզ երևում է, որ հարուստ են նոքա, որոնք հող ունին, և այն, որ հող ունեցողները Հայերը չեն։ Տուէք Հային հող, և նա ունի ընդունակութիւն ոչ պակաս միւսներից յառաջ գնալու։

Հողի հարցը մշակութեան կարօտ է, և մենք կաշխատենք մի անգամ ևս վերադառնալ այդ հարցին և պատմական փաստերով ապացուցանել, որ Հայերը իւրեանց միամտութեան և կառավարիչների չահասիրութեան պատճառով զրկուել են իւրեանց սեփականութիւնից։

Ա. Ն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԼԱՎՕՆԱ—ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Այն պատերազմը, որ ներկայումս մղվում է Բալկանեան թերակղզում, սովորական պատերազմներից բարձր է ամենայն կողմից: Ամեն ինչ անբնական է այս կռվում, ամեն ինչ անհամեմատ է. և՛ երկու հակառակորդների զինական զօրութիւնները, և՛ նոցա միջոցները, և՛ կողմնակի նպաստները:

Մօտ մի տարի է, որ այս պատերազմն սկսուեցաւ ու փոփոխակի բաղդով շարունակուեցաւ մի բուռ Հրէսէքների կողմից, որոնք թեթև կերպով զինաւորուած էին: Այս սակաւաթիւ զօրականներին օգնութիւն եկան երկու փոքրիկ իշխանութիւններ, որոնց բնակիչները միասին առած՝ հազիւ երկու միլիոն հոգու են հասնում: Երկու իշխանութիւնները պատերազմ են հրատարակում այն պետութեան դէմ, որի երկիրները տարածվում են աշխարհի երեք մասներում՝ Եւրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում և իշխում է քառասուն և հինգ միլիոն բնակիչների վերայ:

Բացի սորանից, վերոյիշեալ երկու իշխանութիւնները ծովից հեռու են ընկած, նոցա երկիրները բաժանուած են Եւրոպայից մի մեծ տէրութեան սահմաններով, ուր մի նշմարելի հակակրութիւն է տիրապետում Սլավօնների դէմ, այն ինչ Թուրքիա ծովի մօտ է գտնվում և ոչ միայն բարոյական խրախոյսներ է ընդունում, այլ և նիւթական նպաստներ ստանում Անգլիայի և Աւստրո-Հունգարիայի կողմից: Արդարև Անգլիան և Աւստրո-Հունգարիան, գոնեա Հունգարիան, ակներև համակրում և օգնում են Թուրքերին. իսկ Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան առայժմ անտարբեր աչքով են նայում երկու հակառակորդների անհաւասար կռուի վերայ: Միայն Ռուսաստանն է Սլավօնների կողմը, բայց որքան էլ զօրաւոր լինի

նորա բնակիչների համակրութիւնը դէպի իրանց ցեղակիցների ու հաւատակիցների քաշած նեղութիւնները, այնուամենայնիւ կառավարութիւնը հարկադրուած է յարմարուիլ քաղաքական պահանջներին և զէնքի զօրութեամբ միջամուխ չլինել այս գործում:

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ մի ամբողջ ազգութիւն ոտքի է կանգնել,—այս ոչ թէ այլաբանական խօսք է, այլ բուն իրողութիւն: Բոլոր Սերբիացիք 17 տարեկանից մինչև 60 տարեկան հասակը իրանց իշխանի հրաւէրը լսելով՝ դիմեցին երկրի սահմանների վրայ: Դատարանները, ուսումնարանները, վարչական հիմնարկութիւնները, գործարանները թափուր մնացին: Ամբողջ Սերբիան մի բանակ է կազմում: Հազիւ թէ երբէք եղել է սորանից աւելի ազգային ու ժողովրդական պատերազմ, որի նպատակն է հայրենի սահմանները պաշտպանել և ցեղակից ու հաւատակից եղբայրներին ազատել մահմէտականների լծից:

Թէ արդեօք վերջ ի վերջոյ Սերբիացիք յաղթօ՞ղ կըհանդիսանան թէ կըյաղթուին—այդ յայտնի չէ. այսքան կարելի է առաջուց ասել, որ Թուրքերի իշխանութիւնը չի կարող առաջուայ դրութեան մէջ մնալ Բալկանեան թերակղզում: Կան իրեր, որ անկարող են նշանակեալ ձգտումների առաջն առնել: Ի զուր Պիէմոնտի կարլ Ալբերտ թագաւորը Նօվարրայում յաղթուեցաւ—Իտալիան այսօր ազատ է: Ի զուր Աւստրիան իւր երկդիմի քաղաքականութեամբ երկար ժամանակ ջլատեց հունգարական ազգի զօրութիւնները—Հունգարիան այսօր մի քաղաքական մարմին է կազմում: Նոյնը կըլինի մի օր և Սլաւօնների համար: Թուրքերի յաղթութիւնները անպտուղ կը մնան, իսկ Սլաւօններինը, քաղաքակրթութեան և յառաջադիմութեան պահանջներին աւելի համաձայն լինելով՝ անշուշտ իրանց պտուղները կըտան: Քրիստոնէական զօրքերի պարտութեամբ տակաւին չի վճռվում Սլաւօնների կատարեալ անկումը: Յոյները և Իտալացիք նոյնպէս յաղթուեցան սկզբում, բայց զանազան բարեյաջող հանգամանքներ նպաստեցին նոցա, այն է՝ պատմութեան օրէնքները, ժամանակի ոգին և մանաւանդ ազգայնութեան սկզբունքը, և անկարելի էր որ վերջ ի վերջոյ յաղթող չհանդիսանային:

Պատերազմական անցքերի նկարագրութեանն անցնելուց առաջ՝ աշխատենք ներկայացնել Սերբիայի պատմութեան համառօտ տեսութիւնը:

Սերբիացիք քրիստոնէութիւնն ընդունեցին IX դարու կիսից:

Այդ ժամանակները երկիրը եօթը գաւառի էր բաժանուած, որոնց վերայ իշխում էր մեծ Ժուպանը, Բիւզանդիայի կայսրների վասալը: XI դարու կիսին Սերբիան բիւզանդիական նահանգ դարձաւ. բայց մի քանի տարուց յետոյ Սերբիացիք քշեցին յունական կայսեր կուսակալին Ստեփան Բոգիսլավի առաջնորդութեամբ, որի որդին Միքայէլը թագաւորական տիտղոս ընդունեց: XII դարու կիսին հանդէս է գալիս Ստեփան Նեմանիչը, Նեմանիչների հարստութեան հիմնադիրը: Նորա յաջորդներից մէկի՝ Դուշանի օրով նուաճուեցան Մակեդոնիան, Ալբանիան, Թեսալիան, հիւսիսային Յունաստանը և Բուլղարիան, բայց արդէն Դուշանի յաջորդի՝ Ուրոշ Vի ժամանակ այդ նահանգները յետ առնուեցան: 1374ին Սերբիայում իշխում էր Լազար թագաւորը. սորա օրովը Սերբիան կորցրեց իւր անկախութիւնը Կօսօվի դժբաղդ պատերազմից յետոյ, որ տեղիք ունեցաւ 1389ին յուլիսի 13ին: Այնուհետև մինչև 1459 Սերբիան ընկաւ Թուրքերի իշխանութեան ներքոյ իբրև վասալական երկիր, իսկ յետոյ բոլորովին տաճկական նահանգ դարձաւ: Պասարովիցի խաղաղութիւնից յետոյ (1718) Սերբիայի հիւսիսային մասը Բելգրադ մայրաքաղաքով միացաւ Աւստրիայի հետ. բայց 1739ի Բելգրադի խաղաղութեամբ այդ քաղաքը կրկին Թուրքերին բաժին ընկաւ: Այդ միջոցին Թուրք փաշաները և ենիչերիները քարուքանդ արին Սերբիան: 1804ին Սերբիացիք ապստամբեցան Կարա-Գէորգիի առաջնորդութեամբ և անընդհատ կռուեցան Թուրքերի դէմ մինչև 1813 թիւը, երբ Կարա-Գէորգին ստիպուեցաւ ապաւինել Աւստրիայում: 1815ին Սերբիացիք կրկին ապստամբեցան Միլոշ-Օբրէնովիչի առաջնորդութեամբ. երկու տարուց յետոյ նա հրատարակուեցաւ ժառանգական իշխան, իսկ Ադրիանուպօլսի խաղաղութիւնից յետոյ (1830ին) Թուրքիան ճանաչեց Միլոշին իբրև Սերբիայի իշխան: 1839ին Միլոշը հրաժարուեցաւ աթոռից՝ իշխանութիւնը յանձնելով իւր Միլան որդուն, որի վաղահաս մահից յետոյ իշխանութիւնը անցաւ Միլոշի կրտսեր որդու Միքայէլի ձեռքը: 1842ին Միքայէլը գահընկեց եղաւ և նորա տեղը անցաւ Աղէքսանդր Կարա Գէորգիեվիչը, 1804ի ապստամբութեան առաջնորդի որդին: Ղրիմի պատերազմի ժամանակ Կարա-Գէորգիեվիչը չէզոքութիւն պահպանեց: Փարիզի դաշնադրութեան զօրութեամբ եւրոպական տէրութիւնները ապահովեցին Սերբիայի իրաւունքները: 1858ին Սկուպշինան (ազգային ներկայացուցիչների ժողովը) գահընկեց արաւ Կարա-Գօրգիեվիչին, և

ծերունի Միլօշը նորից հրաւիրուեցաւ կառավարութեան սանձը ձեռք առնելու: Միլօշին երկրորդ անգամ յաջորդեց Միքայէլ որդին, բայց այս անգամ էլ երկար իշխելու բաղդը չունեցաւ և իւր կեանքը աւարտեց մի եղերական մահով: Սորա օրով Սերբիացիք և Թուրքերը դիպան միմեանց, և Բելգրադը ռմբակոծուեցաւ 1862 ին. բայց 1867 ին Թուրքերը հեռացան բոլոր սերբիական բերդերից: Յաջորդ տարին Միքայէլ իշխանը Կարա-Գեօրգիևվիչների դրդմամբ սպանուեցաւ, և նորա Միլան եղբօրորդին հրատարակուեցաւ Սերբիայի իշխան. բայց որովհետև նա անչափահաս էր, խնամակալութիւն նշանակուեցաւ Բլասնավացի նախագահութեամբ:

1869-ին հրատարակուեցաւ նոր սահմանադրութիւնը, որ ապահովացնում էր մինիստրների պատասխանատուութիւնը, մամուլի ազատութիւնը, դատաւորների անկախութիւնը, համայնքների ինքնավարութիւնը. սակայն օրէնսդրական իշխանութիւնը պատկանում էր իշխանին և սկուպշինային:

Սերբիացոց վրդովմունքը և պատերազմական ձգտումները վաղուց արդէն անհանգիստ էին անում կառավարութեանը, բայց օտար տէրութիւնները իրանց խորհուրդներով զսպում էին Միլան իշխանի ցանկութիւնը՝ զէնքի զօրութեամբ միջամուխ լինելու ցեղակից ժողովրդների գործի մէջ: Սակայն հասարակական կարծիքը վերջապէս հարկադրեց կառավարութեանը պատերազմ հրատարակել Թուրքիային: Թուրքերի Բուլղարիայում կատարած եղեռնագործութիւններին ականատես լինելով՝ Սերբիայի և Մօնտէնէգրոյի կառավարութիւնները պարտաւորուեցան հնազանդել ժողովրդի կամքին և յայտնեցին, թէ այլևս չեն կարող տանել այն անիրաւութիւններին, որով Թուրքերը ոտնակոխ են անում մարդկային ամեն իրաւունքները:

Յունիսի 20-ին հրատարակուեցաւ իշխան Միլանի հրովարտակը, որի մէջ յիշվում էին Բօսնիայում կատարուած «սարսափելի կոտորածները» և գազանային անգթութիւնները, մահմէտականների կատաղի մոլեռանդութիւնը, «որ վերին աստիճանի խելագարութեան է հասել և որ առիթ է որոնում կարծես Թուրքիայի բոլոր քրիստոնեաններին կոտորելու», վերջապէս Բաշի-բօզուկների և Չէրքէզների վայրենի խմբերի յարձակումները Սերբիայի սահմանագլխում գտնուած հողերի վրայ: Թուելով մի առ մի Թուրքերի գործած նեն-

գութիւնները և ամեն տեսակ մարդկային իրաւունքների բռնաբարութիւնները, ցոյց տալով եւրոպական քաղաքականութեան անտարբերութիւնը դէպի Սլավօնների քաշած նեղութիւնները, իշխանը բացագանչեց. «Եղբարք, եթէ մենք Թուրքիայի այս բոլոր թշնամական գործողութիւններից ու վիրաւորութիւններից յետոյ առաջուան պէս պահպանողական դրութեան հետևինք, եթէ ականջ դնենք այն խիստ չափաւորութեանը, որ թելադրվում է մեզ, — այդ չափաւորութիւնը թուլութեան կփոխուի, իսկ մեր անգործութիւնն ու լռութիւնը փոքրոգութիւն ու վատութիւն կը համարուին: Հրաւէրն աւարտվում էր այս խօսքերով. «Սերբիայի զինուորներ. մենք գնում ենք պատերազմ ոչ թէ ատելութեամբ ոգևորուած դէպի թշնամին և ոչ վայրենի վրէժխնդրութեան զգացման ենթարկուելով, այլ մեր և մեր եղբայրների ցանկացած կարիքների համաձայն՝ ընդհանուր խաղաղութիւնն ու անդորրութիւնը վերահաստատելու: Պանծալով այն մեծ կոչմամբ, որ աստուծային ողորմութիւնը շնորհել է մեզ Արևելքում, յառաջ գնացէք հաստատամտութեամբ, զէնք բարձրացնելով և խորտակելով միայն նորան՝ որ կընդդիմանայ ձեզ: Սահմանագլուխը անցնելով աչքի առաջ ունեցէք, որ մենք մինչև այն ժամանակ հաւատարիմ պիտի մնանք օսմանեան պետութեան անձեռնհասութեան ու ամբողջութեան սկզբունքին, մինչև որ տաճկական բանակը չստիպէ մեզ՝ զէնքերին յանձնել մեր արդար գործի վճիռը: Յիշեցէք անդադար, որ այն տեղերը, ուր պիտի պատերազմէք, ապրում են մեր արենակից եղբայրները. այնտեղ գուցէ պատահին մարդիկ, որոնք կրօնական կարծիքների տարբերութեան պատճառով հեռու պահեն իրանց ձեզանից, բայց նոքա մարմնով, արիւնով ու լեզուով մեր եղբայրներն են. եթէ զէնքը ձեռին հակառակեն ձեզ, հարուածին հարուածով պատասխանեցէք. իսկ եթէ խելքի գան ու հնազանդին, խնայեցէք նոցա. պաշտպանեցէք նոցա կեանքը, նոցա ընտանիքը, նոցա ստացուածքը և կրօնը: Այս է իմ հաստատուն կամքը և ձեր սրբազան պարտականութիւնը, սորանով կը գրաւէք բոլոր քաղաքակիրթ աշխարհի յարգանքը և կը տարածէք այն համոզմունքը, թէ սերբիական ազգը աւելի լաւ վիճակի արժանի է: Մեր շարժողութիւնը բուն ազգային շարժողութիւն է, և այս պատճառով պէտք է ազատ լինի սօցիալական վրդովմունքներից և կրօնական ֆանատիկոսութիւնից: Մենք չենք տանում մեզ հետ ոչինչ խռովութիւն, ոչինչ կործանումն ու աւերումն, այլ

վերահաստատում ենք կարգը, արդարութիւնը և ապահովութիւնը: Եղբայրք, հաստատ համոզուած լինելով ձեր դէպի հայրենիքը ունեցած սիրոյ և ձեր պատերազմական յաջողութիւնների վերայ, ահա գնում եմ առաջնորդելով ձեզ: Մեզ հետ միասին կերթան և մեր քաջ Մօնտէնեգրօի եղբայրները իմ սրբասիրտ եղբօր՝ Նիկողայոս իշխանի առաջնորդութեամբ, մեզ հետ կերթան և Հերցեգովինայի հերոսները և մեր բազմաչարչար ցեղակից Բօսնիացիքը: Մեր բուլղարացի եղբայրները սպասում են մեզ և ազատամիտ յոյներից պիտի յուսանք, որ և նոքա, իբրև Թեմիստոկլի և Բօցարիսի արժանաժառանգ սերունդներ, երկար ժամանակ յետ չեն մնալ մեզանից: Յառաջ գնանք, քաջասիրտ հերոսներ, յանուն ամենակարող Աստուծոյ, որ ամեն ազգերի Հայրն է: Յառաջ, յանուն արդարութեան, քաղաքակրթութեան և ազատութեան»:

Մի և նոյն կերպով և Մօնտէնեգրօի Ցետինիա մայրաքաղաքում կարդացուեցաւ Նիկողայոս իշխանի հրովարտակը, որով պատերազմ էր հրատարակվում Թուրքիային:

Սերբիական բանակների հրամանատար նշանակուեցան հետևեալ զօրավարները — Չերնեաեվ, Զախ, Ալիմպիչ, Լէշանին, Նիկօլիչ, Նիկիֆօր Եօվանովիչ, Միլուտին Եօվանովիչ, Միրկօվիչ: Օգոստոսի վերջին ամեն կողմից Թափուեցան Սերբիա բազմաթիւ ռուս զօրականներ և խառնուեցան սերբիական զօրքի մէջ. սոցա մէջ նշանաւոր են՝ կօմարով, Րաեվսկի կոմս կօնօվնիցին, կոմս Մուսին-Պուշկին, գեներալ Նօվօսէլով և այլն:

Միխայիլ Չերնեաեվը ծնաւ 1828-ին. իւր զինուորական կրթութիւնն ստացաւ Ռուսաստանում և մասնակից եղաւ զանազան պատերազմների Դանուբի վերայ, Սեվաստօպօլում, կովկասում և Միջին Ասիայում: 1865-ին Չերնեաեվը զինուորական նահանգապետ նշանակուեցաւ Թուրքէստանի վերայ. նա առանձին անուն հանեց Տաշկէնտի առմամբ: 1867-ին Չերնեաեվը պաշտօնից հրաժարուեցաւ, բայց մի և նոյն տարուան վերջը կրկին ծառայութիւն մտաւ: 1875-ին նա նորից հրաժարուեցաւ պաշտօնից: Վերջին ժամանակները Չերնեաեվը սկսել էր գրականութեան պարապել. 1874-ին նա ձեռք բերաւ «Русскій Міръ» օրաթերթը:

Նիկօլիչ, զինուորական մինիստր, Թնթդանօթաձիգ զօրքի գնդապետ, իւր կրթութիւնն ստացաւ Բէլգրադի ռմբակոծական ուսումնարանում, յետոյ մի քանի ժամանակ անց կացրեց Բրիւսէլում:

Նա ազգակցութիւն ունի իշխանական տան հետ իւր կնոջ կողմից, որ Օրրէնովիչների ցեղից է։ Նիկոլիչը վայելում է սերբիական զօրքերի համակրութիւնը։

Ալիմպիչ, 46 տարեկան, ռմբակոծական ուսումնարանի նախկին վերատեսուչ, յետոյ մշտական զօրքերի գնդապետ և հասարակաց շինութիւնների մինիստր։ Ալիմպիչը հռչակուած է իբրև բարեկիրթ զինուորական։

Լեշանին, երբեմն զինուորական մինիստր, համբաւուած է իւր վարչական և տնտեսական ընդունակութիւններով։

Յունիսի 20-ին սերբիական զօրքերը սահմանն անցնելով չորս բանակ կազմեցին. Մորավեան բանակը Չերնեաեւի հրամանատարութեան ներքոյ, Դիմօկեանը՝ Լեշանինի, Դրինեանը՝ Ալիմպիչի և Իբարեանը Զախի զօրավարութեան ներքոյ։ Առաջին պատերազմական գործողութիւնները տեղի ունեցան հարաւային արեւելեան կողմերը։ Չերնեաեւը Թշնամու ուշադրութիւնը ցրուելով՝ Նիշի մօտով անցաւ և մտաւ Բաբինա-Գլավա ասուած տեղը. բայց սորանով վերջացան նորա առաջին յաջողութիւնները. նա ստիպուեցաւ սպասել միւս բանակների զուգահաւասար շարժողութեանը, ինչպէս նաև Բուլղարիայի ապստամբութեան տարածուելուն։ Բայց միւս բանակները շատ դանդաղ էին ներգործում. Դրինեան բանակը կանգնեցաւ Բէլինայի հանդէպ, Իբարեանը՝ Սէնիցայի ու Նոր-Բազարի առաջ, իսկ Լեշանինին չյաջողեցաւ մտնել Բուլղարիա։ Այն ժամանակ սկսուեցաւ բերդերի պաշարումը, իսկ Բուլղարները դեռ կենդանութեան նշոյլ չէին ցոյց տալիս։ Չերնեաեւը հասել էր մինչև Ակ-Պալանկա, բայց հարկադրուեցաւ յետ քաշուիլ, որովհետև Թուրքերը Օսման փաշայի առաջնորդութեամբ դիմեցին Լեշանինի վերայ, և որպէս զի Չերնեաեւը կարողանար յառաջ երթալ, պէտք էր նախ Օսմանի բանակը մղել Վէդդինի կողմը։ Խորհրդակցելով Լեշանինի հետ՝ Չերնեաեւը յարձակուեցաւ Թուրքերի վրայ Մեծ-Իզվորի մօտ, բայց յաղթուեցաւ նոցանից։ Այս անյաջողութիւնը տուեցաւ այն հանգամանքին, որ Չերնեաեւն ու Լեշանինը միմեանցից անկախ էին։ Այս պատճառով Միլան իշխանը Մօրավեան և Դիմօկեան բանակների զօրապետ կարգեց Չերնեաեւին։ Սկսուեցաւ զօրքի նորէնորոյ կազմութիւնը, բայց Թուրքերը ժամանակ չտուին սերբիացոց և մտնելով նոցա երկիրը՝ Տիմօկի և Նէգոտինի մէջ գտնուած բոլոր տարածութիւնը բռնեցին։ Սերբիացիք շտապեցան

ամրացնել Բանիայի և Լուկօվայի անցքերը, և Թուրքերը տեսնելով որ անհնար է այդ ուղղութեամբ յառաջ գնալ, դիմեցին դէպի Հարաւ, կամենալով Մօրավայի ձորով մտնել Սերբիա: Այստեղ, Ալէքսինացի մօտ, երկու բանակները միմեանց հետ կռուեցան մի քանի օր շարունակ և Թուրքերը յետ մղուեցան: Իսկ Մօնտէնէգրօցիք ի՞նչ էին անում այդ միջոցին: Նոցա զօրքերը երկու մասն բաժանուեցան. մէկը Նիկողայոս իշխանի հրամանատարութեան ներքոյ՝ ներգործում էր Հէրցէգօվինում, միւսը նշանակուած էր հայրենիքը պաշտպանելու: Առաջին պատերազմը եղաւ Նէվէսինիէի մօտ. մօնտէնէգրօցոց յառաջապահ զօրքերը Թուրքերի յարձակման չդիմանալով՝ յետ քաշուեցան, ամբողջ բանակը հետևեցաւ նոցա օրինակին: Մուխթար փաշան կամեցաւ թշնամու ճանապարհը կտրել, բայց Վրբիցի պատերազմում չարաչար յաղթուեցաւ: Թուրքերը կորցրին 5 թնդանօթ 4000 հոգի վիրաւորուեցան ու սպանուեցան, 300 հոգի գերի ընկան Օսման փաշայի հետ: Երկրորդ անգամ յաղթուեցան Թուրքերը մի ուրիշ պատերազմում Մեդուկի մօտ: Այդ միջոցին Դուռը Մուխթար փաշային ազատելու դիտաւորութեամբ մի մեծ բանակ կազմեց, որի մի մասը հիւսիսային կողմից պիտի ներգործէր, իսկ միւսը հարաւային կողմից:

Սերբիայում այդ միջոցին պատերազմական անցքերը նոր բնաւորութիւն ստացան. տասնօրեայ կռուի յաջող ելքը Մօրավայի ձորում՝ չպակեց սերբիացոց յոյսերը: Ջնայելով Թուրքերի կրած վնասներին, նոքա պահպանեցին իրանց առաջուան դրութիւնները: Աբդուլ Քէրիմ փաշան, տաճկական զօրքերի գլխաւոր հրամանատարը, Նիշից գալով՝ զօրքերը հաւաքեց և դիմեց Ալէքսինացի վերայ: Այս իմանալով Չերնեաևը, շտապեց յառաջ գնալ Թուրքերի շարժողութիւնը կանգնեցնելու համար, բայց ստիպուեցաւ տեղի տալ թշնամու զօրութեան առաջ: Ալէքսինացի պաշտպանողական գիծը թողուեցաւ և զօրքերը կենտրոնացան Դէլիգրադի շուրջը: Այս կռուից յետոյ երկար ժամանակ լռեցան պատերազմական գործողութիւնները. իսկական զինադադարում էր այդ: Եւրոպական տէրութիւններն սկսան խաղաղութեան առաջարկութիւններ անել, բայց մինչև հիմա այդ առաջարկութիւններից ոչ մինը չընդունեցաւ որոշ կերպով ոչ Թուրքիայի և ոչ Սերբիայի կողմից: Կարծվում է, որ խաղաղութիւնը հետևեալ պայմանների վերայ պիտի հիմնուի. Սերբիան և Մօնդէնէգրօն նոյն դրութիւնը կը պահպանեն, որ պատերազմից առաջ ունէին,

վերջինի սահմանները գուցէ փոքր ինչ ընդարձակուէին: Իսկ միւս ապստամբող նահանգներին կը շնորհուի տեղական ինքնավարութիւն. Թէև Դուռը, ինչպէս ասում են, չի կամենում բացառութիւն անել, այլ մտադիր է պետութեան բոլոր քրիստոնեայ ազգութիւններին անխտիր, ի թիւս որոց և Հայերին ու յոյներին, նոյն ինքնավարական արտօնութիւնները շնորհել: Եւ այս ամենևին անիրաւութիւն չի լինիլ, այլ բոլորովին արդարացի հատուցումն, որ եւրոպական պետութիւնները, խաղաղութեան պայմանների վերայ խօսելու ժամանակ, պիտի պահանջեն յիշեալ ազգութիւնների համար: Յիշենք որ 1862-ին Հայերը նոյնպէս իրանց արիւնով ներկեցին Տաւրոսի սարերը, ինչպէս և կրետացիք 1868ի ապստամբութեան ժամանակ:

Իրերն այս դրութեան մէջ էին, երբ Կոստանդնուպօլսում նոր վարչական փոփոխութիւն պատահեցաւ: Օգոստոսի 18—30 Մուրադ V, իւր գահը նստելու օրից ճիշտ չորս ամիս յետոյ, գահընկեց եղաւ Շէյխ-ուլ-իսլամի վճռով, որ յայտնեց, թէ պետական օրէնքների և Ղուրանի համաձայն սուլթանը անընդունակ է թագաւորութիւնը շարունակելու և նորա փոխանակ նստաւ Աբդուլ Համիդ էֆէնդին, Համիդ II անունով: Համիդը հանգուցեալ Աբդուլ Մէջիդի կրտսեր որդին է, որ ծնաւ 1842-ին

Մուրադ V-ի գահակալութեան առաջին օրերումն արդէն նշմարուել էր, որ նորա մտաւոր կարողութիւնները խանգարուել են. այս հետևանք էր նորա առաջուան խառնակ ու անկարգ կեանքի և այն անցքերի, որոնց միջում բարձրացաւ նա իւր նախնիքների գահի վերայ. Աբդուլ Ազիզի խորհրդաւոր մահը և մանաւանդ մինիստրների սպանութիւնը սաստիկ ներգործեցին նորա ջղային համակարգութեան վերայ:

Աբդուլ Համիդը հաստատեց մինիստրներին իրանց պաշտօնների մէջ:

Այնպիսի պատմական երևոյթներ, ինչպիսի է ներկայ պատերազմը, չեն կարող աղմուկ ու շարժողութիւն չբարձրացնել Եւրոպայի հասարակական կարծիքի մէջ: Թէև այս կամ այն երկրի կառավարութիւնները զանազան քաղաքական շահերի պատճառով՝ բարեկամական աչքով չեն նայում սլաւոնների Թուրքերի դէմ տուած պատերազմի վերայ, այնու ամենայնիւ ազգերը՝ պէտք է ասել, որ

համակրութիւն են ցոյց տալիս ազգային անկախութեան համար կռուող ժողովրդին: Ռուս ազգը և ռուսաց կառավարութիւնը առանձին ջերմ համակրութիւն են ցոյց տալիս սլաւոններին, իբրև իրանց արենակից ու հաւատակից եղբայրներին: Ռուս ժողովուրդը չի խնայում սլաւոնների համար իւր արիւնը և իւր ստացուածքը. մենք տեսնում ենք որ անթիւ ռուս կամաւոր զինուորներ դիմում են Սերբիա, զանազան կոչման ու աստիճանի տէր մարդիկ օգնութիւն են գնում իրանց ցեղակիցներին: Ամեն կողմից թափվում են կամաւոր նուիրատուութիւններ, մեծ գումարներ են հաւաքվում այդ նպատակով տրուած թատրոնական ներկայացումներից, հասարակական զբօսանքներից, երաժշտական երեկոներից և հետզհետէ ուղարկվում են Բելգրադ և Ցետինիա: Եւրոպայում վերջին ժամանակներս մի քանի համակրական ցոյցեր եղան յօգուտ սլաւոնացոց իտալական և անգլիական հասարակութիւնների մէջ. վերջինը այս դէպքում կառավարութեան հակառակ պատկեր է ներկայացնում. մինչ Դիզրայէլին պարլամէնտի մէջ մեղմացնում էր Բուլղարիայում կատարուած եղեռնագործութիւնները, հասարակութիւնը միտինգներ (հրապարակական ժողովներ) էր կազմում յօգուտ սլաւոնների: Բալկանեան թերակղզու շարժողութեանը առանձին համակրութիւն ցոյց տուին լորդ Րօսէլը և Գլադստոնը, վերջինի խօսած մի նշանաւոր ճառը մեծ տպաւորութիւն գործեց ունկնդիրների վերայ:

Եւրոպայի արդար բարկութիւնը շարժեցին մանաւանդ Բուլղարիայում գործած անգթութիւնները, թէև չի կարելի ասել, որ Սլաւոնները առանձին մարդասիրութեամբ են վարվում իրանց հակառակորդների հետ: Մայիս ամսին արդէն, երբ ապստամբութեան առաջին նշաններն սկսան երևիլ Բուլղարիայում, անկանոն զօրքերի, բաշիբօզուքների խմբերը արիւնով ու կրակով ծածկեցին այս դժբաղդ նահանգը, տարածելով ամեն տեղ հրդեհ, սպանութիւն և բռնաբարութիւն, քարուքանդ անելով գիւղերը, սրբապղծելով եկեղեցիները, ոչխարների պէս առաջները քշելով անպաշտպան կանանց, երեխանց ու ծերերին: Ահա ինչպէս է նկարագրում «Kolnische Zeitung» լրագրի թղթակիցը այդ աղէտալի տեսարաններից մինը. «Բոլոր շրջակայ բուլղարեան գիւղերը, ասում է նա, արդէն կրակի մատնուած էին, երբ բաշիբօզուքներն ընկան Բատօկի վերայ (մի գիւղաքաղաք Բուլղարիայում), որին վիճակուեցաւ նոցա վերջին և ամենադժբաղդ զոհը լինելու: Մայիսի 12ին էր՝ Բատօկի բնակիչները

յոյս ունէին թէ հրձիգների խումբը կանգնի առանց մի վնաս հասցնելու իրանց. այս յոյսը տալիս էր նոցա այն հանգամանքը, որ Բատօկը և նորա գաւառը գտնվում էին Բաշիբօզուքների հրամանատար Ահմէդ Աղայի անմիջական տեսչութեան ու պաշտպանութեան ներքոյ: Բայց այդ էր իսկապէս նոցա կորստեան պատճառը: Նոցա բաղդը վճռուել էր արդէն գիւղական ոստիկանութեան վերատեսչի— Ահմէդ Աղայի մտքում, որ իւր մարդկանց ուղարկեց նոցա մօտ, պահանջելով որ իրանց զէնքերը տան: Բատօկցիք նախ մերժեցին, բայց Ահմէդը երդուեց, որ ոչինչ վնաս չի հասցնիլ նոցա»:

«Երբ մի վնաս տամ ձեզ, հրամայեց նա ասել Բատօկցիներին, թող քրիստոնեայ լինիմ, թող ուտեմ խոզի միս և ծածկեմ բուլղարեան գլխարկ» Բատօկցիք հաւատացին նորան և երեք մեծ սայլերով ուղարկեցին նորան իրանց զէնքերը: Դեռ սայլերը չէին հասել, որ Ահմէդն արձակեց իւր խումբը Թշուառ քաղաքի վերայ: Բնակիչները լսելով թէ բաշիբօզուքները եկան աւարելու և սպանելու, փախած ցրուեցան, բայց շատ սակաւներ կարողացան փրկել իրանց կեանքը: Ամենից առաջ մեռաւ չօրբաշին կամ գիւղաքաղաքի ծերը, որի տանը տեղաւորուեցաւ Ահմէդ Աղան: Դժբախտ բուլղարացուն ցցեցին մի փայտի վերայ, որի ծայրը դուրս եկաւ նորա վզից, և այս դրութեան մէջ ողջ-ողջ խորովեցին նորան: Բատօկի բնակիչներն արդէն վերադարձան իրանց աճիւնացած ծննդատեղին, բայց չեն մոռանում վերականգնել նորան: Սովը, չքաւորութիւնը և ապուշ յուսահատութիւնը սպանում են ամեն տեսակ գործունէութիւն:

Արտերի հունձքերը զուր են մանգաղի սպասում. տները աւերակ են դարձած և կենդանի մնացած բատօկցիք ծածկվում են փլատակների անկիւններում: Նոքա այլ ևս չեն թաղում իրանց մեռելներին, որոնց վերայ ողբում են կանայք, մինչ այր մարդիկ մռայլ դէմքով թափառում են աւերակների մէջ, խորհելով ներկայ դարուս ամենազարհուրելի անցքի վերայ,—Բատօկի վերջին օրուան վերայ: Մայրերը, իրանց սրտի ցաւից խելագարուած, օրօրում են բազուկների վերայ իրանց մանուկների կմախքը: Ես տեսայ մի մայր, որ եղերական ողբ էր ասում իւր երեխայի գանգի վերայ, որի աչքերի կապիճների մէջ ծաղիկներ էր դրել: Բայց ամեն բան չես կարող պատմել, ինչ որ լսում ու տեսնում ես մահուան այս դաշտավայրում: Իրանք բնակիչները չեն աւարտում իրանց պատմութիւնները,

որ ընդհատվում են զանազան արտասուանքներով կամ կատաղութեան, անէծքների և յուսահատութեան անմիտ արտայայտութիւններով»:

Անգլիայում Բուլղարիայի անցքերը մի անախնունելի առիթ տուին վ ի գ ե ր ի (յառաջադէմ) կուսակցութեան արիաբար արշաւելու նոյն երկրի կառավարութեան դէմ, որ ինչպէս յայտնի է, ներկայումս տ օ ր ի ն ե ր ի (պահպանողական) կուսակցութեան ձեռին է. Նոքա իւրանց յարձակմունքների մէջ պարզ ակնարկում են թէ Անգլիան, թէև ակամայ Թուրքիայի գործակից է հանդիսացել, չխնայելով նորան իւր խորհուրդների, իւր ազդեցութեան բարոյական օժանդակութիւնը, իւր նաւատորմիղի օգնութիւնը. այս բոլորը շատ լաւ է, և հասարակական կարծիքը գրգռուած է այնտեղ, բայց չպէտք է կարծել, թէ Անգլիան պատրաստվում է իւր քաղաքականութիւնը փոխել արևելեան հարցի վերաբերութեամբ. չպէտք է կարծել թէ այս մասնաւոր ցոյցերը, որքան էլ ծանրակշիռ լինին, անգլիական կառավարութեան դիտաւորութիւնների արտայայտութիւն են, և նորերումս լորդ Դէրբին մի պատգամաւորութիւն ընդունելով՝ ցոյց տուաւ, թէ ինչ վտանգաւոր թեթևամտութիւն է ծածկվում այն առաջարկութիւնների ու փորձերի մէջ, որով ձգտում են Թուրքիան եւրոպական քարտէզից ջնջելու: «Մղեցէք թուրքերին Եւրոպայից դուրս՝ Ասիա, աւելացրեց նա, այնու ամենայնիւ քրիստոնեայ և մահմէտական միմեանց մօտ կը լինին, դժուարութիւնը միայն կը տեղափոխուի:» Աւելորդ չէ յիշել այստեղ, որ մեզ՝ հայերիս համար մանաւանդ, գոնէ ներկայումս, կորստաբեր կը լինէր, եթէ մահմէտական աշխարհի կենտրոնը Բոսֆորի ափերից փոքր Ասիա տեղափոխուէր, ուր տաճկական քաղաքականութիւնը իւր բոլոր զօրութեամբ կը ծանրանար մեր առանց այն էլ ճնշուած, աղքատ, ուժից ընկած ժողովրդի վրայ:

Օսմանեան պետութիւնը, որ վաղուց արդէն Եւրոպայի աչքում քայքայման ու կործանման վիճակի մէջ էր երևում, ներկայ պատերազմի մէջ ցոյց տուած յամառութեամբ մի վերջին անգամ էլ ապացուցից, որ դեռ բոլորովին զուրկ չէ կենսական զօրութիւնից: Չնայելով իւր վարչական անհաստատութեանը և դրամական սնանկութեանը, Թուրքիան՝ որ ըստ երևութին սպառուած ու մաշուած է և ամեն կողմից վտանգներով շրջապատած, վերջին ժամանակներումս ցոյց տուաւ որ դեռ կարող է իրան պաշտպանել: Հերցեգովինայի ապստամբութեան մէջ, ճշմարիտ է, նա անյաջող գտնուեցաւ,

Բայց հէնց որ կարգաւորեալ ոյժերի հանդէպ եկաւ, ապացուցեց, որ դեռ չի դադարել զինուորական պետութիւն լինելուց: Հեռագրական լուրերը ամէն օր առում էին, թէ նորա զօրավարները շրջապատուած են և անձնատուր լինելու վտանգի մէջ են, բայց իսկապէս ոչ ոք անձնատուր չեղաւ և Մուխտար փաշան հարկաւորութիւն չունեցաւ փախչելով ապաւինել Աւստրիական հողերի վերայ, ինչպէս որ շատերը մարգարէանում էին:

Այնու ամենայնիւ դուռը շարաչար կը խաբուէր, եթէ իւր զինուորական յաջողութիւնից շլանալով՝ չզգար իւր տկարութիւնը, եթէ չհասկանար, թէ այժմ, քան երբ և իցէ, աւելի պէտք է ուշադիր լինի Եւրոպայի ձայնին: Եթէ չափազանց խիստ պահանջողութիւններ անէ այն բանակցութիւնների մէջ, որ տեղի ունին այժմ խաղաղութեան նախապայմանների կամ զինադադարման վերաբերութեամբ, այն ժամանակ նա ոչ թէ Սերբիայի հետ գործ կունենայ, այլ այն տէրութիւնների հետ՝ որոնք փարիզեան դաշնադրութեան զօրութեամբ իրանց հովանաւորութեան ներքոյ ընդունեցին Թուրքիայի վասալական երկիրները: Այսպիսի քաղաքականութեամբ ինքը Դուռը մի նոր ճգնաժամի նշան կը տար, որի առաջն առնել պահանջում են թէ Եւրոպայի և թէ մանաւանդ Թուրքիայի շահերը: Եթէ պատերազմը Սերբիայի սահմաններից դուրս տարածուի, Եւրոպան անշուշտ իւր անդորրութիւնը կը կորցնէ, իսկ Թուրքիան գուցէ և իւր գոյութիւնը վտանգի մէջ կը դնէ: Եւրոպական պետութիւնների կողմից ամենից իմաստուն ու խոհեմ բանը կը լինէր, որքան կարելի է, շուտով խոհական ու վճռական միջոցներ առաջարկել խաղաղութիւնը անմիջապէս գլուխ բերելու, և թոյլ չտալ որ հասարակական կարծիքը մոլորուի զանազան երազների ու ցնորքների մէջ, որոնք խնդիրը պարզելու փոխանակ՝ աւելի կը կնճռոտեն նորան:

Մի ֆրանսիացի ծանրակշիռ ամսագիր, Revue des deux mondes, խօսելով արևելեան հարցի վերայ՝ հետևեալ եզրակացութեան է գալիս. «Ի՞նչ ապագայ է սպասում Թուրքիային Արևելքում: Ո՞վ կարող է այս հարցին պատասխանել: Ներկայումս ինչ տպաւորութիւնների էլ ենթարկուած լինինք այս անցքերի վերաբերութեամբ, ինչ պատերազմական դէպքեր էլ պատահին Մօրավիայի վերայ և Սերբիայի լեռներում, միակ հնարաւոր խաղաղութիւնը նորանումն է կայանում, որ որքան կարելի է, սակաւ փոփոխուի իրերի դրութիւնը. նա կայանում է նորանում, որ միմեանց դէմ յանդիման կանգնած

շահերը իրարու հետ հաշտեցնուլին, քրիստոնեայ ժողովուրդների շահը, որ պէտք է ամենից առաջ պաշտպանել, և օսմանեան պետութեան ամբողջութեան սկզբունքը, որի մասին նորերում խօսում էր լորդ Դէրբին։ Միայն մի բնական ու օրինաւոր սկզբնական կէտ կայ այս խնդիրը լուծելու, այն է՝ այն դաշնադրութիւնները և պայմանները, որ հետզհետէ յաջորդել են միմեանց մանաւանդ 1856 թուից, որոնք Եւրոպայի համար կազմում են մի տեսակ իրաւատական և պաշտպանողական աւանդութիւն, և որոնք հետզհետէ վճռել են որքան հնար էր, բոլոր այն Րումանիայի, Կրէտէի, Սերբիայի և Մօնտէնէգրօի հարցերը։ Ինչ որ մի անգամ սկսուել է, թող շարունակուի ոգևորուելով մի և նոյն նպատակով, որովհետև միայն Եւրոպայի, միայն 1856ի դաշնադրութեան մէջ գործակցող վեց տէրութիւնների ծանրախոհ ու կատարեալ համաձայնութիւնը կարող է նորանոր դժուարութիւնների առաջն առնել»։

Այս համարի մէջ, որպէս յաւելուած, տպագրեցինք մեծ. պ. Ս. Մանդինեանի «Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի կազմութեան համար առաջարկած նախագիծը»։ Այդ նախագիծը երեք մասի է բաժանուած. առաջինը պարունակում է իւր մէջ ծխական ուսումնարանների ծրագիրը, երկրորդը միջնակարգ և երրորդը մասնագիտական շրջան՝ հոգևոր և մանկավարժական գիտութիւնների։

Այս նախագիծը կարդացուել է Ներսիսեան Դպրոցի հոգաբարձութեան մէջ, որ համաձայնելով դորա մէջ արտայայտուած ընդհանուր սկզբունքներին, յանձնել է ուսուցչական ժողովին, որ քննէ և իւր նկատողութիւններով ներկայացնէ հոգաբարձութեան։

Ազգային ուսումնարանների միանման կազմակերպութեան հարցը մեզանում անհրաժեշտ կարևորութիւն ունի։ Մեր մասնագէտ մանկավարժ պ. Սեդրակ Մանդինեանի առաջարկած նախագիծը անշուշտ կարող է օգնել՝ այս պահանջին բաւականութիւն տալու։ Ցանկալի է որ մեր մանկավարժները իրանց կարծիքը յայտնեն սորա թէ հիմնական գաղափարի և թէ գործադրութեան մասին։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ